

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԵՐ**

8



ԵՐԵՎԱՆ 2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

8



ԱՆՈՐՈՊ ԱՐՁ. ԱՇԵՅԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

31

31

ԵՐԵՎԱՆ 2007

A 92234

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (27)

Հ 282

Ժողովածուն հրատարակության է հանձնարարել ՀՀ ԳԱԱ
Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագրական կոլեգիա՝

ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, պ.գ.դ. Ա.Ա.Սելքոնյան (նախագահ)
պ.գ.թ., դոցենտ Կ. Հ. Խաչատրյան
պ.գ.թ. Ա. Ռ. Խոսրոնա
պ.գ.թ. Ա. Վ. Մաղալյան

Հ 282 ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ /Գիտական
հոդվածների ժողովածու/. - Եր.: Պատմ. ինստ.,
2007, - 377 էջ:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» խորագրով գիտական հոդվածների 8-րդ ժողովածուում զետեղված են աշխատություններ, որոնք աղբյուրագիտական լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին, միջնադարյան, նոր և նորագույն պատմության մի շարք հիմնահարցերի վրա:

Ժողովածուն նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակության համար:

ԳՄԴ 63.3 (27)

ISBN 978-99941-79-10-5

ՏԻԳՐԱՆ Բ-Ի ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՔԵՐԻ ՍԱՍԻՆ

Անտիկ հեղինակների վկայությամբ իր հելլենիստական տե-
րության հորինվածքը կառուցելիս՝ Տիգրան Բ-ն բախվեց ոչ միայն ար-
տաքին թշնամիների դիմադրության, այլև ներքին ընդդիմության տա-
րերային հակազդեցության հետ: Երկրի ներսում արքայի միջոցառում-
ների հիմնական ընդդիմությունը դարձավ տարբեր երկրամասերի
տոհմիկ ավագանին: Հելլենիստական միապետի հզորացումն անխու-
սափելիորեն պետք է հանգեցներ երկրի ներսում ավագանու դերի
անկմանը և նրանց իշխանության սահմանափակմանը: Անտիկ հեղի-
նակները ուղղակիորեն նշում են, որ Տիգրանը ստիպված էր գործադ-
րել կոշտ միջոցներ տոհմիկ ավագանու ընդդիմությունը ճնշելու
համար¹: Այդ ընդդիմակայությունն ամանձին դեպքերում Տիգրանի հա-

¹ «Միհրդատյան պատերազմներում» Ապպիանոսը գրում է. «Այս քաղաքը
սույն տեղում թագավորը հիմնեց իր պատվին. այստեղ հավաքեց նշանավոր
մարդկանց՝ սպառնալով, որ այն, ինչ նրանք չեն վերցնի իրենց հետ, բռնա-
գրավվելու է: Քաղաքը նա շրջապատեց բարձր պարիսպներով՝ 50 արմունգ
երկարությամբ» (App., Mithr., 84): Կարելի է մտածել, որ թագավորն արգելա-
փակում էր հայ մեծատոհմիկներին քաղաքի պարիսպների ներսում՝ կտրելով
նրանց մնացած Հայոց աշխարհից և իրենց փոքր հայրենիքից: Այնուհետև Ապ-
պիանոսը շարունակում է. «Դրանց խորքում կառուցվել էին շատ ձիու ախոռ-
ներ, քաղաքի արվարձանում նա խոյացրեց ապարանք մեծ պարտեզներով,
որսատեղիներով և լճերով: Դրա մոտակայքում հիմնվեց հզոր ամրությունը»:

Շատրվաններով և ավագաններով շրջապատված արքունի հովանոց-
ների կառուցումը, արգելանոցների և պարադիսների տնկումը *politesse* տարա-
ժող լուսավորյալ միապետներին բնորոշ հատկանիշներից մեկն է: Այսպես
Բուրբոնները Փարիզի շուրջը կառուցել են Վերսալը, Տրիանոնը, Սևրը, տնկել
Բուլոնի անտառը և այլն: Ակամայից մտքին է գալիս «Իմաստասիրական պատ-
կերում» (1750 թ.) թագավորին ուղղված Տյուրգոյի վերամբարձ բացականչու-
թյունը. «Ու՛վ Լյուդովիկոս, ի՛նչ վեհություն է քեզ շրջապատում: Քո երջանիկ ժո-
ղովուրդը դարձավ, «*politesse*»-ի կենտրոն» (Turgot A. R.J., *Ethymologie/Oeuvres*.
T.I.P.222). «*Politesse*»-ի տարածմանն ուղղված Բուրբոնների քաղաքականու-
թյան նպատակներից մեկը թագավորի դեմ տոհմիկ ավագանուն, բացահայտ և
ձայտյալ ֆրոնդայականներին շեղելն էր դավադրություններից, նրանց գրավել

մար ավելի վտանգավոր էր, քան արտաքին թշնամիները: Հատկապես համառորեն տոհմիկ ավագանին դիմադրում էր Տիգրանի՝ երկիրը հելլենականացնելու, այն *civil pol²* դարձնելու փորձերին:

Հենց այդ նպատակով նա ձեռնարկեց սինոյկիզմ: Տիգրանակերտի սինոյկիզմը կատարվում էր երկու եղանակով. մի կողմից հայոց հողի վրա օտարերկրյա քաղաքային բնակչության բռնագաղթեցման ճանապարհով և մյուս կողմից երկրի տարբեր մասերից նոր մայրաքաղաք ընտանիքներով և սպասավորներով տոհմիկ ավագանու բռնի վերաբնակեցմամբ³: Այսպիսով Տիգրանը ձգտում էր տոհմիկ ավագանուն կտրել արմատներից, հելլենիստական մեզապոլիսի կաթսայի մեջ նե-

դեպի արքունիք, հմայել և գերել պալատական նրբին կենցաղով և բարքերով, թագավորական իշխանության վեհաշուք փայլով: Այսպիսով Բուրբոնները ձգտում էին մի կողմից ազնվապետներին ներշնչել թագավորական իշխանության հզորության և անխորտակելիության գաղափարը և մյուս կողմից այն միտքը, որ, կորցնելով իր *ավտարկիան*, ավագանին ձեռք է բերում մեկ այլ, ավելի մեծ և արժեքավոր բան՝ *polise*:

Նման երևույթների ենք հանդիպում ավելի ուշ շրջանի Ռուսաստանում, որտեղ Ռուսաց կայսրերը Պետրոսի հիմնած «Հյուսիսային Պալմիրայի» շուրջը կառուցում են բազմաթիվ թագավորական դոյակներ, տնկում այգիներ, արգելանոցներ և այլն: Այստեղ կազմակերպվում էին պարահանդեսներ, տոնախմբություններ, հրավարություններ և այլոք, զործում էին այս կամ այն նշանավոր ազնվապետուհու սալոններ: Այդ միջոցառումների շնորհիվ Պետրոս Մեծը, Եկատերինա Մեծը և այլոք ձգտում էին կոտրել ավանդապահ բոյարական վերնախավի համառությունը և ռուսներին դարձնել «ժողովուրդ *polise*»:

²«Ռոջ XVII դ. ընթացքում ֆրանսիական հեղինակները ժողովուրդները դասակարգում էին համապատասխան հիերարխիկ սանդղակաբազի, բավականին անորոշ, բայց միաժամանակ շատ կոշտ: Ամենաստորին աստիճանի վրա գտնվում են «վայրենիները»: Ավելի բարձր, թեպետ որոշակի տարբերություններ չկային՝ կանգնած էին «բարբարոսները»: Այդ բանից հետո, բարձրանալով և մեկ աստիճան, մենք հանդիպում ենք ժողովուրդների, որոնք տիրապետում էին «*civilité*», «*politesse*» և վերջապես՝ իմաստուն «*police*»» (Փեթ Ղ., անդ, էջ 249): Հելլենիստական Հայաստանի և ուշ միջնադարյան Ֆրանսիայի իրողությունների համեմատությունը ֆորմացիոն պատմագիտության տեսանկյունից թերևս կարող է թվալ արհեստական, սակայն քաղաքակրթական մոտեցմանը հնարավորություն են տալիս այդ և մի շարք ուրիշ երևույթներին նայել այլ դիտանկյունից:

³ Հմմտ. Խոսրով Գ Կոտակի միջոցառումների հետ:

տելու և դրա մշակութային բովի մեջ «ծուլելու» նպատակով⁴: Դրա շնորհիվ Տիգրանի մտահղացմամբ տեղական ինքնիշխան ազնվականները պետք է վերածվեին կայսերահպատակների և հելլենիստական պոլիսի քաղաքացիների:

Երկրի հելլենականացմանն ուղղված մյուս արժատական քայլերից էր հայ տոհմիկ ավագանու զավակներին իրենց միջավայրից բռնի ուժով կտրելը յասենական տիպի գիշերօթիկ վարժարաններում դաստիարակելու նպատակով: Այստեղ պատանիները ստանում էին բարձր կրթություն արևմուտքից հրավիրված ուսուցիչներից՝ փիլիսոփաներ Ամփիկրատես Աթենացուց, Մետրոդորոս Ալեքսացուց և այլքից: Նրանց վրա էր դրված նաև հայոց արքայազների դաստիարակության պատասխանատվությունը: Այսպես, Տիգրանի ջանքերով Տիգրանակերտում՝ ըստ՝ երևութի՞ն թագավորական նստավայրին առընթեր, ստեղծվել էր յուրօրինակ վարժարան, որի նմանակների կարելի է հանդիպել տարբեր ժամանակներում և տարբեր երկրներում⁵: Այս՝ նոր աշխարհընկալման դարբնոցում կռում էին երիտասարդ արիստոկրատների նոր սերունդը՝ դաստիարակված *politesse*-ի ոգով և ընտելացված հելլենիստական պոլիսի տարբեր հարանիշների. առանց

⁴ Անտիկ Հունաստանում սինոլիզմն ընկալվում էր հենց այդ տեսանկյունից: Այսպես հույն հեղինակներն Ատտիկայի միավորման սկիզբը և Աթենքի պատմության մեկնարկը համարում էին Թեսալի սինոլիզմը: Հետազոտողների մեծամասնությունը համոզված է, որ Թեսալի սինոլիզմը պետք է ուղեկցվեր Ատտիկայի բնակչության որոշակի մասի (ամենայն հավանականությամբ արիստոկրատիայի) Աթենքում բռնի վերաբնակեցմամբ: Պլուտարքոսը *Սինոլիա* կոչում է Թեսալի կողմից Ատտիկայի վերաբնակեցմանը՝ Մետոլիային (*μετ-οικία*) նվիրված տոները (*Plut. Thes. 24*): Այսպիսով սինոլիզմը հույների կողմից ընկալվում էր իբրև տիեզերաստեղծ, արարչական մղում, քաղաքպետության և նոր դարաշրջանի պատմության սկիզբ: Նույն կերպ էին սինոլիզմն ընկալում հռոմեացիները՝ այն համարելով իրենց հայրենի քաղաքի պատմության սկիզբը: Իբրև սրբազան և տիեզերամորթ արարք՝ սինոլիզմը ներկայացվում էր նաև Տիգրանի զաղափարախոսների կողմից:

⁵ Նմանատիպ վարժարանների հանդիպում ենք Սցիպիոնյան Հռոմում, Գոնդիչապուրիում, Կարոլինգյան դարաշրջանի Աախենում, Լյուդովիկոսյան Ֆրանսիայում կամ Ռուսաստանում, որտեղ Ռուսոյական գաղափարների ազդեցության ներքո Ալեքսանդր Ա-ի կողմից Ցարսկոյե Սելոյում ստեղծվում է էլիտար գիշերօթիկ դպրոց ազնվազարմ պատանիների համար:

որոնց այդ ընտրախավն այլևս չէր կարող պատկերացնել իր կյանքը⁶։ Ի տարբերություն իր հայրերի և պապերի, ազնվազարմիկների այդ սերունդը հիացմունքով էր նայում իր կայսերը և հավատարիմ էր նրան հոգով և մարմնով։ Ընտրյալ և նվիրված երիտասարդների այդ խավից թագավորը հետագայում պատրաստվում էր հավաքագրել երկրի քարծրաստիճան պաշտոնյաների և նախարաների հիմնական զանգվածը։

Հատկանշական է, որ երբ Լուկուլլոսը պաշարեց Տիգրանակերտը և բոլորի աչքի առջև ջախջախեց Տիգրանի բանակը, քաղաքի բնակիչներն ու կայազորն առանց երկար տատանվելու ընդունեցին քաղաքը հանձնելու հռոմեական զորավարի առաջարկը։ Եվ միայն ազնվազարմ պատանիների մի խումբ, փակվելով միջնաբերդում, անձնատուր չեղավ և կռվեց մինչև վերջ՝ եղերական մահ ընդունելով հռոմեական փորձառու լեգեոներների դեմ անհավասար պայքարում։ Հատկանշական է, որ այդ պատանիների նկատմամբ հատուկ դաժանություն ցուցաբերած Լուկուլլոսը ոչ մի վնաս չհասցրեց քաղաքի այլ բնակիչներին. նրանք բոլորը վերադարձան այն քաղաքները, որտեղ ապրել են մինչև սինոյկիզմը։ Մի հարվածով ոչնչացնելով Տիգրանի կողմից այդքան խնամքով աճեցրած արիստոկրատների մի ամբողջ սերունդ՝ Լուկուլլոսը ձգտում էր առաջին հերթին Հայաստանում արմատախիլ անել Տիգրանի սերմանած նոր կայսերական աշխարհընկալման ծիւերը։ Արդյունքում այդ գաղափարաբանության կրողներից Հայաստանում մնացին շատ քչերը՝ թերևս միայն թագավորական ընտանիքի անդամները, որոնց Տիգրանը հասցրեց հանել քաղաքից մինչև ճակատամարտը։ Հատկանշակն է նաև, որ գրեթե նույն ժամանակ, իր սաների ճակատագրին արժանացավ նրանց ուսուցիչը՝ Սետրոդորոս Սկեպսացին, որին հետազոտողները համարում են Տիգրանի աշխարհակալ տերության գաղափարաբանության ստեղծողը⁷։

⁶ Ուսասոն Դիժոնի «դաստողությունների» մեջ գրում է. «Գիտությունները, գրականությունը և արվեստը... ստիպում են նրանց (հպատակներին - Ե.Ս.) սիրել ստրկությունը և դարձնում նրանց այն, ինչ կոչվում է *polisé* ժողովուրդ»։

⁷ Степанян А., Развитие исторической мысли древней Армении. Миф. Рационализм. Историческое. В., 1990, с 129.

Թեև Մետրոդորոսի աշխատությունները մեզ չեն հասել⁸, այնուամենայնիվ անուղղակի տվյալների հիման վրա կարելի է որոշ ենթադրություններ անել այդ գաղափարաբանության բնույթի մասին: Իր ստեղծած դոկտրինի գլխավոր դրույթները նա անշուշտ պետք է քաղած լիներ անտիկ հեղինակների երկերից: Մեր համոզմամբ իր դոկտրինը մշակելիս, Մետրոդորոսն, առաջին հերթին, պետք է օգտվեր երկու հեղինակների՝ Իսոկրատեսի և Քսենոփոնի գաղափարներից: Հակառակ շատ անտիկ մտածողների, որոնք գիտակցելով դեմոկրատական կառավարման ծների և նախկին քաղաքակրթական արժեքների ճգնաժամը, դրա հաղթահարման ճանապարհները շարունակում էին որոնել ավանդական պոլիսի շրջանակներում, Իսոկրատեսն ու Քսենոփոնն առաջարկում էին նոր ուղիներ: Հատկապես համոզվելով, որ պոլիսային պետություններն ի վիճակի չեն ինքնուրույնաբար հաղթահարել քաոսի ու լճացման երևույթները, որոնք Պելոպոնեսյան պատերազմից հետո դարձան հունական քաղաքական կյանքի անբաժանելի մասը, նրանք անտիկ քաղաքակրթության զարգացումը տեսնում էին հռոմոնոմիայի (δμῶ-νομος)՝ ավանդական պոլիսային և միապետական ծների համաձուլման մեջ:

Այստեղ կանգ առնենք Քսենոփոնի գաղափարների վրա, որոնք առավել ցայտուն արտացոլում են գտել վերջինիս ծրագրային և ըստ էության, ամփոփիչ աշխատության՝ «Կյուրոպեդիայի» մեջ: Դա մի պատմավեպ է, որը քիչ առնչություն ունի նկարագրվող դարաշրջանի և իրական պատմական անցքերի հետ: Վերջիններս ընդամենը պայմանական խորապատկեր են հեղինակի գաղափարաբանական հայացքները բացահայտելու և հիմնավորելու համար: Քսենոփոնի պատմավեպը կատարյալ միապետական իշխանության ներքո է, որում, սակայն, միապետությունը պատկերված է ոչ թե արևելյան բռնապետության տեսքով, այլ իբրև անտիկ պոլիսի և կայսրության

⁸ Մետրոդորոսի աշխատությունները չեն պահպանվել թերևս ուշ շրջանի հռոմեական պաշտոնական քաղաքական հայեցակարգին հակասելու պատճառով: Դրա հակառակ օրինակը կարելի է համարել Պլուտարքոսի եվրոպական տրոն հայեցակարգը, որի շնորհիվ նրա ստեղծագործությունները կայսրությունում դարձել էին քրեստոմատիական:

համաձուլում: Պրանում հավասարաչափ ներկայացված են իշխանության երեք ձևերը՝ դեմոկրատական, արհեստակրատական և միապետական: Անշուշտ Քսենոփոնի ստեղծած պատկերը ուտոպիական է: Պետության գլուխն այստեղ կանգնած է արքան, որը միաժամանակ քրմապետ է և ժողովրդական ժողովի առաջնորդ, բացի այդ նա իրականացնում է բարձրագույն ռազմական իշխանությունը: Թեև թագավորի իշխանությունը ժառանգական է, սակայն Քսենոփոնը բազմիցս ընդգծում է, որ արքան իշխում է ոչ թե իրև բռնակալ, այլ առաջնորդվելով աստվածների սահմանած և ողջամիտ բանականության օրենքներով (νόμος):

Պարսկական նահապետական պետությունը «Կյուրոպեդիայում» պատկերված է իրև պոլիսային կառույց՝ իր մեջ համատեղող տոհմա-ցեղային և քաղաքացիական կազմակերպություններին բնորոշ գծերը: Լինելով ազատ՝ պարսիկները բաժանվում են լիիրավ քաղաքացիների-հոմոտիմոսների (όμο-αἶμος) և մնացած, իրավազուրկ զանգվածի՝ սովորական ժողովրդի: Հոմոտիմոսների արտոնյալ դասին կարող են պատկանել միայն նրանք, ովքեր հատուկ վարժարաններում պետական հսկողության ներքո՝ ստացել են ճիշտ դաստիարակություն: Երիտասարդ սերնդի դաստիարակությունն այստեղ իրականացվում է հատուկ տարիքային խմբերի շրջանակներում՝ տղաների (մինչև 16-17 տարեկան), էֆեբոսների (հաջորդ 10 տարի) և այրերի (հաջորդ 25 տարի): Պասից դաս անցնելու համար սաներին անհրաժեշտ էր հաղթահարել բավականին բարդ նվիրաբերական փորձություններ, որոնց նպատակն էր ապացուցել ֆիզիկական պատրաստվածությունը (տղաների համար), քաղաքացիական առաքինությունների (էֆեբոսների համար) և ապա իմաստնությամբ օժտվածությունը (այրերի համար): Միայն նրանք, ովքեր անցել են մարմնական պատրաստվածության և քաղաքացիական առաքինության դպրոց, կարող էին դառնալ լիիրավ այրեր-հոմոտիմոսներ: Այն հոմոտիմոսները, որոնք միշտ անշեղորեն կատարել են իրենց քաղաքացիական պարտքը, ժամանակի ընթացքում կարող էին անցնել ամենաբարձր դասի շարքերը՝ ավագանու խորհրդի մեջ: Ըստ Քսենոփոնի, հոմոտիմոսներ պատրաստող վարժարանը բաց է բոլոր պարսիկների համար, սակայն, ըստ էության՝ հասա-

Նելի է միայն ունեւոր քաղաքացիների երեխաներին, որովհետև միայն նրանք կարող են պահել երեխաներին, չստիպելով վաղ տարիքից աշխատել և ուսուցիչների հսկողության տակ զբաղվել ինքնակատարելագործմամբ: Հոմոտիմոսներից կազմված ընտրախմբով պետք է դառնար նոր պետության գլխավոր հենարանը:

Հատկանշական է, որ իր հորինված կատարյալ պետությունը Քսենոփոնը տեղադրում էր ոչ թե Արևմուտքում, օրինակ՝ իր սիրելի Ապարտայում կամ իր հակախոհ Պլատոնի պես, Հերկուլեսյան սյուններից այն կողմ՝ Ատլանտիդայում: Այդ ուտոպիական պետությունը նա տեղադրում է Արևելքում, որտեղ շուտով իսկապես պետք է ստեղծվեր առաջին հելլենիստական միապետությունը՝ Ալեքսանդր Մեծի տերությունը, և ապա նրա բազմաթիվ հաջորդները: Ըստ երևույթին՝ Քսենոփոնը, Իսոկրատեսը, ինչպես և նրանց շատ այլ ժամանակակիցները գիտակցում էին, որ նոր տիպի քաղաքակրթության ձևավորումն անհնարին է անտիկ պոլիսային արժեքներով կաղապարված Հունաստանի հողի վրա: Քսենոփոնը դա պետք է գիտակցեր առավել պարզ քան որևէ մեկը, քանի որ լավ էր ուսումնասիրել թե՛ Արևելքի, թե՛ Արևմուտքի կյանքը⁹: Արդյունքում նա եկավ այն համոզմանը, որ ապագա հելլենիստական (հետագայում նաև Բյուզանդական) տիպի սինկրետիկ պետություն կարող է ձևավորվել միայն Արևելքում և դրա ստեղծողը պետք է լինի վառ անհատականություն՝ Մեծ տիտղոսի արժանի¹⁰: Ահա

⁹ Հայտնի է, որ նա դիվանագետի կամ վտարանդու կարգավիճակով ապրել է շատ երկրներում և որպես վարձկան գնմվոր ծառայել է զանազան քանակներում:

¹⁰ Քսենոփոնի համոզմամբ նոր պետության մեջ հատուկ դերակատարություն պետք է ունենա կատարյալ տիրակալը, օժտված տարբեր առաջինություններով, իր մեջ զուգակցող լավագույնը, որ կարելի է քաղել պետության երեք ձևերից: Ե. Ֆրոլովը բնութագրելով Քսենոփոնի քաղաքական հայացքները գրում է. «Իմանալով Քսենոփոնի հետագա գործունեությունն ու ստեղծագործությունները կարելի է վստահ սասել, որ այդ գաղափարների հիմքում ընկած է պատկերացում դեմոկրատական հասարակարգի և արդարության սկզբունքի միջև անհամատեղելիության մասին: Վերջինս խարսխված է արիստոկրատական ռաջիոնալիզմի և պոլիսային հանրապետության տկարության գաղափարի, ինչպես և կատարյալ խելքի և ուժեղ կամքի տեր անձի, գորավարի և քաղաքագետի (որը նաև ունի իրական ուժ՝ օրինակ հավատարիմ բանակ) նկատմամբ անսահմանափակ հավատի վրա»: «Այդ հավատը ուժի գերակայության և «կատարյալ անձի» կարողությունների նկատմամբ, այն կարևոր բանն էր, որ ապագա «Կյուրոպոնիայի» հեղինակը քաղել է իր ուսումնառության տարիներից, սեփական փորձից և նորագույն փիլիսոփայական ուսմունքներից» (Фролов Э., Ксенофонт в его «Киропедея»: Ксенофонт. Киропедея. М., 1976, с. 247).

թե ինչու «Կյուրոպեդիայում» այդ պետության ստեղծողը՝ Կյուրոս Մեծը, պատկերված է Մեդիայի, Պարսկաստանի և Հայաստանի հետնսխորքի վրա: Դեռ ավելին՝ Քսենոփոնի ստեղծագործության գլուխներից մեկի (Գ, I) իմաստային առանցքը կազմում է երիտասարդ արքա Կյուրոսի և իր պատանեկության ընկեր հայոց թագաժառանգ Տիգրանի ազոնը:

Այդ երկու նշանավոր գործիչները միասին դաստիարակվել են հոմոտիմոսներ կրթող վարժարանում և օժտված են քաղաքացիական բարձրագույն առաքինություններով ու իմացությամբ: Այսպես Տիգրանը ներկայանում է իբրև արժանավոր քաղաքացի, որը, չնայած իր երիտասարդ տարիքին, հանդես է գալիս իբրև սոփեստական գիտելիքների կրող. նա կատարելապես տիրապետում է պոլիսային կյանքի հիմքը կազմող փիլիսոփայական հռետորության արվեստին (τέχνη ῥητορικῆ): Ըստ նույնի՝ հայոց թագաժառանգը նոր տիպի տիրակալ է, որին իր իմացության, և ինչու չէ, իմաստասիրական հմտության շնորհիվ, հաջողվում է փրկել մերձավորներին և ողջ երկիրը: Միևնույն ժամանակ նրա հայրը՝ հայոց արքան, «Կյուրոպեդիայում» ներկայացվում է իբրև պրոֆան՝ համապատասխան բնորոշ կեցվածքով: Առանձին դեպքերում նա թողնում է ուղղակի խղճուկ տպավորություն, և Քսենոփոնն, անգամ չի նշում նրա անունը: Հայոց արքան այստեղ ի հայտ է գալիս իբրև դարն ապրած ավանդական նահապետական բարքերի կրող: Այդ բարքերը, թեպետ ժամանակավրեպ են, բայց շարունակում են պայքարն իրենց գոյության համար. պատահական չէ, որ արքան հրամայում է սպանել նոր աշխարհաընկալումը մարմնավորող իր զավակին կրթած հույն ուսուցչին:

Այսպիսով, ըստ Քսենոփոնի, հելլենիստական պետության արքետիպը գտնվում է Արևելքում, նախալեքսանդրյան ժամանակաշրջանում, և դրա ակունքների մոտ կանգնած են այդպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսին են Կյուրոսն ու Տիգրանը: Նրանցից առաջինը, թերևս, մարմնավորում է իդեալական քաղաքական գործչի ակտիվ,

նախածեռնող ձիրքը, մինչդեռ Տիգրանը խորհրդանշում է բանական սկիզբ և օրենք, Νόμος¹¹:

Այդ և մի քանի այլ հանգամանքները չէին կարող վրիպել Տիգրան Բ-ի գլխավոր գաղափարախոս Մետրոդորոսի աջքից: Վերջինս եղել է «ձգտող» ստոյայի վառ ներկայացուցիչ¹²: Ուստի, մեր կարծիքով, Մետրոդորոսի ստեղծած քաղաքական դոկտրինի հիմքում պետք է ընկած լիներ Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» գաղափարախոսությունը: Դա, թվում է առավել ևս համոզիչ, քանի որ Մետրոդորոսի պատվիրատու և հովանավոր Տիգրան Մեծն իր փառավոր նախնի Տիգրան երվանդյանի անվանակիցն էր: Դրա մեկ այլ անուղղակի հաստատումը կարելի է համարել այն, որ հայկական ավանդության ու հնարավոր է նաև մեզ անհայտ այլ աղբյուրների վրա հենվող Մովսես Խորենացին ևս նույնացնում է Տիգրան Մեծին և Տիգրան երվանդյանին: Գնարավոր է այդ զուգահեռները գոյացել են արդեն Ք. ա. I դարում հայոց արքունիքին կից մի տեսակ գաղափարախոսական կենտրոնում, որի ակադավոր անդամներն էին Մետրոդորոսը և իր սան Արտավազը:

Եվս մի հետաքրքիր զուգահեռ՝ հայոց արքայազն Արտավազըն ունի բացառապես նմանություն Քսենոփոնի վեպում պատկերված թագաժառանգ Տիգրանի հետ, իսկ վերջինիս ուսուցիչը զարմանալիորեն նման է Մետրեդորոսին, անգամ իր ճակատագրով: «Կյուրոպեդիայում» Տիգրանի հույն ուսուցչին խանդի հողի վրա սպանում է

¹¹ Գունարեն Νομος-ը թերևս համարժեք է, նոր ժամանակի լուսավորական մտածողների կողմից շրջանառության մեջ մտցրած, ֆրանսերեն police-ին: Սեկնելով այդ եզրը Լ. Ֆակըր գրում է. «“Police” բառը մեզ մտցնում է իրավունքի, վարչարարության և կառավարման ոլորտ: Այդ հարցի վերբերյալ միակարծիք են բոլորը, սկսած Ռոբեր Էտյենից... և վերջացրած Ֆյուրբետյերով, որը 1690 թ. գրել է. «“Police”-ը օրենք է, վարվելակերպի կանոն, որը պետք է պահպանել հանուն պետության և մարդկային համակեցության. հակադրվում է բարբարոսությանը...»: Դելամարը, շարադրելով իր արժեքավոր «Տրակտատ police-ի մասին» գիրքը, առաջին ներածականում տալիս է “police” գաղափարի հիմնական սահմանումը... «Այն երբեմն օգտագործում են “police” իմաստով: Դա շատ ընդհանուր իմաստ է, որն ուներ այդ բառը երկար ժամանակ: Այն երբեմն օգտագործում են, - բացատրում է նա, - ցանկացած պետության կառավարման իմաստով և այդ իմաստով կարելի է բաժանել Միապետության, Ազնվապետության և ժողովրդավարության...» (Цивелизация: эволюция слова.

Бои за историю. М., 1991, с. 243):

¹² Степанян А., նշվ. աշխ., էջ 131:

հին բարքերը մարմնավորող հայոց արքան. Մետրոդորոսին սպանում է Սրտավազդի պապը՝ Միհրդատ Եվպատորը այն բանից հետո, երբ նրան քինախնդիր պոնտացու պահանջով հանձնում է անձամբ ինքը՝ Տիգրան Բ-ն: «Կյուրոպեդիայում» հույն փիլիսոփան մահն ընդունում է Սոկրատեսի պես հանգիստ և արժանապատվորեն, ինչպես վայել է իմաստունին: Նույն արքեստիպային պայմանաձևն են խաղարկում մեկ այլ դրամայի հերոսները, այս անգամ իրական Չայոց արքունիքում (Սենեկայից և Ներոնից մեկ դար ավելի վաղ):

Civil poli-ի տարածման մյուս բնորոշ գործիքներից էր հայոց թագուհի Կլեոպատրայի արքունական սալոնը: Տիկնանց տիկինը իր շուրջը հավաքել էր հույն փիլիսոփաներին, թատերգուներին և երիտասարդ արիստոկրատներին: Թագուհու սալոնի զարդն էին վերոհշյալ Մետրոդորոս Սկեպսացին և Ամփիկկրատես Աթենացին: Այդ է վկայում Պլուտարքոսը, որն իր «Կենսագրություններում» պատմում է նենգ մեքենայությունների և բանսարկությունների զոհ դարձած այդ երկու հույն փիլիսոփաների մասին. «Տիգրանի արքունիքում իր վերջը գտավ հռետոր Ամփիկկրատեսը, - գրում է հույն պատմիչը, - որին եթե արժե հիշատակել, ապա միայն նրա աթենական ծագման համար: Ինչպես պատմում են, նա իբրև վտարանդի ժամանեց Տիգրիսի Սելևկիա, և երբ նրան խնդրեցին ճառտարախոսության դասեր տալ՝ մեծամտորեն և հեզմաբար պատասխանեց. «Տաշտակի մեջ դելֆինը չի տեղավորվի»: Այնուհետև նա զնաց Տիգրանի կնոջ և Աիհրդատի դուստր Կլեոպատրայի արքունիք, բայց շուտով զրպարտվեց. նրան արգելեցին ամեն տեսակի շփում հույների հետ, և նա ինքն իրեն սովամահ արեց: Նա նույնպես պատվով թաղվեց Կլեոպատրայի կողմից, և նրա գերեզմանը գտնվում է Ասիայի մոտ (մի ինչ որ տեղի անուն այդ երկրում)» (XXII):

Ուշագրավ է, որ աթենացի փիլիսոփան արժանապատվությունից ցածր համարեց ապրելն ու դասավանդել Տիգրիսի Սելևկիայում՝ ըստ էության Պարթևական թագավորության ամենամեծ քաղաքում, որը գտնվում էր Տիգրոնի գրեթե անմիջական հարևանությամբ: Դրա փոխարեն նա նախընտրեց հաստատվել հայոց թագուհու պալատում, որում, ըստ երևույթին, անտիկ politesse-ի մակարդակը բավականին

բարձր էր, թերևս, ավելի բարձր, քան Միհրդատ Պոնտացու արքունիքում¹³, որտեղից սերում էր ինքը՝ Կլեոպատրան: Հակառակ դեպքում Մետրոդորը չէր նախընտրի հայոց արքունիքը պոնտական թագավորի պալատին, իսկ Ամփիկրատեսն իր չհավանած Սելևկիայից, կմեկներ ոչ թե Հայաստան, այլ նույն Պոնտոս: Պոնտական արքունիքում տիրող վայրի բարքերի մասին պատմում է նույն Պլուտարքոսը: Նա կարեկցանքով է նկարագրում ազնվագարմ աթենուևի Միլետցի Մոնիմեի տառապանքները: Վերջինս ամուսնանալով Միհրդատի հետ, ըստ Պլուտարքոսի, դարձավ ոչ թե թագավորի կին, այլ նրա գերին. «Նա օրերն անցկացնում էր սգո մեջ՝ անիծելով իր գեղեցկությունը, որը նրան տվեց տեր ամուսնու և բարբարոսական զնդան ամուսնության և տան օջախի փոխարեն: Նա ստիպված էր ապրել Հունաստանից հեռու՝ միայն երազում տեսնելով այն երջանկությունը, որի համար նա փոխանակեց իսկական հելլենական կյանքի բարիքները» (XVIII)¹⁴:

Այլ էր պատկերը հայոց արքունիքում: Խրախուսելով արիստոկրատական սալոնները և արմատավորելով *politesse*-ի ապրելակերպը՝ Տիգրանը ոչ միայն ձգտում էր քաղաքակրթել իր երկիրը, այլև համախոսել ազնվատոհմիկ վերնախավը լուսավորյալ միապետության գաղափարների շուրջը: Որոշ հետազոտողների համոզմամբ նույն նպատակին է ծառայել զարգացած և ուշ միջնադարում Եվրոպայում լայն տարածում ստացած կուրտուազային ծիսակարգը¹⁵: Ավելի ցայտուն դա արտահայտվեց նոր դարաշրջանի լուսավորյալ միապետների պալատական կյանքում: Հետազոտողների համոզմամբ, կուրտուազային կյանքը, առավել արդյունավետ քան որևէ այլ բան, համախմբում էր ազնվագարմ պատանիներին իրենց սենյորների շուրջը և այդ գործում առանձնահատուկ դեր էր հատկացվում սալոնի տիրու-

¹³ Հացունի Վ., Հայուհին պատմութեան մեջ, Վեներտիկ, 1936:

¹⁴ Ինչպես ասվեց, Պլուտարքոսը բացարձակացնում էր հույներին և հռոմեացիներին՝ մնացած այլ ժողովուրդներին համարելով բարբարոս: Ուստի նա կարեկցում էր այն հույներին, որ իրենց կամքին հակառակ հայտնվել են «բարբարոսական» միջավայրում, իսկ նրանց, ովքեր Մետրոդորոսի և Ամփիկրատեսի նման կամոլին ծառայում էին արևելյան տիրակալներին և իրենց հյուրընկալած երկրներում տարածում հելլենական քաղաքակրթական արժեքներ, համարում էր ուրացյալ և անարժան:

¹⁵ Гуревич А., Категории средневековой культуры. М., 1972.

հուն¹⁶: Ահա թե ինչու հայոց թագուհու պարտականությունների մեջ էր մտնում ներքաշել իր արքունիքի մեջ որքան կարելի է շատ ազնվագարմ երիտասարդների, որպեսզի նրանք կտրվեն իրենց նախկին միջավայրից, իսկ նրանց բարքերը մեղմվեն ու հղկվեն:

Այսպիսով ակներև է դառնում, որ Տիգրանը և իր մերձավորները նպատակաուղղված մշակում էին սոցիալական վարքածևի բուլորովին նոր չափանիշների, ոչ բնորոշ ավանդական հասարակությանը: Նրանց ջանքերի շնորհիվ Հայաստանում հնարավոր դարձավ նոր տիպի մարդու, անհատականության, գոյացում, որի վառ օրինակը Արտավազդն է: Վերջինս դարձավ իդեալական տիրակալի մարմնավորում, փիլիսոփա գահի վրա, այն էլ այնպիսի մեծ երկրում, ինչպիսին հին Հայաստանն էր: Հետևելով իր ուսուցիչ Մետրոդորոսին նա դարձավ ձգտող ստոյայի գաղափարների իրագործող: Ըստ էության, Մետրոդորոսին հաջողվեց այն ինչ չհաջողվեց Սենեկային՝ դաստիարակել նոր տիպի տիրակալի, որի մեջ ներդաշնակվում են իմաստասիրական հայեցողությունը (*vita contemplativa*) և կենսական ակտիվությունը (*vita activa*):

Այսպիսով սինոյկիայի և նոր տիպի ընտրախափի ստեղծմամբ Տիգրանն իր մայրաքաղաքում ձգտում էր ապահովել իշխանության բուլոր երեք ձևերի՝ դեմոկրատիայի, արիստոկրատիայի և միապետության հոմոնոմիա, ճիշտ այնպես, ինչպես «Կյուրոպեդիայում» պատկերացված է Քսենոփոնի իդեալական պետությունը:

*ЕРВАНД МАРГАРЯН
ИИ НАН РА*

ОБ ИСТОКАХ ПОЛИТИЧЕСКОЙ ДОКТРИНЫ ДЕРЖАВЫ ТИГРАНА II

РЕЗЮМЕ

Возводя здание своей эллинистической империи Тиграну пришлось столкнуться с сильным сопротивлением внутри страны. Оппозицией

¹⁶ Ինչպես օրինակ երկարածամ էնկիդուն վարժեցվեց և ենթարկվեց Գիլգամեշին միայն այն բանից հետո, երբ վերջինս նրա մոտ ուղարկեց մի անառակ կին, որի պատճառով էնկիդուն կորցրեց իր վայրի ուժն ու ցատումը, իսկ Սամսոնին գայթակղեց և երկար մազերի հետ նախկին զորությունից զրկեց քաղաքակիրթ Դալիլան:

внешнеполитическому курсу его выступила родоплеменная аристократия различных областей Великой Армении и сопредельных стран. Усиление власти эллинистического монарха влекло за собой падение их роли во внутриполитической жизни страны и ограничение их власти на местах. Античные авторы прямо указывают на то, что Тиграну приходилось применять жёсткие меры для подавления оппозиции армянской родоплеменной знати. Родовая аристократия сопротивлялась попыткам Тиграна эллинизировать страну, его попыткам приобщить её к городским формам жизни, сделать *urbanus, civilis*. С этой целью царём был предпринят насильственный синойклизм не только иноземцев, но и представителей армянской родовой аристократии в новую столицу. Таким образом Тигран стремился оторвать родовую знать от своих корней и «переплавить» в одном большом котле эллинистической культуры, превратив местных самовластных князей в обычных подданных империи и одновременно граждан эллинистического полиса.

Для обоснования своей империи Тиграном был создан своеобразный идеологический центр, где вырабатывались основные положения новой политической доктрины. По мнению исследователей идеологами Тиграновой империи выступали всё те же приглашённые греческие философы, и, в частности, Метродор Скепсийский. Надо полагать, что основные идеи или по образному выражению Ницше механизмы «фабрикации идеалов» они черпали в трудах позднеантичных авторов, которые начиная с эпохи предэллинизма искали выход из кризиса, поразившего античный полис, в ономии традиционных античных полисных и восточных монархических ценностей.

Основной задачей Тиграна было построение своеобразной просвещённой монархии, в которой царь управляет своими подданными не как деспот, а согласно законам разума и общественной необходимости, опираясь на значительную прослойку просвещённых подданных, прошедших школу морально-политического образования под руководством учителей-философов. Именно из этой элитарной прослойки царь собирался рекрутировать основную массу чиновничьего аппарата. В некотором смысле Тигран пусть ненадолго предвосхитил Римский принципат, своеобразную — «республиканскую монархию». Ему удалось примирить явления; прежде считавшиеся непримиримыми и взаимоисключаемыми — республиканские идеалы и индивидуализм. Наиболее ярко это сочетание, своеобразный синкретизм проявился в образе Артавазда, царя-интеллигента, пожалуй одного из самых способных учеников Метродора.

ՄԵԾ ՀԱՅՔԻ ՍՅՈՒՆԻՔ ԵՆՅԱՆՔԻ ՀԱԲԱՆԴ ԳԱՎԱՌԱՆՎԱՆ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՐՉ

Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում» Մեծ Հայքի իննե-
րորդ՝ Սյունիք նահանգում հիշատակվում է Հաբանդ գավառը, որի տա-
րածքը նաև ընդգրկում էր ներկայիս Սյունիքի մարզի Գորիսի ենթա-
մարզը (նախկին ՀիսՄ Գորիսի շրջանը)՝ բացառությամբ ժայր
արևմտյան մասի (Տաթևի ենթաշրջան)։ «Աշխարհացույցում» հիշա-
տակվում է նաև Սյուս Հաբանդը՝ որպես Արցախ աշխարհի առաջին
գավառ։¹ Այն սահմանակից էր Սյունիքի Հաբանդին։ Հաբանդ տեղա-
նունը հիշատակվում է հայոց գրավոր խոսքի ավելի հին հուշարձաննե-
րում։² Աղվանքում Հաբանդ անունով գավառի մասին գրում է Ղևոնդը։³

Սյունիքի Հաբանդ գավառաանունն ուշ միջնադարում փոխարին-
վել է Զագեծոր-Զանգեզուրով։

Հաբանդ գավառաանունն օգտագործվել է տարբեր տառադար-
ձություններով՝ Հաբանդ, Աբանդ, Աբանտ, Բարբանդ, Խարբանդ, Համ-
րանդ, Հարբանդ և այլն։⁴ Ու Ալիբանե իրավագիտորեն նշում է, որ գավառ
նի ճիշտ անվանաձևը Հաբանդն է։⁵

Անդրադառնալով բառի ստուգաբանությանը։ Առաջին հայաց-
քից կարող է թվալ, թե դա պարսկական անուն է, մանավանդ, որ այն իր
հնչմամբ մոտ է պարսկերեն «բանդ» (band) և «դարբանդ» (darband) հո-
մանիչներին, որոնք հայերեն նշանակում են կապան, լեռների մեջ
կիրճ, կապարան։⁶ Բայց քիչ հավանական է, որ գավառաանունը ստեղծ-
ված լինի պարսկերենի ազդեցությամբ։ Սյունիք աշխարհի Հաբանդ

¹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմ., առաջաբանը և ծանո-
թագր. Արրահամյան Ա. և Պետրոսյան Գ., Ե., 1979, էջ 295:

² Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987, էջ 27:

³ Ղևոնդ, Պատմություն, թարգմ., ներածություն և ծանոթագրություն Տեր-Ղևոնդ-
յան Ա., Ե., 1982, էջ 108:

⁴ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Մելիք-
Քախչյան Ա., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., հ. 3, Ե., 1991, էջ 297:

⁵ Ալիբան Դ., Ախսական, Վենետիկ, 1893, էջ 70-71:

⁶ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 519:

գավառը շրջապատված էր Ծղուկ, Բաղք, Աղահեճք գավառներով և դրանցից որևէ մեկի անունը պարսկական ազդեցությամբ չի ստեղծվել: Հարանդը բացառություն լինել չէր կարող: Գավառանունն Ստեփանոս Օրբելյանից շուրջ 900 տարի առաջ օգտագործել է Փավստոս Բուզանդը և որևէ փաստարկ չկա պնդելու, թե գավառն դրանից առաջ էլ այդպես չի կոչվել: Գավառանվան դեպի հին դարեր գնացող տարիքը պակաս հավանական է դարձնում նրա ստեղծման վրա պարսկերենի ազդեցությունը: Հարանդը զբաղեցնում էր Սյունիքի լեռնոտ, դժվարամատչելի միջնաշխարհը և քիչ էր առնչվում արտաքին աշխարհի հետ: «Հարանդ գավառ թեպետ եւ ի միջնաշխարհի Սիւնեաց գետեղալ կայ, այլ վասն դժվուարակոխ վայրացն եւ սակաւածանոթ մնայ եւ ոչ միայն յայժումս՝ այլ թուի եւ ի հնումն», - գրում է Ղ. Ալիշանը:⁷ Կարծում ենք ընդունելի չէ պրոֆ. Թ. Հակոբյանի Աբանդ-Հարանդ տեղանվան «ահա բանտը» ստուգաբանությունը, որի հիմքում ընկած է պարսկերեն «բանդը»:⁸ Հայ և օտար հետազոտողների կողմից Հարանդ բառի ստուգաբանության ուրիշ փորձեր ևս եղել են: Դրանցից առավել համաձայնալին Ս. Ունառյանի կողմից տեղանվան ստուգաբանական վերլուծության փորձն է «Սյունիքը դիցարան» գրքում:⁹ Ելակետային սկզբունք որդեգրելով, որ Սյունիքը եղել է համատարած դիցարան, շատ տեղանուններ կապ ունեն պաշտամունքի հետ, նա փորձում է հիմնավորել նաև Հարանդի դիցաբանական ծագումը: Դրա համար նա Հարանդ բառը բաժանել է մասերի՝ Հա-բան-դ: Եվ գտնում է, որ Հարանդ անունն ունեցել է խեթերեն հիմք՝ հա, որն այնուհետև հնչել է նոր խուռիերեն կամ ուրարտերեն տառադարձությամբ՝ հալու և հետո հայերենում դարձել հաղ՝ հաղորդություն: Բան մասնիկը հնչունափոխված վան (որից ունենք վանք) բառն է՝ սրբատեղ, զոհատեղ: Իսկ «դ»-ն փոքրասիական տեղանվան հոգնակին է: Այսպիսով, ըստ Ս. Ունառյանի, Հարանդը դառնում է զոհարան, ծիսարան: Նրա կողմից նույն իմաստով է մեկնաբանվում նաև Ախսական բառը: Այնպես որ Հարանդը և Սի-

⁷ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 254:

⁸ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Մեծիք Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., հ. 1, Ե., 1986, էջ 2:

⁹ Ունառյան Ս., Սյունիքը դիցարան, Ե., 1981, էջ 37-38:



սականը դառնում են համարժեք նշանակություն ունեցող բառեր, երկուսն էլ նշանակում են ծիսարան: Բայց հարց է ծագում, եթե եղել է Սիսական (ծիսարան) բառը, որը նաև երկրանուն-տեղանուն էր, ինչու՞ տվյալ տարածքում պիտի հայտնվեր նույն նշանակությամբ երկրորդ բառը՝ այն էլ խեթա-նորիսուռիական դարատև լեզվական ճամփորդությունից հետո... Նոր խուռիերեն կամ ուրարտերեն հալու-զոհ բառահիմքով Սյունիքում այսօր էլ կա Հալե-ձոր (Հալիձոր) գյուղը, որը մտնում էր Հաբանդ գավառի մեջ:

Խուռիերեն պապ նշանակում է «սար», պապնի՝ «լեռնային»:¹⁰ Արարատյան արձանագրություններում էլ կարդացվում է Բաբանի՝ «լեռնային» երկրանունը, որի տեղադրությունը ճշգրտված չէ: Հայերենն այդ բառիմաստներին հավասարագոր ունի «ափափան»՝ լեռների վրա դժվարամատչելի ապառաժ տեղեր:¹¹ Հովսեփ վրդ. Սանտալճյանը ենթադրել է, որ ասորական Ադադնիրարի III (802-795 թթ. Ք. ա.) թագավորի Արաքսի ստորին հովտում գրաված Բաբանիսը եղել է Սյունիքի Հաբանդ գավառը:¹² Սակայն Ս. Ունառյանը կտրուկ ժխտում է Բաբանիս-Հաբանդ հնչունափոխության հնարավորությունը:

Հաբանդ տեղանունն հետաքրքրել է նաև գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանին, որի համար, ավաղ, «Անուանս ծագումն ու իմաստը մթին է»:¹³ Նա բառի ստուգաբանության փորձ իսկ չի կատարել:

Վերջին ժամանակաշրջանում Հաբանդ տեղանվան ստուգաբանության նոր մոտեցմամբ հանդես է եկել Ա. Ղարազյոզյանը: Նա ընդունում է տեղանվան էթնիկական ծագումը և այն կապում է Բալկաններից թրակիացիների և հեռավոր էվբեյա (Абантида-Աբանտիդա) կղզուց էվբեացիների (абантов-աբանտցիների) Հայաստան տեղաշարժման հետ՝ դրա հիմքում դնելով Ստրաբոնի հաղորդումները:¹⁴ Հաբան-

¹⁰ Капанцян Гр., *Хайаса-жолыбель армян*, Ереван, 1947, с. 218.

¹¹ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ.1, Ե., 1971, էջ 364:

¹² Սանտալճեան Հ., *Ստրեստանեայ եւ պարսիկ սեպագիր արձանագրութիւնք, Վիեննա*, 1901, էջ 45:

¹³ Հյուբշման Հ., Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 101:

¹⁴ Карагезян А., *Сюник, Нахчаван и Гохта*, Ереван, 2002, с. 25-26, 30.

դի ստուգաբանության այս տեսակետն արդեն իսկ շրջանառվում է գիտական հրապարակումներում:¹⁵

Այնուամենայնիվ, եթե մեզ համար մերժելի էր Հաբանդ տեղանվան մեջ պարսկական ազդեցությունը, ապա մասնապես անընդունելի է և հունական ազդեցությունը: Առաջարկում ենք տեղանվան ստուգաբանության մեր մոտեցումը: Հաբանդ տեղանունը թերևս ճիշտ կլինի ստուգաբանել բառի ոչ թե Հա-բանդ՝ այլ Հաբ-անդ երկատման ձևով: Այս դեպքում բառի երկրորդ մասը հին հայերենով հեշտ բացատրելի է: Անդ-այնտեղ վերջածանցով տեղանունները հայոց աշխարհում տարածված են՝ Մարանդ, Բագրևանդ, Վանանդ, Ջարեվանդ: Մնում է պարզել, թե ի՞նչ է և որտեղից կարող էր ծագել հաբ-ը: Պատմագիտությունը վաղուց ապացուցել է, որ հայ էթնոսի ձևավորման գործընթացում որոշակի դեր են խաղացել քաշ-երը (kaska) և բաղ-երը կամ բալերը (bala): Այս երկու ցեղերը հարևանությամբ ապրում էին Եփրատ գետի վերին հոսանքի շրջանում և իրենց ռազմատենչ գործողություններով (հատկապես քաշ-երը) հայտնի էին հին աշխարհի շատ երկրներում: Ք. ա. VIII դ. վերջին կամ VII դ. սկզբին այդ ցեղերը՝ նեղվելով կիմմերներից, թողեցին իրենց բնակավայրերը և Արաքս գետի հովտով շարժվեցին եկան ու բնավորվեցին Սյունիքում:¹⁶ Ա.Ղարազյոզյանը հավանական է համարում, որ այդ ցեղերին Սյունիքում կարող էին բնակեցնել Արատյան թագավորները:¹⁷ Այստեղ ևս նրանք ապրել են հարևանությամբ ու իրենց ցեղանունները տվել տարածքին՝ դրա հիմնավոր վկայությունները Սյունիքի Բաղք-Քաշունիք, ապա նաև Քաշաթաղ գավառանունների գոյությունն է:¹⁸ Սյունյաց աշխարհում ունենք նաև Բաղաբերդ, Բաղաց քար, Քաշեթաղոց բերդ, Քաշի մարզ տեղանունները:

¹⁵ Հարությունյան Բ., Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, ԴԲԴ, 2003, թիվ 1, էջ 231:

¹⁶ Карацзян Гр., նշվ. աշխ., էջ 129-130, 134:

¹⁷ Ղարազյոզյան Ա., Սյունիքի Բաղք և Քաշունիք գավառանունների ստուգաբանության հարցի շուրջը, «Լրաբեր հաս. գիտ.», 1978, թիվ 12, էջ 74:

¹⁸ Карацзян Гр., նշվ. աշխ., էջ 230, 256: Ա. Ղարազյոզյանը հնարավոր համարելով բաղ-երի ու քաշ-երի հայտնվելը Սյունիքում, այնուամենայնիվ, չի ընդունում Բաղք և Քաշունիք գավառանունների ցեղային-էթնիկական ծագումը՝ դրանց հիմքում տեսնելով աշխարհագրական գործոնը (տես Карацзян А., նշվ. աշխ., էջ 16-17):

Սյունիքում բնակություն հաստատած ցեղերը, բնականաբար, իրենց հետ բերում էին պաշտելի աստվածներին: Քաշերն ունեին Չարբա (Harba, Harpa) անունով աստվածության:¹⁹ Այդ անունն ավելի ուշ հայերենում կարող էր հնչել Չարս: Գորիսի բարբառում ր բաղաձայնի սղվելը հնարավոր է՝ ինչպես ջրաղաց-ջաղաց օրինակում: Ահա այդպես կարող էր ծագել Չարբա-Չարա-Չարանդը՝ ցույց տալով այդ աստծո պաշտամունքի վայրը: Սեր վարկածի օգտին է խոսում և այն, որ գավառանունն հանդիպում է նաև Չարբանդ ձևով:²⁰

СЕРГЕЙ АХВЕРДЯН
Горисский Гос. Университет

НОВАЯ ПОПЫТКА К ЭТИМОЛОГИИ НАЗВАНИЯ ГАВАРА АБАНД

РЕЗЮМЕ

Абанд был одной из административных единиц (гаваров) провинции Сюник. Он упоминается с древних времён. Этимологией названия Абанд занимались как армянские так и зарубежные учёные. Считалось, что название образовалось под внешним влиянием. Опровергая этот подход, сделана новая попытка связать этимологию Абанда с именем бога Арба (Narba) племени каш (Ka'ska).

¹⁹ Капанцян Գր., նշվ. աշխ. էջ 230, 256: Իսկ ո՞վ էր Չարբան և ի՞նչ աստվածություն էր ներկայացնում: Գուցե նրա պաշտամունքից է հայերենում մնացել հարբ-ելը կամ արբ-ելը: Անշուշտ իհն հայերն էլ հունական Դիոնիսիոսի պես խաղողի ու զինու հովանավոր աստված են ունեցել: Գուցե ամենևին պատահական չէ, որ բովանդակ Չայաստանում այսօր հայտնի է Չարանդի տարածքը ներկայացնող Գորիսի թթօղին: Օղի թորելը ակնածանք պարունակող ծխական արարողություն է տեղացիների համար, որը սկսվում և ավարտվում է աղոթքներով ու բարեմադրանքներով: Այստեղ տարածված է նաև Արբեն անձնանունը: Որոտան գետի ձախափնյա գորիսյան գյուղերում (Խոտ, Շինուհայր, Չալիձոր) տեղական սև խաղողից բարձրորակ գինի են ստանում: Շինուհայրի գինին XX դ. սկզբին նույնիսկ եվրոպական մրցանակներ է շահել:

²⁰ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 201, Չայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, է., 1991, էջ 297, ՉԱՅ, հ. 6, էջ 39:

ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍԻ ԿՈՍՏԱԱ II-Ի (642-668) ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ III ՏԱՅԵՑՈՒ (642-662)
«ՔԱՂԿԵՂՈՆԱԿԱՆ» ԼԻՆԵԼՈՒ ՇՈՐՀ

Սկսած VII դ. 30-ական թթ. Բյուզանդիայում եկեղեցական իրադրությունը բավական շիկացած էր: Դավանական տարածայնությունների սայրը Քրիստոսի մի կամքի մասին վարդապետությունն էր, որը պաշտոնապես հրապարակվեց 639 թ. սկզբին Հերակլիոս կայսեր (610-641) կողմից ստորագրված «Էկթեսիս» կոչված հրամանագրում: Այն, ինչ կատարվեց դրանից հետո, շատ է հիշեցնում V դ. II կեսի հետքաղկեդոնական փոթորկուն ժամանակաշրջանը: Եթե այն ժամանակ ընդհանրական եկեղեցին տրոհվել էր Քրիստոսի բնության հարցում, ապա շուրջ երկու դար անց բանավեճը կենտրոնացած էր կամքի վարդապետության վրա: Եվ հաշվի առնելով, թե եկեղեցին որքան հեղինակավոր ու ազդեցիկ էր միջնադարում, հասկանալի է նաև նրա դավանության շուրջ ծավալված բանավեճի կարևորությունը, որ շատ հաճախ իր հորձանուտի մեջ էր ներառում նաև կայսերին՝ նրանց քաղաքականությանը հաղորդելով եկեղեցա-դավանական հիմքերի խորը հարաբերակցում: Վերջինից զերծ չի մնում նաև Կոստաս II-ը (Կոստանդին III Պոզոնատոս): Գնահատելու համար վերջինիս եկեղեցական քաղաքականությունը, չափազանց կարևոր է իրադարձությունների այն նախընթացը, որոնք հանգեցրին «Տիպոսի» հրապարակմանը, որն իր հերթին բնորոշում է, թե իրականում ինչ դիրքորոշում ուներ կայսրը դավանական հարցերում: Սյուս կողմից, կայսեր եկեղեցական քաղաքականությանը վերաբերող անդրադարձը շատ կարևոր է իրապես պատկերելու VII դ. կեսերի Բյուզանդիայի վարած քաղաքականությունը Հայաստանի և հայոց եկեղեցու նկատմամբ:

4 արևելյան պատրիարքությունները՝ Կ. Պոլսի, Անտիոքի, Ալեքսանդրիայի և Երուսաղեմի, ընդունում են «Էկթեսիսը»՝ համախմբվելով մի կամքի վարդապետության շուրջ: Սակայն Հռոմի պապ Հովհաննես IV-ը (640-642) եկեղեցական մի ժողով գումարելով Հռոմում,

641 թ. սկզբին բանադրում է այն¹: Այս շրջանում մի կամքի վարդապետության դեմ իր անզիջում պայքարով հանդես է գալիս Աաքսիմոս Խոստովանողը՝ շարունակելով Երուսաղեմի մուլեռանդ պատրիարք Աուփրոնիոսի (630–638) գործը: Աաքսիմոսը սերում էր Կոստանդնուպոլսի մի հին ու պատվարժան ընտանիքից: Հայտնի է, որ Հերակլիոս Մեծը նրան դարձրել էր իր առաջին քարտուղարը՝ գնահատելով նրա շնորհներն ու գիտելիքները: Սակայն 630 թ., հրաժարվելով աշխարհիկ կյանքից ու պատիվներից, նա դառնում է Խրիսուպոլսի վանական: Հարց է ծագում. ինչու՞ հատկապես 630 թ. թվում է, թե մի կամքի ու ներգործության վարդապետության արդեն իսկ այս ամենավաղ շրջանում Աաքսիմոսն ընդդիմանում է կայսրին: Թեև նոր վարդապետության շուրջ առաջին խոսակցությունները սկսել էին դեռևս VII դ. 20-ական թթ. կեսերին, սակայն արդեն պարսկա-բյուզանդական պատերազմի (622–628) ավարտից ու իր հաջողակ նվաճումներից հետո կայսրը սկսել էր ավելի մեծ ուշադրություն դարձնել դավանական խնդրին՝ գործելով ավելի բացորոշ ու նպատակասլաց: Նոր վարդապետությամբ փորձ էր արվում կամրջել միաբնակների ու երկաբնակների միջև առկա խորը վիհը մի նոր միջին բանաձևով: Այս դավանության դեմ է ահա հանդես գալիս աստվածաբան Աաքսիմոս Խոստովանողը: Վերջինիս մասին վկայվում է անգամ հայ միջնադարյան մի հին աղբյուրի մեջ, հայտնի որպես Պատմութիւն Անանիայի Շիրակայնույ

¹ Այս ժողովի արձանագրությունները թեև չեն պահպանվել, սակայն նրա մասին վկայում է Թեոփանեսը, տե՛ս, Թեոփանես Խոստովանող, ժամանակագրություն, թարգմ. քննադրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ, 4, Ե., 1983, էջ 40, նաև՝ *Libellus synodicus*, տե՛ս, Mansi J., *Sacrorum conciliorum nova et amplissima collectio*, vol. 10, G.-Austria, 1960, p. 607. *Libellus synodicus*-ի հեղինակը վկայում է, թե հիշյալ ժողովում պատի կողմից բանադրանք տրվեց մի կամքի վարդապետության ամենամշանավոր եկեղեցական գործիչներին՝ Սերգիոսին (610–638), Կյուրոսին (630–643) և Պյուրոսին (638–641): Այնուամենայնիվ, մի փոքր ուշ կայսրին ուղղված մի նամակում պատը խոսելով Սերգիոսի մասին, անվանում է նրան «Երջանկահիշատակ եպիսկոպոս», իսկ նրան հաջորդած Թեոդորոս I պապը Կյուրոս Ալեքսանդրացուն տալիս էր «սրբազան» որակումը: Ակնհայտ է, որ հիշյալ հռոմեական ժողովը դատապարտել է սոսկ նորահայտ «հերձվածը»՝ զերծ մնալով ամուլների հիշատակումից:

Համարողի. «Իսկ յետ սուղ ինչ ժամանակի երևեցաւ Մաքսիմոս ոմն՝ փիլիսոփայ, միայնակեաց՝ ի Կոստանդնուպաւղիս, նորին աղանդովն Մաքսիմոսի, որ երկուս կամս և երկուս ներգործութիւնս ասէր ի վերայ Քրիստոսի»²: Քաղկեդոնիկների շրջանում Մաքսիմոսը, ինչպես Թեոփանեսն է վկայում, «մեծ հարգանք էր վայելում մենակյացի իր վսեմ գործունեությամբ»³: Ամենախորը դրվատանքով գրված այս խոսքերը, ինչպես և «ամենասուրբ Մաքսիմոս արքա» որակումը ցույց են տալիս, թե որքան հեղինակավոր էր Մաքսիմոսը երկաթնակների աչքում: Նրա պայքարը համարվում էր որպես ճշմարիտ դավանության համար մղված մի պայքար⁴: Մաքսիմոսը, լինելով մոլի քաղկեդոնական, հետևաբար՝ երկու բնությունների վարդապետության ջատագով, նորահայտ դավանությունը որպես անարգանք էր դիտում Քաղկեդոնի ժողովի (451 թ.) ընդունած որոշումներին, քանի որ մի կամքի և մի ներգործության վարդապետությունն անուղղակի հանգեցնում էր նաև մի բնության խոստովանության: 645 թ. եկեղեցա-աստվածաբանական շրջանակներում բավական նշանակալից իրադարձություն էր հայտնի բանավեճը Մաքսիմոսի և Կ. Պոլսի նախկին պատրիարք Պյուրոսի միջև⁵, որն ավարտվում է հօգուտ առաջինի: Կ. Պոլսի նախկին միակամ պատրիարքն ուղևորվում է Հռոմ՝ պապին հանձնելով իր «ուղղափառությունը» հաստատող գիրը: Սակայն, կարճ ժամանակ անց, Պյուրոսը կրկին ճշմարիտ է ճանաչում մի կամքի վարդապետությունը. «շուն դառնայ անդրեն ի փսխած իւր»⁶, ինչպես քաղկեդոնիկներն էին արտահայտվում նրա մասին: Թեոդորոս I պապը եկեղեցական մի ժողով գումարելով ս. Պետրոսի գերեզմանի վրա՝ իր ձեռ-

² Անանիա Շիրակացու մատենագրությունը, կազմեց Ա. Աբրահամյանը, Ե., 1944, էջ 398:

³ Թեոփանես, էջ 41:

⁴ Ինչպես Թեոփանեսն է գրում. «Մաքսիմոսն ու իր աշակերտները ...մարտնչում էին հանուն ուղղափառության՝ ընդդեմ միակամականների», նույն տեղում, էջ 58:

⁵ Բանավեճի նյութն ամբողջությամբ պահպանված է, տե՛ս J. Mansi, vol.10, p. 715-751:

⁶ Բ թուրք Պետրոսի, Բ, 20-22:

քով ստորագրում է Պյուրոսի և նրա համախոհների կարգալույծ լինելը⁷:

Մինչ տեղի էին ունենում այս իրադարձությունները, 646 թ. Աֆրիկայի եպիսկոպոսները գումարում են մի շարք ժողովներ ընդդեմ միակամության⁸: Արդյունքում մի կամքի վարդապետությունը որակվում է որպես հերետիկոսություն⁸: Ժողովական ուղերձներ են հղվում Կ. Պոլսի պատրիարք Պավղոս II-ին (641-653) և Հռոմի պապ Թեոդորոս I-ին¹⁰: Սակայն, իր հերթին, Կոստանդնուպոլսի միակամ պատրիարքը մի նամակ է ուղարկում Հռոմի պապին, ուր հստակ արտահայտում է իր նվիրվածությունը մի կամքի վարդապետությանը¹¹: Հռոմի պապը որոշում է չհաղորդվել «հերետիկոս» պատրիարքի հետ, հայտնելով, որ նա պետք է պաշտոնանկ լինի իր հերձվածի համար:

Կ. Պոլսում Հռոմի պապի ահա այս գործառույթների դեմ էր ուղղված 648 թ. «Տիպոսի» հրապարակումը Կոստաս II-ի կողմից: Դավանաբանական բովանդակությամբ կայսերական այս հրամանագիրը պահպանվել է Լաթերանի ժողովի (649 թ.) արձանագրություններում¹²: Այն չունի ոչ վերնագիր և ոչ մակագրություն, սակայն, քանի որ հները նրան տվել են նույն անվանումը, ինչպես այն պահպանվել է Լաթերանի ժողովի արձանագրություններում, ակներևաբար հրապարակվել էր նույն խորագրի ներքո:

Դավանական նրբություններ բովանդակող հրամանագրերը Բյուզանդիայում թեպետ հրապարակվում էին կայսրերի անվամբ ու ստորագրությամբ, այնուհանդերձ, նրանց իրական հեղինակներն ու

⁷ Ըստ Թեոփանեսի՝ հաղորդության գինու մեջ թաթախված թանաքով, էջ 41, Mansi J., vol. 10, p. 610:

⁸ Libellus synodicus-ի հեղինակն անդրադառնում է այս ժողովներին, մասնավորապես՝ Նումիդիա, Մավրիտանիա պրովինցիաներում գումարված ժողովներին, Mansi J., vol. x, p. 607.

⁹ Ավելորդ չէ նշել, թե աֆրիկյան ժողովների ընդունած որոշման մեջ որքան մեծ էր Աաքսիմոս Աստվածաբանի ազդեցությունը, նույն տեղում, էջ 690:

¹⁰ Նույն տեղում, էջ 926:

¹¹ Նույն տեղում, էջ 1019:

¹² Նույն տեղում, էջ 879, 1029, 1031:

նախագծողները Կոստանդնուպոլսի պատրիարքներն էին¹³: Այս տեսակետից բացառություն չէ նաև խնդրո առարկա «Տիպոսը», որի ստեղծման գործում անշուշտ մեծ էր ժամանակի պատրիարք Պավղոս II Կոստանդնուպոլսեցու դերը:

Տիպոսն իր բովանդակությամբ հստակ էր: Նախկինում մի կամք կամ մի ներգործություն, երկու կամք կամ երկու ներգործություն դավանելու պատճառաբանությամբ այն ամենևին էլ պատիժ կամ մեղադրանք չէր նախատեսում: Անցյալի դավանանքը կարծես տրվում էր մոռացության, շատ ավելի կարևորվում էր ներկան. «որպեսզի այլևս որևէ պատճառ չմնա հետագա վիճաբանությունների համար, մենք կարգադրում ենք, որ փաստաթուղթը, որն առիթ է տվել ներկա բանավեճին և երկար ժամանակ ի վեր կախված է Մեծ Եկեղեցու մուտքի պատին, հանվի»¹⁴:

Վերջին տողերն ուղղված են «էկթեսիսի» դեմ, քանի որ հենց վերջինս էր շուրջ մեկ տասնամյակ միակամության բացատրականով կախված Մ. Առֆիայի մուտքի պատին: Կոստաս II-ը մտադիր էր նոր հրամանագրով վերականգնել ընդհանրական եկեղեցու երկար ժամանակ ի վեր վտանգված խաղաղությունը, ավարտին հասցնել եկեղեցիների միությունն ու հաշտեցումը: «էկթեսիսի» արգելմամբ փորձ էր արվում հանգստացնել պապականությանը և նրանց, ովքեր մտածում էին ինչպես «արևմտականները»:

Կայսեր հրապարակած «Տիպոսի» ոգին բովանդակային առումով բավական նման էր Ջենոն կայսեր «Յենոտիկոնի» ոգուն¹⁵, բայց նշանավորվում էր ավելի բացարձակ ու կայսերական բնույթով: Կոստաս II-ն ընդամենը 18 տարեկան էր, երբ հռչակեց «Տիպոսի» անվերապահ կատարումը և հայտնի չէ, արդյո՞ք հարցրել էր նա որևէ խորհուրդ սենատից և կամ ընդհակառակը, ընդդիմացել՝ էր արդյոք սենա-

¹³ 482 Ջենոն կայսեր կողմից հրապարակված «Յենոտիկոնի» իրական հեղինակը Կ. Պոլսի Ակակիոս պատրիարքն էր, իսկ 639 թ. «էկթեսիսը» թեև հրապարակվեց Յերակլիոս կայսեր անվամբ, նրա հեղինակը Սերգիոս պատրիարքն էր:

¹⁴ Meassi J., vol. 10, p. 1029.

¹⁵ «Գիր միաւորութեան», Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 271:

տի տված խորհրդին: Որքա՞ն մեծ էր Պավղոս Կոստանդնուպոլսեցու ազդեցությունն այս հարցում, նկատի առնելով այն համագամանքը, որ միական պատրիարքն անշուշտ կդրդեր կայսրին վերականգնել մի կամքի վարդապետությունը: Այնուհանդերձ, Կոստաս II-ը, թեև չափազանց երիտասարդ, գիտակցում էր, որ հիշյալ դավանության վերահաստատումը բավական անխոհեմ կլիներ, որովհետև չափից դուրս վտանգված էին միականականների դիրքերը:

Տիպոսի սայրն իրականում, ինչպես և նշվեց, ուղղված էր «էկթեսիսի» դեմ, մաքառելով մի կամքի դավանության դեմ այնպես, ինչպես իր ժամանակ «էկթեսիսն» էր մաքառել մի ներգործության վարդապետության դեմ: Այս երկու հրամանագրերը խիստ տարբերվում են միմյանցից իրենց բնույթով, բովանդակությամբ և ազդեցությամբ: Չերակչիոս կայսեր «էկթեսիսը» կարծես մի խորհրդանշան էր՝ աստվածաբանական ոճով կազմված, մինչդեռ «Տիպոս»-ին տրված էր կայսերական հրամանագրին ավելի համապատասխան ձև: Այն հանդես էր բերում կայսերական անկողմնակալության ոգին, որն առավելապես հոգում է պետության և ոչ եկեղեցու համար: Երկրորդ տարբերությունը բովանդակության մեջ էր: Էկթեսիսը ներքին մի անհետևողականություն և հակասականություն էր բովանդակում, մի կողմից արգելելով բանավեճերն ու քննարկումները մի կամ երկու ներգործության շուրջ, մյուս կողմից հռչակում էր մի կամքի վարդապետությունը: Մինչդեռ Տիպոսն ավելի ներառում էր, հետևողական, հավասարապես մերժելով թե՛ մի ներգործությունը և թե՛ մի կամքը: Բովանդակային առումով այս կարծեցյալ անկողմնակալությունն ու անաչառությունն էր հետևապես տարբերակում այս երկու հրամանագրերը, որովհետև, իրականում, նրանք երկուսն էլ համաձայն էին մի հարցում, դավանաբանական զարգացումը պետք է կանգ առնի այնտեղ, ուր հասել էին առաջին հինգ տեղեկական ժողովները և թե թուր մյուս հարցերը այս ծրագրից դուրս պետք է բացառվեն: Ինչպես Չ. Չեֆելն է նշում. «կայսերական այս անաչառությունը մի անհաջող ոսկե միջին էր»¹⁶, քանի

¹⁶ Hefele C., Histoire des conciles d'après les documents originaux, t. 4, Paris, 1870, p. 87.

որ հավասարապես վտանգում էր թե միակամության և թե երկակամության վարդապետությունները՝ արգելելով երկուսն էլ: Եվ վերջապես երրորդ տարբերությունը այս հրամանագրերի ունեցած ազդեցության մեջ էր: Եթե «էկթեսիսը» հնազանդության կոչ էր անում մի ընդհանուր ձևով, ապա «Տիպոս»-ը ժանր պատիժներ էր սպառնում (ունեցվածքի բռնագրավում, պաշտոնազրկում, մարմնական պատիժներ, ցմահ աքսոր) բոլոր նրանց, ովքեր կհակառակվեին նրանում առկա կարգադրություններին: Պատիժները տարբեր էին՝ կախված նրանից, թե հոգևոր կամ աշխարհիկ ինչ դիրք ունեն «զանցառուն»: Հրամանագրում զգացվում էր կայսրի դաժան ու անհողդողդ ոգին:

649 թ. հուլիսի 5-ին պապ է ձեռնադրվում Մարտինոս I-ը (649-655): Կայսրն անմիջապես բարեկամական մի ձևով պահանջում է միավորվել «Տիպոս»-ին, սակայն Մարտինոս I-ը հրաժարվում է, և, հիմնավորելու համար իր մերժումը եկեղեցական մի ժողովի հեղինակությամբ, անհապաղ հրավիրում է մի մեծ ժողով: Թեև պետք է նշել, որ Հռոմում անթաքույց էր վրդովմունքը նրա հրամանագրի հանդեպ, որն էլ վճռորոշ դեր խաղաց Լաթերանի ժողովի գումարման գործում:

Ժողովը գումարվեց 649 թ. հոկտեմբերի 5-ին շարունակվելով մինչև նույն ամսվա վերջ: Այն ունեցավ հինգ նիստ, որոնք կոչվեցին սեկրետարիաներ: Ժողովին ներկա եպիսկոպոսների թիվը զանազան աղբյուրներում տարբեր է. օրինակ՝ Թեոփանեսը նշում է, թե նրան մասնակցեցին հարյուր հիսուն եպիսկոպոսներ¹⁷, իսկ մեր միջնադարյան աղբյուրներից մեկում՝ Անանիա Շիրակացուն վերագրված ժամանակագրության մեջ՝ «ի սորա (Կոստաս կայսեր) աուրս եղև ժողով ի Հռովմ քաղաքի հարևր տասն եպիսկոպոսաց, և մոնազոնաց բազմաց...»¹⁸: Լաթերանի ժողովի պահպանված որոշ արձանագրություններ որոշակի են դարձնում, որ նրան ներկա են եղել հարյուր հինգ, զերակշիռ մասը՝ հռոմեական եպիսկոպոսներ¹⁹:

Պապը նախագահեց ժողովին, հոգ տանելով, որ հունարեն թարգմանվեն նիստերի արձանագրությունները ուղարկելու համար

¹⁷ Թեոփանես, էջ 41:

¹⁸ Պատմութիւն Անանիայի Շիրակայնոյ Համարողի, էջ 398:

¹⁹ Mansi J., t. x. p. 1114-1150.

կայսրին և արևելյան պատրիարքությունների եպիսկոպոսներին: Յուդեայի 31-ին, 5-րդ նիստում, ժողովի մասնակիցներին ներկայացվեց նախապես կազմված հատվածների երկար մի շարք, որոնք բովանդակում էին վկայություններ ս. Չայրերից՝ հոգուտ երկակամությամբ:

Ժողովը եզրակացրեց, թե ի դեմս այս մեջբերումների, ակներև է, որ Կյուրոսը և Սերգիոսը հակադրվել են ս. Չայրերին²⁰: Իսկ ժամանակի կանխակարծությամբ հակադրումը եկեղեցու նշանավոր Չայրերին ծանր մեղադրանք էր համարվում: Ժողովը պնդեց, թե մի ներգործության և մի կամքի վարդապետությունը տանում է առ մի բնության վարդապետության, որն անարգանք է Քաղկեդոնի ժողովի սուրբ հիշատակին: Իսկ վերջինս, ինչպես հայտնի է, քրիստոնեական ուղղափառության հիմնաքար էր Հռոմի համար, քանի որ «Հռոմը մնաց համառորեն քաղկեդոնական»²¹:

Ի դեպ, ժողովին ներկա էր նաև Մաքսիմոս Խոստովանողը, ինչպես Թեոփանեսն է վկայում, ավելին, համաձայն պատմիչի, ժողովը գումարվեց հենց նրա նախաձեռնությամբ. «Մաքսիմոսն Աֆրիկայից Հռոմ ժամանելով, գրգռեց Սարտինոս պապի նախանձախնդրությունը...»²²: Մաքսիմոսի ունեցած ազդեցության մասին անուղղակի կերպով վկայում է նաև Միքայել Ասորին. «...Երեւեցաւ այր մի ի Կոստանդինուպօլիս Մաքսիմոս անուն, որ խօսեցաւ հերձուածս՝ ի Քրիստոս՝ երկուս կամս և երկուս ներգործութիւնս, և ոչ ընդունեցաւ, բայց ի Հռոմ ոչ արհամարհեցաւ յորժամ լուան»²³:

Ժողովում ճշմարիտ դավանություն հռչակվեց երկու կամքի և երկու ներգործության վարդապետությունը՝ ըստ երկու բնության, նույնը, որը հռչակել էին նաև աֆրիկյան եպիսկոպոսներն ընդամենը 2 տարի առաջ: Ժողովում վճռորոշ էր հենց երկակամության առաջնորդ

²⁰ Լույն տեղում, p. 1148 :

²¹ Wigram W., *The Separation of the Monophysites*, London, 1923, p. 19.

²² Թեոփանես, էջ 41, 54:

²³ Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորաց Պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 320:

Մաքսիմոսի խոսքը, թեև պապն իր հետևողականությամբ հետ չէր մնում վերջինից:

Լաթերանի ժողովը, ինչպես տիեզերական ժողովների պատմության խոշորագույն մասնագետ Չ. Յեֆելն է նշում, իր ձևով և ընթացքով պարզապես մի ընդօրինակում էր Քաղկեդոնի ժողովի²⁴: Ժողովում ընդունված և բոլոր անդամների կողմից ստորագրված դավանական փաստաթուղթը և ժողովական արձանագրությունները առաքվում են համայն քրիստոնյա աշխարհ²⁵: Պապն ու եպիսկոպոսները համատեղ մի էնցիկլիկա (պապական կոնդակ) են ուղարկում բոլոր եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին, վանականներին, անգամ մենակյացի կյանքով ապրող անապատականներին, ուր հստակ բանադրվում էր նոր հերձվածը և վերջինիս սկզբնապատճառ «էկթեսիսն» ու «Տիպոսը»:

Մեկ այլ ժողովական թուղթ ուղարկվում է կայսրին: Նրանում ասվում էր, թե ժողովը հաստատում է ճշմարիտ դավանանքը՝ դատապարտելով նոր հերձվածները, որոնք չկամեցան ճանաչել Քրիստոսի մարդկային կամքը. «Փարանի Թեոդորոսը, Կյուրոսը, Սերգիոսը, Պյուրոսը և Պավղոսը²⁶ հարկադրանքով կորզեցին «էկթեսիսն» ու «Տիպոսը»-ը՝ մոլորեցնելով կայսրերին»²⁷: Այս վերջին խոսքերով պապը կարծես փորձում է հետագա բանադրանքից փրկել կայսերական հեղինակությունը, եթե միայն կայսրն իր հերթին դատապարտի հերետիկոսությունը: Ի դեպ, ժողովական այս ուղերձի մասին հիշատակվում է նաև վերը նշված հայ միջնադարյան աղբյուրի մեջ. «...և գրեցին անափորայ առ թագաւորն կոչեցեալ ի միաւորութիւն ինքեանց: Իսկ թագաւորն ոչ հաւանեցաւ...»²⁸:

Սակայն Կոստաս II-ն իր միջոցներով անցավ Յերակլիոսից՝ չկարողանալով կոտրել պապի համառությունը: Վերջինս 654 թ. աշ-

²⁴ Յեֆել Չ., նշվ. աշխ., էջ 99:

²⁵ Խոսքն իրականում վերաբերում է Հռոմից հետո 4 արևելյան պատրիարքություններին:

²⁶ Այս երկար շարքով թվարկված են մի կամքի վարդապետության առավել հայտնի եկեղեցական գործիչները:

²⁷ Mansi J., t. x, p. 790.

²⁸ Պատմութիւն Անանիայի Շիրակայնոյ Համարողի, էջ 398:

նանը բերվում է Կոստանդնուպոլիս՝ պատասխան տալու համար իր դեմ հարուցված մեղադրանքներին: Նոր Ռոմում շուրջ երեք ամիս բանտում մնալուց հետո 655 թ. սկզբին հրապարակավ ենթարկվում է մարմնական պատիժների, ապա աքսորվում Խերսոնի հեռավոր ծովափնյա շրջանները, ուր և վախճանվում է նույն թվականի սեպտեմբերի վերջին²⁹: Մարտինոս I-ի հալածանքին հետևում է Մաքսիմոսի և նրա երկու հետևորդների հալածանքը: Թվում է, թե դա ավելի մեծ ատելություն է առաջացնում կայսրի հանդեպ, քան պապի նկատմամբ արվածը, որովհետև Մաքսիմոսը լայն հռչակ էր վայելում և համարվում ճշմարիտ հավատի առաջնորդ³⁰: Թեոփանեսն այս իրադարձությունը թվագրում է 658 թ., գրելով, թե «Մաքսիմոսը Անաստասիոս անունը կրող իր երկու աշակերտներով նրա ամբարշտության դեմ շատ բան էին գրել»³¹: Համաձայն պատմիչի, Կոստաս II-ը նախ փորձում է «նրանց թեքել դեպի իր չարափառությունը»³², ապա, անհաջողության մատնվելով, սոսկալի չարչարանքի է ենթարկում, աքսորելով Լազիկա:

Կոստաս II-ն առաձնապես ժողովրդականություն չէր վայելում: Ջարմանալիորեն նա ատելի էր հատկապես քաղկեդոնիկների համար: Դավադրությունները հաճախ էին սպառնում նրա թագին ու կյանքին և հենց դրանով էր պայմանավորված Կոստաս II-ի միտումը՝ տեղափոխել կայսրության կենտրոնն Արևմուտք, որտեղ նա իրեն ավելի հանգիստ ու ապահով էր զգում: Համաձայն Թեոփանեսի «բյուզանդացիներն ատեցին [Կոստասին] առավել ևս այն բանի համար, որ նա բա-

²⁹ Թեոփանես, էջ 41, 58: Ի դեպ որոշ նամակներ, գրված պապի կողմից Խերսոնից, պահպանվել են, տես Mansi J., t. x, p. 861.

³⁰ Այնուհանդերձ, նույն հռչակը նա չուներ միաբնակների շրջանում: Արդեն VIII դ. սկզբին աղվանից ժողովի կողմից Եղիա Արճիշեցի հայոց կաթողիկոսին տրված ձեռնարկում Մաքսիմոսը նույնացվում է Նեստորի հետ. «...ի միջի մերում երևեալ այժմ չարարմատ դառնութեան աղանդոյն Նեստորի և Մաքսիմոսի ի ձեռն Ներսեսի ամբարշտեցելոյ...» (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 298), քիչ անց դասվելով հերձվածողների շարքում. «Եւ արդ մեք ամենեքեան նզովեմք զամենայն հերձուածողսն... զժողովն Քաղկեդոնի և զտոմարն Լևոնի, զՄաքսիմոս և զաշակերտս նորա» (նույն տեղում, էջ 301):

³¹ Թեոփանես, էջ 58:

³² Նույն տեղում:

զում ուղղափառների խոշտանգեց, նրանց ունեցվածքը բռնագրավեց ու քստորեց, քանզի նրանք հավանություն չէին տալիս իր հերձվածին...»³³:

Այս հալածանքներից զերծ չէին մնում նաև Հռոմի քաղկեդոնիկ եպիսկոպոսները³⁴:

Կոստաս II-ն իր դավանությամբ ոչ մոլի քաղկեդոնական էր և ոչ էլ միակամության հետևորդ: Ըստ ամենայնի, եկեղեցու կողմից քարոզվող վարդապետությունն այնքան էլ չէր հետաքրքրում կայսրին: Նա միայն ձգտում էր, որ վարդապետությունը լիներ միակերպ և անփոփոխ՝ եկեղեցին դարձնելով կախյալ պետության մեջ: Պետության եկեղեցական միությունը Կոստաս II-ի համար պայմանավորված չէր ինքն իրենով, այլ գլխավորապես քաղաքական միության նշանակություն և իմաստ ուներ: Կայսրն այդպես էլ չհետաքրքրվեց եկեղեցու վարդապետության էությամբ, չխորացավ դավանաբանական նրբությունների մեջ, անգամ եթե դրա անհրաժեշտությունը զգացվեր, ինչպես իրենց ժամանակ Հուստինիանոս I-ը, Հերակլիոս Մեծը:

Լինելով ուժեղ կամքի և անխոնջ էներգիայի տեր անձնավորություն, իր եկեղեցական քաղաքականության մեջ և առհասարակ եկեղեցիների միության հարցերում Կոստաս II-ը փորձում էր իր գիծն առաջ քաշել՝ վճռորոշ դեր ունենալ Բյուզանդիայի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միջև հարաբերությունների ստեղծման գործում: Իր քաղաքականությամբ նա ջանում էր համարվել նաև եկեղեցու և ոչ սոսկ պետության գլուխ, այդ առումով սահմանափակելով Արևմուտքում՝ Հռոմի պապի և Արևելքում՝ Կ.Պոլսի պատրիարքի իրավասությունները:

Բյուզանդիայի VII դ. կեսերի եկեղեցա-դավանական իրադրության և Կոստաս II-ի եկեղեցական քաղաքականության այս անդրադարձը շատ կարևոր է ճշգրտորեն գնահատելու համար նշված շրջանում Բյուզանդիայի վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Հայոց եկեղեցին, պետականության քայքայության

³³ Թեոփանես, էջ 63:

³⁴ Նույն տեղում, էջ 41

պայմաններում, ուրույն դեր ունենր ժողովրդի կյանքում և եկեղեցական հարաբերությունները շատ հաճախ սքողում էին քաղաքական հարաբերությունները: Անգամ եկեղեցու դավանական-ծիսական հարցերը միջնադարում ունեին իրենց քաղաքական նշանակությունը, որովհետև նրանց վրա հիմնվելու արդյունքում էր Հայաստանը, ի դեմս եկեղեցու, զերծ մնում օտար նվաճողական նկրտումներից: Իսկ եկեղեցու ենթարկվելը նախապայման կլիներ նաև քաղաքական լիարժեք ենթարկման:

VII դ. կեսերից սկսած ընդհուպ մինչև դարի վերջ՝ Հայաստանի կատարյալ նվաճումն արաբների կողմից, հայ ժողովուրդը շարունակաբար կանգնած էր երկընտրանքի՝ արաբական և կամ բյուզանդական տիրապետություններից մեկին նախապատվություն տալու խնդրի առաջ: Չկար ոչ ներքին քաղաքական միասնություն և ոչ էլ ձևավորված ուղղություն: Միատեսակ կողմնորոշման բացակայության պայմաններում ժամանակի դեպքերն ու հանգամանքներն էին որոշում, թե վերը նշվածներից որ կողմին պետք էր նախապատվություն տալ: Արաբական տիրապետությունը բովանդակում էր կրոնական մոլեզունության և վայրագ, ավարառու ասպատակություն, իսկ բյուզանդականը՝ հաճախ բռնություններով զուգորդված սովորությունների, ծեսերի, դավանության պարտադրում: Անելանելի մի կացություն էր տիրում և ստեպ-ստեպ փոխվում էր վերաբերմունքը այս երկու կողմերի հանդեպ, որն էլ իր հերթին առաջ էր բերում հպատակության կամ ենթակայության փոփոխում: Եվ թեև Արաբական խալիֆայությունն օրըստօրե հզորանում էր, իսկ Բյուզանդիան թուլանում, այնուհանդերձ VII դ. 40-ական թթ. սկսելով իրենց արշավանքները դեպի Հայաստան, արաբներն այս սկզբնական շրջանում բավարարվում էին սոսկ ասպատակություններով ու կողոպուտով և արաբական վտանգն այնքան շոշափելի չէր: Անգամ մինչև VII դ. վերջին տասնամյակները երկրում ավելի զգալի էր Բյուզանդիայի տիրապետությունը:

Հայ ժողովրդի պատմության ահա այս երեքուն շրջանում է կաթողիկոս կարգվում Ներսես III-ը (642-662): Նա ծագումով Տաջը նահանգից էր, Իշխան գյուղից: Միջնադարյան մեր պատմիչները, պատմելով կաթողիկոսի հայրապետությունը, բոլորն անխտիր այն զուգոր-

դում են եկեղեցական շինարարության գեղեցիկ պատումներով³⁵: Այս է պատճառը, որ ավելի ուշ նրան սկսում են կոչել նաև Ներսես Շինող:

Կաթողիկոսի աթոռակալության շրջանին վերաբերող առավել մանրամասն փաստեր հաղորդում է Սեբեոս պատմիչը՝ այդ առումով հանդես գալով որպես ականատես վկա: Փաստելով, որ տակավին մանկությունից Ներսեսն իր կրթությունը ստացել էր Բյուզանդիայում և քաջատեղյակ էր հունարեն լեզվին ու դպրությանը, Սեբեոսն ապա շարունակում է իր միտքը. «և հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի և ի վերայ տունարին Լեւոնի ...ի սրտի իւրում ծածկեալ ունէր զթինս դառնութեան, և խորիէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր հանել զբանն ոչ համարձակէր»³⁶: Թվում է, թե Բյուզանդիայում ապրած և ուսանած տարիները բավարար հիմք են Սեբեոսին որակելու կաթողիկոսին որպես քաղկեդոնական և Քաղկեդոնի ժողովի վրա խարսխված հայ-բյուզանդական եկեղեցական միության ջերմ հետևորդ:

Հայ միջնադարյան աղբյուրների շարքում իր քաղկեդոնական ոգով զատորոշվող «Narratio de rebus Armeniacae» սկզբնաղբյուրի մեջ ևս նշվում է, թե Ներսես III «համահաղորդակից էր հռոմայեցիների կայսեր» և թե Հովհան Մայրագոմեցին բոլորին մղում էր հակաճառության, ասելով, թե Ներսեսն էլ «մոլորվել է եզրի պես»³⁷: Սակայն, ուղղվածությամբ քաղկեդոնիկ այս աղբյուրի համար մեծան պնդումը, մեր կարծիքով, ավելի քան բնական է: Իր հերթին վրաց կաթողիկոս Արսեն Ասփարացին իր «Վրաց և Հայոց բաժանման մասին» երկում Ներսես III-ին համարում է «արժանի և ուղղահավատ մարդ»³⁸: Վրաց

³⁵ Սեբեոսի Պատմութիւն, Աշխ. 9. Արգարյանի, Ե., 1979, էջ 147, Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերսեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 83-84, 90, Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 88-89, Վարդանայ Վարդապետի Հաւաքումն Պատմութեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1862, էջ 67, 69, Կիրակոսի Վարդապետի Գանձակեցոյ Համառօտ Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 34:

³⁶ Սեբեոս, էջ 167:

³⁷ «Narratio de rebus Armeniacae» հունարեն քարգանությունը մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 1, Ե., 2002, էջ 109:

³⁸ Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 1, Ե., 1934, էջ 46:

քաղկեդոնիկ կաթողիկոսն այդպես կարող էր արտահայտվել միայն մի դեպքում, եթե հայոց կաթողիկոսը բաժաներ իր դավանությունը: Հատվածի վերջում, Սափարացին մանրամասնում է իր միտքը, նշելով, թե «Ենեզամիտ Հովհանն (այսինքն՝ Մայրագոմեցին) ...Ներսեսին տեսել էր Դուսաստանուս ուղորդվելու Կոստասդրոն ֆոքր թագավորի ոտ»³⁹: Ըստ Սափարացու դա տեղի էր ունեցել մինչև Ներսեսի հայրապետական ձեռնադրումը: Իսկ վերջինս, ինչպես հայտնի է, կաթողիկոս է կարգվում 642 թ., մինչ այդ երկար տարիներ լինելով Տայքի եպիսկոպոս: Անհասկանալի է մնում, թե երբ կարող էր Ներսեսը հաղորդվել Կոստաս II-ի հետ, որովհետև այստեղ խոսքը վերաբերում է հենց նրան: Երբ վերջինս գահ բարձրացավ, ընդհամենը 11 տարեկան էր: Մյուս կողմից Ասփարացուց մեջբերված այս հատվածի պատմական վավերականությունը տակավին հաստատված չէ, քանի որ անհայտ է, թե ինչ պատմական աղբյուրներից է օգտվել վրացի հեղինակը հիշյալ շարադրանքում:

Քաղկեդոնական էր արդյոք Ներսես III Տայեցին և հիրավի՞ «շարժեաց զճշմարիտ հաւատս սրբոյն Գրիգորի, զոր կալեալ էր ամենայն կաթուղիկոսացն հաստատուն հիմնադրութեամբ...»⁴⁰, ինչպես Սեբեոսն է պնդում: Ներսես III Տայեցու աթոռակալության շրջանում եկեղեցական երկու ժողով է գումարվում Դվինում: Առաջինի մասին թեև միջնադարյան մեր պատմիչները չեն փաստում, այնուամենայնիվ նրա կողմից ընդունված 12 կանոնները զետեղված են Կանոնագրքի մեջ հետևյալ խորագրի ներքո «Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն»⁴¹: ժողովի գումարման տարեթիվ է նշվում «յամի չորրորդի Կոստանդիանոսի կայսեր»⁴², այսինքն 645 թ.: Կանոնագրքում պահպանված է եկեղեցական բարեկարգությանը վերաբերող այս կանոնները դարերի ըն-

³⁹ Լույն տեղում:

⁴⁰ Սեբեոս, նույն տեղում: Հմմտ. «... շարժեցաւ հաւատն զոր ընկալեալ էր ի սրբոյն Գրիգորէ և ցայն վայր անշուշտ կացեալ և մնացեալ», Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 86:

⁴¹ Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Բ, Ե., 1971, էջ 200-215, հիշյալ կանոնների մասին տես նաև Կանոնագիրք, հ. Բ, Ներածություն, էջ LXXII-LXXIV:

⁴² Լույն տեղում, էջ 200:

թացքում հանդես են եկել որպես Հայոց եկեղեցու կանոնական օրենքներ⁴³: Ըստ ամենայնի, հիշյալ ժողովը զբաղվել է բացառապես բարեկարգական կետերով, չչոչափելով որևէ դավանական խնդիր⁴⁴, հակառակ դեպքում միջնադարյան մեր աղբյուրները չէին վարանի մեկ անգամ ևս փաստել, թե հայոց եկեղեցին հաստատուն մնաց նախնավանդ վարդապետությանը՝ դատապարտելով Քաղկեդոնի ժողովը:

Կաթողիկոսի աթոռակալության շրջանից շատ ավելի հայտնի է Դվինի մյուս ժողովը՝ գումարված 648 թ., ինչպես դեպքերին մոտ կանգնած Սեբեոսն է վկայում: Հիշյալ տարեթիվը պարզ է դառնում անուղղակի, մեկ այլ իրադարձության առնչությամբ, այն է՝ 652 թ. քյուզանդական Կոստաս II կայսեր հրամանով Դվինի ս. Գրիգոր եկեղեցում հունարեն պատարագի արարողությունից հետո «անհայտ» եպիսկոպոսի⁴⁵ կողմից կայսրին ասված հետևյալ խոսքերով. «յառաջ քան զայս չորս ամառ՝ ժողով արար դա ...»⁴⁶: Իսկ Հովհաննես Դրասխանակերտցին հիշյալ ժողովի գումարումն առաջ է զգում երկու տարով, դարձյալ վերը նշված միջադեպի շարադրման հատվածում. «զի երկու ամօք յառաջ քան զայս հրամայէր դա ժողով եպիսկոպոսացն առ ինքն լինել...»⁴⁷: Ճիշտ է, այնուամենայնիվ Սեբեոսի մատնանշած տարեթիվը: Դրասխանակերտցին, ժողովում ընդունված ռոշումը

⁴³ Այս մասին տես նաև Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, էջմիածին, 2001, սուրն 829-833:

⁴⁴ Ա. Օրմանյանն, ընդհակառակը, գտնում է, թե «բացարձակ հակաքաղկեդոնի դաւանութիւնը հռչակուեցաւ ժողովէն», նշվ. աշխ., սյուն 830, այս տեսակետը չհիմնավորելով որևէ աղբյուրի վկայությամբ: Համաձայն գիտնականի, եթե 648 թ. Դվինում գումարված մյուս ժողովն իր հռչակած դավանությամբ և երկայնքով հակաքաղկեդոնական էր, ապա քնակաճորեն, այդպիսին պետք է լիներ նաև խնդրո առարկա ժողովը: Ա. Ջամինյանը ևս գտնում է, թե 645 թ. Դվինի ժողովը ոչ միայն բարեկարգական խնդրով է զբաղվել, այլև նգովել է վիճահարույց ժողովը, տես Ջամինյան Ա., Հայոց եկեղեցու պատմություն, Նոր-Նախիջևան, 1908, էջ 132: Իսկ Ն. Մելիք-Թանգյանի կարծիքով կաթողիկոսի հայրապետության շրջանում գումարվել է միայն մեկ ժողով, ուր և ընդունվել են հիշյալ կանոնները, Մելիք-Թանգյան Ն., Հայոց եկեղեցական իրավունքը, հ. Ա, Շուշի, 1903, էջ 390:

⁴⁵ Որ շատ հայագետների կարծիքով ինքը՝ Սեբեոսն է (Սեբեոս Բագրատունեաց եպիսկոպոս):

⁴⁶ Սիբեոս, էջ 168:

⁴⁷ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 87:

ներկայացնելով նույն եպիսկոպոսի խոսքերով, ձեռնպահ է մնում սեփական շարադրումից, չպատմելով ոչինչ ժողովի գումարման դրդապատճառների մասին: Վերջիններիս մասին վկայում են միայն ժամանակակից Սեբեոսը և Ստեփանոս Տարոնացին:

Համաձայն Սեբեոսի. «Քանզի ոչ երբէք ընդունէին Հայք զՂոռոմն ի հաղորդութիւն մարմնոյ և արեան տեառն: Եվ արդ՝ գրեն նոքա ամբաստանութիւն առ թագաւորն Յունաց Կոստանդին և հայրապետն թէ «Իբրև զանաւրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ: Քանզի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտունարն Լևոնի, և նզովեն զնոսա»⁴⁸:

Ժողովի գումարման դրդապատճառները ներկայացնող երկրորդ հեղինակի՝ Ստեփանոս Տարոնացու մոտ, 648 թ. ժողովին վերաբերող ժամանակագրությունը խախտված է: Պատմիչը կայսեր դեպի Հայաստան արշավելուց հետո է միայն պատմում ժողովի և նրա հրավիրման պատճառների մասին⁴⁹: Տարածայնության հիմնաքարը պարզ է, դարձյալ Քաղկեդոնի ժողովն էր, որն իր դավանությամբ անանցանելի մի վիհ էր առաջացրել հայ-քրիստոնեական եկեղեցիների միջև այն աստիճան, որ հայերն սկսել էին մերժել նաև պարզ հոգևոր հաղորդակցությունը քաղկեդոնիկների, մասնավորապես Հայաստանում գտնվող կայսերական բանակի զինվորների հետ, չթույլատրելով մասնակցել իրենց պատարագին, թեպետ «դաւանութեամբ տարբերող քրիստոնէից հոգեւոր հաղորդակցութիւն չզլանալը... իր դավանութիւնը փոխած լինելու եզրակացութեան չի տանիր»⁵⁰: VII դ. կեսերին բավական սրվել էին հայ միաբնակ-քաղկեդոնիկ հարաբերությունները, եթե երկուստեք խորշում էին միմյանց դավանությունից ու ծիսական սովորություններից, զլանալով անգամ հասարակ հոգևոր հաղորդակ-

⁴⁸ Սեբեոս, էջ 148:

⁴⁹ Գրեթե բառացի կրկնություն է Սեբեոսից մեջբերված հատվածի, իսկ վերջում ավելացնում է. «...և նզովեն զնոսա և զամենեսին որք ըստ նոցա խորհին ի հաւատոս», Ստեփանոս Տարոնացի, էջ 90:

⁵⁰ Օրմանյան Ս., նշվ. աշխ., սյուն 834:

ցությունը⁵¹:

Բյուզանդական կայսրն անտարբեր չի մնում բյուզանդական զորքի ուղարկած զանգատագրին. «Յայնժամ հրաման ետ թագաւորն հայրապետան հանդերձ և գրեն հրովարտակ առ նոցա, զի միաբանութիւն հաւատոյ արասցեն ընդ Յռոմի, զի մի խոտեսցեն զժողովն և զտումարն զայն»⁵²: Ստեփանոս Տարոնացին ևս կրկնում է նույնը, ավելացնելով հրովարտակում նշված հասցեստեբերին, բոլոր եպիսկոպոսներին՝ Ներսես կաթողիկոսի և բոլոր իշխաններին՝ Թեոդորոս Ուտունու գլխավորութեամբ⁵³: Կայսրն իրապես պահանջում էր եկեղեցական մեծ ժողովի գումարում, որում ներկա կլինե՞ր երկրի ողջ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունը: Հրամանը համեմծված էր սպառնալիքով, որը զարմանալի չէ Կոստաս II-ի դեպքում, նկատի առնելով նրա դաժան ոգին. « և թե գտցի ոջ յիշխանացն որ ընդդիմացի հրամանին՝ ի պատուոյն և յիշխանութենէն ի բաց ընկեսցի, և զինչս նորա զամենայն յարքունիս կայցեն, և տարեալ զնա ի դրունս թագաւորաց՝ անդ արասցէ պատասխանի»⁵⁴:

Կայսրի պահանջով ժողովին պետք է մասնակցեր երկրի ամբողջ իշխանական դասը, ինչպես նշվում էր հատուկ, որը թվում է, թե ավելի կարևոր էր կայսրի համար, քան հոգևոր նվիրապետության ներկայությունը, թեև ժողովի գումարման առիթն ու տրվելիք պատասխանը զուտ դավանական էր ու դավանությանը վերաբերող: Այստեղ մեկ անգամ ևս զգացվում է կայսրի եկեղեցական քաղաքականության իրական պատկերը, այն, թե որքան անտարբեր էր նա դեպի «վար-

⁵¹ Չամչյանը, հիմնվելով Խոսրով Հռետրի և Դավիթ Վանահոր ճառերի վրա, նշում է, որ հայերի կողմից հոգևոր հաղորդակցության արգելումը քաղկեդոնիկներին իրապես հետևանք էր վերջիններիս պահքի օրերին գործած թուլությունների և անբարո պահվածքի: Ընդ որում շատ էին նաև Քաղկեդոնի ժողովն ընդունած հայերը, որոնք հորդորում էին քաղկեդոնականներին. «նեղել զՀայս և զի ինքեանք սկսեալ էին ընդ յունաց ծիսի վարիլ... վիճէին ընդ նոսա և խռովեցուցանեին զնոսա», Չամչեանց Ս., Պատմութիւն Հայոց, հ. 1, Ե., 1985, էջ 349: Ակներև է, որ լարված էին հարաբերություններն անգամ նախնավանդ եկեղեցու վարդապետությանը հաւատարիմ և հայության այն հատվածի միջև, որն ընդունել էր Քաղկեդոնի դավանանքը:

⁵² Սեբեոս, էջ 148:

⁵³ Ստեփանոս Տարոնացի, էջ 90:

⁵⁴ Նույն տեղում, էջ 90-91:

դապետություն» կոչվածը: ժողովի լիարժեքությունը նա տեսնում էր ոչ թե հոգևոր դասի ամբողջականության, այլ իշխանական, աշխարհիկ դասի:

Հրովարտակն առաքվում է 648 թ., այն տարում, երբ Բյուզանդիայում նոր էր հրապարակվել կայսերական հրամանագիրը՝ «Տիպոսը», որն արգելում էր բոլոր նրբին վեճերն առհասարակ դավանության շուրջ՝ հավատացյալներից պահանջելով մի անվերապահ հպատակություն եկեղեցուն՝ առանց խորանալու վերջինիս քարոզած դավանության ծալքերի մեջ: Այդ դավանությունը պետք է լիներ միակերպ, հաստատուն, ընդհանուր ոչ միայն կայսրության ներսում, այլև Բյուզանդիային կիսահպատակ մի այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն էր: Ինչպես հողվածի առաջին մասում նշեցինք, եկեղեցական միությունը Կոստաս II-ի համար առաջին հերթին քաղաքական միության իմաստ ու նշանակություն ուներ: Արանով է նաև պայմանավորված այն հանգամանքը, որ հրովարտակում հստակ չէր նշվում Քաղկեդոնի անվանումը, այլ «զժողովն զայն», քանզի որքան քիչ արտահայտվեին ժողովի մասին, արդյունքն այնքան գոհացուցիչ կլիներ:

Հրամանն առաքելու գործում կայսրի հետ միասին նշվում է նաև հայրապետի անձը: Այդ շրջանում Կոստանդնուպոլսի պատրիարքության գլուխ էր կանգնած Պավղոս II-ը, հայտնի միակամ պատրիարքը, որին քաղկեդոնականությանն առավել հավատարիմ պապերից մեկը՝ Թեոդորոս I-ը, հերետիկոս էր հայտարարել՝ պահանջելով կարգալույծ անել նրան: Երկար ժամանակ ի վեր Կոստանդնուպոլսի պատրիարքության որդեգրած դավանության մեջ Քաղկեդոնի ժողովի հիշատակության պահպանումն արդեն ձևականություն էր համարվում և հենց նմանատիպ մի ձևականության պահպանում էր, ըստ ամենայնի, պահանջվում Հայոց եկեղեցուց:

Համաձայն Աբբեսուի, ժողովի գումարման առիթով Հայաստան է ուղարկվում Ղավիթ Բագավանցի հայազգի գիտնական-փիլիսոփան. «զնա հրամայեաց արձակել ի Հայս, զի երթեալ ի բաց հատցեն զհա-

կառավարություն»⁵⁵ և «արասցե միաբանություն»⁵⁶: Միջնադարում հայրուզանդական եկեղեցական միության փորձերի ժամանակ, տարատեսակ ժողովներում գիտուն հույների, դավանաբանական նրբությունների մեջ հմուտ հույն վարդապետների մասնակցությունը նորություն չէր: Նրանց սերվայությունն ասորաժեստ էր ռաժոզելու ռաժար հայերին իրենց վարդապետության մոլորության մեջ: Օրինակ Կարինի ժողովի (633 թ.) առիթով «Սակս ժողովոց որ եղեն ի Դայք» փաստաթուղթը վկայում է, թե նրան ներկա էին «յաճախագոյն իմաստասերքն Յունաց»⁵⁷: Մովսես Կաղանկատվացին ևս վկայում է թե նմանօրինակ փորձերի ժամանակ տեղի ունեցող դավանաբանական բանավեճերում «յարակիրք ճարտարքն Յունաց վստահանային ի սուր լեզուս հելլենական յորդաբանութեամբ յաղթող լինել»⁵⁸:

Սակայն այս դեպքում ուղարկվում են ոչ թե հույն վարդապետներ, այլ ծագումով հայ Դավիթ Բագավանցին: Սա բնորոշում է կայսեր եկեղեցական քաղաքականության խորը նրբությունը: Քաղկեդոնի դավանական բանաձևը պաշտպանող ազգությամբ հայ փիլիսոփայի խոսքը կայսրի կարծիքով շատ ավելի համոզիչ ու արդյունավետ կլիներ, քան հույն քաղկեդոնականինը:

Գումարվում է ժողով, որին ներկա էին հայոց բոլոր եպիսկոպոսներն ու իշխանները՝ Ներսես III Տայեցու և Թեոդորոս Ուտունու գլխավորությամբ: Քննության է ենթարկվում կայսերական հրամանը, որն իրենից ներկայացնում էր անվերապահ ենթարկման մի պահանջ: Այնուհանդերձ ժողովն իր հաստատուն դավանությամբ հավատարիմ է մնում հայոց եկեղեցու նախնական վարդապետությանը, որո շելով մի պատասխան թուղթ գրել ուր կհիմնավորվեր նման որոշման կայացումը:

Ընդարձակ այս թղթի բովանդակությունը տալիս են Սեբեոսը և Ստեփանոս Տարոնացին⁵⁹: Սակայն ինչպես Սեբեոսն է վկայում հետա-

⁵⁵ Սեբեոս, էջ 148:

⁵⁶ Ստեփանոս Տարոնացի, էջ 91:

⁵⁷ Գիրք թղթոց, էջ 222:

⁵⁸ Մովսես Կաղանկատվացի, էջ 271:

⁵⁹ Սեբեոս, էջ 148-161, Ստեփանոս Տարոնացի, էջ 91-98:

գա իրադարձությունների ընթացքում, հիշյալ թուղթը չի ուղարկվում քյուզանդական կայսրին, այլ. «(եպիսկոպոսները) ետուն առ նա զի պահեսցէ յեկեղիցուջն»⁶⁰: Մ. Օրմանյանի կարծիքով թուղթը չի ուղարկվում «յոյները չգրգռելու համար»⁶¹, որն արդարև, ամենահավանական բացատրությունն է:

Այսպիսով, կաթողիկոսության ողջ ընթացքում և այս դեպքերից հետո էլ մինչև 652 թ. աշնան հայտնի իրադարձությունները Ներսես III Տայեցին հանդես է գալիս որպես «քրիստոսասեր կաթողիկոսն»⁶², «սրբասեր կաթողիկոս»⁶³, «քրիստոսասեր և ճշմարտապատում կաթողիկոս»⁶⁴: Նմանատիպ որակումներ բացարձակ հակաքաղկեդոնական մեր միջնադարյան պատմիչների կողմից կարող էին տրվել մի կաթողիկոսի միայն այն դեպքում, եթե նա հավատարիմ մնար հայոց եկեղեցու ավանդական, միայն առաջին երեք տիեզերական ժողովներով ամրագրված հավատո դավանությանը:

Համաձայն Սեբեոսի, Կոստաս II կայսեր 12-րդ տարում, այսինքն 652 թ. «ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց և հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի»⁶⁵: Հայ-արաբական մերձեցումը նշանավորվում է Ասորիքի արաբ կառավարիչ Սուավիայի և հայոց սպարապետ.Թեոդորոս Ռշտունու միջև համաձայնության կայացմամբ: Հայաստանն առժամանակ ապահովվում էր արաբական ասպատակություններից՝ ընդունելով Խալիֆայության գերիշխանությունը:

Ինչպես հայտնի է, Բյուզանդական կայսրությունը Հայաստանին քավականաչափ ռազմական օգնություն չցուցաբերեց՝ արաբների հարձակումներից պաշտպանվելու համար: Հենց դա էր հիմնական

⁶⁰ Սեբեոս, էջ 167, իսկ մի փոքր անց «եւ զիրն այն այժմ առ դմա է», նույն տեղում, էջ 168:

⁶¹ Օրմանյան Մ., նշվ. աշխ., սյուն 838:

⁶² Սեբեոս, էջ 148:

⁶³ Ստեփանոս Տարոնացի, էջ 90:

⁶⁴ Նույն տեղում, էջ 91:

⁶⁵ Սեբեոս, էջ 164: Այս մասին վկայում է նաև Թեոփանեսը. «Այդ տարին (Հոռմայեցիների Կոստաս կայսեր 10-րդ տարին) կայսեր ղեմ ապստամբություն բարձրացրեց Հայոց պատրիկ Պասազմաթեսը, նա Մուավիայի հետ դաշինք կնքեց և իր հարազատ որդուն պատանդ տվեց», էջ 55:

պատճառը, որ Թեոդորոս Ռշտունուն արաբների հետ դաշնակցության մղեց՝ փրկելու համար երկիրը վերահաս կործանումից: Եվ հետաքրքիր է, որ արաբները դաշինքի մեջ ներառեցին հատուկ մի կետ, որով նախատեսվում էր Հայաստանին զորք տրամադրել անգամ բյուզանդացիների դեմ. «և եթե զայ Հռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զարս յաւզնականութիւն՝ որչափ և դուք կամիջիք»⁶⁶:

Հայ-արաբական դաշինքն անակնկալ էր բյուզանդական կայսրի համար: Ըստ Սեբեոսի, կայսրն ապարդյուն փորձում էր նորից շահել հայոց իշխաններին. «բազում աղաչանս և պաղատանս գրեաց առ նոսա կայսրն և կոչեաց զնոսա առ ինքն...»⁶⁷: Սակայն հայոց իշխանները սպարապետի գլխավորությամբ անդրդվելի էին:

Թե Բյուզանդիան որքան վտանգ էր տեսնում հայ-արաբական դաշինքից, ակներև է 652 թ. աշնան իրադարձություններից: Կոստաս II-ը 100 հզ-ոց մի բանակով շարժվում է Հայաստանի վրա. «զի բարձցէ զերկիրն ի միջոյ»⁶⁸:

Հայոց կաթողիկոսն ահա երկրի համար չափազանց վտանգավոր մի այսպիսի պահի, ընդառաջ է գնում կայսրին. «անկան ի վերայ երեսաց. իւրեանց կաթողիկոսն և Մուշեղ... և մեծաւ աղաչանաւք և արտասուալից պաղատանաւք խնդրեցին ողորմութիւն, զի մի... զերկիրն կորուսցէ»⁶⁹:

Այսպիսով, եթե Ներսես III Տայեցին իրավ համոզված քաղկեդոնիկ լիներ և «խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր հանել զբանն ոչ համարձակէր»⁷⁰, ենթադրաբար սոսկ հարմար մի առիթի էր սպասում՝ իր ծրագիրն իրագործելու համար: Իսկ ավելի հարմարագույն առիթ, քան բազմահազար զորքի զուլխ անցած բյուզանդական կայսրի մուտքը Հայաստան դժվար է թերևս պատկերացնել. «ցանկալի ներկայությունը» մի կայսրի, որի կայսրության մեջ Քաղկեդոնի ժողովը սրբազան էր համարվում: Նման

⁶⁶ Սեբեոս, նույն տեղում:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Նույն տեղում, էջ 166:

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ Նույն տեղում, էջ 167:

պարագայում կարծեցյալ քաղկեդոնիկ կաթողիկոսի արծագանքը պետք է լիներ անթաքույց ցնծություն և ոչ թե «ողորմություն», ինչպես Սիրեոսն ինքն է բնորոշում: Ինչպես Վարդան Արևելցին է պատմում. «(կայսրին) Ներսես կաթողիկոս աղբրսելով տանի իջուցսն է ի Դուին ի կաթողիկոսարանին և հաղորդին ի միասին կայսրն և կաթողիկոսն ... և քարոզեցին գծողովն Քաղկեդոնի»⁷¹:

Ներսես III Տայեցին ընդառաջ գնաց կայսրին, վերջինիս գործադրելիք խստությունները կանխելու համար: Ժամանակաշրջանն այնքան երերուն էր և ենթակա հանկարծակի փոփոխությունների, որ կաթողիկոսը գործում էր՝ պարզապես ենթարկվելով ժամանակի հրամայականին: Իսկ Դվինի ս. Գրիգոր եկեղեցում հունարեն պատարագի արարողությամբ, որ ըստ Սեբեոսի և Դովհաննես Դրասխանակերտցու, կաթողիկոսն ուրացավ հայոց եկեղեցու ավանդական հավատը, իրականում «իր ազգին եւ իր եկեղեցոյն զարգացման եւ բարօրութեան համար»⁷² գործված մի քայլ էր:

Մյուս կողմից, կայսրի և կաթողիկոսի հաղորդությունն, ըստ ամենայնի, ոչ թե դավանական միության, այլ պարտադրանքի և ենթակայության քաղաքական փոխհարաբերության յուրատեսակ իմաստ ու նշանակություն ուներ: Զգուժարվեց որևէ եկեղեցական ժողով, չընդունվեցին դավանական որոշումներ և վճիռներ՝ հօգուտ քաղկեդոնականության, որը հիմք լիներ իրապես մեղադրել Ներսես III-ին, թե նա «զսուրբ և զվճիտ և զականակիտ աղբերացն պղտորեց զքուրս»⁷³:

Հասարակ հոգևոր հաղորդության ընթացքում Քաղկեդոնի հիշատակությունն անկարևոր մի հանգամանք էր արդեն Կոստաս II-ի համար, թեև ուզ ի նկատի առնելով այն փաստը, թե որքան անտարբեր էր նա աստվածաբանական խնդիրների հանդեպ⁷⁴: Պահպանելով

⁷¹ Վարդան Արևելցի, էջ 68, հմմտ. Սեբեոս, էջ 167, Ստեփանոս Տարոնացի, էջ 89, Դովհաննես Դրասխանակերտցի, էջ 86:

⁷² Օրմանյան Ս., նշվ. աշխ., սյուն 866:

⁷³ Սեբեոս, էջ 167:

⁷⁴ Այս դեպքերից կարճ ժամանակ անց կայսրը հալածանքի է ենթարկում քաղկեդոնականության ամենաջերմ հետևորդներին՝ Մարտինոս I պապին, Աքսիմոս Աստվածաբանին:

արտաքին դավանական կողմը, կայսրը պարզապես ենթակայություն էր պահանջում կայսրության հանդեպ: Անսալով ժամանակի թելադրանքին՝ կաթողիկոսը հնազանդվում է:

653 թ. գարնանը Կոստաս II-ի հեռանալուց հետո, Ներսես III Տայեցին ևս «չուեաց ընդ մնա ի Կոստանդնուպալիս»⁷⁵: Սակայն պատիվներից և ընծաներից զատ որևէ արդյունքի չհասավ և «եկն դարեաց ի Տայս»⁷⁶, ահաբեկված Թեոդորոս Ռշտունու և բյուզանդական տիրապետությանն ընդդիմադիր հայ իշխանների ցատումից:

Քաղաքական երկվեեղկված այս շրջանում կաթողիկոսը հանդես էր գալիս որպես բյուզանդական տիրապետության կողմնակից ու պաշտպան: Ինչպես Ս. Օրմանյանն է դիպուկ նշում, կաթողիկոսը «բռնադատեալ էր նախադասել յունական տիրապետութիւնը, ուր գոնէ կրօնքի և օրենքի, կառավարութեան և զարգացման նախատարրները կը գտնուէին»⁷⁷: Սակայն հիշյալ շրջանում նախապատվությունն այս որևէ մնայուն, դրական արդյունք չտվեց:

*КАРИНЕ МЕЛИКЯН
ИЛИ НАН РА*

**ПРО ЦЕРКОВНУЮ ПОЛИТИКУ ВИЗАНТИЙСКОГО
ИМПЕРАТОРА КОСТАСА II (642-668) И НАСЧЕТ ТОГО, БЫЛ
ЛИ НЕРСЕС III ТАЙЕЦИ (642-662) ХАЛКЕДОНИТОМ**

РЕЗЮМЕ

Понимание церковной политики Костаса II очень важно, чтобы полностью описать политику Византии в отношении Армении и армянской церкви в середине VII века. Костас II старался сделать церковь в государстве зависимой. Своей политикой он пытался считаться главой не только государства, но и церкви.

Из средневековых историков католикоса Нерсеса III Тайеци считают халкедонитом Себеос, Арсен Сафарели, анонимный автор Narratio. Но были ли Нерсес III халкедонитом?

⁷⁵ Սերբոս, էջ 175:

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Օրմանյան Ս., նշվ. աշխ., սյուն 847:

В течении всего времени, пока он был католикосом, вплоть до событий осени 652 г., Нерсес III оставался верен армянской церковной традиционной вере. Во время нашествия Костаса II на Армению, откликом предположительно халкедонского католикоса должен был быть нескрываемый восторг, а не снисхождение, как гласят историки. С другой стороны, причастие католикоса и императора в церкви Двина, св. Григория, являлось не союзом верования, а имело своеобразный смысл политического принуждения и подчинения.

ԾՈՎՔԻ ՊԱՅԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՈՐՈՒՄՅՈՆԵՐՈՒՄ

Բագրատունիների Չայոց թագավորության անկումից հետո Բյուզանդիան ջանում էր լիովին բացառել Չայաստանի ինքնուրույնության վերականգնման որևէ հնարավորություն: 1065 թ. Կարսի (Վանանդի) թագավորության վերջին գահակալ Գագիկ Արապանն իր թագավորության տարածքները ստիպված զիջեց կայսրությանը: Փոխարենը նա ստացավ Կիլիկիայի Ծամնդավ քաղաքը հարակից գավառով, նաև Կոստանդին Դուկաս կայսրից կորզեց Չայոց կաթողիկոսի ընտրության իրավունք¹ (ինչը նույն կայսրը վերացրել էր 1060 թ.), պայմանով, որ նորընտիր կաթողիկոսն իր գահաթոռը չհաստատի Չայաստանում:

1065 թ. կաթողիկոս ընտրվեց Գրիգոր II Պահլավունին (1065-1105)՝ Գրիգոր Սագիստրոսի որդին, որը վայելում էր նաև բյուզանդացիների վստահությունը: Հաստատվելով Ծամնդավում, Գրիգոր II-ը հիմնեց Պահլավունի տոհմի կաթողիկոսական հարստությունը, որը պահպանեց Չայոց հոգևոր իշխանությունը շուրջ 138 տարի (1065-1203): Ծամնդավին սպառնում էին սելջուկ-թյուրքերն, ուստի Գրիգոր վկայասերն իր աթոռը փոխադրեց Փոքր Չայքի Մուտառասուն քաղաք²: Սակայն այդտեղ ևս դրությունը սպառնալից էր, ուստի նրա հաջորդը՝ Բարսեղ Անեցին 1105 թ., զերադասեց հայրապետական աթոռը տեղափոխել Փիլարտոս Վարաժնունու իշխանության ոլորտ՝ Կիլիկիայի հարավ-արևելքում ձգվող Աև լեռներ (Ամանոս), հաստատվելով Շուղր անունով դոյակում (Մարաշից հարավ-արևմուտք):

1125 թ. Գրիգոր III Պահլավունի կաթողիկոսը կաթողիկոսարանը տեղափոխեց Վասիլ Պահլավունու իշխանանիստ՝ Ծովք անունով դոյակ, որտեղ նրա աթոռը գոյատևեց մինչև 1150 թ.: Ներսես Շնորհա-

¹Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Կենետիկ, 1862, էջ 102:

²Մատթոն Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վարդաշապատ, 1898, էջ 205-206:

լու վարքում ասվում է, որ Ծով անունով դրյակը որտեղ հաստատվեց
Գրիգոր III-ը, գտնվում էր «յերկիրն Անտիոքայ, ի գաւառին Տլոյ»³:

1125 թ. Տլուք քաղաքն իր գավառով գտնվում էր Եղեւսիայի կոմսության տարածքում, ուստի վասիլ Պահլավունին կախվածություն ուներ նրա տերերից: Բուրդուկին այլ է, անշուշտ, Ծովք անունով դրյակը Ծովքի Անձիտ գավառում⁴:

Տլուք գավառն ընկած էր Կիլիկիայի հարավ-արևելքում: Տակավին 1098 թ. այն ընդգրկվել էր Արևելքում խաչակիրների ստեղծած առաջին պետության՝ Եղեւսիայի կոմսության կազմի մեջ, իսկ վերջինիս բարձունից հետո՝ ենթարկվել Անտիոքի դքսությանը: Ուստի հայ մատենագիրները երբեմն այն տեղադրում են «երկիրն Անտիոքայ» անունով վարչա-աշխարհագրական միավորի տարածքում: Բայց XII դ. սկզբներին չպետք է այն դիտել որպես Անտիոքի դքսության մաս⁵: 1161 թ. Անտիոքի դուքս Ռենալը ժամանում է «յերկիրն Տլոյ» և Ծով դրյակ⁶:

Ականատեսի հավաստմամբ Ծովք անունն են կրում Տավրոսյան լեռնաշղթայի ստորոտում, Բերդուս քաղաքից մոտ 20 կմ հարավ-արևելք ընկած երեք փոքր լճերը (այստեղից՝ «Ծովք» հոգնակի անվանածն է): Ծովքի լճերը երկայնքով ձգվում են մոտ 10, լայնքով՝ 5 կմ: Զրերը վճիտ են, քաղցրահամ, սառնորակ, լի ձկներով⁷: Ծովքի արևմուտքում էր Ծով դրյակը: Այս փոքրիկ բերդի մասին ականատեսը գրում է. «Դյուսիսեն ու արևմուտքեն ծորակներով անջատված և անտառներով ծածկված, հարավեն լիճերու՝ Ծովքի ջուրը միացած Ագսու գետին հետ ուրապատույտ կը հոսի բերդին ստորոտը քերելով»⁸:

Դայ մատենագրության մեջ Ծովքի և Ծով դրյակի մասին առաջինը հիշատակում է Ներսես Շնորհալին, 1112 թ. դրյակի մատույցներում իր հոր սպանության ամենչությամբ⁹: Շնորհալին հորը՝ Ապիրատ

³ Սուփերց հայկականք, ԺԴ, Վենետիկ, 1854, էջ 464:

⁴ Տես Երեմյան Ա., Դայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 36, 56, 107:

⁵ Կիլիկիայի Բ., Ծովք. Ծովք-Տլուք և Դոն-կլայ, Վիեննա, 1904, էջ 13:

⁶ Մատթոս Ուռհայեցի, էջ 427:

⁷ Տէր-Ղազարեան Յ., Դայկական Կիլիկիա. Տեղագրութիւն, Անթիլիաս, 1966, էջ 41:

⁸ Նույն տեղում, էջ 98:

⁹ Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, աշխ. Մ. Մկրտչյանի, Ե., 1981, էջ 131:

Պահլավունուն հիշում է որպես Գրիգոր Մագիստրոսի թոռ¹⁰ (դուստրերից մեկի գծով), հետևաբար, Ապիրատ իշխանի մայրը Մագիստրոսի դուստրն էր, որի անունը, ցավոք, չի պահպանվել: Ն. Ակինյանի կարծիքով¹¹ այս դստեր անունինն էր Ապլջահապը, որին հիշում է Մատթեոս Ուռհայեցին: Սակայն Ուռհայեցու մոտ (և ոչ էլ որևէ այլ աղբյուրում) չի նշված, որ Ապլջահապը Մագիստրոսի փեսան էր: Մատենագիրը վկայում է, որ «Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Դայոց, որդի Դասանայ», ծառանալով Դովհաննես-Սմբատ թագավորի դեմ, 12 հազար զորականների հետ փախավ Դվին քաղաք, Ապուսուար Ամիրայի մոտ: Վերջինս դավադիր կերպով սպանել տվեց Ապիրատին, որի կինն ու զավակները հեռացան Անի: Դովհաննես-Սմբատ թագավորը Ապիրատի որդիներ Ապլջահապին ու Վասակին տվեց «զաւառս և զիշխանութիւնս»¹²: Ն. Ակինյանի հետևողությամբ Ապլջահապին Գրիգոր Մագիստրոսի փեսան են համարում նաև ուրիշ ուսումնասիրողներ¹³: Ն. Ակինյանը կարծում է նաև, որ երբ Գրիգոր Մագիստրոսը 1045 թ. տեղափոխվեց Միջագետք, «իրեն հետ առաւ փեսան Ապլջահապ եւ զետեղեց Ծովք ամրոցին մէջ»¹⁴: Սակայն Անձիտ գավառում գտնվող Ծովքը և առավել ևս Տլուքի Ծովքը Գրիգոր Մագիստրոսի իշխանության մեջ չէին: Վերջինս Գագիկ II թագավորին հղած թղթում նշում է իրեն ենթակա շրջանները, իրեն հորջորջելով «Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր....»¹⁵: Եթե անգամ ընդունենք, որ Ապլջահապն իրոք Մագիստրոսի փեսան էր, ապա ինչու վերջինիս նա չպետք է ամրոց նվիրեր իր իշխանության ոլորտում:

Հասկանալի է, Մագիստրոսը չէր կարող Ծովքը շնորհել իր փեսային, քանի որ դրանք իր իշխանությունից դուրս էր: Ընդունելի է նաև այն կարծիքը, որ իբր Մագիստրոսը փեսային է շնորհել Անձիտի

¹⁰ Նույն տեղում, էջ 128-129:

¹¹ Ակինեան Ն., Պահլավունի և Լամբրոնի Դեթմեանց ազգաբանութիւնը, «Հանդես Ամսօրեայ», 1954, էջ 31:

¹² Մատթեոս Ուռհայեցի, էջ 10-11:

¹³ Տէր-Ղազարեան Յ., նշվ. աշխ., էջ 91, Dedejian G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, vol. 2, Lisbonne, 2003, pp. 1245-1246.

¹⁴ Ակինեան Ն., նշվ. աշխ., էջ 31:

¹⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծ. Կոստանեանց Կ., Ալեքսանդրապոլ, 1910, էջ 213:

Ծովք դրյակը, որի իշխան Ապիրատի սպանությունից հետո նրա որդիները՝ Գրիգոր III կաթողիկոսը և Ներսես Շնորհալին տեղափոխվում են Տլուք և Գող Վասիլ իշխանի հովանավորությամբ հիմնադրում նոր դրյակ և, «ի նշան իրենց հայրենիքի, այն կոչվում Ծովք»¹⁶:

Ներսես Շնորհալին իր հոր՝ Ապիրատի մասին գրում է.

Ձպահլաւունին ազգաւ սերեալ,

Ձհարազատ տերանցն եղեալ,

Աստուածային շնորհօք լցեալ

Եւ երկիւղին զարդարեալ,

Գեղապաճոյճ անձն երևեալ,

Իշխանութեամբ շքեղացեալ,

Ձնախնական անուն առեալ,

Որ Ապիրատն էր յորջորջեալ,

Թոռն մեծի Գրիգորի լեալ,

Որ Սագիստրոս մականուանեալ,

Ձայս տունկ բարի արմատացեալ

Իսմայելեան հողմոյն խլեալ,

Որք ըստ մեղաց մերոց շարժեալ,

Արմատախիլ զՀայք արարեալ:

Յարևելեան կողմանց սկսեալ

Մինչ յարևմուտս ժամանեալ,

Որոյ առ մեզ եկեալ հասեալ

Եւ զամրականն պաշարեալ¹⁷:

Հայտնի է Ապիրատ Պահլավունու կողակցի անունը՝ Վանեն, որին հիշում է Շնորհալու պատվերով 1173 թ. Եվդոկիայում Ավետարանն ընդօրինակող Գրիչը: Վերջինիս թողած հիշատակարանում նշված են Ներսես Շնորհալու և եղբոր՝ Գրիգոր III կաթողիկոսի հարազատները՝ «եղբայրն զԱպիրատ եւ զքոյր նոցա Աարիամ յայրութեան եւ ի սրբութեան վախճանեալ... եւ զմայրն նոցա Վանեն ընդ նոսին և զբա-

¹⁶ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Ե., 1988, էջ 863:

¹⁷ Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 128-129:

րեհոգի մայր պսակաւ որիս զՄարեմիկ դուստր Հեթոյ Սեւաստաւսի»¹⁸:

Ներսես Շնորհալին 1151 թ. շարադրած «Բան հաւատոյ» դավանաբանական պոեմի հիշատակարանում նախ նշում է եղբոր՝ Գրիգոր III կաթողիկոսի անունը, ապա հիշում մյուս եղբայրներ Վասիլին, Ջորավարին և քրոջը՝ Մարիամին¹⁹: Եղբայրներին ու քրոջը Շնորհալին հիշում է նաև «Վիպասանութիւն» պատմական պոեմում, նշելով, որ Գրիգոր III կաթողիկոսն իր եղբայրներին՝

Յիշխանական գահ յառաջեալ.

Վասիլ անուն վեհ երևալ

Եւ Ջորավար համապատուեալ,

Եւ Մարիամ քոյր անուանեալ...²⁰

Շնորհալին նրանց հիշատակում է նաև «Հիսուս որդի» հավատապատում-պոեմում՝ շարադրված 1152 թ.:

Նախ վեհագոյ տեառնըն մեծի,

Ապա Վասիլին վեհ իշխանի,

Ջորավարին բարձրագունի

Եւ ծնեալ նոցունցըն գաւակի

Եւ բովանդակ ազգատոհմի...

Եւ Մարեմայ ճըզնաւորի,

Քեռ ըստ մարմնոյ մեր պանծալի

Եւ Վահրամայ իւր գաւակի

Հանգուցելոյն առ Քրիստոսի...²¹:

Վերը նշված տվյալներից երևում է, որ Ապիրատ Պահլավունու գավակներն են՝ Վասիլը, Գրիգոր III կաթողիկոսը, Ներսես Շնորհալին, Ջորավարը և Մարիամը, որը տրվել է ճգնակեցության, հավանաբար, վաղամեռիկ որդու պատճառով:

¹⁸ Յովսէփեանց Գ., Յիշատակարանք ծեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 458:

¹⁹ Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վեներտիկ, 1928, էջ 244:

²⁰ Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 136:

²¹ Ներսես Շնորհալի, Յիսուս Որդի, աշխ. Վ. Ղազարյանի, Ե., 1991, էջ 220, 222:

Ապիրատ Պահլավունցին և որդիները Ծովքին տիրում էին որպես հայրենատեր իշխաններ: Ներսես Շնորհալին «Բան հավատոյ» պոեմի հիշատակարանում եղբոր՝ Գրիգոր III կաթողիկոսի մասին գրում է.

Ի Ծով անուն դղելէն ելեալ,

Ջոր սեփիական ինքեան շինեալ...²²

Ապիրատ Պահլավունցին կարողացավ պահպանել Ծովքի փոքրածիր իշխանությունը, դիմագրավելով սելջուկ-թյուրքական ցեղերի հարձակումներից: Ծովք ամրոցի պաշտպանները 1112 թ. Ապիրատի զլխավորությամբ հերոսաբար դիմակայում և հետ են չարտում ամրոցը պաշարած հրոսակներից, սակայն մարտն ավարտվելուց հետո դարանամուտ թյուրքը մահացու վիրավորում է նրան թունավոր նետով, որից փոքր-ինչ հետո Ապիրատը վախճանվում է, «եւ ի շիրիմ հարցն ամփոփեալ», - գրում է Ներսես Շնորհալին²³: Այս վկայությունից երևում է, որ մինչև Ապիրատը Ծովքի գերեզմանոցում ամփոփվել են նաև նրա տոհմակիցները: Վերջիններս հավանաբար 1045 թ. հետո թյուրք-սելջուկյան ցեղախմբերի հարձակումներից խուսափելով հեռացել են Ամանոսի լեռներ, հաստատվելով Ծով դոյակում, որը 1082 թ. հետո ընդգրկվել է Գող Վասիլի իշխանության կազմի մեջ և հովանավորվել նրա կողմից: Ըստ Մատթեոս Ուռուհայեցու, այդ իշխանության մեջ հավաքվել էին «մնացեալ զօրքն Հայոց և ամենայն ազգն Բագրատունեացն և Պահլաւունեացն և որդիք թագաւորացն Հայոց, և ամենայն ազգն Պահլաւունեացն հանդերձ ազատագունդ զօրօքն Հայոց առ նա կային հանգուցեալ մեծաւ փառաւորութեամբ. և Աթոռ հայրապետութեանն Հայոց առ նա եղաւ»²⁴:

Ապիրատ Պահլավունցուց հետո Ծովքին իշխում է նրա ավագ որդին՝ Վասիլը, որի մանկահասակ եղբայրներ Գրիգորը (հետագայում կաթողիկոս) և Ներսեսը (Շնորհալին) դրվեցին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի խնամքի տակ: Վասիլը կնության առավ Լամբրոնի իշխան

²² Թօփեան Զ., Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 23:

²³ Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 129-132:

²⁴ Մատթեոս Ուռուհայեցի, էջ 323-324: Ուռուհայեցին Գող Վասիլի որդեգիր և նրա իշխանությունը ժառանգած Վասիլին («Տղա» մականվանալին) հիշում է որպես «մայրենեօք յազգէ Կամսարական» (տես նույն տեղում, էջ 324): Հավանաբար, Գող Վասիլը նույնպես Կամսարականների ժառանգն էր:

Հեթումի դատերը: Հեթումին հաջորդած Օշինին վասիլն ամուսնացրեց իր եղբոր՝ Ջորավարի դստեր հետ²⁵: Ներսես Շնորհալին «Ի Սողոմոն արքայն» քերթվածում հիշում է.

Գովեալ վասիլ իշխան առոյգ,

Եւ Ջորավար ընտրեալ ի կարգ²⁶:

Ջորավարը 1201 թ. գրած հիշատակարանում կոչված է «մեծ սեւաստոս»²⁷, ինչը վկայություն է նրա բյուզանդական պաշտոնյա լինելու մասին: Մ. Չամչյանը Ջորավարին հիշում է Շահան անունով, «գորավար»-ը դիտելով նրա մականունը²⁸: Ըստ երևույթին նա ելնում է այն փաստից, որ Ջորավարի դուստրը կրում էր Շահանդուխտ անունը, որը նա մեկնել է «Շահանի դուստր» և ըստ այդմ նրա հորն անվանել Շահան: Մինչդեռ «Շահանդուխտ» նշանակում է «թագավորների դուստր»²⁹:

Վասիլ Պահլավունին ընդլայնեց Ծովքի իշխանության սահմանները, մոտ 1136 թ. նրա մեջ ընդգրկելով նաև Կարկառ և Քեսուն բերդաքաղաքները, Հիսն-Մանսուրը՝ Սամոսատի հյուսիս-արևմուտքում³⁰:

Կարկառն ընկած էր Եփրատի աջ ափին, աշխարհագրական հարմարավետ վայրում, Հայոց (Վերին) Միջագետքի սահմանամերձ գոտում: Տակավին 1060-ական թթ. այն դարձավ Միջագետքում հաստատված հայկական իշխանության կենտրոն: Նրա տերն էր «Ուռհայոյ տուկն, որոյ անուն ասէին Պաւատանոս, այր քաջ և հզօր ի պատերազմի և անուանի ի վերայ երկրի և նորա զօրածողով արարեալ զՈւռհա և զԿարկառ և զՀարսնմսուր և խաղայր զօրօք ի վերայ Տաճկաց...»³¹: Ուռհայի (Եղեսիայի) բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր

²⁵ Սամուէլի քահանայի Անցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 226:

²⁶ Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 392:

²⁷ Յովսէփեանց Գ., Յիշատակարանք ծեռագրաց, Ա, էջ 691:

²⁸ Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վեներտիկ, 1786, էջ 18:

²⁹ Աճառյան Հ., Հայոց անճանաչումների բառարան, հ. Դ, Ե., 1948, էջ 106:

³⁰ Grousset R., Histoire des Croisades et du Royaume Franc de Jerusalem, t. II, Paris, 1935, p. 291.

³¹ Մատթեոս Եռհայեցի, էջ 142:

էին³²: Եդեսիայի իշխանության Թլպաշար (Թիլթաշիր) բերդաքաղաքը Պահլավունիների սեփական տիրույթն էր:

XI դ. վերջերից Կարկառի տերերը կախման մեջ ընկան Եդեսիայի կոմսերից: Այդ բերդաքաղաքի տեր Կոստանդինը զորուկցում էր ֆրանկներին: Ըստ Անանուն Եդեսացու, 1100-ական թթ. «Կարկառի հայերը հնազանդվել էին ֆրանկներին»³³: Վերջիններից Կոստանդինի կախվածության մասին վկայում է նաև Միքայել Ասորին³⁴: Կոստանդինի տոհմական ծագման մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Նա համարվել է Մամիկոնյան³⁵: Գուցե Կոստանդինը սերում էր Պահլավունիներից, որոնք կարող էին այդտեղ հաստատվել Գրիգոր Մագիստրոսի՝ Միջագետքի, Վասպուրականի և հարակից շրջանների կառավարչության տարիներին:

Եդեսիայի կոմսության մեջ ընդգրկվեց նաև Բիր (Պիր) քաղաքը (Պիրեճիկ), որը գտնվում էր Եփրատի գետանցի վրա: 1087 թ. Ապլլարիպ Պահլավունին՝ Անտիոքի դուքս Վասակի որդին կարողացավ թյուրքերից գրավել այդ քաղաքը, դարձնելով իր իշխանության նստոցը: Նրա իրավունքները հետագայում ճանաչեցին Եդեսիայի կոմսերը: Սակայն 1117 թ. Եդեսիայի կոմս Բուդվինը և իր վասալը՝ Արուճ բերդաքաղաքի տեր Կալարանը հարձակվեցին Բիրի իշխանության վրա: Գրեթե մեկ տարի Բիրը ենթարկվեց նրանց հարձակումներին, որից ստիպված Ապլլարիպ Պահլավունին Բիրը «և զամենայն գալառն» զիջեց Բուդվինին, հեռանալով Կիլիկիա՝ Թորոս իշխանի մոտ³⁶: Նույն թվականին Բուդվինը վերջ տվեց նաև Կարկառի իշխան Կոստանդինի կյանքին³⁷: Վերջինիս որդին՝ Միքայելը 1122 թ. ստիպված կարկառը հանձնեց Բուդվինին: Այս մասին հիշատակում է Միքայել Ասորին, գրելով. «Միքայել հայը, որ գտնվում էր Կարկառում, տեսնելով, որ

³² Laurent J., *Des Grecs aux Croisés. Étude sur l'histoire d'Edesse entre 1071 et 1098*, "Études d'histoire arménienne", Louvain, 1971, p. 125.

³³ Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմ., առաջաբան և ծան. Լ. Տեր-Պետրոսյանի, Ե., 1982, էջ 46:

³⁴ Michel le Syrien, *Chronique*, t. III, éd. et trad. par J. Chabot, Paris, 1905, p. 210.

³⁵ Dédéyan G., *Les Arméniens...*, t. II, p. 1211.

³⁶ Մատթեոս Ուռհայեցի, էջ 337-338, Վարդան Արևելցի, էջ 117-118:

³⁷ Մատթեոս Ուռհայեցի, էջ 338:

թյուրքերն իշխում են, Կարկառը հանձնեց (Բուլղլին) թագավորին և դրա դիմաց նա առավ իր երկրում ընկած մի տեղ: Թագավորն ընդունեց Կարկառը և այնտեղ տեղակայեց կայազոր»³⁸: Ըստ Անանուն եղեսացու, Միքայելը Բուլղլինին հանձնելով Կարկառը, իրեն է պահել Տլուք գավառը³⁹: 1123 թ. թուրքմենների Արտուքյան ամիրա Պալակը գրավեց Կարկառը⁴⁰, ապա վերջինիս տիրացավ Ղանիշմանյան տոհմից Ղազի ամիրան⁴¹: Ասկայն 1124 թ. Միքայելը վերագրավեց այն⁴²:

Այդպիսով Միքայելը պահպանել է Տլուք գավառի նկատմամբ իր իշխանությունը: Այդ գավառում էր նաև Ծովքը: Թե վերջինս և թե Տլուք գավառն ամբողջությամբ ընկած լինելով եղեսիայի կոմսության տարածքում, կախվածության մեջ էին նրա տիրոջից⁴³: 1125 թ. Գրիգոր III կաթողիկոսը եղեսիայի կոմսից 60 հազ. դահեկանով գնում է Ծովքը՝ 15 գյուղերի հետ միասին⁴⁴, դառնալով դրանց սեփականատեր: Իսկ Վասիլ Պահլավունին եղեսիայի կոմս Ջուլիսից 500 դիմարով գնում է Կարկառը, սակայն ինչ-ինչ պատճառներով հակասություններ են ծագում Վասիլի և ֆրանկների միջև⁴⁵: Հավանաբար Վասիլն ու եղբայրը՝ Ջորավարը դրանից դրդված⁴⁶, հեռանում են Կահիրե, իրենց հորեղբոր՝ Եգիպտոսի լիազոր վեզիր Վահրամ Պահլավունու մոտ:

Եգիպտոսի Ղպտիական եկեղեցու քաղկեդոնամբերժ դիրքավորման շնորհիվ այդ երկիրը դեպի իրեն էր ձգում հայերին: Եգիպտոսի շահ, շիա դավանությամբ Ֆաթիմյան խալիֆաները հանդուրժող էին քրիստոնյաների հանդեպ⁴⁷: Աիկիլիայի նորմանացի թագավոր Ռոջեր II-ին (1130-1154) եգիպտոսի խալիֆա Հաֆիզի հղած երկրորդ նամակում վեզիր Վահրամ Պահլավունու օգնականներ են հիշվում Վասիլ

³⁸ Michel le Syrien, III, p. 210.

³⁹ Անանուն եղեսացի, էջ 63:

⁴⁰ Սատրեոս Ուռհայեցի, էջ 353:

⁴¹ Michel le Syrien, III, p. 219.

⁴² Սատրեոս Ուռհայեցի, էջ 359:

⁴³ Dedejan G., les Armeniens, t. II, p. 1253.

⁴⁴ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք Վենետիկ, 1956, էջ 161:

⁴⁵ Michel le Syrien, Chronique, III, p. 244.

⁴⁶ Հմմտ. Dedejan G., les Armeniens, II, p. 1231.

⁴⁷ Dadojan S., The Fatimid Armenians, Leiden- New York-Köln, 1997, p. 81, 97-98.

(Basile) և Ջորավար (Zarqa) եղբայրները⁴⁸: Վահրամ Պահլավունին ծնունդով Թլպաշար բերդաքաղաքից էր, որը նրա տոհմի սեփական տիրույթն էր: Նա եգիպտոս է ժամանել 1073 թ.⁴⁹: Վասիլն ու Ջորավարը հավանաբար եգիպտոս են գնացել Վահրամի վեզիրության ժամանակ՝ 1135 թ. և, ամենայն հավանականությամբ, Վահրամի պաշտոնակության տարում՝ 1137 թ. վերադարձել են Կարկառ, որն ըստ Միքայել Ասորու, 1148 թ. Վասիլ Պահլավունու իշխանության տակ էր, բայց նույն թվին այն հարձակման է ենթարկվել Արտուքյան Կարա Արսլան ամիրայի գործի կողմից: Կարկառի բնակիչներն ստիպված հեռացել և ապաստանել են Ս. Բարժումա անունով վանքում⁵⁰, որը Կարկառից հեռու չէր: Այն ասորի միաբնակների առաջնորդի նստավայրն էր:

Իր վերջալույսն ապրող Եղեսիայի կոմսությունը չկարողացավ որևէ օգնություն ցույց տալ ձևականորեն իրենից դեռևս կախյալ Կարկառին: Եղեսիայի գրավումից հետո այդ կոմսությունը, կաթվածահար վիճակում, դեռևս հինգ տարի գոյատևեց մերձեփրատյան շրջաններում, ենթարկվելով Արտուքյանների և Իկոնիայի սուլթանության հարձակումներին: 1149 թ. Իկոնիայի սուլթան Մասուդը գրավեց Եղեսիայի կոմսության վերջին հենակետերից մեկը՝ Սարաշ քաղաքը, ասպատակներ սփռեց Թլպաշարի գավառում, սրածեց, գերևարեց նրա բնակիչներին, սակայն չկարողացավ գրավել Թլպաշար բերդաքաղաքը: Ս. Չամչյանն առանց աղբյուրը նշելու, գրում է, որ Վասիլ Պահլավունին Ջոսլիմի կնոջից տեղեկանալով Թլպաշարի պաշարման մասին, «էառ զգօրս իւր հանդերձ եղբարք իւրով Շահանաւ՝ որ Ջօրավար կոչիւր, և փութանակի գնաց յօգնութիւն ճոսլիմոյ: Եւ մերձ լեալ ի քաղաքն երկոքին եղբարք կորովիք, և տեսալ զբազմութիւն զօրաց թշնամեացն՝ յանկարծակի անկան ի վերայ և արարին մեծամեծ քաջութիւնս. մինչև զարմացուցանել զիշխան նոցա»⁵¹:

⁴⁸ Canard M., Un vizir chretien a l'epoque Fatimide: l' Arménien Bahrām, Annales de l' Institut d' Etudes Orientales, t. XII, Alger, 1954, p. 109.

⁴⁹ Canard M., Notes sur les Arméniens en Egipte, a l' epoque Fatimide, Annales de l' institut d' Etudes Orientales, t. XII, Alger, 1955, p. 153.

⁵⁰ Michel le Syrien, III, p. 290-291.

⁵¹ Չամչեանց Ա., Պատմութիւն Հայոց, հ. 9, էջ 71:

Ըստ Սատթեոս Ուռհայեցու շարունակողի, 1149 թ. Եղեսիայի կոմս Ջոսլինն իր գորայիմների հետ Կարկառ է ուղարկում «բարի ու մեծահաւատ իշխանին Վասլին, որ էր եղբայր կաթողիկոսին և տէր Կարկոռայ», որպեսզի պարենամթերք հասցնեն բերդաքաղաքում պաշարված յուրայիմներին⁵²: Սակայն թշնամին կանխավ տեղեկանալով այդ մասին, Կարա-Արսլան ամիրայի գլխավորությամբ հարձակվում է նրանց վրա, գերի վերցնում Վասլին ու նրա հետ եղած 400 զորականների, ապա նրանց տանում է Կարկառի բերդի առջև, «քանզի անդ էին կին և որդիք Վասլին»⁵³: Ըստ Սմբատ Սպարապետի, «Վասիլն, եղբայրն տէր Գրիգորի, իշխանն Հայոց, կամեցաւ հաց տանել ի Կառկառ ի պետս բերդին, և առեալ զմնացեալ զօրս ճօսլինն օգնական արսև (400) և իբրև մերձ եղեն ի Կառկառ, հլիճ Ասլանն տէրն Հանձթայ, անկեալ ի վերայ ձերբակալ արար զամենեսեան և առեալ զնաց առաջի բերդին և խնդրեաց զբերդն»⁵⁴:

Այդպիսով Վասիլը Կառկառ է մեկնել ոչ թե Ջոսլինի հանձնարարությամբ, այլ սեփական նախաձեռնությամբ: Ինչևէ, Կարկառում պաշարված Վասիլի կինը և զավակները կարողանում են երդում կորզել իրենց անվտանգության վերաբերյալ և հանձնում են բերդը, իսկ նրա բնակիչներն ուղարկվում են Սամոսատ քաղաք: Վասիլն ու իր ընտանիքը նույնպես տեղափոխվում են այդ քաղաք, և ամիրան այդ քաղաքին հարող զավառում նրանց ի տիրություն է տալիս «երկիր»⁵⁵: Նույնն է հավաստում նաև Սմբատ Սպարապետը⁵⁶: «Երկիր»-ի տակ պատմագիրները նկատի ունեն բնակության համար հատկացված շրջաններ: Ըստ Աիքայել Ասորու, Կարա-Արսլանը «Վասիլին, որը նրան էր հանձնել Կարկառը, տվեց Արդահարը և Կամահա երկիրը»⁵⁷, որն անշուշտ Սամոսատի զավառում էր: Այս շրջաններն ընկած էին Վերին (Հայոց) Միջագետքում, Սամոսատի (Շիմշատի) զավառում, որին նույնպես տիրացել էին Արտուքյան ամիրաները: Վերջիններիս կողմից Վասիլ Պահլավ-

⁵² Սատթեոս Ուռհայեցի, էջ 396:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Սմբատ Սպարապետ, էջ 167:

⁵⁵ Սատթեոս Ուռհայեցի, էջ 397:

⁵⁶ Սմբատ Սպարապետ, էջ 167:

⁵⁷ Michel le Syrien, III, p. 294-295.

վունուն հողեր շնորհելը նպատակ էր հետապնդում մասնատել քրիստոնյաների ուժերը, թուլացնել դեռևս գոյատևող Եդեսիայի կոմսությունը և վերջին ու վճռական հարվածը հասցնել նրան:

Հաջորդ տարի՝ 1150 թ. Մասուդ սուլթանը, Արտուքյանների հետ ունեցած պայմանավորվածությամբ, հարձակվեց Եդեսիայի կոմսության վերջին հենավայրերի վրա, առաջին հարվածն ուղղելով վերին Միջագետքի Քեսուն բերդաքաղաքին: Նա գրավեց ոչ միայն Քեսունը, այլև Բեհեսնին, Ռապանը, որից հետո «զմաց յերկիրն թլպաշարայ, զոր յանցեալ ամին քակեալ և աւերեալ էր», բայց այս անգամ նույնպես չկարողացավ գրավել այն⁵⁸: 1151 թ. Հալեպի Նուրադդին ամիրան դարան նյութելով՝ գերեց Եդեսիայի վերջին կոմս Ջուլին II-ին, որը Եդեսիայի գրավումից հետո հաստատվել էր Քեսունում, իսկ վերջինիս անկումից հետո՝ անցել մերձեփրատյան ուրիշ շրջաններ: Նույն ժամանակ այդ ամիրան կարողացավ գրավել թլպաշարը, Տլուքը, Մարաշը և Եդեսիայի կոմսության այլ բնակավայրեր⁵⁹, իսկ Մարդինի Արտուքյանները տիրացան Պահլավունիների երբեմնի տիրույթ Բիրին, որով իսկ մահմեդականների համակցված հարվածների տակ վերջ տրվեց Եդեսիայի կոմսությանը:

1150 թ. Ջուլին II-ի այրին՝ Բեստրիսը Եփրատի ափին գտնվող Ղոռմկլա ամրոցը (Պահլավունիների երբեմնի տիրույթ Բիր քաղաքից հյուսիս) հանձնում է Գրիգոր III Պահլավունի կաթողիկոսին, որն այն դարձնում է իր գահանիստը⁶⁰: Կաթողիկոսի այդ քայլի դրդապատճառ է համարվում ոչ միայն թյուրքական սպառնալիքը, այլև Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության ազդեցության թուլացումը: Եվ այդ նպատակադրումով Գրիգոր III-ն իր աթոռը «մի փոքր մոտեցրեց Մեծ Հայքին»⁶¹: Բայց կաթողիկոսի բուն նպատակը իր աթոռի ապահովությունն էր, ինչը հարկավ նա գտավ Ղոռմկլայում: Ստեղծված դժնդակ պայմաններն էին թելադրողը: Ծովքի վրա դամոկլյան սրի պես կախ-

⁵⁸ Մատթեոս Ուտիայեցի, էջ 398, տես նաև Սմբատ Սպարապետ, էջ 167-168:

⁵⁹ Իրն ալ-Ասիր, թարգմ., առաջաբան և ծան. Տեր-Ղևոնդյան Ա., Ե., 1981, էջ 256-257:

⁶⁰ Սմբատ Սպարապետ, էջ 168-169:

⁶¹ Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, էջ 353-354:

ված էր դժնարարք ու այլահավատ ցեղերի հարածամյա սպառնալիքը: Գրիգոր կաթողիկոսը եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ, - գրում է հիշատակագիրը, - բնակվում էին «յերկրին Անտիոքայ՝ ի գաւառին Սղոյ, ի փոքր դղեակն Ծով կոչեցեալ, և աղաւթէին առ տէր ապրեցուցանել զնոսա ի չարաթոյն այլասեռիցն և ի մարդադէմ գազանացն, որ և փրկեալք լինէին և ապրեալք որպէս ճնճղուկ յորոգայթ որսողաց: Իսկ ապա տեսեալ զտկարութիւնն զաւրութեան մերասեռիցս երկեան դադարել ի դղեակն Ծով, քանզի ոչ ունէր այնքան ամրութիւն, որ եթէ կարաւո զու փրկել զնոսա...», ուստի, - շարունակում է հիշատակագիրը, - Պահլավունիները տեղափոխվեցին «զանմատչելի ամրոցն Հռոմկլայ... ազգայնաւք և ամենայն զարմիւք և սպասաւորաւք և ամենայն լրմամբ Սրբոյ աթոռոյն խաղաղացան անդորրաբար ի կասկածանաց և յերկիւղէ չարաշշուկ բռնաւորացն: Եւ թէպէտ և այլ շուրջաբնակ գաւառքն առան յայլազգեաց մինչև ի մեծն Անտիոք, այլ նոքա անփորձ մնացին ամրութեան տեղւոյն աղագաւ...»⁶²:

Սեկ այլ հիշատակագիր շեշտում է, որ Հռոմկլայի նախկին տերն, այդ ամրոցից «անցելեալ յահէ նեղչացն փախուցեալ ըզսա կամաւ սմին տուեալ լինիլ սեփականեալ»⁶³: Այդպիսով Բեստրիսը Հռոմկլան անհատույց հանձնում է Գրիգոր III կաթողիկոսին: Սակայն որոշ ժամանակ հետո Բեստրիսի որդին Ջոսլին III-ը ժամանում է արդեն Հռոմկլայում իր աթոռը հաստատած Գրիգոր III-ի մոտ և ամրոցի դիմաց պահանջում 15 հազ. դահեկան, ինչը վճարվում է նրան: Այս գործարքը վավերացվեց Ջոսլինի ձեռքով գրված երդմնագրով, ինչը պահվեց կաթողիկոսական դիվանում⁶⁴:

Ստեղծված իրավիճակում Վասիլ Պահլավունի իշխանը և եղբայրը՝ Ջորավարը հավանաբար գերադասել են տեղափոխվել Հռոմկլա: Հիշատակագրի վերը նշված հաղորդումը Հռոմկլա Գրիգոր III-ի տեղափոխվելու մասին («ազգայնաւք և ամենայն զարմիւք») թույլ է տալիս կարծելու, որ վերջիններիս մեջ եղել են նաև Վասիլի ու եղբոր գերդաս-

⁶² Յովսէփեանց Գ., Յիշատակարանք ձեռագրաց, էջ 428-429:

⁶³ Թօփճեան Յ., Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, էջ 22:

⁶⁴ Սմբատ Սպարապետ, էջ 169, տես նաև Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 445:

տանները: Անանուն Եղեսացին գրում է, որ Վասիլ Պահլավունու դուստրերից մեկն ամուսնացած էր Կիլիկիայի Մլեի իշխանի (1169-1175) հետ, բայց «երբ Մլեին սպանվեց, և իշխանության զուխ անցավ Ռուբենը, կաթողիկոսը⁶⁵ գնաց այնտեղ և, վերցնելով քրոջը, բերեց Հռոմկլա»⁶⁶: Բացի Գրիգոր IV կաթողիկոսից, Վասիլի և Մարեմիկի զավակներ են հիշվում Սարգիս քահանան, «զԱպիրատն քաջ և զՀասան կորովին, զՎահրամն խոհեմն և զՎասակ հեզն, զՀեթում պատանի և մանուկ զեղեցիկ, որ ի քսանամենից մինչև ի տիս երիտասարդութեան վախճանեալ... Եւ զԴ կուսանսն բարեհոգիք քորք սոցին»⁶⁷: Ըստ այդմ Վասիլն ունեցել է յոթ ուստր և չորս դուստր: Դուստրերից մեկը՝ Վանինեն կնության տրվեց Սասունի իշխան Չորտվանելին (Վիզենի որդուն), որի զավակներ են հիշվում Վասիլը, Շահնշահը և Թոռնիկը⁶⁸: Վասիլի և Մարեմիկի երրորդ դստեր մասին հայտնի է միայն, որ նա Գրիգոր V Քարավեժ կաթողիկոսի (1193-1194) մայրն էր⁶⁹: Վասիլի մյուս զավակների մասին տեղեկություններ չկան:

Վասիլի եղբոր՝ Ջորավարի որդիներ են հիշվում Գրիգոր VI կաթողիկոսը (Ապիրատ կրկնանունով, 1194-1203), «Մեծ իշխան պարոն Միքայելը», և «պարոն Վասիլն»⁷⁰: Ջորավարի դուստրեր են հիշվում Թագուհին և Շահանդուխտը: Թագուհուն կնության առավ Պապեռոն բերդի տեր Բակուրանը: Թագուհու եղբայրը՝ Գրիգոր VI կաթողիկոսը 1194 թ. փեսային նվիրած Ավետարանի հիշատակագրում խնդրում է նախ հիշել «զբարեպաշտ իշխանն՝ զմեծ սեւաստիաւսն զԲակուրան... ընդ նմին և քրիստոսասէր ամուսինն իւր զԹագուհի՝ զոր ըստ մարմնոյ քոյր ին»⁷¹: Բակուրանը մասնակցեց 1198 թ. Լևոն II-ի թագադրման շքահանդեսին⁷²:

⁶⁵ Ակատի ունի Վասիլ Պահլավունու որդի Գրիգոր IV կաթողիկոսին:

⁶⁶ Անանուն Եղեսացի, էջ 135:

⁶⁷ Յովսէփեանց Գ., Յիշատակարանք ձեռագրաց, էջ 458:

⁶⁸ Նույն տեղում, էջ 400:

⁶⁹ Ամբատ Սպարապետ, էջ 204:

⁷⁰ Սարգիսեան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, 1914, էջ 168:

⁷¹ Յովսէփեանց Գ., Յիշատակարանք ձեռագրաց, էջ 583:

⁷² Ամբատ Սպարապետ, էջ 210:

Ջորավարի մյուս դուստրը՝ Շահանդուխտը ինչպես նշվեց, կնության տրվեց Լամբրոնի իշխան Օշինին: Շահանդուխտի որդու՝ Ներսես Լամբրոնացու միջոցով մայրն ընդունեց կրոնական կոչում և մտավ վանք: 1190 թ. Սկեվոյի վանքում ընդօրինակված ձեռագրում հիշվում է Շահանդուխտը՝ «ամենաբարի և ճգնազգեաց, այժմ կրանաւորեալ ի ձեռաց որդոյ իւրոյ... երկու դստերաւք Շուշանաւ և Տալիթիւ, որք նորին ճգնող շաւղացն հետեւին...»: Իսկ մոտ 1198 թ. օրինակված ձեռագիր ժողովածուի գրիչը իր թողած հիշատակարանում խնդրում է հիշել Ներսես Լամբրոնացուն (ձեռագրի ստացողին) «և զաստուածասէր մայր իւր՝ տիկնաց տիկին՝ Շահանդուխտ կոչեցեալ, և զհարազատս իւր...»⁷³:

Շահանդուխտի եկեղեցանպաստ գործունեության մասին վկայում է 1190 թ. մոտերքը ընդօրինակված «Վարք սրբոց»-ի գրիչը՝ Լամբրոնի իշխանների ծագմանը նվիրված բաժնում, նշելով, որ Օշինը կառուցում է կաթողիկե մեծ եկեղեցի՝ Ս. Փրկիչ անունով (իր իշխանանիստ Լամբրոն բերդաքաղաքում) և «բազմացոյց ի սմա եղբայրութիւնս, և հանապազ խնամս տանէր առ սոսա հանդերձ բարեզարդ զուզակցան իւրով՝ տիկնաց տիկին Շահանդուխտիւ»⁷⁴:

Վասիլ և Ջորավար Պահլավունիների մահվան թվականները հայտնի չեն: Ենթադրվում է, որ Վասիլը պետք է ողջ լիներ իր փեսայի՝ Մլեհի գահակալության տարում՝ 1169 թ.⁷⁵: Բայց այդ մասին հիշատակություն չկա աղբյուրներում: Անշուշտ, Մլեհի և Վասիլի դստեր ամուսնությունը կարող էր ավելի վաղ տեղի ունեցած լինել: Ցավոք, Վասիլի մահվան տարեթիվը չի նշված նաև նրա դամբանաքար-խաչքարի վրա փորագրված արձանագրության մեջ⁷⁶:

Կաթողիկոսարանը հռոմկլա տեղափոխելուց հետո Ծով դոյակը մնաց կանգուն, դիտվելով իբրեւ վանական հաստատություն՝ «Ծովուց վանք»⁷⁷: 1151 թ. ընդօրինակված Ավետարանի վերջում նշվում է, որ

⁷³ Յովսէփեանց Գ., Յիշատակարանք ձեռագրաց, էջ 540, 627:

⁷⁴ Լույն տեղում, էջ 553:

⁷⁵ Dedejian G., les Armeniens, t. II, p. 1244.

⁷⁶ Մինչև 1972 թ. այդ խաչքարը մնում էր հռոմկլայում, բայց նույն թվին տեղափոխվեց Բեյրութ (նույն տեղում, էջ 1245):

⁷⁷ Յովսէփեանց Գ., Յիշատակարանք ձեռագրաց, էջ 357:

այն գրվել է «յամրոցիս՝ որ կոչի Ծով, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնիս և Սրբոյ նշանիս»⁷⁸: Գրիգոր Երեցը հաղորդում է, որ 1161 թ. Անտիոքի դուքս Ռենալդը «իջանէր յերկիրն Տլքոյ եւ ի քերդն կաթողիկոսի, որ կոչի Ծով»⁷⁹: Ծովքի վանական հաստատությունը դրական հանդերձ կանգուն էր նաև հետագա դարերում: Այսպես, 1478 թ. օրինակված գանձարանի գրիչը նշում է, որ՝ «գրեցաւ սուրբ գանձարանս ի Ծովքս, ի դուռն սուրբ նշանիս...»⁸⁰: Ականատեսի վկայությամբ XX դ. սկզբներին Ծով դրական ավերված էր՝ ծածկված ծառերով ու վայրի բույսերով⁸¹:

*ВРЕЖ ВАРДАНИЯ
ИИ НАН РА*

ЦОВСКИЕ ПАХЛАВУНИ

РЕЗЮМЕ

После падения царства армянских Багратидов часть армянского княжеского рода Пахлавуни утвердилась в замке Цовк на юго-востоке Киликии, в провинции Длук, где они приобретали потомственную власть. Цовские Пахлавуни властвовали также в близлежащих армянских селениях, защищая их от тюрко-сельджукских завоевателей. В 1098 г. Цовское княжество входило в состав Эдесского государства, созданного участниками первого крестового похода. Цовские Пахлавуни номинально находились в вассальной зависимости от Эдесского графства. В 1112 г. В битве с тюрками погиб князь Цовка Апират внук Григора Магистроса Пахлавуни (по линии дочери Григора). Власть в Цовском княжестве унаследовал сын Апирата - Васил (брат знаменитого писателя, католикоса всех армян Нерсеса Шнорали, который расширил границы этого феодального княжества).

В 1125 г. усилиями брата Василия - католикоса всех армян Григора III Пахлавуни замок Цовк с близлежащими 15 селениями приобрел полную независимость. Вплоть до 1150 г. замок Цовк являлся резиденцией армянского католикосата. Однако из-за постоянных угроз тюркских полчищ ущемлялись политические и церковные права цовских Пахлавуни, которые в 1150 г. были вынуждены переселиться в замок Ромкла.

⁷⁸ Նույն տեղում, էջ 361:

⁷⁹ Սատրեոս Ուռհայեցի, էջ 427:

⁸⁰ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն II (1451-1480), կազմեց Խաչիկյան Լ., Ե., 1958, էջ 433:

⁸¹ Տեր-Ղազարեան Յ., Հայկական Կիլիկիա, էջ 98:

ԿԵՉԱՈՒՍԻ ՎԱՆՔԻ ԵՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ԵՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ (XI-XIII դդ.)

Դժվար է գերազնահատել հայերեն վիճագրերի նշանակությունը հայոց պատմության բազմաթիվ ու տարաբնույթ հարցերի ուսումնասիրության համար: Հայերեն վիճագրերը լույս են սփռում երկրի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ հոգևոր մշակութային կյանքի պատմության հարցերի վրա: Վիճագիր արձանագրությունների՝ իբրև պատմական սկզբնաղբյուրների նշանակությամբ ու դերին կարելի է երկար անդրադառնալ, բայց մեր խնդիրն այդ չէ: Մենք ուշադրություն ենք դարձնելու միջնադարյան Հայաստանի կրոնական ու մշակութային կարևոր կենտրոններից մեկի՝ Կեչառիսի վանական համալիրի նվիրատվություններին, փորձելու ենք պարզել նվիրաբերված արժեքների և նվիրատուների հետ կապված որոշ հարցեր: Հոդվածի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XI-XIII հարյուրամյակները, որոնց ընթացքում Կեչառիսի համալիրի կառույցներին արձանագրվել են չորս տասնյակից ավելի վիճագրեր: Դրանք թեմատիկ առումով կարելի է երեք կարգի խմբել՝

- ա) նվիրատվական
- բ) հիշատակարանային
- գ) շինարարական

Հայտնի է, որ Կեչառիսի վիճագրերը հավաքվել և հրատարակվել են բազմիցս ու մի քանի ուսումնասիրողների կողմից: Այստեղ հաշվի են առնվել Գ. Հովսեփյանի և Հ. Եղիազարյանի ընդօրինակությունները միայն:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում XI դ. սկսած Կեչառիսը նախապես մտնում էր Ապիրատյանների իշխանական տոհմի տիրույթների մեջ, իսկ հետագայում նրան տեղ դարձան ուրիշ տներ: Ապիրատյանները Կեչառիսը դարձրին նաև հոգևոր կենտրոն՝ այնտեղ հիմնելով հոգևոր կրթական համալիր: Այդ համալիրում կենտրոնականը Ա.

Գրիգոր եկեղեցին էր, որի հիմնադրման ժամանակի և հիմնադրի մասին վիճաբարական և մատենագրական տվյալները հակասական են ու իրարամերձ: Չետևաբար, պատմական այդ տեղեկությունների վրա խարսխված հետազոտողների տեսակետները հաճախ միմյանցից զգալիորեն հեռանում են:

Ղ. Ալիշանը ցույց է տվել, որ Ս. Գրիգոր եկեղեցու հարավային մուտքի բարավորին Չասամի որդի Գրիգոր Մագիստրոսի անունով փորագրված շինարարական արձանագրության մեջ եկեղեցու կառուցման թվական նշված հայոց ՆԺԲ թ. (1033) չի համապատասխանում Գագիկ Ա Բագրատունու (990-1020) և Սարգիս Սևանցի (992-1019) կաթողիկոսի գահակալության ժամանակաշրջանին, ինչի մասին խոսվում է այդ արձանագրության մեջ: Չետևաբար, նա առաջարկել է արձանագրության ՆԺԲ թվաշարքը համարել սխալ և ուղղել ՆԾԲ, այսինքն՝ 1003, որն արդեն կհամընկնի վերոհիշյալ գործիչների իշխանության ժամանակաշրջանին¹: Ըստ արձանագրության՝ Չասամի որդի Գրիգոր Մագիստրոսը եկեղեցին կառուցել է իր, իր պատրոնի և իր որդիների «բարեխոսության» համար:

Ղ. Ալիշանը հենվելով Վարդան Արևելցու և Մխիթար Այրիվանեցու տեղեկությունների վրա, որոնք Կեչառիսի եկեղեցու կառուցող են համարում Չասամի որդի Ապիրատին, վերջինիս նույնացնում է վերը նշված արձանագրության հեղինակ Չասամի որդի Գրիգոր Մագիստրոսի հետ²:

Գ. Չովսեփյանն ընդունել է Ղ. Ալիշանի վերը նշված դրույթները, բայց գտել է, որ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի կառուցած եկեղեցին չի պահպանվել, իսկ այսօրվա կանգուն Ս. Գրիգոր եկեղեցին կառուցել է Վասակի որդի Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Նման եզրահանգման համար նա վկայակոչել է Գրիգոր Պահլավունու անունից 1051 թ. կազմված մի վավերագիր: Վերջինս խտալերեն է և Չոմի

¹ Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 259: Վկայակոչվող գործերի վերնագրերը միայն առաջին անգամ հղվելիս են լրիվ նշվում:

² Անդ.: Այս արձանագրության ընդօրինակող Գ. Եղիազարյանն ընագրի ՆԺԲ թ. ինքնակամ փոխել է ՆԾԲ-ի: Տես հեղինակի «Կեչառիսի վանքը և նրա վիճագիր արձանագրությունները» հրատարակումը, «Եջմիածին» 1955, թիվ 12, էջ 38:

մի արխիվից XIX դ. սկզբին տարվել է Փարիզ, որը Սեն Մարտենն ընդօրինակել է իր գրքում: Այս վավերագիրը գրաբար թարգմանել և «Այրարատ»-ում գետեղել է Ղ. Ալիշանը³:

Կեչառիսի համալիրին վերաբերող որոշ հարցերի վերջերս անդրադարձավ Կ. Մաթևոսյանը: Նա ևս Ս. Գրիգորի կառուցման թվականը համարում է 1003-ը, իսկ նրա կառուցող ճանաչում Գրիգոր Ապիրատ Մագիստրոսին: Կ. Մաթևոսյանն իր տեսակետի օգտին մատնանշում է նոր տվյալներ, մասնավորապես Գ. Սարգսյանի հայտնաբերած Արզակյանի եկեղեցու 1001 թ. վիմագիրը, ուր Գրիգոր Ապիրատը նրա կարծիքով հիշատակված է «Գրիգորի Չայոց Մագիստրոսի ...» կապակցությամբ⁴:

Ն. Աղոնցը Գ. Չովսեփյանի «Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ» ուսումնասիրության Գ հատորի համար գրած գրախոսականում հակված է Ա. Գրիգորի կառուցման վերաբերյալ ընդունելի համարել 995 թ., որը մի վիմագրից ներմուծել է Աիմեոն Երևանցիին իր «Ջամբռ»-ում: Ի դեպ, այս թվականը, իբրև Ա. Գրիգորի հիմնարկեքի սկիզբ, ընդունում են մի խումբ ուսումնասիրողներ:

Ն. Աղոնցն առարկում է նաև Չասանի որդի Ապիրատի և Գրիգոր Մագիստրոսի նույնացմանը: Այլ կերպ ասած՝ Չասանի որդու վերը նշված արձանագրությունը նա համարում է ոչ վավերական: Ն. Աղոնցը մատնանշում է հիշյալ արձանագրության մեջ գործածված պատրոն տերմինը, նույնպես, որը դիտում է վիմագրի՝ ուշ ժամանակաշրջանի գրության ապացույց⁵:

Ինչպես նշվեց, ուսումնասիրողներից շատերը Կեչառիսի Ս. Գրիգորի կառուցումը կապում են Չասանի որդի Ապիրատ իշխանի հետ: Նա զգալի հետք է թողել Չայաստանի քաղաքական կյանքի պատմության մեջ: Ապիրատը «քաջ, հզոր և բովանդակ Չայաստանում հռչակված էր», հայտնի էր «Չայոց իշխան» հորջորջումով, իր տրա-

³ Ալիշան Ղ., անդ, էջ 259-260: Չմտ. Յովսեփեան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 158:

⁴ Մաթևոսյան Կ., Չազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից «էջմիածին», 2004, Ա, էջ 78:

⁵ «Քննական տեղեկագիր պրոֆ. Ն. Աղոնցի», Յովսեփեան Գ., Խաղբակեանք, էջ 464:

մադրության տակ ուներ 12 հազար հեծելազոր: Նա «խելացի էր ու առատածեռն»: Ապիրատ իշխանն ակտիվորեն մասնակցել է երկրի քաղաքական կյանքում սկսված ճգնաժամը հաղթահարելու փորձերին, երբ գահակալական անգիջում պայքար էին սկսել Գագիկ Ա Բագրատունու որդիները՝ Հովհաննես-Ամբատը (1020-1041) և Աշոտ Դ-ը⁶ (1020-1040):

Երկու համառոտ այլ ցուցումների համաձայն Ապիրատը ոչ միայն կառուցել է Կեչառիսը, այլև հանել Երևանի առուն⁷:

Միջնադարում գոյություն ունեցող կարգի համաձայն եկեղեցիների հիմնարկեքը կամ նավակատիքները նշվում էին մեծ շուքով ու հանդիսավորությամբ: Դրանց ներկա գտնվողներից յուրաքանչյուր ունևոր իրազեկում էր տվյալ հոգևոր հաստատությանն իր կատարած նվիրատվությունների վերաբերյալ: Նվիրատվություններով հատկապես աչքի էին ընկնում այդ հաստատությունների կտիտորները: Անտարակույս, «խելացի ու առատածեռն» Ապիրատ իշխանն աչքի պետք է ընկներ իր կառուցած եկեղեցու օգտին կատարած հարուստ ու արժեքավոր նվիրաբերումներով: Որքան էլ զարմանալի է, այդ մասին չի պահպանվել որևէ գրավոր ծանուցում:

Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու նվիրատվական առաջին վավերագիր է դիտվում Հռոմի արխիվի գրությունը, որի մասին խոսվեց վերը և որը գրված է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունից ու կրում է 1051 թվագիրը: Գրիգոր Մագիստրոսը Բջնիի տերն էր, երբ տեսավ, որ Գագիկ Բ-ին բյուզանդացիները չեն թողնում հայրենիք վերադառնալ, իր տիրույթները հանձնեց Կոստանդին IX Մոնոմախ կայսրին (1042-1055) «առնու զպատիւ մագիստրոսութեան, և զտեղիս քնակութեան ի սահմանս Միջագետաց գիւղս և քաղաքս, գրով և ոսկի մատանեաւ յազգէ յազգ մինչև յաւիտեան»⁸:

⁶ Մատթեոս Ռեոհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 9-11, Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Ե., 2001, էջ 139-140:

⁷ Մխիթար Արխիմանցի, Պատմություն Հայոց, Մ., 1860, էջ 58:

⁸ Պատմություն Արխատակիսի Լաստիվերտցույ, աշխատասիրությանը Կ.. Յուզբաշյանի, Ե., 1963, էջ 62:

Գրիգոր Մագիստրոսը հարկային արտոնություններ էր ստացել բյուզանդական կայսրությունից Մարմաշենի, Կեչառիսի վանքերի համար⁹:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունու տերունական իրավունքը Կեչառիսի նկատմամբ պայմանավորված էր նրա երկու դուստրերի հետ Հասան Ապիրատյանի որդիների՝ Ապլջահապի ու Վասակի ամուսնությամբ:

Հռոմի 1051 թ. վավերագրում Գրիգոր Պահլավունին հիշատակվում է Ս. Գրիգոր եկեղեցու կառուցող և նվիրատու¹⁰: Նրա նվիրատվությունների մաս են կազմել ոսկե և արծաթե զարդերը, գրքերը և այլ պիտույքներ: Նվիրաբերվել է նաև երկու գյուղ ու մեկ այգի:

Հիշյալ վավերագրին կցված է Բջնիի եպիսկոպոսներ Վանականի և Համավարի գրությունը, որով Ա. Գրիգոր եկեղեցուն իբրև թեմ նրանք հատկացնում են քսանհինգ գյուղ և մեկ քաղաք¹¹: Հռոմի արխիվի այս վավերագիրը թեև աղերսվում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու Ս. Գրիգոր եկեղեցու հարավային որմին գրված 1051 թ. վիմագրին, սակայն որոշ դեպքերում էականորեն տարբերվում է նրանից¹²:

Ըստ վիմագիր արձանագրությունների ժամանակագրական հերթականության, առաջինը Կեչառիսի Ս. Նշան եկեղեցու հյուսիսային որմին Վարդըմբելի ՌԲ (1163) թ. նվիրագիրն է, որով նվիրատուն տեղեկացնում է իր կողմից երևանում գտնվող «Սեղիտինոյ էգոյն չարեքն» գնելու և Ա. Գրիգորին նվիրելու մասին: Նվիրատուն դրա դիմաց ստացել է տարեկան երկու ժամասացություն¹³:

Մինչ Գ. Հովսեփյանի կողմից հիշյալ արձանագրության հավաստի վերծանությունը, նախորդ հեղինակներն արձանագրության

⁹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխատասիրությամբ Կ. Կոստանյանցի, Վլքեսանդրապոլ, 1910, էջ 103-104, 304:

¹⁰ Գ. Սարգսյանը նրան է վերագրում ոչ թե Ս. Գրիգորի, այլ նրա կողքի Ս. Նշան եկեղեցու կառուցումը (Տես «Հին Հայաստանի մշակույթը», ժողովածու 12, Ե., 2002, էջ 87):

¹¹ Ալիշան Ղ., Այրարատ, էջ 260:

¹² Այս երկու վավերագրերի ընդհանրությունների ու առանձնահատկությունների քննությունը տես Կ. Մաթևոսյանի նշված հոդվածում, էջ 89-91:

¹³ Յովսեփեան Գ., Խաղբակեանք, էջ 313:

ՈժԲ (1163) թվաշարըը կարդացել են ՈՇԳ ¹⁴: ճիշտ չի վերծանվել նաև արծանագրության գնեցի-ն, որն ընթերցվել է նորոգեցի¹⁵:

Չարեքը կամ չարաքը պարսկական կշռի չափ է, այն կազմում է մեծ մանի 1/4-ը և հավասար է 750 գրամի¹⁶: Այն նաև հողատարածքի մակերեսի չափի միավոր է¹⁷: Բառը կազմված է պարսկերեն *car-yak* (չորս + մեկ) մասերից¹⁸:

Չարեքը տարածված էր նաև հարևան երկրներում և կապվում էր հողօգտագործման քննարկականության հետ¹⁹: Չարեքյան արտերն այն հողատարածքներն էին, որոնցից ստացված քերքի 1/4-ը հողատերերը թողնում էին այդ հողերը մշակողներին: Մեր օրինակում Վարդըմբելը գնելով Մեղիտոնի այգու չարեքը, այգու տարածքի 1/4-ը նվիրում է Կեչառիսի Ս. Գրիգորին:

Ժամանակի ընթացքում չարեքյան կոչված տարածքները դադարում են իրենց նախնական իմաստն արտահայտելուց և դառնում հատուկ անուն: Այսպես, 1771 թ. գրված կալվածագրերից մեկում հոր վիրապի վանքի առաջնորդ Ավետիք վարդապետը Նորք գյուղի Չարեքանոց այգու տեղը տալիս է նորքեցի Ղազարի որդի Մարկոսին՝ այգի տնկելու և դրա արդյունքից օգտվելու պայմանով²⁰:

Չարեք անունով տեղանուն հայտնի է Փռախոսում²¹:

Ինչ վերաբերում է նվիրատու Վարդըմբել անվան քաղաքությանը, ապա այժմ հավանական են համարվում Վարդի քերած,

¹⁴ Վիճական տարեգիր, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս.Պետերբուրգ, 1918, էջ 46, Ալիշան Ղ., Այրարատ, էջ 262:

¹⁵ Վիճական տարեգիր, անդ:

¹⁶ Хинц В., Мусульманские меры и веса с переводом в метрическую систему. Перевод с немецкого Ю. Э. Брегеля, М., 1979, с. 44.

¹⁷ Давидович Е. А., Материалы по метрологии Средневековой Средней Азии, М., 1970, с. 106, 121, 131.

¹⁸ Աճառյան Յ., Հայերեն արմատական բառարան, Ե., 1977, հ.Գ., էջ 625-626:

¹⁹ Али-Заде А., Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIV вв. Баку, 1956, с. 75, 239.

²⁰ Կալվածագրեր, կազմեց Յ. Աբրահամյան, պրակ I, Ե., 1941, էջ 92:

²¹ Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 392:

Վարդի տված ձևերը²²:

Նվիրատուի սոցիալական դիրքի վերաբերյալ մենք որևէ տվյալ չունենք: Ղ. Ալիշանն իրավացի է, երբ Վարդըմբելին համարում է երևանցի մեծատուն: Իրոք, Երևանում եղած այգիները, թեև ուզում էր քառորդ մասը գնելու համար, քչերին կարող էին հասանելի լինել: Սրա հետ մեկտեղ հավանական չի կարող դիտվել Ղ. Ալիշանի կողմից մեկ ուրիշ նվիրատուի Երևանի Վարդ պատրոնի նույնացումը Վարդըմբելի հետ²³: Նշենք, որ Վարդ պատրոնի նվիրագրի թվականը չի պահպանվել:

Ժամատան հյուսիսային պատին ներսից արձանագրվել է Հայրաձայնի ՈՃԵ (1206) թ. վիճագիրը, որը տեղեկացնում է իր պատրոն Բուպալից Առինջքում հող գնելու, այգի հիմնելու և Կեչառիսի սուրբ ուխտին նվիրելու մասին, որի դիմաց Գրիգոր վարդապետը և եկեղեցու մյուս միաբանները Թեոդորոսի տոնին բոլոր եկեղեցիներում սահմանում են մեկ պատարագ: Արձանագրության վերջում հետևում է անեծքի բանաձևը²⁴:

Նվիրատու Հայրաձայնի մասին մեր գիտելիքները չեն անցնում այս արձանագրության սահմանափակ տեղեկությունների շրջանակից: Հակառակ դրան՝ համեմատաբար մանրամասն պատկերացում ունենք նրա պատրոնի վերաբերյալ:

Սկզբնաղբյուրներում պահպանվել են Բուբայի անվան տարբեր ձևերը, որոնց կապակցությամբ հայտնի են ուսումնասիրողների դիտարկումները²⁵: Բուբայի՝ իբրև զորավարի տաղանդը դրսևորեց սելջուկ-թուրքերից Հայաստանի տարածքներն ազատագրելու մար-

²² Ավագյան Ա., Վիճական արձանագրությունների բառաքննություն, Ե., 1978, էջ 307-308:

²³ Ալիշան Ղ., Այրարատ, էջ 262: Հմմտ. Ս. Ավագյան, Վիճական բառաքննություն, էջ 306:

²⁴ Յովսեփեան Գ., Խաղրակեանք, էջ 314: Հ. Եղիազարյանի վերծանության մեջ նվիրատուն հիշատակվում է Բուգամեն անունով: (Տես Հ. Եղիազարյան, Կեչառիսի վանքը, էջ 42):

²⁵ Աղոնցի մատնանշված զրախոսությունը, նաև Бабаян А., Социально-экономическая и политическая история Армении в XII-XIV веках, М., 1969, с. 25-26. Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Ե., 1977, էջ 122-131, Ավագյան Ա., Վիճական բառաքննություն, էջ 50-52:

տակտն գործողությունների ժամանակ: Նա Իվանն Ջաքարյանի իշխանության գործակալն ու հրամանատարն էր, հեջուբների (իշխանության վարիչ կամ վերակացու) ավագը: Բուբայն հայտնի է մեծ իշխան, մեծ սպարապետ, իշխանաց իշխան և ամիրայից ամիրա հորջորջումներով²⁶: Եթե առաջին երկու տիտղոսները նշան էին նրա ստանձնած հատուկ ծառայությունների, ապա վերջինները սոսկ պատվատիտղոսներ էին՝ գուրկ որևէ պաշտոն արտահայտելու իմաստից²⁷:

Լինելով իր ժամանակաշրջանի ռազմական ավագանու քարծրաստիճան ներկայացուցիչներից, Բուբայն միաժամանակ խոշոր ավատատեր էր: Նա Գեղարքունյաց գավառի տերն էր, տիրույթներ ուներ նաև Վայոց ձորում²⁸:

Հայտնի իրողությունն է, որ միջնադարյան իշխանական տոհմերի դիրքը որոշ դեպքերում պայմանավորված էր այլ տոհմերի հետ նրանց հաստատած խնամհական կապերով: Այս առումով ուշադրության արժանի է Բուբայի կողմից Լիպարիտ Օրբեյանին փեսայացնելու փաստը²⁸, մի իրողություն, որն որոշակի դեր էր ունեցել նաև Լիպարիտի իշխանության ընդլայնման ու ամրապնդման գործում:

Բուբայն հայտնի է Հայրավանքին, Ասնահինին³⁰ և Նորավանքին կատարած իր նվիրատվություններով: Ենթադրվում է, թե նա մահացել է 1230-ական թթ.: Մարմինն ամփոփված է Թեժառույթի եկեղեցում³¹:

Կեչառիսի Ս. Կաթողիկե եկեղեցու հարավային պատին փորագրված է Վասակ խաղրակյանի ՈԿԳ (1214) թ. շինարարական-նվիրատվական արձանագրությունը: Վասակի նվիրաբերած արժեքներն են եկեղեցական սպասքները, տեքստի խաթարված լինելու պատճառով անունը չպահպանված գանձագին մեկ գյուղ, մեկ այգի Երևա-

²⁶ Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Ե., 1973, էջ 69, Ստեփաննոս Օրբելեան, էջ 353, 356-357:

²⁷ Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 127-129:

²⁸ Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Ե., 1973, էջ 69, Ստեփաննոս Օրբելեան, էջ 356-357:

²⁹ Ստեփաննոս Օրբելեան, էջ 396-397:

³⁰ ԴաՖաղարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 129:

³¹ Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 126-127:

նում, մեկ ուրիշ այգի Նորաշենք գյուղում: Վասակի արծանագրությունը եզրափակում է նրա տիկինը՝ Մաման, որը եկեղեցուն ընծայել է ևս մեկ այգի՝ Երևանում: Ռեշագրավ է, որ Վասակն իր նվիրաբերած գյուղը ձեռք է բերել գնելով, մինչդեռ Նորաշենքի և Երևանի այգիները գնելու մասին նա չի ակնարկում: Այնինչ Մամայի նվիրած այգին նվիրատուն ստացել է իր «հալալ» ունեցվածքով³²:

Նույն եկեղեցու արևմտյան մուտքի կամարներին ու կամարակալ դռան քարին պահպանվել է Վասակ Խաղբակյանի երկրորդ արծանագրությունը, որով նա իր պատրոնների՝ Իվանեի, Շահնշահի, Ավագի, Խոշաքի ու իր հարազատների արևշատության համար կառուցել է այդ եկեղեցին: Արծանագրության վերջում հավելվել է «Գիրս ընծա: Ա: լաւ շինակնատուն ի Նորաշենքն երեստ եւ: Ա: ի Կարենիսն»³³: Ն. Ադոնցը թեև ցույց է տվել շինակնատուն բառի կազմությունը, սակայն նրա իմաստը համարել է չպարզաբանված: Արդեն նշվել է, որ հիշյալ արտահայտությունը քերականորեն չի կապվում արծանագրության բուն տեքստի հետ և այն հետագայի հավելում է: Ըստ այսմ, կարծվում է, թե Նորաշենքի ու Կարենիսի գյուղացիները ոչ թե առանձին են նվիրաբերվել եկեղեցուն, այլ ամբողջ ընտանիքներով, գերդաստաններով կամ երդերով³⁴:

Այս երկու արծանագրությունների հեղինակ Վասակ Խաղբակյանը քաջ հայտնի է մատենագրական երկերից և ուրիշ վիճագրերից: Նրան անդրադարձել է Գ. Հովսեփյանն իր կարևորագույն աշխատության մեջ, վեր հանել Վասակի գործունեության հիմնական դրվագները³⁵:

Վասակը Խաղբակյան կամ Պոռոշյան տոհմի այն ականավոր գործիչն էր, որ քիչ ներդրում չունեցավ սելջուկյան գերիշխանությունից երկրի ազատագրության գործում: XIII դ. 90-ական թթ., նա իր որդիների՝ Պապաքի, Մկղեմի, Պոռոշի և իշխանական այլ տոհմերի զորագնդերի օգնությամբ համառ ու անզիջում մարտեր էր մղում սելջուկ թուր-

³² ՅովսեփեանԳ., Խաղբակեանք, էջ 299-300:

³³ Նույն տեղում, էջ 302-303:

³⁴ Ավագյան Ս., Վիճական բառաքնություն, էջ 246-253:

³⁵ Յովսեփեան Գ., Խաղբակեանք, էջ 35-40:

քերից վայոց ծորը, ինչպես հավանական է դիտվել նաև Բջնին, Դվինը ազատագրելու համար³⁶: Իբրև վարձատրություն նշված մարտերին ցուցաբերած ակտիվ մասնակցության ու վասալական հավատարմության, վրաց թագավոր Գեորգի Լաշան և Իվանե աթաբեկը ճանաչեցին վասակ Խաղբակյանի իշխանությունը³⁷, որն ընդգրկում էր վայոց ծորի, Շահապունիքի, Կոտայքի և Վարաժնունիքի որոշ մասերը³⁸:

Ժամատան աջակողմյան դասի ավանդատան ճակատի ՈԿԳ (1214) թ. արձանագրությամբ Յովհաննիսածայրին հատկացվել է երկու պատարագ, իսկ ծախ ավանդատան դոան գլխի նույն թվականի մեկ ուրիշ արձանագրով Մխիթարին տրվել է նույնքանը³⁹: Գ. Յովսեփյանը հիշյալ երկու արձանագրությունների բնույթից ելնելով՝ դրանք կապում է եկեղեցու օժան կամ նավակատիքների տոնի հետ: Նա առաջին արձանագրության Յովհաննիսածայրին անվան ծայր բաղադրիչը բացատրել է ծեր իմաստով⁴⁰: Այնինչ Ա. Ավագյանը վիճաբերից բերած բազմաթիվ օրինակներով հաստատում է, որ ծայր-ը բաղադրյալ անձնանուններում ցույց է տալիս «գերդաստանի ազնվագույն, բարձրագույն կամ վերջին զավակը»⁴¹:

Ա. Նշան եկեղեցու արևմտյան պատին Գրիգորի որդի Մխիթարիչի անթվական արձանագրությունն է, որը նվիրում է երևանում գտնվող իր աղբին կոչված այգին և ստանում մեծ թվով ժամեր՝ հինգը իրեն, երեքը՝ «Տիկնացտիկնա Կոկորին մորն», չորսը՝ Գրիգորին, երեքը՝ Մամիկին⁴²:

Այս նվիրատվությունը Կեչառիսի ստացած ամենից բարձր գին ունեցող կալվածքներից է, և պատահական չէ, որ դրա դիմաց եկեղեցու սպասավորները հատկացրել են մեծ թվով արարողություններ:

³⁶ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, Գ, Ե., 1977, էջ 164:

³⁷ Ստեփաննոս Օրբելեան, էջ 397:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Յովսեփեան Գ., Խաղբակեանք, էջ 315:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Ավագյան Ա., Վիճական բառաքնություն, էջ 130-136:

⁴² Յովսեփեան Գ., Խաղբակեանք, էջ 314-315:

Դա կարող է հաստատել նաև այգու աղբին որոշիչը, որը տվյալ դեպքում ցույց է տալիս նրա բարձր բերքատվությունը⁴³:

Գարեգին Յովսեփյանն իրավամբ նշված արձանագրության Կուկորին նույնացնում է 1246 թ. Յավուց թառում թաղված պարոն Կուկորի հետ: Վերջինս հայտնի է նաև այդ վանքին կատարած իր նվիրատվություններով: Այստեղ ևս գտնվել է Տիկնացտիկնայնի նվիրատվական արձանագրությունը⁴⁴:

Կեչառիսի և Յավուց թառի վանքերին կատարած նվիրատվությունները, ինչպես նաև Կուկորի պարոն տիտղոսը, Կուկորի մոր՝ Տիկնացտիկնայ անունը ենթադրել են տալիս, որ նշված անձինք պատկանել են ունևոր դասին, և նրանցից ոմանք առնվազն տեղական նշանակության վարչական գործառույթներ են իրականացրել:

Կեչառիսի ժամատան հարավային պատին արտաքուստ պահպանվել է Վաչե Վաչուտյանի ՈԿԲ (1213) թ. նվիրատվական արձանագրությունը, որով նրա հեղինակը, տիկինը՝ Մամախաթունը և որդիները՝ Քուրդն ու Վաչուտը եկեղեցուն նվիրել են իրենց գանձագին գյուղում՝ Շենգավիթում այգի և եկեղեցական սպասք⁴⁵:

Վաչե Վաչուտյանը մեկն էր այն զորավարներից, ով ակտիվորեն մասնակցեց սելջուկ-թուրքերից երկիրը ազատագրելու XII դ. 90-ական թթ. Ջաքարյան եղբայրների նախաձեռնած կռիվներին: Իբրև վարձատրություն իր նկատմամբ ցուցաբերած հավատարմության, ինչպես նաև մատուցած ծառայությունների համար, Ջաքարե Ջաքարյանը նրան ժառանգական տիրույթի սկզբունքով շնորհեց Արագածոտնը: Այսպիսով, Վաչե Վաչուտյանը հիմնադրեց մի իշխանություն, որը վասալական կախվածության մեջ էր գտնվում Ջաքարե Ջաքարյանի իշխանությունից: Ինչպես որ Վաչեն էր իրեն համարում Ջաքարեի ծառան, այսինքն՝ վասալը, հպատակը, նույն կերպ Վաչեն ուներ իր հպատակները, որոնց մասին թեպետ աղոտ, բայց տեղեկություններ; այնուամենայնիվ ունենք: Ամբերդի արձանագրությամբ Գրիգոր և Գուրգեն

⁴³ Աղբին բառի մասին տես Ավագյան Ա., Վիճական բառաբանություն, էջ 23-24:

⁴⁴ Յովսեփեան Գ., Խաղբակեանք, էջ 164, ծանթ. 2:

⁴⁵ Ամր, էջ 31-32:

եղբայրները հիշվում են իբրև Վաչեի «հրամանակատարք», իսկ Յովհաննավանքում ոմն Սարգիսը՝ «ճառայական»:

Վիմագրերում Վաչե Վաչուտյանը հիշատակվում է տարբեր տիտղոսներով՝ պարոն, անբերթցի, իշխանաց իշխան, տէր Անբերդո, վերակացու գավառիս, կողմնակալ աշխարհիս:

Սանահինում, Կեչառիսում, Սաղմոսավանքում, Յովհաննավանքում, Չաղբատում, Մակարավանքում, Չառիճում, Չոռոմոսում, Տեղերում, Անբերդում, Ուշիում և այլուր արձանագրություններ են պահպանվել Վաչեի ու նրա տիկնոջ՝ Մամախաթունի և գավակների կողմից կառուցած եկեղեցիների կամ նրանց համար կատարած նվիրատվությունների վերաբերյալ:

Ս. Նշանի դռան ճակատաքարի անթվական արձանագրության համաձայն, Երևանի Վարդ պատրոնը Ս. Գրիգորին է նվիրում իր հայրենի Չճշկա կոչված այգին՝ ստանալով տարին ութ պատարագ, չորսը իրեն, չորսը Անիրային, որն ինչպես ենթադրվում է նրա կինը պիտի լիներ: Արձանագրության մեջ հիշատակվում է հայր Պետրոսի անունը⁴⁶: Չայր Պետրոսը հեղինակ է դարձյալ թվականը չպահպանված մեկ ուրիշ՝ Ս. Գրիգորի հարավային պատին գրված արձանագրության, որի տողերը մնացել են ժամատան պատի տակ: Գ. Յովսեփյանն այս վերջին արձանագրության գրության թվականներ է համարում 1161-1166-ը, հետևաբար ըստ նրա հայր Պետրոսի օրոք է գրվել նաև Երևանի Վարդ պատրոնի արձանագրությունը⁴⁷: Պ. Մուրադյանը հայր Պետրոսի արձանագրությունը համարում է ավելի ուշ ժամանակաշրջանի՝ XIII դ. վերջի կամ XIV դ. սկզբի գրություն⁴⁸:

Վարդի պատրոն տիտղոսը ևս ցույց է տալիս, որ նա ներկայացնում էր տեղի ազնվականությանն ու ունևոր դասը:

Կեչառիսի գավթի արևմտյան ճակատակալ քարի անթվական արձանագրությունից տեղեկանում ենք Ամարասի եպիսկոպոսներ Սարգսի և Վրթանեսի դրամական հատկացումների մասին: Նրանք Ս. Գրիգոր եկեղեցուն նվիրում են 200 դահեկան: Նվիրագրում եկեղեցու

⁴⁶ Յովսեփյան Գ., Խաղբակեանք, էջ 31:

⁴⁷ Անդ, էջ 162:

⁴⁸ Մուրադյան Պ., Չայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 129-130:

սպասավորները հիշատակում են ստացված գումարի նպատակային ծախսումների մասին. 100 դահեկանը նրանք հատկացնում են ջրաղացին, 100-ը՝ գավթին⁴⁹: Այս արձանագրությունից գաղափար ենք կազմում Կեչառիսի հոգևոր հաստատության արտադրական ծեռնարկության՝ ջրաղացի վերաբերյալ: Ինչպես նշվեց, արձանագրությունն անթվական է: Գ. Հովսեփյանը կարծում է, որ արձանագրությունը գրվել է մոտավորապես 1242 թ., բայց ոչ ուշ քան 1246 թ., երբ Ամարասի Սարգիս եպիսկոպոսն արդեն վախճանվել էր: Աարգիս եպիսկոպոսի և Վրթանեսի տարագրությունը և վերադարձը հայրենի Արցախ, Գ. Հովսեփյանը, կապում է թաթարների արշավանքների հետևանքով տեղի ունեցած ավերածությունների հետ⁵⁰: Խաչենի և Խոյախան բերդի տեր Հասան Ջալալը իր տիկնոջ՝ Մամքանի հետ այցելում է Կեչառիս, որն ավերվել էր թաթար-մոնղոլների կողմից: Նրանք զգալի միջոցներ ծախսելով՝ նորոգում են վանքը և յուրաքանչյուր տարի վանքին հատկացնում 40 դուկատ: Այդ գումարը տրվել էր «ի համաւրէն վաճառէն», որը Գ. Հովսեփյանը նույնացնում է Հասան Ջալալի իշխանության մեջ մտնող Վաճառք վայրի հետ:

Արձանագրության թվականը ՈՂԷ (1248) է⁵¹:

Ամուսիններ Սոնթի և Խաթութի՝ ժամատան պատին թողած արձանագրությունից տեղեկանում ենք, որ ՉԺԱ (1262) թ. նրանք իրենց հոգու արդյունքը տվել են Ս. Գրիգոր եկեղեցուն և ստացել երեք ժամերգություն, երկուսը ամուսնուն, մեկը՝ տիկնոջը⁵²: Ի դեպ նշենք, որ Կեչառիսի վիճագրերում հոգու արդյունք եզրին հաճախ ենք հանդիպում, թեև գտնում ենք նաև հոգոյ ինչք ձևը: Այլուստ հայտնի են նաև դրանց տարբեր ձևերը՝ հոգեբաժին, հոգոյ թոշակ, հոգույն պաշար, հոգեմասն բաժին: Նշենք, որ Ա. Մալխասյանցի բառարանում նշված տերմինը ձևակերպված է հետևյալ կերպ. «Տուրք, որ ննջեցյալի տերերը տալիս էին մայրավանքին կամ քահանային իբրև ննջեցյալի հոգու բաժինը: Հոգեբաժինը տալիս էին դրամով, նյութեղենով և կալվածոնե-

⁴⁹ Հովսեփյան Գ., Խաղբակեանք, էջ 316:

⁵⁰ ԱՄՊ, էջ 167:

⁵¹ Հովսեփյան Գ., Խաղբակեանք, էջ 317:

⁵² ԱՄՊ:

րով»⁵³: Նկատենք, որ հիշյալ ձևակերպումը թերի է, քանի որ այդ կարգի նվիրատվությունները պարտադիր չէին միայն հանգուցյալների անունից տրվելու, դրանք կարող էին հատկացվել նաև ողջերի կողմից և հենց իրենց անունից: Կեչառիսի արձանագրություններում հանդիպում են շուրջ մեկ և կես տասնյակ այս կարգի նվիրատվություններ, որոնց, և թվականն է անհայտ, և նվիրաբերությունը:

Վիճագրերում կնոջ համեմատ երբեմն ամուսնուն հատկացվում էր կրկնակի, նաև եռակի արարողություն: Այսպես ՉԺԳ (1264) թ. Վարհամը և Թամթերը Ա. Գրիգորին տալով իրենց հոգու արդյունքը ստանում են 4 ժամ, 3-ը՝ Վարհամին, մեկը՝ Թամթերին⁵⁴: Մոնթի և Խաթուրի ստացած արարողություններն, ինչպես նշեցինք, համապատասխանաբար երկու և մեկն են: Անթվական մեկ ուրիշ արձանագրությամբ Աարգիսն ու Ջամալը ստացել են երեք պատարագ, երկուսը՝ ամուսինը, մեկը՝ կինը⁵⁵:

Կեչառիսի նվիրատվական արձանագրություններից մեկի հեղինակը Պապաք խաղբակյանն է՝ Պռոշ իշխանի (1223-1284) որդին: Նա գավթի ներսի հարավային պատի նվիրագրով Ա. Գրիգոր Լուսավորիչ Կաթողիկե եկեղեցիներին իր ազգական և ընկեր Գրիգորի հետ նվիրել է Կավանոց կոչված տեղի նորքն, այսինքն՝ նոր հիմնած այգին ու 200 արծաթ դրամ: Նվիրատուն ապահարկ է հայտարարել իր այգին, արգան և ձեռնավորի հարկերից⁵⁶:

Պապաքի այս արձանագրությունը նույնպես թվագիր չունի: Բայց հավանական է թվում, որ այն կատարվել է Պռոշի մահվանից հետո ենթադրվում է նաև, թե նա և իր եղբայր Ամիր Չասանն իրենց հորից՝ Պռոշ խաղբակյանից, ընդ որում առաջինն ավագության սկզբունքով: Այդ մասին մեզ են հասել մի շարք գրավոր տվյալներ: Պապաքն ու

⁵³ Հայերեն բացատրական բառարան, կազմեց Ս. Մալխասեանց, հ. III, Ե., 1944, էջ 120, 122:

⁵⁴ Յովսէփեան Գ., Խաղբակեանք, էջ 317:

⁵⁵ Անդ, էջ 315:

⁵⁶ Յովսէփեան Գ., Խաղբակեանք, էջ 308: Արգանը քրի դիմաց գանձվող հարկն էր: Չեռնավորահարկի մասին տես Բարխուդարյան Ս., Սոցիալ-տնտեսական արձանագրություններ և դիտողություններ, «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Ե., 1971, էջ 92-95:

Ամիր Չասանը շարունակել են զբաղեցնել իրենց սյուզերենների իշխանության զինված ուժերի հրամանատարությունը: Պապաքի կյանքի տևողությունը հասցվում է մինչև 1298/9 թվականը⁵⁷:

Պապաքը քաջ հայտնի է նաև իր ժավալած շինարարությամբ, հատկապես Գեղարդավանքում, ուր կառուցել է վիճափոր գավիթ:

1295/6 թ. նա Ամիր Չասանի որդու՝ էաչիի հետ ստորագրել է Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի դեմ ուղղված թղթի տակ՝ Օրբելյան իշխաններից հետո: Այս հանգամանքը հիմք է տվել եզրակացնելու, որ XIII դ. երկրորդ կեսին, խաղթակյանների քաղաքական իշխանության ազդեցությունն աստիճանաբար նվազում էր՝ ի հետևանս Օրբելյանների ազդեցության աճի⁵⁸:

Կեչառիսի վանքի նվիրագրերի մի մեծ խումբ մեր կողմից արժարժված հարցերի պատասխանը չի տալիս դրանց անկատարյալ լինելու պատճառով: Այդ նվիրագրերից մի քանիսը չունեն գրության թվականներ, մյուսներից բացակայում են նվիրաբերված արժեքների անունները, երրորդներից պարզ չէ նրանց բնակավայրը և այլն: Այս կարգի նվիրատուների ցանկում ենք մտցնում Աղվանքի Ատեփանոս կաթողիկոսին, Մարկոս քահանային, Գետիկի վանքից Աարգիս կրոնավորին, Գանձասարի Ատեփանոս փակակալին, Չարաբերդի Աարգիս եպիսկոպոսին, Աարգիս տանուտերին, Ղավիթ Ջուղայեցուն և տեր Բարսեղին:

Այսպիսով, Կեչառիսի վանքի նվիրատվական, շինարարական ու հիշատակարանային արձանագրությունների ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XI-XIII դդ.:

Նվիրաբերված արժեքները գյուղեր են, մշակելի հողատարածքներ, եկեղեցական գույք, գրքեր, դրամ և այլն:

Ի տարբերություն քաղաքային եկեղեցիների ձեռք բերած արժեքների, Կեչառիսի հոգևոր կառույցները չեն ստացել կրպակներ, արհեստանոցներ, հյուրանոցներ: Կեչառիսի վիճագրերում առկա են մի

⁵⁷ Աճդ. էջ 72-76:

⁵⁸ Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր), Ե., 1981, էջ 52-54:

շարք եզրույթներ, որոնք ցույց են տալիս մշակելի հողատարածքների տեսակները:

Կեչառիսին նվիրաբերված արժեքներն այլ հաստատություններին նվիրաբերված կայքերի մասն ունեցել են իրենց գները, որոնց համապատասխան նվիրատուների համար սահմանվել են արարողություններ:

Կեչառիսի հիմնական նվիրատուներնից էին երկրի ռազմավարչական ավագանու ներկայացուցիչները, խոշոր ավատատերերը, հոգևորականները և ուրիշներ:

*ԴՆԵԼ ԳՐԻԳՐՅԱՆ
ԴՕԱՐ ԽԱՇԱՏՐՅԱՆ
ՄԻՆ ՆԱՆ ՐԱ*

ДАРЫ И ДАРИТЕЛИ МОНАСТЫРЯ КЕЧАРИСА (XI-XIII вв.)

РЕЗЮМЕ

Статья посвящена исследованию проблемы пожертвований и дарений, сделанных в пользу одного из знаменитых духовных и культурных центров средневековой Армении — Кечарискому монастырю. На основе данных эпиграфических надписей XI-XIII вв., сохранившихся на стенах культовых зданий монастырского комплекса, выделяются и локализуются пожертвованные в пользу Кечарисского монастыря объекты движимого и недвижимого имущества. В их числе локализуются также села и поля в пределах городской черты Еревана и его округа. Исследуются вопросы, связанные с установленными церковью в пользу дарителей часами литургических богослужений, установленных церковью в пользу дарителей, а также сам сословный строй жертвователей монастыря. Подтверждается тезис о том, что в Кечарисе, в отличие от городских духовных центров, в пользу церкви не жертвовались такие объекты недвижимости, как постоялые дворы, мастерские и ларьки.

**ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԸ ԺԳ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ - ԺԴ ԴԱՐԻ ԱՈՒՋԻՆ
ՔԱՌՈՐԴԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՅՔԱՐԻ ՀՈՒՆՎՈՒՅԹՈՒՄ**

ԺԳ դարի վերջին քաղկեդոնականության ներթափանցումը Կիլիկյան Հայաստան, Մեծ Հայք և հայաբնակ շրջաններ գնալով ուժեղանում և ամրապնդում էր տարածադավանաբանական կազմակերպման սահմանները, ուստի նրա դեմ մղվող գաղափարական պայքարը անհրաժեշտություն էր դառնում: Այն շոշափում էր նիկեական և քաղկեդոնական համակարգերի միջև պատմականորեն ձևավորված առանձնահատկությունները:

Քրիստոնեական եկեղեցիների միջև առկա ծիսադավանաբանական և կառուցվածքային տարբերությունները, որոնք շոշափվում էին Կիլիկյան Հայաստանի, պապականության և Բյուզանդիայի դիվանագիտական հարաբերություններում շրջանառվում էին նաև գաղափարական պայքարի հոլովություն:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ հասարակության հոգևոր-քաղաքական միջավայրում ստեղծված ոչ ավանդական իրավիճակը խախտել էր էթնիկական ընդհանրության կազմակերպման սահմանները և հատկանիշները: Էթնիկական սահմանների տեղաշարժման պատճառով խախտվել էր հավասարակշռությունը մշակույթի «կենտրոնական գոտու» և նրա կառուցվածքի միջև: Կիլիկիայում հայկական պետականության առաջացումը պահանջում էր վերանայել ավանդական պատկերացումները էթնոսի քաղաքական և մշակութային միջավայրերի կազմակերպման վերաբերյալ: Էթնոսի կազմակերպման պայմանների փոխման դեպքում ավանդականությունը սովորաբար վերակողմնորոշվում և մշակում է միջավայրին հարմարվելու նոր մոդել: Հասարակության ներսում միշտ գոյություն ունի ավանդականության մի քանի տիպեր, որոնք անհրաժեշտ են, որպեսզի շրջադարձային պահերին կարողանա ճիշտ ընտրություն կատարել: Քննարկվող ժամանակաշրջանում ևս հայկական էթնիկական ընդհանրությունը քաղկացած էր ներէթնիկական մի շարք խմբերից, որոնք համախմբվում

էին ավանդականության այս կամ այն տիպի շուրջ: Վերափոխված պայմաններին համապատասխան էթնիկական ընդհանրությունը աշխատում է վերակառուցել իր կազմակերպման հատկանիշները, ուստի գաղափարական պայքարը միշտ անխուսափելի է:

Խնդրահարույց ժամանակաշրջանի գաղափարական շարժման մեջ բավական ակտիվ դեր խաղաց նաև Սյունյաց աթոռը:

ԺԳ դարի երկրորդ կեսին Օրբելյաններին հաջողվեց լեզու գտնել մոնղոլների հետ և իրենց իշխանության համար ապահովել արտոնյալ քաղաքական կարգավիճակ, քանզի ազատվեցին Ջաքարյանների ու Վրաց արքունիքի խնամակալությունից: Հավատարիմ ծառայության ու ճկուն դիվանագիտության շնորհիվ նրանք կարողացան բարձր դիրքի հասնել իլխանության վարչաքաղաքական համակարգում. «Եւ յայնմհետէ ունէր Տարսայիճն գաթաբէկութիւն աշխարհիս Հայոց, և բազում դիւրութիւն և ողորմութիւն առնէր նեղեալ ազգիս Հայոց»:¹ Արդեն Սմբատ Օրբելյան «արքայի» /1253-1273/ գործունեությունը նպատակաուղղված էր մոնղոլների հովանու ներքո հայկական պետականության վերականգնման ծրագրի կենսագործմանը: Այս գաղափարը դրվեց նաև նրա մերձավոր հաջորդների /Տարսայիճ/ /1273-1290/, Ելիկում /1290-1300/, Բուրթել Սեծ /1300-1348/ քաղաքական կողմնորոշման և գործունեության հիմքում: Օրբելյանները կարողացան կարճ ժամանակահատվածում կարգավորել իրենց իշխանության քաղաքական միջավայրը, մինչդեռ հոգևոր միջավայրի հետ կապված խնդիրների լուծումը բավականին բարդ էր: Խախտվել էր հայոց կաթողիկոսության և Սյունյաց թեմի կանոնադրվամբանական ու կառուցվածքային փոխհարաբերությունները: Օրբելյանները պետք է փորձեին իշխանության քաղաքական միջավայրում ձևավորել միակենտրոն եկեղեցական համակարգ և յուրացնել հոգևոր իշխանության որոշ հատկանիշներ: Այս խնդիրների լուծումը նրանց համար էական նշանակություն ուներ, քանի որ մրցակցում էին Ջաքարյանների հետ: Իշխանական տների մրցակցության շրջանակներում շոշափվում էր հայ հասարա-

¹ Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 426:

կության մշակութային-քաղաքական ինքնակազմակերպման հետ կապված խնդիրներ: Իրենց առջև դրված խնդիրները լուծելու համար Օրբեյանները նախ և առաջ ձեռնամուխ եղան իշխանության հոգևոր միջավայրի վերակառուցմանը:

Ժամանակին մեկ միասնություն կազմող աթոռը երկփեղկվել էր Տաթևի և Նորավանհի, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր յուրացնել Սյունյաց վիճակի առաջնությունը: Հավանաբար Նորավանհի հիմնարկումը կապված էր Օրբեյանների հետ. «Կասն ոչ սիրելոյ զհակառակութիւն և զօծտումն եկեղեցւոյ երջանիկն ի հայրապետս Տէր Սարգիս թողու զամենայն վիճակսն ի Տէր Յովհաննէս, և առնու զՎայոց ծոր գավառ, զԳահուկ և զՆախջաւան սեպհական ժառանգութիւն սրբոյ ուխտին իւրոյ Նորավանհից և զայլն թողու ի նա:

Եւ գնացեալ ինքն առ կաթողիկոսն Հայոց Տէր Կոստանդին, և առնու ի նմանէ վիճակ հաստատուն անխախտելի դաշամբ, և թուղթ շրջաբերական վասն այսց գաւառացս զի լիցի հաստատուն վիճակ ժառանգութեան սուրբ եկեղեցւոյն Նորավանհից. և անբաւ հրահոսան նզովիւք փակեալ ամրացուցանէ զի մի՛ ոք ի կաթողիկոսացն կամ յիշխանաց կամ յեպիսկոպոսաց իշխեսցէ հակառակել կամ խանգարել զայս սահմանադրեալ վճիռ...»:² Քանի որ Օրբեյանները աշխատում էին իրենց ձեռքը վերցնել նաև հոգևոր իշխանությունը, ապա պետք է լուծեին հետևյալ խնդիրները. ա/ բաժանված վիճակը միավորեին մեկ համակարգում, ուր երկու թեմը կկազմեին նրա ենթահամակարգերը, բ/ առաջնորդությունը սեփականացնեին իշխանական տան շրջանակներում, գ/ ճշգրտեին նորաստեղծ կենտրոնի կանոնադրվանաբանական և կառուցվածքային կազմակերպման աստիճանը հայոց եկեղեցու նվիրապետական կառույցում: Փաստորեն Օրբեյանների վերաբերմունքը հոգևոր միջավայրի նկատմամբ կրում էր նաև քաղաքական բնույթ:

Սյունյաց աթոռում ստեղծված իրավիճակը կարգավորելու համար որոշում են Ստեփանոս Օրբեյանին ուղարկել Կիլիկիա. «Եւ ժողովեալ մերոց եպիսկոպոսաց առ հայրն իմ՝ հրաւիրեցին զիս ընթանալ ի թագաւորական աշխարհն Կիլիկիա, առ երջանիկ կաթողիկոսն և աս-

² Նույն տեղում, էջ 354-355:

տուածապսակ թագաւորն հայոց առնուլ ձեռնադրութիւն մետրապօլ-տութեան ի վերայ աթոռոյս Սիւնեաց...»:³ Օրբեյւանները այս ճանապարհով փորձում էին լուծել մի շարք խնդիրներ. ա/ որոշակի փոխհարաբերություններ էին հաստատվել Նորավանհի և հայոց կաթողիկոսության միջև և անհրաժեշտ էր դրանց տալ կանոնադրվածաբանական հաստատուն հատկանիշներ, բ/ եկեղեցական նոր կենտրոնի ստեղծման իրավունքը դեռևս պատկանում էր հայոց կաթողիկոսությանը:⁴

Այսպես հայոց հոգևոր նվիրապետության կառույցում ստեղծվում է նոր կենտրոն. «...և ի վաղուեան աւուրն զմեզ իսկ ձեռնադրեցին և պսակեցին ընդ սուրբ և առաքելական եկեղեցւոյն Սիւնեաց. և պատուեցին մեծամեծ պարգևօք և կրկին թագիւ կարգեալ յաստիճան մետրապօլտութեան, և կոչիլ պառատաւֆրաւնդէս պատրիարքին հայոց, այսինքն նախաթոռ լինել և գլուխ ամենայն եպիսկոպոսաց հայոց»:⁵

Հոգևոր իշխանությունը սովորաբար իր կազմակերպման ձևը գտնում է քաղաքական միջավայրի սահմաններում: Բացառություն չի կազմում նաև Սյունյաց թեմը, որն աշխատում էր կազմակերպվել Օրբեյւանների քաղաքական միջավայրում: Օրբեյւանները փորձում էին օգտագործել նաև Սյունյաց թեմի շրջանակներում ձևավորված ավանդույթը: Բանն այն է, որ Օրբեյւան իշխանական տունը հայ հասարակական-քաղաքական կյանքում նոր իրողություն էր, և ավանդույթ դարձած անցյալ չուներ, ուստի պետք է փորձեին այն յուրացնել հոգևոր միջավայրում. «Իսկ ի թագաւորելն Արշակայ և ի նստուցանել յաթոռ հայրապետութեան՝ զմեծն Ներսէս՝ մինչ յուղարկեցին զնա ի ձեռնադրութիւն ի Կեսարիա առ Եւսեբի հայրապետն, յայնժամ յուղարկեցին ընդ նմա զԱնդոկ՝ իշխանն Սիւնեաց, գլուխ այլոց իշխանացն հայոց, և զԳրիգորիոս՝ եպիսկոպոս Աիւնեաց, գլուխ եպիսկոպոսացն հայոց»:⁶

Դավանաբանական պայքարում Սյունյաց թեմի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար նախ քննարկենք նրա յու-

³ Նույն տեղում, էջ 479:

⁴ Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գալստյանի, Ե., 1958, էջ 30:

⁵ Ստ. Օրբելեան, էջ 479-480:

⁶ Նույն տեղում, էջ 26:

րացրած իրավունքները: Պարզ է, որ թեմը պետք է փորձեր յուրացնել Սյունյաց հոգևոր միջավայրում ձևավորված ավանդույթը կամ ստեղծեր այն: Այս դեպքում անցյալը ներկայանում է առանձնահատուկ նշանակությամբ:

Գոյություն ունի նաև անցյալի ակտիվ փնտրտուք, երբ որդեգրած որոշակի պատկերացումներ ու գաղափարներ ներկայում չեն գտնում իրենց համապատասխանության ձևերը, ապա դրանց նախատիպերը որոնում են անցյալում: Այն հատկանիշները, որոնք աշխատում էր յուրացնել նորաստեղծ կենտրոնը կարելի է խմբավորել. ա/ առաքելական ծագում, բ/ դավանաբանական կազմակերպման տարածաբաղաձևական միջավայր, գ/ կառուցվածքային-կանոնական կազմակերպման ինքնամփոփություն:

Հոգևոր իշխանության կազմակերպման տեսակետից այս հատկանիշների ամբողջության կրողը ներկայանում է որպես «փոքր ավանդույթ» ունեցող կենտրոն: Պարզ է, որ այս դեպքում փոխվելու էր հայոց կաթողիկոսության /Մեծ ավանդույթ/ և Սյունյաց թեմի /Փոքր ավանդույթ/ փոխհարաբերությունները և կենտրոն-ծայրամաս ուղղահայաց աստիճանակարգության փոխարեն այն ձեռք կբերեր կարգավիճակային կազմակերպան ձև: Փոխհարաբերությունների կարգավիճակային տիպը որոշվում է ոչ այնքան կենտրոնի նկատմամբ ունեցած տարածական հեռավորությամբ, որքան միջավայրի հոգևոր-քաղաքական հատկանիշներով: Եթե հայ հասարակության շրջանակներում բացակայում էր կայուն հատկանիշներ ունեցող ամբողջական միակենտրոն աստիճանակարգություն, ապա Սյունիքը ներկայանում էր որպես առանձին քաղաքական միավոր, ուստի փորձում էին հոգևոր միջավայրը համապատասխանեցնել նրան:

Սյունյաց թեմի առաքելական ծագման ավանդույթը նպատակ ուներ ճշգրտել աթոռի իրավունքների ավանդականությունը և օրինականությունը: Մյուս կողմից այն պետք է լուծեր յուրացվող իրավունքների ժառանգականության խնդիրը, քանզի մշտափոփոխ ժամանակի մեջ միշտ չէ, որ թեմը բարձր դիրք էր զբաղեցրել: Այս պատճառով Ատ. Օրբելյանը փորձում է թեմի անցյալը դարձնել ներկա. «Իսկ Գրիգորի՝ Սինեաց մետրապոլիտի, աւելի պատիւ արարեալ սուրբն Ներսէս, վասն

երթալոյն ընդ մնա ի Կեսարիա, տայ մնա բազմական ոսկեթել. և կարգէ զՍիւնիք նախաթոռ պատրիարքին որ կոչի ի հռոմ լեզուն պռոտոֆրաւնտէս հայոց մեծաց...:

Եւ գործ է սոցա ծեռնադրել եպիսկոպոս գաւառաց. վասն որոյ երկոտասան եպիսկոպոսաց գլուխ կարգեցաւ. և առանց սոցա ոչ ծեռնադրի պատրիարք հայոց և ոչ լինի ժողով. այլ գլուխ և հրամանատար ժողովոյ սոքա լինին. և նախաթոռ վարդապետութիւն և հրաման մեկնութեան և թարգմանութեան սոցա միայն շնորհեցաւ ի մեջ հայոց ի սրբոյ Սահակայ և յերանեալ վարդապետէն Մեսրոբայ»:⁷ Անցյալից բերված կանոնական-դավանաբանական այս հատկանիշները պետք է դրվեին Սյունյաց թեմի և կաթողիկոսության փոխհարաբերությունների հիմքում: Նշանակում է Օրբեյանները պետք է ծեռնամուխ լինեին հոգևոր միջավայրի վերակառուցմանը, որն իր հետ բերելու էր տարածայնություններ և հակասություններ: Դրանք նախ և առաջ կապված էին վերոհիշյալ իրավունքների յուրացման և կենսագործման հետ: Մեջբերված հատվածից պարզ երևում է իրավունքների այն մասը, որն ուներ համահայկական բնույթ: Սրանց յուրացումը կամ այսպես ներկայացնելը պարտադիր էր այնքանով, որքանով Սյունյաց աթոռը մասնակցելու էր համահայկական նշանակություն ունեցող դավանաբանական խնդիրների քննարկմանը: Հատվածական իրավունքների ամրագրման նպատակը թեմի կանոնական ինքնամփոփության խնդրի լուծումն էր: Այն անհրաժեշտ էր այն դեպքում, երբ Սյունյաց թեմի և հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները կառուցվելու էին հակադրության սկզբունքով:

Այժմ փորձենք պարզաբանել Սյունյաց աթոռի տեղագրական կազմակերպման խնդիրը: Ատ. Օրբեյանը Սյունյաց նահանգի կազմում ներկայացնում է տասներկու գավառ, որոնք միաժամանակ եկեղեցու տեղագրական կազմակերպման միավորներ են: Սյունյաց աթոռի բաժանումը տասներկու թեմի արդեն դարձել էր ավանդույթ և անկախ ձևավորված իրավիճակից ներկայանում էր որպես անխախտ իրողություն. «...վարժն յիմաստս և վսեմն ի գիտունս տէր Յովհաննէս մակա-

⁷ Նույն տեղում, էջ 26-27:

նուն Աւրպէլ, մետրապաւլիտ և այցելու Սիւնեաց երկոտասան գաւազանաց...»:⁸

Նորավանհի վիճակի կազմավորման կապակցութեամբ վերն արդեն խոսք գնաց Վայոց ձոր, ճահուկ, Նախճավան թեմերի մասին: Հաշվի առնելով Օրբելյանների իշխանութեան վարչաքաղաքական միջավայրը և ավանդույթը, որ փորձում էին յուրացնել նրանք այլ անուններով հիշատակվող թեմերն են. Գեղարքունիք, Հարանդ, Ծղուկ, Բաղք, Արևիկ, Կովսական, Աղահեճք, Չորք, Երնջակ:

Բավական բարդ է խնդրահարույց ժամանակաշրջանում Սյունյաց աթոռի ձեռք բերած իրավունքների պարզաբանումը: Եթե հետևենք Սյունյաց Պատմիչին, ապա. «...և պատուեցին մեծամեծ պարզևօք և կրկին թագիւ կարգեալ յաստիճան մետրապօլտութեան, և կոչիլ պաւտաւֆրաւնդէս պատրիարքին հայոց, այսինքն նախաթոռ լինել և գլուխ ամենայն եպիսկոպոսաց հայոց»:⁹ Փաստորեն այստեղ խոսք է գնում միտրոպոլիտ նվիրապետական աստիճանի, նրա կանոնադրականաբանական կազմակերպման մասին. «... և հաստատուն պայմանաւ նորոգելով զպատիւ աթոռոյն զմետրապօլտութեանն...»:¹⁰ Չնայած այն հանգամանքին, որ հայոց եկեղեցական միջավայրում միտրոպոլիտ նվիրապետական աստիճանը լայն տարածում չէր գտել, սակայն նրա արժանիքները խորքագնա նպատակներ ուներ. ա/ սրանով ամբողջանում էր հոգևոր նվիրապետության ինն աստիճանի համակարգը, քանզի տիեզերական եկեղեցու ինքնամփոփ միավորներից յուրաքանչյուրը ուներ ինն աստիճան, բ/ նիկեական համակարգով առաջնորդվող Ատ. Օրբելյանը պետք է նրա շրջանակներում էլ ներկայացներ եկեղեցու կազմակերպական տեղագրական կառույցը, քանզի միտրոպոլիտ աստիճանի մասին առաջին անգամ հիշատակվում է Նիկեայի տիեզերական ժողովում /325/:

Սյունյաց թեմի պատմական իրավունքների վերականգնման համատեքստում էլ Ատ. Օրբելյանը փորձում է սահմանել աթոռի տեղը

⁸ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Ե., 1950, էջ 183:

⁹ Ատ. Օրբելեան, էջ 479-480:

¹⁰ Նույն տեղում, էջ 428:

հայոց եկեղեցու կանոնադավանաբանական և տեղագրական կազմակերպման կառույցում. «... Եւ ձեռնադրեալ կաթողիկոսին զնա յաթոռ մետրապօլտութեան Սիւնեաց. և վասն մեծի երախտեացն առաւել պատուէ զնա և կացուցանէ զլուխ եպիսկոպոսաց, և աթոռն Սիւնեաց՝ զլուխ ամենայն աթոռոց. ասեն ոմանք եթէ Սիւնեացն յեօթներորդ դասուն էր եպիսկոպոսաց հայոց. այժմ յերրորդ դասուն կարգեցին. բայց մի՛ հաւանիր զի Աղվանիցն միայն էր ի վեր քան զՍիւնեաց վասն արքեպիսկոպոսութեանն. իսկ Սիւնեացն վասն մետրապօլտութեան զեր ի վերոյ էր քան զամենայն եպիսկոպոսքն հայոց. զի այլ ոչ ոք ուներ զմետրապօլտութեան պատիւն. և որքան պատրիարքն քան զարքեպիսկոպոսն է զեր ի վերոյ. և արքեպիսկոպոսն՝ քան զմետրապօլիտն. այնքան մետրապօլիտն քան զեպիսկոպոսն զի նա ձեռնադրէ զեպիսկոպոսն»:¹¹ Նշենք, որ տարահարթ մշակութային և քաղաքական միջավայրերում հայտնված հայոց եկեղեցու շրջանակներում Ստ. Օրբելյանի ներկայացրած կառույցը համահայկական ճանաչում չէր կարող գտել, ուստի մնաց որպես ինքնավերագրվող իրողություն. «Եւ յառաջ՝ զայս ասեմք զոր ի դէպ է, որ մեր հայերուն արեւելցոց մեծերուն զիրքս գիտացուցել եմք, և կեցուցել. առաջինն Օրպելին, որ է Սիւնեաց արհիեպիսկոպոս, որպէս հոգևոր իշխան գլուխ, նոյնպէս և մարմնաւոր. և իւր ընկերացն ցուցաք զգիրքսն, և հաստատեցաք այս տարի. և յանցեալ տարին տէր Յոհաննէսի, առաքելոց եպիսկոպոսի. և ի միւս այլ ամին Բջնեցուն, և Վարագեցեաց...»:¹² Թվարկված արքեպիսկոպոսությունների միջև հարաբերությունները կառուցվում էին ոչ թե ուղղահայաց, այլ հորիզոնական սկզբունքով: Պատահական չէ, որ Ստ. Օրբելյանի հաջորդները տիտղոսը օգտագործում են ավելի կոնկրետ տեղագրական շրջանակների համար. «...արհիական եպիսկոպոսի Տեառն Յովանիսի Արեւելեան պռատաւնֆռանտէսի...»:¹³

¹¹ Ստ. Օրբելյան, էջ 137-138:

¹² Գալանոս Կղ., Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոռովմայ, հ. I, Հոռմ, 1650, էջ 441:

¹³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ս. Մաթևոսյան, Ե., 1984, էջ 859:

Քննարկվող ժամանակաշրջանում խնորվող գաղափարական պայքարին Սյունյաց աթոռի առաջին արձագանքը եղավ 1289 թ. և առնչվում էր Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսի /1286-1289/ գահընկեցության հետ: Հետում Բ թագավորը Կիլիկիա է հրավիրում Սյունիքի ներկայացուցիչներին, որպեսզի մասնակցեն նոր կաթողիկոսի ընտրությանը. «Եւ յետ այսց բանից հրաւիրեալ էին զմեզ մեծարանօք զնալ ի ժողովն նորոգ ընտրութեան հայրապետի. որում պատասխանեալ ասացաք. մեք ոչ ենք հասու կամ խորհրդակից եղծման զի և նորոգմանն հաղորդեսցուք. ո ոք որ ինքնահաճ կամօք եղծումն արար, նոյն և զնորոգ ընտրութիւնն հոգասցէ. և կամք Արարչին յայց լիցի իւրում եկեղեցւոյ: Դարծեալ ապա անդրէն նուիրակին և գտանէ նախ քան զպատասխանիսն հաստատեալ յաթոռ կաթողիկոսութեան զԱտեփաննոս ոմն անապատաւոր զոր Հռոմայեցի կոչէին...»:¹⁴

Հայոց կաթողիկոսությունը որպես համահայկական եկեղեցական կենտրոն աշխատում էր պահպանել իր իրավունքները, մինչդեռ «փոքր ավանդության» կրող Սյունյաց թեմը փորձում էր ձևավորել հարաբերականորեն անկախ կառույց և պահպանել արժեքային կողմնորոշման ավանդական մոդելը: Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ իշխանության և հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունների շրջանակներում ձևավորվել էր այնպիսի իրավիճակ, երբ արքունիքը լուծում էր հայոց կաթողիկոսի գահընկեցության և ընտրության խնդիրներ: Այս դեպքում հայոց կաթողիկոսությունը վերածվելու էր հատվածական կենտրոնի. «Այլ եւ ազգիս հայոց քահանայապետութիւն եւ թագաւորութեան զաւրիմնադրութիւն նախ պարտ էր յԱշտիշատ Տարաւնաւ հաստատել եւ ի Վաղարշապատ, յեկեղեաց գաւառ եւ ի Դարանաղեաց, որք անլի ունին քան զվեցհարիւր գաւազան կարգեալ, եւ ապա մասնաւորս Կիլիկիէ յանդամսն յաւդէր: Եւ թէ անփոյթ առնեն զարեւելից՝ ապա ում կոչին քահանայապետս կամ թագաւոր...»:¹⁵

Հրաժարվելով կաթողիկոսի գահընկեցությունը արդարացնող մեղադրանքները /30 կետ/ ընդունելուց Սյունյաց աթոռը չի մասնակ-

¹⁴ Ստ. Օրբելեան, էջ 440-441:

¹⁵ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմեց՝ Ն. եպս. Պողարեան, հ. III, Երուսաղեմ, 1968, էջ 612:

ցում նոր կաթողիկոսի ընտրությանը: Հակառակ դեպքում պետք է ընդունեին մեղադրանքները, «մարմնաւոր դատաստանը» և գահընկեցությունը:

Հռոմկլայի անկումից և Ատեփանոս Դ. կաթողիկոսի գերեզմարությունից /1292/ հետո պետք է լուծվեր հայոց կաթողիկոսության տեղի և նոր կաթողիկոսի ընտրության հարցը. «Եւ յայնժամ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն հայոց Հեթում բոլոր ուխտիւն եկեղեցւոյ և իշխանաւքն հանդերձ, շնորհել բերդ ամուր և երկիր առատ Սուրբ Աթոռոյ Լուսաւորիչին, առ ի հաստատել վերստին, և առաքնն գիմս նուաստութիւն և զսիրելի և զսննդակից եղբայրն իմ զպատուելի եպիսկոպոս զտէր Թուման յաշխարհս Արևելից, առ ի մեծարանս եպիսկոպոսաց և իշխանաց, զալ վերստին նորոգել զաթոռ Սուրբ Լուսաւորիչին: Եւ տեղ հրամայեալ ի թագաւորէն և ի սուրբ ժողովոյն, յառաջագոյն զալ ի դիրս Սուրբ առաքելոյն Թադէոսի, առ գերահռչակ և արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացուն, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս Թադէոսի առաքելո...»:¹⁶ «Յաշխարհս Արևելից» հասկացությունը իրավունք է տալիս եզրակացնել, որ հրավիրվածների շարքում պետք է լինեին նաև Սյունյաց թեմը, սակայն այս անգամ ևս նա չմասնակցեց կաթողիկոսի ընտրությանը: Նմանատիպ դիրքորոշումը արդեն ստանում էր գաղափարական պայքարի ձև:

Դավանաբանական շարժման մեջ ներքաշված կողմերի համար ելակետային էր որոշելու, թե հայ հասարակությունը ի վիճակի էր սեփական ժառանգությունը վերակառուցել և համապատասխանեցնել նոր պայմաններին: Պարզ է, որ հարցադրումը առաջին հերթին վերաբերում էր դավանաբանական միջավայրին, սակայն շոշափում էր վերափոխած պայմաններին հայկական էթնոսի հարմարվելու խնդիրը: Եթե հանրագումարի բերեմք կողմերի որդեգրած սկզբունքները, ապա կարելի է առանձնացնել երկու տիպ. ա/ պատմամշակութային և բ/ համընդհանրական: Առաջին տիպի կողմնակիցները խմբավորվում էին Սյունյաց թեմի շուրջ և փորձում էին անփոփոխ պահել էթնիկական ընդհանրության ավանդական մշակույթի հիմնական հատկանիշները:

¹⁶ Հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 691-692:

Կառուցվածքային տեսակետից պատմամշակութային միջավայրից առանձնացվում էր այն տարածքը, որտեղ ձևավորվել էին էթնոսի հիմնական հատկանիշները /«սրբազան տարածք»/, մշակութային պատկերացումները և արժեքային կողմնորոշումը: Երկրորդ տիպի կողմնակիցները աշխատում էին քրիստոնեության ընդհանրական հատկանիշների հիման վրա վերակառուցել պատմամշակութային միջավայրի որոշ հատկանիշներ:

Դավանաբանական պայքարում Սյունյաց թեմի դիրքորոշման հիմնական սկզբունքները տեղ գտան «յարեւելեան աշխարհի» հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչների ժողովի ընդունած որոշման մեջ և «Չեռնարկ միաբանութեան» թղթում: Նախ փորձենք պարզաբանել «յարեւելեան աշխարհի» հասկացության այն միջավայրը, որը ներքաշվել էր գաղափարական պայքարի հոլովություն: Հիմնախնդրի լուսաբանման համար անդրադառնանք «Չեռնարկ միաբանութեան» թուղթը ստորագրողների դասաշարին. «Չեռնարկ միաբանութեան եպիսկոպոսաց արեւելից եւ վարդապետաց եւ իշխանաց:

Մեք Տէր Սարգիս և Տէր Գրիգոր ի նոյն վիճակէ...:

Ես Տէր Յովհաննէս՝ աթոռակալ Բջնոյ...:

Ես Գրիգոր՝ աշակերտ և սպասաւոր բանի, որ մակադրեալ կոչեցայ Բջնեցի, հրամանատար այսմ աթոռոյ...:

Ես Տէր Յովհաննէս՝ շնորհօքն Աստուծոյ եպիսկոպոս Հայսրատայ, համախոհ և միաբան եմ իմով վիճակելովս...:

Ես Տէր Մխիթար՝ Հսուուց թառայ եպիսկոպոս...:

Ես Տէր Մարգարէ՝ եղբօրորդի Վանական վարդապետին...:

Ես նուաստ եպիսկոպոս Գողթան Տէր Սարկաւազ...:

Ես Եսայի՝ կըսեր բանասիրաց, և յետին վարժապետ, իմով աշակերտօքս...:

Ես Դավիթ՝ նուաստոգի քարոզ բանի և վարդապետ Հայաստանս եկեղեցւոյ...:

Մեք անպիտան ծառայքս Քրիստոսի Ելիկունս և Լիպարիտս՝ որդիք փառաւոր իշխանացն Տարսայիճին և Իվանէի, եղբարք մերովք և որդւովք և ամենայն ազատօք...:

Մեք մեղուցեալ ծառայքս Աստուծոյ Պապաքս և էաչի՝ որդիք քարեպաշտ իշխանին Պոռշայ, մերովք ազատօքս...»¹⁷:

Ստորագրողների ընտրությունը կատարվել է որոշակի սկզբունքով, քանզի ներառում է հասարակական-քաղաքական կյանքի տարբեր միջավայրեր: Նրանց կարելի է բաժանել երեք խմբի. ուսումնագիտական (վարդապետներ), եկեղեցական (եպիսկոպոսներ) և վարչաքաղաքական (իշխաններ): Վարդապետների և աշխարհականների մասնակցությունը դավանաբանական խնդիրների քննարկմանը վաղուց ընդունված էր, ուստի բացառություն չի կազմում նաև այս ժողովը:

Թուղթ-համախոսականի քաղաքական միջավայրը ներկայացնում են Օրբելյան և Խաղբակյան իշխանները և նրանց ստորակա ազատները: Նրանց զբաղեցրած քաղաքական միջավայրի սահմանները որոշելու համար բերենք երկու վկայություն.«...և յիշխանութեան տանս Աիսակայ մեծ պարոն էլիկումին, որդւոյ Տարսայիճի, և քաջ և զօրեղ իշխանացն որդւոցն Պոռշայ՝ Պապաքին...»¹⁸: «...եւ հարազատացն իմոց Արեւելայց կողմնակալաց՝ էաչոյ և Բոյրթէլին...»¹⁹ Այստեղից կարելի է եզրակացնել, որ «յարեւելեան աշխարհ» տեղագրական հասկացությունը իրեն կարող է գտնել ինչպես վարչական (Սյունիք), այնպես էլ քաղաքական (Արեւելյան Հայաստան կողմնակալություն) շրջանակներում:

Այժմ փորձենք պարզաբանել հոգևոր միջավայրի սահմանների խնդիրը:

ա) Աարգիս և Գրիգոր եպիսկոպոսները ներկայացնում են Սյունյաց թեմը. «...եւ կային հնազանդութեամբ ի ներքոյ նորա Տէր Գրիգորն, որ էր ազգական Տեառն Յովհաննիսի, և Տէր Սարգիս որ ի Նորավանս...»²⁰:

բ) Հովհաննես արքեպիսկոպոսը ստորագրել է Արարատյան թեմի անունից. «...սրբազան և աստուածապատուեալ արհիեպիսկոպոսն տէր Յովհաննէս, որ ունէր զվերատեսութիւն այցելական և դիտման քա-

¹⁷ Ստ. Օրբելյան, էջ 461-463:

¹⁸ Հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 831:

¹⁹ Նույն տեղում, էջ 859:

²⁰ Ստ. Օրբելեան, էջ 429:

հանայական դասու կատարողապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի...»²¹:

զ) Հաղպատի եպիսկոպոս Հովհաննեսի ստորագրութիւնից պարզ երևում է, որ իրավասու է եղել հանդես գալու թեմի անունից.«...յիշման բարոյ արժանաւորն և զմեծապատիւ արհիեպիսկոպոսն մեծահռչակ սուրբ ուխտին Հաղպատայ գտէր Յոհաննէս...»²²:

դ) Ինչ վերաբերում է Հավուց թառի եպիսկոպոս Մխիթարին, ապա նա եղել է թեմակալ, թե վանական ուխտի առաջնորդ, հայտնի չէ: Մի բան պարզ է, որ տարածքը չէր մտնում Խաղբակյանների տիրապետութեան մեջ: 1297թ. Հավուց թառ վանքում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում արձանագրված է.«...և ի մերոյս նահանկի տէրութեան Խոշաքին և Ջաքարիայի՝ որդոյ նորին, և ի տէրութեան մերոյս սուրբ ուխտիս Հայոց Թառայ պարոն Բեսութային և Խոյանծային...»²³:

ե) Առայժմ չհաջողվեց պարզել Վանական վարդապետի եղբորորդի Մարգարեի հետ առնչվող որևէ հարց, իսկ «Տէր» բանաձևը և ստորագրութեան տեղը իրավունք են տալիս եզրակացնելու, որ ուներ եպիսկոպոսի աստիճան:

զ) Ինչ վերաբերում է Գողթնի եպիսկոպոսին, ապա խնդիրը պարզաբանելու համար հիշենք Այունյաց տասներկու գավառների թվարկման կարգը. «Մետասաներորդ՝ Երնջակ գաւառ և Գողթն»²⁴: Կարծում ենք, որ քննարկվող ժամանակաշրջանում Գողթն Այունյաց աթոռի թեմ չէր կազմում, հակառակ դեպքում Տեր Սարկավազը չպետք է ստորագրեր կամ ստորագրեր «...ի նոյն վիճակէ» ձևով:

Անկախ կաթողիկոսութեան հետ ունեցած փոխհարաբերութիւններից Այունյաց թեմը ընդունում էր նրա համահայկական բնույթը. «Յետ որոյ ծնրահանգոյց գազաթամբ ողջունէ զգլուխդ իւր պանծալի, զսխրալիդ բնաւից, զքջնաղդ և զնորոգ գերահրաշացեալդ ի Հոգւոյն զԳրիգորիոս՝ հայր հանուրց սեռից Հայկայ, և կաթողիկոս տիեզերական ի դրանէ Հոնաց և Լիմաց, ի ծովէ Կասպից և ի լեռնէ Կովկասեաց

²¹ Հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 5:

²² Հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 754:

²³ Նոյն տեղում, էջ 796:

²⁴ Ստ. Օրբէլեան, էջ 12:

մինչ ի սահմանս եգիպտական և ի ծովն արևմտային, ուր զգիշերն ազանի ակն տունջենային»²⁵: Պետք է նշել, ու այս սահմաններում հայոց կաթողիկոսության կազմակերպումը ավելի շատ խորհրդանշական, քան կառուցվածքային բնույթ ուներ: Բանն այն է, որ Օրբելյանի ներկայացրած տարածաշրջանը հաստատուն հատկանիշներով օժտված սահմաններ չունեցող միջավայր է: Միակ հատկանիշը, որ իրավունք է տվել առանձնացնել այս տարածքը հայկական էթնոսի առկայությունն է, որը կաթողիկոսության կազմակերպման անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ, քանզի բացակայում էր դավանաբանական նույնականությունը և կառուցվածքային աստիճանականությունը. «Ձի սովորութիւն է չար ախտին այն՝ որ որպէս զքաղցկեղ յորժամ ի մի անդամն երկի՝ փութայ և գրլոր անդամս ճարակէ: Ահա՛ տեսք զի գեղեցիկ և փառաւոր անդամքն մեր այն են, որ ախտացան սովին ախտիւս. և գլորեցան զանկանգնելի անկումն. և զրկեցան ի մեծ շնորհաց որդոյն աստուծոյ: Կիւլիկիա բոլոր՝ որ տեղի էր մեր պարծանաց, յայս իսկ վարակեալ կայ. և գլխաւոր քաղաքք որ ի Դոռոմք ի սոյն մոլորեալ են. և եհաս մինչև առ մեզ: Ձի քարոզի այս յայտնապէս ի թագաւորական քաղաքն ի Տփխիս. և ի հին տունն Բագրատունեացն յԱնի՝ որ ի Շիրակ: Նաև ի Թավրեժ շահաստան և յայլ բազում տեղիս...»²⁶: Երկակի դավանաբանական (հայկական, քաղքեղոնական) հատկանիշներ ունեցող միջավայրում հայոց եկեղեցու կազմակերպման մյուս առանձնահատկությունը կառուցվածքային հոգնակիությունն էր. «...և ի գլխոյ այլ ատեւութիւն է պատճառ բաժանման և ոչ մեք կամ գործք մեր ապա թէ ոչ ընդէ՛ր ազգս հայոց երիս մասունս բաժանեալ է. Ո՞ բաժանեաց զԱխթամարի Աղուանից և կամ զԱուրբ Լուսաւորչէն աթոռոյ զնոսա և զայն ոչ կարէք ասել, թե վասն կրօնից բաժանեցան, որպէս և յայժմ կարկատեն. զի մի հաւատ և օրէնք ունէին...»:²⁷ Այս պայմաններում Սյունյաց թեմը աշխատում էր մշակել կաթողիկոսության հետ փոխհարաբերությունները կարգավորող որոշակի հատկանիշներ, որոնցից

²⁵ Նույն տեղում, էջ 450-451:

²⁶ Տեառն Ստեփաննոսի Միւնեաց նախագահ արհիեպիսկոպոսի Դակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կոստանդնուպոլիս, 1756, էջ 42-43:

²⁷ Սաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 3522, էջ 172բ:

առաջինը ավանդականությունն է. «Արդ՝ այդ ամենայն հարք և սինհո-
դոսք մեծաւ քննութեամբ մաքրեցին զեկեղեցին Հայոց յամենայն զա-
նազան որոմանց. և զսահման հաւատոյ և զկարգ եկեղեցւոյ անխախ-
տելի կտակաւ թողին մեզ: Վասն որոյ պարտ է ամենայն հպատակութե-
ամբ պինդ ունել զայս սահման առանց յաւելման և պակասու-
թեան...»²⁸:

Ավանդականությունը փոխանցվում է որոշակի պատկերացում-
ների ճանապարհով, քանզի ժառանգություն են մնում ոչ թե գործողու-
թյունները, այլ դրանց գաղափարները և սկզբունքները: Այս դեպքում
կարևոր է, թե ինչպես է ընդունվում և վերափոխվում այդ ժառանգու-
թյունը: Փաստորեն անցկացվում է այն միտքը, որ Սյունյաց թեմը պատ-
մամշակութային միջավայրի ավանդականության կրողն է, ուստի դա-
վանաբանական խնդիրների քննարկման ժամանակ նրա մասնակցու-
թյունը և համաձայնությունը պարտադիր են. «Գիտութիւն լիցի աստուա-
ծային գլխոյ հայրապետութեանդ. զի թէպէտ հնազանդ եմք ամենայնիւ
Տեառնդ մերոյ՝ սակայն աղաչեմք զսնտոսի կարծիս կըսեր և տգետ
մտացս մերոց բառնալ և բժշկել զի զտկարն յամենայնի շահիլ պարտ է:
Եւ զոր խնդրեմքս, հեննետիկոն թղթովք ձեռագրեալ, առնել ձեռնարկ
հաստատուն և անխախտ կտակ միաբանութեամբ սուրբ և երջանիկ
եպիսկոպոսացդ. և յուղարկել առ մեզ իբր գլխակար անջինջ. զի յայն-
ժամ առաւել հաստատութեամբ և հլու հպատակութեամբ հնազանդ լի-
ցուք աստուածային գլխոյդ. և թագաւորեսցես յեկեղեցիս մեր ջահաւո-
րեալ որպէս արեզակն...»²⁹: Սա ոչ միայն սպառնալիք է կամ պատաս-
խան, որը ծնվել է հայոց կաթողիկոսության գործողությունների արդ-
յունքում, այլ որոշակի դիրքորոշում, որն իր մեջ թաքցնում էր գաղա-
փարական պայքարի մարտահրավեր: Դավանաբանական միջավայրի
վերակառուցման կողմնակիցները դեռևս հրապարակ չէին հանել կոնկ-
րետ ծրագիր, ուստի խմբավորում էին ծիսադավանաբանական այս
կամ այն կետի ընդունման շուրջ: Հենվելով Օրբելյան նախարարական
տան ու նրա շուրջ համախմբված ուժերի օժանդակության վրա, Սյուն-

²⁸ Ստ. Օրբելեան, էջ 456:

²⁹ Լույս տեղում, էջ 459-460:

յաց թեմը ընտրում է գաղափարական պայքարի ուղին: Այս դեպքում նա փորձում էր հայ հասարակության համար անհրաժեշտ ինքնավարականուցման գործընթացը տեղակայել ավանդականության շրջանակներում.

«Կանգնե՛ գաթոռ թագաւորին
Եւ զգաւազան պատրիարքին,
Ամենեցունց ըստ իւր կարգին,
Ուղղե՛ զգահոյս տիրականին.
Նոր զարդարե՛ փառօքն հին
Եւս առաւել քան զոր էին.
Տայ մեզ գոչել ձայնիւ ուժգին.
Վերջինս է մեծ քան զառաջին...»³⁰:

Քանի որ ձևավորված իրավիճակը չի տեղավորվում ավանդականության շրջանակներում, ապա Ատ. Օրբելյանը փորձում է վերադարձնել անցյալը³¹:

Դավանաբանական պայքարի երկրորդ փուլը կարևորվում է նրանով, որ Կիլիկյան Հայաստանում հրապարակ է հանվում հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիներին միավորելու ծրագիր: Սյունյաց աթոռը չմասնակցեց եկեղեցիների միավորման ծրագրի մշակմանը³²:

Գաղափարական պայքարում Սյունյաց թեմի կարևորագույն խնդիրներից մեկը կաթոլիկ քարոզիչների և նրանց հայ գործընկերների ծավալած միարարական շարժման նկատմամբ որոշակի քաղաքականություն մշակելն էր:

Կաթոլիկության ներթափանցումը հայ հասարակության մշակութային միջավայր նոր երևույթ էր և հանդես էր գալիս երկու ձևով: Սկզբում փորձում էին վերակառուցել հայ հասարակության դավանաբանական միջավայրը: Սակայն այս խնդրի լուծումը պետք է դուրս գար դավանաբանության սահմաններից, քանզի միայն նրա միջոցով

³⁰ Ատ. Օրբելյանի Ողբ ի Ա. Կաթողիկէն, բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով հրատարակեց Կ.Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 48:

³¹ Նույն տեղում, էջ 30:

³² Մատենադարան, ձեռ. 8075, էջ 251ա-251բ:

անհնարին էր վերականուցել ամբողջ մշակութային միջավայրը: Պատահական չէ, որ կաթոլիկ քարոզիչների գործունեությունը ընդգրկել էր հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի ամբողջ բանգավառը: Միարարական շարժումը նպատակ ուներ հայոց եկեղեցին միավորել կաթոլիկ եկեղեցու հետ: Եթե կաթոլիկ քարոզիչներին հաջողվել էր անհատական քարոզչության ճանապարհով սկզբնավորել միարարական շարժումը, ապա հայ իրականության մեջ պետք է առաջանար նաև հակոտնյա՝ հակամիարարական շարժումը: Միարարական շարժումը ձգտում էր կաթոլիկությանը ծանոթացնել նախ անհատների, ապա առանձին խմբերի, որպեսզի կարողանա նրանց կտրել իրենց մշակութային միջավայրից. «Եւ զի որպէս ի մեզ՝ գլուխն մեծ է և իշխան ի վերայ բոլոր անդամոց մարմնոյն և պատճառ կենդանութեան, այսպէս և հաւատն գլուխ է և թագաւոր ի վերայ բոլոր բարեացն հոգևորաց և պատճառ կենդանութեան հոգւոյ: Վասն որոյ նախաչարն՝ զէն առեալ զաշակերտեալսն ինքեան, նախ ընդ գլխոյս մեր մարտնչի. զի զայս ի բացհատեալ՝ զմեռեալ ամդամսն՝ դիւրաւ քարշեսցէ ի կորուստն յաւիտենից»³³: Այս դեպքում առաջնահերթ էր դառնում հակամիարարական շարժմանը կառուցվածքային ձև տալը: Սյունյաց աթոռը հաջողությամբ լուծեց այս խնդիրը: Հակամիարարական շարժման կենտրոն դարձավ Գլաձորի համալսարանը, որտեղ հավաքվել էին ժամանակի նշանավոր շատ գործիչներ:

Ի մի բերելով վերը շարադրվածը, կարող ենք եզրակացնել. իշխանության վարչաքաղաքական համակարգի շրջանակներում Օրբելյաններին հաջողվեց ստեղծել ինքնավար իշխանություն: Նրանք կարողացան վերականգնել նաև Սյունյաց թեմի բարձր դիրքը: Յուրացնելով թեմի առաջնորդի պաշտոնը Օրբելյանները աշխատում էին համատեղել իշխանության եկեղեցաքաղաքական հետաքրքրությունները: Սյունյաց թեմը ակտիվորեն ներքաշվեց գաղափարական պայքարի մեջ և որոշ ժամանակ ղեկավարում էր հակամիարարական շարժումը:

³³ Հակաճառութիւն..., էջ 6:

**СЮНИКСКИЙ ПРЕСТОЛ В РАМКАХ РЕЛИГИОЗНОЙ БОРЬБЫ
в конце XIII - первой половине XIV вв.**

РЕЗЮМЕ

В статье исследуется о том, как в сфере административно-политической системы власти Орбеянам удалось создать автономную власть, которые также сумели восстановить высокую позицию Сюникской епархии. Освоив пост предводителя епархии, Орбеяны старались совмещать церковно-политические интересы власти. Сюникская епархия активно втянулась в идеологическую борьбу и некоторое время руководила противоединительное движение.

ԱՅԱՍԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆՂՐԻՒԱՅԻ ԱՈՒԿՏՐԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
(XIII դ. երկրորդ և XIV դ. առաջին կես)

Կիլիկյան Հայաստանի կազմավորման սկզբնական շրջանում, քաղաքական անկայուն վիճակը, Բյուզանդիայի, սելջուկների և խաչակիրների միջև անընդհատ ընթացող սուր պայքարը խոչընդոտ էր հանդիսանում տնտեսության և առևտրի զարգացմանը: Նրանցից յուրաքանչյուրը փորձում էր ռազմական ճանապարհով իրականացնել խոշոր տնտեսական ծրագրեր: Մինչև մոնղոլական արշավանքները՝ Հնդկաստանից, Հինաստանից ձգվող առևտրական քարավանային ճանապարհների գլխավոր հանգուցակետը Բաղդադն էր, որտեղից բազմաթիվ ուղղություններով դրանք տարածվում էին դեպի միջերկրածովյան և սևծովյան նավահանգիստները: Ելքը Միջերկրական ծով հիմնականում ապահովում էին, դեռևս խաչակիրների ձեռքում գտնվող, Աքքա, Տրիպոլի, Տյուրոս, Սիդոն Բեյրութ և այլ նավահանգիստները: Եթե մոնղոլական արշավանքները ծանր հարված հասցրեցին բուն Հայաստանի տնտեսությանը, ապա դրանք վճռորոշ գործոն հանդիսացան Կիլիկյան Հայաստանի հզորացման համար: Մոնղոլներն ամբողջովին փոխեցին ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: 1343 թ. Չմանկատրուկի (Քյոսե-Ղաղ) ճակատամարտում սելջուկները ծանր պարտություն են կրում մոնղոլական զորքերից, որոնց օժանդակում էին հայ-վրացական միացյալ ուժերը: Այս ճակատամարտն էլ որոշում է Կիլիկյան Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցը: 1243 թ. Կեսարիայում կնքվում է հայ-մոնղոլական համաձայնագիր, որով Կիլիկյան Հայաստանը ճանաչում է մոնղոլների գերակայությունը:¹ 1246 թ. Սմբատ Սպարապետի, իսկ 1254 թ. դեպի Ղարաղորում Հեթում Ա-ի գլխավորած դեպի Ղարաղորում պատվիրակությունների ուղևորությունների արդյունքում, հաջողվում է հասնել փոխադարձ պայմանավորվածությունների: Սասնավորապես Կիլիկյան Հայաստանը պետք է

¹ Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, «ՊԲՀ», 1964, թիվ 1, էջ 91:

օժանդակություն ստանար սուլթանությունների դեմ պայքարում, իսկ Չայոց եկեղեցին ազատվում էր հարկահանությունից:² Վերադառնալով, Չեթումը փորձում է Սիրիայի խաչակիր առաջնորդներին ներշնչել քրիստոնեա-մոնղոլական դաշինքի գաղափարը:³ Կիլիկիան ձեռք է բերում ռազմա-ստրատեգիական և տնտեսական կարևոր նշանակություն: Այն դառնում է, Մոնղոլական կայսրության ամբողջ տարածքով դեպի Սիջերկրական ծով ձգվող, առևտրական ճանապարհների վերջնական հանգրվան, որը պետք է եվրոպան Ասիայի հետ կապող մի նոր կամուրջ հանդիսանար: Մոնղոլական հսկայածավալ կայսրությունը բաժանվում է Չինգիզ խանի թոռների միջև, որոնցից Չուլավուն, հաստատվելով Իրանում, սկսում է նվաճողական արշավանքներ իրականացնել դեպի Փոքր Ասիա, Սիջազետք և Սիրիա: Նվաճումներին զուգահեռ՝ մոնղոլներն ունեին նաև տնտեսական խոշոր ծրագրեր: Պահպանելով Չայկական Կիլիկիան և Տրապիզոնի կայսրությունը՝ նրանք իրենց ապահովեցին ելքով դեպի Սև և Սիջերկրական ծովեր:

Սիաժամանակ, տապալելով Այուբյաններին, Եգիպտոսում իշխանության են գալիս մամլուք Բահրերը: Անմիջապես սուլթանության նվաճումները ուղղվում են դեպի սիրիական նավահանգիստները, որոնք Բաղդադի գրավումից հետո, սկսել էին կորցնել իրենց երբեմնի նշանակությունը: Եվ, եթե նախկինում Արևմուտքի և Արևելքի շահերի բախման գլխավոր թատերաբեմը Սիրիայի միջերկրածովյան ափն էր, ապա այժմ այն աստիճանաբար տեղափոխվում է դեպի հյուսիս, որտեղ Կիլիկյան Չայաստանը անխուսափելիորեն դառնում է նոր ձևավորվող քրիստոնեա-մոնղոլական համագործակցության կարևորագույն հենարանը: Դեռևս Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX Սուրբի գլխավորած VII ձախողված խաչակրաց արշավանքից հետո (1248-1254 թթ.), եվրոպացիների ազդեցությունը Սերձավոր Արևելքում չափազանց թուլացել էր: Եվ հենց Լյուդովիկոսի նախածեռնությամբ էլ Դարաղորում է ուղարկվում մի պատվիրակություն, ֆլամանդացի ուղեգրող Վիլիելմ Ռուբրուքի գլխավորությամբ: Դրան հետևեցին ևս մի քա-

² Langlois V., Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniens. Venise, 1863, p. 214-215.

³ Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., խաչակիրները և հայերը, Ե., 2005, էջ 405:

նի պատվիրակություններ, որոնց գլխավոր նախաձեռնողը Հռոմի պապն էր: Այդ մերձեցման նպատակն էր դաշինք կնքել մոնղոլների հետ և ընդհանուր օղակի մեջ վերցնել մահմեդական աշխարհը: Իհարկե, ռազմա-քաղաքական այս գործընթացներն իրենց մեջ ներառում էին նաև տնտեսական խոշոր ծրագրեր:

Բաղդադի (1258 թ.) գրավումով նոր փուլ սկսվեց միջազգային առևտրական հարաբերություններում: Թավրիզը Բաղդադից վերցրեց առևտրական ճանապարհների հանգուցակետի մենաշնորհը: Որպեսզի իրենց ձեռքում կենտրոնացնեն տարածաշրջանի ողջ տնտեսական համակարգը, Հուլավուները փորձեցին նվաճել սիրիական նավահանգիստները, սակայն 1260 թ. մոնղոլական բանակը, հայ-վրացական ուժերի հետ միասին, ծանր պարտություն է կրում մամլուքներից:⁴ Սա էլ ավելի բարձրացրեց Կիլիկյան Հայաստանի դերը Մոնղոլական կայսրության համար, որն ի դեմս Այասի՝ ձեռք բերեց Միջերկրական ծով դուրս գալու ամենահարմար ընտրությունը: Ռազմա-քաղաքական այս սուր պայքարն արտահայտվեց նաև առևտրական հարաբերություններում՝ մասնավորապես Այասի և Ալեքսանդրիայի մրցակցությամբ:

Իր ֆիզիկա և տնտեսա-աշխարհագրական բացառիկ պայմաններով, Այասը Կիլիկյան Հայաստանի ամենագլխավոր նավահանգիստն էր: Այն հանդիսանում էր ոչ միայն արևմուտքը և արևելքը, այլ նաև հյուսիսն ու հարավը միմյանց հետ կապող ճանապարհների խաչմերուկ: Չափազանց մեծ նշանակություն ձեռք բերեց Այաս-Թավրիզ քարավանային մայրուղին, որի միջոցով ապրանքներ էին ներմուծվում Հնդկաստանից, Միջին Ասիայից, Չինաստանից և այլ հեռավոր վայրերից:⁵ Այն տնտեսական կապ էր պաշտպանում Մեծ Հայքի խոշոր քաղաքների հետ: Կեսարիայով և Աբաստիայով, Այասը կապված էր Տրապիզոնի, Սինոպի, Կոստանդնուպոլսի, ինչպես նաև Դրիմի քաղաքների հետ: Եվ, քանի որ սևծովյան նավահանգիստներում սահմանված մաքսատուրքերը ավելի բարձր էին, շատ հաճախ Այասը ձեռք էր բերում

⁴ Մուրաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 427:

⁵ Михайлян Г., История Киликийского Армянского государства, Ереван, 1952, с. 350.

այլընտրանքային միջնորդի դեր, սև և միջերկրածովյան առևտրական հարաբերություններում: Կիլիկիան, Դերբենդի լեռնանցքով, կապված էր Ոսկե Յորդայի տիրապետության տակ գտնվող հսկա տարածքների հետ: Չնայած ռազմա-քաղաքական լարված հարաբերություններին, բավականին շատ փաստեր վկայում են այն մասին, որ Եգիպտոսի սուլթանության արաբ վաճառականները Այասուն վաճառում էին զանազան ապրանքներ, իսկ այնտեղից գնում մոնղոլահպատակ հյուսիսային տարածքներից բերվող թանկարժեք մորթեղեն:⁶ Առևտրական ճանապարհների այսպիսի խիտ ցանցն ապահովում էր Այասուն վաճառվող ապրանքների մեծ տեսականի՝ հացահատիկ, կտորեղեն, թանկարժեք քարեր, մետաքս, համեմունքներ, որդան կարմիր, մետաղ, բամբակ, ցփսի, օճառ, շաքար և այլն:⁷ Մեծ ծավալների էր հասնում տեղական գյուղատնտեսական ապրանքների, արհեստավորական արտադրանքների, ինչպես նաև Կիլիկիայում արդյունահանվող օգտակար հանածոների՝ երկաթի, ոսկու, արծաթի, պղնձի, աղի արտահանումը:⁸ Բացի ներմուծումից, խոշոր ծավալներ ուներ նաև տեղական՝ ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ տեղացի արհեստավորների արտադրանքների արտահանումը:

Իր հերթին, Ալեքսանդրիան Եգիպտոսի սուլթանության գլխավոր նավահանգիստն էր, իսկ միջազգային առևտրում նրա դերը բարձրացնելը կարևորագույն խնդիր էր մամլուքների արտաքին քաղաքական հարաբերություններում: Պետք է նշել, որ Յնդկաստանի հետ առևտրի զգալի մասը եվրոպական երկրները, հատկապես Վենետիկը, կատարում էին Ալեքսանդրիայով: Յնդկաստանից դեպի Ալեքսանդրիա ծովող առևտրական ուղու մեծագույն մասը ծովային էր: Նավերը Յնդկաստանից հասնում էին Արաբական թերակղզու հարավարևմտյան ափին գտնվող Ադեն քաղաքը, ապա Բաբ-էլ-Մանդեբ նեղուցով անցնում Կարմիր ծով, որտեղից Ալեքսանդրիա հասնելու համար մնում էր կարճ ցամաքային ճանապարհ:⁹ Այս ուղու գլխավոր առա-

⁶ Նույն տեղում, էջ 394-395.

⁷ Նույն տեղում, էջ 374, տես նաև Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 370:

⁸ Տես Ալիշան Ղ., Սիսուան, էջ 9:

⁹ Նույն տեղում, էջ 370-371.

վելությունը՝ համեմատաբար ավելի անվտանգ լինելն էր, քանի որ անընդհատ ընթացող պատերազմները և դրանց զուգահեռ սաստկացող ավազակային հարձակումները մեծ վնաս էին հասցնում Այաս-Թավրիզ ճանապարհից օգտվող վաճառականներին: Դրական էր այն հանգամանքը, որ եվրոպական երկրները կարող էին առանց միջնորդների գործ ունենալ սուլթանության հետ: Կարևոր նշանակություն ուներ նաև Նեղոսով կատարվող առևտուրը, որի միջոցով Աֆրիկայի խորքերից շատ հազվագյուտ ապրանքներ էին բերվում Ալեքսանդրիա: Նրան էր պատկանում համեմունքների առևտրի մենաշնորհը, որը մեծ եկամուտներ էր բերում միջնադարում: Սակայն, բացի կարմիրժովյան առևտրական գլխավոր ուղուց, Ալեքսանդրիան գրեթե չուներ այլընտրանքային ճանապարհներ:

Օտարերկրյա վաճառականների համար Այասն ավելի նախընտրելի դարձնելու համար անհրաժեշտ էր իրականացնել ճկուն տնտեսական քաղաքականություն և ստեղծել գրավիչ պայմաններ: Առաջին գլխավոր քայլը՝ ցածր մաքսատուրքերի սահմանումն էր: Հատուկ հրովարտակներով շնորհվեցին բազմաթիվ շահավետ արտոնություններ, ինչի արդյունքում Այասում սկսեցին հաստատվել մեծաքանակ եվրոպական համայնքներ:¹⁰ Ալեքսանդրիայում եվրոպացի վաճառականները գտնվում էին շատ ավելի անապահով վիճակում, որտեղ շատ հաճախ տեղի էին ունենում զինված ընդհարումներ մահմեդականների հետ:¹¹

Ահա ինչպես է գրում Ղ. Ալիշանը. «թեպետ և ոչ ծանր էր բաժն, ըստ ազգի նիւթոցն՝ երկու կամ չորս առ հարիւր, ի մուտս և յելս վաճառելեաց, նա և ազգաց հաճախելոց յերթևեկն՝ (որպես Վենետաց, Գենուացուց, Փլորենտեայց), գրեաթէ ազատ և ծրի շնորհեալ լինէին մուտք և ելք, ըստ դաշնագրութեանց. յայսր ամենայնի վերայ՝ ոչ նուազէր եկամուտ շահն արքունի. քանզի և յօժարութեամբ դիմէին այսր քրիստոնեայ վաճառականք, խոտորելով յեգիպտոսէ, և առ ատե-

¹⁰ Langlois V., *Le Tresor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniens.*

¹¹ Ashtor E., *“Levant Trade in the Later Middle Ages”*, Princeton, N.J., 1983, pp. 52-53.

լութեան սուլտանացն ընդ քրիստոնէից, և առ ծանրութեան բաժիցն կարգելոց ի նոցանէ. յոր սակս գուն գործէին թագաւորք մեր՝ զիջանելով առ համակրօնսն՝ նուազեցուցանել զվաստակ այլադնն նախանծորդին»:¹²

Այսպիսով, Վենետիկի, Ջենովայի, Ֆլորենցիայի ապա նաև Սիցիլիայի վաճառականները, որոշ ժամանակ, գրեթե մաքսատուրք չէին վճարում Այասում և ընդհանրապես Կիլիկիայի տարածքով առևտուր կատարելու համար: Պիզայի, Մալթայի, Կատալոնիայի, Պրովանսի վաճառականները ներմուծման և արտահանման համար վճարում էին 2 % ապրանքների գնից, իսկ մյուս բոլոր երկրների վաճառականները՝ 4%:¹³ Այն դեպքում, երբ Ալեքսանդրիայում եգիպտոսի Սուլթանութեան սահմանած սկզբնական մաքսատուրքը Վենետիկի և Ջենովայի վաճառականների համար կազմում էր 4,5%, որը միայն հետագայում իջեցվեց մինչև 2%-ի:¹⁴ Առանձին ապրանքների համար գանձվում էր նույնիսկ 10-20% մաքսատուրք, որոնք ամենաբարձրն էին սև և միջերկրածովյան տնտեսական համակարգերում:¹⁵ Եթե, մինչև սիրիական ծովափի գրավումը, Ալեքսանդրիայի գլխավոր մրցակիցներն էին այնպիսի հզոր նավահանգիստներ, ինչպես Աքքան, Տրիպոլիս, Տյուրոսը, Սիդոնը և Բեյրութը, ապա այժմ նրա գլխավոր ախոյանի դերը, արևելյան միջերկրածովյան առևտրում, ստանձնում է միայն Այասը: Կիլիկյան Չայաստանում հատված դրամների բարձր արժեքը նույնպես խոսում է տնտեսական կայուն և հզոր ներուժի մասին: Չայկական դրամները ավելի բարձր արժեք ունեին, քան եգիպտականները:¹⁶ Այասում իրականացվող առևտրի հսկա ծավալները ցույց տալու համար, բերենք մեկ օրինակ: Եթե այնտեղ նստող վենետիկյան պայլն իր հպատակներից ստանում էր կես տոկոս մաքս-շահույթ և մեկ ու կես տարվա ընթացքում նրա եկամուտը կազմում էր 7200 ֆրանկ, ապա վենետիկցի-

¹² Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան, էջ 368-369:

¹³ Langlois V., *Le Tresor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniens*, p. 154.

¹⁴ Heyd W., *Histoire du commerce du Levant au moyen age*, t. II, Amsterdam, 1967, p. 45.

¹⁵ Ashtor E., *“Levant Trade in the Later Middle Ages”*, p. 57:

¹⁶ Ալիշան Ղ., Սիսուան, էջ 385:

ների կատարած առևտրի շրջանառության գումարը կազմում է 1,5 մլն. ֆրանկ:¹⁷

Սակայն, բնական և տնտեսա-աշխարհագրական բոլոր նախա-դրյալները չեզոքանում են, եթե չկա ռազմա-քաղաքական այնպիսի իրավիճակ, որը պետք է ապահովեր տնտեսական կայուն զարգացում: Կիլիկյան Հայաստանը, Հռոմի Պապի դիվանագիտության և ընդհան-րապես եվրոպացիների համար, միակ հենարանն էր արևելքում՝ նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու համար, ինչն էլ ավելի էր սրում սուլթանության թշնամությունը: Իսկ մամլուքները, իրենց վրա վերցնելով մահմեդական աշխարհի դրոշակակրի դերը, նպատակ ունեին տարածաշրջանում գերակա դիրք զրավել ոչ միայն քաղաքա-կան, այլ նաև տնտեսական առումով:¹⁸ Կիլիկիայի աննախադեպ հզո-րացումը՝ մամլուքներին այլ ելք չէր թողնում, քան իրականացնել ավե-րիչ արշավանքներ՝ ծանր հարված հասցնելով նրա տնտեսությանը: 1266 թ. սուլթան Բայբարսի զորքը ներխուժեց Կիլիկիա, որի արդյուն-քում ավերվեց ու թալանվեց ոչ միայն Այասը, այլ մյուս խոշոր քաղաք-ները: Այդպիսի արշավանքներ իրականացվեցին 1274-1276, 1279, 1280, 1305, 1320, 1322, ի վերջո 1337 և 1341-1342 թթ., որոնք, շատ հա-ճախ հենց մամլուքների հրահրումով, ուղեկցվում էին սելջուկ կարա-մանցիների ասպատակություններով: Թալանով ու կոտորածներով իրականացվող այս արշավանքների գլխավոր թիրախն Այասն էր, որոնց նպատակն էր այն դարձնել անկայուն նավահանգիստ օտար-երկրյա վաճառականների համար: Սկսած 1323 թ. մինչև 1337 թ. եգիպ-տոսը Այասի բաժտնից ստանում էր շուրջ 1 մլն. 200հզ. դրամ հարկ, որը կազմում էր ընդհանուր եկամուտների կեսը:¹⁹ Սակայն տնտեսա-կան մեծ ներուժը թույլ էր տալիս Այասին, կարճատև խաղաղության պայմաններում, վերականգնվել և առևտրի ծավալները կրկին հասցնել զգալի չափերի:

¹⁷ Տե՛ս Բոռնազյան Ա., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի Հայկական պետությունում, Ե., 1973, էջ 263-264:

¹⁸ Տե՛ս Мѣкселѣн Г., նույն աշխ., էջ 402:

¹⁹ Տե՛ս Բոռնազյան Ա., նույն աշխ., էջ 264:

Արդեն 1260-ականների սկզբից Սոնդոլական կայսրությունում սկիզբ է առնում մասնատման ավելի խորը գործընթացներ: Ոսկե Հորդայի խան Բերքը, որն ընդունել էր մահմեդականություն, սկսում է դաշնակցել մամլուքների հետ՝ ընդդեմ Հուլավյան մոնղոլների: Միմյանց ետևից կորցնելով սիրիական նավահանգիստներն (Տրիպոլի 1289 թ., Աքքա, Տյուրոս, Սիդոն, Բեյրութ 1291 թ.)՝ Եվրոպայի առևտրական գերտերությունները, հատկապես Վենետիկի և Ջենովայի հանրապետությունները սուր պայքարի մեջ են մտնում միմյանց դեմ: Նրանց կատաղի պայքարը, միջազգային առևտրում գերակա դիրք գրավելու համար, վերածվեց պատերազմի (1291-1299 թթ.), որն ավարտվեց Ջենովայի հաղթանակով: Արդյունքում Ջենովան իր ձեռքն է վերցնում սևծովյան առևտրի գերակայությունը, իսկ Վենետիկն ավելի է աշխուժացնում իր առևտրական ցանցն Այասում և կիպրական նավահանգիստներում, որոնք միաժամանակ միջնորդի դեր սկսեցին կատարել Ալեքսանդրիայի հետ իրականացվող առևտրում, քանի որ Աքքայի անկմանը հաջորդում է Հռոմի պապ Նիկողայոս IV-ի արգելքը Ալեքսանդրիայի և ընդհանրապես Եգիպտոսի սուլթանության հետ իրականացվող առևտրի վրա: Սակայն, ինչպես այս անգամ, այնպես էլ 1323 թ. Հովհաննես XXII պապի սահմանած արգելքի շրջանում, Վենետիկը երբեք ամբողջովին չդադարեցրեց իր առևտրական կապերն Ալեքսանդրիայի հետ:²⁰ Միջնադարյան հեղինակ Սարինո Ամնուտոն, իր «Խաչակիրների գաղտնի գիրքը Աուրբ հողի նվաճման և պահպանման մասին» գրքում, կոչ էր անում եվրոպացիներին, առևտուր չկատարել Ալեքսանդրիայում, դադարեցնել մետաղի, անտառանյութի, հացի մատակարարումն Եգիպտոս և օգտվել Այաս-Թավրիզ ճանապարհից:²¹ Որպեսզի կործանարար հարված հասցնի Վենետիկին՝ Ջենովան բանակցությունների մեջ է մտնում Հուլավուների հետ՝ Պարսից ծոցում նոր նավահանգիստ կառուցելու համար, որը միմյանց հետ պետք է կապեր Թավրիզը և սևծովյան ամբողջ տնտեսական համակարգը: Աս շրջան-

²⁰ Heyd W., Histoire du commerce du Levant au moyen age, t. II, pp. 3-44, 64-140, 156-187. Ashtor E. "Levant Trade in the Later Middle Ages", pp. 3-63.

²¹ Миклаеян Г., նույն աշխ., էջ 452:

ցում էր ոչ միայն Ալեքսանդրիային այլ նաև Այասին: Մակայն այս նախագիծը անհաջողության մատնվեց:²²

Հուլավուների իլխանությունում տեղի ունեցող ներքին երկպառակտչական կռիվներն, ինչպես նաև Ոսկե Հորդայի միջև ընթացող պատերազմներն, աստիճանաբար թուլացնում էին մոնղոլների գերակայությունն՝ էլ ավելի մեծացնելով Հայկական Կիլիկիայի վրա կախված մահացու վտանգը: Եթե XIV դ. առաջին երկու տասնամյակներում մոնղոլները դեռևս պատվար էին հանդիսանում, ապա 1323 թ. Հուլավուների և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագրով վերջ է դրվում նրանց միջև ընթացող պատերազմական վիճակին: Մերձավոր Արևելքում մոնղոլների տիրապետության մայրամուտի հետ, էլ ավելի սաստկացան մամլուքների և սելջուկների ավերիչ արշավանքները: Իսկ Եվրոպայում, Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1337 թ. սկսված հարյուրամյա պատերազմով, այլևս ոչ մի հույս չէր մնում նոր խաչակրաց արշավանքի կազմակերպման համար: Պատահական չէ, որ հենց նույն 1337 թ. էլ Այասը հանձնվում է մամլուքներին:²³ Իսկ Վենետիկի և Ջենովայի հանրապետությունները նոր, շահավետ առևտրական պայմանագրեր կնքելով սուլթանության հետ, ոչ մի շոշափելի օժանդակություն ցույց չտվեցին իրենց երբեմնի ամենահավատարիմ դաշնակցին: 1347 թ. Կոստանդին Բ-ն փորձում է այն կրկին ետ վերցնել: Հայկական ուժերին, Լիպարիտ զորավարի գլխավորությամբ և Կիպրոսի թագավոր Հյուգոյի օժանդակությամբ, հաջողվում է կարճ ժամանակով ազատագրել Այասը, սակայն այն կրկին անցնում է մամլուքներին:²⁴ Հետագայում միայն 1367 թ. Կիպրոսի թագավոր Պիեռ Ա-ին հաջողվում է գրավել այն, սակայն օժանդակություն չստանալով ոչ Կոստանդին Գ-ից և ո՛չ էլ Եվրոպայից, ընդամենը 8 օր հետո Այասը կրկին հանձնվում է մամլուքներին:²⁵ Ժամանակը ցույց տվեց, որ Եվրոպացիների և մոնղոլների դաշինքը և նրանց հեռակա նպատակները մնացին որպես լեզենդ:

²² Documents arméniens, t II, Paris, 1869, p. 551.

²³ Микаелян Г., նույն աշխ., էջ 457:

²⁴ Նույն տեղում. էջ 464:

²⁵ Նույն տեղում, էջ 472:

Տարածված է այն տեսակետը, որ Կիլիկյան Հայաստանի տնտեսական բացառիկ հաջողությունները, միաժամանակ նրա կործանման պատճառ հանդիսացան: Որքան էլ, որ Այաս-Ալեքսանդրիա մրցակցությունն իր ազդեցությունն ունենար Եգիպտոսի սուլթանության և Կիլիկիայի հարաբերությունների վրա, այնուամենայնիվ դրդապատճառներն ավելի խորքային էին: Կարծում ենք, որ սխալ կլինի քաղաքական այսպիսի ճակատագրական շրջադարձերը տեսնել միայն առևտրա-տնտեսական մրցակցային պայքարի շրջանակներում: Իհարկե, ասպարեզից հեռացնել առևտրական գլխավոր մրցակցին կարևոր խնդիր էր սուլթանության համար: Փաստորեն, Հայկական Կիլիկիայի կործանումով, ստեղծվում էր մամլուք-սելջուկյան միասնական պատնեշ, որը վերջնականապես տապալում էր Եվրոպայի և իրանյան մոնղոլների հեռագնա ծրագրերը, ինչը լուծում էր սուլթանության առջև դրված թե՛ տնտեսական և թե՛ ռազմա-քաղաքական խնդիրները: Դրան զուգահեռ պետք է նշել նաև մերձավորարևելյան ամբողջ տարածաշրջանում և Փոքր Ասիայում սաստկացող մահմեդականացման ուժգնացող ալիքը, որն ուղղված էր վերջնականապես արմատախիլ անելու արևելքի քրիստոնեական պետական կազմավորումները: Արդյունքում ասպարեզից հեռացան ոչ միայն Հայկական Կիլիկիայի թագավորությունը, այլ հետագայում նաև Բյուզանդիան (1453 թ.), Տրապիզոնի կայսրությունը (1461 թ.), ինչպես նաև Կիպրոսի թագավորությունը (1489 թ.):

*ЗОГРАБ ГЕВОРГЯН
ИИ НАН РА*

ТОРГОВОЕ СОПЕРНИЧЕСТВО АЙАСА И АЛЕКСАНДРИИ
(вторая половина XIII и первая половина XIV вв.)

РЕЗЮМЕ

Монгольские нашествия коренным образом изменили не только политические, но и экономические отношения Ближнего Востока. В 1258 г. монголы захватили Багдад, который являлся главным пунктом скрещения почти всех торгово-караванных дорог идущих из Индии, Китая и со всей Азии. Акра, которая была последней опорой крестоносцев на сирийском берегу Средиземного моря, была захвачена мамлюками. Параллельно повысилась

торгово-стратегическое значение главного торгового порта Киликийской Армении - Айаса, который стал главным торговым противником крупнейшего порта Египетского султаната Александрии в восточном средиземноморье.

ԼԵՎՈՆ ԲՈՆԱԿԱԼԻ ՓԱՅՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Կոստանդին II-ի մահով Կիլիկիայի հայոց թագավորության առջև նորից կանգնեց գահաժառանգության հարցը: Ղ. Ալիշանը նշում է, որ Կոստանդին II-ը ունեցել է երկու որդի: Մակայն երկու որդիներն էլ մահացան քավականին վաղ հասակում, 1356-1357 թթ. «զի թեպետ եւ էին նորա որդիք բազումք, այլ մեռան նոքա ի մեզ աուրց քսանից»:¹ Մակայն Մարիուն թագուհու (Կոստանդին II-ի մոր) պատվիրած ավետարանում, որն ընդօրինակվել է 1346 թ, նշվում է Կոստանդինի երեք որդիների մասին. «...Քրիստոս արհմնեցէ զմեր Հայոց թագաւորս Կոստանդիանոս եւ ընդ երկայն աւուրս արասցէ եւ պահեսցէ յերևելի եւ յաներևույթ թշնամեաց եւ զաստուածատուր որդիսն իւր զպարոն Աւշին եւ պարոն Լեւոն եւ զպարոն Հեթում...եւ զսիրելի եղբայր թագաւորին զպարոն Սմբատ Քունդստապլ Հայոց ընդ երկայն աւուրս արասցէ»:² Ընդ որում Ղարդեղի թողած հիշատակությունից ևս պարզ է դառնում, որ Կոստանդինը երկու որդուց ավելի ժառանգ է ունեցել, որոնք, ըստ Ղարդեղի, վաղ են մահացել:

Հայ պատմագրության մեջ 1365 թ. սովորաբար համարվում է Կոստանդին III թագավորի գահակալության սկիզբը, սակայն անհայտ է մնում 1363-1365 թթ. իշխանության հարցը³, քանզի Կոստանդին II-ը մահացել է 1362 թ. վերջին:⁴ Հիշատակություն կա միայն, որ Կոստան-

¹ Ղարդեղ Յովիանն, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, գլ. ԽԶ, էջ 58, Recueil des Historiens des Croisades. Documents Arméniens t.1, Paris, 1863, p 707.

² Ս. Նալ. Տեր-Մովսիսեան, Հայկական մանրանկարներ, Կիլիկեան Հայոց թագաւորների եւ Կոստանդին Ա կաթողիկոսի համար գրուած ձեռագրեր, Ազգագրական հանդես, 1913, էջ 81:

³ Ս. Բոռնազյանը համարում է, որ զաւիղ 1363-1365թթ. թափուր մնաց: Տե՛ս Բոռնազյան Ս., Կիլիկյան Հայկական թագավորության գոյումաւորտը XIV դարում և անկումը, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 780:

⁴ Ալիշան Ղ., Սիսուան եւ Լևոն Մեծագործ. Վեներտիկ, 1885, Սիսուան, էջ 544, Ղարդեղ, գլ. ԽԶ, էջ 59:

դինի մահից հետո մեկ տարի թագապահ է եղել Կոստանդինի այրին՝ Մարիամ թագուհին:⁵

Ղ. Ալիշանը «Սիսուան»-ում մեջ է բերում այսպես կոչված Կիլիկիո ժամանակագրի հեղինակած հայոց թագավորների ցուցակը, որտեղ անհայտ ժամանակագիրը Կոստանդին II Նղրեցու մահվան թվական է նշում 1356-1357 թվականները:

«Եղել մահտարածամ ի Սիս, եւ մեռաւ Կոստանդին թագաւորն յետ 12 ամի տիրելոյն, եւ թաղեցաւ ի Սիս»:⁶ Այնուհետև նույն ժամանակագիրը շարունակում է. «Եւ եղին թագաւոր զՊարոն Դեթմոյ որդին զմիւս Կոստանդին, ի ՊԺԳ (1364-1365 թթ.), որ ոչ մնաց իւր ցեղ»⁷: Մեկ այլ ժամանակագրության մեջ հիշատակվում է, որ Կոստանդինը թագավորեց 11 տարի, մինչև 1355 թ.:⁸

Այսպիսով, Կիլիկիո ժամանակագիրը հիշատակում է թագավորության գահը ութ տարի թափուր մնալու փաստը: Այստեղ էականը Կոստանդին II-ի մահվան թվականը չէ, քանզի Կոստանդինը 1356 թ. դեռ չէր մահացել, էականը երկրի միապետի չզոյության փաստն է: Ցավոք, Ղ. Ալիշանը չի նշում այդ ժամանակագրի ո՛չ անունը, ո՛չ էլ նրա ապրած ժամանակաշրջանը: Հավանաբար նա ավելի ուշ շրջանի (զուցե XV-XVI դդ.) հեղինակ է, որը 1363-1365 թթ. անկայուն քաղաքական իրավիճակը սխալմամբ վերագրել է 1356-1365 թթ.: Կոստանդին II Նղրեցին Մարիամ թագուհուց արական սերունդներ չէր թողել և քնական է, որ այս անգամ ևս հարցը պետք է վճռվեր ընդունված կարգով, այսինքն՝ իշխանական ժողովի որոշմամբ:

XIV դ. 40-ական թթ. երկրորդ կեսից Կիպրոսի արքունիքում էին գտնվում Ջիվան Լուզինյանի կինը՝ Սուլթանը իր երկու որդիների՝ Բոհենունդի (1338-1363) և Լևոնի (1342-1393) հետ: Բացի այդ Կիպրոսում

⁵ Մաթևոսյան Ա. Դեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Սարաջախտի ժամանակագրությունները, ՊԲԴ, 1963, 4, էջ 198:

⁶ Սիսուան, էջ 543:

⁷ Նույն տեղում:

⁸ Ժամանակագրություն XI-XVIII դդ., տպագրության պատրաստեց Ն. Եպս. Պողարյան, «Բանբեր Սատենադարանի», N 9, 1969, էջ 265:

կար ստվար հայ ազգաբնակչություն, որտեղ կային երկու եպիսկոպոսական թեմեր:⁹

Բոհեմունդը այսպես կոչված լատինական կուսակցության կողմից համարվում էր հայոց գահի օրինական ժառանգորդը: Դարդելը նշում է, որ. «Եւ զի իշխանք (աշխարհի հայոց) գրեալ էին առ նա զի արծակեսցէ առ նոսա զիշխանն Բոհեմունդ Լուսինեան, զանդրանիկ որդի Սուլթան տիկնոջ, եւ առ նա ինքն Բոհեմունդ զիր աղաչանց իբրեւ առ բնիկ իւրեանց իշխան, զի եկեալ իշխեսցէ նոցա»:¹⁰ Ապա հաղորդում է, որ Կիպրոսի արքա Պետրոսը երիտասարդ Բոհեմունդի հետ մեկնում է Իտալիա՝ Հռոմի պապից Բոհեմունդի համար հայոց թագը ստանալու նպատակով, սակայն վերջինս մահանում է 1363 թ. հոկտեմբերին՝ վեճետիկում:

Քսանհիմնաձայն Բոհեմունդի անսպասելի մահը, այնուամենայնիվ որոշակի կասկածների տեղիք է տալիս Պետրոս թագավորի հանդեպ, որի մասին Դարդելը ոչ մի բացատրություն չի տալիս: Դարդելը նշում է, որ Բոհեմունդ Լուզինյանին հայոց թագի իրական ժառանգորդ են ընտրել հայ իշխանները, ինչպես տեղի էր ունեցել 1344 թ.: Այդ իշխանաժողովը պետք է եղած լիներ Կոստանդին II-ի մահից հետո: Փաստորեն Կոստանդին Հեթումյան Նղրեցու զահաժառանգման հարց չի եղել, ուստի և Բոհեմունդի մահից հետո երկու տարի գահը թափուր է մնացել Նղրեցիներից: Այնուհետև Դարդելը շարունակում է, որ Պետրոսը հասնում է այն բանին, որ հայոց գահի նկատմամբ իրավունքները պապը հանձնում է Ջիվան Լուզինյանի երկրորդ որդուն՝ Լևոնին և կոչ է անում հայոց իշխաններին ենթարկվել իրենց օրինական տիրոջը և թագավորին՝ Լևոն Լուզինյանին:¹¹ Այնուհետև Դարդելը շարունակում է. «Եւ հրաժարեալ արքային Պետրոսի ի պապէն՝ դարձ արար յաշխարհն իւր եւ եգիտ վախճանեալ զթագաւորն Հայոց զԿոստանդին վասն որոյ ոչ արծակեաց զնամականին առ իշխանն Լեւոն եւ ոչ իսկ առ Հայս, այլ կալաւ պահեաց զնոսա ցորչափ եկացն կենդանի»:¹² Այս վկայության

⁹ Բակուրյան, Կիպրոս կղզի. Սիկոսիա, 1903, էջ 51:

¹⁰ Դարդել, գլ. Խ2, էջ 57:

¹¹ Նույն տեղում, էջ 58:

¹² Նույն տեղում:

մեջ Դարդեւը վրիպել է, նշելով, որ Կոստանդին II-ի մահվան մասին Պետրոսը վերադարձին է միայն իմացել, սակայն մենք գիտենք, որ Կոստանդինը մահացել էր 1362 թ. դեկտեմբերին: Այստեղ Դարդեւը կամենում է անուղղակիորեն ցույց տալ հայ իշխանների դժգոհությունը Կոստանդին II-ից, որի կենդանության օրոք նրանք դիմում են Պետրոսին: Իսկ Պետրոսի նկրտումները հայկական գահի հանդեպ Դարդեւն արդեն չի թաքցնում: Պետրոսը համոզվելով, որ հայոց գահի իրավունքները արդեն ամրագրված են Լուզինյան տոհմին, չի շտապում նամակները հրապարակել: Սակայն այդ ժամանակաշրջանում Կիլիկիայում հայտնվում է գահի նկատմամբ հավակնություններ ունեցող մեկ ուրիշ անձ:

Ղ. Ալիշանը 1363-1365 թթ. իրադարձությունների վերաբերյալ գրում է. «Շփոթք եւ բռնաբարութիւնք. ըստ ոմանց Լեւոն ոմն կորզէ զթագն այլ խոտեալ. ի բաց մերժի»: ¹³ Ցավոք, Ղ. Ալիշանը չի նշում իր աղբյուրների հեղինակներին, սակայն պարզ է, որ այստեղ խոսքը մի քանի հեղինակների մասին է: Միաժամանակ նա մեջ է բերում նաև ժամանակագիր Ավետիք Ամդեցու տեղեկությունները, որը 1352 թ. դիմաց նշում է. «եղև թագաւոր Լեւոն մ'այլ, խոչընդակ Կոստանդեայ, եւ խռովութիւն ոչ սակաւ ընդ միմեանս»: ¹⁴

Այստեղ Ամդեցին նկատի է ունեցել 1363-1365 թթ., քանզի այդպիսի տեղեկություններ 1352 թ. վերաբերյալ մենք ոչ միայն չունենք, այլև գիտենք, որ այդ ժամանակ թագավորում էր Կոստանդին II-ը: Իսկ Ամդեցու հիշատակած Կոստանդին անվան տակ պետք է հասկանալ Կոստանդին Չեթումյան Նղրեցուն, այլ ոչ Կոստանդին II-ին: Է. Դյուլորիեն, 1363-1365 թթ. դիմաց որևէ իշխողի անուն չնշելով, շփոթելով միանգամից մի քանի անձանց, գրում է, թե 1365 թ. արքա հռչակվեց Լևոն Լուզինյանը՝ Կոստանդին II Նղրեցու որդին, որն ամուսնացավ Մաիամ Տարենտացու հետ: Փաստորեն, Դյուլորիեն Կոստանդին III-ին, կարծեցյալ Լևոնին (Բռնակալ) և Լևոն Լուզինյան ապագա թագավորին

¹³ Միսուան, էջ 544. Լևոնի թագավորելու փաստը ընդունում է նաև Ս. Տեր-Ներսեսյանը (տե՛ս Der Nersessian S., Armenia and the Byzantine Empire, Cambridge, 1945, p. 143):

¹⁴ Միսուան, էջ 544:

նույնացրել է:¹⁵ Ղ. Ալիշանը «Աիսուան»-ի ժամանակագրական ցան-ում 1364 թ. դիմաց նշում է, որ. «Ապանանի ի Սիս Սիր Նիկոլ, որ թուի ի զարմէ Լիւզինեանց»:¹⁶ Կարելի է կարծել, որ Նիկոլը և Լևոնը ազգակցական կապերով պետք է, որ կապված լինեն: Ընդունելի չէ Լևոնին Կոստանդին II-ի որդին դիտելու վարկածը, քանզի այդ պարագայում Լևոնը չէր հիշատակվի որպես բռնակալ, այլ որպես օրինական գահաժառանգ:¹⁷

Լևոնի իշխելու փաստը նրա հատած դրամներն են, որոնք իրենց արտաքին տեսքով նման են Կոստանդին II-ի և Կոստանդին III-ի դրամներին:¹⁸ Լևոն Բռնակալի դրամները Լևոն անվան գրության ձևով ևս տարբերվում են նախորդ Լևոնների և ապագա Լևոն Լուզինյանի անունների գրության ձևերից՝ առաջիններում դրոշմված է Լեւոն, իսկ վերջիններում՝ Լեվոն:¹⁹ Բռնակալի դրամները ունեցել են նաև արաբերեն կրկնադրոշմներ:²⁰

Ցավոք դրանից և Ղ. Ալիշանի մեջբերած այդ մի քանի աղբատիկ տվյալներից բացի, Լևոն Բռնակալի մասին այլ տեղեկություններ մենք չունենք: Մնում է միայն ենթադրել, որ վերջինս ազգակցական կապեր է ունեցել արքայական ընտանիքների հետ (առավել հավանական է նրա՝ Լուզինյաններից մեկի ապօրինի զավակ լինելու վարկածը): Այն, որ Լուզինյանները ապօրինի զավակներ ունեին, հաստատում է Ռ. Զուլ-

¹⁵ Dulaurier E., Recherches sur la Chronologie Armenienne, Technique et historique. Paris, 1859, t 1, p. 121.

¹⁶ Սիսուան, էջ 544:

¹⁷ Վիեննայի Մխիթարեան թանգարանի Կոստանդին Գ - Լեւոն Ե դրամները – Զօրփուս Պտուկեան., Զանդէ Ամսօրեայ, N 4-6, 1971, Ալիշան Ղ., Յուշիկը Զայրենեաց Զայոց, հ. II, Վենետիկ, 1921, էջ 438, Գալստյան Ա., Կիլիկյան Զայկական թագավորության կործանման հարցի շուրջը, ԼՂԳ, թիվ 9, 1971, էջ 59:

¹⁸ Կ արապետեան Պ., Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Ա. Ղազարու թանգարանին հայկական հին դրամներու հաւաքածոները, Ռուբինեան դրամներ, Բազմավէպ, N 7-9, 1952, էջ 167: Տե՛ս նաև Պտուկեան Զ., Կիլիկիոյ Կոստանդին Գ - Լեւոն Բռնակալ - Կոստանդին Դ-ի կարեւոր դրամագիւտ մը, Զայկազեան Զայգիտական Զանդե, հ. ԻԳ, 1972, էջ 158, Ներսէսեան Ե., Զայկական տրամներու տեղաշարժն ու աճուրդները, Բազմավէպ, N 1-4, 1997, էջ 105:

¹⁹ Պտուկեան Զ., Կիլիկեան վերջին թագաւորներու պղնձէ դրամները, Զանդէ Ամսօրեայ, N 7-9, 1969:

²⁰ Ներսէսեան Ե., Կիլիկեան Զայաստանի արաբերենով կրկնադրոշմուած դրամները, Զայկազեան Զայգիտական Զանդէ, հ. Ի, 2000, էջ 163:

լենքերզը Սիր Նիկողի և Բարդուղիմեոսի վերաբերյալ: Ընդ որում վերջինս 1370-ական թթ. թագապահական խորհրդի անդամներից է եղել: Օգտվելով իր ազգակցական իրավունքներից՝ Լևոնը կարճ ժամանակով զավթում է գահը, որի մասին արևմտյան սկզբնաղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Ղ. Ալիշանի վկայակոչած տեղեկությունները որոնք հայ հեղինակների գրվածքներ են, բնութագրում են Լևոնին որպես բռնակալ: Հետագայում գահին Նդրեցիների վերահաստատումը կարելի է դիտել իբրև «ապօրինաբար» գահը զավթած Լուզինյանների և Նդրեցիների պայթարի արդյունք:

Հետաքրքրի հանգամանք է նաև, որ միայն 1365 թ. Կոստանդին III-ի գահակալումից մի փոքր առաջ Հռոմի պապը դիմում է հայերին, որպեսզի վերջիններս ընդունեն իրենց թագավոր Լևոն Լուզինյանին՝ Ջիվանի որդուն:²¹ Սակայն չէ՞ որ պապը կարող էր դա անել և՛ 1363, և՛ 1364 թթ., Լևոնի եղբոր մահից անմիջապես հետո, քանզի նա անշուշտ գիտեր, որ Պետրոսը չէր հրապարակել Լևոն Լուզինյանին թագավոր ճանաչելու նամակը: Այստեղից կարելի է ենթադրել, որ Ասի արքունիքի ինքնակալի վարքագիծը չէր հակասում պապական քաղաքականությանը: Այստեղ պարզ է դառնում նաև Կիպրոսի արքա Պետրոսի I-ի՝ Լևոն Լուզինյանի ճանաչման պապական հրովարտակները թաքցնելու իմաստը սկզբնական շրջանում, քանզի Պետրոսին առավել ձեռնտու էր ունենալ ազգակից ապօրինի թագավոր, որի նկատմամբ իր գերակայությունը միշտ էլ ավելի հեշտ կլիներ տարածել:

Տեսակետ գոյություն ունի, որ Լևոն Լուզինյանը իշխել է երկու անգամ, առաջին անգամ 1363-1365 թթ.:²² Այս կարծիքը ընդունելի չէ. նախ՝ Լևոնը այդ շրջանում Կիլիկիայում չէր, բացի այդ, 1363-1365 թթ. իշխած Լևոնի հատած դրամները նման չեն Լևոն Լուզինյանի դրամնե-

²¹ Միսուան, էջ 560:

²² Տն'ս Langlois V., *Le Tresor des chartes d'Arménie ou Cartulaire de la Chancellerie royale des Roupeniens*. Venise Typographie Armenienne de Saint Lazare, 1863, p. 56, տե՛ս նաև Սալայանեանց Տ., Պատմութիւն Երուսաղեմի, հ. I, Երուսաղեմ, 1931, էջ 524, Boase T.S.R., *The Cilician Kingdom of Armenia*. Scottish Academic press, Edinburgh. London 1978, p. 186, Morgan, Morgan de J., *Histoire du peuple Armenien depuis les temps les plus recules de ses annales. Jusqu'a nos jours*. Paris, Nancy, Berger Levrault, 1919, p. 222.

րին: Այս մասին լռում է նաև Դարդեւը, հակառակ դեպքում, այդ հանգամանքը նա հաշվի կառներ՝ մեկ անգամ ևս շեշտելով Լուզինյանների օրինական իրավունքի մասին:

Այսպիսով, 1363-1365 թթ. հայոց գահը զբաղեցրել է Լևոն անունով մի թագակիր, որն ամենայն հավանականությամբ եղել է Լուզինյան իշխաններից մեկի որդին:

*ДАВИД ТИНОЯН
ИИ НАН РА*

О ЦАРСТВОВАНИ ЛЕВОНА-УЗУРПАТОРА

РЕЗЮМЕ

50-60 гг. XIV столетия в истории Киликийского армянского царства - недостаточно изученный и отличающийся противоречивыми историческими фактами период. Именно в этот период (1363-1365 гг.), согласно распространенному мнению, царский престол в течение двух лет никем не был занят.

Однако, исследования показали, что в указанное время на престоле восседал некий Левон, упомянутый в летописях как "Узурпатор". В пользу этого факта свидетельствуют как ряд письменных источников, так и дошедшие до нас отчеканенные его именем монеты. По всей вероятности, он был незаконным отпрыском французского рода Лузиньянов, что и объясняет то обстоятельство, что в исторических летописях этого периода он нигде не упомянут как киликийский царь. Но факты убедительно свидетельствуют, что в 1363-1365 гг. киликийский царский престол был узурпирован самозванцем, именующим себя Левон.

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱՆԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արցախի մելիքություններում դատարանները եղել են տեղական կառավարման կարևոր օղակներ, իսկ մելիքների իրավասությունների մեջ է մտել նաև դատավարությունը: Մելիք-Շահնագարյանների դատաստանական գործի փաստաթղթերից մեկը վկայում է, որ Արցախի մելիքությունների կազմավորումից սկսած «խամսայի հինգ մահալների տիրակալները... իշխելով այդ մահալներում, իրավունք ունեին, որով պատժում էին հպատակներին հանցագործությունների համար»¹: Արցախի մելիքություններում դատավարության կարգի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հավաքել ազգագրագետ Ե. Լալայանը² և Գ. Մուսայեյանը³: Հիմնականում հենց այդ տվյալների օգնությամբ ենք պատկերացում կազմում մելիքների իրականացրած դատավարության մասին, որովհետև ժամանակին նրանց արձակած դատավճիռները չեն արձանագրվել:

Առհասարակ, դատավարությունը Արցախի մելիքություններում պարզ էր: Յուրաքանչյուր մելիքությունում դատական իշխանությունը կենտրոնացած էր տվյալ գավառի մելիքի ձեռքում: Ծանր հանցանքները քննում էր մելիքը, իսկ թեթևները և գյուղական վեճերը՝ նրա հաստատած տանուտերերը: Վերջին դեպքում նրանք գեղջավազի պաշտոնը զուգակցում էին դատավորի պաշտոնի հետ: Այդ դատարանները կարելի է անվանել տանուտիրական⁴: Ի տարբերություն Ղարաբաղի խանությունում գործող մահմեդական դատարանի, որի անդամները ղեկավարվում էին շարիաթով, դատավարության ժամանակ «հայերն

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 180, ք. 48:

² «Ազգագրական հանդես», 1899, գիրք Ե, N 1, էջ 253-255, Լալայան Ե., Երկեր, հ. 2, Ե., 1988, էջ 245-247:

³ Մուսայեյան Գ., Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը, «Արարատ», 1914, թիվ 9, էջ 251-253:

⁴ Թորոսյան Խ., Ղատարանային համակարգը միջնադարյան Հայաստանում ըստ Մխիթար Գոշի Ղատաստանագրքի, «Տեղեկագիր հաս. գիտ.», 1965, թիվ 12, էջ 94:

առաջնորդվում էին ինչպես կանոնական, այնպես էլ սովորութային իրավունքի նորմերով, իսկ որոշ դեպքերում էլ օգտվում էին Մխիթար Գոշի «Դատաստանագրքի»⁵: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հմուտ հայագետ Վ. Բաստամյանը Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» իր հրատարակությանը կցած առաջաբանում գրում է. «հաւանական է», որ «Խաչենոյ երկրի իշխանները՝ Վախթանգը և նորա յաջորդները, ի պատիւ Մխիթարի ընդունեցին նորա Դատաստանագիրքը, եթէ ոչ բոլորովին, զոնեա մասամբ, և գործադրում էին իւրեանց գաւառում»⁶: Իր առաջաբանի մեկ այլ էջում նա նշում է. «Գործածութիւն ունեցաւ, անշուշտ, Մխիթարի Դատաստանագիրքը բուն իսկ Յայաստանում, կամ զոնեա նորա մի քանի նահանգներում, մանաւանդ Խաչէն գաւառում: Վերջինիս վերաբերմամբ այս ենթադրութիւնը հաստատվում է Վենետիկի օրինակի հետևեալ փոքրիկ յիշատակարանով. «Տէր Աստուած վայելել տացէ աստուածասէր և բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ, որդւոյ Յասանայ, ի կամս իւր զգիրքս դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին»⁷: Այս հիշատակարանի հիման վրա Գոշի «Դատաստանագրքի» մեկ այլ հմուտ ուսումնասիրող՝ Խ. Թորոսյանը ավելացնում է. «Վախթանգը, բարեկամի հանգամանքով, նախապես պետք է իմանար Դատաստանագրքի ինչ-ինչոցը, դրական վերաբերմունք ունենար դրա նկատմամբ, որպեսզի հեղինակը կարողանար նման մի հանձնարարականով («անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին») Դատաստանագիրք նվիրել նրան»⁸: Իսկ Վախթանգ իշխանի մահից (1214 թ.) մինչև Արցախի մելիքությունների կազմավորումն ընկած դարերի ընթացքում Խաչեն գավառում իշխա-

⁵ Յայ ժողովրդի պատմություն, հ. V, Ե., 1974, էջ 17, Դիլոյան Վ., Արևելյան Յայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, էջ 36:

⁶ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, իրաւաբանական հետազօտութիւնը հանդերձ ծանօթութեամբ Վ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 178:

⁷ Նույն տեղում, էջ 104: Այժմ այդ ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանում 1237 թվահամարի տակ (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 2, կազմեց՝ Ս. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 329, տես նաև՝ «Բազմավէտ», 1848, քիւ 8, էջ 119):

⁸ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Ե., 1975, էջ ԼԸ-ԼԹ:

նությունն անընդմեջ գտնվել է նույն՝ Հասան-Ջալալյան տոհմի ձեռքում: Ինքնին ծագում է ենթադրությունը, որ Խաչենի Վախթանգ իշխանի շառավիղները՝ Հասան-Ջալալյան մելիքները, ևս կարող էին ծանոթ լինել Գոշի «Դատաստանագրքին» և որոշ դեպքերում կիրառել այն իրենց դատավարությունների ընթացքում: Սակայն, փաստերի բացակայությունը, ինչպես նաև դատավարությունների բանավոր լինելը, հնարավորություն չեն տալիս վերջնական պատասխան տալ այս հարցին: Հստակ է սակայն, որ Արցախի մելիքություններում, ամբողջությամբ վերցված, դատավարության ելքը հիմնականում կախված էր սովորույթային իրավունքի նորմերից և մելիքի կամքից, որը հպատակների համար օրենքի ուժ ուներ:

Մելիքական «դատավարության համար հատուկ շենք չկար. դատը տեսնվում էր մելիքի տան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում: Շատ անգամ պատահում էր, որ մելիքը փողոցում, հրապարակում էլ դատ էր կտրում»⁹: Դատավարության հատուկ օրեր չկային, սակայն նախընտրելի օրը կիրակին էր, երբ մելիքի ենթակայության ներքո գտնվող շրջակա գյուղերի բնակիչները ևս գալիս էին գանգատվելու կամ բողոքարկելու տանուտերերի արձակած վճիռները: Այս դեպքում, այնպես, ինչպես «իշխանական դատարանը վճռաբեկ ատյան էր ստորին դատարանի նկատմամբ»¹⁰, այնպես էլ մելիքական դատարանը հանդես էր գալիս որպես վճռաբեկ ատյան տանուտիրական դատարանի նկատմամբ: Մելիքի վճիռը վերջնական էր և բողոքարկման ենթակա չէր: Մելիքի վճռից դժգոհողները երբեմն անցնում էին թշնամի մելիքի կողմը կամ համալրում խանի լրտեսների բանակը:

Մելիքների իրականացրած դատավարության գործընթացը չափազանց պարզ էր: Վկաներ չլինելու դեպքում հաճախ միայն երդումը բավարար էր դատավճիռ կայացնելու համար, և ի պատիվ նահապետական սովորույթներով ապրող այդ մարդկանց, «ոչ միայն շատ հազիվ էին պատահում սուտ երդվողներ, այլև երբեմն հանցանքը հանձն էին առնում, որպեսզի չերդվեն»¹¹: Պետք է նշել, որ այդ ժամանակա-

⁹ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 245-246:

¹⁰ Թորոսյան Խ., նշվ. աշխ., «Տեղեկագիր հաս. գիտ.», 1965, թիվ 12, էջ 96:

¹¹ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 246:

շրջանում դատաստանական երդման հիման վրա դատավճիռ կայացնելը տարածված է եղել նաև այլուր: Մասնավորապես, Երևանի խանութայինում քաղաքացիական գործերի քննությունն ուսումնասիրած Ե. Շահագիզը գրում է, որ զանգատավորներին լսելուց հետո շարիաթական հոգևոր դատարանի անդամները «նախ հարցուփորձ են արել պատասխանողի վկաներին, հետո հայցվորի. եթե վկաներ չեն եղել, առաջարկվել է երկու կողմին երդվել, եւ այդ դեպքում առավելությունը տրվել է պատասխանողին»¹²: Համադրելով այս երկու տեղեկությունները, կարող ենք պատկերացում կազմել այդ ժամանակաշրջանի դատավարության գործընթացի մասին առհասարակ:

Արցախի մեկիջություններում կատարողական իշխանությունը ևս գտնվում էր մեկիջների ձեռքում: Հայ իրավունքի պատմության մասնագետ Խ. Թորոսյանը իրավացիորեն նշում է. «Հայկական թագավորության, կամ իշխանապետության, կամ իշխանությունների գոյության պայմաններում աշխարհական դատարանները առաջնակարգ դեր են խաղացել ոչ միայն այն փաստի ուժով, որ միաժամանակ դատավորներ էին իրենք՝ մարմնավոր բարձրագույն ու տեղական իշխանության ներկայացուցիչները (տվյալ դեպքում՝ մեկիջները - Ա. Մ.), այլև ցարդ արժանի ուշադրության չարժանացած այն կարևոր պատճառով, որ նրանց ձեռքին էր հարկադրանքի ուժը, այդ բառի զինական-նոտիկական իմաստով. հանգամանք, առանց որի իրավունքը ոչինչ է»¹³: Արցախյան իրականության ուսումնասիրությունը ևս խոսում է այս տեսակետի իրավացիության օգտին: Իրենց տիրույթներում ունենալով գործելու լիակատար ինքնուրույնություն, մեկիջները նշանակում էին բազմազան պատիժներ՝ կախված հանցագործության բնույթից և իրենց հայեցողությունից: Ամենատարածված պատիժները ծեծը և տուգանքն էին: Վերջինս մեկիջները վերցնում էին իրենց օգտին, ինչն, անկասկած,

¹² Շահագիզ Ե., Հին Երևանը, Ե., 2003, էջ 113:

¹³ Թորոսյան Խ., Ընդդատությունը միջնադարյան Հայաստանում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 8, 1967, էջ 91:

«տեղիք էր տալիս չարաշահումների»¹⁴: Նշելի է, որ «միայն տուգանքների արդյունքը տալիս էր Շահնազարին 20 հազար ռուբլի»¹⁵:

Տրվում էին նաև այլ պատիժներ: Այսպես, երբեմն հանցապարտներին արգելափակում էին մեղքի փոշոտում կամ տան սենյակներից մեկում, որը ծառայում էր որպես բանտ: Իսկ անբարոյական կանանց սպառնում էր անվանարկությունը, երբ նրանց նստեցնում էին էշի վրա, պոչը ձեռքը տալիս, երեսին մուր քսում և շրջեցնում գյուղով, կամ անուղղելիներին կապում էին ծիու պոչից և քարշ տալիս: Սելիք-Յուսեփ Ա-ն այդպես սպանել է պոռնիկ Մարիամին¹⁶:

Սելիքը իր հպատակների հայրն էր համարվում, և հիմնականում գթասրտությամբ էր վարվում նրանց հետ, սակայն առավել ծանր հանցանք գործողներին իրավունք ուներ մահապատժի դատապարտելու: Արցախի մելիքների՝ ինքնուրույն մահապատժի դատավճիռներ կայացնելու մասին են վկայում նաև հնդկահայ ականջալուր-ժամանակակիցները: «Նոր տետրակում» մասնավորապես Ջրաբերդի Սելիք-Աղամի այդ իրավունքի մասին կարդում ենք. «Ինքնագլուխ (անկախ - Ա.Ս.) իշխան է, այնպես որ կարող է իրեն ենթակա ժողովրդի միջից հանցավորին, վնասապարտին կամ դատապարտելիին, ով էլ որ նա լինի, ինքնակամ կերպով պատժել ու սպանել՝ առանց որևէ մեկի հրամանի»¹⁷: Իսկ Պարսկաստանի անցյալին լավատեղյակ հասարակական գործիչ Գ. Շիրմազանյանը 1857 թ. ապրիլի 27-ին Թավրիզից Գ. Ախվերդյանին ուղղած նամակում գրում է. «Ղարաբաղու մելիքներն ոչ մի-նին չէին նմանիլ..., միայն նշանակյալ հարկն կը տային և յուրյանը յուրյանց գլխու մարդ կը սպանեին, կը պատժեին»¹⁸: Սեզ են հասել նաև մի քանի մահապատժի ենթարկվածների անուններ: Այսպես, Սելիք-Արով Գ-ը անհնազանդության համար Բուլնիսում ծառից կախել է

¹⁴ Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «ԲՀԱ», 1966, թիվ 1, էջ 200:

¹⁵ Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 23, նույնի՝ Խոջայական կապիտալ, Ե., 1934, էջ 168:

¹⁶ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 246-247:

¹⁷ Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, Ե., 1991, էջ 102-103:

¹⁸ Հովհաննիսյան Ա., Գ. Ախվերդյանի և Գ. Շիրմազանյանի մամուլափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համաբարոյությունների մասին, «ՊԲՀ», 1963, թիվ 2, էջ 213-214:

տվել Փանոսենց Չայրապետին, իսկ Մելիք-Բեգլարը հրամայել է սպանել հովիվ Չախվերդուն գլխին շիկացրած երկաթ դնելով¹⁹:

Չամենատուրքյան համար նշենք, որ ի տարբերություն Արցախի մելիքների, Երևանի մելիքները չեն ունեցել մահապատժի դատավճիռ կայացնելու իրավունք, այլ իրականացրել են միայն վճռարեկ ատյանի գործառույթներ: Գերմանացի ճանապարհորդ քարոն Օ. Չակստհաուզենը այդ մասին գրում է. «Եթե ոչ ի շինական դատարան մտեալ և անբաւական ելանէր, բողոքէր սոցա. նոյնպէս ի մեծամեծ վէճս դիմէին առ սոսա. ամենայն վճիռ սոցա լինէր բերանացի. ունէին իշխանութիւն քանտարկելոյ և դատելոյ պատժովք, այլ ոչ ի մահ, որ գործ էր միայն Աարտարին Երևանայ»²⁰: Նա խաչատուր Արովյանի՝ իրեն հաղորդած տեղեկությունների հիման վրա ներկայացնում է նաև Երևանի մելիք Աահակ Աելիք-Աղամալյանի իրականացրած դատավարությունը. «Ձկնի սկիզբն լինէր դատաստանի. բողոքարկուք յառաջ բերէին զբողոքս, յանցաւորք զպատասխանին: Աահակ իբրև լսէր զբանս երկոցունց կողմանցն ևս, տայր ապա վճիռ արդար և անփոփոխելի, վասն զի ճանաչէր լաւապէս ամենեցուն զներքին բնաւորութիւնս, և զյանցաւորս խստիւ պատուհասէր»²¹:

Առհասարակ, փաստերը վկայում են, որ հզոր և մարտերում կոփված մելիքները կարողացել են իրենց հեղինակությամբ կարգ ու կանոն հաստատել սեփական գավառներում: Այստեղ տեղին է մեջբերել Առաքել Կոստանյանցի տեղեկությունը Դիզակ գավառի 1746-1781 թթ. տիրակալ Աելիք-Եսայու արդարադատության վերաբերյալ. «Անհնարին էր զերծանելն ի ձեռաց նորա, ոչ կաշառօք և ոչ միջնորդական բարեխօսութեամբ. իւրաքանչիւրոցն ըստ չարագործութեան հատուցանէր պատիժ և պատուհաս. զմահապարտսն խեղդամահ առնէր. ոմանց զմի ձեռն հատանէր և ոմանց զաչսն հանեալ կուրացուցանէր. արդարև դողայր և սարսէր նահանգն, որ ընդ իշխանութեամբ նորա էր. վէճ և կռիւ կանանց մանաւանդ բարձրածայնելն միանգամայն վերա-

¹⁹ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 246-247:

²⁰ Օգոստոս Ֆօն Չակստհաուզեն, ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու, այն է ի Չայս եւ ի Վիրս, Վաղարշապատ, 1872, էջ 185-186:

²¹ Նոյն տեղում, էջ 188-189, Շահագիգ Ե., նշվ. աշխ., էջ 89:

ցուցեալ էր յամենայն բնակչաց. նաև գողութիւն, պոռնկութիւն, մարդասպանութիւն և այլ ինչ չար պատահարս բոլորն ի գաւառն ի բաց հեռացուցեալ»²²: Իր արդարադատությամբ ոչ պակաս հռչակված էր նաև Դիզակ գավառի մեկ այլ տիրակալ՝ Սելիք-Աբասը, որը «զդատողութիւն մեղաւորաց և վնասակար անձանց ամենևին իսկ առանց արծաթսիրութեան և կաշառաց առնէր, զմահապարտսն զամենայն պատժէր առանց ազատութեան. կախէր զոմանս ի վերայ մեծի ճանապարհի զկախադանէ. զոմանս հրամայէր ծառայիցն սրախողխող առնել առաջի աւազակաց և հասարակութեան, զի մի ոք այնուհետև վստահասցի զնոյն գործել չարութիւն: Արդարև սարսեալ դողայր գաւառն առաջի նորա»²³: Վկայակոչված փաստերը գալիս են ապացուցելու, որ Ղարաբաղում 1750-ական թթ. խանության հաստատումից հետո էլ տեղի յուրաքանչյուր մելիքութիւնում դատավարութեան իրավունքը գտնվում էր տվյալ գավառի մելիքի ձեռքում:

Սելիքների իրավասութեան ներքո էր գտնվում նաև, մերօրյա տերմինաբանությամբ, քաղաքացիական գործերի քննութիւնն ու լուծումը: Սելիքների թույլտվությամբ են կատարվել իրենց հպատակների ամուսնութիւնները: «Յուրաքանչյուր պսակի հրաման տալիս հպատակները մելիքին վճարում էին 3-6 ռուբլի, ռուսական փողով հաշված: Երբ հարսը ուրիշ գյուղ էին տանում, պարտավոր էին ավելի վճարել»²⁴: Այդ կապակցութեամբ Ե. Լալայանը հաղորդում է մեկ այլ ուշագրավ մանրամասնութիւն, ըստ որի երբեմն «պսակի գրավոր, կնքած հրաման տալու փոխարեն մելիքը բավականացել է միայն յուր համրիչը տալով, որ ներկայացրել են քահանային, և սա կատարել է պսակը»²⁵:

Իհարկե, ավանդաբար հոգևոր իշխանութեան իրավասութեանը վերաբերվող այս գործերում հաշվի է առնվել նաև եկեղեցականների կարծիքը: Այսպես, վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցիցի 1815 թ. հունիսի 30-ին Եղիա քահանային ուղղած նամակում վերջինիս

²² Կոստանեանց Առ., Դիզակի մելիքութիւնը, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պր. Ա. Վաղարշապատ, 1913, էջ 45:

²³ Նույն տեղում, էջ 74:

²⁴ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 243:

²⁵ Նույն տեղում, էջ 252:

պտտվիրել է. «Ձի գզիր Խաչատուրի տղայ Աւետիքն և Գասպարի դուստր Դուռուճն որոյ աղագաւ մէլիք Բաղդն (Մելիք-Բեգլարյան - Ա.Ս.) և քահանայքն և քովիւքն գրեալ էին թէ տղայն այրի է և աղջիկն երեսուն և հինգ տարեկան է և գերի անկեալ ևս, որոց լիցի հրաման պսակելոյ: Արդ ուրեմն գրեմ քեզ, որ եթէ ճշմարտապէս այն աղջիկն կամ Լե (35) կամ Լ (30) տարեկան լինի և կամ Իե (25) տարեկան լինի պսակեսցիք զնոսա, իսկ եթէ ոչ՝ ծանուցիք մեզ առանց պսակելոյ»²⁶:

Մելիքները երբեմն միջամտել են նաև իրենց հպատակների ամուսնալուծություններին: Մասնավորապես, «Մելիք-Յովսեփ Ա-ին զանգատվում է Մուսին, թե կինը յուր հետ լավ չի վարվում: Սա էլ հրամայում է անմիջապես նրան բաժանել և մի ուրիշի հետ պսակել, որ և կատարում են»²⁷: Իսկ Մատենադարանում պահվող 1816 թ. ապրիլի 27-ին գրված մեկ այլ փաստաթղթում Գանձակից Դարություն վարդապետը զանգատվում է Ներսես Աշտարակեցուն, թե «եկեալ աստ մէլիք Ուսուրեան մէլիք Բաղդըն ստիպմամբ հարկադրէ զիս բաժանել իւր պօլնսեցի Խաչատուր այրն՝ որոյ խաբէութեամբ աստ պսակեցեալն է»²⁸: Սակայն, այս դեպքերում, կարծում ենք, գործ ունենք ոչ թե օրինաչափությունների, այլ հարկադրանքի ուժով պայմանավորված մելիքական կամայականությունների հետ:

Մելիքների համաձայնությամբ են կայացվել նաև որդեգրման գործողությունները: Այսպես, XVII դ. կեսերին Գանձասարի կաթողիկոսությունում ծայր առած աթոռակալական պայքարին վերջ տալու նպատակով «Խաչենի մելիք Աթաբեկ Դասան-Ջալսույանի նախածեռնությամբ համաձայնություն կայացվեց, ըստ որի, Պետրոսը (Խանձրեցի - Ա. Ս.) դառնում է Գրիգոր կաթողիկոսի որդեգիրը և դրանով՝ նաև Դասան-Ջալալյան տոհմի անդամը»²⁹: Դրանով նա, որպես Դասան-Ջալալյան տոհմի անդամ, իրավունք էր ստանում հաջորդել իրեն որդեգրած Գանձասարի Գրիգոր կաթողիկոսին:

²⁶ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 648:

²⁷ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 241:

²⁸ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 475:

²⁹ Մկրտումյան Լ., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձրեցի կաթողիկոսի օրոք. «ԼԳԳ», 2000, թիվ 1, էջ 90:

Լույնիսկ այն ժամանակ, երբ մելիքություններից այլևս ոչինչ չէր մնացել, մելիքների ժառանգները «թեպետ ոչ դատավոր, բայց որպես գյուղի ամենազդեցիկ և հեղինակավոր մարդ, դատ էին կտրում, կամ գյուղական դատավորների և տանուտիրոջ վրա ճնշում գործելով, դատը իրենց կամեցածի պես վճռել տալիս: Գյուղացիները այս բեկերին գյուղական պաշտոնյաներից ավելի խելացի և ավելի հեղինակավոր անձնավորություն համարելով, սիրով նրանց էին դիմում և խնդրում վերջացնել իրենց դատը»³⁰: Բնականաբար, այս դեպքերում մելիքների ժառանգները բանեցրել են իրենց նախնիների երբեմնի իրավասությունները:

Այսպիսով, եղած փաստերի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ Արցախի մելիքները, առաջնորդվելով հիմնականում սովորութային իրավունքի նորմերով, իրականացրել են դատավարություն, որը, սակայն, բավարարել է նահապետական կացութաձևով ապրող մարդկանց պահանջները:

АРТАК МАГАЛЯН

СУДОПРОИЗВОДСТВО В АРЦАХСКИХ МЕЛИКСТВАХ

РЕЗЮМЕ

Судебная власть в каждом меликстве (княжестве) Арцаха находилась в руках мелика данной провинции. Тяжелые преступления расследовались меликом, а легкие и сельские тяжбы - им утвержденными сельскими старостами. Для судебных разбирательств не было определенных зданий. Суд проходил во дворе дома мелика или в одном из комнат его дворца. Так же не было определенных дней для судебных разбирательств. Однако, предпочтительным днем было воскресенье, когда жители с окрестных деревень также приходили жаловаться или обжаловать решения сельских старост. Приговор мелика был окончательным и обжалованию не подлежал.

Наказания были разнообразны в зависимости от характера преступления и усмотрения мелика. Самыми распространенными наказаниями были избиение и штрафы, которые мелики брали себе. Давались также другие наказания. Мелик имел право за особо тяжкие преступления выносить смертный приговор.

³⁰ Լալալյան Ե., նշվ. աշխ., էջ 254-255:

Գ.-Ա. ՕԼԻՎԻԵՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՐՏԱՅԻ ՄԱՍԻՆ
(XVIII դ. վերջին քառորդ)

XVIII դ. վերջին քառորդի Արևելքի պատմության վերաբերյալ եվրոպական աղբյուրներից է ֆրանսիացի բնագետ, ճանապարհորդ և դիվանագիտական ներկայացուցիչ Գ.-Ա. Օլիվիեի ուղեգրությունը:

Բնագետ-միջատաբան Գի (Գիյոմ)-Անտուան Օլիվիեն ծնվել է 1756 թ. հունվարի 19-ին, Տուլոնի մերձակա Արկ բնակավայրում³¹: 1792 թ. նա հատուկ առաքելությամբ Ֆրանսիական Հանրապետության ժամանակավոր Գործադիր խորհրդի կողմից ուղարկվում է Իրանի շահի մոտ: Ուղևորության ընթացքում նա լինում է Փոքր Ասիայում, Եգիպտոսում, Պարսկաստանում և ապա վերադառնում է Ֆրանսիա 1798 թ. դեկտեմբերին³²:

Այս ուղևորության մասին իր գրառումներն ու նկարագրություններն ամփոփված են Օլիվիեի վերոհիշյալ ուղեգրության մեջ: Օլիվիեի ուղեգրությունը՝ “Voyage dans l’Empire Othoman, l’Egypte et la Perse, Fait par ordre du Gouvernement, pendant les six premières années de la République” վերնագրով ունեցել է երկու հրատարակություն՝ երեք և վեց հատորով³³: Ուղեգրության վեցհատորյա հրատարակության I և II հատորներ-

³¹ La Grande Encyclopedic inventaire raisonné des sciences, des lettres et des arts, tome vingt-sinquième, p. 353, Dictionnaire des sciences médicales. Biographie médicale. Tome sixième, Paris, MDCCCXXIV(1824), p. 337. Օլիվիեի մասին մանրամասն տե՛ս Sylvestre, Notice sur G.-A. Olivier, Paris, 1815.

³² Օլիվիեն 1800 թ. դառնում է Ալֆորի Անասնաբուժական դպրոցի պրոֆեսոր: Լա թողել է նաև մի շարք այլ աշխատություններ. Entomologie ou Histoire naturelle des insectes coleopteres (Paris, 1789-1809, 6 vol.), Dictionnaire d’histoire naturelle des insectes, papillons, crustaccs, etc. (Paris, 1789, 7 vol. et demi in-4, et 2 vol. de planches; les t. II à VI sont d’Olivier). Տե՛ս Grande Encyclopédie, p. 353; Dictionnaire Général de Biographie et D’histoire ets., par m. m. Ch. Dezobry, Th. Bachelet, Paris, 1876, t. 2, p. 3108.

³³ Ուղեգրության վեցհատորյա հրատարակությունից (հ. I-II-1801, հ. III-IV-1804թ. և հ. V-VI-1807թ.) մեկ օրինակ պահվում է Հայաստանի Ազգային Գրադարանում:

րը նվիրված են Օսմանյան կայսրության նկարագրությանը, III հատորը՝ Եգիպտոսի, IV-ը՝ Սիրիայի, V և VI-ը՝ Պարսկաստանի նկարագրությանը: Օլիվիեի ուղեգրությունը թարգմանվել ու հրատարակվել է նաև գերմաներեն³⁴: Նրա ուղեգրությունից որոշ հատվածներ թարգմանաբար հրատարակվել են XIX դարասկզբի ռուսական ու անգլիական մամուլում³⁵:

Իր ուղեգրության մեջ Օլիվիեն հղումներ կամ մեջբերումներ է կատարել ինչպես իրեն նախորդած ճանապարհորդներից (Ֆ. Վոլենց, Պ. դը Տուրնեֆոր, Ս.-Գ. Շուազել-Գուֆին, Ռ. Պոկոկ, Պ. դեյլա Վալե, Դ. Մոնդրել, Ֆ. Գասելբիստ, Կ. Նիբուր, Ժ.-Բ. Տավերնիե, Ժ. Շարդեն, Կ. դե Բրույն, Զ. Գանվեյ, Ս. Ֆոստեր, Լ.-Ֆ. Ֆերիեր-Սուվբեֆ և այլք), այնպես էլ անտիկ հեղինակներից (Պլինիոս, Դերոդոտոս, Արիստոտել, Ստրաբոն, Դիոդորոս Աիցիլիացի, Պտղոմեոս, Արիանոս): Իրենց հերթին ավելի ուշ շրջանի ճանապարհորդները (Պ.-Ա. Ժորեր, Ս. Դյուպրե, Գ. Դրուվիլ, է. Ռեկյու) օգտվել են Օլիվիեի ուղեգրությունից: Այդ ճանապարհորդներից Դյուպրեն, գնահատելով Օլիվիեի ուղեգրությունը, գրում է, որ «Օլիվիեի նշանավոր աշխատությունն, ի միջի այլոց, կարող է դիտվել որպես Շարդենի «ճանապարհորդության» շարունակություն և լրացում»³⁶:

Օլիվիեի ուղեգրությունը պարունակում է տարաբնույթ և արժեքավոր տեղեկություններ վերոհիշյալ երկրների, այդ թվում և Հայաստանի մասին, որոնց մի մասը, սակայն, ոչ միշտ է հաստատվում այլ աղբյուրներով: Ուստի Օլիվիեի հաղորդած տվյալները պետք է օգտագործել մեծ զգուշությամբ:

Իր ուղեգրության IV հատորում Օլիվիեն բավականին ընդարձակ խոսում է Ուրֆայի մասին: Նա գրում է. «Վանտոզի 12-ին (1796 թ. մարտի 3-ին - Ա.Մ.) մենք քայլեցինք 11 ժամ և հասանք Ուրֆա... Մենք քաղաք իջանք մի շատ վատ ճանապարհով՝ սալարկված, հաճախ

³⁴ Olivier G.-A., *Reise durch das Tuerkische Reich*. Weimar, 1802-1805, 2 Teile.

³⁵ St'u "Журнал новейших путешествий", СПб., 1809, N 1, с. 1-29; N 2, с. 189-208; N 3, с. 242-288, "Вестник Европы", Москва, 1807, N 16; 1808, N 10, N 11, N 15. The *Edinburgh Review*, vol. 1, Edinburgh, 1814, p. 44-61.

³⁶ St'u Dupre A., *Voyage en Perse*, t. 1, Paris, 1819, p. I.

փորված ժայռի մեջ: Այս ճանապարհը թվում էր անհամեմատ լավ, քան այս կողմերի թուրքական մյուս ճանապարհները: Ուրֆան, նախկինում հայտնի Եդեսիա և Կալիրոն անուններով, զգալի տարածք է զբաղեցնում և կարող է ունենալ 30-40000 հոգի բնակիչ: Այն կառուցված է երկու բլուրների լանջերին և շրջապատված է վատ պահպանված պարսպով: Երկու բլուրների միջև կա մի հովիտ, որտեղից սկիզբ է առնում մի շատ հորդառատ վտակ, որը ջուր է մատակարարում բնակիչներին, իսկ հետո ոռոգում մեծ քանակությամբ պարտեզներ: Վտակից մի փոքր ներքև կառուցված է մի քառակուսի ջրավազան՝ մոտ հարյուր քայլ երկարությամբ, որի մեջ կարելի է տեսնել շատ ծկներ: Նրանց թիվն այդքան մեծացել է այն պատճառով, որ համոզված են, թե դրանք սուրբ են և եթե մեկը համարձակվի դրանք ուտել կամ նույնիսկ անցանց ցավ պատճառել, կմահանա: Այդ ջրավազանի ափին կան թխվածքավաճառներ, որոնք վաճառում էին թխվածքներ աստվածապաշտ և զվարճասեր մարդկանց, որոնք ցանկանում էին հյուրասիրել ծկներին և հաճույք էին ստանում՝ տեսնելով ինչպես են ծկները լողում բոլոր կողմերից, խոնվում մի տեղ, բախվում իրար, շրջվում՝ որսալու համար նետված փշրանքները: Պետք է հիանալ այն նախապաշարմունքով, որը ստեղծվել է ի մեծ գովեստ այն արարողի և նրանց, ովքեր այն պահպանում են, որովհետև այդ ծկներն այնքան բազմաթիվ են այդ սահմանափակ տարածքի համար, իրենցից ներկայացնում են մի շատ գեղեցիկ տեսարան, որն էլ այդ վայրը դարձնում է քաղաքի ամենամարդաշատ վայրը: Ավազանը մի կողմից ողողում է մզկիթի պատերը և այդ կողմում ստվերի մեջ է մնում, իսկ մյուս կողմից ողողում է շատ գեղեցիկ սոսիների պուրակը:

Ուրֆայի տները բավական ամուր կառուցված են շինաքարից կամ ավազաքարից, քիչ բարձր են և վերջանում են պատշգամբով: Փողոցներն իրենց մեջտեղում ունեն ջրհորդան՝ երկու-երեք ոտք լայնությամբ, որտեղ անձրևաջրերն ու կեղտաջրերն են լցվում. մի բան, որը թույլ է տալիս երկու կողմերում ունենալ քայլելու համար հարմար մայթեր:

Այս քաղաքում կարելի է տեսնել, ինչպես և Թուրքիայի այլ քաղաքներում, մեծ քանակությամբ մզկիթներ, որքան եկեղեցիներ չկան

Եվրոպայի [կաթոլիկ] քաղաքներում: Բոլորի կողքին կան ավելի կամ պակաս գեղեցիկ միմարեթներ, ավելի կամ պակաս ընդարձակ՝ կախված մզկիթի եկամուտներից: Հայերը քաղաքում ունեն մի եկեղեցի, որի մոտ բնակվում է այդ համայնքի եպիսկոպոսը. նրանք քաղաքից դուրս ունեն մի իջևանատուն, որտեղ և հարմարորեն մեզ տեղավորեց մեր ջորեպանը: Կան նաև բազմաթիվ կամարածև շուկաներ, բավական լավ կառույցներ՝ նախատեսված մի մասը կտորեղենի վաճառականների, մյուս մասը՝ ոսկերիչների և այլ արհեստավորների համար:

Քաղաքը բնակեցված է արաբներով, քրդերով, թուրքերով, հայերով և հրեաներով: Առաջին երեքը՝ կրոնով մահմեդական, կազմում են բնակչության 3/4-ը: Հրեաներն աղքատ են և քչաթիվ: Հայերը, որքան էլ ճնշված, բավականին հարուստ են, որովհետև առևտուրը, որ նրանք անում են Հալեպի, Դիարբեքիրի և Մոսուլի հետ, նրանց թույլ է տալիս վերականգնել այն կորուստները, որ պատճառում են նրանց իշխանության ներկայացուցիչները:

Ուրֆան միայն պահեստային քաղաք չէ. այն մատակարարում է ցորեն, գարի, բանջարեղեն, լոբի, սիսեռ, բակլա, որոշ բամբակե գործվածքներ, որոնք տեղում էլ [իր ծոցում] արտադրվում են, որոշ ոսկերչական արտադրանք, զարդեղեն, որոնք պատրաստում են տեղացի արհեստավորները: Այստեղ արտադրում են շատ գեղեցիկ մարոկեն (սաֆյան, այծակաշի - Ա.Մ.), որն անցնում է Հալեպ ու Դիարբեքիր, որպեսզի այնուհետև տարածվի Աիրիա և Փոքր Ասիա:

Քաղաքի շրջակայքում երևում են շատ քիչ խաղողի վազեր: Հրեաներն ու հայերը իրենց համար պատրաստում են սպիտակ ու կարմիր գինիներ, որոնք համեղ կլինեին, եթե դրանց մեջ չգցեին սոճու կոներ, որոնք դրանց տալիս են խեժահամ՝ շատ տհաճ այն մարդկանց համար, ովքեր սովոր չեն:

...Ամրոցը, որը կառուցված էր մի կրային ժայռի կատարին, շարժեց մեր հետաքրքրությունը: Մենք այնտեղ բարձրացանք մի շատ թեք ճանապարհով, որը որոշ տեղերում փորված էր ժայռի մեջ: Տեղ հասնելով՝ մենք նկատեցինք միայն ավերակներ, փլուզված կամարներ, կիսավեր պարիսպներ՝ ամեն ռոպե պատրաստ փլվելու. հիմքը նստվածք էր տվել, մի խոսքով՝ ամբողջական ոչինչ չկար, եթե չհաշ-

վենք այն սրահը, որը նախատեսված էր ամրոցը հսկող ենիչերինների համար: Քաղաքի կողմից պարիսպների մոտ բարձրանում էր մի պատ, որի յուրաքանչյուր ծայրն իր վրա պահում էր կորնթական ոճի մի շատ մեծ սյուն, որի խոյակը վնասվել էր, բայց հիմքը, բավական լավ կառուցված, պահպանվել էր: Պտտելով այդ յուրատեսակ կառույցի շուրջ և շրջապատող ավերակներում՝ մենք եզրակացրեցինք, որ այն ունեցել է ուղղանկյուն հիմք և որը պահվում էր կամարների վրա. այն ուներ մի դուռ և մեծ ճակատների վրա երկու լուսամուտ: Այդ սյուներից մեկի վրա, թվում է, թե եղել է հիշատակություն. մի բան, որ մենք եզրակացրեցինք օրինաչափ փորվածքից, որն այն ներկայացնում էր իր բարձրության 1/4-ի վրա և արաբական մի քանի շատ վատ պահպանված տառերից, որոնց հետքերը կարելի է տեսնել շրջանակների վրա, նույնիսկ սյուների քարերի վրա:

Մի քանի քայլ այս կառույցից, որը մենք ենթադրեցինք, թե եղել է գերեզման, երևում էին երկու հսկա սյուներ, որոնք իրենց վրա պահել էին այնպիսի կառույցի սյունասրահ, որը մեզ թվում է ժամանակակից նախորդ կառույցի (այսինքն՝ սյուների - Ա. Մ.), բայց հիմնվեր փլուզված:

Պատերը, որով այս ամրոցը շրջապատված է, բավական բարձր են, չնայած գտնվում են թեք ժայռերի վրա. դրանք կառուցված էին արաբների կողմից՝ դատելով այդ լեզվով եղած արձանագրություններից, որոնք դրանց վրա փակցված են, բայց որոնք, մեզ թվում է, հարդարանքն են ավելի հին պատերի և որը կարելի է տեսնել այն մասերում, որտեղ արաբական պատերը փլվել են...»³⁷: Այնուհետև Օլիվիեն ավելի մանրամասն խոսում է ամրոցի, ստորգետնյա կառույցների մասին, ինչպես նաև պատմական մի էքսկուրս է կատարում՝ Ուրֆա-եղեւփայի պատմական անցյալը ներկայացնելով:

Ուրֆայի մասին որոշ տվյալներ է հաղորդում նաև Ֆերիեր-Աովրեֆը. «Ուրֆան մահմեդականների կողմից շատ հարգված մի մեծ քաղաք է, նրանք կարծում են, որ Աբրահամն այնտեղ երկար ժամանակ բնակվել է. նրա գլխավոր ձգկիթը նվիրված է այս նահապետին: Քրիս-

³⁷ Olivier G.-A., Voyage, t. 4, p. 217-224.

տոնյաները ևս այնտեղ ունեն բազմաթիվ եկեղեցիներ, որտեղ նրանք պատվում են տարբեր սրբերի շիրիմներ: ...Այս քաղաքի առևտուրը կայանում է ամենաբարձր որակի դեղին մարոկենով. նրա դիրքը՝ եփրատից երկու օրվա ճանապարհի վրա, նրա համար մեծ շրջանառություն է ապահովում, և հաջորդաբար բազմաթիվ քարավաններ են այնտեղ գալիս Հալեպից, Դիարբեքից, Մոսուլից»³⁸:

Վերին Միջագետքի վաճառականության և հաղորդակցության կենտրոնն ու գլխավոր հանգույց Ուրֆա քաղաքի հարավային կողմը կես-լեռնային է, կես-դաշտային, արևմտյան կողմը լեռնային է մինչև Արուճի դաշտը, հյուսիսը՝ դաշտային է և ծածկված այգիներով, արևելքը նույնպես դաշտային է³⁹: Ուրֆայի՝ բավական ամուր կառուցված տների համար ճերմակ և ընտիր շինաքարը բերվում էր քաղաքի հարավ-արևմուտքում գտնվող քարհանքերից⁴⁰: Սակայն, չնայած իր հարմարավետ դիրքին ու սքանչելի օդին, Ուրֆան, ինչպես բոլոր արևելյան քաղաքները, զրկված էր առողջապահական պայմաններից: Ուրֆայի զույգ լճակների ջրերը, գետակներ ձևացնելով, հոսում էին քաղաքի միջով և զնում-ռոռում շրջակա դաշտերի այգիներն ու բանջարանոցները⁴¹: Թերևս այս գետակներն են, որ Օլիվինն համարել է ջրհորդաններ՝ երկու-երեք ոտք լայնությամբ, որտեղ անձրևաջրերն ու կեղտաջրերն են լցվում:

Օլիվինի նկարագրած ջրավազանը Ուրֆայի հայտնի Հայր Արահամի (Խալիլ Իբրահիմ)⁴² լճակն է, որն առատ էր ձկներով: Լիճն այնքան ձկնառատ էր, որ ջրի մեջ նետված կերի շուրջ անմիջապես մի մեծ զանգված էր գոյանում՝ նետված կերը հափշտակելու համար: Դաբեր ի վեր այդ ձկները սուրբ են նկատվել և արգելվել է դրանց որ-

³⁸ Ferrières-Sauveboeuf L.-F., Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauveboeuf, fait en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789, t. 2, Maestricht, 1790, p.171-172.

³⁹ Սահակեան Ա., Դիւցազնական Ուրֆան եւ իր հայրդիւները, Պէյրուք, 1955, էջ 590:

⁴⁰ Նույն տեղում, էջ 592, նաև էր. Հոգ., Տեղեկագիր Եդեսիոյ եւ վիճակաց նորին, «Արաքս», Գիրք Բ, ՍՊԵ, 1889, էջ 20:

⁴¹ Սահակեան Ա., նշվ. աշխ., էջ 591, 593:

⁴² Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Սասն Ա, հ. Ա., էջ 332:

սալ⁴³: Հետաքրքրական է, որ Օլիվիեն չի հիշատակում երկրորդ լճի՝ Այն Ջլխայի գոյությունը: Շնորհալին իր նշանավոր «Ողբ Եղեսիոյ» պոեմում ևս մեկն է հիշատակում. «Շովն ի միջի իմ ծածանէր, քաղցրիկ օղովն ծիծաղէր...»⁴⁴: Ի տարբերություն նրանց՝ արդեն Ղ. Ինճիճյանը խոսում է երկու լճերի մասին⁴⁵:

Օլիվիեի նկարագրած բերդն Ուրֆայի Մանյակի (կամ Մանեկա բերդ, Մանճըլը) բերդն է⁴⁶, որը կառուցված էր քաղաքի հարավային կողմում, մի բարձր ապառաժի վրա: Օլիվիեի այցելության ժամանակ բերդում ոչ մի ամբողջական շինություն չկար՝ չհաշված ամրոցը հսկող ենիչեբրինների համար կառուցված սրահը: Սոտ մեկ տասնամյակ անց Ղ. Ինճիճյանը գրում է, որ բերդում կան բերդակալներ և մոտ 60 տուն տաճիկ և մի մեծաշեն մզկիթ, որը նախկինում հայոց Սբ. Սարգիս եկեղեցին էր⁴⁷:

Շատ Ղ. Ինճիճյանի՝ Ուրֆայի բնակչության թիվը 12 հազար տուն էր, որոնցից հայ էին 2000 տունը: Օլիվիեն գտնում է, որ քաղաքի բնակչության թիվը կարող է լինել 30-40000 հոգի՝ կազմված արաբներից, քրդերից, թուրքերից, հայերից և հրեաներից: Առաջին երեքը, ըստ նրա, կազմում էին բնակչության 3/4-ը: Ուրֆայի ամբողջ բնակչության վերաբերյալ Ղ. Ինճիճյանի տվյալը փոքր-ինչ չափազանցված է թվում, իրականությանն ավելի մոտ է երևում հայ բնակչության թվաքանակը: Այսպիսով՝ հենվելով Օլիվիեի բերած տվյալների վրա՝ Ուրֆայի մահմեդական բնակչության թիվը հաշվում ենք 22500-30000 հոգի, մնացյալ 7500-10000 հոգին կազմում էին հայերը, ասորիները, հրեաները: Վերջին երեքի մեջ բացարձակ թվային գերակշռություն ունեին հայերը:

⁴³ Սահակեան Ա., նշվ. աշխ., էջ 592-593, Հիսայեան Յ., Եղեսիա, Պէրյուֆ, 1962, էջ 45:

⁴⁴ Տե՛ս Ներսես Շնորհալի, Երգեր, Եղեսիայի ողբը, Ե., 1982, էջ 96:

⁴⁵ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա, հ. Ա, էջ 332:

⁴⁶ Ամենայն հավանականությամբ բերդն իր անունը ստացել է իշխան «Մանեակ Սամուսատայ»-ի անունից, որը «ԺԱ. դարուն կը գրավէ Ուռհան (Եղեսիա)»:

Տե՛ս Հիսայեան Յ., Եղեսիա, էջ 76:

⁴⁷ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա, հ. Ա, էջ 331:

Առանձին վերցրած՝ հայերի թիվը գերակշռում էր նաև վերոհիշյալ մահմեդական ժողովուրդներից յուրաքանչյուրին⁴⁸։

Այսպիսով, XVIII դարավերջին և XIX դարասկզբին Ուրֆայում հայ բնակչության թիվը կազմում էր մոտ 8-10000 հոգի։ Քաղաքի հայոց առաջնորդանիստ եկեղեցին էր Սր. Աստվածածինը, որի մոտ, ըստ Օլիվիեի, բնակվում էր հայոց եպիսկոպոսը⁴⁹։ Ասորիները ևս ունեին մի եկեղեցի՝ Սր. Պետրոս (կամ Ար. Պողոս-Պետրոս) անունով։ Քաղաքի բազմաթիվ մզկիթներից մի քանիսը նախկինում եկեղեցիներ էին։ Ֆերիեր-Սովրեթի այն վկայությունը, թե Ուրֆայում քրիստոնյաներն ունեն բազմաթիվ եկեղեցիներ, ըստ երևույթին, չպետք է հասկանալ բուն քաղաքում, քանզի, իրոք, Ուրֆայի շրջակայքն հարուստ էր վանքերով, եկեղեցիներով և սրբավայր-աղոթատեղիներով⁵⁰։

АРМАН МАЛОЯН

Арм. Гос. Педагогический Университет

СВЕДЕНИЯ Г.-А. ОЛИВЬЕ О ГОРОДЕ УРФА
(последняя четверть XVIII века)

Р Е З Ю М Е

Одним из главных европейских источников по истории Востока последней четверти XVIII века являются путевые записи французского натуралиста, путешественника и дипломата Г.-А. Оливье. В 4-ом томе своих сочинений Г.-А. Оливье подробно рассказывает о городе Урфа. Он пишет, что Урфа занимала значительную территорию с населением приблизительно в 30-40 тыс. человек. Город был населен арабами, курдами, турками, армянами и евреями.

Согласно данным Оливье число мусульман Урфы составляло 22500-30000 человек, остальные 7500-10000 - были

⁴⁸ ըստ Սեն-Աարտենի՝ «Ուրֆայի բնակչության ամենամեծ մասը դեռևս բաղկացած է հայերից»։ Stéven Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. 1, Paris, 1818, p. 158.

⁴⁹ 1791-1831 թթ. Ուրֆայի հայոց առաջնորդն էր Պենկլի Դովհանես եպիսկոպոսը։ Տե՛ս Սահակեան Ա., նշվ. աշխ., էջ 267-268։

⁵⁰ Տե՛ս Իմբրեան Ղ., Աշխարհագրութիւն, Սասն Ա, հ. Ա, էջ 334-336, Գիսայեան Յ., Եղեպիա, էջ 42-48, Սահակեան Ա., նշվ. աշխ., էջ 130-131, 302-304, «Արաքս», Գիրք Բ, ՍՊԲ, 1889, էջ 20։

армяне, ассирийцы, евреи. Среди всех общин армяне являлись самой многочисленной. В конце XVIII - начале XIX вв. число армян в Урфе составляло от 8 до 10 тыс. человек.

Резиденцией епископа армянской общины была церковь Св. Богородицы, около которой, по свидетельству Оливье, и проживал Армянский епископ.

ԼՈՐ ԵՎ ԼՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

ՀԱՄԱԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ԳԳ ԳԱԱ ՊԻ

ԼՈՐԻ ԵՎ ՀԱՐԱՎԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՎԵՐԱԲՆԱԿՎԱԾ ԴԱՐԱԲԱՐՑԻ
ՀԱՅԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (XVIII դ. վերջ - XIX դ. ՍԿԻՋԲ)

XVIII դ. վերջերին Ղարաբաղի մելիքները մի կողմից պայքար մղելով արտաքին թշնամիների դեմ, մյուս կողմից՝ բանակցություններ վարելով ռուսական կառավարության հետ, քանիցս դիմում են ռուսական կառավարությանը¹ Ղարաբաղի խաների լուծը թոթափելու և Վրաստանին ենթակա հայկական տարածքներ՝ Ղազախ, Լոռի կամ այլ վայրեր² տեղափոխվելու թույլտվության ակնկալությամբ: Նրանց ոգեշնչում էին նաև Ռուսաստանի տիրապետության տակ ինքնուրույնություն ունենալու մասին արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի նամակները:

Ղարաբաղի հայերը, զրկված ռազմական օգնությունից, սկսեցին հեռանալ Ղարաբաղից (դրան մեծապես նպաստեցին նաև 1797-1798 թթ. սկսված սովը և ժանտախտը)՝ հատկապես դեպի Վրաստան: Ղարաբաղի երկու մելիքները՝ Աելիք-Շահնազարյան Աելիք-Ջուլմուղը և Աելիք-Բեգլարյան Աելիք-Ֆրեյդոնը (Աելիք-Մեջլումն արդեն մահացել էր, իսկ նրան ենթակա բնակչությունը հաստատվել էր Գանձակում)³, ցանկություն հայտնեցին իրենց հպատակներով Լոռիում հաստատվել, որոշեցին զնալ Ս. Պետերբուրգ՝ Պավել I կայսրին ներկայացնելով իրենց խնդրանքը հետևյալ կերպ. «...շնորհ արեք հրամայելու վրաց թագավորին, որ տա մեզ բնակության համար իր իշխանության տակ գտնվող անբնակ հողը, որ հնում Գուգարք էր կոչվում, իսկ այժմ՝

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան (այսուհետև՝ Կաթ. դիվան), թղթ. 240, վավ. 41, ք. 1, թղթ. 240, վավ. 147, Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.), сб. док. под ред. Нерсисяна М., В., т. IV, 1990, с. 501.

² Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 240, վավ. 163, թթ. 1-6:

³ Акты собранные Кавказской Археографической Комиссией (այսուհետև՝ АКАК), т. 1, Тифлис, 1866, с. 123; Кавказская старина, N 2, 1878, Тифлис, с. 35.

Ղազախ և տարածվում է մինչև Լոռու գավառը...»⁴: Հայաշատ Լոռին այդ ժամանակ մտնում էր Քարթլի-Կախեթի թագավորության մեջ: 1798 թ. փետրվարի 26-ին Պավել I կայսրը հրովարտակ արձակեց, որով հայտարարեց «Հանուն քրիստոնեության ազնիվ հայ ժողովրդին» Ռուսական կայսրության հովանու ներքո առնելու մասին⁵:

1799 թ. հունվարի 1-ին Հ. Արղությանը Պետերբուրգից Գրիգոր վարդապետին գրում է. «Վրաց բանն ընկալնուլն թագաւորին եւ պատրաստելն զամենայն ըստ խնդրոյ նորին նոյնպէս եւ մեկիջացն բան՝ լի-նիլն բարւոք»⁶:

1799 թ. հունիսի 2-ին հրապարակվում է Պավել I-ի հրովարտակը՝ ուղղված վրաց թագավոր Գեորգի XII-ին (1798-1800), որով հանձնարարվում է Ղարաբաղից եկած գաղթականներին Լոռիում բնակության վայրեր հատկացնել, «...տալիս ենք Լոռի ամրոցը և Լոռին, իրեն պատկանելիք բոլոր հողերով և այժմյան սահմաններով»⁷: Ապա նշվում էր, որ պետք է մեկիջներին վերաբերվել ինչպես արժանավոր հյուրերի, տալ ազատություն, համապատասխան եկամուտի աղբյուրներ, թույլատրել մեկիջներին պահպանել իրենց իրավունքներն ու արտոնությունները հպատակ հայերի վրա, որ նրանք ունեին իրենց նախկին հայրենիքում⁸. «...ցանկալի կլիներ, որ նա (հայոց հասարակությունը), ոչ այլ տեսակ կախումն ունենար Վրաստանից, բայց միայն վասալների տեսակով, վճարելով այնուամենայնիվ թեթև հարկ թագավորին»⁹:

⁴ Дубровин Н., Георгий XII, последний царь Грузии и присоединение ее к России, изд. 2-ое, СПб, 1897, с. 248-249, Լեօ, Սահմանալեւեր, Արեւիք, 1990, էջ 49-50:

⁵ Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Ե., 1981, էջ 143:

⁶ Սատենադարան, ձեռ. 2951, ք. 241:

⁷ Սատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 4, վավ. 9, ք. 1, թղթ. 240, վավ. 164ա, ք. 1-2, թղթ. 240, վավ. 164բ, ք. 1-2, թղթ. 240, վավ. 165., ք. 1-2, Кавказская старина, N 2, Тифлис, 1872, с. 35; Армяно-русские отношения в XVIII веке, т. 4, с. 527, 506:

⁸ Кавказская старина, с. 35-36.

⁹ АКАК, т. 2, 1868, с. 1149, Кавказская старина, с. 36.

Հրովարտակին հաջորդում է Պավել I-ի նամակը վրաց թագավոր Գեորգի XII-ին (1799 թ. հունիսի 3)՝ մեկիքներին հպատակ ժողովրդի հետ Լոռու գավառում վերաբնակվելու թույլտվության և նրանց տրվելիք արտոնությունների մասին: Մեկիքներին շնորհվեցին գերագանցության մեղալներ և նշանակվեց թոշակ¹⁰:

Վրաստանում այդ ժամանակ անկայուն իրավիճակ էր. շարունակվում էին կովկասյան լեռնականների հարձակումները և թագավորական տան անդամների երկպառակությունները: Գեորգի XII-ի եղբայր Ալեքսանդրը պարսիկների հետ գործում էր իր եղբոր և ռուսների դեմ: Գեորգի XII-ը նպաստավոր համարեց հայ մեկիքներին բնակության վայր հատկացնել Վրացական թագավորությանը միացված Ղազախ գավառում¹¹, քանի որ վերջիններս նրան դաշնակիցներ կլինեին: Հայկական այդ գավառի վերակենդանացումը հավասարապես ձեռնտու պետք է լիներ և հայ, և վրաց թագավորությանը¹² (Աղա-Մամադ խանի 1795 թ. ավերիչ արշավանքի հետևանքով Ղազախի բնակչությունը քավական նոսրացել էր): Ալեքսանդր I-ի 1801 թ. սեպտեմբերի 12-ի հռչակագրով Լոռին, Փամբակը, Ղազախն ու Շամշադինը Վրաստանի կազմում միավորվեցին Ռուսաստանին:

Գեորգ XII-ի հրովարտակի հիման վրա մեկիքներին տրվեցին հողեր, որոնց մասին վկայված են 1802 թ. մայիսի 8-ին կազմված Վրաստանը գավառների բաժանելու վավերաթղթերում: 1798 թ. Արցախում սկսված սովի ու ժանտախտի հետևանքով հաչենի գավառի ազգաբնակչության մի մասի հետ Վրաստան էր գաղթել նաև Գանձասարի կաթողիկոս Աարգիս Հասան-Ջալալյանը, ինչպես նաև Դիզակի Մեկիք-Ղահրամանն իր հպատակների հետ: Հետագայում մեկիքները ձեռք բերեցին այլ հողեր և հպատակներ¹³, քանի որ հայ բնակչության այն մա-

¹⁰ Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարի վերջին և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 179:

¹¹ Աղայան Ծ., նշվ. աշխ., էջ 143, Բարխուդարեան Վ., Եկաեան Ջ., էջեր հայ գաղթավայրերի պատմության, Ե., 1996, էջ 175-176:

¹² Չորանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխարարությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, էջմիածին, 2006, էջ 388:

¹³ АКАК, т. 1, с. 1158-1163, т. 2, с. 205, Լալայան Ե., Երկեր, հ. 2, 1988, էջ 232, Присоединение Восточной Армении к России, (далее присоединение...), сб. док., ред. Агаян Ц., т. 1, (1801-1813), Е., 1972, с. 37-39.

սը, որը Ղարաբաղից եկել, բայց հաստատվել էր Երևանի խանութունում, գաղթում էր Հյուսիսային Հայաստան՝ մելիքների մոտ: Մելիքներից ամենանշանավորը Մելիք-Արվն էր, ով այստեղ շարունակեց պայքարը պարսիկ խաների դեմ՝ իրականացնելով նաև քարավանապետի պաշտոնը և Աղբյուրփի գյուղի սահմանագծի պաշտպանությունը¹⁴: Ախալցխայի, Կարսի փաշայություններն անգամ նրա արշավանքների ասպարեզ էին դառնում, ուստի գեներալ-մայոր Ի. Լազարևը լիազորվեց գեներալ Կ. Կնորինգից՝ խստությամբ վարվելու Մելիք-Արվի հետ¹⁵: Ասկայն նա ռեալ ուժ էր Վրաստանի համար, քանի որ պետության սահմանները պաշտպանում էր թշնամիներից:

Հյուսիսային Հայաստան և Վրաստանին ենթակա շրջաններ գաղթած Ղարաբաղի հայերը գերծ չմնացին ճնշումներից: Մելիքները ձգտում էին Վրաստանի սահմաններում պահպանել իրենց նախկին իրավունքները, օրենքներն ու սովորույթները¹⁶: Բայց հրովարտակի պայմանները խախտվեցին. նախ Հերակլ II, ապա Գեորգի թագավորները սահմանափակվեցին պայմանագրի լոկ որոշ կետերի իրագործմամբ¹⁷, և մելիքները հաճախակի հակասություններ ունենալով վրաց իշխանների հետ, մտածում էին վերադառնալ Ղարաբաղ: Կոպտորեն խախտվում էին նրանց հողատիրական իրավունքները: Մելիքները պարզևատրումների ժամանակ ռուսական ղեկավար մարմիններին էին ներկայացվում որպես երկրորդական ներկայացուցիչներ¹⁸: Վրաստանում գլխավոր հրամանատար, գեներալ Պ. Յիցիանովը 1804 թ. հունվարի 20-ի իր ռուսական կայսրին ուղղված զեկուցագրում նշում էր, որ հայ մելիքների պարզևատրումը կարող է վիրավորել վրաց իշխաններ-

¹⁴ Հայկական աղբյուրները Աղա Մուհամմեդ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797), աշխ.՝ Տիտանյան Ռ., Ե., 1981, էջ 97, Գրիգորյան Վ., Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամակները Ե. Շահամիրյանին ու նրա հարազատներին, էջմիածին, 2003, թիվ ԺԲ, էջ 71, Մաղայան Վ., Դաղթ-խաչեն, Ե., 1999, էջ 69:

¹⁵ АКАК, т. 1, с. 683.

¹⁶ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987, էջ 533:

¹⁷ Кавказская старья, с. 36.

¹⁸ Присоединение..., с. 202.

րին և ամեն մի համեմատություն՝ վրաց և հայ իշխանների միջև, վիրավորական պետք է համարել¹⁹:

Ծանր էր հատկապես մելիքների հպատակ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: «Վրաց իշխանները ստիպում էին նրանց, որ ճորտ գրվեն, որպեսզի փոխարենը կերակրեն նրանց»²⁰: Գաղթականների մի մասն իրենց ապրուստը հոգում էին անտառանյութ արտահանելով հարևան Կարսի փաշայություն, որտեղից փոխարենը ներմուծում էին հաց, որը վերավաճառում էին Վրաստանում: 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով կապերը Կարսի հետ ընդհատվեցին, և նրանք զրկվեցին իրենց եկամտի հիմնական աղբյուրից՝ հայտնվելով տնտեսական ծանր վիճակում, ինչի պատճառով Կովկասի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար և կառավարչապետ Ի. Գուրովիչը կարգադրեց Վրաստանի կառավարիչ Պ. Լիտվինովին՝ Երևանի խանությունից այստեղ եկած դարաբաղցիներին վերաբնակեցնել Ելիզավետպոլի գավառում²¹: Այս տեղաշարժերը, ինչպես նաև ռազմական գործողությունները, պարսկական զորաբանակների ասպատակություններն ավելի էին հյուժում տարագիր ազգաբնակչությանը, դրանց գումարվում էին վրաց կալվածատերերի, գյուղական մելիքների և այլ պաշտոնատար անձանց չարաշահումները, պետական հարկերն ու տուրքերը: Բորչալուի և Ղազախի բնակիչները պետք է նաև գյուղացիական կարգախմբեր տրամադրեին Ալավերդու և Ախթալայի լեռնագործարաններին՝ որպես բանվորական ուժ և լծկաններ՝ զորքերին պարեն հասցնելու համար, ինչն առաջացրեց գյուղացիների դժգոհությունը: Ղարաբաղցի վերաբնակիչների համար պատուհաս էին դարձել Փամբակի մահմեդականները, որոնք դժգոհելով ռուսական կառավարությունից, խմբերով փախչում էին Երևանի խանություն՝ իրենց հետ տանելով այդ տարածքների հայերին պատկանող անասունները:

¹⁹ АКАК, т. 2, с. 204-208, Кавказская старина, с. 37.

²⁰ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 533:

²¹ Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի 1-ին 30-ամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, էջ 38-39:

Մեկիքները քանիցս խնդրանքներով դիմում էին Անդրկովկասում ռուսական կառավարության ներկայացուցիչներին՝ իրենց իրավունքների պահպանման համար: 1803 թ. մարտին գլխավոր հրամանատար գեներալ Պ. Ցիցիանովին գրած խնդրագրում Մեկիք-Ջումշուղը հորդորում էր փոխհատուցել Լոռի ամրոցի վրա կատարած իր ծախսերը, նշելով, որ հողերից ստացվող եկամուտներն ու գյուղացիներից գանձվող հարկերը երկու տարի հավաքել են Փամբակի աղալարները. «...Գեորգին մեզ տվեց Լոռու գավառն իրեն պատկանող մարդկանցով և հողերով ...Բայց իմ իրավունքները կրճատվում են Փամբակի աղալարների կողմից...»²²: Ցիցիանովն, ի պատասխան Մեկիք-Ջումշուղի խնդրանքների, 1803 թ. փետրվարի 19-ին գրում է, որ կայսեր կողմից տրված շնորհագրում նշվում է միայն այն հողի մասին, որը մեկիքը խնդրել էր, այսինքն՝ Ղազախի, այլ ոչ թե Լոռվա: Իսկ երբ Մեկիք-Ջումշուղը, ելնելով ծանր տնտեսական իրավիճակից, որոշում է վաճառել Լոռու գավառը, Ցիցիանովն իր զեկուցագրում կայսրին գրում է. «...այնքանով, որ այդ հողը (Լոռին) Գեորգիից տրվել է Մեկիք-Ջումշուղին ոչ որպես հավերժ, այլ մինչև Շամիր-աղայի (Շ. Շահամիրյանի) որդու կամ թոռան վերադարձը, որին այդ հողը նույն թագավորից տրվել էր ...ապա Մեկիք - Ջումշուղն իրավունք չունի նշված հողը վաճառելու...»²³: (Գեորգի XII-ի 1790 թ. համադաշնագրով Լոռու գավառը տրվել էր Շ. Շահամիրյանին՝ ժառանգական տնօրինության)²⁴:

Ֆինանսների նախարարը 1805 թ. մայիսի 22-ին հաղորդեց Կովկասի գլխավոր հրամանատարությանը, որ. «...Շամիր աղայի ոչ որդին, ոչ թոռը ...մինչև այժմ չեն հայտնվել ...ուստի առաջարկում եմ քաղաքացիական լքսպեդիցիային, Չերոխ Մեծության հրամանի ուժով իրականացնել Մեկիք - Ջումշուղի կողմից Վրացական լեռնային ղեկավարությանը վաճառվող հողի գնումը»²⁵: Կովկասի լեռնային մասի կառավարիչ կոմս Ա. Մուսին-Պուշկինն այն գնահատեց 6000 ռուբլի²⁶: Լոռին

²² Присоединение..., т. 1, с. 161-162.

²³ АКАК, т. 2, с. 212, Кавказская старина, с. 37.

²⁴ Մատենադարան, ձեռ. 2951, ք. 161բ, Չորանյան Պ., Հնդկահայ գաղթօջախի պատմությունից, «ՊԲՀ», N 1, 1988, էջ 183:

²⁵ АКАК, т. 2, с. 214, Присоединение..., с. 188, 320- 321.

²⁶ АКАК, т. 2, с. 205.

վաճառելուց հետո 1805 թ. օգոստոսին Մելիք-Չումշուղը վերաբնակվեց Գանձակում²⁷:

Նման ժանր կացության մեջ էր նաև Մելիք-Արովը, քանի որ Յերակի մահից հետո բազմաթիվ սեփականատերեր հայտնվել և հավանություններ էին ներկայացնում նրան տրամադրված հողերի նկատմամբ²⁸: Մելիքները Մինաս Լազարյանին նամակներով նկարագրում էին իրենց անմխիթար վիճակը²⁹: Մելիք-Արովը 1807 թ. նոյեմբերի 23-ի նամակով Լազարյանին գրում է. «Ես շատ անգամ խնդրել եմ կոմսին, որ թույլ տա մեզ... տեղափոխվել մեր հայրենիքը՝ Ղարաբաղ: Բայց նա չհոժարեցավ, պատճառելով, որ եթե մենք թողնելու լինենք այդ երկիրը (Վրաստանը - Յ. Ա.), այդ ժամանակ Բոլնիսը կոչնչանա... Բայց երբ որ մենք ասում ենք, որովհետև Յերակը թագավորը շնորհել է մեզ Բոլնիսն իր բոլոր հողերով, ջրերով, անտառներով և այլ պատկանելիքներով, ուրեմն խնդրում ենք ձեզ, որ այդ բոլորը հաստատեք մեր անունով. Այն ժամանակ կոմսը... պատասխանում է, ասելով՝ ես չեմ կարող ուրիշների կալվածքները տալ ձեզ...»³⁰:

Մելիք-Արովի հարաբերությունները վրաց ազնվականների հետ զնալով սրվեցին, իսկ նրա մահից հետո մելիքների դերը Վրաստանում նվազեց: Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին 1814 թ. հոկտեմբերի 23-ին Թիֆլիսից Յ. Լազարյանին գրած նամակում վերհիշում է Ղարաբաղի մելիքների անցյալ փառքը, ապա՝ ներկայացնում նրանց ժառանգների ներկա ողբալի վիճակը³¹: Նրանց իրավունքներն աստիճանաբար սահմանափակվեցին, ապա՝ գրեթե վերացվեցին: Երբ Մելիք-Արովի մահից հետո նրա որդին՝ Մանաս բեկը, գլխավորի հրամանատար զեն. Ա. Տորմասովին խնդրեց հաստատել իր ժառանգական իրավունքները Բոլնիսի բնակիչների նկատմամբ, նրան պա-

²⁷ Кавказская старина, с. 36-37, 1924.

²⁸ Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 355, թթ. 1-6:

²⁹ АКАК, т. 1, с. 39-40, 123-124, 883., Присоединение..., т. 1, с. 39-40, т. 2, с. 51, 52.

³⁰ Նամակի բնագիրը չկա, այն ուսերենից թարգմանվել և Ա. Երիցյանի կողմից տպագրվել է "Кавказская старина" ամսագրի 1872 թ. դեկտեմբեր ամսվա 2-րդ համարում:

³¹ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 16ա, վավ. 110, թթ. 1-

տասխանեցին. թե Բուլնիսը և դրա բնակիչները պատկանում են միայն թագավորին³²: Մելիք-Բեգլարյանների ժառանգներից և հպատակներից Վրաստանում մնացին քչերը՝ հիմնականում Դաղեթ-Խաչեն ու Բուլնիս-Խաչեն գյուղերում³³:

Ղարաբաղի հայերը գաղթելով Լոռի, նպաստեցին տնտեսական կյանքի զարգացմանը, իրենց ռազմական ուժերով զորավիգ եղան Վրաստանի սահմանների անվտանգության ապահովմանը, բայց ըստ արժանվույն չգնահատվեցին ոչ վրաց իշխանավորների և ոչ էլ ռուս չինովնիկների կողմից: 1806 թ. դեկտեմբերի 2-ին Մինաս Լազարյանին գրած նամակում Մելիք-Ջումշուղը պատմում է Գանձակի, Շիրվանի, Երևանի և այլ տարածքների պաշտպանության գործում հայերի խաղացած դերի և նրանցից ոչ մեկին կայսերական պարգևների չարժանանալու մասին: Եվ երբ Լազարյանը հարցնում է այդ ամենի պատճառների մասին, մելիքը պատասխանում է, որ «...Ցիցիանովի մեջ արմատավորված չարությունը հայ ժողովրդի նկատմամբ թույլ չէր տալիս նրան հաղորդել կայսերը մեր ջանքերն ու ծառայելու ձգտումը, որ մենք ցույց տվեցինք...»³⁴: Մելիքները բազմիցս ապացուցել էին ռուսական կառավարության հանդեպ ունեցած իրենց նվիրվածությունը: Գեներալ-մայոր Ներոլսինը և գեդապետ Կարյազինը բարձր են գնահատել նրանց հավատարմությունը ռուսական տերությանը և այդ մասին զեկուցել են գեներալ-մայոր Նեսվետաևին³⁵: Հայտնի է Ցիցիանովի 1803 թ. մայիսի 9-ի Մելիք-Ջումշուղին ուղղված գրությունը՝ ռուսաց կառավարությանը մատուցած հավատարիմ ծառայության դիմաց նրան կայսեր կողմից արժաթյա սրով պարգևատրելու մասին³⁶: Այս առումով հիշարժան են նաև վրաց արքայազն Ալեքսանդրի դիմումները Մելիք-Արովին՝

³² АКАК, т. 4, с. 53, Кавказская старина, с. 38-39.

³³ Մաղալյան Ա., Տոհմածառերի ուսումնասիրության նշանակությունը պատմական ժողովրդագրության բնագավառում, «Հայոց պատմության հարցեր», թիվ 5, Ե., 2005, էջ 42:

³⁴ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 98, վավ. 230ա, թ. 1-3, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 337, էջ 1-4, թղթ. 154, վավ. 244, թթ. 1-4:

³⁵ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 98, վավ. 230ա, թ. 1-3:

³⁶ Նույն տեղում, թղթ. 240, վավ. 168:

միանալու իրեն, բայց վերջինս հավատարիմ մնաց վրացական կառավարությանը³⁷:

Այսպիսով, Ղարաբաղի հայ բնակչության մի մասը, փրկվելով պարսիկ խանների հալածանքներից, գաղթեցին Վաստանի ենթակա հայկական տարածք, մասնավորապես՝ Ղազախ-Բորչալու, բայց չկարողանալով այստեղ պահպանել իրենց նախկին իրավունքներն ու սովորույթները, ինչպես նաև չունենալով կյանքի ու գույքի ապահովություն և ենթարկվելով վրացական ազնվականության տնտեսական և այլ բնույթի ճնշումների, նրանց մեծ մասը վերադարձավ Ղարաբաղ, մի մասն էլ հեռացավ Շամշադին³⁸, ինչպես նաև այլ շրջաններ:

*АСМИК АМИРАЖАНИЯ
ИИ НАН.РА*

**СТАТУС КАРАБАХСКИХ АРМЯН ПЕРЕСЕЛЕННЫХ
В ЛОРИ И НА ПРИЛЕГАЮЩИЕ ТЕРРИТОРИИ
(КОНЕЦ XVIII - НАЧАЛО XIX вв.)**

РЕЗЮМЕ

Неустойчивая политическая и социальная жизнь в Карабахе, а также конфессиональные гонения и угнетения коренного населения чужестранными завоевателями стали причиной того, что армянский народ Карабаха, со своими меликами были вынуждены оставить свою родину и поселиться в Грузии, точнее в Лори. По указу русского царя Павла I от 2 июня 1799 г. разрешается Карабахским меликам со своими подданными поселиться в Грузии. В основе указа то, что грузинский царь Георгий XII дает меликам в потомственное пользование провинцию Лори.

Но не сумев сохранить здесь свои обычаи и права, а также не имея обеспеченную жизнь и имущество, подвергаясь экономическим эксплуатациям со стороны грузинского правительства, они снова вернулись в Карабах и отделились в другие места Закавказья.

³⁷ АКАК, т. 1, с. 134, 320, 637, Кавказская старина, N 2, с. 36.

³⁸ Մաղախան Վ., նշվ. աշխ., էջ 77:

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ
Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

XIX դ. 2-րդ կեսին Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայության սոցիալ-տնտեսական, քաղաքական-իրավական դրությունը գնալով ավելի ու ավելի էր վատանում: Սուլթանական կառավարությունը բարենորոգումներ հռչակելիս թեև հայտարարել էր բոլոր ազգերի իրավահավասարություն, քրիստոնյաների անձի ու գույքի պաշտպանություն, բայց այդ հայտարարությունը մնացել էր թղթի վրա: Ո՛չ 1839 թ. հաթթը շերիֆը, ո՛չ 1856 թ. հաթթը հուժմայունը չփոխեցին դրությունը: Հայը մշտապես ենթարկվում էր բռնությունների ու հարստահարությունների, ոտնահարվում էին նրա արժանապատվությունը և նվիրական զգացմունքները: «Սխտեմատիկ սպանություն և թալան, խմբական բռնի կրոնափոխություն, իրավազրկություն, լլկանք, առևանգում, բռնաբարություն... հարստահարություն, զազանություններ և ամեն տեսակ անլուր բարբարոսություններ ոչ թե անհատական բացառիկ երևույթներ են եղել Տաճկաստանում, այլ ամենօրյա համաճարակներ»¹, - գրում է Գ. Աղանյանցը: Առավել ծայրահեղ վիճակում էր գտնվում գավառահայությունը, գավառներում էր «խսկական ռայան, նա տգետ ու խավար էր մնում, իրավագուրկ մի նախիր էր, տնտեսապես քայքայված, մշտական հարստահարությունների մատնված»²: Այդ ամենը այնքան էլ չէր հետաքրքրում Կ. Պոլսում ապրող մեծահարուստներին՝ «ազգի ջոջերին», քանի որ «բուն ժողովուրդը, ազգին ընդհանրութիւնը, գաւառական տարրը, անոր կայութիւնը, ցաւալի պարագաները, դարմանի եղանակները... մայրաքաղաքը միտքէն հեռու էին»³: Նույնիսկ Սահմանադրությամբ գավառը շատ թույլ էր ներկայացված Ազգային ժողովում: Վերջինիս երկար տարիների աշխատանքը հիմնականում վերաբերում էր սահմանադրության, ներքին

¹ Ղիւան հայոց պատմութեան, հ. ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ Ա:

² Լեո, Երկիր ժողովածու, հ. 6, Ե., 1987, էջ 509:

³ Օրմանյան Ա., Ազգապատում, Պեյրուք, 1961, հ. Գ, էջ 4181:

վարչական հարցերին: Գավառների դրությունը Ազգային ժողովում առանձին ուշադրության չէր արժանանում, նրան հուզում էր ոչ թե գավառահայության ճակատագիրը, այլ Կ. Պոլսի «մանրախույզ խնդիրները»⁴:

Գավառների ծանր վիճակի մասին բողոքագրեր, հանրագրեր հղվում էին պատրիարքարան, Բ. Դուռ: Այս հարցում առավել լայն գործունեություն ծավալեցին Մկրտիչ Խրիմյանը և նրա աշակերտ Գարեգին Սրվանձտյանցը, որոնց հղած բողոքագրերի մի մասը XIX դ. 60-ականներին լույս տեսան Կ. Պոլսի պարբերականներում և մեծ աղմուկ առաջացրին պոլսահայության և կառավարական շրջանակներում: Որոշ դեպքեր էլ (Չովհաննավանքի, Տարոնի մյուս վանքերի կողպտման ահազանգերը, Սլիքան գյուղի սրբապղծությունը)⁵ այնպիսի իրարանցում առաջացրին, որ սուլթանական կառավարությունը ստիպված էր դատ ու դատաստանի ներկայացում կազմակերպել Տարոնում:

Չնայած անընդհատ շարունակվող բողոքներին, գավառական հարստահարությունների հարցը Ազգային ժողովում քննարկման նյութ դարձավ ավելի ուշ, 1869 թ. Կ. Պոլսի պատրիարք ընտրված Մկրտիչ Խրիմյանի ջանքերով: Նա հատուկ ուշադրություն դարձրեց Ազգային սահմանադրության, և դրանով իսկ գավառահայության հանիրավի ոտնահարված իրավունքների վերանայման հարցի վրա: Խրիմյանն այս հարցով խոստացավ զբաղվել իր պատրիարքական գործունեության հենց սկզբից՝ ուխտելով երեսփոխանների առաջ. «Իմ վրաս Պոլսոյ Պատրիարքի պես մի՛ նայիք, ես Հայաստանի ցաւոց պատկերն եմ, չգիտեմ թէ իմ նախորդքս ի՞նչ կերպով միջնորդած են Տերութեան այս ցաւոց դարմանը խնդրելու համար, բայց ես ազդու միջնորդութիւն մը պիտի ընեմ»⁶: Եվ, իրո՞ք, Խրիմյանն իր պատրիարքության քառամյա շրջանում (1869-1873 թթ.) երբեք չմոռացավ այդ մասին, անգամ հետագայում քննադատության արժանացավ Ա. Օրմանյանի կողմից. «Խրի-

⁴ Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց. Կյանքը և գործունեությունը, Ե., 1979, էջ 144:

⁵ Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 178:

⁶ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 414:

մեանի միտքին մեջ սեւեռեալ զաղափար մըն էր գաւառացւոց կացութեան բարելաւութիւնը, մինչեւ իսկ համարձակ կրնանք ըսել, թե այդ նպատակով միայն պատրիարքութեան լուծին ներքեւ մտնել հանձնառու եղած էր ինքն»⁷:

Պատրիարք Խրիմյանը մտադիր էր Սահմանադրութեան վերաքննութիւնից հետո ստեղծել Գավառական մասնաժողով, որը պետք է զբաղվեր գավառահայության խնդիրներով: Սակայն Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը ձգձգվում էր, ուստի գավառական հարստահարութիւնների հարցում հարկավոր էր այլ միջոց ձեռնարկել: Գավառական հարստահարութեան խնդիրը Ազգային ժողովում քննարկման դրվեց Խրիմյանի վերոհիշյալ ելույթից մեկ տարի անց: Դրա համար առիթ դարձավ գավառացի ժողովրդի հղած հանրագիրը Ազգային ժողովին: Վեց հանրագրերում (բոլորն էլ նույնիմաստ) բողոքում էին գործադրվող հարստահարութիւնների դեմ և խնդրում էին զորավոր դարձան գտնել հարստահարութիւններից ազատվելու համար:

Երեսփոխաններից շատերը զգում էին խնդրի կարևորութիւնը՝ նշելով, որ «...հարստահարութեանց խնդիրը ինքնին կենաց և մահու խնդիր մըն է, հանրական խնդիր մը»⁸, իսկ Երեմիա եպս. Տեկանցը խնդրում էր արագացնել հարցի քննութիւնը, լուծում տալ, «եթե ոչ, դժբաղդ է հայութիւն, եւ միշտ դժբաղդ պիտի մնայ այսօր, վաղ, եւ զուցէ յաւիտեան»⁹:

1870 թ. նոյեմբերի 21-ին Ազգային ժողովը որոշում ընդունեց ստեղծել Գավառական հանձնախումբ, որի պաշտոնը պետք է լիներ. քննել գավառներում կատարված հարստահարութիւնների, զեղծումների ներքին ու արտաքին պատճառները, միջոցներ գտնել դրանց վերացման մասին և աշխատանքի արդյունքը տեղեկագրել Ընդհանուր ժողովին: 1870 թ. նոյեմբերի 27-ին կատարվեց հանձնախմբի անդամների ընտրութիւնը, ընտրվեցին 9 անդամներ, իսկ տասներորդ անդամի ընտրութիւնն իրականացավ հաջորդ նիստին՝ դեկտեմբերի 4-ին: Գավառական հանձնախումբն իր աշխատանքներն սկսեց դեկտեմբերի

⁷ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4285:

⁸ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1870-1874, էջ 131:

⁹ Նույն տեղում, էջ 153:

14-ին՝ Ներսես եպս. Վարժապետյանի նախագահությամբ և Ստեփան Փափազյանի ատենադպրությամբ: Հանձնախումբը հատուկ շրջաբերականներ հղեց բոլոր առաջնորդներին, որ վերջիններս, զգուշանալով չափազանցություններից, մանրամասն ու ստույգ տեղեկություններ տան իրենց գավառների վիճակի ու ցավերի մասին:

Նշենք, որ թե՛ հանձնախումբը, թե՛ պատրիարքն ու Ազգային ժողովը դեռևս սին հույսեր ունեին կենտրոնական իշխանության, Բ. Դռան արդարադատության նկատմամբ և մտածում էին տիրող հարստահարությունները վերացնել օրինական ճանապարհով:

Պատահական չէր, որ պատրիարքը կարծում էր, թե կառավարությունը կատարել է իր պարտքը, ընդունել է օրինագիծ. «Կիլիկիան էի օրենսդրութեան օրէն օրինագիրք մը շինեց, տեսքուր դրա անունը»¹⁰, հիմա հերթը իրենցն է, որ պահանջ ներկայացնեն. խնդրեն «բարեխնամ տերութեանը՝ աջակցելու, որ. «հաւասարութեան օրէնքը՝ որ կայ արդէն, եւ գաւառներու մեջ չէ լսված, գործադրուի»¹¹: Այս հարցում մեծ աշխատանք ունեն անելու նաև պարբերականները, հոգևոր առաջնորդները, որոնք պետք է գավառահայությանը տեղյակ պահեն իրենց իրավունքների մասին: Այդ առումով կարևորվում էր նաև վիճակին քաջատեղյակ, բանիմաց ու հմուտ հոգևոր առաջնորդների ուղարկումը գավառներ:

Ընտրված հանձնախումբը աշխատեց շուրջ մեկ տարի, գումարեց 24 միստ, կազմեց մի ընդարձակ տեղեկագիր, որը Ազգային ժողով բերվեց 1871 թ. սեպտեմբերի 24-ին և ընթերցվեց հոկտեմբերի 8-ին: Տեղեկագիրը կազմվել էր պատրիարքարանի քսան տարվա արձանագրությունների, Բ. Դուռ մատուցած կարևոր թագրիրների, առաջնորդներից ստացած տեղեկությունների հիման վրա: Տեղեկագիրը կազմված էր երկու մասից: Առաջին մասը կրում էր «Քննութիւն գաւառացի ազգայնոց վիճակի» խորագիրը և, պարունակելով հարստահարությունների ողջ տեղեկատվությունը, նկարագրում էր գավառների անմխիթար վիճակը, կատարված զեղծումները: Տեղեկագրում նշված

¹⁰ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1870-1874, էջ 161:

¹¹ Նույն տեղում, էջ 162:

զեղծումները բաժանված էին չորս խմբի: Ձեղծումների առաջին շարքը վերաբերում էր արքունական տրոց վերաբերյալ զեղծումներին, զեղծումներ, որ կատարվել էին պետական հարկահավաքների կողմից զինվորական տուրքի (բեղելը ասկերի), կալվածական տուրքի (եմլաք և թեմթյու), վարձակալության, փոխատվության (վաշխ) և այլ բնագավառներում: Ձեղծումների երկրորդ խումբը վերաբերում էր կառավարության պաշտոնյաների՝ մյութեսարիֆի, գայմագամի, մյուղիի, մյուֆթիի, գավթիների կատարած զեղծումներին: Մեծ տեղ էր հատկացված նաև ոչ մահմեդականների վկայությունը դատարանում չընդունելու փաստին և մասնավոր հարստահարություններին: Վերջիններս ամենաշատն էին (թվով 210), որոնք վերաբերում էին առանձին գավառներում կատարված սպանություններին, վայրագություններին: Հատկանշական է այն փաստը, որ զեղծումների մեծ մասը կատարվել էր էրզրումի և Դիարբեքիի վիլայեթներում (օրինակ՝ մասնավոր հարստահարությունների 210 դեպքերից 79-ը կատարվել էին էրզրումում):

Այքի անցկացնելով պատրիարքարանի քսան տարվա արձանագրությունների վկայությունը՝ հանձնաժողովը պարզեց, որ զեղծումների փաստերը համապատասխանում են իրականությանը, որ այդ դեպքերի վերաբերյալ Բ. Դուռ հղված բողոքներից մասամբ լուծվել են այն խնդիրները, որոնք կրոնական բնույթ են ունեցել, իսկ գավառացիների ցավերին որպես դարձան հղված հրամանագրերն էլ խրատական բնույթի են: Պատրիարքարանի արձանագրություններից պարզ է դառնում, որ տարբեր գավառներից թվով 529 թագրիրներ են ստացվել հարստահարությունների վերաբերյալ: Այդ թագրիրներում կոնկրետ նշված էր, թե որ գավառից ինչ բնույթի հարստահարության բողոքագիր է ուղարկվել պատրիարքարան: Տեղեկագրում թեև կոնկրետ նշված էին հարստահարված գավառը, զեղծումների տեսակը, բայց հանձնաժողովը խուսափել էր նշել հարստահարողների անունները՝ վախենալով գավառահայության հետագա ճակատագրի համար, չնայած խոստանում էր դրանք գրանցել կառավարությանը մատուցվելիք տեղեկագրի մեջ: Հանձնաժողովի կազմած տեղեկագրում կային նաև թագրիրներ, որոնք վերաբերում էին ընդհանուր հարստահարություններին:

Եթե տեղեկագրի առաջին մասը ուղղակի փաստում էր կատարված հարստահարությունները, ապա երկրորդ մասն իր մեջ պարունակում էր հանձնախմբի դիտողություններն ու առաջարկները՝ «Դարման գաւառացի ազգայնոց վիճակի» խորագրով: Տեղեկագրում առանձնացված էին բոլոր զեղծումների վերացման համար նախատեսված դարմանները¹² (զինվորական տուրքի փոխարեն զինվոր տալ, տուրքերի գանձումը կատարել կառավարական պաշտոնյաների միջոցով, ընդունել ոչ մահմեդականների վկայությունը, նշանակել գործին տեղյակ պաշտոնյաներ և այլն):

Ազգային ժողովի նիստերում երկար վիճաբանություններ եղան զինվորագրության հարցի շուրջ: Տեղեկագրի հեղինակները նշում էին, որ զինվորական տուրքի՝ «բեղելը ասկերիեի» փոխարեն պետք է զինվոր տալ, ինչպես ցուցում է բարեկարգությունների հրովարտակը, ապացուցել, որ «մենք ալ պատվո և քաղաքացիութեան զգացումն ունինք, և հայրենյաց և տերութեան համար արյուն թափելն չենք խորշիր մեր մահմեդական հայրենակեաց հետ»¹³: Երեսփոխանները կողմ և դեմ կարծիքներ հայտնեցին այս հարցի շուրջ: Շատերը գտնում էին, որ կարևոր է զինվորագրության հարցը: Զինվոր տալը ունի նյութական օգուտ (զենքը նաև կյանքի և պաշտպանության միջոց է): Կա նաև խնդրի բարոյական կողմը, հայը պիտի զգա, որ ինքն է երկրի տերը, ինքը ևս համահավասար իրավունք ունի «յուր կեանքը, ընտանիքը, պատիվը, ինչքը պաշտպանելու»¹⁴: Մի խումբ երեսփոխաններ էլ (է. Պեկյան, Մ. Աղաբեկյան և ուրիշներ) գտնում էին, որ հայությունը պատրաստ չէ զինվոր տալու, բացի այդ, միգրացե դա ավելի վատ անդրադառնա հայերի դրության վրա: Կար նաև հետևյալ հանգամանքը, որ հնարավոր է՝ իրենք ընդունեն զինվորատվության որոշում, բայց ժողովուրդը գերադասի տուրք տալ:

Ամփոփելով բոլոր ելույթները՝ պատրիարքը ընդգծում է, որ զինվորագրության խնդիրը շատ կարևոր է, քանի որ «երբ քուրդ ու տաճիկ տեսնեն, թե քրիստոնյան ալ մեջքը սուր կախեր և իրենց նման զին-

¹² Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1870-1874, էջ 479-482:

¹³ Նույն տեղում, էջ 479:

¹⁴ Նույն տեղում, էջ 502:

վոր եղեր է, բուրոսովին պիտի փոխվին զանի իրենց հաւասար տեսնելով»¹⁵, բայց և հասկանում է, որ ժողովուրդը պատրաստ չէ դրան, ուստի մինչ այդ հարցը հաստատելը, պետք է ժողովրդի շրջանում քարոզչական աշխատանք տանել այդ ուղղությամբ, հատկապես լրագրների միջոցով, և ի վերջո, այս հարցին տալ դրական պատասխան: Ձինվորագրության խնդիրը քննարկվեց նաև հայ պարբերականների էջերում: Կային թերթեր, որոնք դեմ էին զինվոր տալուն՝ նշելով, որ հայի համար ավելի թանկ է իր արյունը, բայց սխալվում էին, քանի որ, ինչպես Րաֆֆին է գրում «զինյալ քրդի դեմ միայն զինյալ մարդը կարող է պահպանել յուր կայքը, յուր ընտանիքը, յուր պատիվը և այլն, եթե ոչ՝ քրդին արքունի ֆիրմաններով կարգ-կանոնի մեջ պահելը անկարելի է»¹⁶:

Տեղեկագրի հեղինակները մեծ աշխատանք էին կատարել, հերթը Ազգային ժողովի երեսփոխաններին էր, որոնք պետք է արագ վճռեին և համապատասխան որոշում տային, բայց վիճաբանությունները բավականին երկար ձգձգվեցին: 1871 թ. նոյեմբերի 12-ին որոշվեց, որ տեղեկագիրը հանձնվի Քաղաքական ժողովին, որ վերջինս այն վերջնական տեսքի բերի, թարգմանի՝ Մեծ Եպարթոս Ալի փաշային հանձնելու համար: Չնայած խնդիրը հրատապ էր, բայց տեղեկագիրը Բ. Դռանը հանձնելը ձգձգվեց, դեռ ավելին, Քաղաքական ժողովի կազմած տեղեկագիրը նկատի առնվեց Ազգային ժողովում խրիմյանի և Ե. Տևկանցի բուռն թախանձանքներից հետո: Ե. Տևկանցը պնդում էր. «Մեր եղբարք, մեր արեւակցիք զաւառաց մեջ հանապազօր կը չարչարին, կը տառապին, կը մեռնին արիւնարբու աւազակաց ձեռօք, կենաց խնդիր է այն... Ամեն երեսփոխան, որ ազգասիրական գործ կատարել կուզէ, թող այս կենսական խնդրոյն համար թափէ իր ճարտարախօսութիւնը, խելքը, միտքն եւ բոլոր իմաստութիւնը»¹⁷: Ե. Տևկանցը նաև հորդորում էր, որ տվյալ պահին ամենակարևորը զա-վառական հարստահարությունների խնդիրն է, իսկ, եթե կան այլ կարևոր խնդիրներ, ապա դրանք «իրենց նշանակութիւն կը կորսնցնեն ժողովրդի տա-

¹⁵ Նույն տեղում, էջ 505:

¹⁶ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Ե., 1991, էջ 440:

¹⁷ Ատենագրութիւնը Ազգային ժողովոյ, 1870-1874, էջ 589:

ռապանաց խնդրոյն քով...»¹⁸: Ի վերջո 1872 թ. փետրվարի 18-ին Ազգային ժողովը ուշադրության արժանացրեց Քաղաքական ժողովի կազմած տեղեկագիրը, դիտողություններով հանդերձ սրբագրվեց՝ Բ. Դռանը մատուցելը թողնելով պատրիարքին: Վերջինս այն հանձնեց 1872 թ. ապրիլի 11-ին: Բ. Դուռը խոստացավ տեղեկագիրը նկատի առնել, բայց երկար ժամանակ անուշադրության մատնեց, իսկ տարիներ անց հայտարարեց, թե կորցրել է այդ փաստաթուղթը:

Գավառական հանձնախմբի կատարած գործը չհանգեցրեց որևէ արդյունքի, բայց նրա կազմած տեղեկագիրը, ինչպես Լեոն է նշում, «մի թանկագին դոկումենտ էր»¹⁹, որ բազմաթիվ փաստեր էր պարունակում, արձանագրում էր, որ հարստահարությունները առկա են, որ 20 տարվա ընթացքում պատրիարքարանը անընդհատ թագրիրներ է ուղարկել Բ. Դուռ, բայց այդ պաշտոնական թղթերի մեծ մասը չեն գործադրվել՝ մնալով «մեռած տառ, թուղթ»²⁰: Հանձնախմբի կազմած տեղեկագիրը նաև հիմք հանդիսացավ, որ 1876 թ. Ներսես Վարժապետյանի պատրիարքության ժամանակ կազմվեց նոր տեղեկագիր: Ն. Վարժապետյանը գավառական հարստահարությունների խնդրի կարևորությունը ընդգծել էր դեռ 1876 թ. մայիսին, Ազգային ժողովի բացման ճառում՝ նշելով, որ իր պատրիարքության առաջին իսկ օրվանից ջանք չի խնայել այդ հարցի դրական լուծման ուղղությամբ. «Ես անձամբ դիմելով ի Դուռն՝ յայտարարեցի թե մինչեւ որ վերջ մը չտրուի գաւառական հարստահարութեանց, չեմ կարող Պատրիարքութիւն ընել»²¹:

1876 թ. սեպտեմբերի 10-ին կազմվեց հանձնաժողով, որի խնդիրը պետք է լիներ կազմել տեղեկագիր և 8 օրից ներկայացնել Ընդհանուր ժողովին: 1876 թ. սեպտեմբերի 17-ին բերված տեղեկագիրը կրում էր «Տեղեկագիր խորհրդարանական յանձնախմբին ի վերայ հարստահարութեանց ազգայնոց առ Ազգային ժողովն»: Այն իր մեջ պարունակում էր 1872 թ. սկսած մինչև 1876 թ. սեպտեմբերի 1-ը, այս-

¹⁸ Նույն տեղում, էջ 590:

¹⁹ Լեոն, նշվ. աշխ., էջ 514:

²⁰ Նույն տեղում, էջ 514:

²¹ Ատենադրութիւնը Ազգային ժողովոյ, 1876-1877, էջ 4:

ինքն՝ 5 տարվա ընթացքում կատարված հարստահարությունների արձանագրությունները, պատրիարքարանի կողմից Բ. Դուռ մատուցած թագրիքների կարևոր մասի հավաքածուն՝ թվական հաջորդականությամբ նրանց մի քանիսի պատճենները: Տեղեկագրում ներկայացված 38 թագրիքները²² ապացուցում են, որ գավառացիների հարստահարությունները շարունակվում են: (Այստեղ կային նաև մինչև 1872 թ. կատարված 19 խնդիրների մասին): Սա չի նշանակում, թե 25 տարվա ընթացքում կատարվել են ընդամենը հարստահարության 57 դեպքեր, այլ արձանագրում են միայն նրանք, որոնց վերաբերյալ պատրիարքարանը դիմել է Բ. Դռանը: Այդ 38 խնդիրներից ամենաշատը վերաբերում էին զանազան հարստահարություններին (թվով 18), մնացածը՝ հողային կամ կալվածական խնդիրներին (թվով 12), ոճրագործություններին կամ քրեական հանցանքներին (թվով 5), կրոնափոխություններին կամ կանանց բռնաբարություններին (թվով 2), զինվորական տուրքին: Տեղեկագրում բերված էին օրինակներ, որոնք պերճախոս կերպով ցույց էին տալիս, թե ինչպես են քուրդ և թուրք բեկերը, աղաները խլում գյուղացիների հողերը, կալվածքները, նույնիսկ գրավում ամբողջ գյուղեր՝ այնտեղից դուրս քշելով բոլոր բնակիչներին և սեփականացնելով նրանց ամբողջ հողային հարստությունը: Առանձնապես շատ էին բողոքները (1873 թ. սկսած մինչև 1876 թ.) Երզնկա գավառի Դուլուլջանի գայմազան Շահ-Յուսեյնի չարագործություններից: Նույնիսկ այնպիսի մեծամեծ պաշտոնյաներ, ինչպիսիք էին Ալի փաշան, Աիդհատը, Յուսեյն Ավնին, իրենց հրամանագրերով չկարողացան նրան հեռացնել իր պաշտոնից: Թագրիքներից մեկն էլ վերաբերում էր Շատախի գավառի գյուղերում քրդերի կատարած հարստահարություններին (սպանություն, եկեղեցիների պղծում, կողոպուտ):

Երկրորդ տեղեկագրի հեղինակները նշում էին, որ իրենք իրենց զանգատներով ու թագրիքներով չեն զբաղեցնի Բ. Դռանը, եթե դարձաններն իրականություն դառնան: Վերջում էլ հույս էին հայտնում

²² Նույն տեղում, էջ 203-233:

«...թե ապագայի մէջ այլ եւս հարստահարութեանց այսպիսի հավաքածոյներ պատրաստելու միւթ չպիտի ունենամք»²³:

Երկու տեղեկագրերն էլ (1872 թ., 1876 թ.) ուսումնասիրելով, պարզ է դառնում, որ հարստահարությունները ոչ միայն չեն վերացել, այլ ավելի են սաստկացել: Երկու տեղեկագրերում հարստահարությունների կենտրոնը Երզրումի և Դիարբեքիի նահանգներն են, Սուշ, Բաղեշ, Դերջան, Վան, Քղի, Դուլուլջան, Չարսանջակ, Սղերդ, Սասուն և այլ գավառները: Սրանք այն վայրերն էին, ուր հայկական տւարիի հետ գերակշռում էր նաև քրդական տարրը: Այդ տարածքն էր, որ կառավարությունը ձգտում էր վերանվանել Քուրդիստան: Այդ տարածքներից եկած բողոքների փաստերը վկայում են, որ ոչ թե միայն այդտեղ էին կատարվում հարստահարություններ, այլ այդ գավառները գտնվում էին խոշոր քաղաքների մոտ, որտեղից հեշտ էր բողոքները հասցնել Կ. Պոլիս, իսկ խուլ անկյուններում բնակվող հայը անգամ չգիտեր, որ կա՛ Սահմանադրություն, Պատրիարքարան, և ինքը կարող է դիմել այնտեղ: Չնայած նշենք, որ Բ. Դուռ մատուցված թագրիքների մեծ մասի տակ էլ գրված էր. «Անպատասխան մնացած է», «Ապարդյուն մնացած է», միայն մասնակի դեպքեր են, երբ միջամտել է կառավարությունը՝ արտորելով քուրդ դերբեյներին, բայց դա էլ արդյունք չի տվել. քանի որ վերջիններս ազատվելով՝ վերադառնում էին և ավելի դաժանորեն շարունակում իրենց վայրագությունները: Թեև վայրագությունների մեծամասնությունը վերագրում էին քրդերին, իրականում նրանք ուղղակի գործիք էին կառավարության ձեռքին: Տեղեկագրերի փաստերի վրա հիմնվելով՝ հարստահարությունները կարելի է բաժանել. հարստահարություններ, որ կատարվում էին կառավարության պաշտոնյաների կողմից, հարստահարություններ, որ կատարվում էին քուրդ դերբեյների կողմից, հարստահարություններ, որ կատարվում էին մահմեդական հասարակ ժողովրդի կողմից:

Երկու տեղեկագրերի միջև ընկած ժամանակահատվածում ո՛չ հարստահարությունների վերացման, ո՛չ սուլթանական կառավարության գործունեության ուղղությամբ և ո՛չ էլ Տաճկաստանի դրության մեջ

²³ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1876-1877, էջ 238:

առաջընթաց չի նկատվել: Այս մասին լավ է մեկնաբանում Բաֆֆին. «Տաճկաստանը առաջ է գնացել միայն մեկ բանի մեջ, այն է՝ յուր կերպարանքը պաճուճել որպես եվրոպական մի պետություն... Տաճկական կառավարությունը ինչ որ էր առաջ համարյա նույնն է մնացել և այսօր, նաև ոչ մահմեդական ազգերի վիճակը փոխանակ բարվոքելու՝ հետզհետե վատթարացել է»²⁴ և եզրահանգում է. «Օձը յուր շապիկը կփոխե, բայց խասիաթը էլի այն կմնա»²⁵:

Երկու տեղեկագրերն էլ իրականություն չդարձան, բայց դրանք ունեցան այն մեծ նշանակությունը, որ նկարագրելով Արևմտյան Հայաստանի բնակչության թշվառ վիճակը, փաստորեն, առաջին անգամ արձանագրեցին Հայկական հարցի գոյությունը: Այս հարցում իրենց մեծ դերն ունեցան պատրիարքներ Խրիմյանն ու Վարժապետյանը, որոնք էլ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո նպաստեցին Հայկական հարցի միջազգայնացմանը: Պատահական չէ, որ Արփիար Արփիարյանը գրում էր. «Հայաստանի հարստահարությանց» խնդիր անունին տակ հայկական խնդիրը ծնավ ...Հայկական խնդիրը Հայաստանեն բխելով Պոլիս կգորանար և առաջ կերթար օր մը ամբողջ եվրոպայի խնդիրը տառնալու համար»²⁶:

*МАНЯ НАДЖАРЯН
ИЛИ НАН РА*

ОБСУЖДЕНИЕ ВОПРОСА ПРОВИНЦИАЛЬНОГО УГНЕТЕНИЯ В АРМЯНСКОМ НАЦИОНАЛЬНОМ СОБРАНИИ КОНСТАНТИНОПОЛЯ

РЕЗЮМЕ

Во 2-ой половине XIX в. социально-экономическое, политическое положение армянского населения, находящегося под властью Османской Турции, всё более ухудшалось. В наиболее тяжёлом положении пребывали армяне, проживающие в провинции. Они постоянно подвергались угнетению и насилью как

²⁴ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 420:

²⁵ Նույն տեղում, էջ 452:

²⁶ Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, էջ 198:

со стороны правительственных чиновников, так и со стороны курдов и мусульманского населения. Однако и султанское правительство, и армянский патриархат игнорировали многочисленные жалобы, поступающие от армянского населения провинции. Лишь благодаря усилиям патриарха Мкртича Хримяна угнетение армянского населения провинции стало предметом обсуждения Национального собрания. Специально созданная в 1870 г. комиссия составила подробный доклад о совершённых подлогах, убийствах, зверствах. Во второй части этого доклада предлагались меры, необходимые для улучшения положения армян в Турции. После длительного обсуждения в Национальном собрании, 11 апреля 1872 г. доклад был предъявлен султанскому правительству, которое обещало принять меры для исправления сложившейся ситуации. В действительности же доклад был оставлен без внимания, а спустя годы турецкие власти объявили, что документ утерян.

Второй доклад был составлен в 1876 г. в период патриаршества Нерсеса Варжапетяна. Как и первый, так и второй доклад констатировал факт угнетения армянского населения. Однако султанское правительство ничего не предприняло для прекращения насилия, наоборот, вскоре организовало массовое истребление армян. Цели, преследуемые создателями этих документов, не были достигнуты. Тем не менее, оба доклада и по сей день имеют огромное значение, так как, описав плачевное положение населения Западной Армении, фактически впервые констатировали существование Армянского вопроса. Патриархи М. Хримян и Н. Варжапетян продолжили начатое дело. После русско-турецкой войны 1877-1878 гг. они содействовали поднятию Армянского вопроса на международный уровень.

ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՎԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ապշերոնյան թերակղզին, որ միջնադարում կազմում էր պատմական Շիրվանի մի մասը, հայերի կողմից բնակեցված է եղել առնվազն վաղ միջնադարից, բայց պահպանված առավել հին պատմական հուշարձանները վերաբերում են միայն XII-XV դդ.: Այս առումով հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում «Արարատ» ամսագրում հրատարակված «Ս. Եղիայի վանքը Բուզովնում» հոդվածը: Հոդվածագիր Եր. Տեր-Հովհաննիսյանցը լինելով Բաքու քաղաքից 30 վերստ հեռավորության վրա Ապշերոնյան թերակղզու հյուսիսային եզրին գետեղված երբեմնի հայկական, սակայն հետագայում մահմեդաբնակ դարձած Բուզովնա¹ գյուղում, արծեբավոր տեղեկություններ է հաղորդում հայերին վերաբերող վիճագրական նյութի պատառիկների մասին²: Ըստ նրա՝ «Բուզովնան, որ մի ժամանակ հայի գիւղ է եղել, ներկայումս

¹ Եր. Տեր-Հովհաննիսյանցը Բուզովնա բառի բացատրության վերաբերյալ քեականորեն գրել է. «...հաւանականորէն նա բարկացած է երկու բաժից՝ րուզ-սառուց և օվդան-ջրհոր, սա-ըն ջրհորներ ունեցող տեղ, որովհետև Բուզովնի ջրհորները յայտնի են ամբողջ շրջակայքում իրենց սառուփեամբ ու լաւ յատկութեամբ» (Տեր-Հովհաննիսեանց Եր., Ա. Եղիայի վանքը Բուզովնում, «Արարատ», 1902, մայիս-հունիս, էջ 481):

² Բուզովնայում նշանավոր ուխտատեղիներից է եղել Սր. Եղիա Մարգարեի անվան ճատու-ըն, որի հետ է կապված եղել նաև Անդրես և Անանիա քարոզիչների անունները (տես նույն տեղում, էջ 483, տե՛ս նաև Справочные сведения о мекте по сведениямъ 1859 по 1864 годъ. Бакинская губерния, LXV, т. IV, с. 93): Մատուռն ունեցել է ծնոագիր հիշատակարան, ուր գրված է եղել այդ սրբատեղիի մանրամասն տարեգիրը և գյուղի կալվածքների քանակը (տե՛ս Տեր-Հովհաննիսեանց Եր., Ա. Եղիայի վանքը Բուզովնում, էջ 486): Մատուռի մոտ գտնվող քարի վրայի ջրհորի կառուցման վերաբերյալ արձանագրությունը, ըստ որի այն կառուցել է Ներսես քահանան 1421 թ. «ես Ներսես աւագ քահանայ շինեցի ջրհորս այս յիշատակին ծնողաց իմոց հայր...քահանայ...Տեր Ներսէս և կնոջ նորա խաթունի ամի քուականին Հայոց ՊԲ. (820) (վրկ. 1421թ.)» (տե՛ս Տեր-Հովհաննիսեանց Եր., Ա. Եղիայի վանքը Բուզովնում, էջ 484): Բուզովնում գյուղի շրջակայքում եղել են նաև Սր. Մինասի (շինված է եղել մի սաքառած քարի վրայ, ուր պնդագրված են եղել մի քանի խաչեր), Սր. Սիմոնի և Սր. Հովհաննես ճգնավորների նախատակված վայրերում շինված մատուռները. ճգնավորների տապանաքարերի վրա արձանագրված է եղել «ԵԿԸ» թվականը (տե՛ս նույն տեղում): Բուզովնա գյուղից պահպանվել են նաև խաչքարերի բեկորներ Զ. (1251), Պ. (1351) և Զ. (1451) թթ. արձանագրություններով և եկեղեցական շինությունների ավերակներ, որոնք թվագրվում են XII-XIII դդ.: «...եթէ ի նկատի ունենանք տեղական հին յիշատակարանները և արձանագրութիւնները. գրում է Եր. Տեր-Հովհաննիսյանցը, - պէտք է ենթադրել. որ Բուզովնան եղել է մի հին հայաշատ կենտրոն, որն ունեցել է իւր սեփական սրբատեղիները, իր քահանաները և իր առանձին գերեզմանատուները» (տե՛ս նույն տեղում, էջ 483):

ծառայում է Բագուեցւոց համար իբրև ամարանոց...»³: Բաքվի շրջակայքում հոծ հայկական համայնքների մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում XIV-XV դդ. տեղացի պատմիչ Արդ ար-Ռաշիդ ավ Բաքուվին, ավանդաբար նրանց կոչելով քրիստոնյաններ: «Близ города (իմա՝ Բաքու քաղաքի, - Գ. Ս.), - գրում է Բաքուվին, - многоселений и каждое имеет укрепленную цитадель с прочными стенами. Все жители этих селений - христиане (իմա հայեր, - Գ. Ս.)...»⁴: Թերակղզում հայաբնակ գյուղեր են եղել նաև Սարունչինը, Մաշթաղը, Շաղանը, Մարդաքյանը և Բալախանը⁵: XIX դ. վերջին «Մշակին» հղած թղթակցությունում Ալ. Քալանթարյանը գրում է, որ այդ գյուղերը 180-200 տարի սրանից առաջ բնակեցված են եղել հայերով⁶: Հողվածագիրը տեղեկություններ է հաղորդում նաև Բալախանի և Բուզովնա գյուղերի անհետացած եկեղեցիների և այդ շրջատարածքում հանդիպող հայկական զանազան գերեզմանաքարերի մասին⁷: Ըստ նրա, հայ կնոջ մի գերեզմանաքարի թվագրումից պարզվում է, որ նա մահացած է եղել մոտ 400 տարի սրանից առաջ⁸: Ապշերոնյան թերակղզում վաղ քրիստոնեական մշակույթի հետքերի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև «Մեղու Հայաստանի» լրագիրը, ըստ որի Բաքվից 4 վերստ հարավ արևմուտք գտնվող Բիբի-Յեյթաթ ուխտատեղիում նախկինում եղել է «քառասուն հայ կուսանաց» վանքը. «...քառասուն հայ կուսանաց վանք է եղել յիշեալ ուխտատեղին, այժմ՝ թուրքերն են տիրում թէ ուխտատեղիին թէ նրա նաւթով լի հողերին»⁹: Թերակղզու նավթահանքային շրջան այցելած Աարգիս արք. Ջալալյանը վկայում է, որ դեռևս երևում էին ավերակ եկեղեցու հետքերը. «է ընդարծակ

³ Նույն տեղում, էջ 482:

⁴ Абд ар-Рашид ал-Бакуви, Абд ар-Рашид ал-Бакуви, Книга тахлис ал-асар ваджлиб ал малик ал Каххар, Москва, 1971, с. 89-90.

⁵ Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», 9 օգոստոսի, 1997, թիվ 79, էջ 9:

⁶ «Մշակ», Թիֆլիս, 19 սեպտեմբերի, 1874, թիվ 37:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1883, 23 փետրվարի, թիվ 18:

վայր ի հիւսիսակողմն Բագուայ նահանգի հեռու...երկին աներակը տանց, ընդ որս և եկեղեցւոյ...»¹⁰:

Ապշերոնյան թերսւղզու հայաբնակ բնակավայրերի շարքում հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում հատկապես Բաքու քաղաքը: Սկզբնաղբյուրներում V դ. ի վեր հիշատակվող Բաքուն նախապես համարվել է Աղվանից թագավորանիստ ձմեռանոցը, իսկ ավելի ուշ շրջանում ծառայել է որպես աքսորավայր¹¹: Թերսւղզու վրա կուչ եկած փոքրիկ և անհրապույր Բաքու քաղաքը 1859 թ. դառնալով երկրամասային նահանգական քաղաք արագ տեմպերով սկսեց զարգանալ: Բաքվի զարգացման համար վճռական նշանակություն ունեցան թերսւղզու նավթի պաշարները, որոնց արդյունահանման և արտահանման արդյունքում քաղաքը սկսեց զարգանալ որպես նավթարդյունաբերության խոշոր կենտրոն: Կարճ ժամանակամիջոցում մեծ չափերի հասած նավթի արտահանումը միանգամից փոխում է տնտեսական կացությունը: Երկրի բազմակողմանի զարգացումը խթանում է արդյունաբերական, բնակելի և հասարակական շենքերի մեծամասշտաբ շինարարությանը: Ընդարձակվում են քաղաքի սահմանները, արագ տեմպերով սկսում է աճել նաև հայ բնակչության թիվը: Յուր հանճես նվիրակի մի ցուցակի տվյալների համաձայն 1818 թ. դրությամբ Բաքու քաղաքում եղել է 40 տուն հայ բնակչություն¹²: Եթե 1820-ական թթ. քաղաքի հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 277 մարդ (148 ար., 129 իգ.)¹³, ապա 1915 թ. հունվարի 1-ի դրությամբ Բաքվի գավառում հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 77166 մարդ¹⁴:

¹⁰ Ջալալեանց Ա., ճանապարհորդութիւն ի Սեծն Դայաստան, Բ մաս, Տփղիս, 1858, էջ 409-410:

¹¹ Ֆիզիկական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Դայաստանի, կազմեց Ա. Տէր-Յակոբեան, Թիֆլիս, 1914 (ՀԱՍ, ֆ. 335, ց. 1, գ. 24, ք. 39:)

¹² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թթ. 32, վավ. 219:

¹³ ՀԱՍ, ֆ. 332, ց. 1, գ. 866, ք. 1:

¹⁴ Кавказский календарь на 1917 г., Тифлис, 1916, с. 183.

1918 թ. դրությամբ, նախքան սեպտեմբերյան կոտորածները¹⁵ քաղաքի հայ ազգաբնակչության թիվն արդեն հասնում էր 88 673-ի¹⁶:

Բաքվահայերն իրենց ստեղծագործ և կրթամշակութային քարծր մակարդակով առաջնակարգ տեղ զբաղեցնելով նավթարդյունաբերության, սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային կյանքում և հիմնականում ապրել են բարեկեցիկ կյանքով: Միաժամանակ քաղաքի հայությունը հասարակական-քարոյական կեցվածքով անհամեմատ քարծր աստիճանի վրա է գտնվել մահմեդականների նկատմամբ: Բաքվի և Ապշերոնյան թերակղզու մյուս բնակավայրերի կառուցապատման գործում և քաղաքաշինության բնագավառում մեծ դեր են ունեցել հատկապես հայ ճարտարապետներն ու շինարարները, որոնք տարիների տքնումով կարևոր ներդրում ունեցան արդյունաբերական, բնակելի և հասարակական շենքերի ու եկեղեցիների նախագծման ու կառուցման բնագավառներում:

Աղբյուրների վկայությամբ, չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին, եկեղեցիների ու վանքերի կառուցման մեծ աշխատանք է տարվել Բաքվի նահանգի ողջ տարածքով մեկ: Դրանում իր մեծագույն նպաստն է բերել X դ. վերջերին XI դ. սկզբներին կազմավորված Շամախու-Շիրվանի հայոց թեմը¹⁷, որը հավատարիմ մնալով հոգևոր-մշակութային և ազգային իր առաքելությանը, պատմական հույժ տազնապալի պայմաններում քրիստոնեական վարդապետությամբ միավորելով նահանգի հայությանը, կարողացել է պահպանել նրանց ազգային ոգին և դարերի ընթացքում ստեղծված մշակութային արժեքները, դրանով իսկ մեծ դերակատարություն ունենալով երկրամասի հայապահպանման գործում: Ընդհանրացնելով վերո-

¹⁵ 1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը Նուրի փաշայի գլխավորությամբ գրավելով Բաքուն 3 օրվա ընթացքում կոտորածի ենթարկեցին 30000 հայերի (ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թթ. 96-99):

¹⁶ Իշխանեան Բ., Բազուի մեծ սարառիները (անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ.), Թիֆլիս, 1920, էջ 22:

¹⁷ Շամախու հայոց թեմի կազմավորման հարցերի քննությունը տե՛ս մեր Շամախու հայոց թեմի սկզբնավորման հարցի շուրջ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տարեկան գիտաժողով (Նյութերի ժողովածու), հ. 3, Ե., 2005, էջ 870-873:

շարադրյալը, համառոտակի ներկայացնենք Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմությունը:

ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. Բաքվում կառուցված հայկական առաջին եկեղեցին է: Կառուցվել է 1789 թ. Շամախու հայոց թեմի առաջնորդ Ոսկան եպիսկոպոսի (1785-1796) թեմակալության օրոք, հայ հասարակության հանգանակած գումարներով: Եկեղեցու կառուցման գործում մեծ դերակատարություն է ունեցել Ղուկաս Ա Կարնեցի (1780-1799) կաթողիկոսը, որը 1784 թ. կոնդակով Շամախու թեմի գանձապետ Եղիազարին պատվիրում է ժողովրդին օգնելու՝ եկեղեցին կառուցելու գործին. «Կոնդակ նոյնոյ՝ առ գանձապետ Եղիազարն ի Բագու, որով պատուիրէ օգնել ժողովրդեան ի շինել զեկեղեցին ի Սահլայոջն, և յանուն եկեղեցւոյ ժողովեալ դրամս յանձնել ժողովրդոց...»¹⁸: Կաթողիկոսի մեկ այլ կոնդակում, որն ուղղված էր Բաքվի Հովսեփի, Հովհաննես և Բարսեղ քահանաներին ու գանձապետ Եղիազարին փոխարինած Դավթին, նշված է հետևյալը. «թոյլատրէ Բագուեցւոց *շինել* (ընդգծումը մերն է, - Գ. Ս.) զեկեղեցին ի Սահլայոջն»¹⁹: Պետք է նկատել, որ շատ դեպքերում «շինել» տերմինը օգտագործվել է ոչ միայն «հիմնարկել», «կառուցել» իմաստով, այլև «վերակառուցել, նորոգել» նշանակությամբ, ինչպես ժամանակին նկատել է Հ. Օրբելին²⁰: Ուստի, ենթադրելի է, որ «շինել» տերմինը բովանդակային առումով առնչվել է եկեղեցու վերանորոգման մեծածավալ աշխատանքներին: Աստուծաբան Գրիգորյանը իրավացի էր, երբ գրում էր, որ Սբ. Աստվածածին եկեղեցին նորոգվել է 1789 թ.²¹: Ավանդության համաձայն այստեղ առաջներում եղել է կրակի և ծովի աստվածների բազինը²²: Եղիշա առաքյալը Աղվանից աշխարհը գալով կործանել է այն տեղը և կանգնեցրել Քրիստոսի խաչը: Աստուծաբան Մաշտոցը այդտեղ մատուռ է շինել, իսկ Հայոց

¹⁸ Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախոյ թեմի, էջ 217:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Орбели О., Избранные труды, Е., 1963, с. 419.

²¹ Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 373.

²² Այդտեղ է գտնվել կրակապաշտության չորրորդ վայրը՝ «Եօթնփորեկեան բազինքը» (տե՛ս Տէր-Յակոբեան Ա., Ֆիզիկական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի, թ. 39:

արևելից կողմանց թագավոր Վաչագան Գ Բարեպաշտը (485-510) 500 թ. մատուռի տեղ կառուցել էր եկեղեցի²³. «Իսկ Վաչագան բարեպաշտ թագաւորն Աղուանից յամի Տեառն 500 շինեց եկեղեցի, ըստ այսմ և Բագուայ հին և նշանաւոր եկեղեցին...»²⁴: Սբ. Աստվածածին անունով եկեղեցին կառուցվում է քաղաքի հին թաղում, բերդի ստորոտում, ծովեզերքի փարոսյան աշտարակի դիմաց: Եկեղեցու կառուցման աշխատանքներին նյութական օժանդակութիւն են ցուցաբերել նաև վաճառական Մարկոս և Ջոհրապ Թառումյան եղբայրները²⁵, Հովհաննես ու Կարապետ Թումայանները: Եկեղեցին 1799 թ. գտնվել է քայքայված վիճակում: Շամախու հայոց թեմի առաջնորդ Թադևոս եպս. Չյունակացի (Սպահանցի) (1876-1887) նախածեռնությամբ 1881-1882 թթ. հիմքից վերակառուցվել է վթարային վիճակում գտնվող եկեղեցու շրջապարիսպը: Թեմակալը նախատեսել էր նաև եկեղեցու մոտակայքում կառուցել մի իջևանատուն, իսկ եկեղեցապատկան շենքերը՝ նորոգել²⁶: 1865 թ. հունիսի 15-ի գիշերը եկեղեցին կողոպտվել է թաթար խուժանի կողմից, որի հետևանքով գողացվել են մեծ քանակությամբ արծաթեղեն և անոթներ²⁷: Թեմի առաջնորդ Մեսրոպ արք. Սմբատյանցի օրոք (1887 հունվարի 23 - 1894 հունիս), երբ 1888 թ. հոկտեմբերի 22-ին Բաքու է ժամանում հայոց կաթողիկոս Մակար Ա Թեղուտեցին, վեհափառը այցելում է Սբ. Աստվածածին եկեղեցի և օրհնում իր շուրջը հավաքված ժողովրդին²⁸: Եկեղեցին հիշատակվում է թեմում 1916 թ.

²³ Լույն տեղում, թ. 24, 60:

²⁴ Սմբատեանց Ա., Նկարագիր Սուրբ Ատեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 373: Ի դեպ, Մեսրոպ արք. Սմբատյանցը գրում է, որ Սբ. Աստվածածին եկեղեցու վրա բացակայում է կառուցման կամ նորոգության վերաբերյալ որևէ արձանագրություն (տե՛ս Լույն տեղում, էջ 373-374):

²⁵ Մարկոս և Ջոհրապ Թառումյանները ծնունդով եղել են Սյունիքի Երնջակ գավառի Շիշկերտ կամ Շահկերտ ավանից. «Թառումենք բնիկք էին ավանին Շահկերտոյ այլ ի վերջիք աներս նորա եկին բնակեցան յերևան» (Ճանապարհորդութիւն Մեսրոբայ Դ. Թաղիդեանց. Վ. Ա. Սարկաւազի սրբոյ էջմիածնի ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 291-292):

²⁶ Կարապետյան Ա., Հայերը Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», 15 հուլիսի, 1997, թիվ 64:

²⁷ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:

²⁸ Ամենայն հայոց վեհափառ Սակար կաթողիկոսի ճանապարհորդութիւնը, «Արարատ», 1888, նոյեմբեր, էջ 712:

գործած եկեղեցիների ցանկում²⁹։ Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումից հետո շենքը վերակառուցվել է իբրև մշակութային հիմնարկություն³⁰։ Ար. Աստվածածին եկեղեցին ընդհուպ մինչև 1989 թ. եղել է կանգուն վիճակում³¹։

ԱԲ. ԳՐԻԳՐԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ. Եկեղեցու կառուցման նախաձեռնությունը պատկանում է Շամախու հայոց թեմի առաջնորդ Դանիել վրդ. Շահնագարյանցին (Տարոնեցի) (1863-1868)։ Այդ քայլը հիմնականում պայմանավորված էր Բաքվում հայ ստվար ազգաբնակչության առկայության փաստով։ Ստանալով շինարարական աշխատանքներ սկսելու՝ Աստթես Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի (1858-1865) թույլտվությունը, թեմակալը 1863 թ. հունիսին օրհնում է եկեղեցու հիմքը³²։ Նոր եկեղեցին կառուցվում էր «Պարապետ» կոչված հրապարակի մոտ (Կույսի աշտարակի մերձակայքում)՝ բաքվեցի բարերար Ջավադ Աելիջյանցի տրամադրած ֆինանսական միջոցներով, հին եկեղեցու հասույթներով և թեմի հայության հանգանակած գումարներով³³։ Եկեղեցու կառուցման աշխատանքներն ավարտվել են Շամախու հայոց թեմի առաջնորդ Անդրեաս արք. Անդրեսայանի (Պոլսեցի) (1869-1874) օրոք, իսկ օծումը տեղի է ունեցել 1869 թ. մայիսի 4-ին՝ Ար. Գրիգոր Լուսավորիչի անվամբ³⁴։ «Օծաւ եկեղեցին հրամանաւ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն հայոց Տ.Տ. Գեորգայ Դ.ի ի 4 մայիսի 1869 ամի, օրհնութեամբ վիճակաւորի թեմիս Անդրեաս արքեպիսկոպոսի առ կայսերութեամբն նոյն արքայի, փոխարքայութեամբ յիշեալ Մեծ Իշխանին և առ նահանգապետութեամբ նորին գերագանցութեան պարոն Սիխայել Պետրովչի Կուլիբեկեան»³⁵։ Եկեղեցին հորինվածքով եղել է կենտրոնազմբթ դահլիճ, արևմտյան կողմից ունեցել է եռահարկ զանգա-

²⁹ ՀԱՍ, ֆ. 56, ց. 2, գ. 904, թ. 1։

³⁰ Նույն տեղում, ֆ. 409, ց. 1, գ. 2685, թ. 2։

³¹ Կարապետյան Ա., Հայերը Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», 15 հուլիսի, 1997, թիվ 64։

³² Սմբատեանց Ա., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 375։

³³ Նույն տեղում։

³⁴ ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 4348, թ. 3։

³⁵ Սմբատեանց Ա., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 377։

կատուը³⁶: Անդրեաս արք. Անդրեասյանի նախածեռնությանը 1874 թ. մասնակի վերանորոգման է ենթարկվում եկեղեցին: Շենքի քայքայված վիճակի և շինարարական աշխատանքների անհրաժեշտության մասին թեմակալին էր հայտնել եկեղեցու երեսփոխը, որն այդ մասին գրել է հետևյալը. «Ի քանի աքմաց հետև ջուրք անձրեւի եւ ձեան թուփանցանին ի ներքո կոյս սք. Լուսավորիչ եկեղեցւոյ տեղւոյս ի պատճառս չորանալոյ եւ հող դառնալոյ միանգամայն շաղախաց սալայատակաց կաթուղիկէի եւ տանեաց այնորիկ եկեղեցւոյ եւ թանան ի ներքուստ զամենայն ծեփ նորին կաթելով ի վերուստ ի վերա ժամաւոր ժողովրդեան եւ անշուք եւ անզարդ կացուցանելով առաջի տեսողաց»³⁷: Եկեղեցու բարեկարգման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել եկեղեցու երեսփոխան Սինաս Մելքոնյանը: Շնորհիվ նրա կատարած աշխատանքի եկեղեցին մշտապես գտնվել է բարվոք վիճակում: «Հայկական աշխարհ»-ն այդ առիթով վկայում է. «Աւելորդ չեմ համարուեմ յիշել իբրև երեսփոխանի ջերմեռանդ եկեղեցասիրութեան ապացոյց, որ Բագուի մէջ, որտեղ գրեթէ՝ ժամի իւրաքանչիւր կանաչած տերևը նշանակութիւն ունի, մեր եկեղեցու բակը, երեսցոխանի առանձին հոգացողութեամբ, բաւական ծաղկազարդ և ծառազարդ է»³⁸: 1888 թ. հոկտեմբերի 22-ին, երբ Բաքու է ժամանում հայոց կաթողիկոս Մակար Ա Թեղուտեցին, առաջին այցը Ար. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի էր, ուր «կարդացուեցին սահմանեալ աղօթքներն»³⁹: Թեմի առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցի (1896 դեկտեմբերի 20 - 1898) նախածեռնությանը և էջմիածնի Սինոդի թույլտվությամբ 1897 թ. սկսվեց նորովի կառուցվել եկեղեցու հիմնովին ավերված զանգակատունը⁴⁰: Իսկ Սեսրոպ արք. Սմբատյանցը որոշեց վերանորոգել արդեն իսկ խարխուլված գմբեթը: Այդ առիթով ուշագրավ տեղեկություն է հաղորդում Բաքվում

³⁶ Կարապետյան Ա., Հայերն Աաշերոնյան թերակղզում, «Առավոտ», 26 հուլիսի, 1997, թիվ 69, էջ 1:

³⁷ «Արարատ», 1874, փետրվար, էջ 40:

³⁸ «Հայկական աշխարհ», Բագու, 1878, թիվ 10-11-12, էջ 300-301:

³⁹ Ամենայն հայոց վեհափառ Մակար կաթողիկոսի ճանապարհորդութիւնը, «Արարատ», 1888, նոյեմբեր, էջ 710:

⁴⁰ Կարապետյան Ա., Հայերն Աաշերոնյան թերակղզում, «Առավոտ», 26 հուլիսի, 1997, թիվ 69, էջ 1:

1895 թ., ապա 1899-1909 թթ. ընթացքում բնակվող ճարտարապետ, հասարակական-քաղաքական գործիչ Հովհաննես Քաջազնունին: 1894 թ. մայիսի 28-ին տիկնոջը հասցեագրած նամակում նա գրել է. «Այստեղի հասարակությունը երեկ կանչում էր խորհրդի: Եկեղեցու գմբեթը պիտի քանդեն, նորը շինեն: Ես էլ կանչված էի: Գուցե այդ աշխատանքը ինձ հանձնվի, առանց փողի, ի հարկե՝ ազգային գործ է: Մի ամբողջ կոմիսիա է ընտրվել, որի անդամ լինելը ես էլ պատիվ ունեմ»⁴¹:

Բաքվահայերի պատմության մեջ հիշարժան իրադարձություն էր Ամենայն հայոց կաթողիկոս, հայ ժողովրդի մեծ երախտավոր Մկրտիչ Ա Վանեցու 1898 թ. փետրվարի 5-13-ը Բաքու կատարած պաշտոնական այցելությունը: Տեղեկանալով կաթողիկոսի՝ Բաքու ժամանելու մասին, քաղաքի հայ հասարակությունն ապրում է բերկրալից պահեր, քանզի իրենց այցելության էր գալիս հայոց վշտի, գաղափարի ու ազատության ջահակիրը: Տեղ հասնելուն պես վեհափառը կայարանից ուղևորվեց Աբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որի արտաքին դռները զարդարված էին դափնյա կամարներով, իսկ ներքին դռան ճակատին՝ մեծ պաստառի վրա, նկարված էր երկու հրեշտակների ձեռքում պահված հայրապետական թագ, որի վրա գրված է եղել. «Էջմիածին ի հօրէ...», ներքևում՝ տաճարի մանրանկարը և Նորին Սուրբ Օծության անվան սկզբնատառը, իսկ պաստառի ճակատին մեծ-մեծ տառերով գրված է եղել. «Տէր պահեա գշայրապետութիւն Հայոց»⁴²: Վեհափառի՝ եկեղեցի մտնելուն պես միաձայն սկսում են հնչել զանգերը, միանգամից սկսում են վառվել նաև բոլոր ջահերը: Ժողովուրդը վեհափառին մոտիկից տեսնելու և նրա աղոթքն ու խոսքը լսելու համար խռնվել էր եկեղեցում. «Եկեղեցու բակը՝ շրջականերով, մանաւանդ մէջը, բոլորովին անբաւական, գետին ասեղ ձգելու տեղ ստուգիւ չըկայ. ժողովրդեան յորձանքներ, որոնք անհանգիստ անընդհատ այս ու այն կը տատանին: Երգեցիկ խումբը թէև լաւ չի կազմակերպուած, կը վարէր ու երբեմն առանձին կերպէր յայտնի երգիչ պ. Շահլամեան: Համբաւաւոր եր-

⁴¹ Դրուխանյան Լ., Հովհաննես Քաջազնունին ճարտարապետ, Ե., 1997, էջ 10:

⁴² Օնցիկեան Ա., Վեհափառ Հայրիկը Բազու, Բազու, 1898, էջ 15-16:

գիչը իւր բնատուր շնորհքը եկեղեցական երգեցողութեանց մէջ ալ որոշ կերպով կարտայայտէ»⁴³:

Մխիթար վարդապետի կազմած «Տեղեկագրի» համաձայն՝ 1900 թ. դրութեամբ Ար. Գրիգոր Լուսավորիչ և Ար. Աստվածածին եկեղեցիները միասնաբար ունեցել են 1 վարդապետ, 11 քահանա, 2 եկեղեցական սպասավոր և 49 445 ռ. 29 կ. դրամազուխ⁴⁴:

Ար. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին լուրջ փորձության ենթարկվեց, երբ 1903 թ. հունիսի 12-ին Կովկասի կառավարչապետ Գ. Գուլիցի-նի նախածննդությամբ հրատարակվեց օրենք՝ հայ եկեղեցական կալվածքներն ու գույքերը պետականացնելու վերաբերյալ: Հայ ժողովրդի ազգային, կրոնական զգացմունքներն ու քաղաքական շահերը ոտնահարող այդ օրենքի դեմ ընդվզեց հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, որը 1903 թ. օգոստոսի 21-ի կոնդակով կարգադրություն հղեց բոլոր թեմերին՝ եկեղեցու ունեցվածքը քաղաքացիական իշխանություններին չհանձնելու վերաբերյալ⁴⁵: 1903 թ. սեպտեմբերի 2-ին՝ գույքի բռնագրավման օրը, Ար. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգերի ազդանշանով զավթում հավաքվեց հայ բնակչության հոծ բազմություն. «Վաղ առաւօտից հայոց եկեղեցին եւ բակը ամեն կողմից լցուել էին խումներամ բազմութեամբ: Ամբողջ օրը նեարդայնացած ժողովուրդը անհամբերութեամբ սպասում էր պետական պաշտօնեայի գալուսն»⁴⁶: Հ.Յ.Դաշնակցության Բաքվի «Ոսկանապատի» կենտրոնական կոմիտեն, կանխազգալով դեպքերի զարգացման ընթացքը, Նիկոլ Դումանի, Գրիգոր Միրզաբեկյանի (Մածուն Խեչո), Թադևոս Ամիրյանի (Գիծ Թաթոս) և երվանդ Բաբերյանի (Զալլար) մասնակցությամբ հրավիրված խորհրդակցությունում որոշեց եկեղեցու բակից հեռացնել անգն ամբոխի և զինված դաշնակցականների օգնությամբ թույլ չտալ կառավարական պաշտոնյաններին մտնելու եկեղեցի և դիմադրել այնքան,

⁴³ Նույն տեղում, էջ 16:

⁴⁴ «Արարատ», 1902, փետրվար, էջ 143, տե՛ս նաև Մխիթար վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906, էջ 36:

⁴⁵ Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան. Հասարակական քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 413:

⁴⁶ Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք», Բոստոն, 1925, հունվար, Գ տարի, թիւ 3, էջ 125:

մինչև որ անգոր կլինի կռիվը մեծ ուժի դեմ: Գործի պատասխանատվությունը հանձնվեց Երվանդ Բաբերյանին և Գրիգոր Միրզաբեկյանին, որոնց պետք է օգնեին հայդուկային մյուս խմբերը⁴⁷: Սուրբ ընկնելուն պես ոստիկանությունը սկսեց օղակել եկեղեցին և սկսվեց կատաղի փոխհրածգություն: Կռիվն ավելի թեժացավ, երբ ոստիկաններին օգնության հասան 2 հարյուրյակ կազակներ և Սալիանի հետևակ գնդից կես վաշտ⁴⁸: Ջորջին հաջողվեց եկեղեցին գրավել միայն կեսգիշերին, մի քանի ժամ տևած մարտերից հետո, երբ արդեն սպառվել էին պաշարվածների փամփուշտները: Նրանց մի մասը, պատուհաններից դուրս սողոսկելով ազատվում է⁴⁹: Արյունահեղ այդ ընդհարման ընթացքում զոհվեցին 11 և վիրավորվեցին 45 հայեր⁵⁰: Եկեղեցին հիշատակվում է թեմում 1916 թ. գործած եկեղեցիների ցանկում⁵¹: Եկեղեցին ամբողջապես կողոպտվել է 1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ թուրքական զորքի կողմից Բաքուն գրավելուց հետո⁵²: Ընդ որում եկեղեցու կրած նյութական վնասը կազմում էր 270220 ռ.⁵³: Թուրքական արշավանքի հետևանքով Շամախի քաղաքի հրդեհվելու և հայ բնակչության՝ Բաքու գաղթելու պատճառով, թեմի առաջնորդ Բագրատ արք. Վարդազարյանը (1916-1921) 1918 թ. հոկտեմբերի 16-ին թեմի առաջնորդարանն ու վիճակային ատյանը Շամախուց տեղափոխում է Բաքու և տեղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին դառնում է որպես առաջնորդանիստ եկեղեցի⁵⁴:

Բաքվի նահանգում հայահալած քաղաքականությունը շարունակվեց մուսավաթական Ադրբեջանի գոյության ողջ ընթացքում: Պատերազմում Թուրքիայի պարտությունից և թուրքական զորքերի՝ Անդրկովկասից հեռանալուց հետո ադրբեջանական իշխանությունները, առաջնորդվելով «Ադրբեջանը՝ ադրբեջանցիներին» նենգամիտ

⁴⁷ Նույն տեղում, էջ 126:

⁴⁸ «Մշակ», Թիֆլիս, 5 սեպտեմբերի, 1903, թիվ 193:

⁴⁹ «Դրօշակ», Ժնեւ, սեպտեմբեր, 1903, թիւ 8, էջ 115:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:

⁵² Նույն տեղում, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:

⁵³ Նույն տեղում, ց. 5, գ. 189, թ. 7:

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 3-4:

կարգախոսով, Բաքվում և գավառներում հայերի նկատմամբ շարունակեցին վարել հալածանքների քաղաքականություն: Առաջին թիրախը Աբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին էր, որտեղ զենք և զինամթերք գտնելու պատրվակով, 1919 թ. հունիսի 11-ին թուրք սպայի գլխավորությամբ 100-ի հասնող ադրբեջանական զինվորները շրջապատում են եկեղեցին: Սակայն զենք չհայտնաբերելով՝ գազազած զինվորները մահմեդական ամբոխի ներկայությամբ վայրենաբար հրացանազարկ են անում եկեղեցու պատերը⁵⁵:

Բաքվի և Թուրքեստանի թեմական խորհրդի հրավերով հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանը (1955-1994) թեմի առաջնորդներ Տիրայր եպս. Սարտիկյանի (1956 - 1958 մայիս), ապա Հուսիկ եպս. Սանթուրյանի (1961-1981) օրոք՝ 1957, 1962 և 1969 թթ., հովվապետական այցելություններ է կատարել Բաքու և Աբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավորությամբ մատուցել հայրապետական ս. պատարագ⁵⁶:

1989 թ. դեկտեմբերի 25-ին ադրբեջանական խուժանը վայրագորեն հրդեհել է եկեղեցին, որի հետևանքով այրվել են մեծ քանակությամբ եկեղեցական արժեքավոր գրքեր, սրբապատկերներ և կրոնական ամբողջ գույքը⁵⁷: Պղծելով եկեղեցին՝ Ադրբեջանի իշխանությունները շենքն օգտագործել են այլ նպատակներով. այն տրամադրվել է գիտաարտադրական վարչության շինարարական կազմակերպությանը⁵⁸: Ներկայումս եկեղեցու ճակատագիրն անհայտ է:

ԱՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ. Եկեղեցու կառուցումը սկսվել է Շամախու հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ արք. Ամբատյանցի թեմակալության օրոք: Կառուցման նախաձեռնողը և դրամական միջոցներ տրամադրողը եղել է թիֆլիսեցի բաքվաբնակ հայազգի Սարիամ Գրիգորյան Միքատձեն: Թեմակալին՝ 1891 թ. հուլիսի 23-ին հղած մամակում Սարիամ Միքատձեն իր մտադրությունը պայամանավորում էր

⁵⁵ ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 104, թ. 25:

⁵⁶ «Էջմիածին», հոկտեմբեր, 1957, էջ 13-23, տե՛ս նաև «Էջմիածին», հուլիս, 1962, էջ 9-14, տե՛ս նաև «Էջմիածին», մայիս, 1969, էջ 11-14:

⁵⁷ «Գրական թերթ», Երևան, 2 փետրվարի, 1990, թիվ 6:

⁵⁸ «Իրավունք», Երևան, նոյեմբերի 10-16, 1998, թիվ 58:

ճրանով, որ ի տարբերություն հայերի, քաղաքի ռուս բնակչությունն ուներ փոքրիկ եկեղեցի, ուր կատարում էին ննջեցյալների թաղման կարգը, և քանի որ քաղաքի եկեղեցիներում արգելված էր կատարել ննջեցյալների թաղման կարգ, ուստի ցանկալի կլիներ, հայերը ևս իրենց գերեզմանատանը ունենային նմանատիպ եկեղեցի, ուր կարող էին նաև պատարագ մատուցել⁵⁹: Առաջարկը թեմակալի կողմից ընդունվեց և առանց հապաղման սկսվեցին շինարարական նախապատրաստական աշխատանքները: Ուշագրավ է, որ թեմակալը ճարտարապետին հանձնարարեց եկեղեցին կառուցել հայոց երբեմնի գեղարաշ մայրաքաղաքներից մեկի՝ Անիի եկեղեցիների ճարտարապետական հորինվածքների ոճով⁶⁰: 1894 թ. Բաքվում Մեսրոպ արք. Սմբատյանցի կողմից օրհնվում է կառուցվելիք եկեղեցի-մատուռի արձանագիր մարմարյա հիմաքարը, որի վրա փորագրված է եղել. «Յամի Տեառն 1894. և հայկական 4386. զհիմն սուրբ Յարութեան տաճարիս՝ շինելոյ ծախուք Տփխիսեցի հայազգի Սարիամու Գրիգորեան Միքատծէ, եօծ առաջնորդ Բագուայ նահանգի Մեսրովք Արքեպիսկոպոս Սմբատեանց»⁶¹: Եկեղեցի-մատուռի տեղի ու դիրքի վերաբերյալ ուշագրավ բնութագրում է տվել Մեսրոպ արք. Սմբատյանցը, գրելով. «Մի գեղեցիկ տեսարան կը լինի Բագուին նաեւ մեր հայոցս գերեզմանատան փոքրիկ մատուռն, որ ամբողջ քաղաքից երևում է իբրեւ զարդ և թագ գլխի վրայ դրած՝ բարձրութեան մի լաւ երեւացող տեղում, որ այժմ շինում է...»⁶²: Նորակառույց եկեղեցի-մատուռը օծվեց 1895 թ. հունվարի 26-ին թեմի առաջնորդական ժամանակավոր տեղապահ Մակար եպս. Բարխուտարյանցի (1895 հունվար - 1896 դեկտեմբերի 20) կողմից՝ Աբ. Դովհաննես Սկրտչի անվամբ: Էջմիածնի Սինոդին տեղապահի հղած զեկուցագրում այդ մասին ասված է հետևյալը. «...ի 28 յունվարիս կատարեցի զնաւակատիս և ապա օծի զնոյն տաճար ըստ ծիսի Դայաստանեայց Առաքելական և սուրբ եկեղեցւոց ի 29 յունվար ամսոյս ներկայ ամի. կնքեցի զեկեղեցին յանուն սրբոյն Դովհաննու Սկրտչի, իսկ

⁵⁹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8720, թ. 1:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ Սմբատեանց Ա., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 380:

⁶² Նույն տեղում, էջ 379-380:

զխորանն՝ Անդրէի առաքելոյն»⁶³: Թեև եկեղեցին նախապես օծվել է Սբ. Հովհաննես Մկրտչի անվամբ, սակայն Շամախու հայոց թեմի առաջնորդների՝ եկեղեցիների մասին կազմած տեղեկագրերում հիշատակվում է նաև Սբ. Հարություն անվամբ⁶⁴: Եկեղեցին գործել է մինչև 1922 թ. փետրվարը, որից հետո ադրբեջանական խուժանն այն վայրագորեն քարուքանդ է արել⁶⁵:

ՍԲ. ԹԱՂԵՎՈՍ ԵՎ ՍԲ. ԲԱՐՂՈՒՂԻՍԵՆՈՍ. XIX դ. վերջին Բաքվում հայ ազգաբնակչության թիվն այնքան էր աճել, որ անհրաժեշտություն էր առաջացել երրորդ եկեղեցի ունենալը, որի կառուցման համար միջոցներ էր կտակել մեծահարուստ Ենովք Բուդաղյանը⁶⁶: Եկեղեցու կառուցման նախագծի համար 1899 թ. հայտարարված մրցանակաբաշխությանը նախագծերով հանդես եկան Մոսկվայի, Պետերբուրգի և Բաքվի ճարտարապետները: Նախագծային իր աշխատանքով մրցանակաբաշխությանը մասնակցեց նաև Ա. Պետերբուրգի «Քաղաքացիական ինժեներների ինստիտուտի» շրջանավարտ ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյանը՝ իր ընկերոջ՝ Ալ. Ռոտինյանի հետ⁶⁷: Սրցույթում առաջին մրցանակը շահում է ակադեմիկոս Գ. Գրիմը, իսկ երկրորդը՝ քաղաքացիական ինժեներ Ա. Դիտրիխը, երրորդը՝ ճարտարապետ Տ. Բերիարդը: Ի դեպ, երեքն էլ եղել են Ա. Պետերբուրգից: Ուշագրավ է այն հանգամանքը, որ թեև շահել էր Գ. Գրիմի նախագիծը (անկյունում գրված է եղել առաջին մրցանակ), սակայն, Գ. Տեր-Միքելյանի ներկայացրած նախագծի վրա գրված է եղել «գործադիր նախագիծ»⁶⁸: Վերջինիս նախագիծը հորինվածքային կառուցվածքով հիշեցրել է Անիի Սայր տաճարի հատակագծային մոդելը⁶⁹: Սակայն այս մրցույթի և ոչ մի նախագիծ ինչ-ինչ պատճառներով չի ընդունվում շինարարության համար, ուստի և հարցի լուծումը հետաձգվում է մինչև

⁶³ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8720, թ. 11:

⁶⁴ Նույն տեղում, ց. 14, գ. 298, թ. 56, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 20:

⁶⁵ Նույն տեղում, ֆ. 57, ց. 3, գ. 404, թ. 3:

⁶⁶ Նույն տեղում, ֆ. 462, ց. 1, գ. 4, թ. 43, տե՛ս նաև ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:

⁶⁷ Տիգրանյան Է., ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյան, «Էջմիածին», 1971, մարտ, էջ 51:

⁶⁸ Նույն տեղում, էջ 52:

⁶⁹ Նույն տեղում:

1906 թ.: Նույն տարում հայտարարվում է եկեղեցու նախագծի երկրորդ մրցանակաբաշխություն, որտեղ Գ. Տեր-Միքելյանի ներկայացրած նախագիծը շահում է առաջին մրցանակ: Առաջին մրցանակ է շահում նաև Պետերբուրգից մասնակցած ճարտարապետ Վ.Պոկրովսկին: Բայց քանի որ վերջինիս նախագիծը ոչ մի ընդհանուր բան չուներ հայկական եկեղեցաշինական արվեստի հետ, ուստի թեմի եկեղեցական հանձնաժողովը որոշում է եկեղեցին կառուցել Գ. Տեր-Միքելյանի ներկայացրած նախագծով: Սակայն այս անգամ ևս նախագծերից ոչ մեկը չի իրականացվում: Հարցը ձգձգվում է և ստանում բոլորովին այլ լուծում: Հանգուցյալ մեծահարուստ Բուդաղյանի կտակատարները 1906 թ. որոշում են եկեղեցու նախագծումն ու շինարարությունը հանձնել ճարտարապետ Յուլի. Քաջազնունուն: Նույն թվականի սեպտեմբերի 26-ին կատարվում է եկեղեցու հիմքի օծումը: Սակայն Յ. Քաջազնունուն չհաջողվեց ավարտին հասցնել եկեղեցու շինարարությունը: Քաղաքական հանգամանքների բերումով նա 1909 թ. թողնում է Բաքուն: Քաջազնունու բացակայության ժամանակ շինարարական գործը վերահսկում է հայազգի ճարտարապետ Նիկողայոս Բաևը⁷⁰: Դրամի բացակայության պատճառով շինարարական աշխատանքները կարճ ժամանակով դադարեցվել են և վերսկսվել 1913 թ. ապրիլի սկզբներին⁷¹: Աշխատանքները ավարտին են հասցվել 1914 թ.: Նորակառույց եկեղեցու հատակագծի հիմքում պահպանվել է կենտրոնազմբեթ, հավասարակողմ խաչի հայեցակարգը, գլխավոր ծավալի չորս անկյունները ձևավորված են եղել չորս պարագծով կորագիծ խորաններով: Ջանգակատունը կառուցված է եղել եռաթռիչք կամարաշարով: Գմբեթի թմրուկը հենված է եղել երկու խաչաձև հզոր կամարների վրա: Եկեղեցին աչքի է ընկել իր մոնումենտալությամբ: Սպիտակ քարի և ոսկու նուրբ շերտով հարդարման զուգակցումը արևի ճառագայթների ներքո անկրկնելի վեհություն են տվել եկեղեցուն: Ականատեսների վկայությամբ, դա Բաքվի ամենագեղեցիկ շենքն էր: Այն ունեցել է 1000 տեղանոց աղոթասրահ և ընդար-

⁷⁰ Տիգրանյան է., Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ), Ե., 2000, էջ 38, 210-215, 236-237:

⁷¹ «Մշակ», Թիֆլիս, 19 ապրիլի, 1913, թիվ 82:

ծակ նախասրահ⁷²: Եկեղեցին հիշատակվում է 1916 թ. գործած եկեղեցիների ցանկում⁷³: Եկեղեցին թուրք-թաթարների կողմից ամբողջապես կողոպտվել է 1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ թուրքական զորքի կողմից Բաքուն գրավելուց հետո⁷⁴: Եկեղեցու կրած նյութական վնասը կազմում էր 88740 ռ.⁷⁵: Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո եկեղեցու կյանքը կարճատև եղավ: Բաքվի կենտրոնի վերականգնման կապակցությամբ 1931 թ. եկեղեցին քանդվում և տեղում կառուցվում է կոնսերվատորիայի շենքը⁷⁶:

ԱԲ. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ. Եկեղեցու հիմնադրման վերաբերյալ ստույգ տեղեկություններ չեն պահպանվել: Գտնվել է քաղաքի արվարձան Չայկավանում: Չայտնի է, որ 1909 թ. դրությամբ եկեղեցին ունեցել է 1 քահանա⁷⁷: Հիշատակվում է թեմում 1912⁷⁸ և 1916 թթ. գործող եկեղեցիների ցանկում⁷⁹: Եկեղեցին թուրք-թաթարների կողմից ամբողջապես կողոպտվել է 1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ թուրքական զորքի կողմից Բաքուն գրավելուց հետո⁸⁰: Եկեղեցու կրած նյութական վնասը կազմում էր 37740 ռ.⁸¹: Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ իշխանությունները հայ բնակչության և եկեղեցու նկատմամբ սկսեցին իրականացնել հալածանքի քաղաքականություն, 1929 թ. դեկտեմբերի վերջին «Բանվորական ակումբը» պահանջում է փակել եկեղեցին և հանձնել բանալիները⁸²: 1930 թ. հունվարի 3-ին «Կոմմունարխոզի» վարիչ Պիշկինը իր մոտ է հրավիրում թեմի առաջնորդ Մատթևոս արք. Մատթևոսյանին (1922 նոյեմբեր - 1934) և պահանջում իրեն հանձնել եկեղեցու բանալիները, խոստանալով որ շուտով կվերադարձնի⁸³: Սակայն բանալիները ստանալուց հետո

⁷² Դոլուխանյան Լ., Հովհաննես Քաջազունին ճարտարապետ, Ե., 1997, էջ 10:

⁷³ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:

⁷⁴ Նույն տեղում, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:

⁷⁵ Նույն տեղում, ց. 5, գ. 189, թ. 7:

⁷⁶ Տիգրանյան Է., ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյան, էջ 53:

⁷⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 24:

⁷⁸ Նույն տեղում, գ. 1921, թ. 29:

⁷⁹ Նույն տեղում, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:

⁸⁰ Նույն տեղում, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:

⁸¹ Նույն տեղում, ց. 5, գ. 189, թ. 7:

⁸² Նույն տեղում, ֆ. 149, ց. 1, գ. 214, թ. 1:

⁸³ Նույն տեղում:

հունվարի 5-ի գիշերը ադրբեջանական խուժանը ներխուժում է եկեղեցի և կողպատում այն⁸⁴: Դրանից հետո շենքը վերակառուցվում է որպես մշակութային հիմնարկություն⁸⁵:

ՍԲ. ԶՈՒՓՍԻՄԵ. XIX դ. վերջին Բաքու քաղաքի արվարձաններից մեկում՝ նավթարդյունաբերական Բալախանիի շրջանում հայ ազգաբնակչության ստվարացման պատճառով թեմական խորհրդը առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցի օրոք (1896 դեկտեմբերի 20 - 1898 մարտ) 1898 թ. որոշում է Բիբի-Յեյրաթի և Բալախանու հատվածներում կառուցել Սբ. Զոհվածների անվամբ եկեղեցի⁸⁶: Եկեղեցու կառուցման հովանավորությունը ստանձնել էր «Բաքվի նավթարդյունաբերողների խորհուրդը» հանձին նրա նախագահ՝ Արշակ Ղուկասյանի, որն այդ նպատակով հատկացրել էր 20000ռ.⁸⁷: Սակայն, ցարական կառավարության, մասնավորապես Կովկասի կառավարչապետ հայտայաց Գ. Գուլիցինի կողմից ստեղծված արհեստական արգելքների պատճառով եկեղեցու կառուցման թույլտվությունը ձգձգվեց: Իսկ «Բաքվի նավթարդյունաբերողների խորհուրդին» պարտադրվեց հոգալ Բաքվում կառուցվող ռուս ուղղափառ եկեղեցու շինարարական ծախսերը⁸⁸: Չնայած Ե Սուրենյանց կաթողիկոսի՝ 1914 թ. մայիսի 14-ին եկեղեցու բարերար, նավթարդյունաբերող Արշակ Ղուկասյանին հղած օրհունության կոնդակում թույլատրվում էր նրան եկեղեցու զանգակատան տակ թաղելու ննջեցյալներին և շինելու տոհմական դամբարան⁸⁹: Եկեղեցու կառուցման թույլտվությունը եղավ ավելի ուշ շրջանում՝ 1914 թ. փետրվարի 17-ին: «Արարատ» ամսագրում այդ մասին ասված է հետևյալը. «Սինդրը լսելով Ս. փոխարքայի մարտի 9-ի թ. 7239 գրութիւնը, որոշեց ուղարկել եկեղեցու հաստատած հատակագիծը և նախահաշիվը, պատվիրել Շամախու կոնսիստորիային հայտնել Կոմսերցիի սովետնիկ պ. Արշակ Ղուկասյանին, թե Թագաւոր Կայսրը այս տարվա փետ. 17-ին բարձրագոյնս բարեհաճել է թույլ տալ կառուցանել եկեղեցին

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ Նույն տեղում, ֆ. 409, ց. 1, գ. 2685, թ. 2:

⁸⁶ Ակնունի է., Կովկասեան վերքեր, հ. Ա, ժընեվ, 1903, էջ 91:

⁸⁷ ԶԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ Նույն տեղում, ֆ. 149, ց. 1, գ. 167, թ. 16:

Բագում»⁹⁰: Եկեղեցու ճարտարապետն էր Գ. Տեր-Սիքեւյանը⁹¹: Սակայն, ինչ-ինչ պատճառներով, եկեղեցու կառուցման գործը այդպես էլ չծեռնարկվեց:

ՄԲ. ՍՍՀՄԿ ԵՎ ՄԲ. ՄԵՍՐՈՊ. XIX դ. վերջերին Բաքվի արվարձաններից Սարունչինում հայ ազգաբնակչությունն այնքան է ստվարանում, որ դառնում է գրեթե զուտ հայկական թաղամաս: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կարիք էր զգացվել այդտեղ կառուցել եկեղեցի: 1896 թ. Սարունչինում իր միջոցներով եկեղեցի կառուցելու մտադրություն է հայտնել բաքվաբնակ Եղիա Եղիազարյանը, սակայն իշխանություններն արգելել էին իրականացնելու այդ մտահղացումը⁹²: Տեղի հայությունը սակայն չհրաժարվեց եկեղեցի ունենալու մտադրությունից: Թեմի առաջնորդ Սնանիա եպս. Համազասպյանի օրոք (1903 հունիսի 16 - 1914 մայիս) Քաղաքային Դուման 1909 թ. սեպտեմբերի 29-ին տվեց եկեղեցու կառուցման թույլտվությունը, իսկ 1912 թ. դեկտեմբերի 12-ին հատկացրեց 2200 քառ. սաժեն հողատարածք⁹³: Եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքները սկսվեցին 1914 թ.՝ թեմի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Սկրտչյանի օրոք (1914 մայիսի 31-1915 նոյեմբեր): Եկեղեցու կառուցման նպատակով կազմավորված հոգաբարձությունը ղեկավարում էր «Բաքվի հայոց կուլտուրական միության» կրթական մասնաճյուղի նախագահ, ինժեներ Գեղամ Կոստանյանցը⁹⁴: Նույն թվականի սեպտեմբերի 14-ին օծվել է Սբ. Սահակ և Սբ. Մեսրոպ անվամբ եկեղեցու հիմնը: «Այսօր առաւօտեան, - ասված է հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին Կոստանյանցին այդ առիթով հղված հեռագրում, - սեպտեմբերի 14-ին տառերի գիւտի բազմադարեան յիշատակին Բալախանիում դրուեց և օծուեց ս. Սահակ և Մեսրոպ անուան եկեղեցու հիմքը»⁹⁵: Կաթողիկոսի պատասխան հեռագրում ասված է հետևյալը. «Օրհնում եմ Ձեզ ս. Սահակի և Մեսրոպի անուն եկեղեցու շի-

⁹⁰ «Արարատ», 1916, մարտ-ապրիլ, էջ 203:

⁹¹ ՀԱՍ, ֆ. 149, ց. 1, գ. 237, թ. 3:

⁹² Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», 9 օգոստոսի, 1997, թիվ 79, էջ 9:

⁹³ ՀԱՍ, ֆ. 149, ց. 1, գ. 167, թ. 1, 5-6, տե՛ս նաև ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:

⁹⁴ «Մշակ», Թիֆլիս, 26 սեպտեմբերի, 1914, թիվ 141:

⁹⁵ Նույն տեղում:

նութեան հոգաբարձութեան կոմիտէտին և եկեղեցու օծմանը բոլոր ներկայ եղողներին»⁹⁶: Սակայն այս եկեղեցին ևս դարձյալ ինչ-ինչ պատճառներով այդպես էլ չկառուցվեց: Այն չի հիշատակվում թեմում 1916 թ. գործած եկեղեցիների ցանկում⁹⁷:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, միանշանակ պետք է նշել, որ Բաքու քաղաքում գործած եկեղեցիները մահմեդական հոծ զանգվածով շրջապատված հայ բնակչության համար եղել են ազգապահպանման այն կառույցները, որոնց ազգանվեր գործունեության շնորհիվ դարեր ի վեր պահպանվեցին հայկական ծեսերը, հավատալիքները, մշակույթը, դավանաբանությունը և ընդհանրապես ազգային ոգին ու ավանդները:

ГЕВОРГ СТЕПАНЯН
Горисский Гос. Университет

КРАТКИЙ ОЧЕРК ИЗ ИСТОРИИ АРМЯНСКИХ ЦЕРКВЕЙ ГОРОДА БАКУ

РЕЗЮМЕ

На Апшеронском полуострове и в Баку армянское население проживало с древнейших времён. В г. Баку армяне имели пять действующих церквей (Св. Богаматери, Св. Григора Просветителя, Св. Татевоса и Бардугимеоса, Св. Таркманчац и Св. Иоана Крестителя). Благодаря патриотической деятельности этих церквей, веками сохранялись армянские обряды, культы, культура и национальный дух армян Баку.

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, ք. 56:

ՇԵՐԱՍԱՊԱԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ
ԵԼԻՁԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՅԱՆԳՈՒՄ (XIX դ.)

Շերամապահությամբ Անդրկովկասը (հատկապես արևելյան տարածքները) հայտնի էր վաղ ժամանակներից ի վեր: Արևելքի ժողովուրդների, հատկապես նրանց վերնախավի, կենցաղում հարգի էին մետաքսե ճոխ հագուստները, ձեռագործ-ոսկեկար ծածկոցներն ու վարագույրները: Եվ պատահական չէր, որ Երևանի, Գյանջայի, Ղարաբաղի և նախկին այլ խանություններում հարկերն ու տուրքերը վճարվում էին նաև մետաքսով¹:

XIX դ. սկզբներին շերամի մշակման ու ստացված արդյունքի չափերը Կովկասում նվազ էին. այն բացատրվում էր նաև շերամի որդի հաճախակի կրկնվող՝ տարաբնույթ հիվանդությունների տարածմամբ ու մշակման հետամնացությամբ: Մինչև XIX դ. կեսերը «շերամապահ գյուղացին յուր տանը ոտնաչարխով պատրաստել է թել, որը գնել են տեղական վաճառականներն ու արտահանել»², դրա չափերը սահմանափակ էին, և չնայած տարածաշրջանի բնակլիմայական բարենպաստ պայմաններին՝ «դժվար է հավատալ, որ Շաքիի, Շիրվանի, Ղարաբաղի, Գանձակի, Ղուբայի ու Թալիշի հարթավայրերը տարեկան արտահանում են ընդամենը 15 000 փութ մետաքս»³:

Ելիզավետպոլի նահանգում շերամի բոժոժի ու մետաքսաթելի արտադրանքով աչքի էին ընկնում Շուշին, Նուխին և Գանձակը. դրանք մշանավոր էին ոչ միայն շերամի բոժոժի, մետաքսաթելի բարորակ տեսակներով, այլ նաև արտադրված թելերով ու գործվածքներով:

Դեռևս «1829թ. Շուշի քաղաքում արտադրվել էր 7200 հատ՝ որոշակի չափի, մետաքսե գործվածք, որից 740-ը գլխաշոր, 6100-ը՝ միաչափ հատված կտորներ էին. դրանցից կարում էին վարագույրներ,

¹ "Кавказская шелководческая станция", вып. 3, т. XII, Тифлис, 1902, с. 1.

² «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 99-100 (Ե. Լալայան, «Վարանդա»):

³ Обзорение российских владений за Кавказом, ч. 1, СПб, 1836, с. 50.

ծածկոցներ, հագուստներ և այլն: Շուշիում հաշվվում էր 324 ջուլիակ (նաև՝ կտավագործ) ու բանվոր, իսկ եղած դազգահների թիվը՝ 132: Մեկ կտորաչափը գործելու համար, ջուլիակը ստանում էր 90 կոպ. արծաթ աշխատավարձ: 27 միավոր գլանվածքի համար՝ 1ռ. 20 կոպ., հենքի (գործվածքի նախահիմք) համար՝ 10ռ., դրա թելերի կարգավորման ու ամրացման աշխատողին՝ 1ռ., ներկողին՝ 20 կոպեկից մինչև 2 ռուբլի՝ նայած չափի ու գույնի: 10 վերշուկից մինչև մեկ արշին լայնությամբ և 25 արշին երկարությամբ մետաքս գործվածքն արժեր 8ռ. արծ.: Շուշի քաղաքում կար 7 մոտովիլ (թել փաթաթող սարք), որոնցով աշխատում էին 15 բանվոր: Որակյալ (նուրբ, հարթ) մետաքսաթելի յուրաքանչյուր ստիլի (կշռաչափ, մոտ մեկ ֆունտ՝ 400 գրամ) ստացման համար արտադրողին վճարվում էր 24 կոպ. պղնձե դրամ, իսկ վատորակ կոպիտ մետաքսաթելի դեպքում՝ 18 կոպ»⁴: Գանձակ քաղաքում կար 12 գործարան՝ տարեկան 10 300 ռուբլու արտադրանքով. գործում էին «ամիլի», «խաս-կրմիզ», «ղասաբ-դարայա», «չարգատ» կոչված տեսականի, որոնցից կարում էին գլխաշորեր, չադրաներ, ներքնահագուստ և այլն. դրանցից 3500ռ. արժողությամբ ապրանքներ արտահանվում էր Թիֆլիս, մնացածը վաճառվում և սպառվում էր տեղում⁵:

1830-1840-ական թթ. ելիզավետպոլի գավառում շերամապահ-մետաքսագործների թիվը կազմում էր 500 մարդ, որոնց կողմից արտադրվածը հիմնականում բավարարում էր իրենց՝ արտադրողների և երկրամասի բնակչության պահանջմունքները. որոշակի չափի մետաքսյա գործվածքի մի հատվածն արժեր 3-8ռ.⁶, այն մատչելի էր բնակչության միջին խավի համար: Շերամապահները ստացված հումքի անճշան մասն էին տրամադրում ու վաճառում տեղում. մեծ մասն արտահանվում էր արտաքին շուկաներ: Անդրկովկասն, այդ թվում և Ելիզավետպոլի նահանգը, Ռուսաստանի համար, մետաքսաթել ու հումք մատակարարող՝ հիմնական գաղութն էր և զնալով այդ պահան-

⁴ Материалы для изучения экономический быт государственных крестьян Закавказского края, т. VII, Тифлис, 1887, с. 311, (այսուհետև՝ МИЭБГКЗК).

⁵ Сборник сведений о Кавказе, т. I, Тифлис, 1869, от. I, с. 74.

⁶ "Обозрения российских владений за Кавказом", ч. III, СПб, 1838, с. 298.

ջարկը աճում էր: Տեղի արտադրության տեմպերի բարձրացման նպատակով, 1830-ական թթ. սկսած ռուսական կառավարության շահագրգիռ, անմիջական միջնորդությամբ, Անդրկովկաս էին գործողվում բանիմաց մասնագետներ. առաջիններից էր շերամագործ-վաճառական Կաստելլան (Շվեցարիայից), որը Ռուսաստանի ֆինանսների մինիստրությունից ստանալով արտոնագիր ու դրամական միջոցներ, 1828 թ. մեկնեց Անդրկովկաս՝ Նուխի գավառ, ուր և ծավալեց իր գործունեությունը: Օգտագործելով մասնագիտական իր կապերը տարբեր երկրների հետ, նա ձեռք բերեց բոժոժի լավորակ, բազմագույն սերմեր և տրամադրեց տեղի շերամապահների կարիքներին. նա մասնագիտական խորհուրդներ էր տալիս շերամի որդի նորմալ խնամքի, աճեցման, բոժոժից մետաքսաթելի ստացման, փաթեթաուլորման, ինչպես նաև արտադրական՝ եղած սարքերի վերանորոգման, նորագույն միջոցների հայթայթման և արտադրական տարաբնույթ այլ հարցերում ևս... Ցավոք, 1836 թ. նրա գործունեությունն ընդհատվեց՝ վերահաս մահվան պատճառով⁷:

Նույն՝ 1836 թ. ապրիլի 22-ի օրենքով հիմնվեցին «Շերամապահ-մետաքսագործների» և «Շերամի տարածման ու զարգացման» ընկերություններ, որոնց նախաձեռնությամբ, Նուխիում շերամապահներին տրվում էին ազատ գործունեության արտոնություններ՝ հունքի, մետաքսաթելի, գործվածքների վաճառքի, արտահանման գործընթացներում և հարակից այլ հարցերում ևս. օրինակ պետությանը տրվելիք ակցիզային հարկերը, շերամապահ-մետաքսագործները կարող էին վճարել դրամով, բնամթերքով, կամ մշակված մետաքսաթելով. խրախուսման միտումով. սահմանվում էին տարբեր պարգևներ⁸ և այլն: Հիշյալ ընկերությունները ձգտում էին երկրամասում եղած անբնակ վայրերը բնակեցնել, հիմնել թթի նոր այգիներ: «Շերամապահ-ռանչպարները» ստացված բոժոժի մի մասը, որպես փոխհատուցում (վերը նշված

⁷ "Кавказ", Тифлис, 1853, N 54, с. 216 (Сочинения П. Райко, "Обозрение шелка за Кавказом").

⁸ Акты собранные Кавказской археографической комиссией, (այսուհետև՝ АКАК), т. IX, Тифлис, 1884, с. 657-659.

արտոնությունների դիմաց) պետք է հատկացնեին հիշյալ՝ «Շերամի տարածման ու զարգացման ընկերությանը»:

Նուխի գավառի (նաև քաղաքի) մետաքսի արտադրության ընդհանուր վիճակը, համեմատաբար, բարվոք էր. տեղական սարքերով արտադրված մեկ փուլ մետաքսը տեղում վաճառվում էր 65-75 ռուբլով, իսկ եվրոպական դազգահներով ստացված բարձրորակ մետաքսաթելի մեկ փուլը Մոսկվայում վաճառվում էր կրկնակի թանկ գներով: Այդ ընկերությունը հուսալի միջնորդ էր առևտրի կազմակերպման, լավորակ սերմերի մատակարարման, արտադրական առաջավոր փորձի հաղորդման և այլ հարցերում: Օրինակ՝ այն ձեռք էր բերել ու պահեստավորել չինական որակյալ սերմերի տեսականու մեծ պաշար՝ մեկ զոլոտնիկը՝ 4-9ռ. արժեքով: 20 ֆունտ (1 ֆունտը=400 գր.) սերմի ստացման համար պահանջվում էր 5 փուլ ընտիր բոժոժ. չորանալուց հետո մնում էր կեսը՝ 2^{1/2} փուլ, որից և ստացվում էր 20 ֆունտ ոլորված՝ պատրաստի մետաքսաթել. այդ տեսակետից նախընտրելի էր Նուխի արտադրանքը, որն անհամեմատ բարձր որակի էր. մեկ փուլն արժեր 370-540 ռուբլի: Ղարաբաղում վատ մշակման պատճառով, արտադրված մետաքսն անորակ էր և վաճառվում էր ընդամենը 60-65 ռուբլով⁹:

Ուսական կառավարության նախաձեռնությամբ 1836 թ. հիմնադրվեց "Общество для распространения за. Кавказом шелководства и торговой промышленности" ընկերությունը՝ ներքին գործերի մինիստրության 3-րդ բաժանմունքի պետ, կոմս Ա. Բենկեհորֆի գլխավորությամբ և իշխաններ Վ. Դուգորուկովի, Մ. Դոնդուկով-Կորսակովի և Ա. Ժադովսկու շահագրգիռ աշխատակցությամբ: Այն ուներ պետական, տնտեսական, ինչպես նաև հեռահար նպատակներ ու ծրագրեր, և պատահական չէր, որ դրանց իրականացման համար ընտրված էին Անդրկովկասի շերամա-մետաքսագործական նշանավոր կենտրոններ՝ Նուխի, Ջուբախի բնակավայրերը ու դրանց հարող տարածքները¹⁰, և դրանց կարևորության մասին վկայում են ժամանակակից

⁹ Гагемейстер Ю., Кавказские очерки, СПб, 1845, с. 13-35.

¹⁰ АКАК, т. VII, Тифлис, 1878, с. 3.

ուսումնասիրող-մասնագետներից շատերը, որոնցից մեկի կարծիքով. «Շերամապահությանը տարածված էր ողջ Ելիզավետպոլի նահանգում ...կենտրոնը Նուխին էր. 1860-ական թթ. սկսած՝ ողջ Կովկասում այն առաջինն էր»¹¹: Հիշյալ ընկերությանը տրամադրվեց թե՛նու 900 այգի և 600 շերամապահ պետական գյուղացիներ՝ ռանչպարներ. վերջիններս 30 տարով ազատվում էին հարկերից ու տուրքերից: Հետագայում այդ ընկերությանը հատկացվեցին նոր հողաբաժիններ, որոնց ընդհանուր տարածքը հասնում էր 5000 դեսյատինի¹²: Նրան իրավունք վերապահվեց տեղում գնելու մեծ քանակությամբ մետաքս (իւնք, թել)՝ Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններ առաքելու միտումով, որի համար պետական գանձարանից տրամադրվեցին բավականաչափ դրամական վարկեր: 1838 թ. Մոսկվայի նահանգում վերամշակված 38000 փուխ մետաքսահույնից 8200-ը եվրոպական էր, 8000-ը՝ չինական, իսկ 21800-ը՝ կովկասյան¹³, որում իրենց բաժիններն ունեին հայկական Գանձակի (Ելիզավետպոլ), Երևանի գավառները:

Ելիզավետպոլում հիշյալ ծրագրերն իրագործելու և նորերը ձեռնարկելու առումով, կենտրոն դարձավ Նուխիի գավառը՝ հանձինս Նուխի քաղաքի ու Վարդաշեն, Կուրկաշեն, Բում գյուղական համայնքների՝ հաջմազ, Վանդամ, Նիժ գյուղերի: Նշված բնակավայրերն աչքի էին ընկնում բոժոժի որակյալ տեսականիով և արտադրական չափերով. մշակվում էին ճապոնական, իտալական, խորասանյան, չինական և այլ երկրներից ներմուծված որակյալ սերմատեսակներ¹⁴: Նուխի քաղաքում էլ հիմնվեց վերոհիշյալ ընկերության գրասենյակը, ինչպես նաև դրան պատկան շերամապահական, արտադրական այլ մասնաճյուղեր՝ չորանոց, պահեստ, խանութ և հարակից այլ կառույցներ...: Գործարկվեց ընկերության միջոցներով հիմնադրված մետաքսաթելի ստացման-ուլորման սեփական ձեռնարկությունը, որում եվրոպական արտադրության 42 դազգահների վրա կատարվում էին արտադրական

¹¹ Науменко Е., Елисаветская губерния (военно-стратегическое описание), Тифлис, 1903, с. 363.

¹² АКАК, т. IX, с. 657-659.

¹³ Исаев Г., Роль текстильной промышленности в генезисе и развитии капита-лизма в России 1760-1860 гг., Ленинград, 1970, с. 150.

¹⁴ МИЭБГКЗК, т. VI, ч. I, (Нухинский уезд), с. 69-73.

պահանջվող բոլոր գործողությունները: Շահավետ, բարձր ցուցանիշներ ունենալու նպատակով, իրենց ձեռնարկությունում աշխատելու հրավեր ստացան իտալացի մետաքսագործների՝ թվով 12, այսպես կոչված, «Ֆարրիկային ընտանիքներ»: 1840-1850-ական թթ. Նուխի գավառում և այլ վայրերում, նույն ընկերության ջանքերով, տնկվեց 400000 թթենի. հաջորդ տարիներին այդ թիվը հասավ 4-6 միլիոնի¹⁵:

1841 թ. ռուսական պետության միջոցներով (տարեկան 1500 ռուբլի), վերը նշված ընկերության նախածեռնությամբ, Նուխի քաղաքի հարևանությամբ գտնվող՝ Ցար-Աբադ կոչվող բնակավայրում, բացվեց շերամի ուսումնարան 30 աշակերտով (տեղաբնիկներից). ուսման տևողությունը՝ 4 տարի: Այստեղ, տեսական դասընթացները զուգակցվում էին գործնական շերամապահությամբ: Սաներն, ավարտական վկայական ստանալուց հետո, ընդգրկվում էին սույն արտադրության ոլորտում: Խրախուսման նպատակով, ուսումնարանում սահմանվել էր 10 ռուբլի թոշակ՝ առաջադեմ աշակերտների համար. ավարտական յուրաքանչյուր կուրս ստանում էր մեկ դազգահ և 100 ռուբ. դրամական նվիրատվություն¹⁶: Հետագայում, այս ուսումնարանի օրինակով, երկրամասի շերամապահական այլ վայրերում, ստեղծվեցին նորերը: Ցար-Աբադի սաները, բացի իրենց դասերից ու գործնական հանձնարարություններից, պարտավորված էին հսկել, օգնել շրջակա գյուղերի շերամագործներին, քանի որ թթի այգիների հիվանդությունների պատճառով արագ տարածվում էին շերամի որդի դեղնախտը և այլ հիվանդություններ, որոնցից և սատկում էին դրանց մեծ մասը: Բացի նշվածից, շերամապահների տներում ու հարակից տարածքներում պահոցները գտնվում էին անմխիթար, հակասանիտարական վիճակում: Շերամապահ-գյուղացիները սատկած որդերը չէին մեկուսացնում ու թաղում՝ իրենց տարածքից հեռու, հողի մեջ, որի պատճառով դրանք նեխում էին, պահոցն ու շրջակա տարածքը լցնում զարշահոտությամբ, պատճառ դառնալով նոր հիվանդությունների բռնկմանն ու տարածմանը: Շուշի գավառի Աղդամ գյուղից հայտնում էին, որ «շերամի գործով

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Гуляшамбаров С., Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1894, с. 301-306.

գյուղում զբաղված են 30 մարդ. հիվանդությունների պատճառով բերքը նվազ է ու անորակ, որից և բոժոժի փուլը վաճառվում է ցածր գնով՝ 6-8ռ.¹⁷»։ Ցավալին այն էր, որ շերամապահները հասկանում էին, որ օրինակ՝ որդերին պետք է կերակրել թթենու թարմ տերևներով, սակայն թերանում էին, և այն մատուցվում էր վաղօրոք քաղված տերևների կույտերով, որոնք արդեն կորցրել էին իրենց թարմությունն ու սննդարարությունը։ Բացի նշվածից, շերամի պահոցները զետեղված էին հողե տանիքներում, թաց բոժոժը չորոցնում էին արևի տակ¹⁸, և անթույլատրելի այլ գործողություններ ևս. «Շերամապահությունն ու մետաքսագործությունն այստեղ կարող են զարգանալ, եթե նրանք (շերամապահները - Գ. Ա.) ճիշտ, շահագրգիռ սրտացավությամբ վերաբերվեն շերամի խնամքին և կարողանան հետևել արտադրության նորույթներին ու մեթոդներին... կարևոր է նաև, որ շերամապահներին ազատել տեղի առևտրական-միջնորդների ավելորդ «ծառայություններից»¹⁹։ Ուսումնարանի սաների գիտելիքներն ու ջանքերը նույնպես ուղղված էին այդ թերությունների վերացմանը...

Յար-Աբադի ուսումնարանը գործեց մինչև 1867 թիվը։ Իր գործունեությունը դադարեցրեց նաև տվյալ ուսումնարանը հիմնադրած՝ «Общество для распространения за Кавказом шелководства и торговой промышленности» կազմակերպությունը, որը շահագրգիռ սրտացավությամբ մեծ գործունեություն ծավալեց։ Ղեկավարվելով նշանավոր ռուս պաշտոնյաների կողմից, նրանց ֆինանսական միջոցներով զնվեցին 60 դազգահ, 300 մետաքսաթելի ոլորման սարքեր և օգտակար այլ միջոցներ ևս²⁰։ Նպատակը մեկն էր՝ բարձրացնել տեղի շերամապահ-մետաքսագործական ձեռնարկությունների արտադրության որակը։ Ջանքեր չէր խնայում նաև Կովկասի փոխարքա Մ. Վորանցովը. իր հաշվետվությունների մեջ նա նշում էր, որ իր տրամադրու-

¹⁷ Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК), т. VI, от. II, с. 74-75.

¹⁸ Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, (այսուհետև՝ Свод материалов), т. IV, Тифлис, 1888, ч. I, гл. IV, с. 160.

¹⁹ СМОМПК, т. VI, от. II, с. 108.

²⁰ Свод материалов... т. IV, ч. I, гл. IV, с. 160.

յան տակ եղած պետական գումարներով ձեռք էին բերվել մի քանի մոտովիլ (թելի փաթաթման, ուլորման սարք) և այլ գործիքներ, որոնք անհատույց հատկացվել էին Նուխի գավառի մետաքսագործներին և հիշյալ ուսումնարանին: Նրա ջանքերով ձեռք բերված «Робѣн» մակնիշի ֆրանսիական արտադրության հաստոցներ, և դրանց օրինակով՝ տեղացի վարպետների աշխատակցությամբ հավաքված նոր սարքերն անհատույց տրվում էին Անդրկովկասի մետաքսագործներին²¹: Հիշյալ միջոցառումները և տեղերում անհատ ձեռներեցների գործադրած ջանքերն իզուր չանցան, 1840-1850-ական թթ. նկատվեց արտադրության որոշակի աճ. 1842 թ. միայն Նուխի գավառից արտահանվել էր 137000, իսկ 1845 թ. 105000 ռուբլու մետաքս (նաև հումք)... «Մետաքսը կա և մնում է Անդրկովկասի արտադրական կարևորագույն ճյուղը և մշտապես ունի իր սպառողը: Շաքիի մարզում տարեկան ստացվում է 10000-14000, Շիրվանից՝ ավելի քան 5000, Ղարաբաղից՝ 2000, Ղուբայից՝ 4000 փուֆ մետաքս: Նշվածի մոտ 2/3-ը առաքվում է Ռուսաստան, մնացածը՝ արտասահմանյան այլ երկրներ: Ղարաբաղի մետաքսը վատորակ է, և մեկ փուֆը վաճառվում էր 60-65 ռուբլով, իսկ Նուխիին՝ անհամեմատ լավ, և արժեք 370-540ռ. (1 փուֆը). հետագայում, դա էլ չդիմանալով մրցակցությանը, վաճառվում էր 260 ռուբլով... Նուխի գավառի մետաքսի մի մասը՝ Պարսկաստանի, մյուսը՝ Ռեդուտ-Կալեի մաքսատան միջոցով, տարվում է Կոստանդինուպոլիս»²²: Այդուհանդերձ, նշված ժամանակահատվածում մետաքսի ներմուծումը (քանակով) գերազանցում էր արտահանմանը. 1855 թ. միայն ապրիլի ընթացքում Անդրկովկաս է ներմուծվել 37148 ռ. 50 կոպեկի մետաքսահումք և 35842 ռ. 18 կոպ. արժողությամբ մետաքսե գործվածքներ, իսկ տեղական հումքի արտահանումը կազմել է ընդամենը 17950 ռուբլի²³. փաստորեն մետաքսեղենի ներմուծումը, կրկնակի չափով, գերազանցում էր արտահանմանը...

Տեղական հումքի, մետաքսե գործվածքների, արհեստավորների ձեռագործ ապրանքների առևտուրն ամենուր կատարվում էր Շու-

²¹ АКАК, т. X, с. 866.

²² Гегемейстер Ю., նշվ. աշխ., էջ 13-19:

²³ "Кавказ", Тифлис, 1855, N 48, с. 195.

շիի, Գանձակի, Ազուլիսի, Թիֆլիսի ու այլ վայրերի հայ առևտրական, միջնորդ վաճառականների և արդյունաբերողների նախաձեռնությամբ. ոմանց մոտ այն հասնում էր եվրոպական չափանիշների²⁴. «Ասիական (նաև Անդրկովկասյան) համապատասխան մարզերում, տեղական սարքերով արտադրված (ուլորված) մետաքսաթելի մեկ փուլն արժեր 90-100ռ. (մինիմում՝ 70-90ռ.), իսկ եվրոպական հաստոցներով ու սարքերով արտադրվածը՝ 140-200ռ.»²⁵:

Ռուս արդյունաբերողները ձգտում էին (հետագայում էլ իրագործեցին) մետաքսի հումքը հասցնել ու մշակել Առսկվայում և Ռուսաստանի այլ քաղաքներում, որն առավել ձեռնտու և շահավետ կլիներ ռուս արդյունաբերողների համար, և կնպաստեր մետաքսաթելի արտադրության որակի բարձրացմանը: Կազմակերպվող ցուցահանդես-տոնավաճառները խրախուսում էին այդ գործընթացները. օրինակ, 1858 թ. Նիժգորոդում նման միջոցառման ժամանակ, ցուցադրվել և վաճառվել էր 1220 փուլ՝ 107950 ռուբլի արժողությամբ, անդրկովկասյան մետաքս (հումք, թել)²⁶: Այն սպառվում էր նաև տեղում. տնայնագործները սեփական հումքով ստանում էին մետաքսաթել և գործում էին պարզ, միագույն կտորեղեն, որով զբաղված էին մահմեդական ջուլիակները, իսկ հայերը նախընտրում էին բազմագույն, դաջվածքների, նախշազարդ գործվածքների, որոնցից կարում էին վարագույրներ, ծածկոցներ, հագուստներ. միագույն կտորների դաջման աշխատանքները պատվիրում էին Թավրիզում, ուր կար 1500 հատ դաջման տարբեր նախշասարքեր, իսկ Շամախի քաղաքում՝ 500: Հայ մետաքսագործները նախընտրում էին Թավրիզը...²⁷ Տնայնագործ արհեստավորները պատրաստում էին գունավոր մետաքսաթելեր՝ եզրակարերի համար. ձեռագործում էին զանազան զարդանախշեր, որոնք շրջափակում էին արծաթյա, ոսկյա թելերի եզրակարերով, ուլունքներով ու մարգարիտներով²⁸:

²⁴ Гагемейстер Ю., նշվ. աշխ., էջ 13-14:

²⁵ Исаев Г., նշվ. աշխ., էջ 150:

²⁶ "Московские ведомости", 1853, N 130, (Егунов, О шелководстве...)

²⁷ Гагемейстер Ю., նշվ. աշխ., էջ 53:

²⁸ Пиралов А., Краткий очерк кустарных промыслов Кавказа, СПб, 1913, с. 14.

Գանձակում, Շուշիում, ինչպես նաև Անդրկովկասի հայաբնակ այլ վայրերում, մեծ տարածում ունեւ մետաքսաթել ասեղնագործությունը. 1880-ական թթ. այն արդեն կրում էր մանուֆակտուրային արտադրության բնույթ²⁹: Համաշխարհային ցուցահանդեսներում (Փարիզ, Լոնդոն, Պետերբուրգ, Մոսկվա և այլն) հիշյալ մոլուներից լավագույններն արժանանում էին պարգևների³⁰:

Շուշիում արտադրվում էր «ալիշա» կոչված որակյալ (խիտ, ամուր գործվածք) մետաքսե կտորեղենը, որից կարում էին կանացի սպիտակեղեն: Այն ներկում էին ներդաշնակ գույներով ու կարում արտահագուստներ, նաև հայկական տարագի մոլուներ... Այստեղ արտադրված մետաքսե գլխաշորերը ներկում էին մուգ կապույտ գույնով՝ սպիտակ, դեղին եզրակարերով ու նախշերով ձևավորված. այն հիմնականում կրում էին մահմեդական կանայք³¹: Տեղական արտադրության մետաքսեղենի նշված տեսականին՝ իր որակով ու քանակով, աննշան էր, բավարարում էր տեղաբնիկների համեստ պահանջմունքները, իսկ Անդրկովկասն, այդ թվում նաև Ելիզավետպոլի նահանգը, մնում էր Ռուսաստանին մետաքսահումք մատակարարող հիմնական բազան, որի արտահանման չափերը զնալով մեծանում էին...

Ելիզավետպոլի նահանգի 8 գավառների 88 գյուղեր (ըստ Արասխանյանի) շարունակում էին մնալ շերամապահության, մետաքսի հումքի ու թելի ստացման ու արտահանման հիմնական վայրերը, որոնք մեկ տարվա ընթացքում օգտագործում էին 3415 ֆունտ (213,43 փութ) բոժոժի սերմ. մոտավոր պատկերացման համար նշենք, որ «Ձանգեզուրի Շվանիժոր գյուղում ամենքը զբաղված են դրանով. այստեղ տարեկան օգտագործում են 12 ֆունտ սերմ, ոռո գառի քանակություն է 152 ծխից քառկազած բնակավայրի համար»³²: (Ընդգծումը մերն է):

²⁹ Առաքելյան Գ., Արևելյան Հայաստանի արդյունագործությունը XIX դ. II կեսին, Ե., 1990, էջ 179:

³⁰ СМОМПК, вып I, Тифлис, 1881, с. 76-77.

³¹ Труды Кавказской шелководственной станции, т. VIII, ч. 4, Тифлис, 1900, с. 94.

³² «Մուրճ», Թիֆլիս, 1900, N 3, էջ 346-347:

Մետաքսահումքի ու թելի ստացման քանակով, ինչպես նախկինում, այնպես էլ 1880-ականներին առաջատարը Նուխիի գավառն էր: 1885 թ. Նիժ գյուղում մեկ ֆունտ բոժոժի սերմից ստացվում էր 22^{1/2} փուխ՝ անմշակ, հում բոժոժ. այդ գյուղի բերքի ընդհանուր քանակը (մեկ սեզոնի) կազմում էր 900, իսկ ողջ Նուխիի գավառում՝ 43750 փուխ թաց և մշակված՝ 14500 փուխ չոր, բարձրորակ հումք-բոժոժ: Դրա մեկ փուխը (1886 թ.) 8 ռուբլուց իջել էր 4ռ., ուստի նշվածի ընդհանուր գումարը կազմում էր 58000 ռուբլի³³: Մետաքսի հումքը (թաց բոժոժը) գնվում ու մշակվում էր տեղի գործարաններում: Գյուղերում, նախնական մշակման ենթարկված բոժոժը, նաև ոլորված մետաքսաթելի տեսքով, գնվում էր Նուխի քաղաքի արդյունաբերողների կողմից. նրանց ձեռնարկությունները կոչվում էին գործարաններ. օրինակ Վարդաշեն գյուղում դրանց թիվը 6-ն էր. նշանավոր էր Սիլիկովի գործարանը, որն ուներ ոլորման 24 դագգահ, Մկրտչյանիցը՝ 12, Տեր-Յարությունյանիցը՝ 6, Կանաչյանիցը՝ 6, Մնացականյանիցը՝ 8 դագգահներ: Նշված ձեռնարկությունների արտադրությունը կրում էր տնայնագործական բնույթ. այստեղ օգտագործվում էր մարդու ֆիզիկական ուժը. վարպետ-բանվորուհին ուղքով գործի էր դնում սարքը, իսկ կարծառի վրա՝ ձեռքերով կարգավորում թելի ոլորումն ու փաթաթումը. որպես վարձատրություն, ստանում էր ստացված մետաքսաթելի 1/8-ի մասով³⁴:

Մեկ օրում բանվորուհին հասցնում էր ստանալ չորս ստիլ (2 ֆունտ). մետ ստիլը 2 ռուբլով հաշված, օրավարձը կազմում էր 1 ռուբ.: Իսկ քաղաքային գործարաններում երիտասարդ բանվորուհիները ստանում էին 10-35 կոպ. օրավարձ, որը քիչ էր՝ 3-4 անգամ և պատահական չէր, որ վերոհիշյալ վարպետուհիները դեմ էին տեխնիկական նորամուծություններով հարստացող նոր գործարաններին, որոնցով առաջինը Նուխի քաղաքն էր. այստեղ գործող ձեռնարկությունների արտադրանքներն անհամեմատ որակյալ էին: Վատն այն էր, որ հումքը, հատկապես գյուղերում, անբավարար էր և եղածի վերամշակումը տևում էր մի քանի օր, լավագույն դեպքում երկու շաբաթ՝ ողջ տարվա

³³ МИЭБГКЗК, т. VI, ч. II, (Нух-й уезд), Тяфлис, 1887, с. 69-70.

³⁴ Նույն տեղում:

ընթացքում: Իսկ անբերրի տարիներին, դրանք անգործության էին մատնված. օրինակ Վարդաշենում, հիշյալ գործարաններից, վերջին երկու տարում (1886-1888 թթ.), աշխատում էր միայն մեկը՝ Տեր-Սկրտչյանինը: 1888 թ. Նուխի գավառում բոժոժի թաց հումքը վաճառվում էր 9-17 ռուբլով, իսկ չորը՝ 25-60ռ.: Ասիական (այսինքն՝ տեղական) սարքերով ոլորված մեկ փուլ մետաքսաթելն արժեք 120-250ռ., իսկ եվրոպական հաստոցներով արտադրվածը՝ 200-300ռ., ոլորվածը՝ 400ռ.³⁵:

1880-ական թթ. կարևոր երևույթ էր շերամա-մետաքսագործական ուսումնարանների հիմնադրումը՝ թվով 17-ը, որոնք առաջացան նահանգի համարյա բոլոր գավառներում³⁶, բացի Ղազախից. այն միակն էր, ուր ոչ-ոք չէր զբաղվում շերամապահությամբ: Այդ կրթօջախները հիմնվում ու զոյատևում էին արդյունաբերողների ու հատկապես գյուղական համայնքների հոգացությամբ ու դրամական միջոցներով. օրինակ, Գանձակ քաղաքի «Միխայելովյան» արհեստագործական ուսումնարանը (հիմնադրված 1872 թ.՝ Ռուսաստանի թագաժառանգ Միխայելի միջոցներով), իր գոյությունը շարունակում էր պահպանել նահանգի չորս գավառների (Ելիզավետպոլի, Շուշիի, Արեշի, Նուխիի) միջոցներով՝ տարեկան 27 530 ռուբ.: Այստեղ՝ գյուղական շրջաններից ընդունված սաները դառնում էին արհեստավորներ՝ հյուսն, կահույքագործ, դարբին, զամբյուղագործ, իսկ գյուղատնտեսական թեքումով, հմտանում էին այգեգործ-խաղողագործության, բոստանային, հետագայում նաև շերամապահության զբաղմունքներում³⁷:

Մեկ ուսումնական տարում ընդունվում էին 15-20-ական աշակերտներ, սաներ՝ տեղաբնիկներից: Ծրագրված դասընթացների հիմքը շերամա-մետաքսագործության ուսուցումն էր՝ զուգակցված գործնա-

³⁵ МИЭБГКЗК, т. VI, ч. II, (Нухинский уезд), Тифлис, с. 70-73.

³⁶ Ելիզավետպոլի գավառ՝ 2այքեր, Ղարաչինար. 2) Նուխի գավառ՝ Գեյնուկ, Կուխնուկ, Փաղար, Խաչմազ, Կուտկաշեն, Վանդամ, Վարդաշեն. 3) Ձհանչիրի գավառ-Բարդենի, Ալպաուտ, Սարով, Կասապետ. 4) Շուշիի գավառ-Աղջաբերդ, Աղդամ. 5) Ձերբախի գավառ-Կարգարագար. 6) Ձանգեզուրի գավառ-Կուբատլիս, 7) Արեշի գավառ-Աղդաշի, համայնքներում ու գյուղերում-տես՝ СМОМПК, вып VI, от. II (шелководство Елисавет-ой губ-ии), с. 74.

³⁷ "Кавказский край", т. LI, СПб, 1903, с. 146 (Елисавет-ский Губернский комитет о нуждах сельскохозяйственной промышленности).

կան շերամապահությանը: «Միխայելովյան» մասնագիտական ուսումնարանում (ուսուցիչ Կալազև), նկատվում էր առավել շահավետ, աշխույժ գործելակերպ. այստեղ մշակվում էր ցելուլյոզային (թաղանթանյութի) շերամի սերմ (սեզոնում 5¹² զոլոտնիկ)՝ ճապոնական, չինական, եվրոպական, Բադդադի, տարբեր տեսակների ու գույների. ընդհանրապես դրանք ուսումնարաններին հատկացնում էին «Անդրկովկասի շերամապահության կայան»-ի (ղեկավար՝ Գ. Շավրով) կողմից: Ուսումնարանների սաները, բացի մասնագիտական առարկաների ուսուցումից, կրթօջախներին կից շերամապահոցներում, զբաղվում էին գործնական աշխատանքներով. հետևում էին շերամի սերմից՝ որդի առաջացմանն ու բոժոժի ձևավորմանը և ստացված արդյունքի ճիշտ ու հետևողական խնամքին՝ տեսակավորել, հեռացնելով սատկած որդերին. առողջներին մթերել ու պահեստավորել: Ժամանակին, թե՛նու միայն թարմ տերևներով կերակրել, հետևել պահոցի սանիտարական պատշաճ վիճակի՝ օդափոխության, նորմալ ջերմաստիճանի և այլ միջոցառումների ու գործողությունների կիրառմանը: Նման աշխատածևր սաները պետք է փոխանցեին տեղի շերամապահ-գյուղացիական տնտեսություններին ու հետևեին նրանց գործունեությանը:

Ճիշտ ու հոգատար աշխատանքի արդյունքում, սաները ստանում էին բարձրորակ բոժոժատեսակներ, որոնք էլ, 1889 թ. Թիֆլիսում կազմակերպված «Կովկասյան գյուղատնտեսական ցուցահանդես»-ում արժանացան բարձր գնահատականի ու պարգևների: Ժամանակի ընթացքում կատարելագործվում էին նաև ուսումնարանները՝ ձեռք բերելով նոր գիտելիքներ, տեխնիկական ժամանակակից սարքավորումներ: Հիշյալ «Միխայելովյան» ուսումնարանում հիմնվեց առաջին գիտա-հետազոտական լաբորատորիան, որն ուներ մանրադիտակ, արտադրական սարքեր, գործիքներ, որոնք բերվել էին արտասահմանից: Սրա օրինակով, աստիճանաբար համալրվում էին նաև հիշյալ մյուս ուսումնարանները. կարևորն այն էր, որ ձեռք բերված նոր գիտելիքներն ու փորձը կիրառվում էին նաև արտադրության ոլորտում³⁸:

³⁸ СМОЛІК, ВІШ VI, СТ. II, С. 84-88.

XIX դ. 80-ական թթ.՝ կապիտալիզմի զարգացման պայմաններում, Անդրկովկասի մետաքսագործական շրջաններում, ձևավորվում էին ժամանակի պահանջներին համահունչ արտադրական նոր, խոշոր ձեռնարկություններ՝ գործարաններ. դեռևս «1870-ական թթ. շուշեցի հայ վաճառականներն արտասահմանից օրինակում են մանարանը և մետաքս ոլորող մեքենան...»³⁹: 1872-1883 թթ. տեղացի ձեռնարկատերերի ջանքերով, ձեռք բերվեցին ֆրանսիական արտադրության 60-ից ավելի թել ոլորող մեքենաներ. հաստոցներով համալրվեցին Նուխի և Շուշի քաղաքների ձեռնարկությունները: Նշված առաջընթացի պայմաններում, Ելիզավետպոլի նահանգում, աստիճանաբար պակասում էր շերամապահ-տնայնագործ արտադրողների թիվը. փոխարենն այն կենտրոնանում էր խոշոր գործարանատերերի ձեռքում: Դեռևս «1877 թվից Հադրուս գյուղում (Շուշիի գավառ) գործում էր մետաքսաթելի ոլորման ֆաբրիկա, որը պատկանում էր երեք գործարանատերերի՝ Գուլի Հակոբյանին (Հադրուսից), Իվան Զուրաբյանին (Շուշիից) և Նորաշենից՝ Ավագ Իսախանյանին: Այստեղ՝ 8 ամսվա (ապրիլ-նոյեմբեր) ընթացքում արտադրվում էր 50-60 փուլ բարձրորակ մետաքսաթել, որի մեկ փուլը Ֆրանսիայում վաճառվում էր 250-300 ռուբլով. նկատի ունենալով, որ մեկ փթի արտադրական ծախսերը կազմում էին ընդամենը 50-60ռ., այն 5-6 անգամ շահավետ էր դառնում: 1882 թ. «Մոսկվայի ցուցահանդեսում» նրանց արտադրանքը արժանացել էր բրոնզե, իսկ 1883 թ. Ամերիկայում՝ ոսկե մեդալների: Այս գործարանի աշխատուժը դեռահաս աղջիկներ էին, որոնց ձեռքերի նրբությունը շատ կարևոր գործոն էր որակյալ, արդյունավետ արտադրանք ստանալու համար. նրանցից յուրաքանչյուրը ստանում էր 10-35 կոպ. օրավարձ, որն առավել ձեռնտու էր գործարանատերերին»⁴⁰:

Տարածաշրջանում, ընդհանրապես, խոշոր արդյունաբերողների զգալի մասը հայագոյ էին. «1880-ական թթ. Նուխիի, Արեշի գավառներում գործում էին մետաքսաթելի 13 գործարաններ, որից 8-ը պատկանում էին հայերին»⁴¹. մեկ այլ վկայությամբ. «Մետաքսաթելի խոշոր

³⁹ «Մուրճ», Թիֆլիս, 1900, N 3, էջ 345-346:

⁴⁰ СМОМІК, вѣст VI, ст. I, Тѣфлис, 1888, с. 172-174.

⁴¹ «Նոր-դար», Թիֆլիս, 23/IX 1888, թիվ 156:

գործարանատերերի թվին էր պատկանում հայ արդյունաբերողներ՝ Տեր-Գևորգյով եղբայրների հաստատությունը, որում աշխատողների թիվը հասնում է 300-ի»⁴²: Նուխի քաղաքում, դեռևս 1862 թ. հիմնադրված՝ ռուս նշանավոր արդյունաբերող Ալեքսեյ Վորոնինի գործարանը, 1872-ից պատկանում էր Միրզոյան եղբայրներին. 1887-1888 թթ. այն շահագործում էր Միքայել Գյանջումցւոյը. այստեղ եղած 193 դազգահից՝ 1888 թ. գործում էր 75-ը: Հայտնի էր նաև նրա եղբոր՝ Սկրտիչ Գյանջումցւոյի և Ներսես Ահարոնյանի համատեղ ձեռնարկությունը: Ընդհանուր առմամբ, Նուխի քաղաքում կար 12 գործարան՝ 550 դազգահով, որից գործում էր 315-ը. դրանցում աշխատող բանվորների ու ծառայողների թիվը տատանվում էր 77-100-ի չափով. դրանցում արտադրվում էր 1200 փուխ մետաքսաթել՝ 270000 ռուբ.: ընդհանուր գումարով⁴³:

1885-1887 թթ. Շուշիի գավառում դրանց թիվը 13-ն էր, որից 6-ը՝ Շուշի քաղաքում, 7-ը՝ գյուղերում: Դրանցում կար 674 հաստոց, տարեկան ընդհանուր արտադրանքը՝ 1406 փուխ մետաքսաթել՝ 38 500ռ. արժեքով⁴⁴: 1895 թ. Շուշի քաղաքում, մրցակցության արդյունքում մնացել էր երկու գործարան՝ 170 բանվորով, իսկ նույնամուն գավառում՝ 13-ը՝ 1030 բանվորով. տարեկան ընդհանուր արտադրանքը՝ 1100 փուխ որակյալ մետաքս և 280 փուխ ֆրիզոն (արտադրական մնացորդ). ստացված մետաքսաթելն արտահանվում էր Ռուսաստան, իսկ ֆրիզոնը՝ Ֆրանսիա, որից ստանում էին պարարտանյութ (տեղում այն մշակելու տեխնոլոգիան դեռևս չէր կիրառվում): Ընդհանուր առմամբ մետաքսաթելի ստացման ու ոլորման արտադրամասերով, առաջավորները Նուխին ու Շուշին էին: Ռուս գործարանատերերը որոշ առումով նախընտրում էին Շուշիին (դարաբաղյանը), որի արտադրած մեկ չափի մետաքսաթելն ուներ 500 մետրաչափ երկարություն ու կշռում էր 0,0531 գրամ: Այն, հատկապես, գործածական ու արդյունավետ էր խոշոր ձեռնարկություններում: Սակայն մետաքսաթելի ոլորման որակով՝ նախընտրելի էր Նուխիին, ուր գործում էին 3 այդպիսի ձեռնարկութ-

⁴² Сапшович М., Весь Кавказ, Баку, 1914, с. 436.

⁴³ Арасханян А., նշվ. աշխ., էջ 30-32:

⁴⁴ Նույն տեղում, էջ 39:

յուններ: Ղարաբաղում այն մեկն էր, իսկ հարևան Օրդուբաղում (Երևանի նահանգ)՝ 4-ը: Այս գործարանների հաստոցները՝ «Մորիլե», մակնիշի՝ 2000ռ. արժողությամբ, ներմուծվել էին Ֆրանսիայի Մարսել քաղաքից. Շահնագարովի գործարանում, այդ սարքերը աշխատում էին գոլորշու ուժով, որը նորույթ էր⁴⁵:

1890-ական թթ. արտասահմանյան երկրներում մեծացավ կովկասյան մետաքսի (հումք, թել) պահանջարկը, որի իրագործմամբ շահագրգռված էին նաև Ելիզավետպոլի նահանգում: 1876 թվից՝ անընդհատ անկում ապրող մետաքսի գները, 1892 թվից սկսեցին աճել՝ կապված Եվրոպայում ու Ամերիկայում բռնկված շերամի որդի տարբեր հիվանդությունների հետ: 1892-1893 թթ. եվրոպական ներքուհիշյալ երկրները, միայն Կովկասից, ներմուծել էին հետևյալ քանակությամբ հումք⁴⁶.

1892 թ.	1893 թ.
Իտալիա- 109764 կգ.	424204 կգ.
Թուրքիա-169390	424501
Ռուսաստան-10915	108184
Չինաստան-14807	88770
Հունաստան-20474	62249
Անգլիա-13668	46304
Ավստրիա-42602	40619
Ճապոնիա-	25800
Իսպանիա-26109	22892
Այլ երկրներ-11714	16264
ընդ.- 419444 կգ.	1259487 կգ.

Նշված թվերը ցույց են տալիս, որ միայն մեկ տարվա ընթացքում՝ նշված երկրներ ներմուծված մետաքսահումքն աճեց մոտ մեկ մի-

⁴⁵ Труды Кавказской шелководственной станции, т. VIII, приложение I, N 1, часть 4-ая, (материалы по описанию шелководстве...), Тифлис, 1900, с. 38-94.

⁴⁶ Նույն տեղում:

լինն կգ-ով: Արտահանումը, հիմնականում, կատարվում էր Երևանի, Ելիզավետպոլի նահանգներից, մասամբ՝ Վրաստանից ու Դաղստանից...

Գալիս ենք այն եզրակացության, որ նաև Ելիզավետպոլի նահանգը կարևոր էր հատկապես Ռուսաստանին հունք մատակարարող երկրամաս, ուր, զուգահեռաբար, մեծանում էր շերամապահ տնտեսությունների թիվը. օրինակ՝ միայն Նուխի գավառում դրանց թիվը 4042-ն էր՝ 10 գյուղերից. Արեշի գավառում՝ 13, Զանգեզուրում՝ 13 (602 ծովի) գյուղեր և համարյա նույնքան էլ՝ գործում էին Շուշիի գավառում: Վերջինս նշանավոր էր նաև մետաքսե ապրանքների (տարբեր տեսակի կտորեղենի, եզրաթելերի, կարպետների և այլն) արտադրանքներով⁴⁷: Հունքի արտահանման և դրա կազմակերպման ժամանակակից չափանիշները պահպանելու և առավել զարգացնելու միտումով, հիմնվում էին համապատասխան կազմակերպություն-ընկերություններ, օրինակ. «1892 թ. Արեշի գավառի Խալդանի շրջանում հայ առևտրա-արդյունաբերող Ալ. Շելկովնիկովը հիմնեց «Գյոք-թափա» կուլտուր-արդյունաբերական տնտեսությունը, որը կարճ ժամանակում մեծ համբավ է ձեռք բերում ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Ռուսաստանում ու Եվրոպայում»⁴⁸:

Այսպիսով, Ելիզավետպոլի նահանգի տնտեսական կյանքն ուսումնասիրելիս, պարզ երևում է, թե շերամա-մետաքսագործությունն ինչպիսի կարևոր տեղ էր գրավում տարածաշրջանում, որը ժամանակի ընթացքում էլ ավելի էր կատարելագործվում, ապահովելով ոչ միայն տեղի բնակչության նյութական բարվոք վիճակը, այլ նաև՝ արտադրական վերելքը...

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 169, թթ. 6-7:

**ШЕЛКОВОДСТВО И ШЕЛКОТКАЧЕСТВО В
ЕЛИЗАВЕТПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ (XIX в.)**

РЕЗЮМЕ

Шелководство в сельском хозяйстве, а шелкоткачество в промыслах являлись основными отраслями в экономике области и продолжали свое существование и развитие в разных периодах капиталистических экономических отношений. Шелководческое крестьянство получало прибыль экспортируя сырье в Россию и в европейские страны, а так же обеспечивало местные предприятия. Со временем прибыль возросла, способствуя улучшению материального состояния шелководческого крестьянства, а также формированию и усовершенствованию фабричного производства получения шелка.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
XIX դ. 50-70 թթ.

1829-1831 թթ. արևմտահայության զանգվածային ներգաղթից հետո, աննշան գյուղաքաղաք Կումայրի-Գյումրին, որի բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր (ղաշտավարություն, բանջարա-բոստանային կուլտուրաների մշակում), աստիճանաբար վերածվեց Արևելյան Հայաստանի արհեստագործական և առևտրական խոշորագույն կենտրոններից մեկի: Այս իրողությունը բացատրվում է մի շարք գործոններով.

1. Արևմտահայ գաղթականության այն հատվածը, որը բնակեցվեց Գյումրիում, հիմնականում ներկայացնում էր երեք խոշոր արհեստավորաառևտրական կենտրոններ՝ Կարինը, Կարսը և Բայազետը: XIX դ. 30-ական թթ. վերջերին, կապված մի շարք գործոնների հետ, Ախալցխայում հաստատված կարինցի արհեստավորների մի մասը տեղափոխվեց Ալեքսանդրապոլ՝ էլ ավելի ստվարացնելով տեղի արհեստավորների զանգվածը¹:
2. Ի տարբերություն նահանգային կենտրոն Երևանի, Ալեքսանդրապոլն ուներ շահեկան աշխարհագրական դիրք՝ գտնվելով ռազմա-ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող ճանապարհների խաչմերուկում²:
3. XIX դարասկզբի երկարատև պատերազմներն ու հայերի զանգվածային արտագաղթը Թուրքիայի արևելյան սահմանների շրջակա բնակավայրերում ստեղծել էին ծանր տնտեսական պայմաններ, և տեղի բնակչության պահանջարկը բավարարում էր Ալեքսանդրապոլի և մասամբ նաև Ախալցխայի արհեստա-

¹Սեդրոսյան Կ., Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լեռնակամեցիների կենցաղում, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 6, Ե. 1974, էջ 165-166:

²Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1801-1879), Ե., 1959, էջ 402-403:

գործական արտադրանքը, որն աչքի էր ընկնում բարձր որակով ու զանրի մատչելիությամբ³:

4. Ալեքսանդրապոլ քաղաքի տնտեսական կյանքում և հասարակական հարաբերություններում վճռական դերակատարում ունեին արհեստավորական համաքրությունները՝ եղբայրությունները (եսնաֆությունները), որոնք նոր պայմաններում ուղղակի շարունակողները դարձան Կարինի և Կարսի համապատասխան կազմակերպությունների ավանդույթների⁴:

Մինչև XIX դ. 40-ական թթ. Գյումրի-Ալեքսանդրապոլն իր ելքյամբ գյուղաքաղաք էր՝ հար ու նման Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի այլ բնակավայրերին: Նույնիսկ երկրորդական բնույթի բերդաքաղաք դառնալուց հետո էլ նրա բնակչությունը ենթակա էր գյուղական բնակավայրին հատուկ պարհակների ու հարկերի: Նրանք հարկադրվում էին թե՛ որպես քաղաքաբնակներ և թե՛ որպես գյուղացիներ, ինչը, բնականաբար, չէր կարող նպաստել քաղաքի տնտեսական հետագա աճին: Նույն ժամանակներին է վերաբերում քաղաքացիների խնդրագիրը ուղղված Նիկոլայ Ա ցարին՝ այս աննորմալ վիճակը շտկելու ակնկալությամբ⁵: Ցարը բավարարում է քաղաքացիների խնդրագիրը, հարկային բեռի թեթևացումը թույլ է տալիս աշխուժացնել Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքը, և շուտով այն դառնում է գրավիչ

³ Նույն տեղում, էջ 402-403:

⁴ Այդ մասին տե՛ս Егизаров С., Исследования по истории учреждений в Закавказьи, ч. 2, Городские дежи, Казань, 1891, Արահամյան Վ., Հայ համաքրությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20 դարերի սկիզբը), Ե., 1971:

⁵ «Թող յայտնի լինի Քո Կայսերական Սեծութեանդ, որ...Գյումրին մինչև օրս գյուղ էր, իսկ այժմ դարձել է քաղաք, ուստի մենք կրում ենք և՛ գյուղական, և՛ քաղաքային պարհակները: Սեր գլխավոր ցավը նրա մէջ է, որ Քո նշանակած գլխավորի համար հերկում ենք, հնձում, կալսում և հատիկը շտեմարան հասցնում: Բացի դրանից իւրաքանչիւր տարի վճարում ենք 40 չետվերտ ցորեն: Հացից գատ նրան իւրաքանչիւր տարի տալիս ենք վեց փութ ձեթ և վեց փութ կովի իւղ: Գլխաւորի համար կատարած այդ ծառայութիւնները մնացած տուրքերից ծանր են. Իմացիր, որ մենք... ստրկութեան մեջ ենք գտնուում ոստիկանութեան ձեռքին» (Մանրամասն տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական գարգացումը XIX դարում (1800-1870), Կ. Ա, Բաքու, 1916, էջ 179):

բնակավայր ոչ միայն շրջակա տարածքների հայ, այլև օտարազգի արհեստավորների համար⁶:

Արհեստներն ու առևտուրը Ալեքսանդրապոլցիների հիմնական հատվածի կենսապահովման գլխավոր աղբյուրներն էին: Բնակչության գերակշիռ մասը ներգրավված էր արհեստագործական արտադրության, առևտրի և սպասարկման ոլորտի մեջ: Որոշ ուսումնասիրողների հաշվարկներով՝ XIX դ. 50-70-ական թթ. Ալեքսանդրապոլում կար շուրջ 100 արհեստ և զբաղմունք, այն դեպքում, երբ նույն շրջանում նահանգային կենտրոն երևանում դրանց թիվը չէր անցնում 76-ից⁷: Բուն արհեստավորների (չհաշված այգեպաններին, բանջարեղեն արտադրողներին և այլոց) բացարձակ թվով ևս Ալեքսանդրապոլը գերազանցում էր նահանգային կենտրոնին՝ զիջելով միայն փոխարքայության կենտրոն Թիֆլիսին: Հատկանշական է նաև, որ քաղաքի արհեստավորների ստացած տարեկան եկամուտն իր ժամանակի համար նշանակալի գումար էր կազմում. 1863 թ. տվյալներով Ալեքսանդրապոլի բոլոր արհեստավորների համախառն արտադրանքը գնահատվում էր 160 հազար արծաթ ռուբլու չափով,⁸ և մեկ արհեստավորին ընկնում էր մոտավորապես 72 ռուբլու արտադրանք⁹: Համաձայն ռուսական վիճակագրական աղբյուրների՝ առևտրական դրամաշրջանառության ծավալներն ու շրջանառու միջոցները կազմել են ընդհանուր առմամբ 430 հազար արծաթ ռուբլի¹⁰: Սակայն քաղաքի բնակչության մի զգալի հատվածի համար գյուղատնտեսական զբաղմունքները դեռևս շարունակում էին մնալ եկամուտի հիմնական աղբյուր: Այս ոլորտում ներգրավված էին հիմնականում հին Գյումրու տեղաբնակները, որոնք նույնիսկ քաղաքի վերակառուցումից և փաստորեն նոր վայրում բնակատեղիի հաստատվելուց հետո էլ ապրում էին հնարավորին չափ համատեղ, առանձնացած թաղամասերում, որ գտնվում էին քաղաքամերձ բանջարանոցնե-

⁶ Егъазаров С., նշվ. աշխ., էջ 253:

⁷ Արրահամյան Վ., նշվ. աշխ., էջ 57, Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 404:

⁸ "Кавказский календарь на 1869 год", отд. III, Тифлис, 1869, с. 42.

⁹ Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 421:

¹⁰ "Александрополь", "Кавказский календарь на 1868 год", Тифлис, 1867, отд. III, с. 73.

րին մոտ շրջաններում՝ նախկին Կումայրի-Գյումրի գյուղատեղում¹¹: Նույնիսկ թաղամասերի անվանումները՝ «Ռանչպարների մահլա», «Բոստնցոնց մահլա», նաև այս տարածքում գտնվող Աբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ «Գեղցոնց ժամը», իրենց վրա կրում էին բնակիչների զբաղմունքների կնիքը:

Կարնո և Կարսի արհեստավորական ավանդույթները, որ արտահայտվում էին ոչ միայն բարձրորակ արտադրանքի, այլև աշխատանքային գործընթացի կազմակերպման, արտադրանքի վաճառահանման ու իրացման եղանակներում, փոխադրվեցին Ալեքսանդրապոլ: Քաղաքի արհեստանոցները տեղաբաշխված էին հատուկ շարքերում («չարսուներ», օր. «Ղամրչնոց չարսու») և թաղամասերում¹²: Ընդ որում, յուրաքանչյուր խոշոր արհեստագործական ճյուղ (երկաթագործություն, պղնձագործություն, ոսկերիչ-արծաթագործություն, փայտամշակություն, խեցեգործություն և այլն) ներկայացված էր առանձին շարքով: Հիշյալ արհեստանոցները կատարում էին նաև խանութի դեր, որտեղից իրացվում էր պատրաստի արտադրանքը: Արհեստավորներն աշխատում էին թե՛ պատվերով և թե՛ շուկայի համար: Արհեստների որոշ ճյուղեր՝ հիմնականում շինարարական, ունեին սեզոնային, հաճախ նաև արտագնա, շրջիկ բնույթ: Ալեքսանդրապոլցի քարտաշորմնադիր վարպետներն աշխատում էին նաև զավառի ու նահանգի այլ բնակավայրերում: Քաղաքի բուռն զարգացումը, նոր հատակագծին և քաղաքաշինական պահանջներին համապատասխան՝ սրբատաշ քարից բնակարանների շինարարությունը, եկեղեցաշինության լայն թափը և ռուսական կայազորի համար ամրոցաշինությունն ու զորանոցների կառուցումը նպաստեցին վերոհիշյալ արհեստով պարապողների թվի ավելացմանը, որը հետագայում պետք է հանգեցներ աշխատուժի ավելցուկի և ծներ արտագնա աշխատանքի դիմելու անհրաժեշտություն:

¹¹ Սեդրոսյան Կ., Գյուղատնտեսական զբաղմունքները Ալեքսանդրապոլ-Լենինականի կենցաղում, ՇՊՍԺ Հանրապետական չորրորդ գիտատժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 40-41:

¹² Աղանյան Գ., Երկաթագործական արհեստները հայոց մեջ XIX դ. և XX դ. սկզբին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 2, Գյումրի, 1999, էջ 171:

Ալեքսանդրապոլի բազմաճյուղ արհեստագործության համա-տեքստում յուրահատուկ տեղ էին գրավում մետաղամշակության հետ կապված արհեստները, որոնց ներսում ևս կատարվել էր մասնագիտա-կան ճյուղավորում: Հատկապես մեծ բազմազանությամբ էր աչքի ընկ-նում երկաթագործությունը (ղարբիներ, պայտագործներ, փականա-գործներ, խառատներ, ծուլագործներ և այլն), զինագործությունը (հրա-ցանագործներ, դաշույնագործներ, խզակոթ պատրաստողներ և այլն), ոսկերչությունը (հյուսածո զարդ պատրաստող արծաթագործներ, ոս-կերիչներ), պղնձագործությունը (կարասի և ամանեղեն սարքողներ, անագապատողներ և այլն)¹³: Նույն պատկերն էր նաև արհեստների մյուս մեծ խմբերի՝ փայտամշակության, ոստայնանկության, կաշեգոր-ծության, շինարարական և այլ արհեստների պարագայում: Ռուս հե-տազոտող Չերնոյարսկին անթաքույց հիացմունքով է խոսում ալեք-սանդրապոլցի արհեստավորների պատրաստած բարձրաճաշակ և նրբագեղ իրերի մասին՝ շեշտելով հատկապես ոսկերիչ-արծաթագործ-ների բանվածքները¹⁴: Այստեղ ևս մեծ էր Կարիսի արհեստագործական, հատկապես ոսկերչական դպրոցի ազդեցությունը: Չնայած գավառն անտառազուրկ էր, սակայն Վրաստանից և Արիդամիշից խոշոր ծա-վալներով փայտանյութ էր ներմուծվում: Մեծ համբավ էին վայելում ալեքսանդրապոլցի կահույքագործները, որոնք, օգտագործելով Աարի-դամիշի սամշիդ կարմրավուն ծառատեսակի բարձր որակները, պատր-աստում էին նրբաճաշակ և բարձրարվեստ կահույք: Այս ապրանքա-տեսակի նկատմամբ մեծ պահանջարկը բացատրվում էր անընդհատ սովարացող քաղաքային բնակչության կարիքներով:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի ար-հեստագործական ապրանքները հիմնականում մենաշնորհային ար-ժեք ունեին և դուրս էին մրցակցությունից, քանի որ հետամնաց մետրո-պոլիայի՝ Ռուսաստանի տնտեսությունը ևս գտնվում էր տնայնագործա-կան-արհեստավորական արդյունագործության քայքայման աստիճա-նի վրա, իսկ երկաթուղու բացակայությունը և ճանապարհների ոչ բար-

¹³ Աղանյան Գ., Հայկական զինագործությունը XIXդ.-XXդ. սկզբին, ԳԳ ԳԱԱ ԵԳԳԿ «Գիտական աշխատություններ», հ. 3, Գյումրի, 2000, էջ 131:

¹⁴ Сборник статистических сведений о Кавказе..., т. 1, ога. III, с. 40.

վոք վիճակը խոչընդոտում էին Անդրկովկասի հետ առևտրա-տնտեսական կապերը: Միայն ավելի ուշ, Ալեքսանդր Բ-ի լայնածավալ բարեփոխումների հետևանքով բուռն զարգացում ապրած ռուսական ֆարքիկագործարանային էժանագին արտադրանքը պետք է լուրջ մրցակից դառնար տեղական արհեստագործական արդյունագործության համար:

Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքում հսկայական նշանակություն ուներ առևտուրը՝ մանրածախից մինչև մեծածախ, միջնորդ և տարանցիկ: Քաղաքի առևտրական խավի կորիզը կազմում էին ներգաղթած բայազետցիները, որոնք աչքի էին ընկնում իրենց ձեռներեցությամբ և գործարար լայն կապեր էին պահպանում իրենց ծննդավայրի և Անդրկովկասի առևտրաշատ կենտրոնների հետ: XIX դ. կեսերին վերաբերվող ռուսական տեղեկատու-վիճակագրական և այլ աղբյուրների տվյալներով քաղաքում հաշվվում էր տարբեր կապիտալ և դրամաշրջանառություն ունեցող շուրջ 670 առևտրական, որոնք համքարային պատկանելությամբ բաժանվում էին չորս խմբի՝ բազազներ (կտորեղեն վաճառողներ), ատթարներ (արդուզարդ վաճառողներ), ալաֆներ (գյուղմթերք վաճառողներ) և խանութպաններ կամ դուքանչիներ (մանրածախ առևտրականներ)¹⁵: Ալեքսանդրապոլ ներմուծվում էին հիմնականում տեղում չմշակվող գյուղմթերքներ և դրանց վերամշակման արդյունք հանդիսացող ապրանքներ՝ թարմ և չոր մրգեղեն, օղի, գինի, գործարանային արտադրության կտորեղեն, իսկ արտահանվում էին ցորեն, բուրդ, օճառ, կաշի: Կաշու և ճարպագործական արտադրյունը իրականացվում էր կիսամանուֆակտուրային եղանակով, և պատահական չէ, որ ալեքսանդրապոլցի առևտրականները տարեկան շուրջ 10 հազար ռուբլու կաշվեղեն էին արտահանում Թիֆլիս և Թուրքիա¹⁶: Տարանցիկ առևտրի հնարավորությունը, հարմար աշխարհագրական դիրքը և քաղաքի շուկայի ընձեռած լայն հնարավորությունները նպաստում էին սպասարկման ոլորտի զարգացմանը: Քաղաքում կային 17 իջևանատուն¹⁷ և հարյուրավոր մանր ու միջին գինետուն-

¹⁵ Александрополь, "Кавказский календарь на 1868 год", стр. III, с. 73.

¹⁶ Արտահանյան Վ, նշվ. աշխ., էջ 53:

¹⁷ ՊԻԱ, գործ 103, Մ. Թամրազյանի նյութերը, տետր 1:

պանդուկներ, որոնց թիվը նույնիսկ զարմանք է պատճառել ռուս ուսումնասիրողներին¹⁸: Ալեքսանդրապոլի բարգավաճման շրջանում XIX դ. 50-70 թթ., քաղաքում հաշվվում էր շուրջ 1460 մեծ ու փոքր խանութ և 36 գործատուն¹⁹:

Հատուկ ուշադրության առարկա է Ալեքսանդրապոլի շուկան, որը քաղաքի արտադրական և գործարար կենտրոնն էր: Շուկայի շուրջն էր ձգվում արհեստանոցների ու կրպակների գերակշիռ մասը: Առևտուրը և ներքին կարգ ու կանոնը շուկայում պահպանվում էր համքարությունների ուժերով, իսկ առևտրի աշխուժացման ու ապրանքի գովազդման գործում ներգրավված էին թալալները (մուսնետիկները)²⁰: Մեծածախ-մանրածախ շուկայի հարևանությամբ գործում էր նաև անասունների վաճառահանման շուկան՝ «Մալի մեյդանը», որ սպասարկում էր հիմնականում գավառի գյուղական բնակչությանը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի տնտեսական և հասարակական կյանքում վճռական դերակատարում ունեին համքարությունները (եսնաֆություններ), որոնք իրենց բազմաթիվ գործառույթների շրջանակում իրականացնում էին նաև տնտեսական կարգավորող դեր: Դեռևս ուշ միջնադարում առաջացած այս կառույցները նոր շրջանում ևս մեծ նշանակություն ունեին Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում:

Համքարային մեծ ավանդույթներ ունեցող Կարինից և Կարսից ներգաղթած արհեստավորներն ու առևտրականները նոր բնակավայրում նույնպես հիմնեցին համապատասխան կառույցներ, որոնք Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի հիմնական բաղկացուցիչները դարձան: Համքարությունների և համքարային ավագանու իրավասության տակ էին գտնվում ոչ միայն հասարակության ներքին սոցիալ-նորմավորող խնդիրները (դատավարական և կրոնա-ծիսական որոշ գործառույթներ, փոխօգնության կազմակերպում և այլն), պետություն-քաղաքային հասարակություն կապերում միջնորդ դերի ստանձնումը, այլև

¹⁸ Александрополь, "Кавказский календарь на 1866 год", Тифлис, 1865, стр. III, с. 68.

¹⁹ ՊԻԱ, գործ 103, Մ. Թամրազյանի նյութերը, տետր 1:

²⁰ Սեդրոյան Կ., Արհեստավորական ավանդույթները..., էջ 186:

մեծածախ կամ բազմաքանակ հուճքի հայթհայթման, զների կարգավորման, ապրանքների որակի վերահսկման և նմանատիպ այլ խնդիրներ: Հասարակական համագործակցության համքարային ձևը լուրջ լծակ էր Ալեքսանդրապոլի տնտեսության ներքին կարգավորման գործում, որն իրականացնում էր համքարային ավագանին և միջհամքարային կառավարման մարմինը՝ ուստաբաշինների (գլխավոր վարպետների) խորհուրդը՝ իր իսկ կողմից ընտրված ուստալար ուստասիի (վարպետաց-վարպետ) ղեկավարությամբ: Արհեստավորի կողմից խտան արտադրանք պատրաստելու, հումքը ինքնուրույն ձեռք բերելու կամ էլ գնային սահմանված սանդղակները ինքնագույն խախտելու համար համքարային ավագանին իրավասու էր նրա նկատմամբ կիրառելու տնտեսական (ընդհուպ մինչև խանութը ստիպողաբար փակելու) և քարոյական («յուզուզ»՝ պատվազուրկ անելու) բնույթի պատժամիջոցներ²¹:

*АРМЕН АЙРАПЕТЯН
ИИ НАН РА*

ЭКОНОМИЧЕСКАЯ ЖИЗНЬ АЛЕКСАНДРАПОЛЯ 50-70 гг. XIX ВЕКА

РЕЗЮМЕ

В период изучаемого времени главным источником социального обеспечения основной части александропольцев были ремесло и торговля. В 50-70 гг. XIX века в Александрополе было около 100 ремесел в том случае когда в тот же период в губернском центре - Ереване, их число не достигало 76. Согласно русским статистическим источникам в городе насчитывалось около 670 торговцев, а объем денежного оборота и оборотных средств составили вообще 430 тысяч серебряных рублей. Для третьей части городского населения основным источником дохода продолжали быть сельско-хозяйственные занятия. В изучаемый период в жизни Александрополя решающую роль имели артели (ремесленные цеха), которые в своих кругах трудовой деятельности осуществляли также роль экономического урегулирования.

Предметом особого внимания был рынок Александрополя.

²¹ Նույն տեղում, էջ 187-188:

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ
ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ XIX դ.
(ըստ 1897 թ. մարդահամարի նյութերի)

1897 թ. Ռուսաստանում անցկացվեց Համընդհանուր առաջին մարդահամարը, ինչը պայմանավորված էր երկրում զարգացող կապիտալիստական հարաբերությունների առաջ բերած խնդիրներով և դրան նախորդող ժամանակահատվածում բնակչության ոչ լիարժեք հաշվառումով: Չնայած մինչ այդ եղած բազմաթիվ այլ հաշվառումների՝ այն եզակի համալիր պաշտոնական փաստաթուղթ էր, որն ամբողջական տվյալներ էր պարունակում նախահեղափոխական Ռուսաստանի բնակչության քանակի և սոցիալ-դասային կազմի, ինչպես նաև բնակչությանը բնութագրող այլ կարևոր հատկանիշների, այդ թվում կրթության և գրագիտության մակարդակի մասին: «Ժողովրդագրական, տնտեսական և սոցիալական բնույթի արժեքավոր թվային տվյալների» այս «շտեմարանում»¹ են ամփոփված Հայաստանի արևելյան հատվածում և կայսրության մյուս մասերում բնակություն հաստատած հայերի մասին բոլոր, այդ թվում և կրթությանը և գրագիտությանը վերաբերող տվյալները:

Ըստ 1897 թ. մարդահամարի նյութերի գրագետ մարդիկ կայսրությունում կազմում էին բնակչության ընդամենը 21,1%-ը, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողները՝ 0,1%-ը (108502 մարդ, այդ թվում բարձրագույն զինվորական հաստատություններում սովորողները՝ 4181 մարդ կամ երկրի բնակչության 0,003%-ը), միջնակարգ տարբեր հաստատություններում սովորողները՝ 1,01% (1275641 մարդ, որից 0,1%-ը կամ 72441 մարդ միջնակարգ զինվորական հաստատություններում): Այս ցուցանիշները խոսում են այն մա-

¹ Ишханян Б., Народности Кавказа: Состав населения, профессиональная группировка и общественное расслоение кавказских народностей (Статистико-экономическое исследование), Петроград, 1916, с. 5.

սին, որ XIX դ. վերջին Ռուսական կայսրությունում ընդհանուր առմամբ ցածր էր կրթական մակարդակը: 1894 թ. ռուսական ինը համալսարաններում սովորում էր ընդամենը 14 327 ուսանող, իսկ միջնակարգ-մասնագիտական հաստատություններում (տեխնիկական, գինվորական և այլն) դրանց թիվը հասնում էր 25-30 հազարի: Միջնակարգ ուսումնական հաստատություններում, որոնց թիվը հասնում էր 900-ի, սովորում էր 224 հազար մարդ, որից 75 500՝ իգական գիմնագիաներում: Բոլոր տեսակի ուսումնական հաստատություններում սովորում էր 3 միլիոն 360 հազար մարդ: Վերջիններս կազմում էին ընդհանուր բնակչության ընդամենը 3%-ը, չնայած այն հանգամանքին, որ ժողկրթության նախարարությանը հատկացվող գումարները կազմել էին ավելի քան 25,2 միլիոն ռուբլի:² Կրթական համակարգում վիճակը գրեթե նույնն էր նաև համընդհանուր մարդահամարի անցկացման ժամանակահատվածում, բայց, այդուհանդերձ, արտերկրյա դիտորդները բազմիցս նշում էին «ռուսական հասարակության կրթված մասի բարձր կուլտուրական մակարդակը»³:

Այլ էր իրավիճակը Կովկասում: Այստեղ պարսկական տիրապետության շրջանում գիտության և մշակույթի զարգացման մասին խոսք անգամ լինել չէր կարող: Հայկական մարզում ռուսական իշխանությունների կողմից նոր եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնք գոյատևելու էին բնակչության հաշվին, բացվեցին միայն XIX դ. 30-ական թթ.: Ընդ որում, ժամանակակիցների վկայությամբ սակավաթիվ հայոց դպրոցներում «գիտություն չէր ավանդվում, այլ միայն կրոն և հայոց լեզու: Գիտության տարրեր կարելի էր ձեռք բերել միմիայն գիմնագիաներում: Բայց գիմնագիա էլ մեկ հատ կար և այն էլ միայն Թիֆլիսում: Մյուս տեղերում կային միայն «գավառական» ասված դպրոցներ, որտեղից դուրս էին գալիս հասարակ գրագիրներ»:⁴ Այդուհանդերձ, Հայկական մարզի եկամուտների և պետական գույքի նախարար Ի. Շուպենը վկայում էր, որ 1830-ական թթ. մեծ թվով հայեր արդեն բավականին

² Бразоль Б., Царствование императора Николая II-го (1894-1917) в цифрах и фактах, Минск, 1991, с. 9.

³ Ольденбург С., Царствование Николая II-го, Ростов-на-Дону, 1998, с. 22.

⁴ Աղայանց Ղ., Մի երես մեր նորագոյն պատմութիւնից. Մոսկվա, 1891, էջ 19:

ազատ տիրապետում էին ռուսերենին և սահուն խոսում:⁵ Բնակչության կրթական մակարդակը բարձրացնելու և քրիստոնեությունը երկրամասի ոչ քրիստոնյաների մեջ տարածելու համար ցարական կառավարությունը 1822 թ. նույնիսկ Կովկաս էր ուղարկել Ավետարանչական ընկերությանը, որին իրավունք էր տրվել տեղում ուսումնարան և տպարան հիմնադրել:⁶

Անդրկովկասի ժողովուրդների մշակութային կյանքում, բացի գոյություն ունեցող եկեղեցական-ծխական դպրոցներից, մեծ դեր էին խաղում նաև տեղի լեզուների ուսուցմամբ բացվող գավառական ուսումնական հաստատությունները և գրահրատարակությունը: 1804 թ. Թիֆլիսում բացվեց երկրամասում առաջին ազնվականական ուսումնարանը:⁷ Սկզբնական շրջանում այն նախատեսված էր վրաց երիտասարդության համար, բայց ժամանակի ընթացքում այստեղ սովորելու հնարավորություն ստացան նաև հայերը, ռուս չինովնիկների երեխաները և նույնիսկ թաթարները: Տեղում գործում էր նաև իգական գիմնազիա, որտեղ 1848 թ. սովորում էր 60 սանուհի: Դասավանդումը տարվում էր վրացերենով և ռուսերենով, ապա, կախված ուսումնական հաստատության գտնվելու վայրից, նաև տեղի լեզուներով, մասնավորապես՝ հայերենով: Ընդ որում, տեղի լեզուների ուսումնասիրությունը պարտադիր էր նաև ռուս չինովնիկների համար, քանի որ կառավարությունն «ընդունակ» չինովնիկների կարիք էր զգում տարբեր ժողովուրդներով բնակեցված երկրամասում ծառայության անցնելու համար:⁸ Բացի այդ, տեղում չինովնիկների սուր պահանջը բավարարելու նպատակով Ռուսաստանի կենտրոնական նահանգներից որակյալ մասնագետների տեղափոխումը թանկ էր նստում և բավական մեծ գումարներ էր պահանջում: Ընդ որում պարզ չէր, թե որքանով նրանք կարողանային արդարացնել կառավարության հույսերը և կընտելանային

⁵ Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения к Российской империи, СПб, 1852.

⁶ ЦГАРФ, ф. 109, 1-ая экспедиция, 1826 год, N 51, л. 133.

⁷ Ватейшвили Д., Русская общественная мысль и печать на Кавказе в первой трети 19-го века, М., 1973, с. 56.

⁸ Модзалевский Л., Ход учебного дела на Кавказе с 1802 по 1880 год, Тифлис, 1880, с. 5.

իրենց համար օտար այս երկրամասում: Նման իրավիճակից խուսափելու համար կառավարությունը սկսեց տեղում պատրաստել անհրաժեշտ կադրեր:

1849 թ. հունիսի 11-ին հաստատված կանոնադրությամբ (Положение о воспитании кавказских и закавказских уроженцев на счет казны, в высших и специальных учебных заведениях Империи)⁹ նախատեսվում էր արտոնյալ դասերի ներկայացուցիչներից պատրաստել կադրեր Կովկասում պետական տարբեր պաշտոններ զբաղեցնելու համար: Շուտով նման հաստատությունների դռները բացվեցին նաև «կովկասցի» այլ դասերի ներկայացուցիչների երեխաների համար՝ երկրամասում առևտրին և արդյունաբերությանը զարկ տալու նպատակով: «Կովկասցի» հասկացության տակ նկատի ունեին ոչ միայն տեղաբնիկներին, այլև տեղում ծնված ռուս ազնվականների և չինովնիկների երեխաներին, որոնք աչքի էին ընկել ամբասիր ծառայությամբ: Անկախ ֆակուլտետից՝ նրանք Պետերբուրգի համալսարանում ուսումնասիրելու էին երկրամասում առավել տարածում գտած լեզուները և ավարտելուց հետո պարտավորվում էին տեղում ծառայել վեց տարուց ոչ պակաս:¹⁰ Կովկասցի երիտասարդները բարձրագույն կրթություն կարող էին ստանալ միայն Ռուսական կայսրության համալսարանական քաղաքներում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Կազանում, Օդեսայում, որտեղ 1885 թ. զանձարանի հաշվին առանձնացվել էր 160 տեղ: Սովորողների թվում էին ոչ միայն Կովկասի տեղաբնիկներն, այլև, ինչպես վերը նշեցինք, ռուս ազնվականների ու պաշտոնյաների երեխաները, որոնք ծառայում էին այդ վայրերում:

1845 թ. Անդրկովկասում կար 3293 սովորող, որոնց թվում 2097-ը՝ պետական հաստատություններում և 323-ը՝ մասնավոր դպրոցներում:¹¹ Ընդ որում, սովորողների մեջ (1858 թ. տվյալներով)

⁹ Исмаил-Заде Д., Население городов Закавказского края в 19-ом начале 20-го века: Историко-демографический анализ, М., 1991, с. 164.

¹⁰ Свод законов Российской империи издания 1857 года, т. 3, статьи 1365 и 182.

¹¹ Кавказский календарь на 1845 год, Тифлис, 1846, Отдел III. сс. 144-145.

գերակշռում էին հայերը, ապա ռուսները, հետո միայն թաթարները:¹² 1849 թ., Կովկասյան ռուսումնական օկրուգի կազմավորման նախօրեին, Անդրկովկասում գործում էր 28 ռուսումնական հաստատություն, որից 24-ը՝ արական, 4-ը՝ իգական:¹³ 1855 թ. գավառական ռուսումնարաններ կային Դերբենդում, Թելավում, Սղնախում, Ելիզավետպոլում, Երևանում, Նախիջևանում, Ալեքսանդրապոլում և այլուր: Նահանգական գիմնազիաներ էին բացվել Թիֆլիսում և Քութայիսում:¹⁴

Չետագա տարիներին, կապված կայսրության քաղաքականության հետ, ռուսումնական հաստատությունների թիվը զգալիորեն ավելանում էր: 1871 թ. Անդրկովկասի պետական ռուսումնական հաստատությունների թիվը հասավ 87-ի, որտեղ սովորում էր 10456 մարդ, չհաշված վարժարանների և մզկիթային դպրոցների սովորողներին: 1874 թ. բացվեց Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը, որի շրջանավարտները մեծ ներդրում ունեցան հատկապես արտերկրում հայոց մշակույթի պահպանման, կրթության զարգացման գործում:

Տարածաշրջանի մշակութային-լուսավորչական միջոցառումների շրջանակներում նշանավոր իրադարձություն էր դեռևս 1849 թ. Թիֆլիսում հանրային գրադարանի բացումը, որի սկզբնական գրքային ֆոնդը գնվել էր Պետերբուրգի համալսարանի նախկին ռեկտոր Դեզուրովից: 1865 թ. հիմնադրվեց Անդրկովկասյան թանգարանը, իսկ դրանից մեկ տարի առաջ՝ Կովկասյան հնագրական հանձնաժողովը և Ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքը, ինչպես նաև Թիֆլիսի Գյուղատնտեսական և Երաժշտական ընկերությունները:

XIX դ. վերջին պատկերը կտրուկ փոխվեց: 1884 թ. փետրվարի 16-ին ցարը հաստատեց «Կովկասի հայ-լուսավորչական եկեղեցական ռուսումնարանների մասին կանոնները», որոնցով կովկասյան իշխա-

¹² Лордкипанидзе Н., К истории Кавказского учебного округа (Первое пятнадцатилетие с 1849 г. по 1864 г.), Тбилиси, 1957, т. IX, сс. 469-470.

¹³ Նույն տեղում, էջ 460:

¹⁴ Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները. Ուրվագծեր նրանց փոխհարաբերությունների պատմությունից հին ժամանակներից մինչև Գոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը, Ե., 1978, էջ 251:

նությունները ձեռք էին բերում հայ դպրոցի ու մշակութային գործերին անարգել միջամտելու իրավունք: Երբ էջմիածնի սինոդը չենթարկվեց այդ որոշմանը, կովկասյան իշխանությունները սկսեցին փակել հայկական դպրոցները: 1885 թ. ընթացքում առանց այն էլ կրթօջախներով աղքատ Անդրկովկասում փակվեց շուրջ 300 դպրոց:¹⁵ Իսկ 1891 թ. մարտի 1-ի օրենքով բոլոր եկեղեցական-ծխական դպրոցներն անցնում էին ժողովուսավորության նախարարության ենթակայության տակ՝ միաժամանակ պահպանելով գործող էջմիածնի հոգևոր ակադեմիայի և թեմական ճեմարանների կանոնադրությունը:¹⁶ Հակառակ դեպքում դրանք դադարեցնում էին գործունեությունը:¹⁷

Այդուհանդերձ, պետք է նշել, որ հայերն աչքի էին ընկնում գրագիտության բարձր մակարդակով ողջ կայսրության մասշտաբով և, մասնավորապես, Անդրկովկասում: Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների գրագիտությամբ հայերը գիջում էին ռուսներին և հրեաներին՝ միաժամանակ մի քանի անգամ գերազանցելով թուրք-թաթարական ժողովուրդներին:

գրագիտության տոկոսը	<i>հրեաներ</i>	<i>ռուսներ</i>	<i>հայեր</i>	<i>թուրք-թաթարներ</i>
ողջ կայսրությունում	38,33	19,78	13,05	7,5
Անդրկովկասում	29,85	61,70	10,01	2,42

Ինչպես երևում է, գրագիտության ամենացածր ցուցանիշը մահմեդականների (հատկապես աղջիկների) մոտ է, որն ավելի ակներև է դառնում ողջ բնակչության թվի հետ նրանց տվյալների համադրման դեպքում: Այս երևույթը հավանաբար բացատրվում է մահմեդականների կրոնական և կենցաղային առանձնահատկություններով: Խիստ սակավ էր նաև միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող մահմեդականների թիվը: Հակա-

¹⁵ Համբարյան Ա., Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (19-րդ դ. երկրորդ կես - 20-րդ դ. սկիզբ), Ե., 1983, էջ 16:
¹⁶ Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 53, ց. 1, գ. 4041:
¹⁷ ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 228:

ռակ դրան, հայերն աչքի էին ընկնում բավական բարձր ցուցանիշներով ոչ միայն Անդրկովկասում, այլև ողջ կայսրությունում, որի նույնիսկ ամենահեռավոր շրջաններում հիմնում էին դպրոցներ և վարժարաններ: 1881 թ. լույս տեսած եվ. Դուբլեի հասցեագրքում հանդիպում ենք կրթական համակարգում ներգրավված հայկական հարյուրավոր ազգանունների: Դրանցից են, օրինակ, Աղաբաբյան վարժարանի տնօրեն Ազամժանովը, Բեսարաբիայի գավառական ուսումնարանի պատվավոր ուսուցիչ Օդաբաշյանը և այլոք: Դրանց կողքին հիշատակվում են նաև վարչական այլ պաշտոններ զբաղեցնող հայերի անուններն ու հասցեները՝ «...Ելյանով Ի.Գ.՝ Պետական խորհրդի օրենքների դեպարտամենտի անդամ, Սկրտիչյանց՝ Աստրախանի նահանգի դատախազի օգնական, Շախվերդով Ն.Ի.՝ վերոհիշյալ նահանգի գավառական ազնվականության առաջնորդ, Ամբարդանով Ս.Գ.՝ V աստիճանի կոլեգիալ քարտուղար...» և այլոք:¹⁸

Սոցիալական առումով ռուսական ուսումնական հաստատություններում մեծ մասը կազմում էին քաղաքացիների՝ վաճառականների, արհեստավորների, երեխաները, որոնք, չունենալով դասային արտոնություններ, ձգտում էին ինքնահաստատվել կրթության միջոցով՝ ծառայության անցնել և ազատվել որոշ հարկերից: Այդ իսկ պատճառով կրթության մակարդակն արտոնյալ դասերի մոտ ավելի բարձր էր, քանզի կրթությունը ծառայողական աստիճանակարգով բարձրանալու միակ ճանապարհն էր:

Այուս խումբը կազմում էին արտոնյալ դասերի (ազնվականների, նախկին խաների, բեկերի և աղալարների հետնորդները) ներկայացուցիչների երեխաները: Գյուղացիներից շատ քչերն էին կարող սովորել և հեղինակները միաբերան խոսում էին գավառական բնակչության անգրագիտության մասին: Այս երևույթը բացատրվում էր հավանաբար նրանով, որ գյուղացիներն իրենց երեխաներին առաջին հերթին դիտում էին որպես աշխատուժ, որին ջանում էին չչեղել արտադրողական

¹⁸ Дубле Е., Всеобщая статистика Российского государства. Сборник 500000 адресов, год 4-й, 1881, М., 1881, сс. 131, 133, 140.

աշխատանքից և ընտանիքից, մանավանդ, որ դպրոցների մասին հոգածությունը նույնպես գյուղացու ուսերին էր դրված:¹⁹

1895 թ. Կովկասյան ուսումնական օկրուգի ենթակայության տակ էր գտնվում 1181 ուսումնական հաստատություն, որից 46-ը միջանակարգ, 56-ը ցածրաստիճան, 1082-ը մասնավոր և տարրական, որտեղ սովորում էր 99116 աշակերտ (սրանցից 75935-ը կամ 76,6%-ը արական սեռի, 23181-ը կամ 23,4%-ն՝ իգական) և ծառայում 5668 մարդ:²⁰ Յուրաքանչյուր դասարանում միջին հաշվով սովորում էր 43 աշակերտ, ինչը չէր կարող խոսել ուսումնական գործընթացի կազմակերպման բարձր որակի մասին: Իրավիճակը շտկելու և լուսավորությունը երկրամասում տարածելու համար կառավարությունը թույլ տվեց բացել նաև ուղղափառ եկեղեցական-ծխական դպրոցներ, որտեղ աշակերտները սովորելու էին գրել, կարդալ, ուսումնասիրելու էին թվաբանություն և եկեղեցական երգեցողություն:²¹

Ուսումնական հաստատություններում սովորողները բաշխվում էին հետևյալ կերպ՝

ոստ ազգությունների՝ 54,5%-ը (54063 մարդ) կազմում էին ռուսները, 19,3% (19 147 մարդ)՝ վրացի, 12,5% կամ 12 385՝ հայ, մնացած ազգությունները չէին գերազանցում 3%-ը,

ոստ ռալվանսի՝ 73,8%-ը կամ 73 167-ը՝ ուղղափառ, 11,5%-ը կամ 11 318-ը հայ-առաքելական, 4,4%-ը կամ 4363-ը՝ մահմեդական, 4,1%-ը կամ 4 092-ը՝ բողոքական, մնացածները չէին հասնում 2,5%-ի,

¹⁹ Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1886, т. 2, ч. 1-ая, с. 2.

²⁰ Отчет попечителя Кавказского учебного округа о состоянии учебных заведений за 1895 год тайного советника Яновского, Тифлис, 1896, сс. 530.

²¹ Высочайше утвержденное Положение о церковных школах ведомства православного исповедания и об управлении школами церковно-приходскими и грамоты ведомства православного исповедания, СПб., 1902, с. 8.

ոստ դասերի՝ 63,7%-ը կամ 63092-ը գյուղացի, 20,4%-ը կամ 2020012-ը՝ քաղաքային դասերի ներկայացուցիչներ, 12,6%-ը կամ 12527-ը՝ ազնվական, 1,7%-ը կամ 1706 հոգևորական։²²

Ընդամենը Կովկասում 1895 թ. գործում էր 1420 ուսումնական հաստատություն 118180 աշակերտով (որից 88380-ը՝ արական, 29800-ը իգական սեռի), որոնց թվում միայն 240 հայ-առաքելական եկեղեցական-ծխական դպրոց 19 235 աշակերտով (որոնցից 12 616-ը՝ արական, 6 619-ը իգական սեռի)։ Դպրոցների թվով (չհաշված մահմեդականների և հրեաների կրթարանները) առանձնանում էին Կուրանի (638) մարզը, Քութայիսի (406), Թիֆլիսի (364) և Ստավրոպոլի (353) նահանգները։ Երևանի նահանգում 1895 թ. կար ընդամենը 115, իսկ Կարսի մարզում՝ 23 դպրոց։ Բոլոր ուսումնական հաստատությունների թիվը Երևանի նահանգում նշված ժամանակահատվածում հասնում էր 145-ի։ Դրանցում սովորում էր 10 300 մարդ, որից 8 314-ը՝ արական, 1989-ը իգական սեռի։²³ Սրանք գործում և գոյատևում էին գանձարանի, քաղաքային համայնքների և բարեգործական ընկերությունների տրամադրած միջոցների, ինչպես նաև ուսման վարձի շնորհիվ։

1897 թ. մարդահամարի տվյալներով ողջ կայսրության մասշտաբով գրագետ էր 153 104 հայ կամ բոլոր հայերի 13,05%-ը, որից 114 515-ը՝ արական, 38 5 89-ը իգական սեռի, այսինքն՝ տղամարդկանց մոտ գրագիտության տոկոսը եռակի անգամ գերազանցում էր կանանց ցուցանիշները։ Գրագետ հայերի թվից գրագետ էր ռուսերենից 66 926 մարդ (որից 48 393-ը՝ արական, 18 533-ը իգական սեռի), այլ լեզուներից՝ 67 450 հայ (որից 52 625-ը՝ արական սեռի, 14 825-ը իգական սեռի ներկայացուցիչ), միջնակարգից բարձր կրթություն ուներ 18 72 8 հայ (որից 13 497-ը՝ արական, 5 231-ը իգական սեռի ներկայացուցիչ /տե՛ս աղյուսակ թիվ 1/)։ Ընդհանուր առմամբ գրագետ էր տեղի բնակչության 36,9%-ը։ Այս ցուցանիշը, չնայած ցածր էր, բայց գերազանցում էր համակայսերականը՝ 21,1%։

²² "Отчет ... за 1895 год тайного советника Яновского , сс. 534-535, 557, 558-559".

²³ ՀԱԱ, ֆ. 101, ց. 1, գ. 135:

Աղյուսակ թիվ 1. Հայ բնակչության գրագիտությունն ու կրթութ յունը²⁴

տարածաշրջան	գրագետ էին				միջն. և բարձր կրթ.	
	սուսերենից		այլ լեզուներից		ար.	իգ.
	ար.	իգ.	ար.	իգ.		
Անդրկովկասայր թվում և երևանի նահանգ. Կարսի մարզում	31983	11259	48248	13406	9786	2783
	6535	1379	19467	3115	2277	505
	2014	644	3494	853	111	26
Հյուս. Կովկաս	6815	2861	2141	657	978	616
Եվրոպ. Ռուս.	6815	4199	1774	684	2571	1608
Միջին Ասիա	1108	212	433	75	148	19
Սիբիր	92	2	29	3	16	3
ընդամենը	48393	16533	52825	14825	13497	5231

Ըստ դավանանքի գրագետ հայերի 12,51%-ը կամ 146843 մարդ առաքելական էին, 0,41%-ը կամ 4867 մարդ՝ հայ-կաթոլիկ, 0,08%-ը կամ 1010 մարդ ուղղափառ, 75 հայ՝ մահմեդական, 0,07%-ը կամ 925 մարդ՝ այլ դավանանքների հետևորդներ (տե՛ս աղյուսակ թիվ 2):

Աղյուսակ թիվ 2. Հայերի գրագիտությունն ըստ դավանանքի²⁵

տարածաշրջան	առաքելական	կաթոլիկ	ուղղափառ	մահմեդական	այլ
Անդրկովկաս, այր թվում և երևանի նահանգ. Կարսի մարզում	112530	3713	473	45	369
	32539	509	97	15	118
	6530	428	13	3	168
Հյուս. Կովկաս	13327	148	196	17	182
Եվրոպ. Ռուս.	18668	994	314	8	355
Միջին Ասիա	1975	7	8	—	3
Սիբիր	143	5	19	5	16
ընդամենը	146843	4867	1010	75	925

²⁴ Աղյուսակը կազմված է ըստ Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года, под ред. Н. Тройницкого, Издание Центрального статистического комитета Министерства внутренних дел., Выпуск 4. тт. 2-89, СПб, 1899-1905, (այսուհետ՝ ПВИПРИ)» — ի տվյալների, հաշվարկը մերն է:

²⁵ Աղյուսակը կազմված է ըստ «ПВИПРИ»-ի տվյալների, հաշվարկը մերն է:

Այսպիսով, 1897 թ. Համառուսաստանյան մարդահամարը, հաղորդելով կարևոր և արժեքավոր բազմաթիվ տեղեկություններ, առաջին անգամ ամբողջացրեց Ռուսական կայսրության ողջ բնակչության մշակութա-կրթական պատկերը: Միաժամանակ այն հնարավորություն ստեղծեց ամբողջի մեջ առանձնացնելու հայ ազգաբնակչությանը վերաբերող տվյալները, ըստ որոնց հայ բնակչությունն իր կրթվածությամբ և գրագիտության մակարդակով երրորդն էր հրեաներից և ռուսներից հետո՝ հետևում թողնելով վրացիներին և թուրք-թաթարներին: Ողջ կայսրության մասշտաբով 1897 թ. մարդահամարի տվյալներով գրագետ էր 153 134 հայ կամ բոլոր հայերի 13,05%-ը: Տղամարդկանց մոտ գրագիտության տոկոսը կրկնակի անգամ գերազանցում էր կանանց ցուցանիշները, ինչը պայմանավորված էր արական գիմնագիտների համեմատաբար գերակշիռ քանակով: Համաչափ էին բաշխված մայրենի լեզվից և ռուսերենից գրագետ հայերը, ինչը հնարավորություն էր ստեղծում նշանակալի ներդրում ունենալ ոչ միայն հայրենիքում, այլև կայսրության տարբեր տարածաշրջանների վարչատնտեսական ոլորտում: Հայ ազգաբնակչությունն աչքի էր ընկնում ողջ կայսրության մասշտաբով ոչ միայն արհեստավորական հմտությամբ, առևտրով և արդյունաբերության ոլորտում ունեցած գործուն մասնակցությամբ, այլև կրթվածությամբ և գրագիտությամբ, ինչի շնորհիվ ընդգրկվել էր նաև բարձրաստիճան գինվորականության շարքերը և վարչական գործունեության ոլորտը:

*ЛИЛИТ АСОЯН
Гос. Педагогический
институт Гюмри*

УРОВЕНЬ ОБРАЗОВАНИЯ И ГРАМОТНОСТЬ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ В XIX ВЕКЕ.

РЕЗЮМЕ

В числе множества ценных и интересных сведений материалы Первой всеобщей переписи населения Российской империи 1897 г. содержат довольно значимые данные об уровне образования и степени грамотности армянского населения империи как в целом, так и в отдельно взятом регионе или области. Обобщая картину культурно-образовательного уровня армянского на-

селения на фоне общего населения империи, материалы переписи позволяют заключить, что по уровню образования и степени грамотности армяне были третьими в империи - 153 134 человек или 13,05% всего армянского населения империи, уступая лишь евреям и русским. Однако по степени грамотности преобладало мужское население, владеющее в равной степени как родным, так и русским языком, что позволяло занимать высокие административные посты и удаиваться высших воинских чинов и званий.

ՄԱԼԱՅԻԱՅԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ
XIX դ. Վերջին - XX դ. Սկզբին

Մալաթիայի գավառը գտնվում է Փոքր Հայքի հարավում, եփրատ գետի աջակողմյան Մելաս վտակի ավազանում: Մալաթիայի գավառը ունեցել է հարուստ պատմական անցյալ, այն 1178-1315 թթ. ընթացքում գտնվել է սելջուկ-թուրքերի, 1315 -1516 թթ. ընթացքում թուրքմենական ցեղերի իշխանության տակ: 1516 թ. այն հայտնվել է Օսմանյան թուրքերի տիրապետության ներքո, որոնք էլ այն դարձրել են Սեբաստիայի էյալետի մասը: Մալաթիայի գավառը երբեք հաստատուն վիճակ չի ունեցել և շարունակ փոփոխությունների է ենթարկվել: Նահանգի թե՛ քաղաքական վիճակը, թե՛ բնակչության ազգային կազմը անընդհատ փոփոխվել է գտնվելով պատմական տարբեր երկրամասերի հարևանությամբ և մեջտեղում՝ Մալաթիան հաճախ կցվում էր այս կամ այն նահանգին: 1870-ական թթ. այն մտցվել է Խարբերդի (Մամուրեթուկ-Աղիզ) նահանգի մեջ: XIX-րդ դ. վերջին Մալաթիայի գավառը բաժանվում էր 5 գավառակների՝ Մալաթիա, Աքջաթաղ, Հիսնի Սանսուր, Զյախտե և Պեհեսնի¹: Գավառը վերոհիշյալ վարչական բաժանումը պահպանեց նաև XX դ. սկզբին, որի մասին է վկայում 1914-1915 թթ. թուրքական պաշտոնական վիճակագրությունը²:

Մալաթիայի գավառակը տարածվում էր գավառի կենտրոնական և հյուսիսային հատվածներում: Մալաթիայի գավառակը հարավից սահմանակից էր Հիսնի Անսուրին, հյուսիսից՝ Արաբկիրի գավառակին, արևելքից՝ Եփրատ գետին, արևմուտքից՝ Կիլիկիային: Մալաթիայի գավառակի կենտրոնը համարվում էր Մալաթիա (Սելիտենե) քաղաքը:

¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 476, ց. 1, գ. 806, ք.14, շրջ (այսուհետև՝ ՀԱԱ) տե՛ս նույնը ՀԱԱ ֆ. 476, ց.1 գ. 140, ք. 9, շրջ., Ապոյաճեան Ա., Պատմություն Մալաթիոյ Հայոց, Պեյրուք 1961, էջ 461, Гиншюс А., Статические таблицы вилаетов Турецкой империи ближайших к Закавказью, Тифлис, 1889, с. 5.

² Justin Mac Carthy, The Arab World, Turkey, and the Balkans (1878-1914), A Handbook of Historical Statics, Boston, 1982, p. 76.

Մինչև XII–XIII դդ. Մալաթիա քաղաքում բնակչության մեջ գերակշիռ թիվ են կազմել հայերը: Հայերից հետո իրենց թվաքանակով երկրորդը հույներն էին³: Հետագայում քաղաքում աստիճանաբար բնակություն են հաստատել նաև թուրքերը, քրդերը, ասորիները և այլ էթնիկ տարրեր: Մալաթիա քաղաքի և այլ հայաբնակ քաղաքների ու գյուղերի հայ բնակչության մի զգալի հատված XIX դ. ընթացքում թուրքական կառավարության ճնշումների տակ ընդունեցին մահմեդականություն: Բայց, այդուհանդերձ, XIX դ. երկրորդ կեսին Մալաթիա քաղաքում հայերը քավականաչափ թիվ էին կազմում: 1878 թ. Մալաթիա քաղաքում հայ տների թիվը հասել էր 1200-ի, 7830 շունչ, 357 շունչ կաթուղի հայ⁴: Պետք է նշել, որ հայերի մեջ մեծ թիվ էին կազմում նաև բողոքականները, որոնք Մալաթիա էին ոտք դրել 1860-ական թթ.⁵: Արդեն 1870-ական թթ. սկզբին նրանց թիվը Մալաթիա քաղաքում հասնում էր 65 տան⁶:

Մահմեդական ազգաբնակչության մասին խոսելիս, պետք է նշել, որ նրա կազմի մեջ մտնում էին թուրքերը, քրդերը, կալբաշները: Քուրդ ազգաբնակչության մի զգալի մասը իսլամացած հայեր էին, որոնք այնուամենայնիվ, պահում էին իրենց ազգային ավանդույթները⁷: Ցավոք, հայ բնակչության արտագաղթը, հալածանքները ու կոտորածները ինչպես նաև ավերիչ երկրաշարժը խաթարեցին ժողովրդագրական պատկերը Մալաթիա քաղաքում: 1888 թ. տեղի ունեցավ Մալաթիայի ազգաբնակչության առաջին արտագաղթը դեպի ԱՄՆ⁸: 1889 թ. նոյեմբերի 8-ին, 1890 թ. հոկտեմբերի 24-ին թուրք հրոսակները ներխուժել

³ ՀԱՍ, ֆ. 476, ց. 1, գ. 804, ք.11 շրջ. .:

⁴ ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թորոս Ազատյան ֆ., քաժին 3., գ. 47., ք. 7 (այսուհետև՝ ՉԱԹ):

⁵ Մելիտինեցի Գեորգ, Նախճիրներ (1915-1918), Պոստոն 1929, էջ 47:

⁶ Փայասյան Ս., Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 19 դ-ի սկզբին մինչև 1880-ական թվականների կեսերը, ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, էջ 97:

⁷ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 460:

⁸ ԱՄՆ գաղթող հայ ընտանիքների թվում էին Սյուրճյանները, Եղիկյանները, Բաղդոյանները, Մուրազյանները, Պոնճուքյանները, Նանիկյանները, Չարոյանները, Թայանները, Փափազյանները, Էմինյանները և ուրիշներ., Մելիտինեցի Գեորգ, նշվ. աշխ., էջ 72-73:

են Մալաթիայի հայկական թաղամասերը, կողոպտել, ապա կրակի մատնել հայերի խանութներն ու տները⁹: 1895 թ. հոկտեմբերի 20-ին - մզկիթներում կոչեր են հնչեցվել հայերի հետ հաշվեհարդար տեսնելու մասին: Պետք է նշել, որ թեև ուժերը խիստ անհավասար էին, բայց հայերը կազմակերպեցին դիմադրություն, որի շնորհիվ զոհերը եղան մի քանի անգամ ավելի քիչ: Ականատեսների վկայությամբ միայն Մալաթիա քաղաքում 1895 թ. ջարդերին զոհ գնաց 650-800 հայ մարդ¹⁰: Այս ամենին պետք է ավելացնել նաև 1893 թ. Մալաթիա քաղաքում տեղի ունեցած սոսկալի երկրաշարժը, որը խլեց բազում հայ մարդկանց կյանքեր: Այս կոտորածի հետևանքով եղել են տներ, որ զոհերի թիվը հասել է 7 հոգու, նույնիսկ եղել են տներ, ուր ինչպես վկայում է Ա. Ալպոյաճյանը «լացոխ անքամ չէր մնացել»¹¹: Ժողովրդագրական տեղաշարժերը քաղաքում իրենց տեղը գտան նաև XX դ. առաջին տասնամյակին, որոնք բերեցին էթնոկարագրի փոփոխության: Երիտթուրքերի կողմից սահմանադրության հռչակումից հետո մինչև 1912 թ. Մալաթիայի հայ երիտասարդներից 3500 հոգի մեկնում են ԱՄՆ¹²: XX դ. սկզբին, այս ամենով հանդերձ հայ բնակչությունը զգալի թիվ էր կազմում: Ըստ Քենալ Զարպատի, որը իր աշխատության մեջ օգտվելով 1906-1907 թթ. թուրքական պաշտոնական վիճակագրությունից հայերի համար հետևյալ թվերն է ցույց տալի. 4 760 շունչ արական սեռ, 5 055՝ իգական, 751՝ հայ կաթոլիկ արական սեռի, 751՝ իգական սեռի, բողոքական 340 արական սեռի, իգական՝ 344, հռոմեադավան 67 արական սեռի, 81՝ իգական¹³: Ասկայն, այս տվյալները հեռու են ճշմարտացի լինելուց, քանի որ արդեն 1914 թ., ըստ հայկական աղբյուրների, հայ բնակչությունը Մալաթիա քաղաքում կազմում էր 15-20 հազար շունչ: Դրանցից որոշ աղբյուրներ և դրանց հիման վրա կազմված պետական

⁹ Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 293:

¹⁰ Մելիտինեցի Գեորգ, նշվ., աշխ., էջ 73:

¹¹ Ալպոյաճյան Ա., նշվ., աշխ., էջ 439:

¹² Մելիտինեցի Գեորգ, նշվ., աշխ., էջ 73:

¹³ Kemal H. Karapat, Ottoman population 1830-1914. Demographic and Social Characteristic, Paris, 1985, p. 160.

փաստաթուղթ, գտնում են, որ 1914 թ. դրությամբ Մալաթիա քաղաքը ուներ 35-40 հազար բնակիչ, որից 15 հազարը՝ հայեր էին¹⁴:

Ասկայն մենք ավելի հակված ենք այն տեսակետի, ըստ որի 1914 թ. Մալաթիայի հայությունը հաշվվում էր 2400-2500 տուն, 20600 շունչ¹⁵, քանի որ անժեռի միջին մեծությունը յուրաքանչյուր տան մեջ կազմում էր 8 շունչ, որը ընդունելի է նաև մեզ համար: Նաև չմոռանանք այն հանգամանքը, որ, հեղինակը իր նյութերը քաղել է ականատեսներից:

Մալաթիա քաղաքի արևելյան հատվածում գտնվում է էսկի Շեհիր (Հին Մելիտենե) հին քաղաքը, ուր 1914 թ. վիճակով բնակվում էին 200 տուն, 1400 շունչ հայ բնակչություն¹⁶:

Ցավոք 1895-1896 թթ. կոտորածները լրջորեն ազդել էին գավառակի հայերի դիմանկարի վրա, քանի որ բազմաթիվ հայաբնակ գյուղերից 1914 թ. հայաբնակ էին մնացել ընդամենը 2 գյուղ: Դրանք էին Մալաթիա գյուղախմբի կազմում գտնվող Օրտուզ և Չերմեք գյուղերը, որոնք գտնվում էին Մալաթիա քաղաքի հյուսիս-արևելյան մասում:

Օրտուզ գյուղը 1895 թ. ուներ 40 տան չափ հայ բնակչություն¹⁷: Այդ քվականի կոտորածի հետևանքով գյուղի հայ բնակիչներից շատերը մահացան, ոմանք էլ փոխադրվեցին Մալաթիա քաղաք: Այդ էր պատճառը, որ մինչև 1914 -1915 թթ. հայ բնակչության մեծ աճ այս գյուղում չէր գրանցվել, և ճշմարտացի պետք է անվանել այն փաստը, ըստ որի նշված ժամանակամիջոցում հայերի թիվը կազմում էր 50 տուն, 400 շունչ¹⁸: Իսկ Չերմեք գյուղը նույն ժամանակ ուներ 8 տուն, 6-7 շունչ հայ բնակչություն¹⁹:

¹⁴ Kevorkian Raymond H., Paboudjian Paul B., *Les Armeniens dans l'empire ottoman la veille du Genocide*, Paris, 1992. p. 389, տե՛ս նույնը Պարիկեան Կ., *Շեռննապատում փոքուն Հայոց և Նորին մէծի մայրաքաղաքին Աեքաստիո, Պոսթըն, 1924, էջ 225, Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969, էջ 419, ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 804, թ. 14:*

¹⁵ Մելիտինեցի Գեորգ, նշվ., աշխ., էջ 61:

¹⁶ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 390:

¹⁷ Ալպոյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 467-468:

¹⁸ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 390:

¹⁹ Նույն տեղում:

Այսպիսով, Մալաթիա գավառակը XIX դ. վերջին և XX դ. սկզբին իրենից ներկայացնում էր հայաշատ մի գավառակ, որի կենտրոնն Մալաթիա քաղաքում 1914 թ. դրությամբ բնակվում էր 20 600 շունչ հայ բնակչություն, իսկ ողջ գավառակում՝ 22 467 շունչ:

Աքջաթաղը Մալաթիա գավառի հյուսիս արևմտյան գավառակն էր նշված ժամանակահատվածում, որը արևելքից և հարավից սահմանակից էր Մալաթիա գավառակին, իսկ արևմուտքից և հյուսիսից՝ Տիվրիկի և Տարենտեի (Սեբաստիայի նահանգ - Ա. Ա.) գավառակներին: Գավառակի կենտրոնը Մրղա (Արկա) ավան էր: Այստեղ 1914 -1915 թթ. միջոցում պատսպարել էր քրդական ազգաբնակչության մի ստվար հատված և մոտ 20 տուն հայ բնակչություն²⁰, և եթե յուրաքանչյուր տան համար անդամների միջին մեծությունը ընդունենք 8 շունչ, ապա ստացվում է, որ այստեղ բնակվում էին 160 շունչ հայ բնակչություն: Քրդերի մասին խոսելիս պետք է նշել, որ Աքջաթաղի քրդերը իսլամացած հայեր էին²¹: Հայերը գավառակում բնակվում էին Հեքիմխան կոչվող հայկական գյուղախմբում, որը գտնվում էր Մալաթիայից Աեբաստիա տանող ճանապարհին: Գյուղախմբի կենտրոնը Հեքիմխան կոչվող մեծ գյուղաքաղաքն էր: Հայերը այստեղ ներգաղթել էին XVIII դ. երզնկայից, Մուշովկա և Անսուր գյուղերից և այլ բնակավայրերից:

1878 թ. Հեքիմխանում բնակվող հայերի թիվը հասնում էր 40 տան, 228 շնչի²²: 1895 թ. սկսված համիդեական կոտորածի սպառնալիքի տակ Հեքիմխանի հայ բնակչությունը ընդունեց մահմեդականություն²³: Սակայն, արդեն 1897 թ. կաթուղիկ եկեղեցին իր պաշտպանության տակ վերցրեց Հեքիմխանի հայերին և նրանք ընդունեցին կաթուղիկություն²⁴:

²⁰ Նույն տեղում, էջ 391, տե՛ս նույնը Աղեքսանդրեան Ա., Պատմութիւն ակաճնավոր քաղաքին Սեբաստիոյ և սահմանաց նոր կամ արքեպիսկոպոսութեան նորին, Վենետիկ, 1911, էջ 392:

²¹ Ալպոյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 459:

²² ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆ., բաժ 3, գ. 47, թ. 7:

²³ ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 806, թ. 4:

²⁴ Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 1897թ.:

1914 թ. դրությամբ Հեքիմխանում բնակվում էին շուրջ 100 տուն, 7-70 շունչ հայ բնակչություն, որի շուրջ 50%-ը կաթոլիկ էին²⁵:

Հեքիմխան գյուղախմբի կազմում է գտնվում նաև Հասան Չելեպի, Մուշովկա և Անսուր գյուղերը, ուր ևս բնակություն էին հաստատվել որոշ թվաքանակով հայ բնակչություն:

Ըստ որոշ տեղեկությունների Հասան Չելեպի գյուղը XX դ. սկզբին, նախքան Մեծ եղեռնը ուներ 25-30 տուն հայ ազգաբնակչություն²⁶: Ճշմարտությանը մոտ ենք համար այն տեղեկությունը, որի համաձայն գյուղը ունեցել է 30 տուն, 237 շունչ հայ բնակչություն²⁷, քանի որ միջին հաշվով յուրաքանչյուր տան անդամների թիվը հասնում էր մոտ 8-ի: Գյուղախմբի կազմում գտնվող Մուշովկա հայաբնակ գյուղը, 1878 թ. բաղկացած էր 20 տուն, 104 շունչ հայ բնակչությունից²⁸:

Հետևելով գյուղի հայ բնակչության աճի դինամիկային նշենք, որ արդեն 1895 թ. գյուղում բնակվում էին 36 տուն հայ բնակչություն²⁹: Ուրախությամբ պետք է նշել, որ 1895 թ. համիդեական կոտորածների ժամանակ գյուղը կորուստներ չի տվել շնորհիվ այն հսկա քարայրի, ուր ապաստան գտան հայերը և մի քանի օր շարունակ դիմադրեցին թուրք և քուրդ խուժանին³⁰: Կոտորածներից զերծ մնալու շնորհիվ, գյուղի հայ բնակչությունը զգալի աճել էր XX դ. սկզբին, և 1914 թ. հայերի թիվը այս գյուղում կազմում էր 50 տուն, 380 շունչ³¹: Թեև հայերը - համիդեական կոտորածների հետևանքով կորուստներ չունեցան, սակայն, չափազանցություն պետք է համարենք Ծոցիկյանի հաղորդած այն տվյալը, որի համաձայն նույն ժամանակ հայերի թիվը գյուղում կազմում էր 800 շունչ³²:

²⁵ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 391:

²⁶ ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 806, թ. 3, տե՛ս նաև Ալպոյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 475, Աղեքսանդրյան, նշվ., աշխ. էջ 393:

²⁷ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 391:

²⁸ ԳԱԹ, Թ. Ազատյան ֆ., րաժ 3, գ. 47, թ. 7:

²⁹ Ալպոյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 476:

³⁰ Նույն տեղում, տե՛ս նաև Ծոցիկեան Ս., Արեւմտահայ աշխարհի, Նիւ Եորք, 1947, էջ 386:

³¹ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 391:

³² Ծոցիկեան Ս., նշվ. աշխ. էջ 386:

Անսուրը Յեքիմիան գյուղախմբի վերջին այն գյուղն էր, ուր հայերը բնակություն էին հաստատել: Նախքան Մեծ եղեռնը նրանց հասավ այստեղ 167 շնչի³³:

Այսպիսով, Աքչաթաղը Մալաթիայի գավառի հյուսիս-արևմտյան գավառակն էր XIX դ. վերջին և XX դ. սկզբին, ուր հայությունը բնակվում էր Արդա կենտրոնում, ինչպես նաև Յեքիմիան գյուղախմբում գտնվող Յեքիմիան գյուղաքաղաքում, Հասան Չելեպի, Մուշովկա և Անսուր գյուղերում և նախքան Մեծ եղեռնը նրանց ընդհանուր թիվը կազմում էր 1714 մարդ:

Մալաթիա գավառի հարավային գավառակների մեջ ամենախոշորը և ընդարձակը Քյախտայի գավառակն է, որը գտնվում էր գավառի հարավ-արևելյան մասում: Նրա սահմանը արևելքից կազմում էր Եփրատ գետը, հարավից և արևմուտքից՝ Հիսնի Մանսուր գավառակը, իսկ հյուսիսից՝ Մալաթիա գավառակը: Գավառակը XIX դ. վերջին և XX դ. սկզբին բաժանված էր հինգ գյուղախմբերի՝ Քյախտա, Կերկեր (Կարկառ), Մերտեսի (Մրտեսի), Շիրո, Ջերավիքան:

Գյուղախմբի վարչական կենտրոնը Քյախտա գյուղաքաղաքն էր, որտեղ 1914 թ. բնակվող 4300 բնակիչներից 2250-ը հայեր էին³⁴:

Բացի վերոհիշյալ կենտրոնից, նախքան Մեծ եղեռնը հայերը իրենց բնակությունը հաստատել էին հետևյալ գյուղերում³⁵, որոնք տեղաբաշխված էին Քյախտե կենտրոնից ոչ այնքան հեռու, Եփրատի ափերին.

Գյուղ	Տուն
Պյոյիսք Պառ	15
Պեովետոլ	9
Գոլուգ	9
Կարչորան	2
Հատունտիկին	3
Տարտառան	3
Կավգրոգ	1
Նաունճա	12
Կապեր	2
Քյսուն	4

³³ Xevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 391:

³⁴ Նույն տեղում, էջ 390:

³⁵ Ավարյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 513:

Գոռուկի	3
Փիրախ	2
Նենիճանոն	9
Թի	4
Քերոխ	1
Բարթանոս	2
Թոմակ	1
Կառաոյ	1
Անտամ	5
Քեֆերտիչ	5
Նունի	9
Կերկեր	5
Սգրաք	2
Տերսխա	5
Իվլաիշ	18

Այսպիսով, Քյախտեի գյուղախմբի 25 գյուղերում կար 132 տուն հայ բնակչություն: Եթե յուրաքանչյուր տան անդամների միջին մեծությունը ընդունենք 8 շունչ, ապա ստացվում է 1056 շունչ: Փաստորեն, ողջ գյուղախմբում նախքան Մեծ եղեռնը բնակվում էր 3306 շունչ հայ բնակչություն: Քյախտեի կազմում գտնվող հայաբնակ գյուղերի մի քանիսի մեջ նույն ժամանակահատվածում 60-70 տան չափ ընդհանուր հաշվով ասորի բնակչություն կար³⁶:

Եիրոյի գյուղախմբի կենտրոն հանդիսացող Իումրյուն գյուղում 1915 թ., նախքան Մեծ եղեռնը բնակվում էր 350 հայ, 1700 շունչ մահմեդական ազգաբնակչություն³⁷: Բացի այս կենտրոնից, հայերը բնակություն էին հաստատել նաև մի շարք գյուղերում: 1914 թ. դուրսբանք այդ գյուղերի³⁸ ժողովրդագրական վիճակը հետևյալն էր՝

Գյուղ	Հայ (տուն)	Ասորի (տուն)
Քեֆերտիզ	20	15
Աղվան	5	10
Տամրու	5	8
Քրատի	4	-

³⁶ Նույն տեղում:

³⁷ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 390:

³⁸ ՀԱԱ, ֆ., 476, ց.1, գ. 804, ք. 40, 42., տե՛ս նաև Ալպոյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 514:

Չամչիկ	2	2
Արղուչայ	3	3

Սակայն, պետք է նշենք, որ այս գյուղերի ցանկը ամբողջական չէ, քանի որ մեկ այլ աղբյուրի³⁹ վկայությամբ այդ գյուղերի մեջ էին նաև Գյավուզ, Դերետեպե, Կրաջ գյուղերը, որոնք Չամչիկ, Արղուչայ գյուղերի հետ միասին ունեին 130 շունչ հայ բնակչություն: Եթե Քեֆերտիզ, Աղվան, Տամու, Քըարի գյուղերի տների անդամների միջին մեծությունը կրկին ընդունենք 8-ը, ապա ստացվում է, որ այդ գյուղերում հայ շնչերի թիվը հասնում էր 272-ի: Փաստորեն ողջ Շիրոյի գյուղախմբում XX դ. սկզբին բնակվում էր 622 շունչ հայ բնակչություն:

Կերկեր գյուղախմբի կենտրոնը համանուն գյուղն էր: 1914 թ. դրությամբ ողջ գյուղախմբում բնակվում էր 450 շունչ (տուն) հայ բնակչություն, որոնք բնակություն էին հաստատել Կերկեր, Կոմիկ, Կարուն, Կաղնտեք, Պայիգի, Պեմերդո, Թելլո, Թերքիդին, Սերերե, Բեթրկե, Թեմշիազ, Վանկ, Խեչիդուռ, Խորագլի, Ջերմեխան, Թչափիան, Փիրախի, Չաֆքան, Արղավունի, Ազմայ, Հալուր գյուղերում⁴⁰:

Բավականին հոծ հայ ազգաբնակչություն է հաստատվել XX դ. սկզբին Մերտեսի գյուղախմբում: Այստեղ 1914 թ. կար 312 տուն, 2425 շունչ հայ բնակչություն, որոնք բնակություն էին հաստատել Բեյուք-Բաղ, Հասան-Դիգին, Խորես, Հելիմ, Կարա-Թյուլպե, Թելթելա, Սրաթուդ, Նարենտչ, Փերագ, Ուլբիչ, Քյուլբուք, Քեքերդիչ, Հոուք, Քորդի գյուղերում⁴¹:

Անդրադառնալով Ջերավիքան գյուղախմբին՝ պետք է նշենք, որ նույն ժամանակահատվածում, այստեղ գոյություն ունեւր ընդամենը 100 տուն, 820 շունչ հայ բնակչություն, որոնք տեղաբաշխված էին Բերվեդոլ, Գեյեքան, Քոլիկ, Գարաշոռ, Հավանկ, Բիլկա, Մեչոաղ, Կարաթուր, Գուդիչ, Փերտեսո, Աեյդ Մահմուդ գյուղերում⁴²:

³⁹ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 390:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴¹ Տե՛ս նույն տեղում:

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 391:

Այսպիսով, Քյախտեի գավառակը վերոհիշյալ ժամանակահատվածում իրենից ներկայացնում էր հայերով բնակեցված մի կենտրոն, ուր 1914 թ. նրանց թիվը կազմում էր 7623 շունչ:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Մալաթիա գավառի հարավ արևմտյան գավառակը Հիսնի Մանսուրը էր (Ադիաման), որը արևմուտքից սահմանակից էր Պեհեսնի գավառակին, արևելքից՝ Քյախտեին, հարավից եզերվում էր Եփրատ գետով, հյուսիսից՝ Մալաթիայի գավառակով: Գավառակի կենտրոնը Հիսնի Մանսուր կամ Ադիաման խոշոր քաղաքն էր: Քաղաքը XIX դ. վերջին նախքան 1893 թ. ունեցել է 600 տուն հայ բնակչություն⁴³, և եթե յուրաքանչյուր տան շնչերի միջին մեծությունը կրկին ընդունենք 8-ը, ապա ստացվում է, որ Հիսնի Մանսուրի հայ բնակչության թիվը նախքան 1893 թ. կազմել է 4800 շունչ: Սակայն, 1893 թ. ավերիչ երկրաշարժը կտրուկ ազդեց քաղաքի էքոնիկ նկարագրի վրա: 1895 թ. համիդեական կոտորածների ժամանակ Հիսնի Մանսուրը այն եզակի վայրերից էր, ուր մի քանի քաջերի գլխավորությամբ կազմակերպվեց դիմադրություն և համեմատաբար քիչ զոհեր տրվեց: 1893 թ. երկաթշարժը և 1895թ. կոտորածները խիստ բացասաբար անդրադարձան հայ բնակչության թվաքանակի վրա, քանի որ արդեն 1914 թ. Հիսնի Մանսուր քաղաքի հայ բնակչության թիվը կազմում էր ընդամենը 3390 շունչ⁴⁴: Փաստորեն, XX դ. սկզբին հայ բնակչության թիվը ոչ միայն չէր աճել, այլև պակասել էր 1410 անձով: Բացի այս կենտրոնից որոշ թվով հայ բնակչություն բնակվում էր Աամուսատ կոչվող գյուղախմբի գյուղերում: Գյուղախմբի կենտրոնը Եփրատի ափին գտնվող Աամուսատ քաղաքն էր, որը նախքան Մեծ եղեռնը ունեցել է 20 տուն հայ բնակչություն⁴⁵, և եթե կրկին առաջնորդվենք այն սկզբունքով, որ յուրաքանչյուր տան անդամների միջին մեծությունը 8 շունչ է, ապա ստացվում է, որ քաղաքը ուներ ընդամենը 160 շունչ հայ բնակչություն: Պետք է նշել, որ հայերի այս քիչ քանակությունը պատահական չէր քանի որ գյուղախումբը բնակեցված էր 400 տուն քուրդ,

⁴³ Ալպոյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 493:

⁴⁴ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 391 :

⁴⁵ ՀԱԱ ֆ. 476, ց. 1, գ. 804, թ. 32:

թուրքմեն, թուրք և մահմեդական այլ տարրերով⁴⁶: Վերոհիշյալ հայկական գյուղերը, ուր քիչ թե շատ բնակություն էին հասատել հայերը հետևյալներն էին. Վարդանա, որը գտնվում էր Սամոսատից դեպի հարավ և դեռևս 1888 թ. ուներ 40 տուն հայ բնակչություն⁴⁷: Ի դեպ, այս գյուղի հայ բնակիչները բոլորը կաթոլիկ դավանանքի էին: Ցավոք, նրանց թիվը XX դ. սկզբին պակասեց, քանի որ բնակչության մի մասը գաղթեց Մալաթիա և 1914 թ. գյուղում կար ընդամենը 15 տուն հայ բնակչություն⁴⁸: Այսինքն գյուղը ուներ 120 շունչ հայ բնակչություն (ինչպես այս, այնպես էլ մյուս գյուղերի դեպքում հաշվարկն իմն է - Ա. Ս.): Այս գյուղի հարևանությամբ է գտնվում Խրաֆի կոչվող գյուղը, որ նույն ժամանակ ուներ 4 տուն, 32 շունչ հայ բնակչություն: Հիսնի Սանսուր կենտրոնից դեպի հարավ արևելք գտնվող Կերեկ գյուղը ուներ 5 տուն, 40 շունչ հայ բնակչություն: Արա հարևանությամբ գտնվող Շնուպի գյուղը ուներ 4 տուն, 32 շունչ հայ բնակիչ:

Աամոսատ կենտրոնից դեպի հարավ-արևմուտք գտնվող Քիլիսան գյուղը ուներ 6 տուն, 48 շունչ հայ բնակչություն, Տարտղանը՝ 5 տուն, 40 շունչ, Կոզանը՝ 3 տուն, 28 շունչ: Աամոսատ կենտրոնի Արևմտյան մասում էին գտնվում Ղանթարա գյուղը 10 տուն, 80 շունչ հայ բնակչությամբ, Մարմարան՝ 4 տուն, 32 շունչ, Գյուլբունար՝ 4 տուն, 32 շունչ: Աակայն, պետական փաստաթղթում և Ալպոլաճյանի աշխատության մեջ բերված գյուղերի այս ցանկը լրիվ չէ: Գյուղերի այս ցանկը ամբողջացնում է Ռ. Գևորգյանի և Փ. Փաթուշյանի, ինչպես նաև Աղեքսանդրյանի աշխատությունները⁴⁹: Մնացած այդ գյուղերը, որոնք տեղաբաշխված էին գյուղախմբի կենտրոնական և հյուսիսային մասերում հետևյալներն էին (հաշվարկը իմն է - Ա. Ս.).

Գյուղ	Տուն	Շունչ
Հայկ	2	16
Զուռնա	2	16
Պշրին	2	16

⁴⁶ Ալպոլաճեան Ա., նշվ., աշխ., էջ 496:

⁴⁷ ՀԱԱ ֆ. 476, ց. 1, գ. 804, թ. 33., տե՛ս նույնը Ալպոլաճեան Ա., նշվ., աշխ., էջ 495:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում:

⁴⁹ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 391, Աղեքսանդրյան Ըշվ., աշխ. էջ 408-409:

Թավտիո	2	16
Ուրեմն	2	16
Ձարկով	2	16
Իշեք	2	16
Թերեթիլ	2	16
Բոզուք	2	16
Ընդհանուր	18	144

Այսպիսով, 1914 թ. դրությամբ Հիսնի Մանսուր (Ադիաման) գավառակում բնակվող հայ բնակչության թիվը կազմում էր 4174 շունչ:

Պեհեսնի գավառակը XIX դ. վերջին և XX դ. սկզբին, գտնվելով Մալաթիայի գավառի հարավայի հատվածում, հյուսիսից սահմանակից էր Մալաթիայի և Աքչաթաղի գավառակների, հարավից և արևելքից՝ Հիսնի Մանսուր գավառակին, արևմուտքից՝ Կիլիկիային: Գավառակի կենտրոնը Պեհեսնի գյուղաքաղաքն էր, ուր 1914 թ. ապրում էր 530 տուն, 3750 շունչ հայ բնակչություն⁵⁰: Այս բնակչության մեջ շուրջ 45 տուն կաթուղի և բողոքական հայեր կային, որոնք այստեղ հաստատվել էին 1875 թ.⁵¹:

Նախքան 1895 թ. ջարդերը հայերը բնակչություն էին հաստատել նաև հետևյալ գյուղերում⁵². Աուրֆազ, որը գտնվում էր Պեհեսնիից դեպի արևելք և ուներ 20 տուն հայ բնակչություն: Պեհեսնիից դեպի հյուսիս էր գտնվում Թուք գյուղը, ուր կար 16 տուն հայ բնակչություն: Աուրֆազից հյուսիս-արևելք էր գտնվում Շամպոյարը 10 տուն հայ բնակչությամբ հայ գյուղը, և Պեհեսնիից դեպի արևմուտք է գտնվում Պելվետեն գյուղը՝ 15 տուն հայ բնակչությամբ⁵³: Ավելի քիչ քանակով հայ բնակչության կարելի էր հանդիպել Պեհեսնիից հարավ գտնվող Քեսսուն գյուղաքաղաքում, Խոչկաչի ու Ռաբան գյուղերում: Այս գյուղերը շուտով ենթարկվեցին սարսափելի կոտորածների, որոնց հետևանքով եղան սարսափելի մարդակալին կորուստներ:

⁵⁰ Նույն տեղում, էջ 381:

⁵¹ ՀԱԱ, ֆ. 476, ց.1, գ. 806, ք.137., տե՛ս նույնը Ալպոյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 91:

⁵² ՀԱԱ ֆ. 476, ց.1, գ. 804, ք. 5., տե՛ս նույնը Ալպոյաճեան Ա., նշվ., աշխ., էջ 486:

⁵³ Այստեղի հայերը թրջախոս էին:

Ընդհանուր Պեհեսնիի գավառակի հայ բնակչության թիվը 1914 թ. դրութամբ կազմում էր 4550 շունչ⁵⁴, որից, ինչպես նշել ենք, 3750-ը վարչական կենտրոնում:

Այսպիսով, Մալաթիայի գավառը XIX դ. վերջին և XX դ. սկզբին բաժանված էր Մալաթիայի Աքջաթաղի, Քյախտեի, Հիսնի Մանսուրի, Պեհեսնիի գավառակների: Հայերը այս գավառի հիմնական էթնիկ տարրերից էին և 1914 թ. նրանց ընդհանուր թիվը կազմում էր 40 528 մարդ:

*АРМАН СААКЯН
ИИ НАН РА*

ЧИСЛЕННОСТЬ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ МАЛАТИЙСКОГО САНДЖАКА В КОНЦЕ XIX – НАЧАЛЕ XX ВВ.

РЕЗЮМЕ

Малатийский санджак до 2-ой половины XIX века являлся южным санджаком Себастьянского вилайета. 1870-ых гг. он был присоединен к вилайету Харпут/Мамурет-ул-Азиз/. В конце XIX века Малатийский санджак был подразделен на 5 каз: Малатия, Агчатах, Хисни Мансур, Кяхте, Пехесни. Это разделение сохранилось и в начале XX века. Каза Малатия являлась центральным из перечисленных каз. Центром как всего санджака, так и упомянутой казы был город Малатия. Основную часть населения города составляли 20600, а во всей казе 22467 армян. В то же самое время в казе Кяхта проживало 7623, в Хисни Мансуре - 4174, в Пехесни - 4550, а в Агчатахе - 1714 армян.

Во всем Малатийском санджаке в 1914 г. проживало в общей численности 40528 армян.

⁵⁴ Kevorkian Raymond H., նշվ. աշխ., էջ 391:

**XIX դ. վերջի - XX դ. սկզբի ՌՈՒՍԱԼԵՁՈՒ ՆՅՈՒԹԵՐԸ
ԴԻՍՐԲԵՔԻՐԻ ՎԻԱՅԵԹԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՍԱԱԻՆ**

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Դիարբեքիի վիլայեթի հայ ազգաբնակչության ժողովրդագրական ուսումնասիրությունների համար՝ որպես սկզբնաղբյուր, կարևոր արժեք են ներկայացնում Կովկասյան զինվորական գլխավոր շտաբին գրված ռուս սպաների զեկուցագրերը: Հիմնական նպատակ ունենալով նյութեր ներկայացնել ռազմավիճակագրական ուսումնասիրությունների համար՝ ռուս բարձրաստիճան սպաները մանրամասն տեղեկություններ են հաղորդում Դիարբեքիի վիլայեթի բնակավայրերի և նրանցում հայ և մահմեդական բնակչության տեղաբախշման, նրանց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կարգավիճակի մասին:

Դիարբեքիի վիլայեթի Արղանա-Մաղեն գավառի Բալուի գավառակի վերաբերյալ կարևոր և մանրամասն տեղեկություններ է հաղորդում ռուսական բանակի սպա Ա.Ս.Կոլյուբակինը իր «Նյութեր Ասիական Թուրքիայի ռազմավիճակագրական տեսության» աշխատանքում՝ հրատարակված Կովկասյան ռազմական օկրուգի Գլխավոր Շտաբի կողմից 1890 թ. և 1891 թ. Թիֆլիսում¹: Ա. Կոլյուբակինի ստվարածավալ աշխատանքի երրորդ (երկու մասով) և չորրորդ հատորներում ներկայացված է Բալուի գավառակի մանրամասն նկարագրությունը: Երրորդ հատորի առաջին մասում հեղինակը մանրամասն ներկայացնում է Բալուի գավառակի սահմանները, ռելիեֆի ընդհանուր նկարագրությունը (ռազմա-աշխարհագրական վերլուծական աշխատանք կատարելով), վարչական կառուցվածքը, բնակչությունը, բնակավայրերի տեղաբախշումը: Հեղինակը մանրամասն նկարագրում է նաև Բալուի գավառակի քաղաքական և տնտեսական իրավիճակը:

¹ Колюбакин А., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, т. 3, ч. 1, 1891, т. 3, ч. 2, 1890, т. 4, 1991.

Յեղիմակը զգալի աշխատանք է կատարել՝ մանրամասն տեղեկություններ հավաքելով Բալուի գավառակի բոլոր մեծ ու փոքր բնակավայրերի վերաբերյալ, որը հատուկ աղյուսակների տեսքով ներկայացված է աշխատանքի երրորդ հատորի երկրորդ մասում: Ա. Կոլլուբակինն իր աշխատանքի չորրորդ հատորում ներկայացնում է էրզրումի հարթավայրից մինչև Բալու քաղաք իր անցած ճանապարհի մանրամասն նկարագրությունը:

XIX դ. վերջին Դիարբեքիի վիլայեթի հայ ազգաբնակչության ժողովրդագրական ուսումնասիրության համար Կոլլուբակինի նյութերը կարևոր և հետաքրքրական են հեղիմակի կողմից տարբեր հարցերի վերաբերյալ կատարված անձնական դիտարկումների և քննական ու համեմատական վերլուծությունների տեսանկյունից: Օրինակ, նկարագրելով Բալուի գավառակի սահմանները, Կոլլուբակինը արձանագրում է, որ, թեև այն աշխարհագրական դիրքով և տնտեսական կապերով պետք է խարբերդի վիլայեթի մաս կազմեր, միացվել էր Դիարբեքիին, որից այն անջատված էր հսկա և անանցանելի Տավրոսի լեռնային համակարգով: Սա չափազանց դժվարություններ էր ստեղծում ինչպես բնակչության, այնպես էլ վարչական ղեկավարության համար²:

Օսմանյան կայսրությունում իրականացվող վարչական վերածափումների հիմքում դրվում էին ոչ թե տնտեսական և աշխարհագրական գործոնները, այլ՝ կառավարության նպատակաուղղված քաղաքականությունը՝ հոգուտ մահմեդական բնակչության փոխել առավել հայաբնակ գավառների վարչաժողովրդագրական պատկերը:

Այս երևույթի վերաբերյալ Կոլլուբակինը տողատակում կատարում է իր դատողությունները՝ հիմնականում նշելով. «Բեռլինի վեհաժողովից հետո և Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածի համաձայն՝ բարեփոխումների նախագիծը հանգեցրեց Ասիական թուրքիայի սահմանների մեծամասնության վերածափումներին, որոնց հիմնական նպատակը Օսմանյան կառավարության ձգտումն էր՝ համոզել Եվրոպային, որ կայսրության առանձին շրջաններում մահմեդական բնակչությունը գերակշռում է քրիստոնյա բնակչությանը: Այս նպատակին հասնելու

² Նույն տեղում, հ. 3, մաս 1, էջ 110:

համար կառավարությունը վերածնունդ էր վիլայեթների գավառներն ու գավառակները՝ առանց հաշվի առնելու աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, հաղորդակցության հարմարավետությունը, տնտեսական կապերը և այլ պայմանները»³:

Սնդրադառնալով Բալուի գավառի բնակավայրերի և բնակչության խտությանը՝ Կոյուբակինը արձանագրում է, որ հայերը հակված են ստեղծելու խոշոր և խիտ բնակեցված բնակավայրեր, որը չի կարելի ասել քրդերի մասին, որոնք սովորաբար գերադասում են բնակվել ոչ խիտ խմբերով՝ նկատի առնելով բազմաքանակ ոչխարների համար խոտհարքների անհրաժեշտությունը⁴:

Սրանով է բացատրվում բնակավայրերի և բնակչության խտության անհավասարաչափ բախշվածությունը գավառակի հյուսիսային և հարվային մասերում, քանզի ամբողջ վարչամիավորի 325 բնակավայրերից 186-ը տեղակայված են հյուսիսային հատվածում՝ զբաղեցնելով ամբողջ գավառակի տարածքի միայն 1/3 մասը (հյուսիսիում հայերը կազմում են բնակչության 33,4%, իսկ հարավում ընդամենը 23%): Սմփոփելով թվական տվյալները՝ Կոյուբակինն եզրահանգում է. «...Բալուի հյուսիսային հատվածը պետք է համարել խիստ քրիստոնեաբնակ, իսկ դա չափազանց կարևոր է ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմաքաղաքական տեսակետից»:⁵

Չափազանց հետաքրքիր և արժեքավոր են Կոյուբակինի կողմից կատարված ուսումնասիրությունները և վերլուծական համեմատությունները՝ ըստ կազաների և նահիենների, դրանցում ներկայացված հայ և մահմեդական բնակչության թվաքանակի տոկոսային հարաբերակցությունը: Հեղինակի կողմից կատարված վերլուծական ուսումնասիրությունները մեզ լայն հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Բալուի գավառակի տարբեր շրջանների միջև եղած սոցիալական, տնտեսական և քաղաքական հարաբերությունների առանձնահատկությունների ու դրանցում հայ ազգաբնակչության դերի ու դերակատարության մասին: Մեր թեմայի ուսումնասիրության հա-

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 115:

⁵ Նույն տեղում, էջ 121:

մար նշված հարցերի ուսումնասիրությունը ունի կարևոր նշանակություն, ուստի հարկ ենք համարում դրանց անդրադառնալ առավել մանրամասն, Բալու քաղաքի և հյուսիսային հինգ բնակավայրերի օրինակով՝ տալով դրանցում հայ և մահմեդական բնակչության թիվն ու տոկոսային հարաբերությունը մեր կողմից կազմված աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 1

	Գավառներ	Հայեր (տուն-բնակիչ)		Մահմեդականներ (տուն-բնակիչ)		տոկոսային հարաբեր. այսեր.-մահմ.%	
1	ք. Բալու	550	4950	1600	11200	30,6	59,4
2	շրջ. Մազրաթ	1293	7758	990	5006	60,7	39,3
3	գ. Օխու	222	1332	671	4026	24,8	75,2
4	գ. Վերին Բուլանդիս	0	0	749	4494	0	100
5	գ. Ներքին Բուլանդիս	8	48	602	3564	1,3	98,7
6	գ. Ջարնժոր	241	1446	449	2694	34,9	65,1
	ԸՆԴԱՄԵՆԸ	2314	15534	5061	30984	33,4	66,6

Անդրադառնալով Բալուի գավառի տնտեսությանը՝ հեղինակը մանրամասն նկարագրում է տարբեր բնակավայրերի տնտեսական զարգացման աստիճանը: Մեզ համար առավել հետաքրքրական են հեղինակի կողմից գավառի հյուսիսային մասը երեք շրջանների բաժանելը՝ ըստ իրենց տնտեսական զարգացվածության աստիճանի՝

1. շրջ. Մազրաթ - առավել զարգացած
2. գ. Ջարնժոր և գ. Օխու - միջին զարգացած
3. գ. Վերին Բուլանդիս և գ. Ներքին Բուլանդիս - թույլ զարգացած⁶:

Կոյուրակիսի կողմից հաղորդված տեղեկությունները առավել հետաքրքրական են դառնում, երբ համեմատում ենք վերը նշված *աղյուսակ 1* տվյալների հետ, որից հստակ երևում է, որ այդ բնակավայրերի տնտեսական զարգացումն անմիջականորեն պայմանավորված է հայ բնակչության թվաքանակի տոկոսային հարաբերությամբ: Հետաքրքրական է նաև մեկ այլ առիթով հեղինակի կատարած դիտար-

⁶ Նույն տեղում, էջ 139:

կումն այն մասին, որ հայերը հանդիսանում են ամբողջ գավառի բնակչության ամենաաշխատասեր և արտադրողական հատվածը: Եվ չնայած դրան՝ գավառի թուրքական և քրդական ղեկավարության կողմից բազմաթիվ ուղղակի և անուղղակի խոչընդոտներ են ստեղծվում հայ բնակչության կենսագործունեության համար (հատկապես հողի վարձակալության հարցում), որի արդյունքում հայ բնակչությունը ստիպված է լինում աշխատանք որոնել հեռավոր Կ.Պոլսում, Ռուսաստանում և այլուր ու նույնիսկ արտագաղթել երկրամասից⁷:

Հարկ ենք համարում ներկայացնել նաև Ա. Կոլլուբակինի առանձնահատուկ ջերմ և համակրալից վերաբերմունքը հայ ազգաբնակչության նկատմամբ՝ որպես խելացի, ստեղծագործ և աշխատասեր ժողովուրդ:

Վերոհիշյալ թեմայի ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում Ա. Ս. Գիպպիուսի 1889 թ. Թիֆլիսում հրատարակված «Անդրկովկասին մերձակա Թուրքական կայսրության վիլայեթների վիճակագրական աղյուսակներ» աշխատանքը, հատկապես նրան կցված Դիարբեքիի վիլայեթի վիճակագրությունը ներկայացնող աղյուսակն ու Անդրկովկասին հարակից Թուրքական կայսրության վիլայեթների վարչական նոր բաժանումը պատկերող քարտեզը⁸: Նշված փաստաթղթերը, հիմնականում կազմված լինելով ըստ Օսմանյան կայսրությունում 1873-1886 թթ. հրատարակված սալնամեների տվյալների, հետաքրքիր ու արժանահավատ աղբյուր են հանդիսանում տվյալ թեմայի ուսումնասիրության համար: Այս տեսակետից մեզ համար առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1886 թ. Էրզրումի վիլայեթի սալնամեի տվյալների հիման վրա կազմված Դիարբեքիի վիլայեթի վիճակագրական աղյուսակը, և հեղինակի կողմից ներածական բովանդակությամբ պարզաբանումները աղյուսակի վերաբերյալ: Անդրադառնալով աղյուսակի տվյալների արժանահավատությանը՝ հեղինակը նշում է, որ 1886 թ. Էրզրումի վիլայեթի սալնամեում գավառնե-

⁷ Նույն տեղում, էջ 131-133:

⁸ Гишп иус А., Статистические таблицы вилайетов Турецкой империи, ближайших к Закавказью, Тифлис, 1889.

րը և գավառակները ներկայացված են այբբենական կարգով, ինչը կարող էր շատ բացթողումների և անճշտությունների առիթ հանդիսանալ: Ուստի հարկ է համարում այս տվյալները ուսումնասիրել՝ համեմատելով դրանք 1880 թ. համակայսերական սալնամեում ներկայացված տվյալների հետ՝ տալով դրանց համեմատական վերլուծությունն սռանձին սյունյակով: «Սա նպատակ է հետապնդում՝ առաջին հերթին ցույց տալ 1880 թ. հետո կատարված բարեփոխումները, և երկրորդ՝ չանտեսել այն գավառներն ու գավառակները, որոնք կամ նոր են ձևավորվել կամ ընդհակառակը՝ վերածնվել են»⁹:

Աղյուսակում ներկայացված է Դիարբեքիի վիլայեթի վարչական բաժանումները՝ ըստ գավառների, գավառակների և գյուղերի, նշված է նրանց հեռավորությունը ըստ ժամերի գավառի կենտրոնից, ներկայացված է նրանցից յուրաքանչյուրում եղած բնակավայրերի քանակը, նշված է ընտանիքների և արական շնչի բնակիչների թիվը՝ ըստ կրոնական պատկանելության: Այս աղյուսակը մեզ առանձնահատուկ կարևոր և հետաքրքիր է թվում այն առումով, որ այստեղ հեղինակը ներկայացրել է վարչական նոր բարեփոխումների հետևանքով Դիարբեքիի վիլայեթի գավառների և գավառակների վերածնունդները՝ առանձին սյունյակով նշելով այն գավառներն ու բնակավայրերը, որոնք նոր վարչական բաժանման արդյունքում միացվել, կամ ընդհակառակը՝ անջատվել են Դիարբեքիի վիլայեթից:

Անդրադառնալով Օսմանյան կառավարության կողմից իրականացված վարչական բարեփոխումներին՝ Գիպպիուսը նշում է, որ սովորաբար բարեփոխումների ժամանակ մեկ վիլայեթի գավառները մտցվում էին մյուս վիլայեթի կազմի մեջ, բայց երբեք չէին վերածնվվում գավառակներն ու բնակավայրերը, ինչը հնարավորություն է տալիս եզրահանգումներ կատարել խոշոր վարչական կենտրոնների (վիլայեթների և գավառների) տարածքի մեծության և բնակչության թվաքանակի ու ազգային կազմի վերաբերյալ¹⁰:

⁹ Նույն տեղում, էջ 6:

¹⁰ Նույն տեղում, էջ 15:

Ատորն մեր կողմից կազմված աղյուսակի միջոցով Դիարբեքիի վիլայեթի Դիարբեքի գավառի օրինակով ներկայացնում ենք վիլայեթում վարչական վերաձևումների արդյունքը հանդիսացող ժողովրդագրական պատկերի փոփոխությունները՝ հօգուտ մահմեդական բնակչության:

Աղյուսակ 2

	Բնակավայրեր ներկայաց. 1886թ. Էրզրումի վիլայեթի սալնամնիում	1880թ. սալնամն	Բնակավայրերի քիվը	Ընտանիքների քիվը	Արական շնչի բնակիչների քիվը		
					մահմ.	ոչ մահմ.	Ընդ.
1	Աթակ	չկա	103	2328	4955	1148	6103
2	Բեկթաշ	չկա	7	168	622	2	624
3	Կալա Աեյուդեկ	չկա	9	530	1608	49	1657
4	Դազրու - (Թերջիլ)	չկա	44	731	1948	20	1969
6	Թավուս	չկա	5	52	529	-	529

Աղյուսակում ներկայացված տվյալներից պարզ երևում է, որ 1880 թ. սալնամնում բացակայում են գերազանցապես մահմեդական բնակչությամբ բնակեցված բնակավայրերը, որոնք վարչական վերաձևումների արդյունքում միացվել են Դիարբեքիի գավառին և առկա են 1886 թ. սալնամնում: Մեր կարծիքով այս վերաձևումները հստակ նպատակ են հետապնդել Դիարբեքիի վիլայեթում մեծացնել մահմեդական բնակչության թվական գերակշռությունը քրիստոնյա բնակչության համեմատ, ինչի մասին նախապես խոսվել է վերևում:

Շարունակելով իր դիտարկումները՝ Գիպպիուսը նշում է, որ Թուրքիայում վարչական վերաձևումները հաճախակի էին տեղի ունենում և հիմնականում ժամանակավոր բնույթ էին կրում¹¹: Գիպպիուսի կատարած դիտարկումը համընկնում է Ա. Կոյուբակիհի կատարած եզ-

¹¹ Նույն տեղում:

րահանգման հետ, որը վկայում է տվյալ եզրակացության արժանահավատության մասին:

Սակայն ռուս հեղինակների կողմից ներկայացված տվյալները հայերի թվաքանակի վերաբերյալ մեզ այնքան էլ արժանահավատ չեն թվում, քանզի նրանք հիմնականում կուրորեն, առանց այլ աղբյուրների հետ համեմատության և քննական վերլուծության են օգտագործել թուրքական սալնամեները: Դրանք, սակայն, չէին ներկայացնում հայ ազգաբնակչության թվաքանակի իրական պատկերը: Սալնամեներում հայերին վերաբերվող տվյալներում ոչինչ չէր խոսվում քրդախոս և թրքախոս հայերի մասին: Նրանց վերաբերյալ տեղեկությունները փաստորեն բացակայում են: Բացի այդ թուրք պաշտոնյաները սալնամեներում հայերի թվաքանակին անդրադառնալիս օգտագործում էին Կ.Պոլսի պարիարքարանի և տարբեր թեմերի ներկայացրած տվյալները: Վերջիններս նպատակաուղղված թաքցնում էին հայ ազգաբնակչության իրական թվաքանակը՝ ձգտելով խուսափել անտանելի ծանր հարկերից:

Ստորև Դիարբեքիի վիլայեթի Արղանա-Մադեն սանջակի օրինակով ներկայացնենք սալնամենների և հայկական աղբյուրների հաղորդած տվյալների անհամապատասխանությունը՝ որպես հիմք օգտագործելով Ա. Գիպպիուսի կողմից թարգմանված և հրատարակված էրզրումի 1886 թ. սալնամեի և Գ. Սրվանձտյանի կողմից 1879-ին վերոհիշյալ գավառ ուղևորության արդյունքում ներկայացրած հայ ազգաբնակչության թվական տվյալները: 1886 թ. սալնամեում Արղանա-Մադեն սանջակում տրված է արական շնչի հայ ազգաբնակչության թիվը 11 141 է, որը կրկնապատկելով, կարող ենք իմանալ հայերի ընդհանուր թիվը՝ 22 282 հայ¹²: Գ. Սրվանձտյանը նշում է հայ բնակչության թվաքանակը՝ ըստ ընտանիքների թվի՝ 3690 տուն¹³: Գյուղական հայ ընտանիքների թիվը բաղդատելիս՝ միջինը պետք է ընդունել 8-ը՝ նկատի ունենալով դրանց բազմադաս լինելը¹⁴: Եթե յուրաքանչյուր ընտանիքում հաշվենք 8 անձ, ապա՝ 3690 ընտանիքում ապրում են

¹² Նույն տեղում, թերթ N 8:

¹³ Սրվանձտյան Գ., Երկեր, հ. 2, Ե., 1982, էջ 401-421:

¹⁴ Մելքոնյան Ա., Էրզրում, Ե., 1994 թ., էջ 111:

29520 հայ, որը 7238-ով ավելի է 1886 թ. սալմամեում տրված տվյալներից, այլ կերպ ասած՝ 25 %-ով նվազեցված է հայ ազգաբնակչության թիվը Արղանա-Մաղեն գավառում:

XX դ. սկզբին Դիարբեքիրի վիլայեթի հայ ազգաբնակչության ժողովրդագրական ուսումնասիրության համար չափազանց հետաքրքրական են այն տեղեկությունները, որոնք գետեղված են 1909 թ. Թիֆլիսում Կովկասյան ռազմական օկրուգի Գլխավոր շտաբի կողմից հրատարակված Ռ. Ս. Տերմենի 1907 թ. Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի վիլայեթներում անցկացված զինվորական գործուղման հաշվետվությունում¹⁵: Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում Երթուղի N 4-ի «Աղբերդից Դիարբեքիր» և Երթուղի N 5-ի «Դիարբեքիրից Բիթլիս» ուսումնասիրությունը, որտեղ առանձին սյունյակներով տրված են ճանապարհամերձ բնակավայրերը՝ իրենց բնակչության քանակով՝ ըստ ընտանիքների քանակի և ազգային պատկանելության, այդ բնակավայրերի հեռավորությունը նախորդող բնակավայրից, ինչպես նաև մինչև հաջորդ բնակավայրը եղած տարածությունը: Ներկայացված է ճանապարհների, դրանց որակի և տեսակի, ինչպես նաև հարակից տեղանքի մանրամասն նկարագրությունը: Առանձին սյունյակով ներկայացված է հեռահաղորդակցման ուղիների, գետերի, հնարավոր ռազմական կացարանների առկայությունը: Վերոհիշյալ տվյալները հնարավորություն են տալիս հեշտությամբ որոշել բնակավայրերի ռելիեֆային առանձնահատկությունները և տեղադրությունը՝ ըստ բնակչության թվաքանակի և ազգային պատկանելության:

Մեզ համար առավել մեծ կարևորություն են ներկայացնում Տերմենի կողմից հայ ազգաբնակչության քաղաքական, տնտեսական և սոցիալական վիճակի վերաբերյալ բավականին ստույգ և մանրակրկիտ տեղեկությունների քննական վերլուծությունները, ինչպես նաև հեղինակի անձնական դատողություններն այդ հարցերի վերաբերյալ: Հետաքրքրական են հեղինակի հաղորդած տեղեկություններն Օսմանյան կայսրությունում հայերի անտանելի վիճակի մասին, որի

¹⁵ Термен Р., Отчет о полевой поездке 1907 г. в Ванском, Битлисском и Диярбекирском вилайетах, Тифлис, 1909.

արդյունքում հայ բնակչությունը ստիպված էր արտագաղթել: «...1895-1896 թթ. կոտորածից հետո էլ թուրքական կառավարությունը քայլ առ քայլ, սիստեմատիկ կերպով շարունակում էր աննկատ ու անծայն կործանել հայերի տնտեսական կյանքը՝ չնայած նրան, որ դրանով աղքատանում էր վիլայեթը և դատարկվում էր պետական գանձարանը»¹⁶: Կառավարության նմանատիպ քաղաքականությունը բերեց նրա համար ցանկալի արդյունքների՝ գյուղական հայ ազգաբնակչությունը համարյա ամբողջությամբ քայքայվեց, հողերի զգալի մասը անցնում է մահմեդականների ձեռքը, որի հետևանքով հայերը զանգվածաբար գաղթում են այլ վիլայեթներ: Հայերի դատարկված բնակավայրերում իշխանությունները վերաբնակեցնում են հիմնականում Կովկասից ներգաղթած երկրագործ մահմեդականների¹⁷:

Առավել հետաքրքիր է հեղինակի կողմից կատարված նկատառումներն այն մասին, որ թուրքական կառավարության նմանատիպ գործողությունները նպատակուղղված էին հայ ազգաբնակչությանը փոխարինել Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված մահմեդական հուսալի տարրով: Այդժամ Եվրոպան քրիստոնյաների պաշտպանության և հովանավորության պատրվակով չէր միջամտի թուրքիայի ներքին գործերին¹⁸:

Դիարբեքիի վիլայեթի վերաբերյալ կարևոր և հետաքրքիր տեղեկություններ են ներկայացված «Փոխգնդապետ Տոմիլովի՝ Գլխավոր շտաբին ներկայացված 1904 թ. Ասիական թուրքիայով ուղևորության մասին հաշվետվությունը» աշխատանքի 2-րդ մասում, որը վերաբերվում է 1907 թ. Կովկասից Միջերկրական ծով անցած երթուղու մանրամասն նկարագրությանը¹⁹: Վերոհիշյալ աշխատության համար առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում Երթուղի N 3-ի՝ «Մոսուլ-Նիսիբիին-Մարդին-Դիարբեքի» և Երթուղի N 4-ի «Դիարբեքի-Սևերեկ-Ռւրֆա-Հալեպ» ուսումնասիրությունը, որը Տոմիլովը ներկա-

¹⁶ Լույն տեղում, էջ 50:

¹⁷ Լույն տեղում:

¹⁸ Լույն տեղում, էջ 51:

¹⁹ Отчет о поездке по Азиатской Турции Генерального штаба подполковника Томилова, ч. 2, Тифлис, 1907.

յացել է հատուկ աղյուսակների տեսքով: Հանդիսանալով Կովկասյան ռազմական օկրուգի Գլխավոր շտաբին ներկայացված հաշվետվութ-
յուն՝ Տոմիլովի աղյուսակներում սյունյակներն ունեն նույն ձևակեր-
պումները և նպատակաուղղված են միևնույն խնդիրների պարզաբան-
մանը, ինչ Տերմենի հաղորդած տեղեկությունները: Տարբերվում են
միայն նրանց անցած և նկարագրված ուղիները:

Ռուսական բանակի վերոհիշյալ բարձրաստիճան սպաների
հաշվետվություններում զգացվում է նրանց հատուկ հետաքրքրությու-
նը հայկական բնակավայրերի, հայ ազգաբնակչության թվաքանակի,
նրանց տնտեսական ռեսուրսների և այլնի վերաբերյալ: Ռուսաստանը,
նվաճողական ձգտումներ ունենալով Օսմանյան կայսրության տա-
րածքների նկատմամբ, շատ լավ գիտակցում էր, որ Օսմանյան
կայսրության դեմ պատերազմ սկսվելու պարագայում թուրքաբնակ ժո-
ղովուրդներից ամենալայն աջակցությունը կարող է ստանալ հայ ազ-
գաբնակչությունից:

*АСМИК АБОВЯН
ЕГУ*

**РУССКОЯЗЫЧНЫЕ МАТЕРИАЛЫ ИССЛЕДОВАНИЙ
АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОГО
СОСТОЯНИЯ ДИАРБЕКИРСКОГО ВИЛАЙЕТА
(конец XIX - начало XX вв)**

Для демографических исследований армянского населе-
ния Диарбекирского вилайета конца XIX - начала XX вв. как
первоисточник очень важны отчеты русских офицеров и матери-
алы русских очевидцев. Стремясь сообщить материалы для воен-
но-статических исследований, русские офицеры подробно опи-
сывают населенные пункты и населенность Диарбекирского ви-
лайета, их политическое, социальное, экономическое и культур-
ное положение. В отчетах русскоязычных авторов чувствуется
особый интерес к армянским населенным пунктам, к численнос-
ти армянского населения, их экономическим ресурсам и т.д.

ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ)

XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի բազմազգ Օսմանյան կայսրությունում հայ մշակույթի գործիչների դերին իրենց աշխատություններում անդրադարձել են Հրաչյա Աճառյանը¹, Գառնիկ Ստեփանյանը², Բարսեղ Թուղլաճյանը³, Հովհաննես Տեր-Պետրոսյանը⁴, Հ. Սիրունին⁵, Մեթին Անդը⁶, Արսեն Յարմանը⁷, Կարո Քյուրքմանը⁸ և ուրիշներ: Սույն հոդվածը հիշյալ դարաշրջանի արևմտահայ նկարիչների ու քանդակագործների գործունեության լուսաբանման մի համեստ փորձ է:

Երկու դար շարունակ Թուրքիայում իրենց նկարչական արվեստով փայլել են Սանասները և արժանացել սուլթանների գնահատականին: Սանասները կեսարացիներ էին, մի քանի դար առաջ հաստատվել էին Պոլսում: Այս ընտանիքի բազմաթիվ անդամները XIX դ. եղել են օսմանյան դիվանագիտության ծառայողներ, միաժամանակ զբաղվել են մանրանկարչությամբ: Ձենոբ Մանասը եղել է Կիեննայում Օսմանյան դեսպանատան առաջին քարտուղար-թարգմանը, ունեցել է չորս որդի՝ Ռուբեն, Անպուհ, Գասպար և Ալեքսանդր, բոլորն էլ դիվա-

¹ Աճառյան Հ., Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1999:

² Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, Երևան, 1969, Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973:

³ Tuğlacı Pars, Osmanlı Mimariğinde Batlaşma Donemi ve Balyan Ailesi, İnkilâp ve Aka, İstanbul, 1981. Թուղլաճյան Բ., Հայկական տպագրությունը Օսմանյան կայսրությունում և հայերու նպաստը թուրքական տպագրական արվեստին, Մերձավոր և Սիջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XII, Թուրքիա, Երևան, 1985:

⁴ Տեր-Պետրոսյան Հ., Հայերու սատարը թուրք մշակույթին և տնտեսության, Կահիրե, 1976:

⁵ Սիրունի Հ., Պոլիս և իր դերը, հատոր IV, Պետրոս, 1988:

⁶ Metin And, Osmanlı Tiyatrosu (Kuruluşu-Gelişimi-Katkısı), Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Yayınları, no: 258, Ankara, 1976.

⁷ Arsen Yarman, Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve Surb Pirgiç Ermeni Hastanesi Tarihi, İstanbul, 2001.

⁸ Garo Kürkman, Osmanlı İmparatorluğu'nda Ermeni Ressasalar, İstanbul, 2004.

նագետ-նկարիչներ: Եղել է նաև ժողովի Մանաս, որը Ձեռնոքի երդրոր-
որդին էր⁹: Մանասների ընտանիքի վեց անդամներ եղել են արքունի
նկարիչներ, ութը՝ ծառայել են տարբեր վեհապետարաններում: Ռուբեն
Մանասը 1869 թ. Միլանում Թուրքիայի ընդհանուր հյուպատոսն էր,
նկարների տակ ստորագրում էր ֆրանսերեն՝ Rubens Manasse: Արդուլ
Մեջիթի ավագ դատեր՝ Ֆաթմա սուլթանուհու մանրանկարը ստորա-
գրված է նրա կողմից 1850 թ.¹⁰:

Արդուլ Մեջիթը և Արդուլ Ազիզը իրենց դիմանկարները մանրա-
նկարել էին տալիս փղոսկրի վրա: Պոլսի Արվեստի թանգարանում կան
նրանց մանրանկարները՝ ստորագրված Մանաս և Սեպուհ Մանաս¹¹:
Սեպուհ Մանասը այդ սուլթանների մանրանկարիչն էր: Նա վարել է մի
շարք դիվանագիտական պաշտոններ, 1854 թ. եղել է Փարիզում Օս-
մանյան դեսպանատան առաջին քարտուղար¹²: Նա Արդուլ Մեջիթի
մանրանկարի համար արժանացել է շքանշանի և դրամական պար-
զկի¹³:

Գասպար Մանասը նույնպես նկարիչ է եղել, 31 տարի վարել է
Վիեննայում թուրքական դեսպանատան առաջին քարտուղարի պաշ-
տոնը: Նրանց կրտսեր եղբայրը՝ Ալեքսանդրը, որը վախճանվել է երի-
տասարդ հասակում, օժտված է եղել գեղարվեստական ծիրքով, Վիեն-
նայում ստացել է Նկարչական Ակադեմիայի վկայագիր: Ժողովի Մանա-
սը դիմանկարիչ էր, նկարել է բազմաթիվ դիմանկարներ, այդ թվում
Գերմանիայի կայսրուհի Օգյուստա Վիկտորիայի մանրանկարը և սուլ-
թան Արդուլ Ազիզի դիմանկարը¹⁴:

Արքունի ճարտարապետ Պալյանների մոտ 1880-ական թթ. աշ-
խատել է Պետրոս Սրապյանը, որը հայտնի է եղել «Մըսյե Պիեռ» անու-
նով: Նա զարդանկարել է կայսերական և իշխանական պալատները:
Պ. Արապյանի արվեստով զմայլված Աուլթան Ազիզը նրան անվանել է

⁹ Ընդարձակ տարեցույց Ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1933, էջ 56:

¹⁰ Ասագյան Ա., Դայերու գեղարվեստական գործունեությունը Իկոնիո և Պոլսոս
սուլթաններու օրով, «Անահիտ», Փարիզ, 1933, հուլիս-սետեմբեր, էջ 34:

¹¹ Նույն տեղում:

¹² Ընդարձակ տարեցույց, 1933, էջ 56:

¹³ Նույն տեղում, էջ 57:

¹⁴ Նույն տեղում:

«Քյուչուկ Այվազովսկի»: Նա զարդանկարել է Բերայի նոր թատրոնը, Գերմանիայի գահազուրկ Վիլիելմ կայսրին հատկացված Յըլդզյան հարկաբաժինը և այլն, նաև նկարչություն և գծագրություն է դասավանդել Պոլսի տարբեր դպրոցներում¹⁵: Պ. Սրապյանի բազմաթիվ աշակերտներից է եղել Տիրան Չիրաքյանը, որը դեռևս դպրոցական տարիներից մեծ սեր է ունեցել նկարչության հանդեպ և ունեցել է արտակարգ ընդունակություններ: Երբ Յ. Այվազովսկին այցելել է Պոլիս, Տիրանը վարպետին ներկայացրել է իր ջրաներկ ծովանկարները: Մեծանուն նկարիչը տարակուսել է, նա չի հավատացել, որ այդ ինքնատիպ քննապատկերները հորինված լինեն մի պատանու կողմից¹⁶:

Պոլսահայ նկարիչներից նաև Սկրտիչ Ճիվանյանը, որն իր նկարչական գործունեությունն սկսել է թատրոնից, որտեղ ձեռք է բերել թատերական նկարչության տեխնիկան: 1860-1870-ական թթ. Պալյան ճարտարապետները Բոսֆորի ափին կառուցում էին սուլթանական մեծ պալատներ՝ Բեյլերբեյը և Ջրաղանը: Ս. Ճիվանյանն այնտեղ աշխատել է որպես որմնանկարիչ: Այնուհետև Յ. Վարդույանի «Օսմանյան թատրոնում» կատարել է նկարչական ձևավորումներ, զարդանկարել է վարազույները: Ադուլֆ Տալլասսոն իր «Օսմանյան արվեստը - Թուրքիայի նկարիչները» գրքում Ս. Ճիվանյանի մասին գրում է. «Բոլոր իր նկարները բովանդակում են ծվեցներ Ատամբուլի երկնքից: Նրանց երանգների խրախճանքը՝ երևույթով խիստ ներդաշնակ՝ արդեն կանխատեսել են տալիս այն մոզականությունն, որ հետագայում հատկանիշը պիտի լինի թուրք նկարչական դպրոցին»¹⁷: 1882 թ. Բերայում բրիտանական դեսպանի հովանավորությամբ կազմակերպված ցուցահանդեսում Ս. Ճիվանյանը ներկայացրել է 4 նկար¹⁸:

Հայտնի են նաև ապուլչեխցի նկարիչներ Պետրոս Փափազյանը և Ումետ Հովհաննես Բեհզադը: Վերջինիս սուլթան Մեջիթը և սուլթան Ազիզը նշանակել էին պալատական նկարչապետ¹⁹: Բեհզադը զբաղ-

¹⁵ Թեոդիկ, Մըսյու Բիեռ, Ամենուն տարեցույց, 1928, էջ 533:

¹⁶ Թեոդիկ, Արտատվոր դեմք մը, Ամենուն տարեցույց, 1916-1922, էջ 86:

¹⁷ Շիշմանյան Ռ., Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 246:

¹⁸ Նույն տեղում, էջ 243:

¹⁹ Ազատյան Թ., Ակն և ակնցիք, Ստամբուլ, 1943, էջ 98-99:

վել է նաև մանկավարժությամբ, եղել է Թուրքիայի ծովային դպրոցի պրոֆեսոր: Նրա գործերից են՝ «Թուրքիայի առաջընթացը», «Խաչից իջեցում», «Խորհրդավոր ընթրիք», «Նիսիացարայի ջրվեժը»²⁰:

Ուշադրության են արժանի նաև Աբրահամ Սաքայանը, Սիմոն Հակոբյանը, Վիչեն Արսլանյանը, Դ'աբրո (Աբրոյան) Ասլանը, Կարապետ Շառլ Ադամյանը, Աերովբե Շիշեջյանը, Սիփոն Պեզիրճյանը: Վերջինս իր վարպետությունը կատարելագործել է մանրանկարչության մեջ: Դեռևս երիտասարդ տարիքում նրան հանձնարարում են զարդարել Իզմիտի պալատը, և նշանակում կայսերական պալատի դեկորատոր: Ջարդանկարել է Քյարհանեյի, սուլթան Ազիզի, Ջրաղանի և այլ պալատներ²¹:

Աբրահամ Սաքայանը նկարչական տաղանդը կատարելագործելու նպատակով Պոլսից մեկնել է Փարիզ: Վերադառնալով Թուրքիա, Սկյուտարում աշակերտել է Հովհաննես Բեհզադին, որին գերազանցել է իր արվեստով, հիմնականում նկարել է դիմանկարներ²²:

Սիմոն Հակոբյանը ապրել է Բերայում, ավարտել է Պոլսի Գեղարվեստի վարժարանը, որտեղ սովորել է Տեյեմաք Էքսերճյանի մոտ: Մասնակցել է Պոլսում կազմակերպված բոլոր ցուցահանդեսներին, զբաղվել է նաև մանկավարժությամբ: Նա նկարչություն և գծագրություն է դասավանդել շատ դպրոցներում և տվել մասնավոր դասեր իշխանագույններին: Նրա հայտնի նկարներից են «Թուրքական հին փողոցի տեսարանը», «Թուրք աղքատը», «Սուլթան Ազիզ» և այլն: Արժանացել է բազմաթիվ մրցանակների²³:

Վիչեն Արսլանյանը նույնպես սովորել է Պոլսի Գեղարվեստի վարժարանում, ցուցահանդեսներին մասնակցել է 1882-ից: Նրա գործերից են «Մերկ արաբը», «Ռիսթամ փաշայի մզկիթի դուռը», «Անկյուն Այա-Առֆիայից» և այլն²⁴:

²⁰ Avedissian O., Peintres et sculpteurs Arméniens. Du 19eme siecle à nos jours precedé d'un aperçu sur l'art ancien. Le Caire, 1959, p. 398.

²¹ Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1912, էջ 285:

²² Նույն տեղում, էջ 241:

²³ Avedissian O., նշվ. աշխ., էջ 401:

²⁴ Նույն տեղում:

Դ'արրո (Արրոյան) Ասլանը բնանկարիչ էր, բազմիցս արժանացել է մեդալների, 1879 թ. ընտրվել է Գեղարվեստի վարժարանի պատվավոր պրոֆեսոր, նշանակվել է Արվեստի թանգարանի վարչության նախագահ²⁵:

Կարապետ Շառլ Աղամյանը սովորել է Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում, որն ավարտելուց հետո տեղափոխվել է Պոլիս, եղել է պալատական նկարիչ, մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների²⁶:

Սերովբե Շիշեջյանը աշակերտել է հայտնի վարպետ-նկարիչների՝ Սրապյանին և Էքսերճյանին: 1872 թ. գրադվել է թատերական նկարչությամբ, աշխատել է Թուրքիայի գրեթե բոլոր թատրոններում՝ ստեղծելով վարագույրներ, դեկորացիաներ և գեղարվեստական այլ աշխատանքներ²⁷:

Անվանի մանրանկարիչ էր Ստեփան Ակայանը, որը թուրք կառավարության կողմից արժանացել է ոսկե մեդալի՝ իրեն պատվիրված մի զինանշանի ստեղծման համար²⁸: Նա թուրք կառավարության կողմից ստացել է «Արվեստի ոսկե շքանշան»՝ «Սերվեթ» և «Սայլումաթ» թերթերում երկար տարիներ նկարչական ծառայության համար²⁹: Ս. Ակայանը Պոլսի գեղարվեստի վարժարանում ուսուցնասիրել է մանրանկարչություն, երկար տարիներ ծառայել է արքունիքում՝ պատրաստելով ձեռագիր գեղազարդ ֆերմաններ և կոնդակներ³⁰:

Թուրքիայում XIX դ. եղել են բազմաթիվ հայ նկարիչներ, որոնք նույնպես արժանացել են բարձրագույն պարգևների, օրինակ՝ նկարիչ Իշլենճյանը ստացել է «Գեղարվեստից շքանշան» ի նշան իր բեղուն արվեստագիտական գործունեության³¹: Չավուշյանը, որը դասավանդել է կայսերական գեղարվեստի վարժարանում, պարգևատրվել է երրորդ կարգի «Մեջիթի շքանշանով»³²:

²⁵ Դզնունի Դ., Հայ կերպարվեստագետների բառարան, Երևան, 1977, էջ 143:

²⁶ Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1912, էջ 239:

²⁷ Դավթյան Ա., Սերովբե Շիշեջյան, «Լույս», Պոլիս, 1908, թիվ 25, 14 հունիսի, էջ 831:

²⁸ Տեր-Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 152:

²⁹ «Բյուզանդիոն», Պոլիս, 1901, հունվարի 9:

³⁰ Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 59:

³¹ «Բյուզանդիոն», Պոլիս, 1901, օգոստոսի 17:

³² «Բյուզանդիոն», Պոլիս, 1902, սեպտեմբերի 2:

XIX դ. երկրորդ կեսում Թուրքիայում զարգացում ապրեց նաև լուսանկարչական արվեստը: Այդ արվեստով զբաղվում էին Աբդուլլահ եղբայրները: Գևորգ Աբդուլլահը սկզբում սովորել է Օրթաքյոյում, հետո Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում, վերադարձել է Պոլիս և 1858-1898 թթ. իր եղբայրների Վիզենի և Յովսեփի հետ զբաղվել է լուսանկարչությամբ³³:

Քանդակագործության ստեղծման և զարգացման գործում մեծագույն դեր է կատարել հայ արվեստագետ Երվանդ Ոսկանը: Նա առաջին քանդակագործ-մանկավարժն էր, որ Թուրքիայում հիմք դրեց գեղարվեստական հաստատությունների ստեղծմանը (Պոլսի Գեղարվեստի ուսումնարանը ստեղծվեց որպես բարձրագույն ուսումնական հաստատություն), նա եղել է այդ բնագավառի առաջին պրոֆեսորը: 1881 թ. Պոլսում և 1882 թ. Բերայում բացված ցուցահանդեսներին Երվանդ Ոսկանը արժանացել է «Մեծագույն արձանագործ» կոչմանը³⁴: Երվանդ Ոսկանը հավասարապես զբաղվել և՛ քանդակագործությամբ, և՛ նկարչությամբ: 1901 թ. Պոլսում գեղարվեստական ցուցահանդեսում նա ներկայացրել է մարմարյա 6 քանդակ և գեղանկարչական 3 աշխատանք, 1902 թ. Բեյոզլու թաղամասում՝ 3 գեղանկարչական և 2 քանդակագործական աշխատանք: Քանդակագործությունից և նկարչությունից բացի, Երվանդ Ոսկանը զբաղվել է հնագիտությամբ: Ստամբուլն ունի 20-ից ավելի թանգարան, ամենամեծը և ամենահինը Յնագիտական թանգարանն է, որի հիմնադիրներից է Երվանդ Ոսկանը: Այդ թանգարանի բացումը տեղի է ունեցել 1881 թ., որտեղ կենտրոնացվել է Յին Արևելքի, հունական, հռոմեական և բյուզանդական մշակույթի հուշարձաններ: Դրանց վերանորոգումը, ինչպես նշել է նկարիչ և հնագետ Յամդի բեյը 1890 թ., կատարել է գեղարվեստի վարժարանի դասախոս, քանդակագործ Ոսկանը: Նա նշել է, որ այդ արձանների կոտրված բեկորների ամբողջացումը Ոսկանի աշխատանքի արդյունքն է³⁵:

³³ «Բազմավեպ», Պոլիս, 1866, էջ 55-57, Թեոդիկ, Ամենուն տարեցույց, Պոլիս, 1912, էջ 255:

³⁴ Ղազարյան Ս., Երվանդ Ոսկան, ՊԲՅ, 1982, N 4/99/, էջ 106:

³⁵ Գունտուրաքյան Ղ., Ինչպես հիմնվեց օսմանյան հնությանց մյուսեն և գեղարվեստի վարժարանը, «Ժամանակ», Պոլիս, 1909, N 280:

երվանդ Ռսկանի բազմաթիվ աշակերտներից է եղել Օգոսյ Մահմեդ Իհսանին, որը հետագայում սովորել է Փարիզի գեղարվեստի ակադեմիայում, վերադարձել է Պոլիս 1895 թ., դասավանդել է գեղարվեստի ուսումնարանում և Ռսկանից հետո Թուրքիայում դարձել է երկրորդ քանդակագործը: Նա օգնել է ապագա անվանի քանդակագործ Արա Աարզայանին՝ ընդունվելու Գեղարվեստի ուսումնարան, ասելով՝ «Ուզում եմ հարգած լինել իմ ուսուցչի՝ Ռսկան էֆենդու հիշատակը և նրա ժողովրդին շնորհակալությամբ վերադարձնել այն, ինչ նա ինքն է ինձ տվել»³⁶: Քանդակագործությանը զուգընթաց զարգանում էր նաև փորագրության և քանդականախշության արվեստները: Պալատների, ապարանքների շինարարության մեջ այն ունեցել է մեծ կիրառում: Քանդակագործ-խեցեգործ էր Ավետիս Ամպարաջյանը, որը Պոլսում երկար տարիներ պաշտոնավարել է կայսերական պալատի քանդակագործական արվեստանոցում, մասնագիտացել է նաև հախճապակու արվեստի մեջ³⁷: Գեղարվեստի վարժարանի ուսանողներ Օննիկ Պջազյանը, Արմենակ Քուլանջյանը, Արթին Ազատյանը, փորագրության արվեստում ունեցած իրենց հաջողությունների համար արժանացել են տարբեր մրցանակների³⁸:

Քանդականախշության արվեստի ներկայացուցիչներից էր Սկրտիչ Գալֆայանը, որը ծառայել էր սուլթան Մահմուդի մոտ և մեծ հռչակ ուներ: Նա քանդականախշության արվեստը սովորել էր հորից և դեռևս 12 տարեկան հասակում նրան անվանել են «վարպետ»³⁹: Նրա պատրաստած գլուխգործոցը մի սիգարետի տուփ էր՝ արծաթ և ոսկի դրվագներով, մի կողմից արևելյան քանդակներով Օսմանյան զինանշան է, մյուս կողմից՝ մանրացույցով տեսանելի պոլսական տեսարաններ՝ ըստ Աբդուլահ եղբայրների լուսանկարների: Սկրտիչ Գալֆայանը այդ տուփը նվիրել էր սուլթան Համիդին, արժանացել բարձր զնահատականի, պարգևատրվել շքանշանով և պատվոնշանով⁴⁰:

³⁶ Հարությունյան Վ., Արա Արազյան, Երևան, 1975, էջ 13:

³⁷ Դզնունի Դ., նշվ. աշխ., էջ 39:

³⁸ «Հայրենիք», Պոլիս, 1894, հոկտեմբերի 10:

³⁹ Ալպոյանյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ.Բ, Կահիրե, 1937, էջ 1541-42:

⁴⁰ Նույն տեղում, էջ 1543:

Հայ նկարիչների և քանդակագործների գործունեությունը արժեքավորվում է նաև նրանով, որ նրանք հարստացրեցին ոչ միայն հայկական արվեստը, այլև նպաստեցին ամբողջ բազմազգ Օսմանյան կայսրության, այդ թվում՝ թուրքական գեղարվեստական կյանքի զարգացմանը:

*НАИРА ГИНОСЯН
ИИ НАН РА*

**АРМЯНСКИЕ ХУДОЖНИКИ И СКУЛЬПТОРЫ В
ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (ВТОРАЯ ПОЛОВИНА
XIX - НАЧАЛО XX ВВ.)**

РЕЗЮМЕ

Роль армян в экономической и культурной жизни Османской империи всегда была очень велика. В статье показывается та неопенимая роль армянских художников и скульпторов, которую они сыграли в развитии этих отраслей.

На протяжении десятилетий вместе с придворными армянскими архитекторами, врачами, ювелирами, музыкантами служили династии армянских художников. Армяне способствовали развитию таких отраслей, как гравюра, скульптура, скульптурный декор. Армянские художники и скульпторы были удостоены высокого признания, вознаграждены различными медалями и орденами.

ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱԽԱԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(1918 թ. ՀՈՒՆԻՍ - ՀՈՒՆԻՍ)

1918 թ. մայիսին հայ ժողովուրդը վերականգնեց հարյուրամյակներ առաջ կորցրած անկախ պետականությունը. ստեղծվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը:

Հայոց նորանկախ պետությունը գտնվում էր չափազանց ծանր կացության մեջ: Ընդամենը 11-12 հազար քառ. կմ տարածք ունեցող երկիրը զրկված էր բերրի հողերից, շրջապատված էր ռիսերիմ թշնամիներով, զուրկ էր արտաքին աշխարհի հետ կանոնավոր հաղորդակցության ճանապարհներից, իր ներսում ուներ մոտ 400 հազար անօթևան և ապրուստի տարրական միջոցներից զուրկ հայ փախստականներ: Ջգացվում էր բնակարանների, պարենամթերքի և դեղորայքի սուր պակաս, գլուխ էին բարձրացնում համաճարակային հիվանդությունները՝ օրական խլելով տասնյակ կյանքեր և այլն: Ստեղծված ծանրագույն իրավիճակը թելադրում էր անհապաղ ստեղծել Հայաստանի պետական իշխանություն և տեր կանգնել երկրի ու ժողովրդի ճակատագրին:

Ե՛հիշտ է, 1918թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային խորհուրդը իրեն հռչակել էր Անդրկովկասի հայկական գավառների, այսինքն՝ նորանկախ Հայաստանի գերագույն իշխանություն և նրա քաղաքական ու վարչական ղեկը վարելու համար ստանձնել կառավարական բոլոր գործառնությունները¹, սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետևանքով թե՛ նրա և թե՛ նրա հանձնարարությամբ Հովհաննես Քաջազունու կողմից ձևավորվող ՀՀ կառավարության ժամանումը երևան մոտ երկու ամիս ձգձգվեց:

Այսպիսի պայմաններում՝ 1917թ. դեկտեմբերից ի վեր Արևելյան Հայաստանի նշանակալի մասը զբաղեցնող երևանի նահանգի դե-

¹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Պատ. խմբագիրներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Ե., 2000, էջ 18 :

կավար, Սարգարապատի և Բաշ-Ապարանի հերոսամարտերի կազմակերպիչ Արամ Մանուկյանի (1879-1919) նախաձեռնությամբ 1918 թ. հունիսի կեսերին ստեղծվեց նորանկախ Հայաստանի ժամանակավոր կառավարություն՝ Երևանի Ազգային խորհրդի Վարչությունը, որը պետք է գործեր մինչև ՀՀ անդրանիկ կառավարության Երևան ժամանելը²: Նրան պետք է ենթարկվեին երկրի պետական և հասարակական բոլոր հիմնարկությունները: Փաստորեն ծնունդ տրվեց Հայաստանի պետական իշխանության առաջին բարձրագույն գործադիր կառույցին, որն առանց չափազանցնելու կարելի է անվանել նորանկախ հանրապետության նախակառավարություն:

Երևանի Հայոց Ազգային խորհրդի Վարչության նախագահը և զինվորական բաժնի վարիչը Արամ Մանուկյանն էր³: Հայաստանի Առաջին Հանրապետության պետական գործիչներից Ա. Բաբայանը նրա առաջին օրերի մասին գրելիս նկատել է. «Արամն էր, որ փաստօրէն կառավարում էր երկիրը: Իբրև լիազօր Ազգային խորհրդի, նա կազմակերպել էր վարչութիւնները եւ սպասում էր նորընտիր կառավարութեան եւ Ազգային խորհրդի Երեւան տեղափոխուելուն»⁴:

Վարչության ձևավորման ընթացքում մեկ անգամ ևս ընդգծվեց Արամի ուրույն դերն այդ բախտորոշ ժամանակաշրջանում: Ստանձնելով Վարչության նախագահի պաշտոնը Արամը սկզբնապես հրաժարվեց իրեն առաջարկվող զինվորական վարիչի պաշտոնից հօգուտ զինվորական գործիչ՝ դա պատճառաբանելով մի կողմից զբաղվածությամբ, մյուս կողմից՝ զինվորականության զգացմունքներին չդիպելու և դժգոհությունների տեղիք չտալու ցանկությամբ: Նրա առաջարկությունը մերժվեց, իսկ կանխատեսումն արդարացավ: Այդ իսկ պատճառով Արամն առաջարկեց այդ պաշտոնը հանձնել գոր. Աիլիկյանին: Վերջինս այդ կապակցությամբ տվեց հետևյալ պատասխանը. «Դժգոհները չեն ճանաչում Արամին: Երբ ճանաչեն կը համոզուեն, որ ներկայումս նա

² «Լրատու» Երևանի Հայոց Ազգային խորհրդի, Ե., 1918, հուլիսի 9, N 2, հուլիսի 23, N 6:

³ Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Ե., 2005, էջ 211:

⁴ Բաբայան Ա., Էջեր՝ Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 8:

միակ կարող մարդն է այդ պաշտօնի համար: Ես ինչու՞ եմ հրա-
ժարում. որովհետեւ մէկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու:
Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու ոչ մի կարելոր քայլ չեմ
անում, իսկ վարիչի պաշտօնը յանձն առնելու պարագային, գրասե-
նեակս տեղափոխելու եմ նրա մօտ: Ո՛չ մի զինուորական վերարկու ոչ
ոքի չի տայ այն, ինչ որ ունի Արամը: Նրանից յարմար վարիչ մեզ հա-
մար չէք գտնի»⁵: Այս խոսքերն անչափ կարևոր են, որովհետև պատ-
կանում են մի ջերմ հայրենասերի, որի գլխավորությամբ մշակվեց և
իրականացվեց Սարդարապատի հաղթական օպերացիան:

Վարչությունն ուներ զինվորական, ներքին գործերի, պարենա-
վորման, ֆինանսների և այլ բաժիններ: Նրանց ձևավորման ժամանակ
հերթական անգամ Արամը դրսևորեց ապակուսակցական մոտեցում:
Լինելով ԳՅ Դաշնակցության ղեկավար գործիչներից՝ նա գործի մեջ
ներգրավեց բոլոր կարող ուժերին՝ անկախ կուսակցական պատկա-
նելիությունից: Վարչության մեջ ընդգրկվեցին հասարակության մեջ
մեծ հեղինակություն վայելող Մ. Մուսիճյանը, Գ. Մելիքյանը, նախկի-
նում Երևանի նահանգային կոմիսար Սահակ Թորոսյանը և ուրիշներ:
Մասնավորապես, Երևանի Գայոց Ազգային խորհրդի 1918 թ. հունիսի
16-ի որոշմամբ Ա. Թորոսյանը նշանակվեց ներքին գործերի բաժնի վա-
րիչ⁶:

Պետք է ասել, որ Արամը հաջողությամբ և յուրահատուկ ձևով,
առանց ընդունված օրենքների մեխանիկական կիրառման, մղում տվեց
Երևանի Վարչության աշխատանքներին: Նրա գլխավորությամբ Երևա-
նի Վարչությունը ձեռնամուխ եղավ ռազմական, վարչական, սոցիալ-
տնտեսական և այլ հրատապ խնդիրների լուծմանը:

Բնականաբար, Վարչության առաջնակարգ խնդիրը երկիրը
թուրքական ոտնձգություններից պաշտպանելն էր: Երևանում քաջ զի-
տակցում էին, որ քաղաքից յոթ կմ հեռու կանգնած թուրքերը ցանկա-
ցած պահի կարող էին խախտել Բաթումի պայմանագիրը և անցնել
հարձակման: Պեռևս հունիսի 5-ին Երևանի Գայոց Ազգային խորհուրդը

⁵ «Արամը», Սահուան յիսնամեակին առթիւ, Ե., 1991, էջ 125:

⁶ Գայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ԳԱԱ), ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 5:

վճռել էր «ձեռնարկել ժողովրդի ռազմական ուժերի կազմակերպման ապագա անակնկալների դեմ...»⁷: Հուլիսի սկզբներին Ազգային խորհուրդը 19-32 տարեկան տղամարդկանց հրահանգում էր մտնել զորքի շարքերը, առավել տարիքավորներին՝ կազմել կամավորական խմբեր ու ներկայանալ հրամանատարությանը, իսկ նրանց ուլքեր անկարող էին կռվել՝ հրահանգում էր իրենց զենք-զինամթերքը և զինվորական հանդերձանքը հանձնել զինվորական իշխանությանը: Երևանյան դիվիզիայի հրամանատար գեմ. Մ. Սիլիկյանը ժողովրդին հորդորում էր մի փոքր էլ տոկալ դժվարություններին, պատրաստ լինել պաշտպանելու հայրենիքը՝ ավելացնելով, որ խաղաղ կյանքի անցնելն ամբողջովին կախված է հայկական զորքի մարտունակությունից⁸: Ռազմական - գործի կազմակերպմանն Արամն ունեցավ այնքան կարևոր մասնակցություն, որ տասնամյակներ անց Ռուբեն Տեր-Աինասյանը, տալով ՀՀ զինվորական նախարարության (1918-1920) գործունեության համեմատական նկարագիրը և այդ համապատկերում անդրադառնալով Արամի զինվորական ձեռնարկներին, նկատել է, որ նրա կողմից «կիրառուած ժողովրդական-զինուորական ձեւերի շնորհիւ, առանց նիւթական եւ դրամական միջոցների, մի պատկառելի զինուորական ոյժ էր կազմակերպուած թուրքերի դիմաց, որից կ'ակնածէին նոքա»⁹:

Ռազմական պատրաստություններին զուգընթաց Երևանի Հայոց Ազգային խորհուրդը և նրա Վարչությունը բանակցություններ էին վարում թուրքերի հետ՝ փորձելով հասնել նրանց կողմից Բաթումում ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև Անդրկովկասյան մյուս հանրապետությունների հետ Հայաստանի սահմանների ճշգրտմանը: Ա. Մանուկյանը զեմ. Նազարբեկյանի և զնդապետ Բաղդասարյանի հետ հունիսի 12-ին Դիլիջանում արտահայտվեց այն բանի օգտին, որ հայկական ուժերը հետ քաշվեն Բաթումի պայմանագրով գծված նոր սահմանագիծ, իսկ թուրքերն իրենց ուժերը հետ քաշեն Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ուղղությամբ:

⁷ «Ձանգ», Ե., 1918, հունիսի 7, N 40:

⁸ «Լրատու» Երևանի Հայոց Ազգային խորհրդի, Ե., 1918, հուլիսի 12, N 3, «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հուլիսի 14:

⁹ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Ե., 1990, էջ 330-331:

յուններում¹⁰: Հունիսի 17-ին Վեհիբ փաշան զոր. Նազարբեկյանին առաջարկեց մինչև հայ-վրացական սահմանի որոշումը թուրքական զորքերը թողնել Ալեքսանդրապոլ-Սադախլու երկաթգծի ուղղությամբ: Արամը դեմ արտահայտվեց այդ մտքին՝ գտնելով, որ թուրքերին հարկավոր է հեռացնել Ղարաբեիլիսայի գծից և Վրաստանի հետ սահմանը պահպանել հայկական զորքերով¹¹: Թշնամու ճնշման տակ հայկական զորամասերը Սարդարապատի ճակատում հուլիսի սկզբներին նահանջեցին՝ նոր սահմանագիծ, իսկ թուրքական զորքերի հեռացման հարցը մնաց առկախ մինչև 1918 թ. աշուն, երբ Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան պարտադրված իր ուժերը հեռացրեց Կովկասից: Այդ բանակցությունների ընթացքում հայերի համար բացահայտվում էին տիաճ, բայց կարևոր իրողություններ: Այսպես, Վեհիբ փաշայի հետ Մ. Սուսինյանի հունիսի 24-ի հանդիպումից պարզվել էր, որ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանագծման հարցը բարդացել էր: Այս անգամ բարդացել էր ոչ թե Թուրքիայի, այլ Վրաստանի մեղքով, որը, ապահովելով Գերմանիայի հովանավորությունը, փորձում էր տիրանալ Հայաստանի և Ադրբեջանի այնպիսի տարածքների, որոնք անգամ մի վրացի բնակիչ չունեին¹²:

Վարչության կարևոր խնդիրներից էր երկրի վարչական ապարատի, միլիցիայի և պետական մյուս հաստատությունների ամրապնդումը: 1918 թ. հուլիսի 20-ին Երևանի և Թիֆլիսի Ազգային խորհուրդների համատեղ նիստում Արամի ունեցած ելույթից¹³ և արխիվային նյութերի ուսումնասիրությունից¹⁴ երևում է, որ Վարչությունը այդ ուղղությամբ ևս կատարել էր որոշակի քայլեր: Վարչության ՆԳ բաժնի վարիչի 1918 թ. հունիսի 20-ի գրությունից տեղեկանում ենք, որ Հայաստանի տարածքում գտնվող բոլոր փոստ-հեռագրական հաստատությունները, ինչպես նաև ժողովրդական կրթության հաստատությունները անցնում էին ՆԳ բաժնի ենթակայության տակ¹⁵: ՆԳ բաժնի

¹⁰ ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 175, թ. 34:

¹¹ Նույն տեղում, գ. 98, թ. 25:

¹² Նույն տեղում, ֆ. 289, ց. 1, գ. 13, թ. 1-2:

¹³ «Լրատու» Երևանի Հայոց Ազգային խորհրդի, 1918, հուլիսի 23, N 6:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 7, թ. 1; ց. 2, գ. 2, թ. 2:

¹⁵ Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 1, թ. 3:

վարիչի 1918 թ. հուլիսի 9-ի հրամանով նախկին Նահանգային կոմիսարիատի գրասենյակի փոխարեն ստեղծվեց ՆԳ բաժնի վարիչի գրասենյակ և կատարվեցին համապատասխան նշանակումներ¹⁶: ՆԳ բաժնի վարիչին կից հիմնվեց վարչակազմի և միլիցիայի գծով օգնականի հաստիք: Այդ հաստիքում նշանակվեց Կ. Առաքելովը:

Այդ ծանր ժամանակներում պետական հաստատությունների գործունեությունը կանոնավորելուն, պետական սուղ միջոցների ավելորդ վատնում չլույլատրելուն էր ուղղված Երևանի Ազգային խորհրդի 1918 թ. հունիսյան որոշումներից մեկը: Ազգային խորհրդի ֆինանսական բաժնի վարիչ Կարապետ Կամսարականի ներկայացմամբ ընդունված այդ որոշմամբ լուծարվում էին թուրքիային անցած տարածքների պետական հաստատությունները, իսկ նրանց աշխատակիցները ազատվում աշխատանքից: Սակայն որոշումը պարունակում էր մի կարևոր կետ. նրանք, ովքեր որևէ աշխատանք էին կատարում ոչ իրենց շրջանում, բայց Հայաստանի տարածքում, նաև իրենց աշխատավայրեր տեղափոխվել չկարողացածները հուլիսի 1-ից ստանալու էին վեցամսյա վարձատրություն: Իրենց մեղքով աշխատանքի չներկայացածները հեռացվելու էին աշխատանքի¹⁷:

Իրականացվում էին քայլեր նորանկախ երկրի ճակատագրի և իրենց զբաղեցրած դիրքի նկատմամբ պաշտոնյաների պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ: Սասնավորապես, Ներքին գործերի բաժնի վարիչ Ս. Թորոսյանը Երևանի գավառի Ղամարլուի տեղամասի կոմիսար Գ. Ասդոյանցին աշխատանքից ազատել էր այն բանի համար, որ նա 1918 թ. հունիսին Ղամարլուի շրջանի էվակուացիայի ժամանակ առաջինն էր լքել շրջանը, որի պատճառով գրասենյակը կողոպտվել էր¹⁸:

Երևանյան կառավարությունը քայլեր էր ձեռնարկում տարաբնույթ օրինախախտումների առաջն առնելու ուղղությամբ: ՆԳ բաժնի վարիչ Ս. Թորոսյանը տեղեկանալով, որ Նոր Բայազետի գավառի գյուղերը չեն ճանաչում Երևանի Ազգային խորհրդի իշխանությունը, գոր-

¹⁶ Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 2, թ. 2:

¹⁷ Նույն տեղում, ֆ. 203, ց. 1, գ. 12, թ. 11:

¹⁸ Նույն տեղում, ֆ. 201, ց. 2, գ. 1, թ. 1, 2:

քին չեն տրամադրում պարենամթերք, թաքցնում են դասալիքներին, հունիսի 22-ին գավառային կոմիսարին կարգադրեց ձեռնարկել քայլեր այդ կացությանը վերջ տալու ուղղությամբ և բնակչությանը տեղեկացնել, որ նահանգային Ազգային խորհուրդը համարվում է նահանգի բարձրագույն իշխանությունը, որին բոլորը պարտավոր են ենթարկվել¹⁹: Ա. Թորոսյանը գավառային կոմիսարին խորհուրդ էր տալիս անհրաժեշտության դեպքում դիմել տեղի զորքերի օգնությանը: Հունիսի 23-ին Ա. Թորոսյանը երևանի պարետ Ա. Շահխաթունուն «խնդրում» էր վերջ տալ Նորքում փախստականների կողմից կարգ ու կանոնի խախտմանը և բնակչության թալանին²⁰: Հուլիսի 2-ին Ա. Թորոսյանը երևանի գավառային կոմիսարին հանձնարարում էր ձեռնարկել միջոցներ, որպեսզի Քանաքեռ գյուղի բնակիչները չնեղեն փախստականներին: Ասհմանվում էր հաստատագրված ամսական վարձ փախստականների կողմից օգտագործվող սենյակների դիմաց, նաև նրանց անասունները արոտավայրերում արածեցնելու կարգ²¹:

Երկրի համար այդ ծանր օրերին իրենց չարագործություններն էին շարունակում թաթարները: Այսպես, հունիսի 29-ին շուրջ 150 թաթարներ հարձակվել էին Աշտարակի շրջանի եզդիների վրա և սպանել նրանցից 40-ին, իսկ 30-ին էլ վիրավորել և այլն²²:

Տեղի էին ունենում բախումներ նաև եզդիների միջև: Հունիսին նրանց միջև խոշոր ընդհարում էր եղել Ապարանի շրջանում: Ներքեղային այդ բախումը կարգավորելու համար երևանի իշխանությունները ի դեմս ՆԳ բաժնի վարիչի նպատակահարմար գտան ոչ թե ուղղակիորեն միջամտել, որը իշխանություններից լրացուցիչ ուժեր կպահանջեր, իսկ գուցեև հայ-եզդիական ազգամիջյան հարաբերությունների սրման տեղիք տար, այլ օգտագործել նրանց առաջնորդ Ջհանգիր-աղայի հեղինակությունը: Հունիսի 26-ին վերջինին հանձնարարվեց գնալ Ապարան և վերջ տալ անկարգություններին²³:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 4:

²⁰ Նույն տեղում, թ. 11:

²¹ Նույն տեղում, գ. 15, թ. 27:

²² Նույն տեղում, թ. 9:

²³ Նույն տեղում, թ. 12:

Ընթռնելով լրատվության կարևորությունն այդ բարդ և խառնակ ժամանակաշրջանում՝ Վարչությունը հունիսի 23-ին որոշեց հիմնել սեփական թերթ, որը ստացավ «Երևանի Ազգային խորհրդի լրատու» անունը²⁴: Արագ և ստույգ լրատվություն ապահովելու նպատակով Արամը պետական մարմինների ղեկավարներին խնդրում էր հրապարակման ենթակա տեղեկություններն ամեն օր ուղարկել թերթին: Ավելին, մամուլի գործունեությունը ինքնահոսի չմատնելու նպատակով նույն օրը ստեղծվեց պատերազմական ժամանակի մամուլի վերաբերյալ հրահանգ մշակող չորս հոգանոց հանձնաժողով: Մշակված հրահանգը պետք է ներկայացվեր Երևանի Ազգային խորհրդի քննությանը և հաստատմանը²⁵:

Արամի կառավարությունը որոշակի հսկողություն սահմանեց հրապարակային ելույթների վրա, անշուշտ, ելնելով այն հայեցակետից, որ երկրում իրականացվելիք ձեռնարկների հաջողությունն ամենից առաջ պայմանավորված էր հասարակական կայունությամբ: Ոմանք, անտեսելով այն հանգամանքը, որ այդ քայլը թելադրված էր երկրի ճգնաժամային իրավիճակով, իշխանություններին մեղադրում էին խոսքի ազատությունը սահմանավակելու մեջ: Սոցիալ-դեմոկրատ Յ. Ազատյանը Երևանի և Թիֆլիսի Ազգային խորհուրդներին գանգատվում էր, որ ինքը ցանկացել է դասախոսություն կարդալ, սակայն տպարանները մերժել են առանց միլիցիայի պետի թույլտվության տպել ազդագրերը և ավելացնում, որ «դա խօսքի ազատութեան բռնադատումն է, որը պետք է այսօր և եթ վերացվի»: Իրավիճակին խորամուխ Արամն այդ առիթով նշում էր, որ «իւրաքանչիւր դասախօս պարտաւոր է յայտնել միլիցիապետին թէ որտեղ, որ ժամին և ինչի մասին պիտի խօսի»²⁶: Կարծում ենք նրա կեցվածքը տվյալ պահին արդարացված էր, քանզի ավելորդ ժողովրդավարությունը կարող էր վնասել երկրի կայունացմանը:

Երևանի Վարչության առաջ ծառայած դժվարին խնդիրներից հաջորդը պարենային ճգնաժամի մեղմումն էր: Այդ նպատակով Ազգա-

²⁴ Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 7, թ. 5:

²⁵ Նույն տեղում, գ. 6, թ. 9:

²⁶ «Լրատու» Երևանի Հայոց Ազգային խորհրդի, 1918, հուլիսի 23, N 6:

յին խորհուրդը 1918 թ. հուլիսի 9-ին երկրում սահմանեց հացի պետական մոնոպոլիա՝ հսկողության տակ վերցնելով հացահատիկի բերքը: Հրապարակված հրահանգ-օրենքը հստակորեն սահմանում էր հացահատիկի հավաքման, հսկողության կարգը, պետականացված բերքի գինը և այլ հանգամանքներ: Օրենքը խախտող ա նձինք և գյուղերը ենթակա էին պատժի²⁷: Գյուղացիների դժգոհությունը մեղմելու նպատակով նրանց էր թողնվում իրենց ընտանիքներին հարկավոր չափաբաժինը, իսկ մնացածը համապատասխան գնով, որից չպետք է տուժեին ո՛չ գյուղացին և ո՛չ էլ քաղաքացին, վերցնում էր պետությունը՝ բնակչության մնացած մասին ու զորքին հատկացնելու համար²⁸:

Ձեռնարկվում էին միջոցներ երկրի տնտեսությունը հսկողության տակ պահելու և ֆինանսական սուղ միջոցները լրացնելու ուղղությամբ: Առևտրականներն ու արդյունաբերողները Ազգային խորհրդի կողմից պարտավորեցվում էին վերցնել գործարքների համար օրենքով սահմանված արտոնագրերը: Օրինախախտների արդյունաբերական և առևտրական գործարքները կնքվելու էին, իսկ ապրանքի մի մասը բռնագրավվելու էր հօգուտ պետական գանձարանի՝ նրան հասցված վնասի դիմաց²⁹:

1918 թ. հուլիսի 19-ին Երևանի Վարչության նախագահ Ա. Մանուկյանը և իշխանության մյուս գործիչները հանդիսավորությամբ դիմավորեցին հայրենիք ժամանող Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային խորհրդին և Հ. Քաջազունու ու զխավորած ՀՀ առաջին կառավարության անդամներին: Հուլիսի 20-ին Երևանի և Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդների համատեղ նիստում Ա. Մանուկյանը հայտնեց իշխանությունը ՀՀ «օրինաւոր կառավարությանը» հանձնելու մասին և իր ու իր գործակիցների անունից պատրաստակամություն հայտնեց աջակցել նրան՝ «երկրում կարգ ու կանոն և տանելի կյանք ստեղծելու գործում»³⁰:

²⁷ Նույն տեղում, հուլիսի 9, N 2, «Հողիզոն», 1918, օգոստոսի 21, N 165:

²⁸ «Լրատու» Երևանի Հայոց Ազգային խորհրդի, 1918, հուլիսի 12, N 3:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, հուլիսի 23, N 6:

Այսպիսով, ի դեմս Երևանի Հայոց Ազգային խորհրդի Վարչության 1918 թ. հունիս-հուլիս ամիսներին նորանկախ Հայաստանն ունեցավ իր նախակառավարությունը: Գործի անցնելով ժայռաստիճան ծանր պայմաններում՝ նա ապահովեց հանրապետության կյանքի տարբեր ոլորտների կենսագործունեությունը, նրա համեմատական կայունությունը և միաժամանակ, որոշակի հիմքեր ստեղծեց պետական շինարարության համար, որին ձեռնամուխ եղավ 1918 թ. հուլիսի 19-ին Երևան ժամանած Հ. Քաջագնունու գլխավորած ՀՀ անդրանիկ կառավարությունը:

АРМЕН АСРЯН
Арм. Гос. Педагогический
Университет

ПРЕДПРАВИТЕЛЬСТВО НЕЗАВИСИМОЙ АРМЕНИИ
(ИЮНЬ-ИЮЛЬ 1918 г.)

РЕЗЮМЕ

В мае 1918 г. армянский народ восстановил свою утраченную государственность: образовалась Первая Республика Армения. Новопровозглашенная республика находилась в очень тяжелом состоянии: она была окружена турецкими завоевателями, почти полностью была отрезана от внешнего мира, не имела запасов продовольствия и медикаментов, в стране накопились сотни тысяч беженцев.

В сложившейся ситуации критической необходимостью была организация государственной власти в Армении. Правда, 30-го мая Тифлисский Армянский Центральный Национальный Совет провозгласил себя верховной властью армянских

провинций Закавказья, а по его поручению начало формироваться первое правительство Республики Армении во главе О. Каджазнуни, но их приезд в Ереван откладывался почти два месяца.

В такой обстановке в Ереване во главе с фактическим руководителем страны Арамом Манукяном создано временное правительство новопровозглашенной республики - Управление Армянского Национального Совета Еревана, который должен был действовать до приезда правительства РА. Управление имело отделы военных, внутренних, продовольственных, финансовых дел. Ему должны были подчиняться все государственные, военные и общественные учреждения страны. Фактически создан первый исполнительный орган новопровозглашенной республики, который можно называть предправительством Армении, поскольку в течении июня и июля 1918 г. она обеспечила жизнедеятельность разных областей страны, дала начало решению военных, административных, социально-экономических неотложных вопросов, обеспечила стабильность в стране, а также создала предпосылки для государственного строительства, к решению которых принялась правительство О. Каджазнуни.

**ЛОНДОНСКИЙ ДОГОВОР 26 АПРЕЛЯ 1915 г. НА
ПАРИЖСКОЙ МИРНОЙ КОНФЕРЕНЦИИ
(апрель - май 1919 г.)**

В годы первой мировой войны Союзники подписали четыре договора о разделе Османской империи. Это Лондонский договор 26 апреля 1915 г., англо-американское "неуловимое соглашение" от 14 февраля 1916 г., соглашение Сайкса-Пико 16 мая 1916 г. и соглашение в Сен-Жан-де-Морьенн 19-21 апреля 1917 г. Первое из них предусматривало вступление Италии в большую войну в обмен на ее приобретения в Малой Азии. П.9 этого документа гласил: "Если Франция, Великобритания и Россия захватят в ходе войны земли в Азиатской Турции, то приграничный с провинцией Адалия средиземноморский район будет оставлен для Италии, которая получит полномочия его занять." Слишком общее описание земель Азиатской Турции привело к двустороннему англо-американскому документу, и заставило выработать более подробное соглашение Сайкса-Пико, которое, при этом, заключили без Италии. И уже по настоянию Рима, систему дополнили трехсторонним соглашением в Сен-Жен-де-Морьенн, причем в этот раз без России. Четвертый документ оставлял для Италии часть провинции Кония, а более северные районы становились

сферой итальянского влияния.¹

Отметим, что в ходе парижских переговоров 1919 г., Великие державы редко обращались к соглашению Сайкса-Пико (может быть, кроме заседания 20 марта), однако они активно использовали Лондонский договор. Это обстоятельство не объяснишь революцией 1917 г., потому что российская сторона подписывала как первый, так и второй тексты. Просто Лондонский текст был абстрактным и позволял свободно кроить новую карту. И второе обстоятельство: в апреле 1917 г. США вступили в большую войну. Помимо "неуловимого соглашения," они были свободны от секретных обязательств, и к окончанию войны В. Вильсон смог навязать партнерам перемирие на основе его "14 пунктов." Американские принципы диктовали свободу торговли, контроль территорий с помощью международной организации, управление народами с их согласия.

¹ Agreement Between France, Russia, Great Britain and Italy, Signed at London, April 26, 1915. Papers Relating to the Foreign Relations of the United States. In 2 vols. Vol.I: 1917, supp.2 The World War. Wash., GPO, 1932, p. 497; "Current History," 1920, March, vol. IX, p.II, p.499; vol.XI, p.500; Documents on British Foreign Policy 1919-1939. Ed.by E.L.Woodward, R.Butler. 1st Series. Lnd., HMSO, 1947, vol.1, p.84-85, vol.IV, p. 241-248 (далее: British Documents); Ключников Ю.В. и Сабаниян А.В. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. II От империалистической войны до снятия блокады с Советской России. М., Наркоминдел, 1926, с.40-43, 84-85; «Հայաստանի ավտոնոմիան» յիվ Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից: Յերեվան, Պետհրատ, 1926, էջ 50-53: О договорах см.: Лазарев М.С. Крушение турецкого господства на Арабском Востоке (1914-1918 гг.). М., Восточная литература, 1960, с.126-137, 191-192; Акопян С.М. Западная Армения в планах империалистических держав. Ереван, АН Арм. ССР, 1967, с.197-222; Hovannisian R.G. The Allies and Armenia, 1915-18. "Journal of Contemporary History." Lnd., 1968, vol.3, N 3, p.145-168; Հայկական հարց: Հանրագիտարան: Երևան, Հայկական հանրագիտարան, 1996, էջ 36-37, 397-398:

Именно под влиянием США, Англия и Франция провозгласили 9 ноября 1918 г., что они обязуются "окончательно освободить столь давно угнетавшиеся турками народы, учредив национальные правительства и администрации, власть которых вытекает из свободного выбора местных народов." Державы "согласились признать такие правительства, как только те будут действительно учреждены." Союзники обещали поддержку, беспристрастие, равную справедливость и много других хороших вещей. Чтобы сгладить имевшиеся противоречия, Ж. Клемансо выехал в декабре 1918 г. в Лондон, где закрепил за собой Сирию и Киликию. Англия ответила, что намерена утвердиться в Мосуле и Палестине.²

Тем не менее, на парижских переговорах В. Вильсон вмешался в их договоренность, потому что его самого интересовали и Сирия, и Киликия. Он одновременно посягал на добычу французов и итальянцев, а итальянцы ссорились с греками из-за Смирны. В этом, всеобщем недовольстве, лучшие позиции занимал Д. Ллойд Джордж. В его распоряжении было до 1 млн. солдат на Кавказе и в Османской империи.³

Именно американские посягательства на Киликию заставили Ж. Клемансо настаивать на законности Лондонского договора. Он напоминал, что по их, европейскому документу, приобретения каждой державы должны были зависеть от ее вклада в победу. Между тем, Италия выстави-

² United States National Archives, Washington D.C., Record Group 256 Records of the American Commission to Negotiate Peace, class 180.03401/document 101 (далее: US NA, RG); Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference. In 12 vols. Wash., GPO, 1942-1947 (далее: Papers Relating), vol.V, p.3; British Documents, vol.IV, p.251.

³ US NA, RG 256, 180.03401/101, 180.03101/25; Papers Relating, vol.V, p. 6-7.

ла против османских войск только 2 тыс. солдат, а США даже не объявляли султану войну. В. Вильсон использовал фактор европейских долгов. Он был источником продовольствия, кредитов и инвестиций. И в этом отношении самые лучшие позиции снова были у Англии. На ее островах не проходили бои, ее территория не испытала разрушений.

Чтобы привлечь США, Д. Ллойд Джордж отводил президенту Константинополь и Западную Армению. Он соглашался дополнить их Восточной Арменией, оговорив, что все это потребует больших расходов и размещения солдат. Константинополь не мог обеспечить таких доходов, а Кавказ стал предметом американо-итальянского соперничества. Франция и Британия были на стороне президента, потому что для утверждения на границе с Россией требовались значительные силы. При этом, английская политика не была однозначной. Весной 1919 г. Д. Ллойд Джордж признавал американский мандат в Османской империи, но он не признавал такого мандата *на всю* империю, или на ее наиболее лакомые куски. Между тем, без выгодных Сирии, Киликии, Анатолии было мало шансов, что Сенат одобрит идею армянского мандата.

8 апреля-16 мая 1919 г. Англия и Франция договорились в Париже по вопросам нефти. 8 мая британское правительство одобрило нефтяную договоренность, о чем сообщили остальным партнерам. 13-го числа, в следствие организованной для него "утечки информации," В. Вильсон объявил, что в обмен на планируемую для европейцев нефть, он хотел бы получить мандат на всю империю. 21-го

Д. Ллойд Джордж отказался от нефти, поскольку считал вопросы границ приоритетными.⁴

Что касается переговоров на тайном Совете 4-х Парижской конференции, то 9 апреля Верховный военный совет решил, "что итальянским войскам следует заменить поддерживающих ныне порядок в Закавказье британцев." Несмотря на недовольство британского командования, та часть решения, которая касалась вывода войск, была выполнена, хотя и значительно позже. В эти же дни, 17 апреля, армянская делегация в составе А. Агароняна, Погоса Нубара и А. Тер-Акопяна встретила с В. Вильсоном. "Если Америка примет мандат на какую-нибудь страну, то это безусловно будет Армения, - сказал президент. - ...Должен сказать, что я стараюсь обеспечить армянскому народу территорию в желаемых вами размерах, хотя на стороне есть и другие аппетиты." Он рассказал, что обуздывает эти стремления с помощью Лиги наций. Напомнил, что пока неизвестно отношение Сената к новой организации. Встреча обнадежила армянскую сторону, и по оценке А. Агароняна, "мандат на Армению... примет Америка, остается формальность." Хотя у него вызывала тревогу эвакуация британских частей.⁵

Через два дня, 19-20 апреля В. Орландо поднял вопрос о Лондонском договоре. В. Вильсон возразил, что на территорию Турции распространяются его принципы самоопре-

⁴ Great Britain, Foreign Office Archives. Public Record Office, class 371 Political (далее: FO, 371), 91135, 94556, 102249/3251/117; British Documents, vol. 4, p.1093-1097, 1100-1101.

⁵ FO 371-3667, 84449/11067/58; British Documents, vol.3, 337-338; Национальный архив Армении (далее: НАА) ф.200, оп. 2, д. 49, л. 1-3. 5; д. 51, л. 6.

деления народов. Но англичане и французы поддержали Италию.⁶

21 апреля Д. Ллойд Джордж и Ж. Клемансо представили несохранившуюся в архиве карту раздела османских земель. Италии выделяли Анатолию, а США - Константинополь и армянский мандат. В. Вильсон не хотел общей границы с итальянцами и отвергал любые уступки. Он не принимал соглашения Сайкса-Пико, и 25 апреля недовольный В. Орlando уехал в Рим. Англичанам и французам пришлось заявить: в отношении территориальных претензий самым главным является желание населения, потом идут факторы истории, национального состава населения, соседства, экономика и торговля, вклад в общую победу, удобство границ и право возмещения ущерба.⁷ Реальные переговоры отличались от провозглашенной теории, и тем не менее.

Примечательна оценка этих дней армянскими делегатами. Погос Нубар, например, предупреждал, что будущее Турецкой Армении окажется под угрозой, "если его объединят с вопросом Российской Армении." Об этом его предупредили сознательные дипломаты, хотя "государства приняли как принцип, идею объединения двух частей нации." А. Агаронян был более оптимистичным. "Английские части не уйдут целиком из нашей страны, пока американцы не придут им на замену," - написал он С. Тиграняну.

Одновременно, руководитель республиканской делегации добавил, что американцы предложили ему посредничество между собой и англичанами. Агаронян мог сообщить, что В. Вильсон не станет возражать против размеще-

⁶ US NA, RG 256, 180.03401/108-109.

⁷ US NA, RG 256, 180.03401/110, 118/App/I; British Documents, vol.IV, p.1.

ния британских частей в Западной Армении. Вместе с Погосом Нубаром он изложил все это британской делегации, и услышал, что долг размещать войска в Армении ложится на США. Агаронян сообщал: "Все наши усилия уговорить англичан хотя бы временно провести оккупацию, пока не придут американцы, остались бесполезными." Он верно предупреждал, что "не нужно придавать большого значения заявлениям, что временная оккупация не имеет значения. ...Свершившийся факт имеет существенное значение и для Мирной конференции." А затем добавил: "Полуофициально известно, что нашим мандатарием будет Америка." Она требует присоединить Киликию к Армении "как предварительное условие для принятия мандата, и вообще, дипломатически, наш вопрос находится в удовлетворительном и внушающем надежды состоянии. У нас такое впечатление, что до середины мая наш вопрос будет урегулирован."⁸

2 мая В. Вильсон попытался взять на себя роль покровителя Кавказа и ходатая за находившуюся в Константинополе азербайджанскую делегацию. Он хотел вывести официальный Баку из состава турецких пособников, на англичане и французы его не поддержали. Д. Ллойд Джордж пожаловался, что активность Италии приводит к новым вспышкам резни. Ж. Клемансо добавил, что Рим использует Лондонский договор, чтобы столкнуть Союзников. Если В. Орландо немедленно не возвратится в Версаль, договор объявят навсегда потерявшим силу. Поддержанный премьер-министром Великобритании, В. Вильсон уточнил, что именно итальянцы нарушают это соглашение.

3 мая споры вокруг Лондонского договора продолжились, причем В. Вильсон резко возражал против его соблю-

⁸ НАА, ф. 200, оп. 2, д. 50, л. 1-4; д. 51, л. 1-9.

дения. Ему предложили перейти к разделу мандатов, и президент напомнил, что США, Англия и Франция равно интересуются Палестиной.⁹ 5-го числа прозвучало, что к 7-му В. Орlando вернется в Париж. Это резко ускорило обсуждение по Кавказу. Д. Ллойд Джордж пожаловался, что итальянцы очень активны в Малой Азии. Если они захватят часть Анатолии, их будет трудно оттуда вытеснить. Премьер-министр предложил обсудить вопрос о новом размещении вооруженных сил. Подразделения США "должны направиться в Константинополь и обеспечиваться для Армении. Британцы выйдут с Кавказа, а французы могут разместить гарнизон в Сирии." Все то нужно сделать немедленно, до возвращения римлян за стол переговоров.

В. Вильсон откликнулся, что "не знает, откуда он может взять американские войска." Начальник британского генштаба Г. Уилсон уточнил, что для османской столицы достаточно одной дивизии. "Он не мог оценить требующейся для Армении численности, поскольку она зависит от надлежащей глубины проникновения в эту страну. В настоящее время, британцы согласились позволить итальянцам проникнуть на Кавказ." Д. Ллойд Джордж намекнул, что последних привлекает нефть, и В. Вильсон сразу выступил против возможной замены. Г. Уилсон предупредил: без надзора "там произойдет ужаснейшая резня." Правда британские части будут выведены, чтобы ни случилось, а американцев хорошо встретят в Армении. Остальной Кавказ будет менее дружелюбным. Глава генштаба не скрывал: для Британии будут приемлемы США, но Италию на Кавказе ждут серьезные трудности.

⁹ US NA, RG 256, 180.03401/123, 130, 137, 138, 138/App/Ш, 143, 145; НАА ф. 199, оп.1, д. 12, ч. 2, л.144-150; д. 22, ч.2, л. 83-83А; ф.к.4033, оп. 2, д. 962, л. 39-44; д. 1021, л. 1-7.

В. Вильсон "был не совсем уверен, какими по численности войсками он мог бы располагать," но в анти-итальянских настроениях он был солидарен с Д. Ллойд Джорджем. Президент сообщил, что в вопросе мандатов он не в силах "немедленно принять решение, могут ли Соединенные Штаты принять" такие обязательства в Турции. А я бы не возражал против урегулирования этой проблемы, - возразил премьер.¹⁰

6 мая В. Вильсон предложил предоставить Италии г. Фиуме (Риеку) и кредиты, если та откажется от Лондонского договора, то есть от притязаний в Азии. И во-вторых, "всей Турции следует находиться под одним мандатом." Премьер-министр Великобритании откликнулся, что исходя из Сен-Жан-де-Морьеннского соглашения, ожидаемый десант итальянцев можно уравновесить 2-3 греческими дивизиями. Договорились, что эти части не будут подчиняться командующему Черноморской армией англичанину Дж. Милну, а сохранят чисто греческое руководство.

На следующий день А. Хатисян и МИД РА выражали обеспокоенность. Председателю Национальной делегации поручили выяснить, означает ли "предварительно признание независимости," что это признание могут в любой момент устранить? "Насколько право Державы-мандатария налагать вето согласуется с подобным признанием?" Будут ли у РА дипломатические представительства? Смогут ли ставшие независимыми народы выйти из Лиги наций? А. Хатисян пожаловался А. Агароняну, "что английское командование желает держать внешний мир в неведении о происходящих на Кавказе событиях, способных привлечь мировое внимание, и тем самым изменить самовольные распоряжения британского командования; думаем, что в

¹⁰ US NA, RG 256, 180.03401/144.

этом причина, по которой англичане создают определенные затруднения в поддержании регулярных отношений с Европой, в частности, с Вами." Нужно добавить, что решение конференции от 9 апреля о размещении итальянских войск было передано кабинету РА письмом командующего британскими частями в Закавказье В. Томсона только 10 мая.

А 9 мая Д. Ллойд Джордж поднял вопрос о стремительном выводе американских солдат. Без воинских контингентов, разговоры об османских мандатах принимали чисто теоретический характер. Возвратившиеся в этот же день В. Орlando и С. Соннино сразу напомнили о Лондонском договоре и потребовали дополнительных территорий.¹¹

13-го числа В. Вильсон взялся начертить границы, невзирая на лондонский текст. Британские дипломаты согласились: США просят принять ответственность за ряд турецких районов. Это трудная и почетная задача. А Италию никто не просит принимать на себя мандаты. Ей никто не предлагает всю Анатолию. Правда Д. Ллойд Джордж уточнил: может быть выделить ей там ряд районов, чтобы до 900 тыс. чел. в год смогли переселяться в Турцию?

Стали обсуждать принесенную британцем карту. По ее границам, США получали армянский мандат и Константинополь, Франция - северную, а Италия - южную Анатолию. В ответ, глава английского кабинета услышал, что президент "не в состоянии урегулировать вопрос, пока он не вернется" домой и не узнает, что страна готова к подобному шагу. Влиятельные силы в Турции требуют не рас-

¹¹ Ibid., 180.03401/145, 148, 148/Апр.4; НАА ф.199, оп.1, д.12, ч.2, л.110; ф.200, оп.1, д.35, л.123-127А; оп.2, д.55, л.1-5; ф.к.4033, оп.2, д.963, л.130-136.

членять их империю. "Должен быть единственный мандат на все." Премьер-министр возразил: "Он не думал, что [данный замысел] можно осуществить." Американец попытался вытеснить из Анатолии и французов, и итальянцев, но Ж. Клемансо и Д. Ллойд Джордж старались обеспечить Италии плату за ее участие в войне. В конце концов решили, что итальянцы получат часть Анатолии, а Г. Никольсон начертит новые границы. Вместе с "мандатом на все," президент США разъяснил, что одного участия его страны в Лиге наций будет достаточно, чтоб заниматься турецкой проблемой. Его британский партнер "питал надежду, что Соединенные Штаты примут мандат."¹²

14 мая Д. Ллойд Джордж представил два проекта резолюций - свою и Г. Никольсона. В первой из них, президент, "от имени Соединенных Штатов и при последующем обязательном согласии Сената принимал:

1. Мандат на Провинцию Армения, учреждаемую в границах, которые будут согласованы между делегациями Соединенных Штатов, Британии, Франции и Италии, рекомендации которых, в случае единогласия, станут приниматься без последующего обращения к Совету.

2. Мандат на город Константинополь, проливы Босфор и Дарданеллы, Мраморное море и маленькую прилегающую территорию, границы которой определяют делегации Соединенных Штатов, Британии, Франции и Италии."

Во втором проекте было "Решено,

(1) Что верховная власть Турции над Константинополем, Европейской Турцией, проливами и Мраморным морем будет прекращена. ...

¹² US NA, RG 256, 180.03401/10½.

(3) То, что останется в Анатолии восточнее¹³ предлагаемой для Армении границы, будет учреждено как будущее турецкое государство, с которым будут обращаться следующим образом:

Учитывая тот факт, что турецкое правительство не проявило способности защищать интересы подчиненного ему населения, что сейчас оно не в состоянии развивать природные запасы страны, мы осознаем, что для [обеспечения благополучного будущего] турецкого государства, потребуется внешнее руководство. ... Считаем, что для содействия Турции, мандат лучше доверить трем державам."

Потому предлагалось, чтобы Греция и Италия получили земельные наделы, причем зеленая, итальянская зона распространялась "до пункта, в котором предлагаемая для Армении граница достигала Средиземноморья.

(3) Мандат на оставшуюся часть будущего турецкого государства предоставлялся Франции." Османский общественный долг следовало уплачивать через специальное управление, набранное из чиновников пяти держав.

В. Вильсон справедливо заметил, что предложенный план не оставил отдельной, независимой Турции. Кроме того, точные границы армянского мандата еще не определены, поэтому он предлагает разработку американских специалистов. В новом варианте Александретту отделяли от Киликии, и несколько отличалась черноморская линия. "Маленький валиец" Д. Ллойд Джордж стал настаивать, чтобы работали на его карте. Он не желал французской зоны на севере и не желал видеть французских и итальянских советников в турецкой столице. В этом случае, соглашался премьер, Анатолию лучше не делить.

¹³ В тексте записано именно "восточнее."

Потом он зачитал подготовленный в Форин офисе меморандум А. Бальфура с предложением кондоминиума. Обычно, англичане не признавали подобной формы правления, и Ж. Клемансо заметил, что кондоминиум будет чреват войной. Президент США добавил, что он не согласен с идеей международного финансового органа, которую предложил А. Бальфур. Американец не допускал экономических концессий, потому что его Лига наций отстаивала принцип свободной торговли во всех подмандатных зонах. Он не посягал на "естественное право первоочередности мандатария, однако оно не должно оформляться как *требование* первоочередности." Лучше провести на юге выборы генерал-губернатора, разместив его в Конии, иначе Константинополь превратится в арену итало-французского соперничества.

Премьер-министр Великобритании продолжил маневрировать. Он соглашался оставить султана в Константинополе, и пусть Франция, Италия и Греция станут контролировать каждая свою часть Анатолии. США же будут контролировать султана. В. Вильсон вновь вернулся к теме выборов, предложив заменить Османску империю на республику. Ни Д. Ллойд Джорджу, ни Ж. Клемансо подобная перспектива не понравилась. Наконец пришли к соглашению, что Анатолию поделят на две части.

Продолжая дипломатическое давление, Д. Ллойд Джордж распространил 17 мая меморандум А. Бальфура, не отрицая, в то же время, "что может быть лучше иметь в Анатолии только один мандат." Он упоминал мнение "всего мусульманского мира," а в предложенном им документе утверждалось, что Османская империя обречена потерять "европейские владения, арабоязычающее население и Армению." Остальные же земли заселены турками, и их раз-

дел на два мандата, с двумя столицами, вызовет возмущение всех мусульман.

"Вооруженным Лондонским договором итальянцам способствует пламенное общественное мнение" их страны. И они не удовлетворятся крохами, если Англия и Франция станут наращивать собственные приобретения, в частности - в Киликии и на Кавказе. В этом случае, Италии нужно будет выделить надел в Малой Азии и южной Турции, причем в Анатолии и на черноморском побережье ее следует ограничить концессиями. Бальфуровская альтернатива предлагала вывести султана из Константинополя, и отказаться от любых мандатов на турецкое государство. А Ж. Клемансо беспокоился, что итальянские подразделения уже проявляют несанкционированную активность в обсуждаемых районах.

Чтоб повлиять на партнеров, Д. Ллой Джордж организовал известное выступление индийской депутации. Министр по делам Индии объявил, что правительство этой страны выступает против проекта договора. В торжественных речах, индийцы настаивали, что проливы, Фракию, Малую Азию лучше оставить Турции, приняв последнюю в Лигу наций. Депутация напоминала, что индийские мусульмане хорошо воевали против османской армии, а значит у них есть право обращаться к конференции с просьбами и предупреждениями.

"Обратите внимание на восточные, северо-восточные провинции Турции, и на юго-западные области российского Кавказа, - провозгласил Ага-хан. - ...Даже до 1877 г. существовавшая между Турцией и Россией граница оставалась чисто политической. Пограничная межа к югу от Кавказа не является этнографической или географической. Обращаемся к вам, какая бы форма правления ни была установлена для обозначаемой Армении, она должна осу-

ществляться хотя бы во всех данных районах и должно быть равенство всех рас, религий и народов, находящихся в этих пределах." После всех речей, Д. Ллойд Джордж стал настаивать, чтобы в знак непредубежденности, США как вероятный мандатарий Константинополя оставили на Босфоре султана-халифа.¹⁴

19 мая наступила очередь В. Орландо. Сначала он заявил об итальянских притязаниях на всю Анатолию, а закончил тем, что согласился отказаться даже от Малой Азии, если ему отдадут только один город Фиуме. Д. Ллойд Джордж поддержал данный подход и выступил за восстановление турецкого суверенитета. По давно отыгранному сценарию, он давал Франции контроль за османскими финансами, экономикой, внешней политикой. Американцам же оставался надзор только за местными делами в столице. Им снова напоминали, что их главная забота - армяне. Британский премьер объявил, что того же 19 мая он провел в Париже заседание своего кабинета и теперь выражает утвержденное мнение своей страны.

Валлиец пригрозил пересмотреть весь вопрос о мандатах, и В. Вильсон предпочел отложить обсуждение. На предъявленные обвинения премьер пояснил, что он связан Лондонским договором и обязан вместе с Францией позаботиться о доле для Италии. Правда он не хотел, чтоб ее долей стала Малая Азия. В этом случае прогнозировались "вечные мятежи, что в равной степени относится и к Армении, мандат на которую примет Америка. Мусульманская депутация резко возражала против итальянского мандата на Кавказе."

¹⁴ Ibid., 180.03401/13½; 13½/App.I, II; 15½; 15½/App., 17, 17/App., 18.

Во второй половине дня С. Соннино напомнил, как много обещали Италии в 1917 г., но Д. Ллойд Джордж вернул его к договору 1915 г. Итальянец впервые услышал, что Россия тоже участвует в османском урегулировании, а ее согласия на кавказский поход никто не получал. Римлянин не мог понять, почему Совет так стремится вытеснить его подразделения из Азии, но британец требовал, чтобы тот отказался от несанкционированных действий. США, - заявил министр иностранных дел, - могут действовать свободно, "но Великобритания и Франция вступили в определенное соглашение" с его страной. И британский премьер подтвердил, что не может отказаться от секретных соглашений военного времени.

Затем на сцену выступил Э. Венизелос. В мае 1919 г. только греческие и итальянские войска были готовы к активным действиям в азиатских османских владениях. Поэтому, чтобы не столкнуть эти две силы, афинянин соглашался подчинить свои контингенты С. Гаф-Келторпу. Совет одобрил его согласие, но не принял под английское командование итальянских солдат. Что же касалось России, то на следующий день уточнили, что ей придется принять границы, которые начертит Лига наций. Данный подход разделяли и Д. Ллойд Джордж, и В. Вильсон.¹⁵

21 мая Д. Ллойд Джордж распространил новый меморандум. В нем США опять получали зону проливов и город. Вместо них, предлагался мягкий мандат в Анатолии. Обратим внимание, что документ говорил о всей *Анатолии*, а не о всей Османской империи. В качестве другой альтернативы, если США не смогут принять всю Анатолию, там восстанавливалась власть султана. При всех вари-

¹⁵ Ibid., 180.03401/18½; 19, 19/App.I, 20.

антах, регион получал доступ к Средиземному, Мраморному и Черному морям.

При этом, "(5) Соединенные Штаты Америки получат полный мандат на Армению и Киликию.

(6) Мандат на Армению будет включать временный мандат на Российскую Армению, Азербайджан и весь Кавказский край, пока не разрешится российская проблема."

Франция получала сирийский, а Британия - месопотамский и палестинский мандат; Аравию признавали независимой. Этот документ был выработан на заседании британского кабинета в Париже, где министры высказались против раздела Малой Азии. "Союзники имеют полное право сказать, что турки не должны управлять такими чуждыми расами, как греки, армяне и арабы, которых они часто подвергали угнетению." Одновременно, члены правительства считали, что Константинополь и Анатолия должны управляться одним мандатарием.

А вот Арменией, Месопотамией и Сирией могли управлять иные государства. Но Анатолию не позволялось объединять с армянскими вилайетами. К тому же, управление в Анатолии следовало осуществлять руками турок. Иначе была возможной новая резня оставшихся там греков, армян и иных народов. "Британская делегация предпочла бы, чтоб надзор осуществлялся Америкой. ...Если Франции дать мандат на Анатолию, Италия получит право пожаловаться, взяв за основу Лондонский договор." Если же США "окажутся не в состоянии принять мандат, то я не вижу иного пути, кроме продолжения нынешнего состояния, при котором весь контроль остается за турками. ...Америка будет иметь мандат на Армению и Константинополь, и турок не сможет оставаться совершенно свободным в его произволе."

Д. Ллойд Джордж подвел итоги, что В. Вильсону необходимо срочно возвращаться домой, чтоб получить предварительное согласие своей страны. По его мнению, США должны были принять надзор за Кавказом до тех пор, пока в России не стабилизируется ситуация. Последнее обстоятельство вызывало беспокойство у В. Вильсона, "поскольку в настоящее время его контролируют британцы, которые больше не в состоянии там оставаться." Наряду с данным обстоятельством, президент продолжал вытеснять итальянские воинские контингенты, способные оттянуть на себя часть османских подразделений. Он не спорил против турецкого суверенитета в Анатолии, но предлагал султану советы мандатария, возможно европейского. "Если роль мандатария в Константинополе и Армении примет одна и та же держава, султану будет очень трудно причинять большие беспокойства."

В. Вильсон притязал и на Сирию, но Ж. Клемансо был непреклонен: он уступил англичанам Палестину и Мосул, а те не спешат передавать ему сирийские позиции. В начале 1919 г. он даже согласился передать США часть Киликии, в обмен на анатолийский мандат. "Только вчера предложили, что Франции следует получить мандат на всю Анатолию. И вот сегодня г. Ллойд Джордж выдвигает новые варианты." Объявление о том, что американцы утвердятся не только в зоне проливов и Армении, но и на всем пространстве между ними, "вызовет дурное брожение и создаст раскол во всем европейском мире." При таком решении, француз будет вынужден покинуть свой пост премьера. К тому же, он может сблизиться с итальянцами.

Д. Ллойд Джордж начал торг землями, железной дорогой и нефтью. Он не соглашался обсуждать соглашение Сайкса-Пико, тем не менее, именно его, а не французские войска, воевали против аскеров. Поэтому он был против

раздела Анатолии. А поскольку В. Вильсон не был готов к острым территориальным спорам, президент отступил от своих притязаний в Малой Азии. Для США "трудно принять мандат даже на Армению, где они издавна имеют постоянные интересы, и где американцы потратили значительные средства, чтобы утешить армянский народ." Что касается Константинополя, то в данном вопросе хозяин Белого дома ожидал поддержки даже от своих политических противников.¹⁶

22 мая Ж. Клемансо повторил итальянский прием в отношении Лондонского договора. Если римляне использовали только удобные для них пункты приведенного документа, то и Ж. Клемансо приводил только выгодные для него положения из текста Сайкса-Пико. Д. Ллойд Джордж успешно оборонялся: ведь во время войны он выставил против турок 200 тыс. солдат. Но при всех спорах, через 4 дня главные действующие лица были вынуждены признать - ситуация изменилась после 1915 г., и желания народов нельзя полностью игнорировать.

С 28 по 31 мая окончательно выяснилось, что в Европе выполнять Лондонский договор еще можно, но для Восточного урегулирования он более не подходит. 31-го числа Ж. Клемансо пообещал направить свои подразделения в Киликию, несмотря на то, что "она отойдет" под контроль США. Лично он предпочитал Сирию, но Д. Ллойд Джордж пригрозил возможностью "больших волнений."¹⁷

Итак, 1) четырехсторонний лондонский договор не был пока освещен в армянской историографии, или его неосновательно называли трехсторонним. На деле же, его

¹⁶ Ibid., RG 256, 180.03401/20½, 20½/App. III.

¹⁷ Ibid., 180.03401/22½, 33, 37¼, 38, 40, 41, 43, 43/App. III; FO 371/4180, 82836/2117/44; British Documents, vol. IV, p. 253-254, 257-258.

подписали англо-франко-российский блок и Италия. Последняя опиралась на этот договор во время парижских переговоров в апреле-мае 1919 г. Франция и Великобритания принимали значимость их соглашения, США относились к нему отрицательно.

2) Ни на заседаниях 6-го или 13-14 мая, ни в иные майские дни Парижской мирной конференции, стороны не вели переговоров о едином мандате на Османску империю. После 5-го числа, когда англичане объявили, что их армия должна покинуть Кавказ, В. Вильсон упомянул 6 мая об одном мандате *на всю Турцию*. Однако никогда, включая 14 мая, партнеры не выделяли США мандата на Армению, Константинополь и Анатолию - их заставляли выбирать между Арменией вместе с османской столицей, *или* Анатолией.

3) 13 мая В. Вильсон в первый и единственный раз прямо сказал на заседаниях о мандате на всю империю, но Д. Ллойд Джордж нейтрализовал данный тезис, приглашая в глубь османской территории Францию и Италию. 14, 17 и 21 мая британский премьер-министр соглашался, что *Анатолию лучше не делить*. Однако в этом случае предпочтителен французский мандат, или турецкий суверенитет.

4) И не Совет 4-х Мирной конференции, а только распространенный Д. Ллойд Джорджем меморандум от 21 мая 1919 г. упоминал американский мандат на Западную Армению, Киликию, Константинополь и проливы. К ним добавляли временный мандат на Восточную Армению, Азербайджан и Кавказ - до восстановления стабильности в России. 31 мая Ж. Клемансо согласился уступить Киликию США, но за это американцам закрывали доступ в Сирию,,

Палестину и Малую Азию. В этом состоит точная картина майских переговоров.

Регион, протянувшийся от бакинских нефтяных залежей, до проливов и Киликии был большим. Это было самое весомое и привлекательное предложение, с которым Союзники обратились к хозяину Белого дома. Тем не менее, В. Вильсон не проявил большой заинтересованности, и не дал положительного ответа. Позже, в осуществлявшейся в Вашингтоне пропагандистской кампании, предложение от 21 мая не получило широкого распространения.

5) Дипломатия пока еще не признанной Республики Армения стремилась представить, в рамках имевшихся у нее возможностей, Армянский вопрос. В Париже был организован I Национальный съезд армян, состоялись официальные встречи с эмиром Фейсалом и В. Вильсоном, 4-11 апреля в Тифлисе велись переговоры с командующим британскими войсками в Закавказье. Целый ряд направлявшихся из Парижа оценок был точным и заслуживал внимания, однако общее восприятие будущего было излишне оптимистичным. Главная ошибка состояла в том, что решения насущных национальных вопросов ожидали от других, от Парижской конференции.

Подведем итоги:

1. Программа разделения Османской империи отражена в Лондонском договоре, в англо-американском "неуловимом," и в соглашении Сайкса-Пико, а также в договоре Сен-Жан-де-Морьенн. Из них, только третье нашло достаточное освещение в армянской историографии, остальные документы пока еще нуждаются в надлежащем анализе.

2. Между тем, весной 1919 г. - на Парижской конференции, Великие державы продолжали переговоры, исходя именно из Лондонского договора. Вооруженная этим доку-

ментом Италия пыталась разместить свои войска на Кавказе, а США, в лице В. Вильсона, стремились нейтрализовать договор, принимая за основу известные "14 пунктов." Президент не упоминал англо-американского "неуловимого соглашения" от 14 февраля 1916 г., а его усилия были направлены на то, чтоб утвердиться в Киликии.

3. Споры между В. Вильсоном и С. Соннино, а также стремление США получить Киликию заставили Ж. Клемансо настаивать на действительности Лондонского договора. Поддерживая последнего, Д. Ллойд Джордж обострял американо-итальянские и американо-французские противоречия. Он предложил США российскую часть военных трофеев: Константинополь и Армению.

4. Во время наиболее важных переговоров 19-21, 24 апреля, 5-6, 13-14, 17, 19-22 мая, В. Вильсон стремился обеспечить США насколько возможно большую территорию, не исключая единого мандата на всю Османскую империю; в следствие чего он был против размещения итальянских войск на Кавказе. В свою очередь, Д. Ллойд Джордж соглашался передать США только Восточную и Западную Армению, вместе с Константинополем. Он нейтрализовывал притязания президента на Сирию и Киликию.

5. Руководители делегации Республики Армения и Национальной делегации А. Агаронян, Погос Нубар и А. Тер-Акопян, не получившие места за столом Конференции, встретились 17 апреля с В. Вильсоном. В ходе беседы обсуждались перспективы армянского мандата.

6. При изучении международных отношений нужно помнить, что одновременно вели переговоры о городе Фиуме, Сирии и Киликии, Константинополе, Западной Армении и Кавказе. Если делали уступки по одному из этих пунктов, значит стремились получить права на другой из них. Следовательно, располагая данными, чем закончился

спор о проливах или Сирии, было возможно сделать вывод, какова расстановка сил в вопросе Армении.

GAYANE MAKHMOURIAN.
Inst. of History, NAS

**APRIL 26, 1915, TREATY OF LONDON AT THE
PARIS PEACE CONFERENCE (AT DISCUSSIONS
OF APRIL-MAY OF 1919)**

SUMMARY

April 26, 1915, Treaty of London was signed by France, Russia, Great Britain and Italy. It had been discussed at the Paris Peace Conference in April-May of 1919. The agreement served as the basis for Italian claims that its army should replace British regiments in the Caucasus and should get its share in the Asian part of the Ottoman Empire. The Great Britain and France respected the Treaty of London in Europe, but didn't want an Italian expedition to the Caucasus. The USA were rejecting this secret document, to which they had never been a part. Talks of April 19-21, 24, of May 5-6, 13-14, 17, 19-22, 31 were hot and important.

Only on the 6th and 13th of May W. Wilson had casually mentioned a mandate for the whole Turkey and one mandate for the whole. His partners flatly disagreed. By their assertion, President of the USA had always to choose between Armenia with Constantinople or Anatolia. In the memorandum of May 21st D. Lloyd George had allotted for the USA full mandate over Armenia, Cilicia, Constantinople and Straits with a provisional mandate over Russian Armenia, Azerbaijan and the Caucasus, pending stabilization of the Russian state. It was large and rich region, but not the whole Ottoman Empire.

Diplomats of not yet recognized Republic of Armenia tried to represent their national needs and interests. They submitted official reports to the secretariat of the Peace Conference, participated at the 1st Armenian National congress, had formal conversations with Emir Feisal and on April 17th with W. Wilson, had conducted on April 4-11, at Tiflis, their parleys with Commanders of the British forces. Some estimations and letters from Paris were precise and reliable, although overall predictions of the nearest future were excessively optimistic. The main problem and wrong consisted in the expectation that national problems of vital importance would be solved from without, namely, by the Paris Peace Conference.

Կ. ՊՈԼՍԻ «ՀԱՅ ՍՎԱՈՒՄՏ» ՀԱՆԴԵՍԸ (1919-1922 թթ.)

«Հայ սկսուտ» հանդեսը հրատարակվել է Կ. Պոլսում (1919-1922 թթ.) և Փարիզում (1929-1935 թթ): Այն եղել է Հայ Սարմնակրթական Ընդհանուր Միության (ՀՍԸՄ) օրգանը: Ամսագրի խմբագիրը Կարո Ուշագլյանն էր, պատասխանատու տնօրենը՝ Հրաչյա Տեր-Ներսիսյանը, արտոնատերը Գառլո Շահինյանը: Աշխատակազմում ընդգրկված էին ՀՍԸՄ-ի անդամներ, անվանի մարզիկներ, մարզական վերլուծաբաններ՝ Հակոբ Զիսյանը, Վահրամ Ա. Փափազյանը, Ախսակ Նալբանդյանը և այլք: Ամսագիրը Կ. Պոլսում հրատարակվել է Օ. Արզումանյանի, «Զ. Զեշիշյան որդի», «Մասիս», «Պահլի եղբայր» տպարաններում: Ամսագրի առաջին համարի «Մեր գործը (1 նոյ. 1918 - 1 հոկտ. 1919)» հաշվետվության մեջ ներկայացվում են, թե ինչպես են հիմնադրվել ՀՍԸՄ-ն ու «Հայ սկսուտը». «Զինադադարի առաջին օրերուն, երբ հայութիւնը արիւնի մկրտութենէն տակաւին նոր դուրս էր եկեր... խումբ մը երիտասարդներ հավաքուեցանք Գրիգոր Յակոբեանի կոչին վրայ՝ կազմելու համար ՀՍԸՄ-ն: Առաջին նիստը գումարուեցաւ 1 նոյեմբեր 1918 9 հոգիի ներկայութիւ-նով, որոնք հրաշքով մը աւերի ճիրաններէն դուրս մնացած էին և որ նախկին սիրահարներ ու մասնագէտներ էին մարզանքի և սբօրի կեանքին»: Ժողովում որոշում են ընդունում «լայն և պարզ ծրագրով մը սկսիլ մարմնակրթականի գործը և գայն մտցնել դպրոցներէ և հիմնելի որբանոցներէն ներս»¹: Այդ մասին վկայում է նաև ՀՍԸՄ-ի նախագահող հիմնադիրներից Հակոբ Սիրունին. «Առաջին հաւաքումին կային Գրիգոր Յակոբեանէ և ինծմէ գատ՝ Լևոն Յակոբեանը, Հայկ ճիզմէճեանը, Գառլօ Շահինեանը և Տիգրան Խոյեանը, որոնց շուտով պիտի գային աւելնալ քանի մը ուրիշներ ալ, ինչպէս Յովհաննէս Հինդլեան, Ժիրայր Խօրասանճեան, Վահրամ Փափազեան և Գրիգոր Սերճանօֆ: Այդ առաջին հաւաքման մէջ իսկ հիմը դրուեցաւ ՀՍԸՄ-ին:

¹ «Հայ սկսուտ», 1919, թիվ 1, էջ 7:

ՀՄԸՄ-ն... ծնունդն էր իրական պահանջի մը, և կրցեր էր առինքնել ամբողջ հայ երիտասարդութիւնը Պոլսոյ և գաղութներու մէջ»²:

ՀՄԸՄ-ի հիմնական նպատակն էր՝ կազմակերպել սկաուտական խմբեր, որոնցում ընդգրկված հայ պատանիները մարզվելու էին «մարմինով և հոգիով»³: «Մեր գաղափարականը» խմբագրականում քվարկված են ՀՄԸՄ-ի հետապնդած խնդիրները. «Մենք կուզենք... պատրաստել անհատներ, որոնք կարող ըլլան ապագայ քաղաքակիրթ աշխարհի հարուածներուն դիմագրաւելու: Մենք կուզենք պատրաստել օրինապահ, բայց ոչ ստրուկ մարդը, տալ անոր առողջ և կորովի մարմին և ուղղադատ միտք: Մեր գաղափարականն է՝ պատրաստել առողջ սերունդ մը նոր հայրենիքին համար»: Հայ սկաուտը պետք է լինի լավատես, հուսադրող, վստահելի և կարգապահ անհատ, որին «կարենայ յանձնուիլ և յանձնել հայրենիքի շահերը» (1919, թիվ 1, էջ 3-9)⁴: Հայ սկաուտի նշանաբանն է՝ «Բարձրացի՛ր, բարձրացու՛ր», իսկ նպատակը՝ «բարձրանալ հոգիով, միտքով և մարմնով»: Հակոբ Քիսյանի կոչում՝ ուղղված հայ սկաուտներին մատնանշվում են նրանց առջև դրված խնդիրները. «Ուշադրութեամբ դիտէ, հայ սկաուտ, ճակատդ զարդարող միտալը՝ վրան Արարտի յուշարձանը: Ան կը խորհրդանշէ հայը, հայը, որ կանգուն մնացած է միշտ, հակառակ թշնամիներու տեսական հալածանքին ու քարոզին: Յարգանքով ու երկիւղածութեամբ կանգնէ այս մեծ յուշարձանին առաջ և միտքդ դիր կատարել անոր արձակած պատգամը: Քու իտէալդ պէտք է ըլլայ ո՛չ միայն բարձրանալ, այլ նաեւ բարձրացնել» (1919, թիվ 4, էջ 51-52): Հայ սկաուտներն ու հայ արիները պիտի կարողանային դիմակայել փորձություններով, ցեղասպանութեան սարսափներով, դեռևս շարունակվող կռիվներով լեցուն ժամանակաշրջանի մարտահրավերներին: Թեև 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղղոսում զինադադար էր կնքվել Անտանտի երկրների և Առաջին համաշխարհային պատերազմում պարտվող կողմ ճանաչված Թուրքիայի

² Սիրունի Հ., Ինքնակենսագրական նոթեր, Ե., 2006, էջ 204, 208:

³ «Հայ սկաուտ», 1919, թիվ 1, էջ 7, «Հայ սփյուռք հանրագիտարան», Ե., 2003, էջ 680-681:

⁴ Այսուհետև «Հայ սկաուտ» հանդեսից կատարված մեջբերումները աղբյուրներով տեքստում կտպագրվեն փակագծերի մեջ:

միջև՝ վերջինիս առջև որոշակի պարտավորություններ դնելով Հայաստանի Հանրապետության հետ պատերազմական գործողությունների մեջ չմտնելու առումով, բայց զինադադարը ժամանակավոր ու խարուսիկ էր⁵։ Կրկին վտանգված էր հայ ժողովրդի խաղաղ գոյակցությունը։ Նման քաղաքական հանգամանքներում լիովին տեղին էին եղեմնից մազապուրծ եղած հայ երիտասարդների հայրենասիրական մղումները ՀՍԸՄ-ի ստեղծման, աճող սերնդին մարտունակ դարձնելու և հայեցի դաստիարակություն տալու ուղղությամբ։ Բնութագրական է Տ. Չիթունու «Վերցու՛ր ձեռնոցդ, հա՛յ արի» արձակ բանաստեղծությունը, որ տպագրված է «Հայ սկաուտ» հանդեսում։ Այնտեղ կոչ է արվում պաշտպանել Հայաստանի պատիվը այնպես, ինչպես վայել է Գայլ Վահանների ու Դավիթ Բեկերի ժառանգորդներին. «Հայ արի, վերցու՛ր երեսիդ նետուած կարմիր ձեռնոցը. բարձրացի՛ր Արարատեան վեսութիւնով, բարձրացու՛ր կոխտտ պատիւը Մայր Հայրենիքիդ։ Ցուցու՛ր, թէ դուն սերունդն ես Տրդատներու՝ որք Հռոմի կրկեսները պակուցի՛ն, Արշակներու, որ Շապուհները դողացուցին։ Ճշդէ՛ որ դուն ես հայրն ու նոր ծնունդը Գայլ Վահաններու, Դաւիթ-Միէրներու, Սասունցի Յովնաններու և նոր Դաւիթ-Բէկերու, Անդրանիկ-Մուրատներու։ Վերցու՛ր ձեռնոցը, բարձրացու՛ր դրօշը հայ անկախութեան, տնկ՛՛ նոր Եռագոյնը սօճինազարդ հայ դրախտին մէջ» (1919, թիվ 1, էջ 14)։ ՀՍԸՄ-ն տարբեր հողավածներում անդրադառնում է հայ ընտանիքներին հետաքրքրող այն հարցին, թե որքանով է նպատակահարմար մեզանում հիմնել նաև աղջիկ սկաուտների կազմակերպություններ։ Օրինակ՝ «Աղջիկ սկաուտ» վերնագրով նյութում կա նույնիսկ ՀՍԸՄ-ի պաշտոնական պատասխանը. «Երբ կը կազմենք մարդը, բնական է, որ պիտի պատրաստենք անոր համար կինը։ Պէտք է աշխատինք, որ... ծնողքներ պատիւ համարին իրենց աղջիկները այդ կազմակերպություններու անդամագրելը» (1919, թիվ 1, էջ 9)։ Պատվաբեր է անդամակցել ՀՍԸՄ-ին, քանի որ այն, ելնելով ժամանակաշրջանի հրամայականից և հայապահպանության, հայրենիքը հզորացնելու նպատակից՝ փորձելու էր դառնալ հայ ժո-

⁵ Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 2, Ե., 1983, 88-145, «Հայոց պատմություն. հիմնահարցեր» Ե., 2000, էջ 250-257, 372-375, 380-385:

ղովրդի տարբեր հատվածները միմյանց միացնող գոտի: Այս գաղափարն արտացոլված է 1919 թ. դեկտեմբերի 16-ի «Հայ սկաուտի» թիվ 4-ի՝ «ՀՄԸՆ-ն իբր միութեան գոտի» խմբագրականում: Այնտեղ նշված է. «ՀՄԸՄ-ն» ըլլալով զուտ առողջապահական, ցեղին ֆիզիքականին հետ առնչութիւն ունեցող և միեւնոյն ատեն միջազգային կապ ստեղծող միութիւն մը, հակառակորդները կամ տարակարծիքները իրարու պիտի միացնէ խաղաղաշտին, մարզարանին կամ մրցումներու մէջ, տարբեր հոսանքի պատկանող անձեր, հոն, կողք-կողքի պիտի պաշտպանեն իրենց մրցանիչը և ցեղին ֆիզիքական ազնուացման գաղափարը»: Կարևորելով իր առջև դրած նպատակները՝ ՀՄԸՄ-ն որդեգրում է բնույթով համազգային ծրագիր, որը «վաւերացուած է Ազգային կեդրոնական վարչութեանէն և կը վայելէ ազգին ուժերուն հովանաւորութիւնը և Ազգային ու Անհատական վարժարաններու վարչութիւններու համակրանքը»: Պատճառն ըստ «Հայ սկաուտի», այն է, որ իրենց «կեցած են անխտրական հողի վրայ, անկախ կուսակցական նկատումներէ: Սեզի համար արժէք ունի ամէն անհատ ինչ յարանուանութեան և ինչ կուսակցութեան ալ պատկանի» (1919, թիվ 1, էջ 3): Հանդեսը ճշմարիտ հայրենասիրութիւն է համարում ՀՄԸՄ-ին սատարելը և օգնելը, քանի որ համահայկական կառույցը ցանկանում է պատրաստել «առողջ ու տոկուն երիտասարդութիւն մը, պատրաստ նուիրուելու հայրենիքի վերաշինութեան մեծ գործին, պատրաստ՝ հայրենիքի պաշտպանութեան, նախանձախնդիր՝ անոր բարձրացման ու զօրացման»: Ավերված հայրենիքի վերականգնման համար անհրաժեշտ են հուժկու բազուկներ, հզոր կամք և անխոնջ աշխատանք: «Մարմնակրթանքն ու սքօրներն են, որ պիտի կարենան այս բարենասնութիւններով օժտուած անհատներ պատրաստել»: Այստեղից արվում է հետևություն, թե «ամէն հային համար հայրենասիրական պարտք մըն է քաջալերել մարմնակրթական շարժումը» (1919, թիվ 3, էջ 41 – 42): 1920 թ. ընթացքում լույս տեսած հոդվածներում այս միտումը առաջնային է դառնում և շարունակ մատնանշվում է, թե հայրենիքը հայ սկաուտի կարիքն ունի, թե հայ սկաուտները պիտի ոչ միայն երկիրը վերակառուցեն, այլև պիտի լինեն հայրենիքը պաշտպանող բազուկներ: Հայն այսօր պատասխանատվություն է ստանձնում կազմել «հայրենիք մը և բարգաւաճեցնել զայն:

Այսօր իսկ կը լսենք հայրենահրաւեր փողը... Աւերակ է այդ երկիրը, դուն քու բազուկներովդ պիտի կերտես անոր աւերակ գիւղերն ու քաղաքները, հա՛յ սկաուտ: Ամլացած են դաշտերն ու պարտէզները, դուն արգասաբեր պիտի դարձնես անոնք քու քրտինքովդ: Քեզի կ'սպասեն Չայն ու Չայաստանը»: (1920, թիվ 15, էջ 234): Սակայն ոչինչ չարժե անգամ բարգավաճ հայրենիքը, եթե «չունի զինք պաշտպանող բազուկներ», եթէ չենք ուզէր տնտեսապէս և քաղաքականապէս գերուիլ ուրիշներէ, գիտակից քաղաքացիութեան ոգի ներարկենք մեր պատանիներուն, զրահապատ ֆիզիքականով օժտենք զանոնք: Անոնց բազուկներով ցանկապատ հիւսենք հայրենիքին շուրջ» (1920, թիվ 5, էջ 65):

ՀՍԸՄ-ն իր նպատակներն ու կատարած աշխատանքները ժողովրդին ներկայացնելու համար որոշում է Կ. Պոլսում 1919 թ. հոկտեմբերի 25-ից հրատարակել «Չայ սկաուտ» պաշտոնական հանդէսը (1919, թիվ 1, էջ 14): «Չայ սկաուտն» ուներ Ակաուտական կյանք, Ակաուտական և մարզական շարժումը Չայաստանի մեջ, Ակաուտական գիտելիք, Ակաուտական խաղեր, Ակաուտի նամակներ, Ակաուտական լուրեր, Մարզական կյանք, Թղթակցութիւններ զավառներից, Խորհուրդներ սկաուտներին, Ինչպես նաև Նախնական և Անմիջական ծանոթութիւնների և ՀՍԸՄ-ի գործունեության լուսաբանմանը նվիրված բաժիններ: Առավել արժեքավոր են հանդեսում տպագրված վերոնշյալ ոլորտին վերաբերող լուրերը և հոդվածները: Վերջիններից հիշատակության են արժանի Ս. Ուզունյանի «Մարմնակրթության բնախոսությունը», Վ. Փափազյանի «Ատլետիզմ» և Ս. Նալբանդյանի «Անցյալ հուշերես» հոդվածաշարերը: «Ակաուտական կյանք» և «Ակաուտական գիտելիք» բաժիններում պարբերաբար և հանրամատչելի ձևով «Չայ սկաուտը» պատկերացում է տալիս սկաուտական շարժման, սկաուտի վարքագծի կանոնների և պարտականությունների մասին: «Ակաուտիզմը մասնաւորաբար 11-15 տարեկան տղոց համար է: Այսօր, հաստատուած է թէ քաղաքներում 11-15 տարեկան պատանիները կը սիրեն կանոնաւորուած ազատութիւնը, որ կը կազմէ սկաուտիզմի հիմը», - գրում է «Ակաուտիզմի մասին» թարգմանական նյութում Պ. Շապոյանը (1920, թիվ 15, էջ 235- 238): Նա մեկ այլ՝ «Ակաուտի կյանք. սկաու-

տիզմ» հողվածում ընթերցողներին տեղեկացնում է, որ սկաուտական խմբեր են գործում աշխարհի քաղաքակիրթ բոլոր երկրներում, քանի որ սկաուտությունը պատանիների համար անհրաժեշտ ու հիմնական դաստիարակություն է համարվում: Հեղինակի համոզմամբ սկաուտիզմը ջանում է «երիտասարդին տալ բարոյական, մտաւորական և ֆիզիքական գործնական դաստիարակութիւն մը: Ընտանեկան և դպրոցական դաստիարակութիւնները կը միանան անոր և կը պատրաստեն ապագայի իտէալ մարդը» (1919, թիվ 3, էջ 34): Սկաուտական շարժումը բնութագրելու տեսանկյունից ուշագրավ է Գ. Հինդլյանի «Ի՞նչ է սկաուտությունը իր հիման մեջ» հողվածաշարը: Այստեղ նա փորձում է տալ այդ և հարակից հարցերի պատասխանները՝ օգտվելով օտար աղբյուրներից: Հեղինակը պարզաբանում է, որ սկաուտը (scout) անգլերեն բառ է և նշանակում է սահմանագլուխը պաշտպանող զինվոր ու մշտաբթուն, զգայարանները լավ մարզած կտրիճ: Սկաուտությունը մանկավարժական նոր ուղղություն է, որի հիմնադիրը անգլիացի զորավար Ռոբերտ Բաուելն է: Կարևորելով դաստիարակության դերը մարդու կյանքում և դժգոհ լինելով վերջինիս ավանդական մեթոդներից՝ Ռ. Բաուելը դրանք արմատական բարեփոխումների է ենթարկել: Սկաուտությունն ունի որոշակի սկզբունքներ և դրանց հիման վրա մշակված միջոցներ, որոնցով հասնում է իր առջև դրված նպատակներին, այսինքն՝ մի կողմից՝ նորահաս սերունդը «ազնուացնել և քաղաքակրթութեան արդի պահանջներուն համեմատ շինել ֆիզիքական և բարոյական կարգ մը բարեմասնութիւններով օժտելով զայն», մյուս կողմից՝ տղաների դաստիարակության գործը պետք է հիմնել՝ ելնելով նրանց բնախոսական-հոգեբանական պահանջմունքներից: Պետք է «տղան դաստիարակել՝ զայն հրապուրող միջոցներով» (1919, թիվ 2, էջ 20-22): Ընդ որում, սկաուտական շարժումն, ունենալով ընդհանուր սկզբունքներ և մեթոդներ, պիտի յուրահատուկ գծերով առանձնանա ամեն ազգի համար. «Սկաուտիզմը կը ջանայ լաւ զինուորներ կազմել. նամանաւանդ ան կը կազմէ վստահելի և լաւ քաղաքացիներ»⁶: Հայրե-

⁶ Բաուել Ռ., Սկաուտական շարժումը և ապագա քաղաքացին, «Հայ սկաուտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 2, էջ 19-20:

նիքի վերաշինության գործում ՀՍԸՄ-ի հույսը երիտասարդության վրա է. «Ջանանք առողջ ու զուարթ, ձեռներեց և կորովի երիտասարդութիւն մը պատրաստել» (1919, թիվ 3, էջ 42): Սկաուտական շարժումը մեզանում հիմնելու ՀՍԸՄ-ի ջանքերը կարճ ժամանակում տալիս են գոհացուցիչ արդյունքներ: Մեկ տարվա ընթացքում ՀՍԸՄ-ն 25 մասնաճյուղ է բացում 4. Պոլսում և շրջակա մի շարք գավառներում, հայկական ուրուզ գաղթօջախներում և իր մարզիչներից չորսին ուղարկում է Հայաստան, որտեղ նույնպես պետական հոգածության ներքո ցանկանում են հիմնել ու զարգացնել սկաուտական շարժումը՝ ոգևորվելով ՀՍԸՄ-ի հաջողություններով և ձեռքբերումներով: «Հայ սկաուտ» հանդեսը անընդմեջ լուսարանում է այս գործընթացները թուրքիայում, Հայաստանում և հայկական գաղթօջախներում՝ փորձելով դառնալ ՀՍԸՄ-ի մասնաճյուղերն իրար կապող կամուրջ: Այդ կարգի մյուսերը կարելի է համարել ժամանակագրային բնույթի: Դրանցով հնարավոր է կազմել, օրինակ՝ Հայաստանի առաջին Հանրապետությունում սկաուտական կազմակերպության հիմնադրման ու գործունեության ժամանակագրությունը (1919, թիվ 3, էջ 33, էջ 41, 1920, թիվ 5, էջ 75, թիվ 9, էջ 137, թիվ 16, էջ 249, թիվ 19-20, էջ 289, 304- 306 և այլն) ըստ այդմ, 1919 թ. դեկտեմբերի 1-ի համարում լուր է տպագրվել այն մասին, որ Երևանում կազմվել է հայ արիների առաջին խումբը, և Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանին առաջարկվել է գլխավորել այն, իսկ սկաուտապետ Հ. Նազարյանի ցանկության հիման վրա հարաբերություններ են հաստատվել ՀՍԸՄ-ի հետ: Հայաստանի կրթության և արվեստի մինիստրության բժշկա-առողջապահական բաժնի պետ Հ. Արծրունու դիմում-խնդրանքին ի պատասխան՝ ՀՍԸՄ-ն Երևան է ուղարկել երեք մարզիչ (Վահան Չերազ, Տիգրան Խոյան, Օննիկ Յազմաճյան), որոնք միացել են այնտեղ արդեն աշխատող իրենց մյուս մարզիչ ընկերոջը՝ Եզնիկ Քաջունուն: Հայաստանի լուսավորության նախարարությունը և խորհրդարանը աջակցել են սկաուտական շարժմանը՝ գիտակցելով ու համակարծիք լինելով ՀՍԸՄ-ի հետ ռազմավարական նշանակության այն հարցում, որ սկաուտիզմը նպաստում է հայոց նորաստեղծ բանակի հզորացմանը: Իսկ բանակը «ազգի մը զրահն է... Ան է, որ կը պարտադրէ ազգերուն յարգել ուրիշ ազգերը, ճանչնալ անոնց իրաւունքը:

Արդար իրաւունք մը բանակով մը կարելի է պաշտպանել: Հայ քաղաքացի, վճարէ բանակին քու պարտքդ, որ չլսես քու զաւակներուդ ստրկութեան ծայրը և քու աղջիկներուդ բռնաբարումի աղտը» (1920, թիվ 8, էջ 121): Բանակի կայացմանը և սկաուտական շարժման զարգացմանը նպաստում էին ՀՍԸՄ-ի Կ. Պոլսի կենտրոնական վարչութեան և Հայաստանի համապատասխան կառույցների ջանքերով անցկացվող համահայկական մրցումներն ու օլիմպիական խաղերը: Որոշվում է համատեղ ուժերով սկիզբ դնել Մասյաց խաղերին, որոնք հայկական եռագույնի ներքո պիտի անցկացվեին կամ Արարատյան, կամ Ավարայրի դաշտավայրերում: Դրանց ընթացքում հայ սկաուտները պիտի մրցեին ոչ միայն օլիմպիական, այլև՝ ազգային խաղերում: Մրցումներում հաղթողները պիտի պարգևատրվեին «Մասյաց քաջեր» պատվանշաններով (1920, թիվ 8, 132-134):

«Հայ սկաուտ» հանդեսը վերլուծական հոդվածում ուրախությամբ արձանագրում է ՀՍԸՄ-ի մասնաճյուղերի նվաճումները. «Մենք որոշեցինք խօսքէն աւելի գործ ցույց տալ առանց աղմուկի... Մեր ուշադրութեան զխաւոր առարկան եղաւ կազմակերպել սկաուտական խումբեր...: Քիչ ատենին մէջ զգալի թիւ մը ունեցանք այս ուղիով»: ՀՍԸՄ-ն հիմնել է 10-ից ավելի մարզարան. կազմակերպել է ֆուտբոլային մրցաշարեր օտարերկրյա պետութիւնների սկաուտական թիմերի հետ, նաև՝ թենիսի, բասկետբոլի ու դաշտային խաղերի մրցումներ, «ուր երիտասարդութիւնը կրթիչ և մաքուր ժամանցներ ունեցած է՝ դուրս գալով սրճարաններու և գինետուներու ապականիչ մթնոլորտէն»: Ակաուտական շարժման շնորհիվ բազմաթիվ թուլակազմ երիտասարդներ ձեռք են բերել քաջ առողջութիւն, ինքնավստահութիւն և առաջնորդի ընդունակութիւններ:

Մարզական հաջողութիւններին զուգընթաց հայ սկաուտները զբաղվել են բարեգործությամբ: Օրինակ՝ նրանք «Ղազաթիոյ եկեղեցւոյ շրջափակին և Ակիւտարին մէջ» բացել են առաջին անվճար դեղատունը և շարժական հիվանդանոցը, որտեղ երկու ամսվա ընթացքում խնամել են 1500 զաղթականի: Ակիւտարում նրանք մասնակցել են որբահավաք աշխատանքներին: «Գաւառներէն մեր մասնաճիւղերէն եկած լուրերն ալ ոգեւորիչ են: Հոն ևս կը սարքեն մրցումներ և խաղեր,

որոնք յոյս և քաջալերանք կուտան տարագրութենէ վերադարձած բեկորներուն», - շարունակում է պատմել «Հայ սկաուտը»: Նրա կարծիքով ՀՍԸՄ-ի մասնաճյուղերի բացումը և սկաուտական շարժման տարածումը պայմանավորված էր դրա անհրաժեշտությամբ: Խթանիչ համագամանքներից էր այն, որ մուտքի գումար և անդամավճար չէին վերցնում կարիքավորներից, որոնց ՀՍԸՄ-ն տրամադրում էր հագուստ և մարզազգեստ: «Չենք ըսեր թէ բոլորովին անթերի է մեր գործը», բայց կարճ ժամանակի համար «արդիւնքն ինքնին շատ մեծ է: Սենք նոր ուժ և կորով կ'առնենք աւելի լայն քայլեր անելու դէպի առաջ մեր ազգային վերածնունդի արշալոյսը առողջ և պողպատէ սերունդով մը դիմաւորելու համար», - վերոնշյալ խմբագրականը եզրափակում է «Հայ սկաուտը» (1919, թիվ 1, էջ 7-9): Ակաուտական շարժումը շարունակում է ընդլայնել շրջանակները և մեծացնել ձեռքբերումները: Ասենք՝ 1919 թ. դեկտեմբերի 16-ի համարում ներկայացված «Իզմիրյան թղթակցությունը» տեղեկացնում է Իզմիրում գործող հայ սկաուտների «քաջաց բանակի» մասին: Հեղինակ Ջավեն Հաբեթյանը գրում է, թե իսկական քաջերի բանակ է Իզմիրի սկաուտական 8-րդ բանակը, որտեղ ընդգրկված են ազգային կենտրոնական որբանոցի 50 որբ Բաֆֆի կյուրճյանի շնորհիվ: Եղեռնից մազապուրծ եղած այս պատանի որբուկները վերածվել էին քաջարի, բարեսիրտ ու կարեկից հայ արիների (1919, թիվ 4, էջ 50): Հայ սկաուտները մասնակցել են 1919 թ. օգոստոսի 31-ին անցկացված օլիմպիական տարեկան խաղերին և արժանացել «օտար զինուորական պետերու իրական գնահատումի» (1919, թիվ 1, էջ 8): «Հայ սկաուտի» լուրերի բաժնում գետեղված մեկ այլ թղթակցությունից պարզվում է, որ ՀՍԸՄ-ն 3 ներկայացուցչով (Արտաշես Գավանդոյան, Ժիրայր Խորասանճյան, Գրիգոր Հակոբյան) մասնակցել է 1919 թ. հոկտեմբերի 7-ին անգլիական սկաուտական կենտրոնակայանում գումարված սկաուտական միջազգային ժողովին (նույն տեղում, էջ 16): ՀՍԸՄ-ն արդեն 1920-ին մտածում է նոր հիմքերի վրա դնել սկաուտական շարժումը, քանի որ կազմակերպությանն անդամակցողների քանակը գնալով աճում էր: «Հայ սկաուտը» անդրադառնում է այդ ուղղությամբ ՀՍԸՄ-ի գործադրած ջանքերին: Հանդեսում տպագրված լուրերից մեկում Արշակ Հակոբյանը պատմում է ՀՍԸՄ-ի սկաուտական

հանձնախմբի՝ 1920 թ. հունիսի 20-22-ին կայացած երկրորդ նիստի և այնտեղ ընդունված որոշումների մասին: Դրանք էին. «Սկաուտական խումբերը հինգ խմբակ է աւելի չեն կրնար պարունակել, սոյն սկաուտական խումբերը կունենան անջատ սկաուտական խորհուրդներ, կազմուած խումբին տասնապետներէն և փոխխմբապետներէն և որոնց կը նախագահէ խմբապետը: Սկաուտական խորհուրդին գործն է կազմակերպել խումբը, զբաղիլ անոր մասնագիտական (թէքնիք) գործերով, ապահովել կեդր. յանձնախումբին կողմէ՝ գալիք հրահանգներուն կիրարկումը, որոշել կիրարկման եղանակը, կազմակերպել արշաւներ և դասախօսութիւններ, պատրաստել տեղեկագրեր եւ այլն: Սկաուտական խորհուրդի մէջ վէթօի իրաւունք ունի խմբապետը, որ կ'ստորագրէ բոլոր հրամանները և տեղեկագրերը: Սկաուտական մօտիկ խումբեր կը կազմեն շրջան մը: Յետ այսու, տասնապետի, փոխխմբապետի աստիճաններն ու պաշտօնները պիտի անջատուին» (1920, թիվ 17-18, էջ 287): 1920 թ. «Յայ սկաուտի» հաղորդած հավաստի տվյալներով «սկաուտներու ներկայ թիվն է՝ Պոլիս՝ 200, Իզմիր՝ 300, Կահիրե և Սլեքսանդիա՝ 200, Բօր-Մայիտի գաղթավայրու մէջ՝ 250: Այժմ ԳԲԸՄ Մերսինի և Տօրթ Եօլի որբանոցներուն սկաուտներու թիվը 300 է: Վերջերս Ադանայի մէջ կազմուած է սկաուտական սպայակույտ մը» (1920, թիվ 5, էջ 73-74), որի հաջողություններով շատ է հպարտանում «Յայ սկաուտը»՝ լուրերի բաժնում պատմելով Աբգարյան վարժարանի սրահում նրանց կազմակերպած ցուցադրական հանդես-մրցույթի մասին (1920, թիվ 15, էջ 243-244): Գրատարակության առաջին տարում արդեն հանդեսի «Նամականի» բաժնում բազմաթիվ նամակներում հայ սկաուտների ծնողները, անվանի սկաուտները և մտավորականները ողջույնի ու շնորհակալության խոսքեր են հղում «Յայ սկաուտին» և ԳՍԸՄ-ին: Օրինակ՝ ԳԲԸՄ վարժարանների սկաուտների վարիչ Գամազասպ Փանոսյանը գրում է. «Ուրախութեամբ ստացայ ԳՍԸՄ «Յայ սկաուտ» պաշտոնաթերթը: Ուրախալի, մանաւանդ խիստ գովելի է հայութեան մէջ սկաուտական այս շարժումը տեսնել» (1920, թիվ 5, էջ 73-74): Ջավեն Գաբթյանի նամակում կարդում ենք, թե առանց «Յայ սկաուտի» որևէ սկաուտ «չպիտի ունենար ճշմարիտ առաջնորդ մը, որ իրեն ցուցնէր իր ընթանալիք ուղիղ ճամբան»: Նրա կարծիքով ԳՍԸՄ-ն

առաջնորդում է դեպի «բարոյականի Արարատը անմահ ցեղի մը քաջ
զավակները» (1919, թիվ 2, էջ 23): ՀՍԸՄ-ն նույնպես «Հայ սկաուտի»
էջերում մատնանշում է իր հիմնական նպատակը, որի իրագործման
համար կոչ է անում բոլոր մասնաճյուղերին գործել միասնաբար և հա-
նուն հայրենիքի շահերի սկսել «շատ լուրջ, շատ ծանր գործ. տեղափո-
խել ժողովուրդ մը, ազգ մը գերութեան երկրէն դեպի անկախ հայրե-
նիք... Ոչ մէկ առթիւ սկաուտական կազմակերպութիւններս այնքան օգ-
տակար պիտի կրնանք ըլլալ, որքան մեր ժողովուրդին մնացած բեկոր-
ները դեպի երկիր առաջնորդելու պարագային» (1920, թիվ 11, էջ 169):

**МАРИАМ ОВСЕПЯН
ИИ. НАН РА**

**ЖУРНАЛ „АРМЯНСКИЙ СКАУТ“, ИЗДАВАЕМЫЙ В
КОНСТАНТИНОПОЛЕ В 1919-1922 гг.**

РЕЗЮМЕ

Журнал „Армянский скаут“ в своих публикациях давал пред-
ставление о скаутизме, о скаутском движении, о правилах пове-
дения скаутов и об их обязанностях. Журнал способствовал
патриотическому воспитанию молодежи и обучению принципам
здорового образ жизни. Журнал „Армянский скаут“ связывал
воедино армянские скаутские организации действующие в Тур-
ции, Армении и других странах мира. „Армянский скаут“ освещал
деятельность и спортивные мероприятия, проводимые этой
организацией. С помощью этого журнала можно составить хро-
нологию деятельности скаутской организации в Республике Ар-
мения в 1918-1920 гг.

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԿՈՄԻ
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ.**

Ամերկոմի գործունեությունը քիչ թե շատ կանոնակարգված էր թե՛ Հայաստանի առաջին Հանրապետությունում և թե՛ Խորհրդային Հայաստանում ու գտնվում էր պետական վերահսկողության ներքո, մասամբ ուղղորդվում էր նրա կողմից: Բոլորովին այլ էր Ամերկոմի գործելակերպը Հայաստանի սահմաններից դուրս ձևավորված խոշոր գաղթավայրերում, ուր հայ կարոտյալներին օգնելը պետք է համաձայնեցվեր օտար պետությունների կառավարող շրջանների, ինչպես նաև այդ երկրներում ազգանպաստ գործ կատարող հայկական տարբեր կազմակերպությունների հետ:

1920-ական թթ. սկզբին Ազգային պատվիրակությունը ներկայցնում և պաշտպանում էր օտար երկրներում պատսպարված հայ ժողովրդի շահերը և փորձում կամուրջ նետել աշխարհով մեկ ցրված հայերի և վերածնվող Հայաստանի միջև:

Ազգային պատվիրակության անդամները և անձամբ նախագահ՝ Գաբրիել Նորատունկյանը բազմիցս անձնական հանդիպումներ են ունեցել ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Եվրոպական մյուս պետությունների բարձրաստիճան այրերի և բարեգործական հաստատությունների հետ՝ այս անգամ ջանալով հիմնականում լուծել հայ գաղթականությանը աջակցելու, նրան հայրենիքում վերաբնակվելու հնարավորություն տալու հարցը:

Հայ ազգային պատվիրակության տարբեր հանձնաժողովներում ընդգրկված մարդկանց մեջ էին ժամանակի նշանավոր մտավորականներ Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը, Ջապել Եսայանը, Արշակ Ալպոյանը, Լևոն Շանթը, Հովհաննես Խան Մասեհյանը, Ավետիս Ահարոնյանը և այլք, որոնք ակտիվ համագործակցում էին Ամերկոմի՝ Մերձավոր Արևելքի և հարակից երկրների ներկայացուցիչների հետ, իրենց զեկուցագրերով, դիտողություններով ոչլուրացնում նրանց

գործունեությունը, նպաստում հայապահպանության ընդհանուր գործին:

1921 թ. դեկտեմբերի 18-ին Ջապել Եսայանը ծավալուն տեղեկագիր է ներկայացրել Ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանին Կիլիկիայի և Սիրիայի որբանոցների վիճակի մասին, որի մեջ քննության է առել նաև Ամերկոմի գործունեությունը այդ տարածքներում:

Ըստ այդ տեղեկագրի՝ մինչև 1920 թ. հունիսի 10-ը Կիլիկիայում և Սիրիայում եղել են մոտ 8399 որբեր (ըստ ֆրանսիական խնամատարության վիճակագրության), որոնք կենտրոնացված են եղել Ադանայում և նրա շրջակայքում (1297 որբ), Մերսինում (1055), Դորթնոլ (779), Այնթապ (2000), Ուրֆա (150), Հաճըն (750), Մարաշ (800), Հայլեպ (1400), Լիբանան (150)¹:

Պատերազմական գործողությունների հետևանքով որբերը այս վայրերից տեղից տեղ են տեղափոխվել, և նրանց մեծ մասի խնամքը ստանձնել են Ամերիկյան միսիոներները, Ամերիկյան Կարմիր խաչը և նպաստամատույց կոմիտեն:

Նշելով, որ Ամերկոմի որբանոցներում դաժնորդ որբերը անհամեմատ ավելի բարվոք և ապահով վիճակում են գտնվում, Ջապել Եսայանը ներկայացրել է նաև իրենց համատեղ աշխատանքը որբերի կրթության հարցը կարգավորելու ուղղությամբ. «Շնորհիւ մեր մէջ տիրող բացարձակ համաձայնութեան՝ Անգլիական և Ամերիկեան ներկայացուցիչները միշտ սիրալիր համակրութեամբ ընդունեցին մեր առաջարկութիւնները եւ սիրայօժար ընդունեցին կարգ մը փոփոխութիւններ մտցնել իրենց որբանոցներու կրթական ծրագրին եւ ուսուցման լեզուին վերաբերմամբ, քանի որ իրենց մատակարարութիւնը եւ խնամքը կատարեալ կերպով լավ էր»²:

Իրավիճակը այլ էր Հունաստանի որբանոցներում և Հունաստանի որբանոցների ընդհանուր տնօրեն Հ. Խաչատրյանը 1923 թ. փետրվարի 9-ին Ազգային պատվիրակությանը ուղարկած տեղեկա-

¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 338, թ. 11:

² Նույն տեղում, թթ. 11-13:

գրում, ներկայացնելով որբանոցների ընդհանուր վիճակը, նշում է, որ Ամերկոմի ներկայացուցիչ Չարլզ Վիքրիի հետ այցելել են Օրոփուսի որբանոցը, ուր հավաքվել էին Ակյուտարի, Օթթազյուդի և Պեշիկթաշից բերված շուրջ 190 որբեր: Այցելելով նաև Կորֆուի, Լութրաքի որբանոցները՝ միասին խորհրդակցություն են ունեցել և քննարկել իրենց հետագա գործելակերպը: Հ. Խաչատրյանը նշում է, որ ամերիկացի պաշտոնյաները հնարավոր ամեն ինչ անում են որբերի համար, սակայն նրանց թվաքանակը շատ քիչ է, քանի որ ստիպված են եղել իրենց աշխատակիցների մի մասին թողնել Անատոլիայում և Պոլսում՝ մնացած որբերին օգտակար լինելու նպատակով, որի պատճառով Հունաստանում կուտակված հազարավոր որբերի համար պահանջվող պաշտոնյաների թիվը խիստ նվազել է:

Սակայն փետրվար-մարտ ամիսներին Հունաստանից Ազգային պատվիրակության հասցեով ստացված շատ նամակներ ուղղակի հակառակ և հակասական տեղեկություններ են հաղորդում: Այսպես՝ Լութրաքի երկսեռ որբանոցի ուսուցիչների համախոսականում ցավով արձանագրվում է, որ Ամերկոմը որոշել է հայ և հույն որբերին տեղավորել միևնույն որբանոցներում և նրանց տալ հունական դաստիարակություն, քանի որ չափահաս որբուհիները տեղավորվում էին հույն ընտանիքներում՝ իբրև սպասուհիներ, իսկ տղաները լրացնում էին արհեստավորների բանակը: Սրանով Դամոկլյան սրի պես հայ որբերի գլխին կախվում էր ուժացման վտանգը, որի համար և իրենց անհանգստությունն էին հայտնում որբանոցի ուսուցիչները:

Ուսուցիչները ներկայացրել են Ամերկոմի կրթական ծրագիրը, համաձայն որի անչափահաս որբերը պիտի զատվեին չափահասներից և ձուլվեին հույն որբերի և աշակերտների հետ: Հույն կառավարությանն էր վերապահվելու կրթության վերահսկողության գործը, հայոց լեզվի, պատմության և կրոնի ժամերը հանվելու էին դպրոցական ծրագրից, դասավանդումը տարվելու էր հունարենով³:

1923 թ. մարտի 7-ին Արշակ Ալպոյաճյանը մի ընդարձակ նամակ է ուղարկել Գ. Նորատունկյանին վերոհիշյալ հրահանգի առիթով՝

³ Նույն տեղում, գ. 883, ք. 2

այն անվանելով ոչ միայն անվայելուչ, այլև անհեթեթ մի բան և խիստ անհարիր հատկապես հանրային-մարդասիրական կազմակերպության գործելաոճին: Ա. Ալպոյաճյանը գրում է, որ որբանոցների ընդհանուր տեսուչ Յ. Խաչատրյանը միաժամանակ Ամերկոմի աշխատակից է, և նրա հաղորդած տեղեկությունները միակողմանի են: Վերջինս Պոլսի լրագրողներին հավաքել և սպառնացել է, որ եթե նրանք շարունակեն քննադատական հոդվածներ տպել նպաստամատույցի մասին, ապա սրանք կդադարեցնեն օգնությունը, և որբերը կմնան բոլորովին անխնամ և անտեսված:

Ամերկոմի աշխատակիցներն էլ իրենց հերթին աշխատում են ինչքան հնարավոր է շատ 12-ից 15 տարեկան որբուհիների՝ իբրև սպասուհիներ տրամադրել հույն ընտանիքների, իսկ տղաներին իբրև էժան բանվորական ուժ օգտագործել շինարարության, իրենց տարիքին չհամապատասխանող այլ ծանր աշխատանքների մեջ⁴:

Ա. Ալպոյաճյանը նամակն ավարտում է շատ ծանր շեշտադրությամբ. «Չեմ խոսիր այն զարհուրելի ու վայրագ պատիժներու մասին, որոնք կգործադրուին Լուբրաքիի ամերիկացի տնօրէնուհիին կողմէն, և որոնց արծազանք պիտի ըլլայ անշուշտ մամուլը: Աեր որբերուն ապագան փչանալէ զատ, ինչպէս կը տեսնուի, անոնց անբարոյացման և ապազգայնացման վտանգն ալ շատ բացորոշ կերևայ այս կարգադրութեանց ներքև...»⁵:

Ազգային պատվիրակությունը, փետրվար-մարտ ամիսներին քննության առնելով Հունաստանի որբանոցներից ստացվող բոլորներն ու ահազանգները, որոշում է անձամբ քննել իրավիճակը և հնարավորության սահմաններում շտկել այն:

Գ. Նորատունկյանի հանձնարարությամբ Վ. Թեքեյանը մեկնում է Հունաստան՝ այցելելու այնտեղի որբանոցները, անաչառ քննություն կատարելու և Ազգային պատվիրակությանը տեղեկություն հաղորդելու առաքելությամբ: Վ. Թեքեյանին ուղղած հանձնարարականում մատնանշելով, որ Ազգային պատվիրակությունը անընդհատ իրարամերժ և

⁴ Նույն տեղում, գ. 884, թ. 4:

⁵ Նույն տեղում, թթ. 4-5:

հակասական տեղեկություններ է ստանում այս հարցի առնչությամբ, որ այդ կարգի տեղեկություններ սկսել են տպագրվել նաև հայ մամուլի մեջ, Գ. Նորատունկյանը խնդրում է ճշտել, թե արդյոք իրականությանը համապատասխանում են Ա. Ալպոյաճյանի հայտնած տեղեկությունները Ամերկոմի որբանոցներում սաների և ուսուցիչների համար ստեղծված անբարենպաստ դրության մասին:

Վ. Թեքեյանի շրջագայության մասին Գ. Նորատունկյանը տեղեկացնում է նաև Ա. Ալպոյաճյանին և խնդրում նրա անաչառ օգնությունը⁶:

Հետաքրքիր է, որ Վ. Թեքեյանի շրջագայությունը Հունաստանի որբանոցներով տևել է մոտ երեք ամիս, որի ընթացքում Ազգային պատվիրակությունը պարբերաբար ստացել է նրա ուղարկած զեկուցագրերը իր կատարած ուսումնասիրությունների շուրջ և Փարիզից նրան ուղղել նոր հարցեր ճշտելու առաջարկներ: Այսպես, գրություններից մեկում Վ. Թեքեյանը նշում է Հունաստանում ապաստանած հայ որբերի տեղակայման և թվի մասին (1923 թ. ապրիլի դրությամբ), ըստ որի է դիպսոսում կենտրոնացվել է 2000 որբ, Լուբրաքիայում՝ 1500, Աիրա կղզում՝ 500, Քորֆուում՝ 2500, Օրոփոսում՝ 700 (ընդամենը՝ 7200 որբ)⁷:

Մի այլ գրությամբ հավաստում է, որ Քորֆուից հաղորդած տեղեկությունները ստույգ են, և որ հենց իր ժամանած օրը 200-ից ավելի տղա որբերի ուղարկել են Աիրա՝ Ամերկոմի կողմից կառուցվող շենքերի շինարարության աշխատանքներին մասնակցելու, իսկ որբուհիներին տրամադրում են հույն ընտանիքներին՝ իբրև սպասուհիներ՝ պատճառաբանելով, որ նրանք էլ քրիստոնյա ազգ են, և աղջիկների վիճակը նրանց ընտանիքներում ավելի տանելի կլինի⁸:

«Չափահաս որբ մանչերն ու աղջիկները ինքնապահ դարձնելու համար, - գրում է Լ. Ազատյանը, - Ամերիկեան Նպաստամատոյցը յարմար վայրեր նկատած էր Եգիպտոսը, Պուլկարիան, Սակեդոնիան և Թրակիան:

⁶ Նույն տեղում, գ. 884, ք. 9:

⁷ Նույն տեղում, գ. 885, ք. 4:

⁸ Նույն տեղում, թթ. 18-20:

Որբերու առաջին կարաւանը հին Յունաստանի որբանոցներէն Գաւալա կու գայ 1923 մայիսին: Ամերիկեան Նպաստամատոյցը այս քաղաքին մօտիկ Չաթալճա եւ Էտրինէճիկ գիւղերուն մէջ կը հաստատէ որբանոց-կայաններ, ուր մանչերն ու աղջիկները ժամանակ մը մնալէն ետք՝ որպէս հոգեզաւակ կը յանձնուին յոյն ընտանիքներու:

Այս որբերուն ապազգայնացուցիչ կացութիւնը հայ մամուլի մէջ մեծ աղմուկ կը յարուցանէ, ուստի Փարիզի մեջ Չայ Ազգային Պատուիրակութիւնը հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Վահան Թեքեանին կը նշանակէ իր լիազօր ներկայացուցիչը՝ զբաղելու Յունաստանի, Աուրիոյ, Եգիպտոսի եւ Զուիցերիոյ մէջ գաղթականներու եւ մասնաւորապէս որբերու կացութիւնը բարւոքելու աշխատանքով⁹:

Այս ընթացքում, սակայն, Ազգային պատվիրակության գրասենյակում ստացվել են նաև Ա. Ալպոյաճյանի նամակները, որոնցում նա խիստ արժևորում է Վ. Թեքեյանի շրջագայություններն ու գործադրած ջանքերը՝ որբանոցներում աշխատող ամերիկացի պաշտոնյաների և հայ ուսուցիչների մեջ փոխըմբռնում հաստատելու, որբանոցային կյանքում ինչ-ինչ բարեփոխումներ մտցնելու ուղղությամբ:

Վ. Թեքեյանի, Ս. Խաչատրյանի, Ա. Ալպոյաճյանի զեկուցագրերը¹⁰ Չայ ազգային պատվիրակությունը քննության է առնում և 1923 թ. հունիսի 2-ին Փարիզում հրավիրում խորհրդակցություն, որին մասնակցում են նաև Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի, Չայ բարեգործական ընդհանուր միության, Խորհրդային Չայաստանի ներկայացուցիչներ: Այս խորհրդակցությունում նպաստամատույցի ղեկավարները խոստանում են որբերի հետագա ճակատագիրը վճռելու հարցում հաշվի նստել նաև հայկական կազմակերպությունների կարծիքի հետ, հայ որբերին կրթել Ազգային պատվիրակության ներկայացրած ժրագրերին համապատասխան¹¹:

⁹ Ազատեան Լ., Չայ որբերը Մեծ եղեռնի, գիրք երրորդ, Լոս Անճելյոս, 2002, էջ 107:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 884, քք. 18-19, 28-34, գ. 885, քք. 23-30, 46-51, գ. 887, քք. 1-2:

¹¹ Լույս տեղում, գ. 885, թ. 44:

Այս ամենի հետևանքով Հունաստանից 2500 որբեր տեղափոխվում են Եգիպտոս, իսկ որբերի տեղափոխումը Քավալա նվազում է և դադարում միայն 1926 թվականին:

Պետք է ասել, սակայն, որ թե՛ Ազգային պատվիրակության, թե՛ Հայ բարեգործական ընդհանուր միության, անգամ Խորհրդային Հայաստանի ջանքերը այս ուղղությամբ շատ քիչ արդյունք են տվել:

Խոստումներ ու հավաստիացումներ տալով՝ Ամերկոմը ծրագրված քաղաքականություն է իրականացրել հայ որբերի նկատմամբ՝ ամենևին հաշվի չառնելով ժողովրդի ազգային շահերը, որբերին հայ պահելու ուղղությամբ նրան արված բազմաթիվ դիմումներն ու առաջարկները, թախանձագին խնդրանքները:

Այս առումով բոլորովին այլ կարծիք ուներ Ա. Ալպոյաճյանը: Նա գտնում էր, որ Ամերկոմի գործունեությունը կարգավորելու համար արդեն անցել է նրանց բարյացակամության վրա հույս դնելու ժամանակը, և եթե Ազգային պատվիրակությունը հակված է որբերին փրկելու գաղափարին, ապա պետք է փոխի իր քաղաքականությունը և կտրուկ միջոցներ ձեռնարկի, նոր ուղիներ փնտրի հարցը կարգավորելու համար:

Ազգային պատվիրակությունը շուրջ երեք տարի համառ և հետևողական աշխատանք է տարել Ամերկոմի՝ Հունաստանի որբանոցներում ապաստանած որբերի կյանքն ու հետագա ճակատագիրը կարգավորելու ուղղությամբ, քանի որ հենց այս տարածքում է Ամերկոմի գործունեությունը հեռու եղել գոհացուցիչ լինելուց:

Ազգային պատվիրակության հասցեով ստացված հայ ուսուցիչների և որբերի համախոսականները, Վ. Թեքեյանի, Ա. Ալպոյաճյանի, Ա. Չոպանյանի, Թրակիայի և Մակեդոնիայի հայկական թեմի առաջնորդարանի փոխանորդ Վարդան քահանա Կարագոյանի, Գ. Կյուլպենկյանի նամակները,¹² որոնք որբերի ուժացման ահազանգ էին հնչեցնում, չէին կարող անհետևանք մնալ, ուստի Ազգային պատվիրակությունը փորձում էր հարցը կարգավորել Ամերկոմի և՛ տեղերում գործող

¹² Նույն տեղում, գգ. 241, 884, 885, 886, 887, 891:

պաշտոնյաների, և՛ Նյու Յորքի կենտրոնական գրասենյակի ղեկավար կազմի միջոցով¹³:

Ազգային պատվիրակությունը զուգահեռաբար բանակցում էր նաև Խորհրդային Չայաստանի կառավարության հետ Ամերկոմի որբանոցներից ազատվող չափահաս որբերին հայրենիք տեղափոխելու ուղղությամբ¹⁴: Այս կարգի բանակցություններ տարվում են նաև Չայ Բորեգործական ընդհանուր միության, Պոլսի, Երուսաղեմի պատրիարքարանների, Կիլիկիո հայոց կաթողիկոսարանի և անձամբ Ասիակ Բ կաթողիկոսի հետ¹⁵:

Ազգային պատվիրակության անդամները կարծում էին, որ ուժացման վտանգը բոլորից շատ սպառնում է Չունաստանում ապաստանած որբերին, որոնք հույն որբերի հետ ստանում էին հունական կրթություն, աշխատանքի էին անցնում հունական ընտանիքներում, և կարծես այնքան էլ դեմ չէին Չունաստանից որբերի տեղահանմանը:

Գ. Նորատունկյանը պնդում է, որ Ազգային պատվիրակությունը միանշանակ գտնում է, որ հայ որբերի հանգրվանը Խորհրդային Չայաստանն է լինելու, այլապես ուր էլ գնան, վաղ թե ուշ նրանք դարձյալ կանգնելու են ծուլման վտանգի առաջ, և այն, ինչ արդեն սկսվել է Չունաստանում, վաղը շարունակվելու է մյուս երկրներում:

Ազգային պատվիրակության, Ամերկոմի և Խորհրդային Չայաստանի երկարատև բանակցությունները հանգեցրին նրան, որ 1924 թ. մարտի 3-ին Անդրկենտգործկոմը որոշում կայացրեց 10000 հայ գաղթականների Մերձավոր Արևելքից, Թուրքիայից և հիմնականում Չունաստանից տեղափոխել Չայաստան¹⁶:

Սակայն 1924 թ. մարտի 29-ից մինչև 1925 թ. հունվարի 19-ը Չայաստանը կարողացավ ընդունել միայն 4167 գաղթականների, որոնց թվում կային նաև չափահաս և մանկահասակ որբեր¹⁷:

¹³ Նույն տեղում, գգ. 260, 263:

¹⁴ Նույն տեղում, ց. 1, գ. 260, քք. 30, 46:

¹⁵ Նույն տեղում, գ. 914, քք. 33-35, գ. 846, քք. 16-23, գ. 914, քք. 28-30:

¹⁶ Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 419, ք. 153:

¹⁷ Նույն տեղում, գ. 418, ք. 28:

1925 թ. աշնանը Հունաստանից, Միջագետքից և այլ վայրերից ներգաղթեցին ևս 5016 գաղթականներ, որոնցից 3016-ը Հունաստանից էին:¹⁸

Հայ ազգային պատվիրակությունը մեծ ջանքեր գործադրեց և Ամերկոմի հետ համագործակցելու միջոցով նպաստեց օտար երկրներում հայապահպանման խիստ կարևոր գործին:

*СУРЕН АВЕТИСЯН
ИИ НАН РА*

СОТРУДНИЧЕСТВО АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ДЕЛЕГАЦИИ С АМЕРКОМОМ В 1920-ЫЕ ГОДЫ

РЕЗЮМЕ

В начале 1920-ых годов Армянская национальная делегация для нашедших приют за границей и создавших многочисленные общины армян делала попытки сыграть ту же роль, которую выполняли правительства первой Республики Армения и Советской Армении.

Миролюбивая деятельность Амеркома, направленная на попечение беженцев и сирот Армении, находящихся за пределами страны, имела свои как положительные, так и отрицательные стороны, а в этом свою значительную роль сыграла Армянская национальная делегация.

Национальная делегация посредством поочередных переговоров с Советской Арменией, Амеркомом и другими благотворительными организациями делала попытки перевести на родину многочисленных беженцев и сирот, поскольку сложилось довольно неблагоприятное положение для армян.

Таким образом, сотрудничество Армянской национальной делегации с Амеркомом сыграло значительную роль в деле сохранения национальности нашедших приют за пределами Армении беженцев и сирот.

¹⁸ Նույն տեղում, գ. 396, ր. 81:

ՀՈԳԵՎՈՐ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆԿՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴՂԱՅ ՅԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ թթ.

1917 թ. Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած տարիները հայ իրականության մեջ հասարակական-քաղաքական կյանքի մի շրջան դարձան, որն ինչ-որ տեղ ստվերեց եկեղեցու ունեցած հասարակական-քաղաքական կշիռը՝ չլուծված հիմնախնդիրների լույսի ներքո: Ողջունելով ցարիզմի անկումը՝ հայ հոգևորականությունը գիտակցում էր ռուսահայ իրականության մեջ եկեղեցու դիրքերի թուլացման վտանգը. «Քառս մտքեր կան ինչպես հոգևորական դասի, նույնպես եւ աշխարհականների մէջ»¹:

Էջմիածնի «Արարատ» ամսագրում իր մտահոգությունն արտահայտող Գյուտ վարդապետը մատնանշում է, որ օրեցօր աճող քառսը հայ եկեղեցու համար օգտակար չէ, ինչն ակնհայտ ցույց է տալիս, որ հայ հոգևորականության շրջանում ևս գիտակցվում և բարձրաձայնվում էր նոր իրողությունների փաստը: 1917 թ. փետրվարի ծնունդ ժամանակավոր կառավարությունը, հռչակելով դեմոկրատական ազատություններ, լայն հնարավորություն էր բացել եկեղեցու առջև ազգային կյանքի առաջադիմության, հոգևոր-եկեղեցական և բարոյական խնդիրների լուծման և կանոնավորման համար. «...մինչ 1917 թ. եկեղեցու առջև արդեն հասունացած խնդիրները նոր քաղաքական, ազգամիջեան յարաբերութիւնների պայմաններում, թելադրում են եկեղեցու բարեկարգման խնդիրը»²:

1917 թ. միջազգային քաղաքական բարդ պայմաններում հասունացել էր եկեղեցական համագումարի հրավիրման հարցը, ուր քննարկման առարկա խնդիրները ոչ միայն զուտ եկեղեցական էին, այլ նաև համազգային: 1917 թ. ապրիլի 7-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն առաջին անգամ իր թիվ 678 կոնդակում հիշատակում է եկե-

¹ «Արարատ», էջմիածին, 1917, Յունիս-Յուլիս, էջ 487:

² Մելիքեան Վ., էջմիածնի եկեղեցական համագումարը, «Բազմավեպ», Վենետիկ-Ս. Ղազար, 2003, թիւ 1-4, էջ 267:

ղեցական ազգային ժողովի մասին: Էջմիածնի եկեղեցական համագումարը տեղի ունեցավ 1917 թ. հունիսի 12-23-ը, որի բանաձևերն ամփոփոխ գրքույկը լույս տեսավ նույն թվականին Էջմիածնում՝ «Ռուսահայ հոգևորականության համագումարի (1917 թ. յունիս) բանաձևեր» անունով: Այս համագումարին ներկա էին 29 կուսակրոն և 38 ամուսնացած հոգևորականներ, ընդամենը 67 հոգի, «...որոնցից երեսուներկուսը Էջմիածնի միաբանության անդամներ էին, իսկ մնացած երեսունհինգը՝ ուսահայոց վեց թեմերը ներկայացնող ամուսնացած քահանաներ»³: Ինչ վերաբերում էր համագումարի վճիռների իրավական նշանակության խնդրին, ապա այն ուներ նախապատրաստական կարգավիճակ, քանի որ համագումար իրավիճակը կոնդակը նրան «նախապատրաստական» անուն էր տալիս. «Այս ժողովը օրենսդիր լինել չի կարող, այլ միմիայն խորհրդակցական է կամ նախապատրաստական, որի որոշումները և վճիռները Հայոց եկեղեցւոյ համար պարտադիր լինել չեն կարող, այլ որպէս ցանկութիւն առաջարկուել ի տնօրէնութիւն ապագայ ազգային եկեղ. ժողովին»⁴:

Ազգային եկեղեցական նոր ժողով հաջորդող տարիներին անցկացնել չհաջողվեց տեղ գտած քաղաքական իրադարձությունների պատճառով, ուստի 1917 թ. հունիսի եկեղեցական ժողովի առաջարկարեփոխումների մի մասը (Գրիգորյան տոմարի ներմուծումը, այրի հոգևորականների ամուսնությունը, երգոհոնի գործածությունը ևն) կաթողիկոսի 1922-1923 թթ. կոնդակներով օրինականացվեցին⁵:

1924 թ. հունվարի 1-ին, թիվ 1 կոնդակով հաստատվեց Գերագույն Հոգևոր Խորհուրդ և վերացվեցին Սինոդն ու Հայրապետական Դիվանը:

Ռուսահայ հոգևորականության այս համագումարն ունեցավ պատմական ու գործնական մեծ նշանակություն հայ եկեղեցու համար՝

³ Խաչիկ Բաֆֆի Ղազարյան, Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, 1999, էջ 178:

⁴ Ռուսահայ հոգևորականության համագումարի (1917թ. Յունիս) բանաձևեր, Ս. Էջմիածին, 1917, էջ 7-8:

⁵ Գիւտ եպս., Հայ եկեղեցու բարենորոգութեան խնդիրը եւ ազգային եկեղեցական ժողովը, Փարիզ, 1926, էջ 34:

հասարակական-քաղաքական բարոյ գործընթացներում արժարժեւով համահայկական խնդիրներ:

Արդեն Հայաստանի առաջին Հանրապետության գոյության շրջանում հայ եկեղեցին ներգրավվեց երկրի առջև ծառայած խնդիրների լուծմանը. «ՀՀ տարածքում գտնվող կրոնական կառույցների դրոշմունը չէր կարող արմատապես տարբերվել ընդհանուր առմամբ պետության ներսում տիրող սոցիալ-տնտեսական եւ քաղաքական անկայուն պայմաններից, որոնք, բնականաբար, իրենց ազդեցությունն էին թողնում: ...Այսուհանդերձ, Հայ եկեղեցին ամեն մի հնարավորություն օգտագործում էր իր ներքին դրոշմունը կայունացնելու համար՝ միաժամանակ ձգտելով ըստ կարելիւյն զերծ մնալ ներպետական եւ համազգային նշանակւթյան ճգնաժամային երեւոյթների ազդեցւթյունից»⁶:

Խորհրդային կարգերի հաստատումով եկեղեցին թակոխեց պատմւթյան նոր շրջափուլ՝ լի անցյալից ժառանգած հիմնախնդիրներով և ապագայի ծանր պայմաններով: Նախևառաջ, Խորհրդային Ռուսաստանում, ապա նաև Խորհրդային դարձած մյուս հանրապետւթյուններում ուժեղ պայքար ծավալվեց եկեղեցու դեմ: Խորհրդային Ռուսաստանում ռուս ուղղափառ եկեղեցու նկատմամբ կիրառված պայքարի և բռնւթյունների մեթոդները դարձան էտալոնային մյուս հանրապետւթյուններում: Եկեղեցու և կրոնի դեմ պայքարը սկսվեց բոլշևիկների իշխանւթյան զալուց անմիջապես հետո:

Խորհրդային իշխանւթյան՝ ժողկոմխորհի, առաջին օրենսդրական որոշումներից էր 1918 թ. հուլիսի 20-ի «Խղճի ազատւթյան, եկեղեցական և կրոնական ընկերւթյունների մասին» դեկրետը, ուր ասվում էր .«Կրոնական պաշտամունքների կատարման ազատւթյունը և հակակրոնական պրոպագանդի ազատւթյունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների համար»⁷: Այս դեկրետով վերացվում էին դավանանքի հետ կապված բոլոր իրավական արտոնւթյուններն ու պար-

⁶ Հարւթյունյան Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասարակական եւ դիվանագիտական գործունեւթյունը 1918-1920 թթ., Երևան, 2004, էջ 4:

⁷ Կոմունիստական պարտիան և սովետական կառավարւթյունը կրոնի և եկեղեցու մասին, Երևան, 1960, էջ 55-56:

տականությունները: Համանման ուրիշ դեկրետներ և սկզբնադրույթներ հիմք են ծառայել ծավալելու եկեղեցու և հոգևորականությունն ղեմ ուղղված պայքար:

1922 թ., ինչպես ռուս ուղղափառ եկեղեցու, այնպես էլ Հայ Առաքելական եկեղեցու համար դարձավ նոր փորձությունների շրջան, քանի որ Համառուսաստանյան Կենտգործկոմը գաղտնի դեկրետ ընդունեց եկեղեցական արժեքների առգրավման մասին:

Ռուս ուղղափառ եկեղեցին, չդիմանալով աճող ճնշմանը, 1922-1923 թթ. տրոհվեց մի քանի հոսանքների, որոնցից նորոգչողական կամ «կենդանի» կարմիր եկեղեցական հոսանքը խրախուսվում էր բուլշևիկյան ղեկավարության կողմից՝ ուղղորդվելով պաշտոնական պատրիարքության դեմ: Նորոգչողական հոսանքը կամ «Ազատ եկեղեցականների» շարժումը Կովկաս և Հայաստան թափանցեց կարճ ժամանակ անց՝ հանդես գալով որպես «ըմբոստացում» պաշտոնական եկեղեցու դեմ. «Ազատ եկեղեցու հիմնադրմանը 1925 թ. մայիսին հաջորդեց նաև միաբանության՝ «Ազատ եկեղեցական եղբայրության» ստեղծումը»⁸, իսկ մինչ այդ՝ 1924 թ. նոյեմբերի 27-ից, սկսել էր լույս տեսնել «Ազատ եկեղեցի» շաբաթաթերթը:

Թիֆլիսում հիմնադրված եկեղեցական եղբայրությունը իր «Մեր Նպատակը» հրատարակության մեջ մատնանշում էր Ս. Էջմիածնի անցյալի և ներկայի գործունեության բազմաթիվ հարցեր, փորձելով ապացուցել, որ. «...ռուսահայ եկեղեցին ուժեղ կերպով ենթարկվում էր ցարական պետության քաղաքական ալիքների հոսանքներին և զրկված էր հնարավորությունից՝ թեկուզ իր վարչական մասում որոշ բարեփոխություն մտցնել, ցույց է տալիս այն հանգամանքը, որ Ռուսաստանից դուրս գտնված մեր եկեղեցական կյանքը իր վարչական և մասամբ էլ՝ ծխական խնդիրներում բոլորովին նման չէր ռուսահայ եկեղեցական կյանքին»⁹: Որպես օրինակ մատնանշվում էր տաճկահայ եկեղեցին, ուր բացակայում էր հոգևորականության «միահեծան» կամքը (այդպես էին գտնում «Ազատ եկեղեցական»-ները), իսկ եկեղեցին կա-

⁸ Խաչիկ Բաֆֆի Ղազարյան, նշվ. աշխ., էջ 218:

⁹ Տեր-Հարությունյան Հ., Մեր Նպատակը. Հայոց եկեղեցական բարեփոխությունը եվ նրան հասնելու միջոցները, Թիֆլիս, 1926, էջ 6:

ռավարվում էր ժողովրդից ընտրված երեսփոխանների ժողովներով ու այլ խառը մարմիններով: Այս օրինակին ազատ եկեղեցականները հակադրում էին վիրահայոց հոգևոր կյանքի իրողությունները և, մասնավորաբար, Թիֆլիսի հայ քահանայությանը: Այսպես, եկեղեցական եղբայրությունը գոություն է կազմում Վրաստանի հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Չորեքչյանի անունով, ուր ներկայացված էր եկեղեցական բարեփոխումներ անցկացնելու առաջարկ-պահանջներ. «Մեր հոգևորականությունը Վրաստանում, ուր դուք պաշտոն ունիք իբրև թեմական առաջնորդ միանգամայն իրեն անհամապատասխան դերումն է գտնվում և շնորհիվ այդ բանի, ժողովրդի սառնությունը դեպի եկեղեցին և հոգևոր դասը, օրավուր սուր կերպարանք է ստանում: ...Գոնե Թիֆլիսի պես քաղաքում, ուր մտավոր կենտրոնատեղի է և այդ հանգամանքում մեր եկեղեցին պետք է ունենար կրթված և գաղափարական հոգևորականություն, սակայն չկա»¹⁰: Թիֆլիսի «Ազատ եկեղեցական եղբայրություն»-ը հաստատվել է եղբայրության 1926 թ. ապրիլի 27-ի ընդհանուր ժողովում և գրանցվել Թիֆքաղգործկոմից 1926 թ. մայիսի 11-ին 1405 համարով: Եղբայրության կանոնադրությունն ազդարարում էր. «Ազատ եկեղեցական եղբայրությունը հիմնվում է Թիֆլիս քաղաքում և նպատակ ունի ընդհանրացնելու՝ Վրաստանի հանրապետության մեջ գտնվող հավատացյալներին՝ նրանց կրոնական պահանջները բավարարելու համար և հայ առաքելական եկեղեցում մտցնելու՝ հետևյալ բարեփոխական ծրագիրը.

ա) Հայ եկեղեցին դնել իր կոչման բարձրության վրա, վերականգնելով այնտեղ առաքելական պարզությունը և քրիստոնեական ոգին»¹¹: «Ազատ եկեղեցու» սոսկ կանոնադրությունից իսկ, արդեն երևում է, որ այն վայելում է իշխանությունների օժանդակությունն ու աջակցությունը: Այսպես, կանոնադրության մեջ «Եղբայրության փակումը» բաժնում ուղղակիորեն ասվում էր. «Եղբայրության փակման դեպքում կառավարությունից օգտագործության պայմանով ստացած գույքը լիովին վերադարձվում է պետական համապատասխան մարմը-

¹⁰ Նույն տեղում, էջ 13:

¹¹ Նույն տեղում, էջ 28-29:

նին ընդունելության ցուցակով...»¹²: Միևնույն ժամանակ պետական մարմինները Հայ Առաքելական եկեղեցուց խլում էին նրա գույքը, ունեցվածքը, շինություններն ու կալվածքները:

«Ազատ եկեղեցական եղբայրության» գործունեությունը Վրաստանում և Հայաստանում աշխուժացավ 1920-ական թթ. երկրորդ կեսին: Երևանում հաստատված «Ազատ եկեղեցական եղբայրության» խորհուրդը ձգտում էր տարիների ընթացքում իրենով փոխարինել Էջմիածնի Սայր Աթոռը: 1926 թ. հունիսի 14-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն իր կոնդակով հայ եկեղեցուց անջատված հայտարարեց «Ազատ եկեղեցական եղբայրության»-ը և նզովեց այն: «Ազատ եկեղեցականներ»-ը, նպատակ ունենալով պառակտել հայ եկեղեցին, մերժում էին հայ հոգևորականության և Գերագույն Հոգևոր խորհուրդը՝ իբրև միակ օրինական իշխանություն ընդունելով կաթողիկոսին. «Դուք գերագույնականներդ, - ասվում էր Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներին ուղղված «Ազատ եկեղեցական եղբայրության» Ցեբելայի (Վրացական ԽՍՀ) ճյուղի գրության մեջ, - կողոպտեցիք Ա. Էջմիածինը և ավերակ դարձրիք. «Թալանի վանք» գրքույկի մեջ գրված է ամբողջ կյանքը: Դուք հեռացեք մեր թեմից Ձեր արբանյակներով միասին, քանի որ Ձեր գնալու ճանապարհը բաց է: Մենք ունենք մեզ համար թեմական խորհուրդ և կենտրոնական վարչությունը, համազգային ընտրությամբ կաթողիկոս»¹³: ԳՀԽ-ի անդամներին չճանաչելու վերաբերյալ որոշում էր կայացրել նաև Մուխոմի շրջանի «Ազատ եկեղեցական»-ների խորհուրդը՝ Ա Չիթունու գլխավորությամբ: Այդ մասին 1929 թ. հոկտեմբերի 22-ին Գևորգ արք. Չորեքչյանին ուղղված նամակում գրված էր. «Արխագիան իր հազարավոր հայ համայնքներով միասին ուխտել է պաշտպանելու սովետական իրավակարգը և չի ճանաչի ձեզ նման սևագլուխ ճահճի գորտերին և մինչև իսկ Ձեր մարդկանց: Ովքեր Արխագիա կզան, կվճռվեն...»¹⁴: Նույն բովանդակությամբ նամակներ Գևորգ արք. Չորեքչյանի, ԳՀԽ-ի անդամների անունով ատացվում էին

¹² Նույն տեղում, էջ 32:

¹³ Բեիբուդյան Ա., Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938թթ.), Երևան, 1994, էջ 5:

¹⁴ Նույն տեղում, էջ 201:

նաև այլ բնակավայրերից, ինչը կազմակերպված բնույթ էր կրում: Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ արք. Չորեքչյանին էջմիածին կանչելուց հետո 1927 թ. փաստորեն, դարձավ Վրաստանի հայոց հոգևոր թեմի գոյության վերջին տարին: Վրաստանի ՆԳԾ-ն թույլ չտվեց թեմական պատգամավորական ժողով անցկացնել, փոխարենը նման թույլտվություն ստացավ «Ազատ եկեղեցական եղբայրությունը»: 1927 թ. մարտի 20-ին տեղի ունեցած «Ազատ եկեղեցական եղբայրության» ժողովն ընտրեց Վիրահայոց թեմական խորհուրդ Լևոն Շգնավորյանի և Հակոբ Տեր-Հարությունյանի գլխավորությամբ, որն էլ անմիջապես ճանաչվեց վրաց իշխանությունների կողմից: Շատ չանցած, Թիֆլիսի վանքի տարածքում գտնվող թեմական խորհրդի շենքը կնքվեց. «Մնալով առանց հոգևոր առաջնորդի հայ քահանաները ստեղծեցին էջմիածնին ենթակա, վիրահայության ժամանակավոր թեմական խորհուրդ, ավագ քահանա Արշակ Մինասյանի գլխավորությամբ»¹⁵: Վիրահայության ժամանակավոր թեմական խորհրդի անդամները շուտով հայտնվեցին բարդ իրավիճակում, նրանցից պահանջվեց հանձնել թեմական ունեցվածքը: Մերժելով ապօրինի պահանջը՝ վիրահայոց թեմի ժամանակավոր ղեկավար, ավագ քահանա Ա. Մինասյանն ու մյուս անդամները ձերբակալվեցին, իսկ քահանա Տեր-Վարդանյանը վտարվեց Վրաստանի սահմաններից: «Ազատ եկեղեցական եղբայրության» և նրանց «Ազատ եկեղեցի» շաբաթաթերթի գործունեության իրական կողմը բացահայտելու և պառակտիչ քայլերի վերաբերյալ Ա. էջմիածնի ԳՀԽ-ը բազմաթիվ շրջաբերականներ էր ուղարկում թեմական խորհուրդներին: Այսպես, 1926 թ. մայիսի 26-ի շրջաբերականը լուսաբանում էր Մայր Աթոռին ուղղված բազմաթիվ դիմումները, կապված «Ազատ եկեղեցի» շաբաթաթերթի հետ, ինչին հետևում է ԳՀԽ-ի պատասխանը. «Գերագույն Հոգևոր խորհուրդը պաշտոնական գրությամբ հաղորդելով Ձեզ..., որ «Ազատ եկեղեցի» կոչվող թերթը բացարձակապես ոչ մի կապ կամ առնչություն չունի Մայր Աթոռ Ա. էջմիածնի հետ»¹⁶, իսկ Մեսրոպ քահանա Մելյանը, ով ստանձնել էր շաբաթաթեր-

¹⁵ Ստեփանյանց Ա., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994, էջ 55:

¹⁶ Բեհրույան Ա., նշվ. աշխ., էջ 81:

թի խմբագրումը, լքել էր Բաթումի իր ծուխը և որպես պաշտոնյա, վարձվել պետական հաստատության մեջ: Այսպես, Մայր Աթոռը բացահայտում էր «Ազատ եկեղեցական»-երի շարժման առանցքային դեմքերից մեկի արատավոր ուղին, մատնանշելով, որ բարեփոխությունների թեման լոկ շահարկման նյութ է և այդ ցանկալի գաղափարներով քողարկվում է բուն նպատակը: «Ազատ եկեղեցական եղբայրություն»-ը գործունեություն էր ծավալել ոչ միայն Անդրկովկասի հայ հավատացյալների շրջանում, այլ նաև հայահոծ տարբեր վայրերում. «Թե Չայաստանի շրջաններում, թե խորհրդային գաղթավայրերում ստեղծվում էին «Ազատ եկեղեցական եղբայրություններ», դրանց սաղորիչ գործունեությանը սատար էին կանգնում որոշ հոգևորականներ՝ ահաբեկված սպառնալիքներից կամ կաշառված ինչ-ինչ խոստումներով: «Չայ եկեղեցու դեմ ուղղված քայքայիչ գործողությունների ուղորտն ընդգրկում էր նաև Չեռավոր Արևելքը»¹⁷: Այսպես, Չանչունի (Չինաստան) հայ համայնքի անունից Չայոց ազգային կոմիտեի ղեկավարները (Մարանդյան, Ա. Անտոնյան, Ա. Բահաթյան) 1925 թ. հունվարի 14-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղղված նամակում գրել էին. «Չնայած նրան, որ վերջերս մի քանի հավատազուրկ և Չայոց եկեղեցվո դավաճան հոգևորականներ դուրս են եկել Մայր Աթոռի և Չեզ դեմ, չնայած նրան, որ այդ աղանդավորները ցանկանում են հայ ժողովրդի մեջ խլրտում ձգել և վարկաբեկել մեր հոգևորականության պատիվն և անունը, արատավորել մեր կրոնը, սակայն լիահույս ենք, Վեհափառ Տեր, որ ոչ մեկ ժամանակ և երբեք մեր ավանդաց սովորությունների և մեր հոգևոր զգացումների վրա, եթե չեն կարողացել բռնանալ և արմատախիլ անել դարերի ընթացքում, այժմ ևս ոչ ոք չէ կարող փոխիլ հավատքը, սերը դեպի Մայր Աթոռ՝ Ա. Էջմիածինը և մեր որդիական հավատարմությունը դեպի Չերդ Սրբությունը: Այսուհետև հանապազ անսասան պիտի մնա մեր նախահայրերի կրոնը մեզ համար»¹⁸: Ակնհայտ է, որ «Ազատ եկեղեցական» շարժման սկզբնավորման համար հաջողվել էր հավաքել հոգևորական և աշխարհիկ գործիչների մի խումբ, որոնք գծտվել կամ

¹⁷ Նույն տեղում, էջ 4:

¹⁸ Նույն տեղում, էջ 4-5:

հեռացել էին մայր եկեղեցուց: «Ազատ եկեղեցական»-ների մինչև 1929 թ. շարունակվող գործունեությունը ցույց տվեց նրանց «բարեփոխումների» պառակտիչ ուժը, որը մեծ վնաս բերեց հայ եկեղեցուն. «Ազատ եկեղեցին ուղղած էր էջմիածնի հեղինակութեան դէմ եւ, բարենորոգումների անունով, նպատակ ունէր թուլացնել կաթոլիկոսի եւ, առհասարակ, լուսաւորչական հոգեւորականութեան ազդեցութիւնը ժողովրդի վրա: Իրապէս նա շօշափելի արդիւնքի չհասաւ, բայց էջմիածնի «դիրքաւորման» գործում, անշուշտ, որոշ դեր կատարեց»¹⁹: Ծիշտ է նկատում Փարիզում հրատարակվող «Վեմ» հանդեսը, որ «...Չէկայի բացայայտ քաջալերանքով, տխրահռչակ Բենիկ վարդապետը, Աշոտ եպիսկոպոսն ու Մելեան քահանան ստեղծեցին «ազատ եկեղեցի»-ն՝ որոշ ժամանակ բաւական աղմուկ հանելով ժողովներով, ճառերով, գրքոյկներով, Չէկայի դրամով հրատարակող «Ազատ եկեղեցի» ամսաթերթով ու զուտ բուլշեւիկեան գործելակերպով»²⁰:

1924 թ. (նշվում է նաև 1925 թ.) ԽԱՅՄ-ում հիմնադրվում է Անաստվածների միությունը, որը հավակնում էր դառնալ զանգվածային շարժում ուղղված հավատքի և եկեղեցու դեմ: Անաստվածների միությունը 1929 թ. վերանվանվեց «Մարտնչող Անաստվածների Միության» (ՄԱՍ) և պաշտոնական տվյալներով ուներ մի քանի միլիոն անդամ: Արդյունքում, վերոհիշյալ միության և նմանօրինակ կազմակերպությունների համագործակցության «շնորհիվ» 1937 թ. ԽԱՅՄ-ը հռչակվեց «համատարած աթեիզմի երկիր»: ԽԱՅՄ անաստվածների 2-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1929-ին, խիստ ներկայացուցչական էր: Համագումարի 956 պատգամավորների թվում էին բազմաթիվ կուսակցական, պետական գործիչներ, «կարմիր» մտավորականության ներկայացուցիչներ՝ Բուխարինը, Կալինինը, Մ. Գորկին, Մայակովսկին: Համագումարն ընդունեց «Հակակրոնական հերթական խնդիրների մասին» բանաձև, ուր նշվում էր, որ «Իր ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքում «Անաստվածների միությունը» պետք է առաջին հերթին մերկացնի կրոնի քաղաքական դասակարգա-

¹⁹ Խորհրդային իշխանութիւնը եւ եկեղեցին, Վեմ, Փարիզ, 1935, Յունաթ-Ապոհի, էջ 106:

²⁰ Նույն տեղում:

յին դերը, բացահայտի բոլոր և ամեն տեսակի կրոնական կազմակերպությունների հակահեղափոխական գործունեությունը, որոնք ձգտում են պրոլետարիատի դիկտատուրայի թշնամի տարրերին ծառայել, ամեն կերպ արգելակել սոցիալիստական շինարարությանը»²¹:

1929 թ. «Անաստված» ամսագիրը իր էջերում մեղադրում էր Ս. Էջմիածնին և Վեհափառ Հայրապետին, որ նրա «ղեկավարությամբ Խորհրդային Միության ներսում և արտասահմանում հայ հոգևորականության և հակահեղափոխական դաշնակցության միջև ուժեղ գործակցություն գոյություն ունի»²², ինչը պատասխան էր «Հայրենիք»-ում տպագրվող հակախորհրդային հողվածների: «Հայրենիք»-ն իր էջերում քննարկում էր Մայր Աթոռը Սիրիա փոխադրելու հարցը, անհանգստությունը. «այն բացառիկ ծանր պայմաններն էին, որոնց մեջ այսօր գտնվում է հայոց եկեղեցին, այն անօրինական հալածանքները, որոնց ենթակա է տարիներ ի վեր էջմիածնի և հայ հոգևորականությունը Խորհրդային Ռուսիո մեկ ծայրից մյուսը...»²³: «էջմիածնի դասերը» հողվածում, որը տպագրվել էր «Հայրենիք»-ի էջերում, ներկայացնում էր էջմիածնի գավգործկոմի նկատմամբ տարվող քննությունը, որի պատճառներից էր. «գ. Թոյլ հակակրօնական պրոպագանդան»²⁴: Նույն ամսագրի 1929 թ. նոյեմբերի համարում տպագրված «էջմիածինը եւ արտասահմանը» հողվածում մատնացույց է արվում էջմիածնի միաբանության ծայրահեղ ծանր սոցիալ-տնտեսական վիճակը. «էջմիածնի Գերագույն Խորհուրդը մի դիմում է ուղարկել արտասահմանի թերթերին, որի մէջ մատնացույց անելով Ս. Աթոռի տնտեսական ծանր կացութեան վրայ, խնդրում է նպաստ վանականների եւ կաթողիկոսի ապրուստի համար»²⁵:

1930 թ. մայիսի 8-ին վախճանվում է Պետրոս Ե կաթողիկոսը, ում բաժին ընկավ հայոց եկեղեցին կառավարել բռնաձեռնումների և ահաբեկումների ծանր ժամանակաշրջանում: Կաթողիկոսի հուղարկավո-

²¹ Ստեփանյանց Ս., մշվ. աշխ., էջ 71:

²² Նույն տեղում, էջ 70:

²³ Նույն տեղում:

²⁴ «Հայրենիք», Նոյեմբեր, 1928, էջ 164:

²⁵ «Հայրենիք», Նոյեմբեր, 1929, էջ 172-173:

րությունից հետո՝ 1930 թ. մայիսի 28-ին, կաթողիկոսի տեղակալ Խորեն սրբազանը դիմեց Հայաստանի Կենտրոնական և Ժողովմխորհին՝ թույլատրելու գումարել Ազգային եկեղեցական ժողով, որի նախնական համաձայնությունը ձեռք բերվեց: Երևանում և Մոսկվայում ընկալեցին կաթողիկոսական ընտրությունների անհրաժեշտությունը (արտասահմանի թեմերում ակտիվորեն քննարկվում էր Սայր Աթոռը էջմիածնից տեղափոխելու հարցը) և զիջեցին, հակառակ այն պարագային, որ ռուս ուղղափառ եկեղեցին չուներ հոգևոր առաջնորդ և սկսած 1925-ից բազմիցս բարձրացնում էր այդ հարցը: Կաթողիկոսական ընտրությունների անհրաժեշտության մասին «Անաստված» երկշաբաթաթերթում տպագրվել է նաև Ա. Խանջյանի «Կաթողիկոսական ընտրությունների առթիվ» հոդվածը, ուր գրված էր. «Կաթողիկոսության արտասահման տեղափոխելու միտքը բղխում է հայ բուրժուական կուսակցությունների ձգտումից: Այդ միտքը սկսեց էլ ավելի ուժգին արձարծվել, երբ վախճանվեց վերջին կաթողիկոսը-Գևորգ 5-ը: Սակայն հայ բուրժուազիան չկարողացավ իրականացնել իր այդ ձգտումը: ...Պաշնակցությունը միաժամանակ ամեն տեսակի հերյուրանքներով աշխատում է արտասահմանյան պատգամավորներին ներշնչել, որ ընտրությունները կազմակերպված են այնպես, որ նրանք «համաժողովրդական բնույթ» չեն կրում...»²⁶: Կաթողիկոսական առաջիկա ընտրություններին մասնակցելու համար հոգևոր թեմերում անհրաժեշտ էր անցկացնել պատգամավորների ընտրություններ. «Սակայն ԽՍՀՄ-ում գտնվող թեմերի մեծ մասում բացակայում էին առաջնորդները, որոնք պիտի կազմակերպեին ընտրությունները: Այդ նպատակով էլ Ա. էջմիածնից տեղեր ուղարկվեցին Սայր Աթոռի ներկայացուցիչներ»²⁷: Մինևույն ժամանակ, ԳՀԽ-ը որոշում է. «...առաջադրել Խորհրդային Միության սահմաններում եղած թեմերի առաջնորդներին ընտրությունների գործը ղեկավարելիս առաջնորդվել նախապես տրված հրահանգներով, միաժամանակ հարմարվելով պայմաններին՝ արագացնել և թեթևացնել պատգամավորների ընտրության գործը»²⁸:

²⁶ «Անաստված», Հոկտեմբեր, 1932, էջ 4-5:

²⁷ Ստեփանյանց Ա., նշվ. աշխ., էջ 77:

²⁸ Բեհրույան Ա., նշվ. աշխ., էջ 244:

Հայ Առաքելական եկեղեցու դեկավարի քաջակայությունը ազդանշան հանդիսացավ Վրաստանի հայկական եկեղեցիների առգրավման և փակման նոր ալիք սկսելու համար: 1930-1931 թթ. իրար հետևից փակվեցին Թիֆլիսի Ս. Սարգիս, Բետհեմյան և Խոջևանքի եկեղեցիները՝ Վիրահայ թեմը գտնվում էր կաթվածահար վիճակում:

1931թ. դրությամբ անմխիթար վիճակում էին գտնվում նաև խորհրդահայ մյուս թեմերը:

Հյուսիսային Կովկասի և Աստրախանի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյանը ծանր հիվանդ էր և խնդրում էր Մայր Աթոռին հարգել հրաժարականի իր դիմումը:

Նոր Նախիջևանի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, վկայակոչելով իր գիտական աշխատանքները, որոնք հանձնարարված էին Ն. Սառի կողմից, խնդրում էր իրեն փոխադրել Էջմիածին:

Բաքվի և Թուրքեստանի առաջնորդ Մաթևոս արքեպիսկոպոս Մաթևոսյանը բողոքում էր իր քննության պայմաններից և հիվանդություներից: Իրականում թեմակալ առաջնորդը լարված հարաբերությունների մեջ էր Ադրբեջանի իշխանությունների հետ:

Արցախի թեմը Վրթանես եպիսկոպոս Հակոբյանի գլխավորությամբ նույնպես դժվարին օրեր էր ապրում: Արդեն 1932 թ. սկիզբ առավ ճնշումների նոր ալիք, որն ավարտվեց Արցախի հայ հոգևորականության արտաքսումով և բոլոր հայ եկեղեցիների փակումով:

1920-ական թթ.՝ Գևորգ Ե կաթողիկոսի գահակալության շրջանում, խորհրդային իշխանությունների՝ եկեղեցու դեմ պայքարի թափի և ծավալների մասին պատկերացում կազմելու համար բավական է դիտարկել Մայր Աթոռի հետ թեմերի գրագրությունները, Էջմիածնի բողոք-դիմումները վերին աստիճաններին: Այսպես, Գևորգ Ե կաթողիկոսը 1925 թ. մարտի 9-ին ԽԱՀՄ Ժողկոմխորհի նախագահ Ա. Ռիկովին ուղղված նամակում ներկայացնում է հայ եկեղեցու դեմ գործադրվող բռնությունները. «խորհրդային Վրաստանում 1923 և 1924 թթ. վարչական միջոցներով փակվել են 56 հայկական եկեղեցի, խորհրդային Հա-

յաստանում՝ 20»²⁹: Վրաստանում լայն թափ առած հալածանքը հայ եկեղեցու դեմ մտորումների տեղիք էր տվել 1925 թ. շրջայցով Անդրըկովկասում գտնվող Համամիութենական ղեկավարությանը՝ Կենտրոնի նախագահ Մ. Կալինինին և Ժողկոմխորհի նախագահ Ա. Ռիկովին. «Նրանց արդարացի և հեռատես կարգադրության ու հեղինակավոր ազդեցության շնորհիվ վերաբացվեցին խորհրդային Վրաստանում բռնությամբ փակված Հայոց եկեղեցիները և դադարեցին ընդհանրապես կրոնական համոզման համար հալածանքի տգեղ արտահայտությունները»³⁰: Պակաս ծանր չէին հայ եկեղեցու և հոգևորականների նկատմամբ կատարվող բռնությունները Ադրբեջանական ԽՍՀ-ում:

1924 թ. մարտի 17-ին Գևորգ Ե-ն Ադրբեջանի ԽՍՀ Ժողկոմխորհին ուղղված դիմումով բողոքում էր Բաքվի և Թուրքեստանի թեմակալ առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսի նկատմամբ կատարված բռնության և առաջնորդարանի գրավման դեմ. «Այժմ, ես որպես ընտրյալ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց և պետ Հայաստանյայց եկեղեցու դիմելով Ադրբ. Աոց. Հանր. Սովնարկոմին, հավատացած եմ, որ Սովնարկոմը, որը հարգում է խղճի կատարյալ ազատությունը...չի թույլ տա բռնությամբ խախտել հայ ժողովրդական եկեղեցու կանոնը և անպատված ու անուշադիր թողնել հայոց թեմակալ առաջնորդին, այլ կկարգադրի, որ իմ ներկայացուցիչ առաջնորդ Մառթեոս եպիսկոպոսը քակություն ունենա որպես մինչ այժմ, Ս. Լուսավորիչ եկեղեցու առաջնորդարանում...»³¹: Գերագույն Հոգևոր Խորհրդին ուղղված Գանձակի Հայոց առաջնորդ Լևոն եպիսկոպոսի 1924 թ. փետրվարի 7-ի նամակից, պարզ են դառնում տեղում կատարված բռնությունների և առգրավումների մեծ չափերը: Այստեղ բռնությամբ խլվել էին Ղարաչինար, Հավարիկ գյուղերի եկեղեցիները, չափաբերական մատյաններն ու գույքը, բանտարկվել Ղարաչինարի և Աուլուքի քահանաները: Գանձակի առաջնորդի նամակը վերջանում էր հետևյալ խոսույն տողերով. «Տեղական հոգևոր իշխանության դիմումները, ինչ-

²⁹ Երկր տեղում, էջ 64, տես նաև Ատեփանյանց Ս., նշվ. աշխ., էջ 41:

³⁰ Բեհրուդյան Ս., նշվ. աշխ., էջ 86:

³¹ Երկր տեղում, էջ 52:

պես տարիների փորձերը ցույց տվին, որ մնում են առանց հետևանքների կամ վախճան են ստանում սպառնալիքներով՝ դիմողների հասցեին»³²: 1925 թ. փակվեց Շամախու հայոց եկեղեցին. «...տեղի քահանա Վարդգես Գրիգորյանին, զավառից վտարելու սպառնալիքի ներքո, արգելվեց ծխակատարությունների անցկացումը»³³:

Արցախի թեմում նույնպես քայքայված և կազմալուծված իրավիճակ էր տիրում, ինչը բացահայտ երևում է թեմի առաջնորդ Վրթանես Ժ. վարդապետի 1925 թ. օգոստոսի 13-ի զեկույցից. «Երկու տարի է իսպառ դադարած է եղել ամբողջ թեմում ժամասացությունը: ...երեսուներկու (32) քահանաները, հակառակ իրենց կոչման ու երդման, չդիմանալով արտաքին և նյութական ճնշումներին, հայտարարում են, որ «մինչև օրս խաբել են ժողովրդին»: ...Մնացած 28 քահանաները թեմի ընդարձակության համեմատ այնքան քիչ են, որ կարելի է ասել, որ Արցախի թեմն առանց քահանաների է»³⁴: Արցախի թեմում, նշված ժամանակահատվածում, կար 136 եկեղեցի, որոնցից միայն 10-ն էին իշխանությունները վերցրել: Արդեն 1929 թ. փետրվարի 11-ով թվագրված Վրթանես Ժ. վարդապետի զեկույցից ԳԳԽ-ին, պարզ է դառնում, որ 1929 թ. փետրվարի դրությամբ Արցախում ակունք-դպրոցի, շտեմարանի կամ խրճիթ-ընթերցասրահի էին վերածված 79 եկեղեցիներ, իսկ թեմում մնացել էին 22 քահանաներ: Քահանայության դեմ տարվող պայքարը չըջանցեց նաև Արցախի թեմի առաջնորդին, որը բանտարկվեց Շուշիում: Նրան ազատ արձակելու միջնորդությամբ հանդես եկավ ԳԳԽ-ը, 1931 թ. նոյեմբերի 7-ին խնդրագրով դիմելով ՀՍԽՖ պետքաղվարչությանը:

Խորհրդային Ռուսաստանի հայկական թեմերում ևս 1920-ական թթ. տիրում էր անմխիթար վիճակ, այսպես, հայ եկեղեցու ծանր կացությունը Հյուսիսային Կովկասում մանրամասն բնորոշված է Նովոռոսիյսկի ժխատեր Գևորգ քահանա Օրդուխանյանի դիմումներում՝ ուղղված կաթողիկոսին. «Մեր եկեղեցին վտանգի մեջ է, մեր սուրբ հավատը ոտնակոխ է լինում, մանավանդ վտանգի մեջ է մեր խեղճ ու

³² Նույն տեղում, էջ 49:

³³ Ստեփանյանց Ա., նշվ. աշխ., էջ 42:

³⁴ Բեհրուդյան Ա., նշվ. աշխ., էջ 67-68:

կրակ ազգի ամբողջությունը ... մեր կենտրոնը՝ Արմավիրը լուռ է Ձաքարիայի սման. ոչ մի միջոց, ոչ մի խորհրդակցություն... Երևանից եկած մի քանի երիտասարդների քարոզությունները հասարակության խավարագույն մասերում հաջողություն են գտնում... Իրավապես սա մեր՝ ռուսահայերիս եկեղեցու ճգնաժամն է. իրավապես սա Ռուսաստանում ցրված անթիվ հայերի դամբանականն է»³⁵: Գևորգ քահանա Օրդուխանյանը շատ չանցած ճաշակում է նաև աքսորի դառնությունը, 1925 թ. հունվարի 3-ին կաթողիկոսին ուղարկած իր նամակում գրում է, որ իրեն ձերբակալել են նախորդ տարվա օգոստոսի 9-ին: Ապա ներկայացնելով Նարիմում (Տոմսկի նահանգ) իր անհուսալի դրությունը, հագուստի և սննդի պակասությունը, օգնություն է հայցում: Նովոռոսիյսկի հայոց եկեղեցու և Մայկոպի հայաբնակ գյուղերի (Չայկական շրջան) աղոթատների փակման կապակցությամբ Յուսիսսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոսը դիմում է ԳՅԽ-ին իր 1929 թ. ապրիլի 25-ի և մայիսի 22-ի նամակներով, ուր գրված է. «Անցյալ 1928 թ. վերջին ամիսներին Չայկական ռայոնի գյուղական իշխանության ներկայացուցիչներն ու գյուղական մի քանի կոմսոմոլներ սկսել են հայ հավատացյալներին նեղել և սպառնալիքներով պահանջել, որ աղոթատները հանձնեն: Չայկական ռայոնի հայ գյուղերից գլխավորն ու ազդեցիկը Խոյթա գյուղն է եղել, որը ուներ Ս. Խաչ աղոթատուն 1883 թվից: 1928 թ. Մոյսեբերի վերջերին տեղական իշխանությունը սպառնալիքներով գրավել է այդ աղոթատունը: Այնուհետև նույնպիսի միջոցներով վերցրել են նաև Գունայկա, Պերեվայնայա, Սադովայա, Մարաթուկ գյուղերի հայոց աղոթատները»³⁶: Եկեղեցու դեմ ուղղված պայքարը, ինչպես նաև հակակրոնական քարոզարշավը ենթադրում էր ոչ միայն եկեղեցիների փակում, նրա սպասավորների նկատմամբ բռնությունների և աքսորի կիրառում, այլ նաև ֆինանսական հարկադրում: 1930 թ. ապրիլի 9-ին Յուսիսսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արք. Վարդապարյանի՝ կաթողիկոսին ուղղված նամակից պարզվում է, որ Արմավիրի ֆինտեսչությունը

³⁵ Նույն տեղում, էջ 49-50:

³⁶ Նույն տեղում, էջ 185-186:

ծանր հարկեր էր դրել առաջնորդի վրա՝ պահանջելով դրա անհապաղ մուծումը: ԳՂԽ-ի անունով գրեթե նույնաբնույթ հայտարարություն է արել Նոր Նախիջևանի թեմական խորհուրդը 1930 թ. փետրվարի 26-ին: Այստեղ խոսվում էր ծանր հարկումների պատճառով քահայանագործունից հրաժարված Մեծ Սալա և Նիսվիթա գյուղերի քահանաների մասին, ինչպես նաև փակված եկեղեցիների մասին. «Ներկայիս փակված են թեմիս եկեղեցիներից - 1) Լեմինգրադի Ա. Կատարինե եկեղեցին՝ պետական հարկը վճարելու անկարողության պատճառով, 2) Նիսվիթա գյուղի Ա. Հովհաննու Կարապետի եկեղեցին՝ քահանայի հրաժարվելուն և պահանջված նորոգությունը կատարելու նյութական միջոց չլինելուն պատճառով և 3) Աիմֆերոպոլի Ա. Աստվածածին եկեղեցին՝ տեղվույն հայկական ակումբի վարչության պահանջմամբ և հավատացյալ համայնքի մեջ օրինապահանջ 20 հոգի պատասխանատու հիմնադիրներ չգտնվելուն պատճառով»³⁷: 1929 թ. օգոստոսին Երևանում դատավարություն էր սկսվել էջմիածնի վանքի միաբան, Բաթումի և Խարկովի հայերի հոգևոր առաջնորդ Արապիոն Եպիսկոպոս Սամվելյանի նկատմամբ՝ ցարական ռեժիմին ծառայելու և լրտեսական գործունեության անհիմն մեղադրանքներով:

Հայ Առաքելական եկեղեցու բազմաթիվ ներկայացուցիչներ արտորված էին. նրանց թվում էին Խորեն քահանա Շուշանյանը, որն արտորվել էր Տուշբենդ, Ներսես քահանա Տեր-Կարապետյանը, որը Բաքվից արտորվել էր Աստրախան և այլք:

Այսպիսի պայմաններում, 1932 թ. նոյեմբերի 10-ին գումարվեց Ազգային եկեղեցական ժողով, որին մասնակցեցին ԽՍՀՄ և արտասահմանի հայկական թեմերի պատգամավորները: Նոյեմբերի 12-ին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Խորեն արքեպիսկոպոս Մուրադրեկյանը, իսկ Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահ՝ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը: 1930-ական թթ. նոր թափով շարունակվեց պայքարը հայ եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ, որի գագաթնակետը հանդիսացավ 1938 թ. Խորեն Ա Մուրադրեկյանի սպանությունը:

³⁷ Նույն տեղում, էջ 213:

Միջազգային քաղաքական իրադրության փոփոխությունն ու Հայրենական պատերազմի տարիներին եկեղեցու ակտիվ հասարակական-քարեզործական գործունեությունը հնարավորություն ընձեռեցին հայ եկեղեցուն վերակազմվելու և շարունակելու իր պատմական դերը հայության հոգևոր-մշակութային կյանքում:

*ՕԳԱՆԵՏ ԱԼԵԿՏԱՆՅԱՆ
ԻԻ ՈՒՆՐԱ*

УПАДОК ДУХОВНО-ЦЕРКОВНОЙ ЖИЗНИ АРМЯНСКИХ ОБЩИН В СОВЕТСКОМ СОЮЗЕ В 1920-ых гг.

РЕЗЮМЕ

После февральской революции 1917 г. армянская церковь на короткий период получила широкие возможности для восстановления своих позиций в социально-экономической и культурной жизни страны. После установления Советской власти, политическое руководство страны в корне изменило свою политику как в отношении церкви, так и религии. В целом гонения против церкви начались в Советской России, а в дальнейшем перекинулись и на все советские республики. Советское руководство проводило дискриминационную политику не только в отношении первопрестольного св. Эчмиадзина, но и в отношении епархии армянской апостольской церкви, действующих на территории СССР. В результате этого многочисленные армянские церкви были закрыты, а священнослужители подверглись гонениям.

ՀԱՅԵՐԻ ԲՈՆԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԽՍՀՄ-ում
1940-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XX դ. 30-50-ական թթ. ԽՍՀՄ պատմության մեջ բնութագրվում են որպես լայն կիրառում ստացած մարդկային հոծ զանգվածների վրա գործադրվող բռնաճնշումների և նույնիսկ ամբողջական ժողովուրդների վերաբնակեցումներով: Արդյունքում զգալի փոփոխություններ կրեց երկրի տարբեր շրջանների ժողովրդագրական քարտեզը, և նույնիսկ Ատալիհի մահից ու նրա վարչակարգի վերակերպումից հետո բռնադատված էթնոսների արդարացումով ու ոչ լիարժեք վերադարձով իրավիճակը լիովին չհաջողվեց շտկել: Ցավոք, հայ բնակչությունը, որը բնակվում էր ոչ միայն Հայկական ՍՍՀ-ում ու Անդրկովկասում, այլև ԽՍՀՄ- ի այլ վայրերում, ևս չխուսափեց այդ բռնաճնշումներից ու իր հոծ զանգվածների վերաբնակեցումից:

Անկասկած, *աշխատանքային վերաբնակիչների* ու հատուկ *վերաբնակիչների կատեգորիաների* ի հայտ գալու հենց սկզբից էլ հայ բնակչությունը ևս ընդգրկվեց մարդկային զանգվածների հոսքի հորձանուտի մեջ:

Եթե 1920-30-ական թթ. զանգվածային բռնաճնշումների. աքսորի ու վերաբնակեցման էին ենթարկվում հիմնականում դասակարգային պատկանելության ու այլախոհության հիման վրա, որտեղ բռնադատվածները չէին տարանջատվում իրենց ազգային կամ էթնիկ պատկանելությամբ, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, դրա ընթացքում և հետպատերազմյան առաջին տարիներին մարդկանց բռնագաղթումների գործընթացում տեղի է ունենում զգալի անցում սոցիալ-դասակարգային սկզբունքից դեպի ազգային ու էթնիկ սկզբունքները: Էթնիկ սկզբունքը հատկապես վառ արտահայտվեց մինչև 1952 թ. շարունակվող ԽՍՀՄ ցամաքային սահմանի գրեթե ողջ երկայնքով ձգվող զանգվածային բռնագաղթերի ժամանակ: Սովորաբար բռնագաղթի էին ենթարկվում այն ազգությունների ներկայացուցիչները, որոնց հայրենակիցները կազմում էին սահմանամերձ պե-

տությունների հիմնական բնակչությունը, նույնիսկ եթե կասկածներ կային, որ այս կամ այն ազգությունների ներկայացուցիչները կարող են չափից ավելի հոգևոր-մշակութային կապեր ունենալ ԽՍՀՄ պոտենցիալ թշնամի-պետությունների հետ, կամ դա արվում էր ֆաշիստական զավթիչներին օգնություն ցուցաբերելու բացահայտ մեղադրանքով¹:

Ստալինյան ռեժիմի ժամանակ բռնադատման ենթարկված հայ բնակչության մի ստվար հատվածը վերոնշյալ եզրահանգումների տակ անցկացնելուց կարելի է հանգել, որ նրանց մեջ կային թե՛ սոցիալ- դասակարգային կատեգորիայով անցնող անձինք (կուլակներ, աշխատանքային վերաբնակներ), թե՛ գերմանական օկուպացիայի ժամանակ զավթիչներին օգնություն ցուցաբերածներ (այս կատեգորիայի մեջ են նաև Ղրիմի բռնագաղթված հայերը, նախկին ռազմագերիները, վերմախտի կազմում ծառայած հայ զինվորականները): Ինչ վերաբերում է պոտենցիալ թշնամներին օգնություն ցուցաբերելու նկատմանը՝ բռնադատվածներին, ապա այս դասակարգումը նաև բավարարում է 1949 թ. բռնագաղթվածներին, որոնք հատուկ բնակավայրերում անցնում էին «դաշնակներ» կատեգորիայով: Սառը պատերազմի բուռն ծավալումը և սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը ևս ծանրակշիռ պատճառներ կարող էին լինել՝ ստիպելու համար ստալինյան վարչակարգին կասկածանքով վերաբերվել հայ բնակչության նկատմամբ՝ նրա մեջ որոնելով ու «զտնելով» ԱՄՆ-ի ու այլ իմպերիալիստական պետությունների պոտենցիալ գործակալների:

Հայկական տարրի՝ որպես այդպիսին, առաջին զանգվածային բռնագաղթը ԽՍՀՄ տարածքում, համաձայն վերոնշյալ հիմնավորումների, իրականացվեց 1944 թ. հունիսի 2-ի Պաշտպանության պետական կոմիտեի հրամանագրով: Ընդհանրապես, 1944 թ. մայիս-հունիս ամիսներին Ղրիմի թերակղզին զրկվեց իր հիմնական բնակչությունը կազմող թաթարներից, հույներից, հայերից, բուլղարներից և այլ ազգություններից: Նշված ժամանակահատվածում ընդհանուր առմամբ Ղրիմից հատուկ կոնտինգենտների (թաթարների, հայերի, բուլղարների

¹ Земсков В. Н., Спецпоселенцы в СССР 1930-1960, Москва, 2005, с.76-77.

րի, հույների) տարհանումն ավարտված էր, ինչի մասին զեկուցվում էր Լ. Բերիայի կողմից Ստալինին: Համաձայն այդ զեկույցի՝ ընդհանուր առմամբ Ղրիմից տարհանվել է 225009 մարդ, որից՝ 183155 թաթար, 12242 բուլղարացի, 15040 հույն, 9621 հայ, 11119 զերմանացի, նաև արտասահմանյան քաղաքացիներ՝ 3652 մարդ²: Այսինքն, տվյալ ժամանակահատվածում Ղրիմից տարհանված բնակչության մոտավորապես 4,27 % -ը կազմում էին Ղրիմի հայերը:

Անդրադառնալով Ղրիմի հայության բռնագաղթի պատճառներին ու դրանց դասակարգմանը վերոնշյալ պատճառային կատեգորիաներում՝ ապա կարելի է եզրահանգել, որ հայությունը տվյալ պարագայում դարձավ զերմանացի զավթիչների հետ համագործակցության մեղադրանքի զոհը, ինչպես և Ղրիմից բռնագաղթված մյուս էթնոսները: Այս մասին են վկայում, օրինակ, Լ. Բերիայի նամակը Ի. Վ. Ստալինին առ 29-ը մայիսի, 1944 թ., որտեղ ասվում է՝

«...Հայ բնակչությունը բնակվում է Ղրիմի շրջանների մեծ մասում: Հայ բնակչությամբ խոշոր բնակավայրեր չկան: զերմանացիների կողմից կազմակերպված հայկական կոմիտեն ակտիվորեն համագործակցել է զերմանացիների հետ և տանում էր խոշոր հակախորհրդային գործունեություն:

Աիմֆերոպոլ քաղաքում գոյություն է ունեցել զերմանական հետախուզական «Ղրոմեդան» կազմակերպությունը՝ նախկին դաշնակցական զեներալ Ղրոյի գլխավորությամբ, ով ղեկավարում էր Կարմիր բանակի դեմ իրականացվող հետախուզական աշխատանքը, և այդ նպատակով ստեղծել էր մի շարք հայկական կոմիտեներ Կարմիր բանակի թիկունքում լրտեսական ու քայքայիչ աշխատանքների համար և հայկական կամավորական լեզեոնների կազմակերպմանն աջակցելու համար:

Հայկական ազգային կոմիտեները Բեռլինից ու Ստամբուլից ժամանած էմիգրանտների ակտիվ մասնակցությամբ աշխատանք էին տանում «անկախ Հայաստանի» քարոզչության համար:

² Бугай Н.Ф., Депортация народов Крыма, Москва, 2002, с. 90.

Գոյութիւն են ունեցել այսպէս կոչված «հայկական կրոնական համայնքներ», որոնք, կրոնական ու քաղաքական հարցերից բացի, զբաղվում էին հայերի մեջ առևտրի ու մանր արդյունաբերության կազմակերպմամբ: Այս կազմակերպութիւնները գերմանացիներին օգնութիւն էին ցուցաբերում, հատկապէս Գերմանիայի պատերազմական կարիքների համար «միջոցների հավաքման ճանապարհով»:

Յայկական կազմակերպութիւնների կողմից ձևավորվել է այսպէս կոչված «Յայկական լեգեոնը», որը պահվում էր հայկական համայնքների հաշվին:

ՆԳԺԿ-ն նպատակահարմար է գտնում Ղրիմի տարածքից իրականացնել բոլոր բուլղարների, հույների ու հայերի տարահանումը»³:

Այս փաստաթղթում նշվում է նաև Ղրիմում հաշվառման առնված հայ բնակչության ընդհանուր թվակազմը՝ 9919 մարդ: Այսինքն, Ղրիմի հայ բնակչութիւնը, որը դարեր շարունակ ապրել ու արարել է այս տարածքում՝ արդեն իսկ համարվելով թերակղզու հիմնական բնակչության բաղկացուցիչ մասը, գրեթէ ամբողջութամբ՝ 97 տոկոսով, ենթակա էր տարահանման, ինչը և իրագործվեց: Ինչպէս և Ղրիմի թաթարները, կալմիկները, չեչեններն ու ինգուշները, կարաչայները, չերքեզները, գերմանացիներ և բազում այլ ազգութիւններ, Ղրիմի հայութիւնը ևս դարձավ համատարած անհիմն մեղադրանքի զոհը և աքսորվեց իր բնակչության վայրից: Ղրիմի հայության ճակատագիրը ոչնչով չի տարբերվում մյուս՝ «բռնդատված» ազգութիւնների բախտից, և վստահորեն հայութիւնը ևս կարելի է անցկացնել «բռնադատված ազգութիւնների» կատեգորիայի ներքո: Դրա համար առկա են բոլոր հիմքերը՝ բռնազաղթն իրականացվեց գերմանական զավթիչների հետ համագործակցութիւն ունենալու համատարած մեղադրանքի հիման վրա, իրականացվեց՝ ելնելով միմիայն ազգային պատկանելութիւնից՝ հաշվի չառնելով ոչ մի բացառութիւն և արդարացում: Պնդումը, որ Ղրիմի հայ բնակչութիւնը դարձավ գերմանական զավթիչների հետ համագործակցման մեջ անհիմն կասկածանքի զոհը, երևում է նաև ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի Յատուկ բնակավայրերի բաժնի աշխատանքների մասին հետևյալ զեկույցում.

³ Նույն տեղում, էջ 90:

<...> «Ղրիմ: 1941 թ. դեկտեմբեից 1942 թ. հունվարը Սիմֆերոպոլ քաղաք էին ժամանում արտասահմանյան դաշնակցական կենտրոնների մի շարք եմիսարներ՝ գլխավորապես Բեռլինից:

Գեներալ Ղրո Կոնոնյանը՝ Հայաստանի դաշնակցական կառավարության նախկին ռազմական նախարարը, որը արտագաղթել էր Բեռլին, հանդիսանում էր Լեհաստանում նավթահանքերի սեփականատեր, ղեկավարում էր «Վալլի» մարմնի գերմանական հետախուզության հայկական մասնաճյուղը և այլն...⁴»:

Ղրիմից տեղահանված հայ բնակչությունը տեղաբաշխվում էր խորհրդային Սիության տարբեր վայրերում ստեղծված հատուկ բնակավայրերում՝ հիմնականում Սվերդլովսկի, Մոլոտովի, Կեմերովոյի մարզերում, Բաշկիրական ԻԽՍՅ-ում, Ղազախստանում ու Ուզբեկստանում: Սոյուսակ 1-ում տրված են բռնագաղթի ենթարկված ղրիմահայերի տեղաբաշխումը ԽՍՀՄ տարբեր մարզերով՝ 1953 թ. հունվարի 1-ի դրությամբ:

Խորհրդային Սիության տարածքում հայ բնակչության հաջորդ զանգվածային տեղահանությունները տեղ գտան 1949 թ.: Հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը Հայաստանում իրագործվեց ստալինյան բռնությունների ևս մի մասշտաբային գործողություն՝ զանգվածային տեղահանության ու աքսորի ենթարկվեց Հայաստանի բնակչության մի ստվար հատվածը: Գործողության հիմք հանդիսացավ ԽՍՀՄ նախարարների խորհրդի թիվ 2214-356cc գաղտնի որոշումը առ 29-ը մայիսի 1949 թ.՝ Ստալինի ստորագրությամբ: Ընդ որում, այս հերթական բռնությունները տարածվեցին ոչ միայն Հայաստանի հարևան հանրապետությունների հայ բնակչության վրա, այլ նաև Հյուսիսային Կովկասի, խորհրդային տարածքի՝ սևծովյան ափամերձ տարածքների վրա: Սյս գործողությունը հետպատերազմյան շրջանում ամենևին էլ առաջին ծավալուն բռնությունը չէր: Մինչ այդ՝ 1948 թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հունիսի 2-ի հրամանագրի հիման վրա անցկացված միջոցառումներով իրականացվեց Հայաստանի կուլտնտեսական գյուղացիության մի ստվար զանգվածի արտաքսումը

⁴ Նույն տեղում, էջ 96:

երկրի հեռավոր շրջաններ⁵: Սյս որոշմամբ ընդհանուր առմամբ հանրապետությունից արտաքսվեց 404 մարդ⁶ պորտաբույծ կյանք վարելու և աշխօրերը չկատարելու համար, որոնք հատուկ վերաբնակիչների մասին փաստաթղթերում, սակայն, անցնում էին ոչ թե ազգային պատկանելությամբ, այլ «պորտաբույծներ» (тысячацты) կատեգորիայով:

Հատուկ բնակվայրերի թվակազմի, դրանցում ընդգրկված անձանց ազգային պատկանելության մասին տարատեսակ աղբյուրներում 1949 թ. Հայկական, Վրացական, Սղրբեջանական ՍՄԴ-ներից, Ղրիմից, Օդեսսայից ու ՌԽՍՖՍՀ տարածքից տեղահանվածները (որոնց թվում էին ոչ միայն հայեր, նաև կային թուրքեր, թուրքահպատակներ, նախկին թուրքահպատակներ, հույներ, հունահպատակներ, նախկին հունահպատակներ) գրանցված են որպես «Անժոպյան ափից» հատուկ վերաբնակիչների կոնտինգենտ: Իսկ այս կոնտինգենտում որպես առանձին ենթակոնտինգենտ հայազգի տեղահանվածները գրանցված են «դաշնակներ» անվանումով⁷: Ընդ որում, որպես տարաբնակեցման վայր հայազգի տարագիրների համար ընտրվել էր այս անգամ Սլթայի երկրամասը, թուրքերի համար՝ ՌԽՖՍՀ Տոմսկի մարզը, հույների համար՝ Ղազախական ԽՍՀ Հարավղազախստսոնյան և Ջամբուլի երկրամասերը⁸:

Որոշման իրագործումն ընթացել է շատ արագ, առանց լուրջ միջադեպերի, ինչի համար էլ Հայաստան էին նախօրոք ժամանել պետական անվտանգության նախարարության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ՝ 2-րդ գլխավոր վարչության պետի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Յու. Եղունովի գլխավորությամբ՝ ունենալով Լիտվայից զանգվածային աքսորումների կազմակերպման թարմ փորձը⁹:

⁵ Վիրաբյան Ա., Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը հետպատերազմյան ժամանակաշրջանում (1945-1957 թթ.), (պատմական գիտությունների դոկտորի ատենախոսություն), Ե., 2001, էջ 231:

⁶ Նույն տեղում, էջ 237:

⁷ http://www.tuad.nsk.ru/~history/author/Russ/Z/Zemakov/Articles/HI_USSR.HTM

⁸ Մանուկյան Ա., Քաղաքական րոնաձնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Ե., 1999, էջ 230:

⁹ Վիրաբյան Ա., նշվ աշխ., էջ 241:

Ընդհանուր առմամբ այս գործողությամբ Հայաստանից աքսորվեց 2935 ընտանիք՝ 13272 մարդ¹⁰: Աքսորվածներին ներկայացված հիմնական մեղադրանքներն էին տարբեր տարիներին ՀՀ Դաշնակցության անդամ լինելը, պատերազմի տարիներին գերեվարվելն ու վերմախտի «հայկական լեգեոնում» ծառայելը¹¹: Վերջիններս կազմում էին Հայաստանից արտաքսվածների մոտ 1/3 մասը՝ 879 ընտանիք¹²: 1946-1948 թթ. Հայաստան ներգաղթած սփյուռքահայերի շրջանում ևս խորհրդային հատուկ ծառայություններն ու ՆԳՆ-ն «գտան» «դաշնակներ» ու աքսորի ենթարկեցին մյուսների հետ միասին, սակայն նրանց թիվը՝ 350 ընտանիք(1454 մարդ)¹³, այնքան մեծ տոկոս չի կազմել 1949 թ. բռնագաղթվածների մեջ (ընդամենը նրանց 11%-ը, իսկ հայրենադարձների՝ ընդամենը 1,6%-ը):

«Սևծովյան ափից» կատեգորիայով 1949 թ. բռնագաղթի ենթարկվեց 57680 մարդ¹⁴: Նրանց թվում ամենամեծ թիվն էին կազմում ազգությամբ հույն բռնագաղթվածները՝ 1953 թ. հունվարի 1-ի դրությամբ նրանց թիվը վերոնշյալ կատեգորիայի մեջ ըստ ցուցակի կազմում էր 37352 մարդ: Հաջորդը իրենց թվակազմով գալիս են հայերը՝ «դաշնակներ» անվամբ՝ ըստ ցուցակի 15486 մարդ,ինչը կազմում է վերոնշյալ կոնտինգենտի մոտավորապես 27%-ը:

Ցավոք, ստույգ տվյալներ չկան Վրացական ու Ադրբեջանական ԽՍՀ-ներից, Սևծովյան ափամերձ շրջաններից ու Կրասնոդարի երկրամասից 1949 թ. բռնագաղթի ենթարկված հայերի ստույգ թվի վերաբերյալ: Այդպիսի մոտավոր հաշվարկ կարելի է կատարել հետևյալ կերպ. եթե հաշվի առնենք Հայկական ԽՍՀ-ից 1949 թ. բռնագաղթվածների թիվը 13272 մարդ, իսկ 1953 թ. հունվարի 1-ի դրությամբ հատուկ վերաբնակիչների ցուցակներում «Սևծովյան ափից» կատեգորիայի «դաշնակներ» ենթակատեգորիայով անցնում էր 15486 մարդ, ապա կոպիտ հաշվարկներով (առանց հաշվի առնելու 1949-1953 թթ. մահա-

¹⁰ Մանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 231:

¹¹ Նույն տեղում, էջ 238:

¹² Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 242:

¹³ Земсков В. Н., նշվ. աշխ., էջ 247:

¹⁴ http://www.tuad.nsk.ru/~history/author/Russ/Z/Zemskov/Articles/HI_USSR.HTM

ցածների ու աքսորից ազատվածների թիվը, ինչը շատ փոքր է եղել տվյալ ժամանակահատվածի համար), կստացվի, որ Հայկական ԽՍՀ-ից դուրս վերոնշյալ ենթակատեգորիայով անցնում էր մոտավորապես 2200 մարդ: Ծնելիության և մահացության մասին տվյալները տրվում են Վ.Ն.Ձեմսկովի աշխատության մեջ, սակայն այդ տվյալները վերաբերում են միայն «Մևծովյան ափից» ընդհանուր կատեգորիային՝ 1241 ծնված, 1179 մահացած: Այստեղից երևում է, որ այս ցուցանիշը ոչ մի էական ազդեցություն չի կարող ունենալ մեր հաշվարկների վրա: Ինչ վերաբերվում է աքսորից ազատման դեպքերին, ապա 1949-1953 թթ. թողոքների քննարկումների արդյունքում աքսորից ազատվել է ընդամենը 876 հայ Ալթայի երկրամասից¹⁵:

Եթե Ղրիմի հայության բռնագաղթը կարելի է վստահաբար բնորոշել որպես զուտ ազգային պատկանելության, համընդգրկուն մեղադրանքի վրա հիմնված համատարած բռնարարք, ինչ Ղրիմահայությանը տալիս է «բռնադատված ժողովրդի» կարգավիճակը, ապա 1949 թ. Հայաստանում ու հարևան հանրապետություններում հայության նկատմամբ բռնությունների դեպքում այդպիսի սահմանումը տարածելը բավականին վիճելի հարց է թվում: Սի կողմից, առկա են հետևյալ փաստարկները. եթե այդ գործողությունն իրականցվել է որպես յուրատեսակ «պատիժ» երկրորդ աշխարհամարտի ժամանակ աշխարհասփյուռ հայության մի փոքր հատվածի կողմից գերմանացիների հետ համագործակցություն կազմակերպելու կամ վերմախտի կազմում խորհրդային զորքերի դեմ կռվելու համար, ապա նմանատիպ գործողությունները չէին կարող օբյեկտիվ լինել հենց թեկուզ իրենց ծավալային ընդգրկման առումով: Հայ ժողովուրդը Մեծ հայրենականի ժամանակ իր ուժերից վեր ներդրում է ունեցել ֆաշիստական զավթիչների դեմ պայքարում, իսկ նրա մի չնչին հատվածի ներկայացուցիչների կողմից վերմախտի «Հայկական լեգեոնում» ծառայելը գլխավորապես եղել է ստիպողական, հարկադրված ու ժամանակավոր քայլ: Խորհրդային պետության այդ ժամանակվա միջազգային վարկի, երկրի ներսում հաղթանակած ստալինյան կարգերի իդեալականացման ու

¹⁵ Земсков В. Н., նշվ. աշխ., էջ 169:

փառաբանման, ինչպես նաև հասարակական «աչալրջության» ու պետական հարկադրանքի մարմինների կողմից խստագույն վերահսկողության պայմաններում ոչ մի սպառնալիք չէր կարող լինել նաև երկրի ներսում հակախորհրոյային լուրջ գործունեության ծավալման համար, մասնավորապես, «Դաշնակցության» կողմից: Բռնությունն իրականացվել է ոչ թե հայ բնակչությանը ներկայացված զանգվածային մեղադրանքի հիման վրա, այլ՝ հատուկ ենթակատեգորիայով («դաշնակներ»), այսինքն, որպես ձևական հիմք ընդունվել է հիմանկանում նախկինում «Դաշնակցություն» կուսակցության անդամ լինելը և գերեվարվելն ու «Հայկական լեգեոնում» ծառայելը:

Մյուս կողմից, սակայն, վերմախտի ազգային լեգեոններ ստեղծվել են նաև ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների համար, մասնավորապես, վրացիների, ադրբեջանցիների, Սիջին Ասիայի ժողովուրդների, լատիշների, էստոնացիների, կազակների և այլն, և դրանց ստեղծման գործում ու նացիստների հետ համագործակցություն ծավալելու մեջ կարելի էր մեղադրել նաև այդ և բազում այլ ժողովուրդների ու նրանց մեջ գործող ազգային կազմակերպություններին ու կուսակցություններին: Սակայն, առանձնացնելով հենց «Դաշնակցությանը» այդպիսիների շարքից, ստալինյան իշխանությունները, անշուշտ, ցուցեբերել են յուրատեսակ միտում՝ ուղղված հենց հայ ժողովրդի դեմ:

ԱՐՅՈՒՍԱԿ 1

Դրիմի հայերի և 1949 թ. բռնադատված հայերի տեղաբաշխումն ըստ տարածաշրջանների 1953 թ. հունվարի 1-ի դրությամբ¹⁶

ՀԱՏՈՒԿ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԱՅՐԸ	ԴՐԻՄԻ ՀԱՅԵՐԸ	«ՊԱՇՆԱՎՆԵՐԸ»
ԸՆԴԱՄԵՆԸ	8570/8310* մարդ	15486/15395 մարդ
Ղազախական ԽՍՀ	575	17
Ուզբեկական ԽՍՀ	381	-
Կեմերովոյի մարզ	1385	3
Կրասնոյարսկի երկրամաս	8	27
Ալթայի երկրամաս	-	15437
Նովոսիբիրսկի մարզ	7	2
Մոլոտովյան մարզ	1835	-
Տոմսկի մարզ	3	-

¹⁶ Մոլյուսակի տվյալները վերցված են Վ.Ն. Զեմսկովի նշված գրքից

* Ըստ ցուցակի / առկա են

Ավերդույնի մարզ	2858	-
Տյումենի մարզ	1	-
Իրկուտսկի մարզ	26	-
Տաթևական ԽՍՀ	121	-
Տուվայի մարզ	2	-
Բաշկիրական ԻԽՍՀ	941	-
Խաբարովի երկրամաս	7	-
Մարիական ԻԽՍՀ	282	-
Յակուտական ԻԽՍՀ	12	-
Կիրովի մարզ	9	-
Մոսկվայի մարզ	23	-
Մուրմանսկի մարզ	1	-
Թուրքմենական ԽՍՀ	1	-
Թարսարական ԻԽՍՀ	83	-
ԼՂԸ ուղղիչ-աշխատանքային ճամբարներում և հատուկ կառույցներում	7	-
Հեռավոր հյուսիս	1	-
Ամուրի մարզ	1	-

**ЛЕВОН ФАРМАНЯН
ИИ НАН РА**

ПРИНУДИТЕЛЬНЫЕ МИГРАЦИИ АРМЯН В СССР В 1940-Х ГОДАХ

РЕЗЮМЕ

30-40-е годы XX столетия в истории СССР характеризуются как эпоха депортации, выселения и насилия в отношении широких людских масс. В результате значительным изменениям подверглась демографическая карта различных частей страны.

Армяне, как и представители всех народностей, проживающих в СССР, сразу же после появления категорий трудовых и спецпоселенцев, были втянуты в невообразимый круговорот насильной миграции. И если в 1920-30-х годах массовые репрессии осуществлялись в основном на базе классовой принадлежности и инакомыслия, где репрессированные не делились на национальной или этнической основах, то уже в преддверии Великой отечественной войны и в последующих годах происходит значительный переход от социально-классового принципа репрессий к национальному и этническому.

Первое массовое выселение армянского элемента как такового произошло на основе указа ГКО от 2-го июня 1944 г. В течение мая-июня 1944 г. наряду с крымскими татарами, греками, болгарями, выселению подверглись также крымские армяне. Армянское население Крыма подверглось выселению без права возврата, только на основе национальной принадлежности и тотального обвинения, что и дает основание квалифицировать крымских армян в категории "репрессированных народов".

В 1949 г. представители армянского народа подверглись еще одной массовой депортации, на основе тайного решения СМ СССР N 2214-356сс от 29 мая 1949 г. с подписью Сталина.

ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒՂԵՆԿՅԱՆԻ ԿՏԱԿԻ ԵՎ ՀԱՄԱՆՈՒՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԿԱՐԵՎՈՐ
ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը հիմնադրվել է 1956-ին՝ Լիսաբոնում (Պորտուգալիա)՝ համաձայն բրիտանահպատակ հայ մեծահարուստ նավթարդյունաբերող Գալուստ Կյուլպենկյանի (1869-1955թթ.) 1953թ. հունիսի 18 թվակիր կտակի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առ այսօր գոյություն ունեն տարբեր կարծիքներ Գ. Կյուլպենկյանի կտակի «աղճատումների» հարցի շուրջ, անհրաժեշտ է անդրադառնալ նրա որոշ կարևոր բաժիններին:

Նյութը պատրաստվել է կտակի հրատարակված տարբերակի և հիմնարկության կանոնադրության հիման վրա, որոնք տեղադրված են նաև հիշյալ հաստատության համացանցի էջերում¹:

Գ. Կյուլպենկյանը կտակը կազմել էր ֆրանսերեն լեզվով, որին ազատորեն տիրապետում էր. պատճառը, թերևս, նրա՝ պորտուգալերենի ոչ հստակ իմացությունն էր, ինչպես վկայել է կտակը վավերացնող նոտար Ֆերնանդո Տավարեզ դը Կարվալիոն: Կտակի բովանդակությունը ֆրանսերենից պորտուգալերեն թարգմանել է Պեդրո Բատալիա Ռեիսը Գ. Կյուլպենկյանի ու նրա երկու վկաների՝ Մանուել Անտունես Որթեյրոյի և Էռնեստո Պերեյրա դը Ալմեիդայի ներկայությամբ, որից հետո բոլորն էլ ստորագրել են այն (1953թ. հունիսի 18)²:

¹ <http://www.gulbenkian.org/english/statutes.asp>, Azeredo de Perdigó J., Calouste Gulbenkian Foundation, Chairman's Report, Lisbon, 1961, pp. 191-201:

² http://www.gulbenkian.pt/fundacao_estatutos_testamento.asp

Գ. Կյուլպենկյանը կտակատարներ նշանակեց լորդ Ռեդկլիֆ Վերմեդին, ժոզե Ազերեդո դը Պերդիգանին և Գևորգ Եսայանին³: Չարկ է կտակից մեջ բերել մի հատված, որն անմիջապես առնչվում է լորդ Ռեդկլիֆին և ուշագրավ է այն առումով, որ հետագայում Ռեդկլիֆը հրաժարվեց կտակատարի իր պաշտոնից: Կտակի՝ լորդին վերաբերող հատվածում ասված է. «...ներկայումս լորդ Ռեդկլիֆը, իր պաշտոնական պարտականությունների պատճառով չի կարող ընդունել պաշտոնը գործադրելու իրավունքը (խոսքը կտակատարի պաշտոնի մասին է-վ.Դ.): Մակայն հնարավորինս շուտ, երբ հաղթահարվի խոչընդոտը, նա պետք է անցնի հավատարմատարի և հիմնարկության գործերի կառավարչության վերադաս տնօրենի պարտականությունների կատարմանը...»⁴:

Լորդը Կիպրոսի կոմիսարն էր և զբաղեցնում էր Մեծ Բրիտանիայի պետական գերագույն իրավագետի պաշտոնը, որն էլ արգելել է նրան զբաղվելու այլ գործով⁵: «Մարդը և իր գործը» աշխատության մեջ նշված է, որ Ռեդկլիֆը. «...անմիջապես հրաժարեցաւ իր պաշտօնէն...»⁶: Իսկ ըստ Լ. Բալազյանի՝ «...երկարատև բողոք-նամակագրության միջոցով իր դժգոհությունն ու անհամաձայնությունը պաշտոնապես հայտնելուց հետո՝ ուղղված Խոսե Պե Ազերեդո Պերդիգանին, չհանդուրժելով նրա թելադրանքով կատարված պորտուգալական իշխանությունների կողմից թույլ տրված կամայականությունները, դուրս եկավ կտակատարի իր պարտականություններից»⁷:

Պատելով ժոզե Ազերեդո դը Պարդիգանի և Ռեդկլիֆի միջև տեղի ունեցած նամակագրության տևողությունից՝ կարելի է եզրակացնել, որ Գ. Կյուլպենկյանի մահից հետո այնքան էլ երկար ժամանակ չէր անցել, երբ լորդը հրաժարվեց իր պարտականություններից: Ռեդկլիֆը համաձայն չէր կտակի որոշ կետերի ձևակերպումներին, բայց պնդել,

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Արեւ օրաթերթ, քիւ 11.622, 7 մարտ, 1957, Կահիրե:

⁶ Գալուստ Մարգիս Կիւլպենկեան: Մարդը եւ իր գործը (այսուհետև՝ Մարդը և իր գործը), Գալուստ Կիւլպենկեան Յիմնարկութեան Յայկական Յամայնքներու Ծառայութեան Բաժանմունք, Լիզպոն, 1999, էջ 50:

⁷ Բալազյան Լ., Գալուստ Գյուլբենկյան, Ե., 2004, էջ 249:

որ դրանք աղճատվել կամ վերափոխվել էին, ճիշտ չէ, քանզի կտակը կազմելու պահին լորդն անծամք ներկա չի եղել այդ գործընթացին և բնական է, որ տեղյակ չէր Գ. Կյուլպենկյանի որոշ ծրագրերի մասին: Ռեդկլիֆը հիշատակում է, թե ծանոթ էր հայ նավթարդյունաբերողի՝ հասարակական-բարեգործական հիմնադրամ ստեղծելու մտադրությանը և նշում էր, որ որևէ երկրի օգնելու հարցում նա որևէ մեկին առաջնություն չէր տալիս շեշտելով դրա համամարդկային բնույթը⁸:

Հայտնի է, որ հայ մեծահարուստը Ֆրանսիայից Պորտուգալիա տեղափոխվեց անվտանգության նկատառումներով, որովհետև 1942թ. Ֆրանսիայի մեծ մասը նվաճվել էր ֆաշիստական Գերմանիայի կողմից, որն իրական վտանգ էր ստեղծել նաև Կյուլպենկյանի համար: Միանգամայն բնական է, որ նա որոշել է ստեղծվելիք բարեգործական հաստատության մայր կառույցը տեղակայել Պորտուգալիայում՝ այն համարելով ապահով երկիր: Սակայն դա չէր նշանակում, որ հաստատությունը ծառայելու էր միայն Պորտուգալիային ու նրա ժողովրդին:

Կտակի 14-րդ բաժնում մասնավորապես ասված է. «...գործերի կառավարչության կենտրոնը պետք է տեղակայված լինի Լիսաբոնում, թեև հավատարմատարները լիազորված են հանձնաժողովներ ստեղծել, եթե դրանք անհրաժեշտ կհամարվեն բաժանմունքների արդյունավետ գործունեության համար»⁹:

Պերդիգանին ուղղված իր 1956թ. փետրվարի 27 թվակիր նամակում Ռեդկլիֆը գրում է. «...իսկապես, կտակի այն կետը, որով կտակարարը արտահայտում էր իր ցանկությունը՝ ստեղծել Լիսաբոնում տեղակայված «Մշտական պորտուգալական հաստատություն», ճշգրտում է, որ այդ հաստատության նպատակները լինելու են մարդասիրական, զեղարվեստական, կրթական ու գիտական, և որ գործունեությունը չի իրականացվելու միայն Պորտուգալիայում, այլ նմանապես բոլոր այն երկրներում, որտեղ նպատակահարմար կհամարեն կառավարիչները: Անկարելի է արհամարհել այս բառերի կարևորությունը...»¹⁰:

⁸ Gulbenkian N., Portrait in oil, New York, Simon and Schuster, 1965, pp. 331-332:

⁹ Azeredo de Perdigao J., նշվ. աշխ., էջ 197:

¹⁰ Gulbenkian N., նշվ. աշխ., էջ 330-337:

Ուրեմն, ո՞րն էր խնդիրը. առավել ևս, երբ հետազայում հիմնարկությունն իր մշակութային կենտրոնները հիմնեց Լոնդոնում և Փարիզում¹¹: Ինչու՞ էր մի տեղ լորդը հաշվի նստում Կյուլպենկյանի կտակի բաժինների հետ, որոնք վերաբերում էին հիմնարկության նպատակներին ու տեղակայմանը, մի այլ տեղ առարկում, թե կտակարարը մտադիր չէր իր նյութական բոլոր միջոցները, կամ դրանց մի ինչ-որ մասը Պորտուգալիային հատկացնել¹²:

Ինչպես Ռեդկլիֆն, այնպես էլ Գ. Կյուլպենկյանի շրջապատի մարդիկ, որոնց թվում նաև Գ. Կյուլպենկյանի որդին՝ Նուբար Կյուլպենկյանը, գիտակցում էին հիմնարկության ստեղծման և տեղակայման հետ կապված հարցերի լրջության աստիճանը, որը կարող էր սրվել Գ. Կյուլպենկյանի մահից հետո: Ծիշտ է՝ Ռեդկլիֆը դժգոհում էր, թե Կյուլպենկյանն իր հարստությունը ձեռք չի բերել Պորտուգալիայում, կամ պորտուգալական պետության հովանավորությամբ կատարված գործարքների արդյունք չէ, սակայն միևնույն ժամանակ մոռանում էր նշել, որ այդ հարստությունը ձեռք էր բերվել Իրաքում, իսկ անգլիական իշխանություններն էլ ոչ թե հովանավորել, այլ ժամանակ առ ժամանակ խոչընդոտել էին հայ նավթարդյունաբերողի գործունեությանը¹³:

Ո՛չ Պերդիգանը, ո՛չ էլ պորտուգալական իշխանությունները թույլ չէին տա, որ հիմնարկության կենտրոնատեղին տեղափոխվեր Պորտուգալիայի սահմաններից դուրս, այն դեպքում, երբ դրա համար ունեին առավել քան բավարար իրավական հիմքեր՝ պարփակված կտակի հետևյալ բաժնում. «...գործերի (հիմնարկության-Վ.Ղ.) կառավարչության կենտրոնը պետք է տեղակայված լինի Լիսաբոնում...»¹⁴: Այլ հարց է, երբ Ռեդկլիֆը փորձում էր ակնարկել «ոչ միայն Պորտուգալիայում...» ձևակերպումը՝ հավանաբար նպատակ ունենալով ոչ հե-

¹¹ <http://www.gulbenkian.org.uk>, <http://gulbenkian-paris.org>. Կտակում չէր նշված հայկական համայնքների ծառայության բաժանմունք ստեղծելու մասին. հիշյալ բաժանմունքն ստեղծվել է հիմնարկության առաջին ղեկավար Ժոզե Ազեդեդոյի ղեկավարությամբ և Գ. Եսայանի քանցքերով:

¹² Gulbenkian N., նշվ. աշխ., էջ 330-337:

¹³ Նույն տեղում, էջ 352:

¹⁴ Azeredo de Perdigao J., նշվ. աշխ., էջ 197:

ռավոր ապագայում որպես հիմնարկության կենտրոնատեղի ընտրել Լոնդոնը: Ճիշտ է՝ Պերդիգանին ուղղված նամակներում նա բացահայտ ոչ մի ակնարկ չի արել այդ կապակցությամբ, սակայն դրանց բովանդակությունից նշմարվում էր լորդի հիշյալ մտադրությունը:

Գ. Կյուլպենկյանի կտակում ասված է, որ. «...պորտուգալական օրենսդրությամբ համապատասխան՝ ներկա կտակով ստեղծվել է հիմնարկություն, որը պետք է կրի «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկություն» պաշտոնական անունը: Հիմնարկության ստեղծման հիմնական սկզբունքը հետևյալն է.

ա) այն մշտնջենապես պորտուգալական է, տեղակայվելու է Լիսաբոնում, սակայն անհրաժեշտության դեպքում կարող է մասնաճյուղեր ունենալ քաղաքակիրթ աշխարհի ցանկացած մասում,

բ) նրա նպատակները լինելու են բարեգործական, գեղարվեստական, կրթական և գիտական,

գ) նրա գործունեությունն իրականացվելու է ոչ միայն Պորտուգալիայում, այլև ցանկացած որևէ երկրում, որտեղ նպատակահարմար կհամարեն նրա ղեկավարները,

դ) այն ղեկավարվելու է ստորև նշված հավատարմատարների և նրանց կողմից ընտրված այլ անձանց միջոցով...»¹⁵:

Ռեդկլիֆն այն կարծիքին էր, թե Կյուլպենկյանի կտակի որոշ ձևակերպումների մեկնաբանությունը հնարավոր էր այլ իրավագետների կողմից վիճարկել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հիշատակված ձևակերպումները չափազանցված կարևորություն են տալիս հիմնարկության գտնվելու վայրի ընտրությանն ու այն ղեկավարող օրենսդրությամբ¹⁶:

Կարելի է նշել, որ սա արդեն յուրօրինակ իրավական խառնաշփոթ ստեղծելու փորձ էր՝ ամեն գնով հասնելու նրան, որ նախ՝ հիմնարկության գլխավոր կառույցը չտեղակայվի Պորտուգալիայում, ապա փորձ կատարվի այն հիմնելու Մեծ Բրիտանիայում: Հարկ է ընդգծել, որ չհասնելով դրան և խոչընդոտների հանդիպելով՝ իրականացնե-

¹⁵ Նույն տեղում, էջ 195:

¹⁶ Gulbenkian N., նշվ. աշխ., էջ 332:

լու կտակատարի իր պարտականությունները, որոնց մասին նշված էր նաև կտակում, լորդ Ռեդկլիֆը հրաժարական տվեց:

Գ. Կյուլպենկյանի կտակում նշված է, որ հավատարմատարները արդյունավետ համագործակցություն էին իրականացնելու Ավետուժ Դակոբյանի, Էքսերջյանի, Կարլ Պ. Լ. Վիշոյի, Ռոբերտո Կյուլպենկյանի և Լ.Գ. Դենտոնի հետ, ինչպես նաև պետք է լիարժեք համագործակցություն ապահովվեր «Պարոնայք թմսոն Մակ Լինտոկ և միություն» անգլիական հաշվապահական ընկերության հետ: Ստեղծվելիք հիմնարկության հույժ կարևոր ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով կտակատարները խորհրդակցելու էին ամերիկյան որևէ բարձրակարգ բանկի հետ, ինչպիսին օրինակ, Չեյսի ազգային բանկն է¹⁷:

Գ. Կյուլպենկյան հիմնարկությունը ժառանգեց կտակարարի նավթային շահութաբաժինը, որն այն ժամանակ կազմում էր մոտ 4 մլն. ֆունտ-ստերլինգ, իսկ հետագայում հասավ 10 միլիոնի¹⁸: 1976թ. «Iraç Petroleum Co. Լժ»-ի նավթահորերի ազգայնացումից և ընկերության լուծարումից հետո Իրաքի կառավարությունը կասեցրեց Գ. Կյուլպենկյան հիմնարկության Իրաքում ունեցած նավթային եկամտի արտոնությունը¹⁹:

Գ. Կյուլպենկյանը հիմնարկությանը կտակեց նաև արվեստի գործերի իր հավաքածուն, որի համար 1969թ. Լիսաբոնում բացվեց հատուկ թանգարան: Դայ բարերարը կատարել էր նաև որոշ մասնակի հատկացումներ Կ. Պոլսի Սուրբ Խաչ հիվանդանոցին և Երուսաղեմի Գալուստ Կյուլպենկյան գրադարանին²⁰:

1956թ. հուլիսի 18-ին Պորտուգալիայի կառավարությունը թիվ 40690 հրամանագիր-օրենքով Գ. Կյուլպենկյան հիմնարկությանը շնորհեց իրավաբանական անձի կարգավիճակ, իսկ նրա կանոնադրության մշակման աշխատանքներում մեծ դեր խաղաց ժոզե Ազեբեդո դը Պերդիգանը²¹:

¹⁷ http://www.gulbenkian.pt/fundacao_estatutos_testamento.asp

¹⁸ Մարդը և իր գործը, էջ 50:

¹⁹ Calouste Gulbenkian Foundation, Report of the accountancy checking commission, Relating to the year 1976, Lisbon, 1977, p.3:

²⁰ Azeredo de Perdigao J., նշվ. աշխ., էջ 196-197:

²¹ Լոյսն տեղում, էջ 179-187:

Հիմնարկության կանոնադրության մշակումը վերջ տվեց այն բոլոր շահարկումներին, որոնք գոյություն ունեին հաստատության տեղակայման վայրի, նրա վերադաս ղեկավար մարմնի գործառնությունների, ինչպես նաև ունեցած ֆինանսական կարողության և դրա բաշխման վերաբերյալ: Հարկ է անդրադառնալ կանոնադրության այն կարևոր բաժիններին, որոնք վերաբերում են հիմնարկության տեղակայման վայրին, Վարչական խորհրդի պարտականություններին և ֆինանսական միջոցներին: Ստորև շարադրվող նյութի տվյալները վերցրել ենք հիմնարկության համացանցի էջերից²²:

Իրավական առումով հիմնարկությունը հիմնադրամ է և հանրային սպասարկման մասնավոր կառույց՝ օժտված իրավաբանական անձի կարգավիճակով (գլուխ 1-ին, հոդված 1): Հաստատությունը կառավարվում է հիշյալ կանոնադրությամբ և նշված է, որ որևէ թերացման կամ բացթողման դեպքում այն պետք է ղեկավարվի պորտուգալական համապատասխան օրենքով: Հիմնարկությունը մշտնջենապես պորտուգալական է (հոդված 2), տեղակայման վայրը՝ Լիսաբոն (հոդված 3):

Ըստ կանոնադրության՝ նպատակահարմար համարվելու դեպքում կարելի է հիմնել մասնաճյուղեր, որոնք, ինչպես վերը նշվեց, այժմ գործում են Լոնդոնում ու Փարիզում: Կանոնադրության երկրորդ գլխում ներկայացված են հիմնարկության նպատակները և գործունեության բնագավառները, որոնք բարեգործական, գեղարվեստական, կրթական ու գիտական են (հոդված 4), իսկ գործունեությունն իրականացվում է ոչ միայն Պորտուգալիայում, այլև ցանկացած մի որևէ երկրում, որտեղ նպատակահարմար են համարում հաստատության ղեկավարները (հոդված 5):

Կանոնադրությամբ ամրագրվել են նաև Գ. Կյուլպենկյանի կտակով սահմանված որոշ մասնակի հատկացումները, այն է՝ Կ.Պոլսի Սուրբ Խաչ հիվանդանոցին և Երուսաղեմի Գալուստ Կյուլպենկյան գրադարանին (հոդված 7):

Հիմնարկության դրամազլխի մասին նշված է կանոնադրության 3-րդ գլխում: Հիշյալ գլխի 8-րդ հոդվածի համաձայն՝ հիմնարկության

²² <http://www.gulbenkian.org/english/statutes.asp>

դրամագլուխը կազմված է կտակարարի ունեցվածքի ողջ ակտիվից՝ անկախ դրա բնույթից և տեղակայման վայրից: Կանոնադրությամբ շեշտված է, որ հիմնարկությունն իրավունք ունի իր լիազորությունների ու կարողությունների շրջանակներում ունենալ եկամուտներ և ընդունել բոլոր այն նվիրատվությունները, որոնք կարող են կատարվել տարբեր հասարակական գործիչների կամ կազմակերպությունների կողմից:

Հիմնարկության գործերի կառավարչությանն է նվիրված կանոնադրության 4-րդ գլուխը, որտեղ նշված է, որ հաստատության կառավարումն իրականացվում է Վարչական խորհրդի կողմից՝ կազմված 3 կամ 9 անդամից, որոնցից մեկը խորհրդի նախագահն է: Կանոնադրությամբ ընդգծվում է նաև, որ ելնելով հիմնարկության՝ պորտուգալական լինելու և այն հանգամանքից, որ այն ղեկավարվում է պորտուգալական օրենքներով՝ Վարչական խորհրդի մեջ պետք է գերակշռեն ազգությամբ պորտուգալացիները (հոդված 11): Կտակարարի ցանկությամբ՝ Վարչական խորհրդի անդամներից մեկը զբաղեցնում է Գ. Կյուլպենկյանի ուղիղ գծով արյունակից հետնորդը (հոդված 12): Հիմնարկությունն ունի նաև պատվավոր նախագահի պաշտոն, որը, սակայն, կրում է զուտ խորհրդանշական բնույթ (հոդված 13):

18-րդ հոդվածում նշված է, որ հիմնարկության հիմնադրի կողմից ընտրված Վարչական խորհրդի առաջին անդամների պաշտոնական պարտականությունները ցմահ են: Խորհրդում ցմահ պարտականություններ ունի նաև Գ. Կյուլպենկյանի ուղիղ գծով արյունակից հետնորդը, իսկ մնացած անդամները ռոտացվում են (հոդվածներ 20, 21): Կտակի համաձայն՝ Վարչական խորհրդի բոլոր անդամները վարձատրվում են:

Կանոնադրության 5-րդ գլուխը նվիրված է հիմնարկության նյութական միջոցների վերահսկողությանը: Այդտեղ մասնավորապես նշված է, որ յուրաքանչյուր տարի Վարչական խորհուրդը պետք է կազմի հիմնարկության նվիրատվությունների ճշգրիտ գույքացուցակ և պատրաստի եկամուտների ու ծախսերի պաշտոնական հաշվետվություն: Կտակարարի կամքով հիմնարկության բոլոր հաշվետվությունների ստուգումը մշտապես պետք է գտնվի «Արտոնագրված հաշվապահ»

ների» հսկողության ներքո (հոդված 23): Ի հավելումն դրա՝ ստեղծվել և գործում է Հաշվապահական ստուգող հանձնաժողովը՝ բաղկացած Հանրային հաշվապահության, Հանրային աջակցության կազմակերպությունների գլխավոր տնօրեններից և երեք անդամներից, որոնք նշանակվում են Լիսաբոնի Գիտությունների, Արվեստի ակադեմիաների, Բանկային գործի և բանկերի ազգային խորհրդի կողմից (հոդված 24):

Հաշվապահական ստուգող հանձնաժողովը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունիսի 30-ը, ստուգում է հիմնարկության նվիրատվությունների գույքացուցակը և նախորդ տարվա եկամուտների ու ծախսերի պաշտոնական հաշվետվությունը՝ հիմք ընդունելով «Արտոնագրված հաշվապահների» զեկույցներն ու փաստաթղթերը (հոդված 25): Հաշվապահական ստուգող հանձնաժողովը պատրաստում է զեկույց, որը հրատարակվում է հիմնարկության միջոցներով: Հիշյալ հանձնաժողովի բոլոր անդամները վարձատրվում են: Աշխատավարձի չափը որոշվում է Վարչական խորհրդի կողմից: Այն կարող է փոփոխվել յուրաքանչյուր երեք տարին մեկ:

Գ. Կյուլպենկյանն ու ժոզե Ազերեդո դը Պերդիգանը ցանկանում էին, որպեսզի ստեղծվի ոչ միայն բարեգործական կառույց, այլև հուսալի ձևով կառավարվող կազմակերպություն, որի կարևոր հարցերը չվճռվեին մեկ անհատի, կազմակերպության կամ կառավարության կողմից, այլ փոխկախվածության մեջ գտնվեին միմյանցից՝ ապահովելով հաստատության արդյունավետ և անխափան աշխատանքը: Գ. Կյուլպենկյանի կտակի ձևակերպումներն ու հաստատության կանոնադրությունը լուծեցին վերոհիշյալ խնդիրները, որի արդյունքում էլ հիմնարկությունն առ այսօր շարունակում է բարեսիրական բեղմնավոր գործունեություն իրականացնել աշխարհի տարբեր մասերում:

**О НЕКОТОРЫХ ВАЖНЫХ ПУНКТАХ ЗАВЕЩАНИЯ
ГАЛУСТА ГЮЛБЕНКЯНА И УСТАВА
ГЮЛБЕНКЯН УЧРЕЖДЕНИЯ**

РЕЗЮМЕ

Учреждение Галуст Гюлбенкян был основан в 1956 г. в Португалии согласно завещанию нефтяного магната Г. Гюлбенкяна (1869-1955). Своим декретом (40690, датированный 18-го июля 1956 г.) правительство Португалии признало правосубъектность вышеупомянутого учреждения.

Учреждение Г. Гюлбенкян занимается благотворительной деятельностью во всем мире. Оно имеет отделения в Лондоне и в Париже. В учреждении также есть Армянский отдел, который оказывает материальную помощь Армении и Армянской Диаспоре.

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ՂԱՏԸ

Ժողովուրդների պատմությունը փառահեղ հաղթանակների ու նաև անդառնալի կորուստների մի երկարաձիգ ճանապարհ է և այդ տատասկոտ ճանապարհին գոյատևել են միայն այն ժողովուրդները, որոնք պահպանել են պատմական հիշողությունը՝ հաղթանակներից չեն մեծամտացել ու կորուստներից չեն հուսալքվել: Տիգրան Մեծից մինչև Ավարայր, Սարդարապատ ու Արցախ շարունակվող մեր ճանապարհին մենք փառահեղ հաղթանակներ, նաև ծանր կորուստներ ենք ունեցել: Այս ճանապարհի յուրաքանչյուր հանգրվանում մեր գլխին կախված է եղել «լինել-չլինելու» տեսանելի վտանգը, որն ավելի ահագնացավ XX դարասկզբին: Դարը մենք սկսեցինք զոհի կարգավիճակով. աշխարհի հզորների լուռ համաձայնությամբ թուրքական կառավարությունն իրականացրեց համաշխարհային պատմության մեջ նախադեպը չունեցող, նախօրոք ծրագրված ու կազմակերպված եղեռնագործություն՝ սրի քաշելով 1.5 միլիոն հայերի, հրի մատնելով հարյուրավոր շեն ու ծաղկուն քաղաքներ և գյուղեր, անթիվ-անհամար պատմամշակութային կոթողներ, անգնահատելի ձեռագիր մատյաններ:

Եղեռնը հատեց մեր դարավոր կաղնու դալար ճյուղերը, ավաղ հայ ժողովրդին շատ ժամանակ չպահանջվեց, որ նրանք նոր շիվեր տան ու աշխարհին զարմացնեն՝ հայերի կենսունակությամբ: Դրավառ ապացույցը անցյալ դարավերջին մեր նորանկախ հանրապետության ծնունդն է ու ազատագրված Արցախը:

Ոչնչացնելով արևմտահայության մեծ մասին՝ թուրք վանդալների ժառանգները փորձում են ազատ յուրացնել մեր ազգային արժեքները, որի նպատակը հայոց կորցրած հայրենիքի սեփականումն է ամբողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առջև: Սակայն այսօր գնալով առնականանում է հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, որի արդյունքում արդեն մոտ երկու տասնյակից ավելի երկրների խորհրդարաններ ճանաչել են ու դատապարտել այդ եղեռնագործութ-

յունը: Ավելորդ է ասել, որ այն թուրքիային շատ է անհանգստացնում, քանի որ թուրքական իշխանությունները զգում են, որ գալու է նաև հատուցման պահը: Ահա թե ինչու այդ երկրում ոչ միայն շարունակվում է մարդու իրավունքների ոտնահարումը, այլև անգամ հայերի ցեղասպանության մասին մի փոքր հիշատակումը դիմավորվում է սվիններով: Ենթադրելով, որ հայերի դեմ իրականացվող սպանությունները մեր սերունդներին փոխանցելն է, որը ի վերջո հանգեցնում է մեր հայրենիքը վերադարձնելու խնդրին: Եթե Խորհրդային ՉԽՍՍ-ի կառավարությունը հարկադրված էր հրաժարվել Հայկական հարցից, ապա Հայ Դատը, Հայոց պահանջատիրությունն իրենց ուսերին վերցրին ցեղասպանությունից փրկված ու աշխարհի բազմաթիվ երկրներում ապաստան գտած արևմտահայության բեկորները: Խորհրդային ՉԽՍՍ-ի հարկադրական անգործունեության, Հայոց պահանջատիրությունից հրաժարվելու պայմաններում Հայկական հարցի լուծման համար պայքարի ղեկավարությունը իր վրա վերցրեց հայկական Սփյուռքը: Վերջինս էլ ստեղծեց առաջին հայրենակցական միությունները ըստ Արևմտյան Հայաստանի նահանգների ու գավառների՝ Ջեյթուն, Աստու, Վան-Վասպուրական, Էրզրում և այլն:

Հայրենակցական միությունները վերականգնում ու առաջնորդվում են ազգային այն ավանդույթներով, որոնք՝ ձևավորվելով ու զարգանալով Հայրենիքի տարբեր հատվածներում և՛ միմյանց փոխադարձաբար լրացնելով ու հարստացնելով, ստեղծում են լեզվական, մշակութային, հոգևոր ու պատմական ընդհանուր արժեքային համակարգ, որի շնորհիվ բնօրրանն ստանում է ազգային միասնական ու ամբողջական գաղափարական այնպիսի իմաստ, որպիսին Հայրենիքն է: Հենց Ազգի ու Հայրենիքի գաղափարներն են ընկած ազգային կառույցների աշխարհայացքի հիմքում:

Հայրենակցական միություններն իրենց ստեղծումից սկսած հանդես են գալիս որպես ա) ազգի միասնության և ազգային համաձայնության կառույցներ, բ) ազգային պետություն կերտելու կարևորագույն օղակներ, գ) հայապահպանության, պահանջատիրության և Հայ Դատի պաշտպանության հաստատություններ, դ) Հայրենիքի շենաց-

ման, քարգավաճման ու հզորացման կայուն գործոններ և ե) Հայրենիք-Սփյուռք կամրջի ամուր հիմնասյուղներ:¹

Այսպիսով հայրենակցական միությունների հիմնական նպատակներն են բնօրրանի ազգային, մշակութային, հոգևոր արժեքների պահպանումը, իսկ խնդիրներն են՝ բնօրրան վերադառնալու գաղափարի արմատավորումը, Հայրենիքի հետ միավորումն ու Հայրենիքի հզորացումը: Այս նպատակներն ու խնդիրները իրենց առջև ունենալով, ստեղծման օրվանից սկսած հայրենակցական միությունները որպես պահանջատիրության և Հայ Ղատի պաշտպանության հաստատություններ: Սփյուռքում գործող հայ ազգային կուսակցությունների, կազմակերպությունների, Հայ Ղատի համծնախմբերի, եկեղեցու հետ միասին լայն գործունեություն ծավալեցին Հայկական հարցի, Հայոց պահանջատիրության քարոզչության ուղղությամբ՝ ձգտելով այն դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց: Փաստաթղթեր հղվեցին ՍԱԿ-ին, Եվրախորհրդարանին, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդին, մեծ տերությունների ղեկավարներին Հայկական հարցի և պահանջատիրության լուծման խնդիրներով: Չնայած ձեռք բերված որոշ հաջողություններին, այնուամենայնիվ, արմատական շրջադարձ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և Հայ Ղատի /ամբողջությամբ/ համար մղվող պայքարում չկայացվեց մինչև 1960-ական թթ. կեսերը չհաջողվեց Հայոց ցեղասպանությունն ու Հայ Ղատը, պահանջատիրությունը հանել մոռացությունից ու դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց:² Որպես կանոն վերադարձը հայրենիք, որը քարոզվում էր հայրենակցական միությունների կողմից չի ընկալվել այլ կերպ, քան երևույթ, որը կարող է տեղի ունենալ միայն հայոց առևանգված հայրենիքը թուրքիայի լծից ազատագրելուց հետո: Մինչդեռ վերադարձի իրավունքի քարոզումը անուղղակիորեն հաստատում է հայերի՝ իրենց պատմական հողերի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքը և կարող է կռվան հանդիսանալ Հայ Ղատի ամբողջական լուծման համար: Իր հերթին թուրքերը Հայաստանը

¹Հակոբյան Գ.Վ, Տարագիր հայության Հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Երևան, 2002, էջ 117:

²Սահակյան Ռ. , Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 63:

բռնությանը հայաթափելու ոճի՞րը ձգտում են հավերժացնել՝ իրև փաստարկ ընդդեմ Արևմտահայաստանի նկատմամբ հայ ժողովրդի պահանջատիրության պնդելով, թե այն առարկայազուրկ է և ապօրինի, քանզի պահանջվող տարածքներում հայերն այլևս չեն ապրում:

Սփյուռքահայության ազգային մեծ զարթոնքը, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Հայ Դատի ու պահանջատիրության համար մղվող պայքարում արմատական շրջադարձը, այդ պայքարի նոր մարտավարության մշակումը տեղի ունեցավ Մեծ Եղեռնի 50-ամյակից՝ 1965 թ. հետո: Հայկական և ոչ հայկական մամուլում հրատարակվեցին բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներ, գրվեցին գրքեր, գրքույկներ՝ նվիրված Հայկական հարցին և ցեղասպանությանը: Կանգնեցվեցին մեծ եղեռնին նվիրված հուշարձաններ: Դիմումներ հղվեցին ՄԱԿ-ին, Եվակսորիդարանին, միջազգային բոլոր կազմակերպություններին, բազմաթիվ երկրների նախագահներին, խորհրդարաններին և կառավարություններին՝ Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը ճանաչելու ու պաշտպանելու առաջարկով: Հայկական Սփյուռքը տարբեր երկրներում, հատկապես ԱՄՆ-ում և Ֆրանսիայում լայն գործունեություն ծավալեց Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել տալու ուղղությամբ: Ի տարբերություն նախորդ շրջանների, սփյուռքահայ հայրենակցական միությունները, քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները, քաղաքական միտքն ընդհանրապես ավելի մեծ ուշադրություն դարձրեցին միջազգային կազմակերպությունների վրա ազդելու գործնական ուղիների, ծրագրերի մշակման ու գործադրման ուղղությամբ: Այս բնագավառում նշանակալից գործ կատարեց 1972 թ. Ամերիկայի հայկական համագումարը:³

Աստիճանաբար ակտիվացավ նաև խորհրդահայ հասարակությունը: Հենց 1970-1980-ական թթ. խորհրդային Հայաստանում ստեղծվեցին բազմաթիվ ընդհատակյա քաղաքական կազմակերպություններ, որոնց նպատակը ազգային պետականության վերկանգնումն էր:⁴ Հայ

³ Փիրոնյան Ռ., Հայ դատ, դասագիրք, II, ԱՄՆ, 1994, էջ 36:

⁴ Արծվագոյն Ձեյթուն, հ. 2, Երևան, 2005, էջ 6:

Դատի և դրա հետ կապված հայերի հայրենիք վերադառնալու խնդիրները սկսեցին վերստին արժարժվել 1980-ական թթ., սփյուռքահայ առանձին կազմակերպությունների, հայրենակցական միությունների կողմից կապված Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման հետ: ԽՍՀՄ - կազմում Հայաստանի Խորհրդային հանրապետությունը չէր կարող ունենալ արտաքին հստակ քաղաքականություն, մանավանդ Հայ Դատի հարցում: Նա ստիպված էր ենթարկվել Մոսկվայի դիրքորոշմանը: Այդ նույն ժամանակ սփյուռքահայ քաղաքական միտքը պայքարի առաջին պլան էր մղում Հայոց ցեղասպանության դատապարտման հարցը՝ արդարացիորեն գտնելով, որ Եղեռնի ընդունումն ու դատապարտումը հանգեցնելու է Հայկական հարցի և Հայ Դատի լուծման անհրաժեշտությանը:

1988 թ. փետրվարից հայ ժողովուրդը մտնում է իր պատմության նոր փուլը: Հայաստանում սկսված ազգային-ազատագրական, հզոր համաժողովրդական շարժման նպատակն էր Լեռնային Դարաբաղի վերամիավորումը մայր հայրենիքին և անկախ պետականության վերականգնումը: 1990 օգոստոսի 23-ին Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով հռչակվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Խորհրդային Հայաստանն անցավ պատմության գիրկը, իսկ 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացված հանրաքվեով սկիզբ դրվեց հանրապետության անկախությանը: Անկախության օգտին քվեարկեց ընտրողների 94,3%, իսկ սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը հայտատեց հանրաքվեի արդյունքները, այսինքն վերականգնվեց 70 տարի առաջ կորցված անկախ պետականությունը:⁵ Անկախության

⁵ Մինասյան Էդիկ, Հայաստանի երրորդ հանրապետությունը և հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրը, Տարեգիրք, Երևան, 2005, էջ 48:

հռչակումից հետո, երբ հայոց պետությունը պարտավոր էր տեր կանգնել Հայ Դատին, այդ տեղի չունեցավ, քանզի Հայաստանի Հանրապետության դիվանագիտությունը ՀՀ ղեկավարության օրոք սառեցրել էր հայ ժողովրդի ամենամեծ հիմնահարցը, թեև ստիպված էր զբաղվել նրա մասը կազմող արցախյան խնդրով: 1998 թվականից հետո հանրապետության նոր նախագահ ընտրված Ռ.Քոչարյանն իր միջազգային ելույթներով ՄԱԿ-ի գլխավոր նստաշրջանում, գազաթափողվներում և այլն, Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցը համարեց մեր երկրի արտաքին քաղաքականության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Ուստի պատահական չէ, որ այսօր շարունակվում ու սփյուռքահայերի ակտիվ աջակցությամբ ընդլայնվում է Հայոց ցեղասպանությունը ճանաչող պետությունների աշխարհագրությունը: Անկախությունն իր հետ բերեց հայրենակցական նոր միությունների առաջացում և նրանց ցանցի ընդլայնում: 1990-ական թթ. մայր հայրենիքում ստեղծվեցին Արևմտյան Հայաստանի նահանգների, գավառների անուններով հայրենակցական միություններ, միավորումներ ու հիմնադրամներ: Նրանց քանակն անցնում է հիսունից: Դրանցից են «Վասպուրական», «Տարոն», «Էրզրում», «Արծվաբույն Ձեյթուն», «Ձեյթուն», «Նոր Ձեյթուն» հայրենակցական բարեգործական, մշակութային միությունները, «Էրզիր» միավորումը, «Նախիջևան» հայրենակցական միությունը, «Խնուս» հիմնադրամը և այլն:

Ինչպես նախկինում, այնպես էլ նոր պայմաններում ստեղծված հայրենակցական միությունների նպատակն է պահպանել կորսված բնօրրանի կամ Հայրենիքի մասնատված, ինչպես նաև անկախացած տարածքների հիշատակներն ու ավանդույթները, այդ թվում՝ մշակութային, լեզվական, պատմական ու հոգևոր արժեքները և միավորվում են որպեսզի վերականգնեն Հայրենքի դիմագիծը և ազգային ոգին, առանց որի հնարավոր չի լինի կերտել ապագայի Հայրենիքը:

Նոր պայմաններում՝ հաշվի առնելով բնօրրանի (Հայրենիքի տարբեր հատվածների) պատմական ճակատագրերի տարբերությունները և բնօրրանի անվան շուրջ համախմբվելու գաղափարից բխող նպատակներն ու խնդիրները, սահմանվեցին հայրենակցական միությունների գլխավոր հիմնախնդիրները:

Առաջին. պահանջատիրության կամ կորցրած բնօրրանի հիմնախնդիր

Երկրորդ. վերամիավորում կամ մասնատված բնօրրանի հիմնախնդիր

Երրորդ. անկախացած բնօրրանի հզորացման հիմնախնդիր:

Այս հիմնախնդիրներն ընկան հայրենակցական միությունների գործառույթների հիմքում: Այդ գործառույթներն էլ բաժանվեցին երեք խմբերի՝

Առաջին. Չայրենիքի կորցրած տարածքները (Արևմտյան Չայաստանը՝ վերը թվարկված արևմտահայ նահանգների ու զավառների անուրաններով՝ ստեղծված միությունները, այդ թվում Փոքր Չայքը, Կիլիկիան, Նախիջևանը, Գարդմանը) և այլն ներկայացնող հայրենակցական միությունները, որոնց գործառույթները ընթանում են բոլոր երեք հիմնախնդիրներով:

Երկրորդ. Չայրենիքի մասնատված տարածքները (Զավախք և այլն) ներկայացնող հայրենակցական միություններ, որոնց գործառույթները պայմանավորված են հիմնականում երկրորդ և երրորդ հիմնախնդիրներով:

Երրորդ Չայրենիքի անկախացած տարածքները (ՀՀ, ԼՂՀ) ներկայացնող հայրենակցական միություններ, որոնց գործառույթները պայմանավորված են հիմնականում երրորդ հիմնախնդրով: Ինչպես երևում է վերը նշված դրույթները ներկայումս ՀՀ-ում գործող բոլոր հայրենակցական միություններն էլ ունեն ընդհանուր գործառույթներ, որոնք պարունակում են համազգային բնույթի խնդիրներ և հանդիսանում են նրանց համախմբման հիմնական գործոններից մեկը:

Անկախ հանրապետության պայմաններում գործող հայրենակցական միությունները՝ որպես ազգային կառույցներ, իրենց ուրույն տեղն են զբաղեցնում երկրի պետական, քաղաքական և հասարակական կառույցների շարքում և, շնորհիվ իրենց ազգային-հայրենասիրական գաղափարների, ազգապահպան ու հայրենաշեն ծրագրերի, կարող են կարևոր դերակատարություն ունենալ այն բոլոր խնդիրների լուծման գործում, որոնք իրականացվում են մեր Չայրենիքում: Սակայն միայն հասարակական հիմունքներով իրականացվող աշխատանքներ-

րի շնորհիվ նրանք ի գորու չեն լիարժեք դրսևորելու իրենց հոգևոր, մտավոր ու նյութական կարողությունները և կատարելու իրենց բուն առաքելությունը: Մեծ աշխատանք չի կարող կատարել միջոցներից զուրկ հայրենակցական միությունների աշխատանքները կորդինացվող մարմինը՝ հայրենակցական միությունների խորհուրդը:

Մեր կարծիքով հայրենակցական միությունների խնդիրների ու հիմնախնդիրների, նրանց ծագման ու կառուցվածքի, ընդհանրությունների ու առանձնահատկությունների և միասնական գործառույթների վերաբերյալ պետք է մշակել հատուկ հայեցակարգ: Չնայած մեր հանրապետության գործող օրենսդրությամբ հայրենակցական միությունները սահմանվում են որպես հասարակական կազմակերպություններ, սակայն նրանք շատ քիչ ընդհանրություններ ունեն այլ հասարակական կազմակերպությունների հետ: Նրանց ընդհանրությունը միայն այն է, որ երկուսն էլ շահույթ չհետապնդող և ապակուսակցականացված կազմակերպություններ են: Հայրենակցական միությունները, որպես ազգային արժեքների կրողներ ու պահպանողներ և Հայրենիքի պատկերն ամբողջացնող ու ազգային դիմագիծը վերականգնող կառույցներ կարող են համարվել համազգային շարժիչ ուժեր: Այդ պատճառով նրանք չեն կարողանում տեղավորվել իրենց համար սահմանափակ իրավական հնարավորություններ ապահովող հասարակական կազմակերպությունների համար նախատեսված նեղ կադապարի մեջ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Հավանաբար այստեղից է ծնվում որոշ քաղաքական ու պետական գործիչների բացասական վերաբերմունքը հայրենակցական միությունների նկատմամբ, որոնք հայտարարում են, թե հայրենակցական միություններն իբր պառակտում են ազգը ըստ բնականության վայրերի: Իրականում ճիշտ հակառակն է: Նրանք միացնում են մասնատված ու անկախացած հատվածները վերականգնում Հայոց հայրենիքի ազգային դիմագիծն ու ոգին: Հենց սա է հայրենակցական միությունների բուն առաքելությունը, որով էլ պայմանավորված են նրանց հիմնական առանձնահատկությունները մեր օրերում: Դրանից սկիզբ են առնում այն հիմնական խնդիրները, որոնք համահունչ են մեր ազգային հիմնահարցերին, ինչպիսիք են Արցախի հիմնախնդիրը, բռնազաղթվածների ու փախստականների վերաբնակեց-

ման, այդ թվում ազատագրված տարածքներում, Հայ Ղատի ու պահանջատիրության, ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, Սփյուռքի հետ առավել լայն կապեր հաստատելու, հայրենակիցների արտագաղթը կասեցնելու, հայրենադարձությունը խթանելու և այլ խնդիրները: Այդ պատճառով էլ հայրենակցական միությունները ներկա պայմաններում շատ զգալուն են ոչ միայն ազգային հիմնախնդիրների, այլև նրանց վրա անմիջական ներգործություն ունեցող պետական ու քաղաքական գործընթացների ազդեցությունների նկատմամբ:

Մեր կարծիքով Հայաստանի անկախ հանրապետության ներկա պայմաններում հայրենակցական միությունների գործունեության մեջ նկատվող հիմնական թերություններն ու դժվարությունները հետևյալն են՝

Առաջին. Հայրենակցական միությունների՝ որպես ազգային կառույցների կողմից, աշխարհընկալման կամ գաղափարախոսության բացակայությունը.

Երկրորդ. Նրանց վերաբերյալ օրենսդրության անկատարությունը, որի արդյունքները իրավական լայն սահմանափակումներ են տեղ գտել.

Երրորդ. Պետական մարմինների կողմից անհրաժեշտ ուշադրության ու աջակցության բացակայությունը:

Չորրորդ. Առցիալ- տնտեսական ընդհանուր վիճակից բխող դժվարությունները

Հինգերորդ. Նյութական միջոցների բացակայությունը:

Խոսելով ամենահիմնական ֆինանսական միջոցների բացակայության պատճառով առաջացած դժվարությունների մասին, որը գրեթե ընդհանուր է բոլոր հայրենակցական միությունների համար, կարելի է նշել միայն մի փաստ, որ ներկայումս գործող հինգ տասնյակից ավելի հայրենակցական միություններից միայն մի քանիսն ունեն մշտական գործող գրասենյակներ և այն էլ այս կամ այն կազմակերպությանը կցված, նույնիսկ խոսք չկա անհրաժեշտ գույքի ձեռքբերման, կոմունալ ծախսերի հոգալու մասին: Իսկ որևէ բարեգործական կամ մշակութային ծրագիր իրականացնելու համար անհրաժեշտ գումար հայթայթելը դարձել է գերխնդիր գործնականում բոլոր հայրենակցական միություն-

ների համար: Այս ամենը, մեր կարծիքով, բացասական հետքն են թողնում ոչ միայն հայրենակցական միությունների նորմալ գործունեության, այլ նրանց հեղինակության վրա: Նրանք պատշաճ ձևով չեն ներկայացվում պետական կամ տեղական իշխանության մարմինների կողմից իրականացվող միջոցառումների կամ ծրագրերի կատարման ընթացքում: Օրինակ կառավարության կողմից կազմված ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման ցուցակում չի ընդգրկվել ոչ մի հայրենակցական միություն: Մինչդեռ, մեր խորին համոզմամբ, հայրենակցական միությունները կարիք են զգում հատուկ վերաբերմունքի և ուշադրության իշխանությունների կողմից, որովհետև նրանք իրենցից մեծ արժեք են ներկայացնում, որպես Փյունիկյան թռչուն վերածնված և Մայր հայրենիքում նոր արմատներ գցած, բնօրրանի հիշատակներն ու մշակույթը պահպանած պատմական Հայրենքի ազգային դիմագիծը վերականգնած և ամենակարևորը, օտար գաղափարների ազդեցություններից կամ պարտադրանքներից զերծ:

Ցավալի է, որ Հայրենակցական միություններից շատերը կանգնել են իրենց համար «տանիք» գտնելու խնդրի առաջ: Այն միությունը, որն իրեն «տանիք» է գտնում, կարողանում է գոյատևել, իսկ որոնք չեն կարողանում գտնել վերածվում են ընդհամենը «սովորական» հասարակական կազմակերպությունների: Հետևաբար ՀԿ-երի վերաբերյալ օրենսդրությունը հարկավոր է բարելավել, նրանց հատուկ կարգավիճակ կամ արտոնություններ շնորհելու միջոցով, որպիսի նրանք բոլորը միասին մտնեն մեկ «տանիքի» տակ և այդ տանիքը պետք է լինի հայրենիքը: Արա իրականացման դեպքում հայրենակցական միությունները կարող են վերածվել ազգային հիմնախնդիրների լուծման մի շատ կարևոր հաստատության և արժեքավոր ավանդ մուծել ներկայիս ազգային ու պետական խնդիրների լուծման գործում:

Մեր կարծիքով ժամանակն է, որ Արևմտահայ բոլոր հայրենակցական միությունները միավորվեն և ձևավորվի ողջ արևմտահայությունը ներկայացնող լիազոր ներկայացուցչական մարմին: Ի տարբերություն առանձին քաղաքական ուժերի նրանք կներկայացնեն իրենց բնօրրաններից "Էրզրից" բռնագաղթած արևմտահայության սերունդները:

Նրանք կունենան լեզիտիմության բարձր աստիճան և թույլ կտան Հայ Դատի պաշտպանության խնդիրները հետապնդել միջազգային ամենաբարձր ատյաններում, կատարել այն, ինչ դեռ չի կարող կատարել այսօր Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*ЭДИК МИНАСЯН
ЕГУ*

ЗЕМЛЯЧЕСКИЕ СОЮЗЫ И АЙ ДАТ

РЕЗЮМЕ

В статье рассматриваются причины возникновения земляческих союзов, их цели и задачи. Одновременно показывается их деятельность по признанию геноцида армян 1915 года и анализируются основные недостатки их работы в условиях независимости Армении. Предлагается объединить усилия всех западно и восточноармянских землячеств в одно целое: в полномочный и представительный орган, который, имея большую степень легитимности, позволит объединенными силами представлять требования по признанию геноцида армян в разных международных инстанциях на более высоком уровне.

**ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲՈՆԱԳԱՂԹԵՐԸ
ԼԴԻՄ-ում 1988-1991 թթ.**

Արցախյան շարժման սկզբնավորման և Արցախյան պատերազմի ընթացքում հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացված բռնություններն ու զանգվածային բռնագաղթերը Ադրբեջանի պետական քաղաքականության անբաժանելի մասն էին: Ադրբեջանի կողմից ընտրված ռազմավարությունը, այն է՝ բռնություններ, բարոյահոգեբանական սարսափի ստեղծում, պատմական փաստերի խեղաթյուրում, զանգվածային լրատվամիջոցներով լարվածության ստեղծում և ապակողմնորոշում, հերյուրանքներ և վիրավորանքներ հայ ժողովրդի հասցեին և այլն, ոչ միայն չկանխվեցին ԽՍՀՄ համապատասխան մարմինների կողմից, այլև աջակցություն գտան ԽՍՀՄ կառավարական և ռազմական որոշակի շրջաններում: ԽՍՀՄ կառավարության թողստվածությամբ Ադրբեջանի կողմից բռնության բոլոր միջոցները գործի դրվեցին արցախահայության արդար պահանջը խեղդելու համար:

Հիմնախնդրի կոնֆլիկտային շրջանում (պայմանականորեն այսպես անվանենք պատերազմի առաջին փուլը՝ 1988-1991 թթ.), բռնությունների առաջին ալիքը հայ ժողովրդի նկատմամբ սկսվեց 1988 թ. փետրվարից: Անկարգությունների այս շղթան հիմնականում բորբոքվում էր երկու էթնիկ համայնքներում շրջանառվող բռնության ակտերի մասին տեղեկություններ, սադրիչ հայտարարություններ տարածելով: Մարզի հայ ազգաբնակչության նկատմամբ թշնամանքի սերմանման երկրորդ աղբյուր էին զանգվածային լրատվամիջոցները, որոնք ամբողջովին ծառայում էին հակահայկական քարոզարշավին՝ հասարակական կարծիք ստեղծելու համար, իսկ երկրի ներսից արգելափակված էին բոլոր ճանապարհները կատարվող բռնարարների մասին օբյեկտիվ ինֆորմացիա արտահանելու համար: Գործադրվող այս միջոցները ծառայեցվում էին ԼԴԻՄ-ի հարցում Ադրբեջանի պետական քաղաքականության դիրքորոշմանը, այն է՝ մարզի հայաթափում և

այս միջոցով հարցի լուծում (նախադեպը Նախիջևանի ԻԽԱԳ–ն էր, ուր հայերի քանակը հասցվել էր 0%-ի):

Տեղին է հիշել, որ Ադրբեջանի պետական ապարատի կողմից տարիներ շարունակ Արցախի նկատմամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց մեջ առանձնանում են՝ տեղաբնիկ հայության կենսապայմանների խաթարում, քաղաքական ու բարոյահոգեբանական բռնաճնշումներ, տնտեսության կազմալուծում, ազգային արժեքների դավանման սահմանափակում և աստիճանաբար իսպառ դուրս մղում: Այս առումով բավական արդյունքի հասան՝ հայերին մեծամասամբ դուրս մղելով Ադրբեջանի արդյունաբերական կենտրոններ: Սարգից դուրս մղված հայերի տեղերում բնակեցնում էին ադրբեջանցիներով, որոնք ապրում էին արտոնյալ պայմաններում: Իզուր չէ, որ Զ. Ալիևը պառլամենտում հպարտորեն հայտարարեց, որ իր կառավարման տարիներին մարզի ադրբեջանացման պրոցեսը ընթացել է ավելի հաջող¹: Նախածրագիր ձեռնարկումներից էր նաև հայկական գյուղերը միմյանցից ճանապարհային կապից զրկելը: Օրինակ՝ պատերազմի սկզբին Ստեփանակերտը ամբողջովին շրջափակված էր ադրբեջանական բնակավայրերով, Շահումյանը կտրված էր Մարտակերտից, Մարտակերտ-Ստեփանակերտ ճանապարհը անցնում էր Աղդամով և Խոջալույով, Շուշիի շրջանը փաստորեն վերացած էր հայության համար: Մյուս շրջանները ևս կտրված էին Ստեփանակերտից ադրբեջանական բնակավայրերով, իսկ Զադրուք-Ստեփանակերտ ճանապարհը հենց Զադրուքի մոտից մտնում էր Ֆիզուլի²:

Դեռևս 1988 թ. փետրվարյան ցույցերի առաջին օրերին Ադրբեջանի քաղաքական, մշակութային գործիչների կողմից բազմիցս է հայտարարվել, որ չկա ո՛չ արգելք, ո՛չ էլ փշալար և Ղարաբաղի հայերը կարող են հեռանալ ցանկացած ժամանակ, իսկ Ղարաբաղը երբեք չի զիջվի³: Ավելին, ի պատասխան ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի որոշման և Ստեփանա-

¹ Мкртчян Ш., Арцах, Е., 1991, с. 75.

² Պետրոսեան Ա., Արթուր Սկրտչեան, Ե., 2004, էջ 63-64:

³ ՀՀ Նորագույն Պատմության Կենտրոնական Պետական Արխիվ (Այսուհետև տես ՀՀ ՆՊԿՊԱ), ֆ.1159, ց. 1, գ.19, ք.1:

կերտում մեկնարկած հանրահավաքների (փետրվարի 13-ից), Ադրբեջանի կոմկուսի ղեկավարությունը սպառնաց մարզի տարածք մտցնել «100 հազար զինված ադրբեջանցիների»⁴: Ադրբեջանում հակահայկական շարժումը հրահրվում էր հենց իշխանությունների կողմից: Այդ օրերին «Պրավդա»-ն հրապարակում էր փաստեր այն մասին, թե ինչպես Ադրբեջանի տասնյակ պաշտոնյաներ, գիտության, մշակույթի գործիչներ հրահրում են ազգային կրքեր, նույնիսկ երեխաներին են հանում հայերի դեմ, իսկ իրավապահ մարմինները կազմակերպում են զենքի գաղտնի ձեռքբերում: Թերթի հաղորդամամբ նույնիսկ Բաքվի «Մանկական աշխարհ» հանրախանութը վեր է ածվել գաղտնի արսե-նալի⁵:

Հայերի նկատմամբ իրականացված առաջին պատժիչ արարքը Ասկերանի դեպքերն էին. 1988 թ. փետրվարի 21-ին ադրբեջանցի ծայրահեղականների 8 հազարանոց ամբոխը մտնում է Ատեփանակերտ՝ «կարգ ու կանոն հաստատելու համար»: Նրանք շարժվում են դեպի Ասկերանի շրջան, ներխուժում նավթամթերքի ձեռնարկություն, գազի գրասենյակ, կոմունալ ծառայության կոմբինատ, ջարդում սարքավորումները, տրանսպորտի միջոցները, տեխնիկան և գույքը: Ասկերանի հայ բնակչության և ամբոխի միջև տեղի են ունենում ընդհարումներ, որոնք կանխվում են խորհրդային բանակի միջամտությամբ: Ավելացնենք, որ փետրվարի 21-ին Ադդամում է գիշերել Ադրբեջանի ԿԿ առաջին քարտուղար Բաղիրովը, ինչպես նաև փետրվարի 21-ին հեռուստատեսությամբ հնչած Մ. Գորբաչովի հայտնի ուղերձից անմիջապես առաջ ադրբեջանական հեռուստատեսությամբ ադրբեջաներեն լեզվով ցուցադրվել է «1905. Արյունոտ կիրակի» ֆիլմը, որը ցուցաբերների նկատմամբ արյունալի հաշվեհարդարի մասին էր: Ֆիլմը ցուցադրվեց ի պատասխան հայ ժողովրդի սկսած ակցիայի: Այս ամենը խոսում է այն մասին, որ Ասկերանում կազմակերպված բարբարոսական գործողությունը, հետագայում Սումգայիթում, Կիրովարդում, Բաքվում և այ-

⁴ Հայաստանը փոխակերպվող աշխարհում, ՈԱՀԿ, Ե., 2006, էջ 691:

⁵ Каграманьян К., Книга очага: Земля зовет, т. 2, Е., 2004, с. 406.

լուր տեղի ունեցած իրադարձությունները, ինչպես նաև ֆիլմի ցուցադրումը մտածված և նախօրոք պլանավորված քայլեր էին:

Գաղտնիք չէ նաև, որ Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանությունը հանկարծակիորեն ծագած երևույթ չէր, այլ ունեւր իր խոր արմատները: Ծանոթանալով փաստերին՝ պարզ է դառնում, թե ինչո՞ւ այդ ծանր հարցի քննությունը հանձնվեց ոչ թե ԽՍՀՄ գերագույն դատարանին, այլ Ադրբեջանի գլխավոր դատախազությանը, թե ինչո՞ւ առաջին հետևությունները արվեցին որպես խուլիգանական տրամադրվածություն և այդ պաշտոնական վարկածը ունեցավ կարևոր հետևանքներ, ինչո՞ւ տեղի ունեցած դեպքերը մի քանի օր գաղտնի պահվեցին, թե ինչո՞ւ հեռուստատեսությամբ բազմիցս հնչեցվեց, որ ջարդերը կազմակերպել են 13-15 տարեկան հայ, ռուս և ադրբեջանցի անչափահասները, խնամքով թաքցվում էին սպանվածների և վիրավորվածների թիվը, պարզ է, թե ինչու դատարանում գործը քննվեց ոչ թե որպես խմբակային գործ, այլ որպես առանձին անձանց գործողություններ, և «խուլիգանների» դատավարությունները տեղի ունեցան միմյանցից բաժան-բաժան՝ ԽՍՀՄ տարբեր դատարաններում՝ Սումգայիթում, Վոլգոգրադում, Վորոնեժում, Կույբիշևում, ԽՍՀՄ գերագույն դատարանում, ինչո՞ւ հանցակազմը որոշվեց մինչև իսկ նախնական հետաքննություն չսկսված, ինչու՞ գորքերը Սումգայիթ մտան միայն ջարդերի երրորդ օրը (փետրվարի 29-ին), իսկ երբ պետք էր ցրել Երևանի խաղաղ ցույցերը, գորքերը բարձր օպերատիվություն էին ցուցաբերում, թե ինչո՞ւ Ս. Գորբաչովը 1988 թ. հուլիսի 18-ի ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստում զայրագին առարկեց Սումգայիթի դեպքերը ցեղասպանություն որակելու դեմ՝ հայտարարելով, որ ցեղասպանությունը կազմակերպված հանցագործություն է, այնինչ Սումգայիթում գործում էին միայն «հասարակության թափփուկներ»⁶: Ինչով է բացատրվում, որ Չայաստանում տեղավորված մոտ 3 հազար հայ փախստականները միլիցիայի կողմից պաշտպանվում էին նույնիսկ իրենց բարեկամների այցելություններից, իսկ Բաքու անցածների վիճակը շատ ավելի ծանր էր, որոնց

⁶ Ղարաբաղ. Հակամարտություն-համաձայնություն (պատմաքաղաքագիտական ժողովածու), Ե., 1997, էջ 25:

ետ էին մղում նորից Սոււմգայիթ: Սոււմգայիթի հարցում ինչուները շատ են, հետևություններն էլ պարզ: Արդյոք անգզույշ արտահայտված թառ էր, թե՞ սպառնալիք խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի նախագահ Յ. Բորովիկի և հայ մտավորականների հանդիպման ժամանակ Բորովիկի արած արտահայտությունը, որ «ԼՂ միացումը Հայաստանին կնշանակի հավերժ Սոււմգայիթ»⁷:

Յեղասպանության հաջորդ զոհը դարձան Բաքվի հայերը: Սա ևս հայությանը ահաբեկելու փորձ էր: 1990 թ. հունվարի 13-20-ը դեկավարության աչքի առաջ ԱժԳ-ի մարդասպանները անարգել կոտորում էին հայերին: Իսկ Բաքվում տեղաբաշխված ներքին զորքերը՝ թվով 18 հազար, այդպես էլ հրաման չստացան միջամտելու դեպքերին: Պաշտոնական տվյալները զոհերի թվի մասին այդպես էլ մնացին կեղծված ու չճշգրտված:

Ողջ 1988-ը լի է Արցախի հայ ազգաբնակչության նկատմամբ կատարված խուլիգանական արարքներով, ընդ որում այս ամենը, որպես կանոն, կատարում էին նախկինում դատվածները: Բազմաթիվ են դեպքերը Սարտակերտի, Ասկերանի շրջաններում, Ատեփանակերտում, Շուշիում և ամենուր հայերից կատարված գողությունների, խուլիգանական հարձակումների, երկկողմանի զանգվածային բախումների մասին, որոնց արդյունքում լինում էին վիրավորներ և զոհեր:

Սիայն 1988 թ. նոյեմբերի 1-6-ը ադրբեջանական բանդիտական խմբերը 30 հազար հայ են կողոպտել և դուրս քշել Չարդախլուից, ինչպես նաև Նախիջևանում միակ հայաշեն Չնաբերդ գյուղից և այլ վայրերից: Արդեն 1988 թ. մայիսից Շուշիի կուսաշրջկոմի նախածեռնությամբ սկսվեց հայերի տեղահանումը Շուշիից, սեպտեմբերին արյունալի իրադարձություններ ծավալվեցին Խոջալույում, նոյեմբերին ջարդերը տարածվեցին ողջ Ադրբեջանով: Հանրապետության ղեկավարությունը խրախուսում էր առանձնապես աչքի ընկածներին. Խոջալուին և Սոււմգայիթին լրացուցիչ միջոցներ հատկացվեցին տնտեսական ու սոցիալական ոլորտի բարելավման համար: Իսկ Սոււմգայիթը նույնիսկ

⁷ ՀՀ ՆԿԿՊԱ, ֆ. 1159, ց.1, գ. 47, թ. 4:

երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում սոցիալիստական մրցության հաղթող ճանաչվեց⁸:

Ցնցող ոճրագործության մի օրինակ բերենք՝ կատարված Ֆիզուլիում բնակվող հայերի նկատմամբ, որն ամբողջացնում է Սուևգայիթում, Բաքվում և այլ բնակավայրերում կազմակերպված հայկական ջարդերի եղերական պատկերը: «1988 թ. հունիսի 22-ին Ֆիզուլիի գլխավոր պողոտայում համաքաղաքային խորախճանք էր՝ Սուևգայիթի «հերոսների» պատվին, ուր վայելում էին հայերից գողացած բարիքները: Քաղաքում ապրող հայերից հավաքել էին մի բազմություն, վայրագաբար ծեծել, խոշտանգել, մերկացրել և ապա ազգությամբ հայ երաժիշտների նվագակցությամբ պտտեցրել քաղաքի փողոցներով: Խառնամբոխի միջով անցնող մերկ հայերին տանջահար անելուց հետո, ըստ նախօրոք կազմած սցենարի, նրանց պետք է տանեին Ֆիզուլիից դուրս, Տող գնացող ճանապարհին խաչածև ձողերից կախեին (նրանց մեջ կային ծերեր, երեխաներ և նույնիսկ հղի կանայք): Սակայն ինչ-ինչ հանգամանքներով խափանվել է այս հրեշավոր մտադրությունը, բայց նրանց հաջողվել է մորթազերծ անել մի հայ պատանու⁹:

Եվ այս ամենից հետո ի՞նչ են նշանակում ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Ս. Գորբաչովի կողմից հայերին արված զգուշացումները՝ ադրբեջանցիների կողմից հնարավոր բռնությունների մասին, փոխանակ, որպես երկրի ղեկավար վճռականորեն կանխելու դրանք: Իսկ ԽՄԿԿ 28-րդ համագումարում նա նույնիսկ հայտարարեց, թե ադրբեջանական ժողովրդի համբերությունն անսահման չէ, որով նա, փաստորեն, ադրբեջանցիներին կոչ էր անում ուժով պատժելու հայերին¹⁰:

Հնարավոր բռնությունների ենթարկվելու վախից շարունակվող զանգվածային բռնագաղթերը շուտով դարձան սովորական և օրինաչափ գործընթաց: 1988 թ. սեպտեմբերի 18-20 հայերը ԼՂԻՍ-ում լքեցին Շուշին, իսկ ադրբեջանցիները՝ Ստեփանակերտը, ինչին նախորդել էին այդ քաղաքներում սկիզբ առած անկարգությունները: Ըստ ադրբեջանական կեղծ տեղեկատվության՝ նոյեմբերի 27-29 անկարգություններ

⁸ «Հայաստանի Հանրապետություն», Ե., 5 ապրիլի, 1991:

⁹ Մկրտչյան Շ., Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Ե., 1996, էջ 17-18:

¹⁰ Ղարաբաղ. Հակամարտություն-համաձայնություն, էջ 30:

ու ջարդեր տեղի ունեցան ՀԽՍՀ Գուգարք, Սպիտակ ու Ստեփանավան քաղաքներում, որին հաջորդեց ադրբեջանցիների զանգվածային արտագաղթը ՀԽՍՀ-ից¹¹: Ադրբեջանական իշխանությունների հայատյաց ձեռքով կազմակերպվեց Հայաստանից ադրբեջանցիների զանգվածային փախուստը: Սկզբում, Ղափանում և Մասիսում ադրբեջանցիների մեջ տարածվեցին կոչեր, ուր նրանց առաջարկվում էր վերադառնալ Ադրբեջան՝ խոստանալով բնակության վայր, աշխատանք և այլ բարելավումներ: Նման պայմաններում Ադրբեջանում վերաբնակեցվեցին նաև Ֆերգանայից քշված թուրք-մեսխեթցիները: Փախստականներին կենտրոնացնելով Բաքվում՝ նրանց չապահովեցին համապատասխան պայմաններով՝ դրանով ուժեղացնելով անբավարարվածությունը և դժգոհությունը՝ ստեղծելով պայթյունավտանգ իրավիճակ: Հանրապետության ղեկավարների կողմից, փաստորեն, գիտակցված ձևով նրանց ևս վերածեցին հարվածային ուժի, որոնք իրականացրեցին ջարդեր և բռնագաղթեր:

Ըստ ԽՍՀՄ դատախազության պաշտոնական տվյալների 1988-1990 թթ. հայ զոհերի թիվը կազմել է 295 մարդ, որոնցից 222 խաղաղ բնակչություն, 73-ը՝ իրավապահ մարմիններից: 1991 թ. հունվարից մինչև մայիս սպանվել է 93 հայ, որոնցից 77-ը՝ քաղաքացիական բնակչությունից¹²:

Իրավիճակը չկայունացավ ո՛չ 1988 թ. սեպտեմբերի 21 ԼՂ-ի տարածքում մտցված հատուկ դրության և պարետային ժամի սահմանումով, ո՛չ 1989 թ. հունվարի 12-ից Ա. Վոլսկու գլխավորած «Հատուկ կառավարման կոմիտեի» գործունեությամբ (այն լուծարվեց 1989 թ. նոյեմբերի 28), ո՛չ էլ 1990 թ. հունվարի 15-ից մինչև 1991 թ. օգոստոսի վերջը ԼՂ-ում հայտարարված արտակարգ դրությամբ (մինչև օգոստոսյան խռովությունը): Ձինվորական պարետատան աջակցությամբ էլ ավելի ակտիվացավ Ադրբեջանի հակահայկական գործունեությունը՝ բռնադատումներ, էթնիկ զտումներ, սպառնալիքներ, Արցախյան շարժման ակտիվիստների հետապնդումներ, ձերբակալություններ և այլն:

¹¹ Հայաստանը փոխակերպվող աշխարհում, էջ 692:

¹² Чобаян С., Государственная и национальная политика Азербайджана, Е., 1993, с. 7.

Փաստորեն, արտակարգ դրություն մտցնելով, Արցախում վերացավ խորհրդային իշխանությունը և երկու հանրապետություններում իրավիճակը սրվելով՝ վերաճեց պատերազմի: Միայն արտակարգ դրության 15 օրերի ընթացքում հայերի զոհերի թիվը կազմել է 148, իսկ վիրավորները՝ 503 մարդ: Այն դեպքում, երբ ադրբեջանցի կեղծարարները ողջ 1990-ի համար են ցույց տալիս 90 զոհերի թիվը: Փաստորեն, 1990 թ. զոհերի թիվը ավելի շատ էր, քան մինչ այդ¹³:

Միջէթնիկական բախումները արդեն փոխիրաձգությունների տեսքով շարունակվում էին ԼՂԻՄ-ում, Ադրբեջան-Հայաստան սահմանագծի երկայնքով: Ավելին, ռուս զինվորականների մուտքը մարզի տարածք էլ ավելի սրեց իրավիճակը: Այս մասին հանգամանորեն խոսվում է Լենինգրադի քաղխորհրդի ԼՂ խնդիրներին նվիրված պատգամավորական երրորդ խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էին լրագրողներ, հասարակական կազմակերպության անդամներ, մարդու իրավունքների պաշտպանության խորհրդի անդամներ և ուրիշներ: Նրանք լավագույնս նկարագրում են ԼՂ-ում խորհրդային զինվորների վայրագությունների մասին, որոնք ոչ թե պաշտպանում են մարզի քնակիչներին, այլև հալածում, թալանում, սպանում: Իրականում զորամասերում տիրում էր կիսաքրեական վիճակ, չէին դադարում հայերի խոշորածավալ տեղահանման սպառնալիքները և հենց տեղահանությունները: Խորհրդակցության ժամանակ, ինչպես նաև «Վիլնյուս-Լենինգրադ-90» մարդու իրավունքների պաշտպանության կոնֆերանսում մտահոգություն է հայտնվում, որ ԼՂԻՄ-ում մշակված զինվորական դիկտատուրայի մեխանիզմը կարող է գործածվել ավելի լայն ժավալներով: Ըստ մասնակիցների՝ ԼՂԻՄ-ը օգտագործվում է որպես փորձադաշտ և մտահոգություն է հայտնվում, որ զինծառայողների մեջ դաստիարակվում է դաժանություն, անպատժելիություն, որոնք իրենց հետ այս ամենը բերելու են իրենց հայրենիք¹⁴:

Նրանք հայկական գյուղեր էին մտնում ինչպես մարտի դաշտ և առավել լարված պահերին ենթարկվում էին Ադրբեջանի կառավարու-

¹³ Чобанян С., նշվ. աշխ., էջ 27:

¹⁴ «Հայաստանի Հանրապետություն», 7 փետրվարի, 1991:

յանը: Եվ պատահական չէ, որ Ելցիմի և Նազարբակի խաղաղասիրական առաքելության ժամանակ Սրցախ մեկնած միջազգային կոնգրեսի դիտորդական խումբը նշեց, որ խորհրդային 4-րդ բանակի 23-րդ դիվիզիան մասնակցել է արյունահեղ իրադարձությունների խաղաղ բնակչության դեմ և ԽՍՀՄ դատախազությունը պետք է տա իրավական գնահատական զինծառայողների գործողություններին և ենթարկի քրեական պատասխանատվության, ինչպես նաև ցրի 23-րդ դիվիզիան: Նշվեց նաև, որ Յազովի, Պուգոյի և Կրյուչկովի անմիջական ջանքերով ԼՂ վերածվել է արյունահեղ պոլիգոնի¹⁵: Բազմաթիվ են դեպքերը, երբ զինվորական ստորորաբաժանումները ներքաշվում էին ադրբեջանցի գրոհայինների զնդակծումների մեջ: Բազմիցս ՀԽՍՀ ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը դիմել է Մ. Գորբաչովին դադարեցնելու ռազմական գործողությունները: Եվ չնայած խոստումներին՝ ոչինչ չի փոխվել:

Չնայած ադրբեջանական կառավարության մշտական հավաստիացումներին՝ մարզում գրոհայինների բացակայության մասին, այնուամենայնիվ, ՍԺԸ և «Գորշ գայլեր» ռազմականացված կազմակերպությունների գրոհայինները մարզում և նրա հարակից շրջաններում զգում էին իրենց որպես լիիրավ տերեր: Նրանք հայտարարված էին Սդրբեջանի ՆԳՆ հատուկ ջոկատայիններ և մարզում գործում էին ԽՍՀՄ ՆԳՆ զիտությամբ, մարզում իրականացնում էին զանգվածային սպանություններ, որոնք ուղեկցվում էին ծաղրուծանակով և հարածուն դաժանությամբ, խոչընդոտում էին նաև պատանդների փոխանակմանը: Ի հակակշիռ այն փաստի, որ Սդրբեջանը ունի զինված ուժեր ՕՍՍՆ-ի տեսքով, ուր մտած էին միլիցիայի համազգեստ հագած բանդիտական խմբեր, դեռևս Սումգայիթի ժամանակ բարձրացվեց հայ գրոհայինի հարցը: Եվ կենտրոնը իր ուժային գործողությունները պատճառաբանում էր՝ դրանք ներկայացնելով որպես սովորական պաշտպանություն՝ հայ զիված ուժերի անիրավական գործողություններից: Սա նախապես մտածված քաղաքականություն էր կենտրոնի կողմից՝ ապահովագրելու իր գործողությունները: Եվ 1990 թ. հունիսի 25-ի Մ. Գորբաչովի հրամանագրի համաձայն, այն է՝ «ԽՍՀՄ օրենսդ-

¹⁵ «Голос Армении», Е., 26 ноября, 1991.

րությամբ չնախատեսված զինված ստորաբաժանումների ստեղծումն արգելելու և անօրինական զենք պահելիս այն առգրավելու մասին», սկսվում են խոշորամասշտաբ օպերատիվ-նազմական գործողություններ: Ողջ 1990 թ. ընթացքում զինաթափվում են 157 հայկական գյուղեր (97%), ուր գրեթե ոչինչ, բացի որսորդական հրացաններից չեն հայտնաբերել (ադրբեջանական՝ 5 գյուղ): եվ չնայած, որ ադրբեջանական գյուղերում հազարավոր գրոհայիններ, «միլիցիոներներ», օմօնականներ բացեիբաց շրջում էին նորագույն տեխնիկայով զինված¹⁶:

Էլ ավելի ծանր հետևանքներ ունեցան «անձնագրային ռեժիմի» ստուգումները, որոնց նպատակն էր առանց գրանցման անձանց հանել և կարգը վերականգնել: Այդ պատրվակով հայկական գյուղերում սկսվեցին ստուգումներ, ուր իբր թաքնվում էին Հայաստանից եկած ֆիդայիներ: Այդ ստուգումները շուտով վերածվեցին տխրահռչակ «Օղակ» գործողության, որը խորհրդային իշխանությունների կողմից հայ ժողովրդի դեմ իրականացված պատժիչ-ահաբեկչական գործողություն էր: Նպատակն էր Հայաստանին պարտադրել միանալու միութենական նոր պայմանագրին, իսկ հայ ժողովրդին ահաբեկելով՝ ստիպել հրաժարվելու անկախության համար մղվող պայքարից: Մի քանի ամիսների ընթացքում տեղահանվեց Հյուսիսային Արցախի 24 գյուղերի բնակչություն:

Դեռևս 1991 թ. հունվարի 14-ին Ադրբեջանի ԳԽ որոշում էր կայացրել միավորել երկու հարևան՝ Շահումյանի և Կասում-Իսմայիլովյան շրջանները: Շահումյանի շրջանը ուներ մոտ 20 հազար բնակչություն, որոնց 82%-ը կազմում էին հայերը, իսկ Կասում-Իսմայիլովյան շրջանի 50 հազարանոց բնակչության հիմնական մասը ադրբեջանցիներ էին (դեռևս 1989 թ. հուլիսի 25-ին Շահումյանի շրջխորհուրդը խնդրանքով դիմել էր Ադրբեջանի ԳԽ-ին՝ շրջանը միավորել ԼՂԻՄ-ին, որը մերժվել էր): 1991 թ. հուլիսի 13-14 Շահումյանի շրջանի Բուզլուկ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը երեք կողմերից շրջապատվեցին 4-րդ բանակի և Ադրբեջանի ՆԳՆ զորքերի կողմից՝ «անձնագրային ռեժիմի» ստուգումների պատրվակով: Գյուղերի վրա երկար ժամանակ

¹⁶ «Հայաստանի Հանրապետություն», 5 ապրիլ, 1991:

պատվում էին ուղղաթիւներ: Էրքեջից ոչ հեռու կուտակվել էին տանկեր: Ձիւնվորականները պահանջում էին բնակչությունից թողնել գյուղերը՝ հակառակ դեպքում սպառնում էին ոչնչացնել նրանց: Ինքնապաշտպանական ուժերը Վանիկ Լալայանի գլխավորությամբ հաջողությամբ ետ էին մղում առաջին հարձակումները՝ պատճառելով էական վնասներ: Էրքեջում նրանք շրջապատման օդակի մեջ են առնում Ադրբեջանի ՆԳ նախարար Սամեդովին և նրա ղեկավարած թալանչիական խմբին և արդեն պատրաստվում են նրանց գերեզմանել, երբ հանկարծակիորեն հայտնվում են խորհրդային դեսանտայինները և փրկում նախարարին անպատվությունից¹⁷: Որոշ ժամանակ անց սկսվում է ռմբակոծությունը և մի քանի ժամ անց գյուղերը դատարկվում են: Չնայած, որ Շահումյանի շրջանի բնակիչներից շարունակվում էին ստացվել «SOS» ահազանգերը՝ կայսրության պետական այրերի կողմից կատարվող իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվությունը շարունակում էր մնալ կեղծ և հակասական: Ռազմական պարետատունը բոլոր պաշտոնական հարցադրումներին պատասխանում էր, որ այդ իրադարձություններին ո՛չ ՕՍՕՆ-ը, ո՛չ էլ գործը չեն մասնակցում, այլ ընթանում են միմյանց դեմ. թշնամաբար տրամադրված խմբավորումների հարցերի պարզաբանում: Իսկ ԽՍՀՄ ՆԳ նախարար Ա. Պուզոն, ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանում բերելով կեղծ փաստեր, որոնց համաձայն Շահումյանի շրջանի Սանաշիդ, Էրքեջ և Բուզլուկ գյուղերում չկա հայկական բնակչություն, հայտարարեց, որ դրանք վերածված են հայ գրոհայինների հենակետի (այն դեպքում, երբ ԽՍՀՄ պրեզիդենտի հուլիսի 4-ի որոշումով շրջանում հանվել էր արտակարգ դրությունը՝ «հաշվի առնելով իրավիճակի կայունացումը»)¹⁸:

Փաստորեն, Շահումյանում կրկնվեցին Հյուսիսային Արցախի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի դեպքերը, որտեղից ապրիլի 30-ից մինչև մայիսի 8-ը ընկած հատվածում տեղահանվել էր շուրջ 3,5 հազար բնակչություն: Թաթուլ Կրպեյանը, որը գլխավորում էր Գետաշեն-Մարտունաշենի ինքնապաշտպանությունը. կարողացավ գերի վերցնել

¹⁷ Каграманян К., նշվ. աշխ., էջ 430:

¹⁸ Чобанян С., նշվ. աշխ., էջ 34:

խորհրդային բանակի գնդապետ Մաշկովին և ստիպեց ազատ արձակել հայ զբրիներին: Իսկ երկրորդ անգամ զերեվարելով պատժիչ ջոկատի հրամանատարին՝ պահանջեց գյուղերից հեռացնել զորքերին: Մակայն աղորբջանցիները սպանեցին և՛ Թաթուլին, և՛ ռուս սպային¹⁹: Հաղորութի գյուղերի տեղահանության մասին մի ինքնատիպ վավերագիր հուշագրություն է թողել ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ Արթուր Սկրտչյանը: «Ի՞նչ է տեղի ունեցել Հաղորութում» աշխատության մեջ նա առաջ է քաշում մի շարք հարցադրումներ և տալիս դրանց պատասխանները: «Սպասելի՞ էին արդյոք այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան շրջանում և հնարավոր էր դրանք կանխել»: Նա գտնում է, որ ընդհանուր քաղաքական առումով սպասվում էին այդ իրադարձությունները, սակայն քչերն էին հավատում իրադարձությունների նման ընթացքին և, փաստորեն, ոչինչ կամ շատ քիչ բան ձեռնարկվեց: Ապրիլի 28-ին «անձնագրային ռեժիմի ստուգումների» ալիքը հասավ Հաղորութ: Մի քանի օր առաջ ուղղաթիռներից ռմբակոծության էր ենթարկվել Հաղորութի շրջանային անտառը և այդ անտառով Հաղորութ մտնող խճուղին: Բնակչության մեջ սկսվել էր համընդհանուր խուճապ և շփոթություն, որին նպաստում էին նաև կեղծ լուրերը: Ժողովրդի տագնապը էլ ավելի էր ուժեղացնում այն հանգամանքը, որ լուրեր էին պտտվում իբր «Հաղորութի հարևան աղորբջանական շրջաններում զորքերի կուտակումներ կան, որոնք գտնվում են անմիջապես Մութալիբովի կարգադրության տակ և, որ իբր Գորբաչովը մայիսի 4-15-ը ժամանակ է տվել Մութալիբովին Ղարաբաղի հարցը իր ուզած ձևով լուծելու համար»²⁰:

«Հետաքրքիրն այն է, որ այդ ժամը օրերին շատերը մտահոգված էին ոչ թե ժամը վիճակից դուրս գալու հարցով, այլ այդ վիճակի մեղավորի որոնումով: Պաշտոնական վարկածի համաձայն ամեն ինչի մեղքը բարդվում է շարժման ակտիվիստների վրա և պատահական չէ, որ շատ-շատերը այդ պատճառով անհիծում են և՛ շարժումը, և՛ միացումը, և թե՛ Հայաստանը, որ այսքան ցավեր բերեց իրենց»²¹:

¹⁹ Каграманян К., цит. ажд., էջ 426:

²⁰ Սկրտչյան Ա., Ի՞նչ է տեղի ունեցել Հաղորութում, Ե., 1992, էջ 6:

²¹ Նույն տեղում, էջ 10:

Տեղահանությունների ժամանակ ռուսական զորքի և ադրբեջանական ՕՍՕՆ-ի հիմնական խնդիրը հայ ֆիդայի կամ գրոհային գտնելն էր: ՕՍՕՆ-ը, վայելելով համապատասխան հատուկ աջակցություն, ձերբակալում էր ով փոքր-ինչ կասկած էր հարուցում ազգային պայքարի հետ ունեցած կապով: Նրանք շրջում էին գյուղերով և նախապես կազմված անվանացուցակով, որ պարզվել էր ռուսական հետախուզությամբ, ձերբակալում էին ակտիվություն դրսևորած անձանց՝ գյուղխորհրդի նախագահի, մտավորականի և այլն: Ձորքին հաջողվում էր տևական հոգեբանական ճնշում գործադրել, որը նպաստում էր բռնագաղթի ընթացքի հեշտացմանը, երբ բնակչությունը սեփական անվտանգությունից ելնելով, հեռանում էր իր բնակության վայրերից: Այսպիսով, 1991 թ. մայիսի 13-16-ը տեղահանվեցին Հադրութի շրջանի 14 գյուղեր (Ջրաբերդ, Առաքյուլ, Ծամծոր, Ցոր, Արևշատ և այլն): Որպես կանոն, բռնագաղթված գյուղերը ենթարկվում էին թալանի ու ավերի: Ա. Մկրտչյանը իր աշխատության մեջ այն միտքն է հայտնում, որ կազմակերպված լինելու դեպքում հնարավոր էր կանխել գոնե գյուղերի թալանը: Հունիսի կեսերից սկսած Բանաձոր, Առաքյուլ, Ծամծոր, Դուլանլար գյուղերը բնակեցվեցին ադրբեջանցիներով:

Հադրութի դեպքերին հետևել են Մարտակերտի շրջանի Հաթրե և Վերին Հոռաթաղ գյուղերի շրջափակումը՝ բռնագաղթի նպատակով, սակայն այս իրադարձություններին հետևել են օգոստոսյան խռովության դեպքերը, որի պատճառով էլ այս գյուղերը փրկվել են տեղահանումից և ավերումից: 1991 թ. սեպտեմբերին, երբ խորհրդային զորքերը հեռացել են Արցախից, ինքնապաշտպանական ուժերը կարողացել են ազատագրել բռնազավթված գյուղերը. սեպտեմբերին՝ Շահումյանի շրջանի գյուղերը, նոյեմբերին՝ Հադրութի և Աարտունիի շրջանում ծավալած մարտերի ընթացքում՝ մի շարք գյուղեր: Այս մարտերի հիմնական նշանակությունն այն էր, որ բացի տարածքները հետ վերադարձնելուց, կասեցվել են հայկական գյուղերում կատարված վերաբնակեցումները, որով խափանվել են Արցախում արմատավորվելու ադրբեջանական իշխանությունների ծրագրերը:

Բավականին սարսափելի էին բռնագաղթի արդյունքները, որոնք, սակայն չէին գոհացնում նրա ոգեշնչողներին: 1991 թ. մայիսի 22-ին

Մոսկվայում կայացավ «Օղակ» գործողության արդյունքներին նվիրված մամլո ասուլիս, որի ժամանակ արդրեջանի ԿԿ ԿԿ անդամ Ա. Դաշտամիրովը հայտարարեց. «Ամենամոտ ժամանակներում անհրաժեշտ կլինի Դարաբաղից արտաքսել 32 հազար մարդ»²²: Ձանգվածային այդ բռնագաղթերը Ադրբեջանի պետական այրերի կողմից շարունակվում էին արդարացվել՝ պատճառաբանելով դրանք որպես բնակիչների ինքնակամ վերաբնակեցում: Բռնագաղթի ցուցանիշները ահռելի էին նաև նախորդ տարիներին: Ըստ հայկական կողմի տեղեկատվության՝ ԱխՍՀ-ից Հայաստան, ԼՂԻՄ և ՌԽՖՍՀ բռնագաղթեց ընդհանուր առմամբ 167400 մարդ, 1989 թ. փախստականների թիվը կազմում էր 141260, իսկ 1990 թ. ընդհանուր ցուցանիշը՝ 32000 մարդ²³: Ադրբեջանի կողմից իրականացվող պետական ահաբեկչական քաղաքականությանը զոհ գնացին հազարավոր անմեղ հայեր: Միայն 1991-ին, ըստ ՏԱՍՍ լրատվականի, ԼՂ-ում սպանվել են ավելի քան հազար անմեղ հայեր: Միայն 1991 թ. ապրիլի վերջից հուլիսի 1-ը Գետաշեն և Սարտունաշեն գյուղերում սպանվել է 41 մարդ, 70-ը՝ վիրավորվել, 335-ը՝ վերցվել պատանդ: Պատանդները գազանաբար տանջամահ էին արվում և սպանվում ադրբեջանական բանտերում, 20 հայկական գյուղեր ամբողջովին հայաթափվել են, 3 հայկական գյուղեր վերաբնակեցվել ադրբեջանցիներով²⁴ :

Շարունակվող բռնագաղթերը և ջարդերը՝ իրենց ընթացքով և թափով՝ իրենց վրա են հրավիրել միջազգային հասարակության ուշադրությունը: Կատարվածի մասին գրվել է համաշխարհային մամուլում, «Սեօ յոթնյակի» ղեկավարներին, ԱՄՆ պրեզիդենտին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին դիմումներ են հղվել՝ խնդրելով ուշադրություն դարձնել շարունակվող ջարդերի և տեղահանությունների վրա: Այս ուղղությամբ մեծ աշխատանքներ է կատարել Սախարովի անվան միջազգային կոնգրեսի պատվիրակությունը՝ Քերոլայն Քոքսի ղեկավարությամբ: Պատվիրակությունը եղել է թե՛ կետերում, հանդիպում-

²² Մելիք-Շահնագարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները ԼՂՀ խաղաղ բնակչության դեմ, Ե., 1998, էջ 133:

²³ Հայաստանը փախստեղծվող աշխարհում, էջ 693:

²⁴ Чобаян С., նշվ. աշխ., էջ 173:

ներ ունեցել բանտարկյալների, գաղթողների հետ: Նրանք առանձնացրել են այն չորս հանգամանքները, որոնք կարող են առաջացնել լայնամասշտաբ հայ-ադրբեջանական կոնֆլիկտ. բռնագաղթեր, չհիմնավորված բանտարկություններ, քաղաքացիական հասարակության հետ դաժան վերաբերմունք, ՕՍՕՆ-ի գոյությունը:

Այսպիսով, Ադրբեջանի քաղաքականությունն Արցախյան հիմնախնդրում հանգեցրեց պատերազմական գործողությունների սանձազերծմանը, որոնք ուղեկցվում էին բռնագաղթերով և ջարդերով, սակայն չհասավ իր վերջնական նպատակին՝ Արցախի բռնակցմանը: Ընդհակառակը, Արցախի ժողովրդական բանակի հերոսական պայքարի շնորհիվ Արցախը ձեռք բերեց անկախություն:

*ЛУСИНЕ САРКИСЯН
ИИ.НАН.РА*

МАССОВЫЕ РЕПРЕССИИ И ДЕПОРТАЦИЯ АРМЯН В НКАО В 1988-1991 гг.

РЕЗЮМЕ

В истории армянского народа конец XX в. характеризуется целым рядом событий, которые имели радикальные последствия в истории и преопределили переход к новым качественным изменениям. Борьба армянского народа, направленная на воссоединение Арцаха, раскрыла деспотическую сущность господствующей системы Советского Союза, а также еще раз подтвердила позицию и взятые на вооружение политические методы Азербайджана в Закавказье.

С точки зрения хронологии статья включает в себя достаточно сложную эпоху: 1988 г., когда действовала имперская система и 1991 г., когда империя в агонии и создалась непредвиденная ситуация. В статье сделана попытка путем предоставления численных сведений об осуществленных массовых насилиях, выселениях, убийствах, жертвах арцахских армян обобщить с одной стороны, политику советских властей по отношению к армянскому народу, предъявившему свое справедливое требование, с другой стороны, политику азербайджанских властей - любой ценой удержать Арцах внутри государственных пределов.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻՄ (1990-2005)

Կառավարման եղանակներին և ձևերին համապատասխան՝ պետություններն իրականացնում են տարաբնույթ գործառույթներ, որոնցով բնութագրվում է տվյալ պետական համակարգի կառուցվածքն ու էությունը: Այդ գործառույթները ընդգրկում են նաև սոցիալական քաղաքականության ոլորտը: Վերջինս առաջնային կարևոր նշանակություն ունի սոցիալական պետության կառուցման ուղին ընտրած երկրների՝ այդ թվում ԴՀ համար, որի սահմանադրության 1-ին հոդվածը արձանագրում է. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:¹

Սոցիալական պետության կառուցման կարևոր նախապայմաններից մեկը պետության կողմից հասարակության բոլոր խավերի և շերտերի՝ սոցիալական արդարության հիմքի վրա խարսխված սոցիալական համագործակցության և փոխադարձ պատասխանատվության հաստատումն ու հասցեագրված քաղաքականության գործադրումն է, որի արդյունքը բնակչության անհրաժեշտ կենսամակարդակի ապահովումն է: Վերջինս կարող է կյանքի կոչվել ամենաբազմազան եղանակներով: Դրանք անհնար է պատկերացնել առանց պետության ակտիվ մասնակցության և նրա կարգավորիչ դերակատարության:

Անկախության հռչակմամբ և ժողովրդավարական արժեքների արմատավորման, շուկայական հարաբերությունների ձևավորման բարդ շրջափուլում պետության դերի վերագնահատումն ու վերափմաստավորումը անխուսափելիորեն ենթադրում էր նրա բազմակողմանի գործառույթների, իրավասության շրջանակների հստակեցում և պարտավորությունների սահմանում: Դա առանձնապես կարևորվում է սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգերի արմատական փոխակերպման, հասարակական հարաբերությունների անցումային գործընթացում, երբ հանդես են գալիս սոցիալական նոր շերտեր, ձևա-

¹ ԴՀ Սահմանադրություն, Ե., 2005, էջ 1:

վորվում են սոցիալական նոր շահեր: Ինչպես ճիշտ նկատում է պրոֆ. Է. Մինասյանը. «Խորհրդային պետության հզոր սոցիալական քաղաքականությունը զուրկ էր հարուստների, միջին խավի և կարիքավորների շահերի պաշտպանվածությունն ապահովելու գաղափարախոսությունից, նորմերից ու մեխանիզմներից, այն պարզ պատճառով, որ նման բաժանումը խորթ էր այդ հասարակարգին: Սոցիալիստական հասարակարգը բոլոր թերություններով հանդերձ, իր սոցիալական քաղաքականությունը հիմնում էր համընդհանուր սոցիալական ապահովման և առավելագույն սոցիալական երաշխիքների սկզբունքների հիման վրա»:² Սնվճար կրթությունը, բուժսպասարկումը, բնակարանի և հանգստի ապահովումը խորհրդային պետության սահմանած սոցիալական քաղաքականության հիմնարար սկզբունքներն էին: Սիաժամանակ պետությունն ապահովում էր ծերության կենսաթոշակ, հաշմանդամության թոշակներ, անչափահաս երեխաների նպաստ, ինչպես նաև իրագործում էր երկրում համընդհանուր զբաղվածության խնդիրը:

ԽՍՀՄ-ում անխտիր հասարակական կյանքի բոլոր ոլորտները պետականացված էին և գտնվում էին խիստ վերահսկողության ներքո: Թերևս սա էր պատճառը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո, պետության հասարակական-գաղափարական և տնտեսական մասնակցության նվազման և սահմանափակման գործընթացներն ուղեկցվեցին, առհասարակ, պետության դերի անտեսման ծայրահեղ վտանգավոր դրսևորումներով, որոնք սպառնում են ամենաթողության և քաոսի վտանգով:

Պլանային տնտեսությունից անցումը շուկայական հարաբերություններին, բնականաբար, ենթադրում է մրցակցության հիման վրա տնտեսական ազատ գործունեություն, ձեռներեցություն: Վերջիններս էական ներգործություն ունեցան և ունեն պետության տնտեսական գործունեության վրա՝ սահմանափակելով նրա մի շարք տնտեսական իրավասություններ: Սակայն դա չի նշանակում, որ պետությունը իսպառ կորցնում է սոցիալ-տնտեսական կյանքին մասնակցության իր նշանակությունը:

² Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում /1920-2003թթ./, Ե., 2003, էջ 172:

Յավոք մեզանում, անկախացումից հետո օրենսդրական դաշտի բացակայությունը և պետական նոր կառույցների չկայացվածությունը մի կողմից, իշխանությունների անփորձությունը, հասարակարգը ու տնտեսակարգը արագ փոփոխելու ձգտումը մյուս կողմից, հանգեցրեց ոչ միայն պետության դերի նսեմացմանը, այլ նաև հաճախ դրա անտեսմանը: Փաստորեն իշխանության այս կամ այն թևը փոխարինեց պետությանը և սկսեց գործել իր կարողություններին համապատասխան:

Անցման շրջանում մի շարք առարկայական և ենթակայական գործոնների հետևանքով, անշուշտ, չէին բացառվում սխալներն ու բացթողումները, սակայն դրանք անխուսափելի չէին, եթե իշխանությունները վարեին սոցիալական արդարության սկզբունքի վրա հիմնված քաղաքականություն: Այլ խոսքով անհրաժեշտ էր վարել սոցիալական շուկայական տնտեսություն: Սոցիալական շուկայական տնտեսության գաղափարը նոր չէ, այն մշակվել և գործնականում իրականացվել է Գերմանիայում, ապա տարածվել է ամբողջ եվրոպայում և Լատինական Ամերիկայում:

Այն նշանակում էր պետական թելադրանքից հրաժարում, սակայն չէր ենթադրում հրաժարվել տնտեսական գործընթացների նկատմամբ պետական կարգավորումից: Սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում պետությունը զբաղվում է տնտեսության ընդհանուր համակարգմամբ՝ թույլ չտալով տարբեր օլիգարխիկ խմբավորումներին օգտվել պետական բյուջեից՝ անձնական հարստացման համար, այլ նպաստել տնտեսության արդյունավետության բարձրացմանը: Վերջինս չէր կարող ինքնանպատակ լինել, այլ ծառայում էր միայն որպես քաղաքացիների հոգևոր և նյութական պահանջների բավարարման միջոց: Դրանով համադրվում էին շուկայական ազատության սկզբունքը պետության սոցիալական պատասխանատվության հետ: Դա նշանակում է, որ նորանկախ Հայաստանը կարող էր ընդօրինակել առկա պատմական փորձը: Մինչդեռ մեզանում հակառակը եղավ: Հայաստանում ոչ միայն չօգտվեցին պատմական փորձը, այլև սկզբնական շրջանում անուշադրության մատնեցին սոցիալական քաղաքականության ոլորտը:

Իր «Հասարակությունը և պետությունը» աշխատության մեջ ՀՀ նախկին վարչապետ Հ. Բագրատյանը գրում է. «Սոցիալ-տնտեսական կյանքի պետականացումը, հակասության մեջ մտնելով տվյալ հասարակության հիմքը կազմող մասնավոր սեփականության ինստիտուտի հետ, ի վերջո հանգեցնում է տվյալ քաղաքակրթության, հասարակության կամ պետության կորստի, եթե հասարակությունը չի կարողանում կազմակերպված անցում կատարել դեպի մասնավոր սեփականության ինստիտուտի նոր կառուցվածքը»:³ Հեղինակը, մերժելով սոցիալ-տնտեսական կյանքի պետականացումը, ընկնելով ծայրահեղության մեջ՝ անտեսում էր պետության կարգավորիչ դերը, մերժում նրա մասնակցությունը սոցիալ-տնտեսական գործառույթներից՝ շեշտը դնելով «ինքնակարգավորվող» շուկայական հարաբերությունների վրա անցման փուլում: Հարց է ծագում՝ իսկ ո՞վ պետք է կազմակերպի և երաշխավորի այդ անցումը, եթե ոչ պետությունը: Հակասական և ոչ գիտական այս հայեցակարգերն էլ հենց ընկած էին հեղինակի ռեֆորմատորական գործունեության հիմքում, երբ հաճախ սահմանափակելով կամ անտեսելով պետության դերը, սոցիալ-տնտեսական կյանքի բազմաթիվ իրողություններ մատնվեցին չկարգավորված շուկայի տարերքին, ինքնահոսի՝ պատճառաբանելով, որ պետությունն այլևս անելիք չունի: Ի դեպ հեղինակի մոտ հասարակություն և պետություն հասկացությունները գրեթե նույնացվում են: Հետևաբար, ինչպես կարող է հասարակությունը կազմակերպված անցում կատարել դեպի մասնավոր սեփականությունը, երբ ամբողջովին և միանգամից մերժվում էր պետության սոցիալ-տնտեսական համակարգող-կարգավորիչ դերակատարությունը: Այս մոտեցումը տարածվեց նաև հասարակական կյանքի մյուս ոլորտների վրա: Հաճախ պետությունը ընկալվեց որպես իշխանության կամ իշխանական այս կամ այն խմբավորման շահերին ծառայող լծակ: Ետին պլան մղվեցին պետության համախմբող, կարգավորող դերն ու նշանակությունը: Մինչդեռ հենց այդ դերակատարությամբ անցման շրջանում գտնվող մեր երկիրը կարող էր նվազագույն կորուստներով դուրս գալ ստեղծված ծայրահեղ ծանր կացությունից, մանավանդ, եթե

³ Բագրատյան Հ., Հասարակությունը և պետությունը, Ե., 1999, էջ 142:

նկատի ունենանք, որ երկիրը գտնվում էր պատերազմական վիճակում: Մոցիալական քաղաքականության բացակայության պայմաններում հասարակության արագ շերտավորման հետևանքով ազգային մի շարք արժեքներ դադարեցին համընդհանուր լինելուց և հասարակության տարբեր հատվածների շրջանում համախմբող դեր կատարելուց: Այսպես, պետության սոցիալական քաղաքականության բացակայությունը արդեն 1997 թ. հայ հասարակության արժեքային համակարգը լուրջ փոփոխության էր ենթարկել: Առաջին տեղ էին մղվել նյութական և անհատական արժեքները: 1997 թ. Հայաստանի տարբեր մարզերում անցկացված հարցումները վկայում են, որ Ղարաբաղյան հարցի կարևորման կողմնակիցների թիվը կրճատվել է առնվազն 17%-ով, անկախության ձեռքբերման կողմնակիցներինը՝ 8%, աղետի գոտու կողմնակիցներինը՝ 11% և այլն: Մինչդեռ ըստ հարցման արդյունքների բնակչությունը առաջին հերթին նախապատվությունը տալիս էր կենսամակարդակի բարձրացման (63%), նոր աշխատատեղերի ստեղծման (43%), աղքատության վերացման (40%) հիմնախնդիրներին: Չի կարելի չնկատել, որ բնակչության համար առաջնահերթ էին դարձել սոցիալական ոլորտի հիմնախնդիրները: Ղատելով ամեն ինչից դրանք գտնվում էին բարձիթողի վիճակում կամ ձախողվել էին:

Մոցիալ-տնտեսական իրավիճակը և դրանից բխող անհատի գոյատևման արժեքային համակարգը չկարողացան ապահովել սոցիալական համագործակցության լայն դաշտ անհատների և պետական կառույցների միջև: Մասնավորապես անցումային այդ փուլում պետության դերի թյուրըմբռնողությունը կամ նրա գործառույթների սահմանափակումը հղի էր անցանկալի հետևանքներով, հատկապես երբ հասարակարգի և տնտեսակարգի փոփոխությունները զուգակցվում են ազգային պետության կերտման և ինստիտուցիոնալ նոր կառույցների կայացման գործընթացների հետ:

Չնայած անկախության սկզբում չէր կարևորվում պետության կարգավորիչ ակտիվ դերակատարությունը՝ այնուամենայնիվ ստեղծվում էին պետական նոր կառույցներ, նոր պայմաններին և պահանջներին համապատասխան՝ պետական կառավարման նոր մարմիններ, նոր օղակներ, որոնք հաճախ չարդարացված կերպով ուղճացված էին: Այ-

սինքն՝ այն մոտեցումը, որ նկատելի էր պետության կարգավորիչ դերի անտեսման իմաստով, ըստ էության հակադարձ համեմատական էր նրա կազմակերպչական, կառուցվածքային ամրապնդմանը: Անշուշտ այն ինքնանպատակ չէր և ուղղված էր պետական կառավարումը ավելի արդյունավետ դարձնելուն:

Այսպես, Հայաստանի նորանկախ հանրապետությունում կառավարումը 1991-1992 թթ. գործադիր իշխանությունն իրականացնում էր 22 նախարարությունների, 8 պետական վարչությունների և վարչապետի ու փոխվարչապետի միջոցով:⁴ Միայն 1995-2000 թթ. իրականացվել են կառավարության կազմի և կառուցվածքի 20-ից ավելի փոփոխություններ՝ վերակազմավորում, միավորում, լուծարում, որոնք վերաբերել են 15-ից ավելի նախարարությունների: 2000 թ. փետրվարին կատարված նոր փոփոխությամբ կառավարությունն իր մեջ ներառում է 24-ի փոխարեն 17 նախարարություն, իսկ մայիսին՝ 20:⁵

Այս բոլոր անընդմեջ փոփոխությունները փաստորեն նոր ձևավորվող սոցիալ-տնտեսական և հասարակական հարաբերություններից բխող անհրաժեշտությամբ էին թելադրված և նպատակ ունեին առավել արդյունավետ դարձնել դրանց կառավարումը: Ավելորդ չէ նկատել, որ պետության սոցիալական քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է ոչ միայն իրավական դաշտի առկայությունից, այլ նաև այն գործադրողների մասնագիտական գիտելիքներից և կարողությունից: Միալված չենք լինի, եթե արձանագրենք, որ պետական կառավարման ոլորտի դժվարությունների և թերությունների զգալի մասը պայմանավորված է սուբյեկտիվ գործոններով՝ պետական քաղաքական գործիչների մանր և միջին չինովնիկների կամայականությամբ, անպատասխանատվությամբ, ոլորտի չիմացությամբ, կոռուպացվածությամբ: Առանց ուժեղ, առավել արժանի և տաղանդավոր մարդկանց ծառայողական աստիճանով առաջ քաշելու համակարգի, առանց կառուցողական պետության ոչ միայն անհնար է իրականացնել

⁴ Հայաստանի գործող օրենքների ժողովածու /1990-1995 թթ /, էջ 195:

⁵ «Հայաստանի Հանրապետություն», 29 փետրվարի և 23 մայիսի, 2000:

արդյունավետ սոցիալական քաղաքականություն, այլև հենց երկիրն ու նրա ժողովուրդը դատապարտված են:⁶

Պետական ծառայությունների արդյունավետության խնդիրը էական խոչընդոտ է նաև Հայաստանի զարգացման համար: Այդ խոչընդոտները հաղթահարելու համար 2000 թ. նախաձեռնվեցին քաղաքացիական ծառայության համակարգի բարեփոխումները: Դրանց նպատակն է բարելավել պետական ծառայողների կարողությունները, համապատասխանեցնել աշխատավարձերը ծառայողների հմտություններին և կրճատել կոռուպցիան: Հանրային ծառայությունների արդյունավետության ապահովումը, հովանավորչության և տեխնիկական պաշտոններում քաղաքական նշանակումների պրակտիկայի վերացումը կարող են երաշխիք դառնալ պետական ծառայության բարելավման համար:

Երբ պետությունն իր ուշադրությունից դուրս է թողնում սոցիալական վերահսկման քաղաքականության գործառույթը, նա վաղ թե ուշ զրկվում է ողջ հասարակության նկատմամբ կայուն հարաբերություններ հաստատելու հնարավորությունից: Մեր հարցադրումն ավելի առարկայական դարձնելու համար ներկայացնենք այն իրավիճակը, որով պայմանավորված էին պետության սոցիալական քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանում:

Հայտնի է, որ ողջ հասարակության համախմբման խնդիրն իրականացնելու համար ազգային պետությունը ձգտում է դառնալ սոցիալական պետություն: Վերջինիս հասնելու համար հարկավոր է, կայուն ու զարգացած տնտեսություն և քաղաքական համակարգ: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է ստեղծել համապատասխանություն սոցիալական խավերի և առանձին խմբերի շահերի ինչպես նաև հասարակության ընթացիկ ու հեռանկարային խնդիրների միջև, որը կապահովի հասարակության կողմից վճարվող «տուրքի» համամասնական բաշխումը: Ազգային պետությունը սոցիալական նման քաղաքականություն վարելու ընթացքում չի դառնում սոցիալիստական պետություն, բայց անխուսափելիորեն փոխառնում է սոցիալական որոշակի գծեր, որոնց

⁶ Ларионов И., Социальная теория, М., 2001, с. 188.

բացակայությունը հասարակության մի մասին դարձնում է դժգոհ ու անտարբեր, իսկ մյուսին՝ հղփացած ու սամձարծակ:

Անկախացումից հետո մեզանում հասարակությունն ի սկզբանե ենթարկվեց լայնամասշտաբ սոցիալական բեռնացման՝ ծայրահեղ աղքատներ, աղքատներ, հարուստների փոքր խավերով, միջին խավի բացակայությամբ: Իսկ այնտեղ, ուր սոցիալական համակարգն ունի ծայրահեղ բեռնացված տեսք, անխուսափելի է դառնում նաև քաղաքական ուժերի բեռնացումն իր բոլոր վտանգավոր հետևանքներով: Ազգային հարստության ճիշտ վերաբաշխման պահանջը քաղաքական սուր հնչեղություն էր ստանում մեզանում մի կողմից ընթացող սեփականաշնորհման, մյուս կողմից ազգային պետության անվտանգության ապահովման պայմաններում: Սեփականաշնորհման աշխատավորական և ազատական տարբերակների միջև ընտրություն կատարելու խնդիրը ինքնին վերանում է, քանզի պատերազմող երկրում վերջինս ուժերի բեռնացման ու արտագաղթի վտանգ էր պարունակում, իսկ առաջինի հաջողությունը կհանգեցներ միջին խավերի ձևավորմանը և ազգի ներսում առկա հակասությունների թուլացմանը: Շատ տնտեսական խնդիրներ այստեղ կարգավորվեցին քաղաքական վարչական միջոցներով, սակայն դրանք բուն նպատակին չծառայեցին, քանզի ազատական մեթոդներով իրականացվող սեփականաշնորհումը ստեղծում էր սոսկ մասնավոր ձեռներեցության առանձին օազիսներ, իսկ աշխատավորական մոդելը կապահովեր մանր ու միջին արտադրողների շերտի, այսինքն՝ կապիտալիզմի լայն հենարանի ձևավորումը: Մեզանում, ինչպես ԽՍՀՄ-ի ժամանակ, այնպես էլ այժմ տնտեսական խնդիրները կարգավորվում են քաղաքական մեթոդներով, միայն այդ մեթոդներն են տարբեր: Ըստ էության արդյունաբերության մեջ ընթացող սեփականաշնորհումը արտադրության միջոցների ապապետականացումն չէ, այլ նրանց յուրացումը քաղաքական վերնախավի հին ու նոր սերունդների կողմից: Գյուղատնտեսության մեջ այդ գործընթացը հապճեպ ու պարզունակ բաժանարարություն էր, որը հանգեցրեց հսկայական ներուժի փոշիացման, գյուղատնտեսական արտադրողականության անկման:

Քանի որ Հայաստանի տնտեսության մեջ վճռորոշը արդյունաբերությունն ու առևտուրն էր, սեփականաշնորհման վերնախավային

տարբերակով, ԽԱՅՄ-ից ժառանգած պետական կապիտալիզմը փոխարինվեց օլիգարխային սեփականությամբ: Եթե առաջինը մասամբ աշխատում էր նաև աշխատավորի համար, ապահովում էր կենսական միջինումը, ապա այժմ այն աշխատում է միայն սեփականատեր դարձած նախկին կամ ներկա պաշտոնյայի համար: Դրանով ուժեղանում էր սեփականության ծայրահեղ կապիտալիստական բնույթը, որը չի նպաստում տնտեսության առաջընթացին, այլ հանգեցնում է աշխատավորների ծայրահեղ ունեզրկմանը: Առկա հարստության թալանի նախաձեռնությունը մեզանում գրեթե ամբողջովին վերագրում են անկախ հանրապետության իշխանություններին, մինչդեռ այն ավելի շուտ էր սկսվել: Իր իշխանությունը հանձնելու պահին հարստության նշանակալի մասը յուրացրեց կոմկուսի վերնախավը՝ ստեղծելով զանազան ասոցացիաներ ու կոոպերատիվներ: Նրանց կապիտալի նշանակալից մասը շուտով դուրս տարվեց հանրապետությունից և Մոսկվայում հայտնվեցին խոշոր հայ սեփականատերեր, որոնք «պտտեցնում էին» նախկին կոմկուսի և պետության փողերը: Նրանց մի մասը նախկին կոմկուսի ղեկավար ղեմքերն էին: Վերնախավային սեփականաշնորհման երկրորդ՝ ավելի բացահայտ և ուժեղ ալիքը սկսեց բարձրանալ նոր ղեկավարության գլուխ անցնելուց հետո, որը սեփականաշնորհման անվան տակ ավելի մեծ ավերածություններ գործեց, քանի որ նա մինչ այդ զուրկ էր հարստությունից և բացի դրանից կառավարման փորձ չուներ: Այդ քաղաքականությունը հանգեցրեց կառավարության վերին օղակներում կանգնած անձանց շրջապատի, բարեկամների ու վստահելիների կողմից ստեղծվող զանազան ֆիրմաների ու ասոցիացիաների ստեղծմանը, որոնք նորից «պտտեցնում էին» նույն պետական հարստությունը, բայց դա անում էին այնպիսի թափով ու արագությամբ, որ չբավարարվելով Հայաստանի նեղ սահմաններով, «ստիպված» դուրս էին տանում այն: Դրան նպաստում էր նաև բանկային համակարգի ձևավորումը, երբ յուրաքանչյուր մարդու կողմից խնայված, վերջին զարդերի վաճառքից կուտակված կամ արտասահմանի ազգականներից ստացված դոլլարները արագությամբ մտնում էին համառուսական և համաաշխարհային առևտրի շրջապատույտի մեջ: Բանկերը, հավաքելով ժողովրդի խնայած միջոցները, «պայթեցին»,

իսկ պետությունը, իշխանությունները որևէ պատասխանատվություն չկրեցին դրա համար, թեպետ դրանք ստեղծվել էին նոր իշխանությունների համապատասխան որոշումներով: Հայաստանը սնանկանում էր, իսկ հայաստանցի ներդրողները դառնում էին մեծաթիվ բանկերի պատանդները: Դրանով Հայաստանը վերածվում է այլ պետությունները սնուցող մի յուրահատուկ «դոլլարային հանրապետության», որն աշխատում է ոչ թե իր, այլ ուրիշների համար, որին նպաստում է նաև շրջափակումը և էներգիայի աղբյուրների բացակայությունը: Ստեղծվում է մի վարչա-ֆինանսական օլիգարխիա՝ երկրի տերը: Հայաստանում ապրող հայությունը դառնում է նրա աղքատ ու մուրացիկ բարեկամը: Այդ վերնախավը իր ձեռքն է վերցնում նաև շրջափակված հանրապետության կենսապահովման գործառույթները (բենզինի, սննդամթերքի և այլ ապրանքների ներկրումը) և տիրանում է երկրին: Կապիտալի նախասկզբնական կուտակումը հայ հարուստների վերնախավի կողմից տեղի ունեցավ հայրենակիցների աղքատացման հաշվին: Իսկ բնակչության ճնշող մեծամասնությունը ծայրահեղորեն ունեզրկվեց և աստիճանաբար կորցրեց քաղաքական խնդիրների նկատմամբ ունեցած հետաքրքրությունը, քանի որ պետականությունը և տասնամյակներով ստեղծված պետական սեփականությունը վերածվում է քաղաքական տարբեր խմբակցությունների հարստացման միջոցի, որոնք իրար հետ մրցում են կառավարման եկամտաբեր ճյուղերին մոտենալու համար:

Սեփականության ձևերի փոփոխությունը ցանկացած երկրում բխում է տնտեսական անհրաժեշտությունից՝ ավելի բարձր արտադրողականության ապահովման խնդրից: Մեզանում նպատակը՝ հասարակարգի փոփոխումը և նրա իրականացման մեթոդը՝ սեփականաշնորհումը կրում են զուտ քաղաքականացված միջոցառման բնույթ, որը հակասում է տնտեսական զարգացման օրինաչափություններին: Թերևս դա է պատճառը, որ չնայած վերջին տարիներին գրանցված բավական կայուն տնտեսական ցուցանիշներին՝ Հայաստանին չի հաջողվել տնտեսական աճն ուղղել բնակչության լայն շերտերի բարգավաճմանը: Իրականում այդ աճը չի անդրադարձել աղքատության կրճատմանը և հակառակը՝ եկամտների ոչ արդարացի բաշխման

հետևանքով է՛լ ավելի է խորացել սոցիալ-տնտեսական բևեռացումը: Առավել հարուստ և առավել աղքատ բնակչության 20%-ի ժախսերի տարբերությունը կազմում է 6,6 անգամ, իսկ եկամուտները՝ 32,2 անգամ: Հայաստանը դեռևս առաջին տեղում է եկամուտների անհավասարությամբ Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, Լատինական Ամերիկայի, Հարավարևելյան երկրների շարքում:⁷

Արտոնյալ վերնախավի կողմից վերահսկվող պետականության յուրացումը, սոսկ գումարելիների տեղերի փոփոխություն է, որի հետևանքով սակայն տարօրինակ թվաբանությամբ գումարը նույնը չի մնում, այլ այն անշեղորեն նվազում է՝ երկրում պայմանների բացակայությամբ թելադրված կապիտալի արտահանման պատճառով: Ձևավորվող օլիգարխիան՝ երկրի տերերը, արդեն տալիս են ու դեռ տալու են իրենց քաղաքական պատվերը իշխող խմբակցությանը՝ ժամանակի ընթացքում դուրս մղելով նրա այն շերտերին, որոնք չեն տեղավորվում նոր վերնախավի քաղաքական պատվերի մեջ:

Սոցիալական խճանկարի նման փոփոխությունը տեղաշարժեր է առաջացնում նաև մյուս խավերի մոտ, որոնք սկսվել էին դեռևս սեփականաշնորհման վաղ շրջանում: Այդ շրջանը աչքի էր զարնում այն պարզ մտայնությամբ, թե իբր կոմունիզմի ու կապիտալիզմի միակ սկզբունքային տարբերությունը սեփականության հարցն է և եթե կարողանանք արագորեն բաժանել կոմունիստների ժամանակ ստեղծածը, արագորեն կդառնանք կապիտալիստական երկիր: Գյուղատնտեսության ոլորտում իրականացված սեփականաշնորհումը դրա վառ վկայությունն էր, որը հանգեցրեց գյուղատնտեսական արտադրանքի կտրուկ կրճատմանը, քանի որ փոխվեց գյուղատնտեսության մեջ առկա սեփականության ձևը, բայց անփոփոխ մնաց նրան սպասարկող հին համակարգը: Գյուղացին կանգնեց հողի վրա դատարկ ձեռքերով և ստիպված էր ստացած անասունների մի մասը մորթել, իսկ իրեն հանձնված հողը մշակել նահապետական եղանակներով: Դաժան փորձությանը դիմացած գյուղացիության մի մասը վերապրեց ու դարձավ մանր սեփականատեր, որը կապված է հայրենի հողի հետ: Սակայն

⁷ Մարդկային զարգացման Ազգային զեկույց, Հայաստան, 2001, էջ 95:

երկրի ֆինանսական համակարգի տերերի կողմից թելադրվող գների քաղաքականությունը հնարավորություն չտվեց գյուղացիական տնտեսությանը ներթափանցելու դեպի շուկան և նա փակվեց իր պատյանի մեջ և շահագրգռվեց ոչ թե արտադրանքի ծավալների մեծացման, այլ նրա գինը արհեստականորեն բարձրացնելու մեջ: Քաղաքական առումով նույնպես այդ խավը դարձավ էգոիստ և եսակենտրոն և իր շահերը կապեց ոչ թե հայրենիքի ընդհանուր շահերին, այլ իր փակ, փաստացի հատվածական շահերի հետ:

Մոցիալական արժատական տեղաշարժերը ամենաժանր հարվածը հասցրին քաղաքային բնակչությանը և առաջին հերթին նրա ամենաորակյալ ու կրթված մասին՝ մտավորականությանը: Պետականորեն կարգավորվող նրանց եկամտի ավանդական աղբյուրները պետական հարստության փոշիացման հետ միասին սկսեցին ցամաքել: Ձեռնարկությունների մի մասի և գիտա-արտադրական միավորումների աշխատանքի դադարեցումը փաստորեն փողոց նետեց աշխատավարձով ապրող ծառայողներին: Մուրացկանի վիճակում հայտնվեցին ակադեմիական համակարգի աշխատողները՝ գիտության պետական ֆինանսավորման անխուսափելի կրճատման պատճառով: Նախատեսվում էր պետական բյուջեի 3 % հատկացնել գիտությանը, սակայն իրականում հատկացվում է 1 կամ 1,5 %: Ծայրահեղ դարձավ նաև կրթական համակարգում աշխատողների վիճակը:

Անկախացումից հետո պետության սոցիալական քաղաքականության բացակայությունը, ապա՝ 1990-ականների կեսերից իրականացվող, բայց դեռևս անբավարար սոցիալական համագործակցության հետևանքով հանրապետության քաղաքացիները իրենց սոցիալական պաշտպանվածությունը գտնում են այս կամ այն հասարակական կազմակերպություններին կամ քաղաքական կուսակցություններին անդամակցելով: Քաղաքացիները հաճախ են կուսակցություններ փոխում կամ միաժամանակ մի քանի հասարակական կազմակերպությունների անդամ դառնում՝ ակնկալելով հիմնականում սոցիալական պաշտպանվածություն: Իսկ հասարակության այն մասը, որը չի հարում այս կամ այն քաղաքական ուժին, մարգինալացվում է՝ դուրս մղվելով հասարակակա-քաղաքական գործընթացներից:

1990-ական թթ. կեսերից ՀՀ-ում սոցիալական քաղաքակա-
նության նոր փուլ սկսվեց: Նախորդ փուլում՝ 1991-1995 թթ. Հայաստա-
նում սոցիալական քաղաքականությունը հատուկ հոգածության առար-
կա չդարձավ: Այն դիտվում էր որպես ընդհանուր տնտեսական ռազմա-
վարության բաղկացուցիչ մաս՝ զուգորդվելով և տարրալուծվելով երկ-
րի առջև ծառայած բազմաբնույթ խնդիրների մեջ:

Արցախյան պատերազմում զինադադարի հաստատումը (1994
թ.) ՀՀ Սահմանադրության ընդունումը (1995 թ.), տնտեսական վերա-
փոխումների որոշակի արդյունքները հնարավորություն ընձեռեցին
պետության ուշադրությունը բեռել նաև սոցիալական քաղաքակա-
նության ոլորտին, մասնավաճ որ հասարակության ստվար զանգվածի
աղքատացման աստիճանը անցնում էր վտանգավորության սահմանը:
Առաջնահերթ խնդիր դարձավ սոցիալական ապահովության համա-
կարգի միջոցով լուծել խոցելի խմբերի և աղքատների կարիքները:
Գործազուրկներին օգնելու նպատակով հանրապետությունում 1996 թ.
ստեղծվեց «Փարոս» համակարգը, որի մեջ ընդգրկվեցին 735000 ըն-
տանիք (բնակչության շուրջ 86%): 1997 թ., այսպես կոչված, «մաքրում-
ների» շնորհիվ այդ թիվը հասավ 450000:⁸ 1999 թ. հունվարի 1-ից ՀՀ
կառավարության որոշմամբ ներդրվեց ընտանիքների կարիքավորու-
թյան աստիճանի վրա հիմնված հասցեական սոցիալական աջակցու-
թյան միասնական ընտանեկան նպատակների համակարգը, որի մեջ
ընդգրկվեց բնակչության մոտ 27%:

Պետության կողմից իրականացված նպատակային մի շարք
քայլերի շնորհիվ աղքատությունը զգալիորեն նվազել է հանրապե-
տությունում: 2003 թ. համար կատարված հաշվարկները ցույց են տա-
լիս, որ ընդհանուր աղքատությունը 2003 թ. կազմել է 32%, 1998 թ.
56%-ի դիմաց:

Զնայած աղքատության կրճատման միտումներին գործազուր-
կությունը դեռևս բարձր է: Համաձայն ոչ պաշտոնական հարցման՝
2003 թ. ընդհանուր գործազրկությունը կազմում էր շուրջ 30%: Համա-
ձայն պաշտոնական տվյալների՝ 2004 թ. գործազրկությունը կազմում

⁸ Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1997, էջ 52:

եր 10%, 1999 թ. 11,2 % դիմաց: Մասնագետների գնահատմամբ իրական թիվը գտնվում է 15-25 % միջև:⁹

ՀՀ-ում զբաղվածության քաղաքականությունը, որը մինչ այդ հիմնականում պասիվ բնույթ էր կրում, ուղղորդվեց դեպի ակտիվ քաղաքականության կողմնորոշիչները: Չնայած դրան՝ շարունակում էր բավականին ցածր մնալ ակտիվ աշխատաշուկայի սեղծմանն ուղղված ծախսերը (ՀՆԱ-ի 0,03%): 1999 թ. աշխատաշուկայի կարգավորմանը հատկացված միջոցների ընդամենը 5,1%-ն է ուղղվել զբաղվածության ակտիվ քաղաքականության իրականացմանը, մինչդեռ 93%-ը օգտագործվել է նպաստների վճարման համար: Անբավարար են գործազուրկների վերապատրաստման և կրթության ծախսերը (1999 թ. դրանք կազմել են աշխատաշուկայի ընդհանուր ծախսերի 2,1%ը):¹⁰

Հայաստանում զբաղվածության խնդիրների լուծմանն ուղղված քայլերը չափազանց կարևոր նշանակություն կարող էին ունենալ մեկ այլ լուրջ խնդրի՝ միգրացիոն հոսքերի կարգավորման ուղղությամբ: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի փորձագիտական տվյալներով 1991-1998 թթ. ընդհանուր առմամբ արտագաղթել է 760-780 հազար մարդ, դրան ավելացրած անկախ փորձագետների գնահատումներով միգրացիայի բացասական մնացորդը, 1999-ին 75-80 հազար մարդ, և ՀՀ ԱՎԾ տվյալներով միգրացիայի բացասական մնացորդը 2000-ին 52,6 հազար մարդ, ապա 1991-2000 թ. ՀՀ-ից ընդհանուր առմամբ արտագաղթել է մոտ 900 հազար մարդ:¹¹ Այս գործընթացը ներկայումս էլ շարունակվում է, որի դեմ լուրջ և հետևողական պայքար չկա: Ներկայումս միգրացիայի կարգավորման կարևոր հիմնախնդիրներից է մնում այն, որ չնայած վերջին հինգ տարիներին գրանցված տնտեսական աճի երկնիչ թվերին՝ արտագնա աշխատանքի ծավալը ոչ միայն չի նվազում, այլև որոշակի աճ է արձանագրվում: Սրա հիմնական պատճառներից մեկն էլ այն է, որ Հայաստանում նոր աշխատա-

⁹ Աճ և Աղքատության կրճատումը Հայաստանում. նվաճումներ և մարտահրավերներ, Արժույթի միջազգային հիմնադրամ, 2006, էջ 35:

¹⁰ Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2001, էջ 103:

¹¹ Նույն տեղում, էջ 125:

ստեղծել քիչ են ստեղծվում: Տարեկան միայն 100-120 հազար մարդ ստիպված Չայաստանից մեկնում է արտագնա աշխատանքի:

2000 թ. նոյեմբերին ՀՀ կառավարությունն ընդունեց ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը, որը նախանշում էր միջազգային քաղաքականության առաջնահերթությունները և դրանց լուծման ուղիները:

2003 թ. օգոստոսին ընդունվեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որը միտված էր հանրապետությունում աղքատության նվազեցմանը և դրա աստիճանաբար հաղթահարմանը: Վերջինիս հասնելու համար զբաղվածության խնդիրների լուծման, նոր աշխատատեղերի ստեղծմանը զուգընթաց, առաջնահերթ էին նաև առողջապահության, կրթության ոլորտներում վերափոխությունները: Վճարովի առողջապահությունը և բարձրագույն կրթությունը (20% անվճար), մատչելի չլինելով հասարակության ստվար զանգվածների համար, նույնպես պահանջում են պետության սոցիալական աջակցություն, սոցիալական բազմապիսի ծրագրերի իրականացում, ինչպես հիշյալ ոլորտների արդյունավետ կենսագործունեության ապահովման, այնպես էլ այդ ոլորտները սպասարկող քաղաքացիների սոցիալական իրավիճակի բարելավման համար:

Վերոբերյալ փաստերը պարզորոշ վկայում են, որ դեռևս շատ են անելիքները սոցիալական պետություն դառնալու ճանապարհին: Հանրապետության բնակչության սոցիալական իրավիճակի առողջացումը, նրա առաջընթացը, սոցիալական քաղաքականության արդյունավետությունը հնարավոր է բացառապես պետության կարգավորող-համակարգող գործառույթի առկայության դեպքում:

Պետության սոցիալական քաղաքականության հիմնական գործառույթները հասարակության սոցիալական կայունության, նրա սոցիալական պաշտպանության, ինչպես նաև երկրի քաղաքական կայունության ապահովումն է: Դրա հետ միաժամանակ պետք է տնտեսական լծակների բաշխման այնպիսի սկզբունքներ արմատավորվեն, որոնք արդարացի կհամարվեն հասարակության բոլոր շերտերի կողմից: Ընդ որում սոցիալական պաշտպանվածության բավարար մակարդակը պետք է ապահովի ինչպես ամբողջ բնակչության, այնպես էլ նրա

առանձին սոցիալական խմբերին: Սոցիալական քաղաքականության կարևոր ոլորտ է նաև բնակչության և պետության էկոլոգիական անվտանգությունը:

Սոցիալական քաղաքականության թվարկված բոլոր ուղղություններում պետության մասնակցությունը ցույց է տալիս, որ անցման շրջանում բոլոր երկրների համար անխուսափելի է պետության ամրապնդումը, նրա դերի և նշանակության կարևորումը, հեղինակության բարձրացումը թե երկրի ներքին կյանքում, թե արտաքին աշխարհում: Պետության դերի ընդգծումը ամենևին չպետք է հասկանալ իբրև նրա կողմից տոտալ վերահսկողության հաստատում կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ, պատեհ և անպատեհ միջամտություն այս կամ այն ոլորտի գործառույթներին:

Պետությունը, մշակելով և իրականացնելով երկրի համար առավել առաջնային և հեռանկարային ռազմավարական ուղղությունները՝ օրենքի գերակայության և նրա առջև հասարակական բոլոր շերտերի և անհատների հավասարության պայմաններում, կարգավորում և իրականացնում է սոցիալական քաղաքականության այն մարտավարությունը, որով հնարավոր կդառնան առաջադրված նպատակները:

*ЭДУАРД ЗОГРАБЯН
ЕГУ*

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА ГОСУДАРСТВА В АРМЕНИИ (1990-2005)

РЕЗЮМЕ

Одна из главных функций социального государства основывается на применении социальной справедливости. Она включает различные вопросы. В статье освещаются вопросы социальной политики государства и ее особенности в Республике Армения.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հին և միջին շրջան

1. Մարգարյան Երվանդ

Տիգրան Բ-ի աշխարհակալ տերության
գաղափարաբանական հայեցակարգի
հիմքերի մասին3

2. Հախսերի Սեբեոս

Հարանդ գավառանվան ստուգաբանության
նոր փորձ.....16

3. Մելիքյան Կարինե

Բյուզանդական կայսր Կոստաս II-ի (642-668)
եկեղեցական քաղաքականության և Ներսես III
Տայեցու (642-662) «քաղկեդոնական»
լինելու շուրջ21

4. Վարդանյան Վրեժ

Ծովքի Պահլավունիները դարաշրջանի
որոգայթներում45

5. Գրիգորյան Գնել, Խաչատրյան Գոհար

Կեչառիսի վանքի նվիրատվություններն ու
նվիրատուները (XI-XIII դդ.).....61

6. Հարությունյան Գագիկ

Սյունաց աթոռը ժԳ դարի վերջի-ժԴ դարի
առաջին քառորդի դավանաբանական
պայքարի հուլովություն.....77

7. Գևորգյան Ձոհրաբ

Այասի և Ալեքսանդրիայի առևտրական
մրցակցությունը (XIII դ. երկրորդ և XIV դ.
առաջին կես).....95

8. Թինոյան Դավիթ

Լևոն Բռնակալի գահակալության հարցի շուրջ.....106

9. Մաղալյան Արտակ

Ղատավարությունը Արցախի մելիքություններում.....113

10. Մալոյան Արման

Գ.-Ա. Օլիվիեի տեղեկությունները Ուրֆայի մասին
(XVIII դ. վերջին քառորդ).....122

Նոր և Նորագույն շրջան

11. Ամիրջանյան Հասմիկ
Լոռի և հարակից տարածքներ վերաբնակված
Ղարաբաղցի հայերի կարգավիճակը XVIII դ.
վերջերին և XIX դ. սկզբներին.....131
12. Նաջարյան Մանյա
Գավառական հարստահարությունների հարցը
Կ.Պոլսի Հայոց Ազգային ժողովում.....140
13. Ատեփանյան Գևորգ
Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական
եկեղեցիների պատմությունից.....152
14. Առաքելյան Գոհար
Շերամապահությունն ու մետաքսագործությունը
Ելիզավետպոլի նահանգում (XIX դ.).....171
15. Հայրապետյան Արմեն
Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքը
XIX դ. 50-70 թթ.....189
16. Ասոյան Լիլիթ
Հայ բնակչության կրթական մակարդակը և
գրագիտությունը XIX դ. (ըստ 1897 թ.
մարդահամարի նյութերի).....197
17. Սահակյան Արման
Ալաթիայի գավառի հայ ազգաբնակչության
թվաքանակը XIX դ. վերջին և XX դ. սկզբին209
18. Աբովյան Հասմիկ
XIX դ. վերջի և XX դ. սկզբի ռուսալեզու
նյութերը Ղիարբեքիի վիլայեթի
վարչաժողովրդական իրավիճակի մասին.....222
19. Գինոսյան Նաիրա
Հայ նկարիչները և քանդակագործները
Օսմանյան կայսրությունում (XIX դ. երկրորդ
կես - XX դ. սկիզբ).....233
20. Ասրյան Արմեն
Անկախ Հայաստանի նախակառավարությունը
(1918 թ. հունիս-հուլիս).....241
21. Աախմուրյան Գայանե
Лондонский договор 26 апреля 1915 г.
на Парижской мирной конференции
(в апреле-мае 1919 г.).....252

22. Հովսեփյան Սարիամ	
Կ. Պոլսի «Հայ Սկաուտ» հանդեսը (1919-1922 թթ.).....	275
23. Ավետիսյան Սուրեն	
Հայ ազգային պատվիրակությունը և Ամերկոմի համագործակցությունը 1920-ական թվականներին.....	286
24. Ալեքսանյան Հովհաննես	
Հոգևոր-եկեղեցական կյանքի անկումը խորհրդահայ համայնքներում 1920-ական թթ.....	295
25. Ֆարմանյան Լևոն	
Հայերի բռնի տեղաշարժերը ԽՍՀՄ-ում 1940-ական թվականներին.....	312
26. Ղարախանյան Վահրամ	
Գալուստ Կյուլպենկյանի կտակի և համանուն հիմնարկության կանոնադրության որոշ կարևոր բաժինների մասին.....	323
27. Սինասյան Էդիկ	
Հայրենակցական միությունները և Հայ Ղատը.....	333
28. Սարգսյան Լուսինե	
Ձանգվածային բռնությունները և բռնազաղթը ԼՂԻՄ-ում 1988-1991 թթ.....	344
29. Ջոհրաբյան Էդուարդ	
Պետության սոցիալական քաղաքականությունը Հայաստանում (1990-2005).....	359

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
8

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
8

Տեխնիկական խմբագիր՝
Տպագրիչ՝

ԳԱՅԱՆԵ ԲՈՐՈՒՅԱՆ
ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղդամյան 24^Գ